ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ-ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ

398.3=919.51

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ «ՀԱԶԱՐԱՇԵՆ»

Ռ. ԽԱՌԱՏՅԱՆ-ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ա 2945

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ

(Երկրորդ, լրամշակված հրատարակություն)

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 391/395=919.81
ԳՄԴ 63.5 (2Հ)
Խ 310

Պատասխանատու խմբագիր՝
Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Համակարգչային ձևավորումը՝
Շ. ՍԱՐԱՏԻԿՅԱՆԻ

Խառատյան-Առաքելյան Հ
Խ 310 Հայ ժողովրդական տոները:/.– Եր.: «Զանգակ–97», 2005.– 360 էջ:

Խ 0505000000 2005
0003(01)–2005

ԳՄԴ 63.5 (2Հ)

ISBN 99941–1–109–4

© Խառատյան-Առաքելյան Հ., 2005 թ.

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ» ԴՐՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ռուսաստանում, Սարատովյան Պովոլժիեյում, 1996 թվականին հետազոտություն էր արվել տարածքի տաս հիմնական ազգությունների մեջ՝ պարզելու էթնիկ ինքնության և էթնիկ մշակույթների հետ կապված որոշ խնդիրներ[1]: Բացի զուտ գիտական հետաքրքրությունից, մեզ համար այն մասնավորվում է նաև այդ ազգությունների ցուցակում հայերի ընդգրկվածությամբ: Չանդրադառնալով բերվող աղյուսակներում հույժ հետաքրքիր այլևայլ տվյալներին, ուշադրություն դարձնենք բոլոր մյուս ազգությունների պատասխաններից նկատելիորեն տարբերվող հայերի որոշ պատասխաններին: Այսպես, ուսումնասիրված 10 ազգությունների 100-ական ներկայացուցիչների մեջ այն հարցին, թե «ո՞ր ազգության ներկայացուցիչ եք դուք ձեզ զգում», «միայն իմ ազգության ներկայացուցիչ» պատասխանը ընտրածների ամենաբարձր ցուցանիշը հայերինն է՝ 75 (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

Ի՞նչ ազգության ներկայացուցիչ եք դուք ձեզ զգում

	միայն իմ ազգության ներկայացուցիչ	հիմնականում իմ ազգության ներկայացուցիչ	և՛ իմ, ազգության ներկայացուցիչ, և՛ ռուս	ռուս	իմ ազգային պատկանելությունը չեմ զգում	այլ
ղազախ	58	17,5	7	5	3,5	0
թաթար	55	17	14	4	2	1
մորդվա	28	6	35	6	8	0
չուվաշ	48	7	27,5	14	3,5	0
գերմանացի	30	13	14	16	10	1
հրեա	18	21	41	12,5	3,5	0
հայ	*75*	*8*	*11*	*1*	*3*	*0*
վրացի	53	0	20	1,5	3	0
ադրբեջանցի	53	0	20	1,5	3	0
ռուս	72	3	7	0	0	3

«Ո՞ր ժողովրդի մշակույթի հետ եք առավել մոտ» հարցին «իմ ժողովրդի մշակույթի հետ» պատասխանը ընտրածների ամենաբարձր ցուցանիշը դարձյալ հայերինն է՝ 63 (տես աղյուսակ 2-ը):

1. *Лариса Константинова, Елена Киселева, Состояние национального самосознания этнических групп Поволжского региона, «Этносоциальная ситуация в Саратовском Поволжье и проблемы управления», Саратов, 1996, стр. 57-79.*

Աղյուսակ 2

Ո՞ր ժողովրդի մշակույթի հետ եք առավել մոտ

	ռուսական մշակույթի	իմ ժողովրդի մշակույթի	այլ ժողովուրդների	որևէ ժող.-ի մշակույթի հետ մերձավորություն չունեմ
ղազախ	27	49	14	7
թաթար	25	50	7	5
մորդվա	56	21	4	4
չուվաշ	55	17	14	10
գերմանացի	55	21	4	5
հրեա	73	16	0	4
հայ	*17*	*63*	*11*	*2*
վրացի	20	33	27	0
ադրբեջանցի	38	48	3	0
ռուս	72	-	4	6

Իսկ ահա «Ի՞նչ տոներ եք նշում. «ազգային», «ռուսական պետական», «ռուսական կրոնական», «իմ ազգային պետության տոները» հարցերին հայերի պատասխանները ամենացածր ցուցանիշներն ունեն՝ ընդամենը 8, 6, 2, 2: Միաժամանակ «ազգային տոներ չենք նշում» պատասխանը հայերի մոտ ոչ միայն ամենաբարձրն է, այլև՝ շատ բարձր է՝ 86: Պարզվում է, որ «միայն իր ազգի ներկայացուցիչ» ընդամենը 30 հոգու պատասխան ունեցող գերմանացիներից, օրինակ (տես աղյուսակ 1), որոնցից 55-ն էլ «առավել մոտ է ռուսական մշակույթին» (տես աղյուսակ 2), «նշում են իրենց ազգային տոները» 55 հոգի, իսկ «ազգային տոներ չեն նշում» ընդամենը 6 հոգի: Իսկ ահա հայերի 86 տոկոսն ուղղակի ազգային տոներ չի նշում, մնացածներն էլ խիստ հազվադեպ նշում են որոշ տոներ (տես աղյուսակ 3): Իսկ «Իմ ազգային պետության տոները» հայերից նշում են ընդամենը... 2 մարդ:

Աղյուսակ 3

Ի՞նչ տոներ եք նշում

	ազգային տոներ	ռուս.պետական տոներ	ռուսական կրոնական տոներ	իմ ազգային պետութ. տոները	այլ	ազգային տոներ չենք նշում	ուրիշ ժողովուրդ. ազգային տոներ
ղազախ	72	83	7	3	2	3	-
թաթար	75	52	5	7	5	3	-
մորդվա	38	57	47	11	2	4	-
չուվաշ	53	37	50	3	3	3	-
գերմանացի	57	45	19	8	6	6	-
հրեա	18	78	9	0	22	5	-
հայ	8	6	2	2	2	86	-
վրացի	33	53	20	7	0	20	-
ադրբեջ.	65,5	65,5	14	7	10	0	-
ռուս	-	49	73	-	5	5	4

Չանդրադառնալով հիշյալ ուսումնասիրության մանրամասներին, վավերացնենք երեք իրողություն, որոնք, թերևս, բխում են պատասխանների տրամաբանությունից. նախ, հայերը, ցավոք, տոներ շատ քիչ են նշում կամ չեն նշում առհասարակ, հայերն իրականում վատ գիտեն իրենց ազգային տոնացույցը և, ի վերջո, հայերն ուղղակի չգիտեն իրենց ազգային պետության տոները: Ի միջի այլոց պետք է ասել, որ վերոհիշյալ երեք փաստագրումներն էլ այս կամ այն չափով տարածվում են նախ և առաջ Հայաստանում ապրող հայերի վրա:

Ժողովրդի մեջ, սակայն, տոն ունենալու և տոն նշելու ձգտումը շատ մեծ է: Այլ բան է, որ երկրում ոչ մի կերպ չի կարգավորվում տոնական կյանքը, քանզի տոնը ոչ թե հայտարարված տոնական օրն է, կամ՝ որևէ օր «ոչ աշխատանքային» հայտարարելը, այլ՝ այդ օրվա բովանդակությանը և ժողովրդի մշակութային նորմերին համապատասխան տոնա-ծիսական արարողակարգը: Թերևս հենց այս բացը ինքնակարգավորման մեխանիզմով լրացնելու միտում ունի եվրոպական տոների իմիտացիան, ինչպես, օրինակ, Ս.Վալենտինի և այլ օրերը նշելու փորձերը: Ակնհայտ է, որ ետքրիստոնեական երրորդ հազարամյակի նախաշեմին մեր ժողովուրդը շվարած շուրջն է նայում՝ որո՞նք են հայ ժողովրդական և հայաստանյան տոները:

Իրականում մեր ժողովուրդն իր հարուստ մշակութային անցյալում նաև հարուստ տոնացույց ունի՝ հայ ժողովրդի և Հայաստանի պատմա-մշակութային անցած ուղին պարբերաբար վերահաստատող և հասարակական, հուզական, ընտանեկան, խմբային, անհատական կյանքը կարգավորող, ստեղծագործական մեծ լիցք ունեցող բոլոր նորմերով: Մեր պետությունը նույնպես պաշտոնապես հաստատված տոնացույց ունի, այլ բան է, որ այդ տոնացույցի տոների արարողակարգը չի հստակեցված: Գերաշնորհ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հետ տոների մասին իրականացված մի շարք հեռուստահաղորդումների բուռն արձագանքը վկայեց այս նյութի մասին բարձրաձայն խոսելու անհրաժեշտությունը: Այսպես ծնվեց «Հայ ժողովրդական տոները» գիրքը գրելու գաղափարը:

Գրքի առաջին հրատարակությունը հաստատեց, որ բարձրացված է խիստ այժմեական հարց: Տպաքանակը սպառվեց անմիջապես, և հասարակության բոլոր խավերից անընդհատ դիմում եմ՝ «Հայ ժողովրդական տոները» գիրքը ձեռք բերելու խնդրանքով: Գիրքը փնտրվում է ինչպես անհատ մարդկանց կողմից, այնպես էլ՝ դպրոցների, մշակութային կենտրոնների: Հայաստանի որոշ դպրոցներում ուսուցիչների ջանքերով փորձեր արվեցին վերստեղծել ժողովրդական տոն նշելու միջավայրը: Շատ տեղերում դրանք անցան մեծ հաջողությամբ: Թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտներն այդ փորձերի ընթացքում զգալիորեն արդիականացնում էին տոնակատարությունները, դրանց բնորոշ ծեսերը: Նրանց ստեղծագործական մոտեցումից տոների կատարումները միայն շահում էին: Այդ գրքի միջոցով հնարավոր եղավ իրականացնել նաև դպրոցականների ինտերնետային օն-լայն ուսուցում և հարցում, որի արդյունքում բազմաթիվ դպրոցականներ նախ ճանաչեցին մեր ժողովրդական տոները, ապա նաև՝ լրացուցիչ նյութերով հարստացրին գիրքը:

Բազում տեղերից արվող հարցումներին և խնդրանքներին բավարարելու նպատակով շարադրվեց «Վարդավառ» տոնի սցենարը, և այդ սցենարով Վարդավառի տոնակատարություն կազմակերպվեց Հայաստանի բոլոր տասը մարզերի գյուղերում և այլ բնակավայրերում: Տոնակատարության ընթացքում մարդիկ այդ սցենարը համալրում էին իրենց գիտելիքներով, իրենց ստեղծագործական կարողություններով, իրենց պատկերացումներով:

Այս ամենը անհրաժեշտ դարձրին գրքի երկրորդ հրատարակությունը: Իմ՝ հեղինակիս, ամենամեծ ցանկությունն էր՝ հրատարակության պատրաստել «Հայ ժողովրդական տոների» գիտական ուսումնասիրությունը: Սակայն տուրք տալով պահանջարկին և անհրաժեշտությանը, ընթերցողին է ներկայացվում «Հայ ժողովրդական տոները» գրքի երկրորդ, լրամշակված տարբերակը: Տոներից յուրաքանչյուրի նկարագրությունն ավարտվում է տվյալ տոնի վերաբերյալ գոյություն ունեցող հիմնական գրականության ցանկով, որով ընթերցողներից յուրաքանչյուրին հնարավորություն է տրվում ինքնուրույն փնտրտուք կատարել և գտնել իրեն հետաքրքրող ծեսի, տոնի նկարագրությունը կամ՝ դրանց վերաբերյալ գիտական վերլուծությունները:

Գրքի վերջում ներկայացվում է նաև «Վարդավառ» տոնի ժամանակակից կատարման հնարավոր սցենարը: Միաժամանակ, չդիմանալով գայթակղությանը, տպագրվում է վերլուծական երկու հոդված, որոնցում հայ ժողովրդական տոների ծեսերի միջոցով ներկայացվում է տղամարդու և կնոջ փոխհարաբերությունների հայկական մշակութային ընկալման մի տարբերակ, մի քանի սրբերի կերպարների ժողովրդական ընկալումները:

Գրքում հրատարակվող պատկերների բացարձակ մեծամասնությունը՝ տոնական խորհրդանշային «գործիքները» (Ամանորյա ծառը, զատկական սկուտեղները, Պաս պապը, Արուս տիկնիկը, Խնդումի ծառը և այլն) սիրով պատրաստված են նկարչուհի, արվեստագետ Լուսիկ Ագուլեցի Սամվելյանի կողմից: Լուսիկն իր տանն էլ հավատարմորեն պատրաստում և գործածում է այն ամենը, ինչ այստեղ ներկայացված է:

Հրանուշ Խառատյան

ՆԱԽԱԲԱՆ

Այն տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս հարյուր տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Հայաստանի Հանրապետության առանձին ազգագավառներում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղեր (մասնավորապես՝ ներկայիս Գեղարքունիքի մարզի Մարտունու, Վարդենիսի շրջաններում) մասամբ նշում են Համբարձումը, իսկ Ջատիկի, Տյառնընդառաջի, Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր: Սակայն տոնակատարությունների ամբողջականությունը զգալիորեն կորուստներ է կրել: Մեկ հարյուրամյակ առաջ նշվող տոներն իրենց տևական պատմությունն են ունեցել, և նրանց ծիսականու բացահայտումն ու վերլուծությունը շերտ առ շերտ ցույց է տալիս ինչպես հայ ժողովրդի անցած պատմական ուղին, այնպես էլ՝ հազարամյակների ընթացքի տոմարական փոփոխությունները, մարդկանց միջև հարաբերությունների կաղապարները (տղամարդկանց ու կանանց, տարեցների ու երիտասարդների, ազգականների, համայնքի, սոցիալական խմբերի միջև) և դրանց պատճառաբանվածությունը, շրջակա միջավայրի հանդեպ մարդկանց ու անհատի վերաբերմունքը, բնությունից ու երկնային ուժերից ակնկալիքները, ապահով ու անապահով կյանքի մասին պատկերացումները, բնությունից, երկնային ուժերից, մարդածին ու բնական աղետներից, անհատ մարդկանցից սպասվող վտանգները, տագնապներն ու դրանցից պաշտպանվելու կերպը և այլն: Մեր տոների ժողովրդական արարողություններում կարելի է հանդիպել հայոց նախաքրիստոնեական աստվածությունների կերպարներին, Հայկի ու Բելի ավանդազրույցի դրսևորումներին, Նոյ նահապետի ու ջրհեղեղի մասին պատմությունների հետքերին, քրիստոնեության մուտքին և ընթացքին, քրիստոնեական տոնացույցի «հայացման-ազգայնացմանը» և նախաքրիստոնեական ծեսերի «քրիստոնեացմանը», Ավարայրի ճակատամարտի հիշողություններին, չարի ու բարու մասին հայ ժողովրդի ըմբռնումներին ու պատկերացումներին:

Քրիստոնեության ընդունումից հետո, ինչպես աշխարհի շատ ժողովուրդների մոտ, հայ ժողովրդի ավանդական տոնացույցը ևս վերածվեց քրիստոնեական աշխարհայացքի և համակարգված տոնացույցի կաղապարով և այդ կերպ գոյատևեց ավելի քան մեկուկես հազարամյակ: Այսօրվա եկեղեցական տոնացույցն անվանապես արտացոլում է այդ մեկուկես հազարամյակի ընթացքում մեր ժողովրդի կենցաղում լիարյուն կյանքով ապրած բուն ժողովրդական և եկեղեցական տոների ամբողջությունը. հիրավի, այդ երկար ու ծիգ դարերի ընթացքում թե՛ եկեղեցին, թե՛ ժողովուրդը նշել են Ծնունդ, Տյառնընդառաջ, Ս. Սարգիս, Բարեկենդան, Ծառզարդար, Ջատիկ կամ Ս. Հարություն, Համբարձում, Խաղողօրհնեքի կամ Վերափոխման, Ս. Խաչի տոները, Կանաչ-Կարմիր կիրակիները, Վարդավառը: Թե՛ եկեղեցին, թե՛

ժողովուրդը նշել են այլ, ավելի կամ պակաս կարևոր տոներ, եղել են ոչ համահայկական ընդգրկվածության, զուտ տեղական տոներ, թերևս դրանց մի մասը մոռացվել է, փոխարինվել ուրիշներով: Վերը նշվածներն այն տոներն են, որոնք 19-20 դդ. սկզբին նշվում էին ողջ հայ ժողովրդի կողմից և, ըստ երևույթին, իրենց մեջ խտացրել են մեր ժողովրդի տոնականության ընկալումները, առօրյա կյանքից դուրս գալու և տոնական կյանքով ապրելու ձևերը:

Ինչպե՞ս կոչել դրանք. ժողովրդակա՞ն, ազգայի՞ն, թե՞ եկեղեցական տոներ: Ընդհանուր առմամբ՝ դրանք մեծ չափով նույնն են: Տոների մեջ ամբողջացել, ընդհանրացել, նույնացել են ժողովրդականն ու եկեղեցականը: Ժողովրդականը հաճախ դարձել է եկեղեցական և ընդունվել եկեղեցու կողմից, եկեղեցական-քրիստոնեականն էլ իր հերթին դուրս է եկել եկեղեցու պատերից և դարձել ժողովրդական կենցաղի անբաժանելի մասը: Անշուշտ՝ տոների ժամանակ կատարվող ժողովրդական շատ ծեսեր ոչ միայն եկեղեցու կողմից չեն ընդունվում, այլև հակասում են քրիստոնեության տրամաբանությանը: Դրանք բազմաթիվ են. զանազան գուշակությունները, չարխափան կանխարգելիչ ծեսերը, հմայական ծեսերը, վիճակահանությունները, նախաքրիստոնեական աստվածներին կամ ոգիներին ներկայացնող տիկնիկները, կրակի պաշտամունքին առնչվող խարույկները, ջրի պաշտամունքի արարողությունները և այլն: Սակայն դարերի ընթացքում հայ հոգևորականները կարողացել են հաշտվել դրանց անխուսափելի գոյության հետ և երբեմն նույնիսկ մասնակցել դրանց: Այսպիսով՝ բուն ժողովրդական, այսպես կոչված՝ ազգային սովորությունների մի մասը պահպանվել, փոխանցվել են սերնդեսերունդ եկեղեցական տոների միջոցով: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտամունքին նվիրված հանդիսություններ, նախաքրիստոնեական շրջանի աստվածություններին, մասնավորապես երկրագործական աշխատանքները և անձնական ու հասարակական բարեկեցությունը հովանավորող ուժերին նվիրված ծեսեր: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձևավորման շրջանից և պատմության ընթացքում անընդհատ ձևափոխությունների ենթարկվելով, կորցնելով, լրացվելով, «ծպտվելով», մասնատվելով և այլն, մինչև այսօր, այնուամենայնիվ, հնարավորություն են տալիս վերլուծել և թափանցել մեր մշակույթի վաղնջական շերտերը:

Այս երևույթը առանձնապես բացառիկ չէ: Աշխարհի բազմաթիվ ժողովուրդներ կրոնական, գաղափարախոսական, քաղաքական համակարգերի փոփոխություններից հետո շարունակում են կատարել իրենց ազգային ծեսերը:

Այս գրքում ներկայացվող տոները լիիրավ կարող են կոչվել ազգային-եկեղեցական տոներ: Ինչը, սակայն, չի նշանակում, որ այստեղ ներկայացված են բոլոր եկեղեցական տոները: Այն նշանակում է միայն, որ այստեղ ներկայացված տոների բացարձակ մեծամասնությունը առկա են քրիստոնեական տոնացույցում, և դրանցում մեծ չափով պահպանվել են նախաքրիստոնեական, ինչպես նաև ետքրիստոնեական ժողովրդական արարողություններ: Սակայն այստեղ նկարագրված են նաև քրիստոնեական տոնացույցի հետ առնչություն չունեցող այնպիսի տոներ, ինչպիսիք են Նավասարդը, Ամանորը, որոշ իմաստով՝ Սուրբ Սարգիսը, Բարեկենդանը: Անմիջապես պետք է ասել, որ այս տոներն էլ իրենց հերթին են «քրիստոնեացել». տոների ժամանակ կատարվող ժողովրդական արարողությունները զգալի չափով ձեռք են բերել քրիստոնեական բառամթերք, բովանդակություն, այն բովանդակությունը, որ ժողովուրդն է տեսել քրիստոնեության մեջ: Բավական է հպանցիկ հիշել Սուրբ Սարգսի վերջին օրը տեղի ունեցող հետևյալ արարողությունը.

Սուրբ Սարգսի շաբաթ օրը վերջանում է հաջորդ, շատ սիրված տոնի՝ Բարեկենդանի ազդարարումով: «Մեծ պապն» է, որ պետք է ընտանիքները մտնի և հայտնի, որ Բարեկենդանը

եկել է: Իրականում տան ավագագագույն անդամը՝ պապը կամ տատը, շաբաթ օրը առավոտյան եկեղեցուց վերադառնալով տնեցիներին հավաքում էր սեղանի շուրջը և ինքը դուրս էր գալիս: Ապա նա վերադառնում էր՝ ոչխարի մորթու մեջ փաթաթված, գլխին՝ խոշոր սրածայր քոլոզ, ձեռքին՝ մի հսկա գավազան: Տնեցիների ուրախ ծիծաղների ներքո նա մոտենում էր գինու կարասին, յուրաքանչյուրին մի-մի գավաթ գինի լցնում, հանձնում հերթական տիրոջը հետևյալ խոսքերով. «Եկավ Մեծ պապուկը, հազար բարով մեր Բարեկենդան»: Յուրաքանչյուրն իր գինու բաժակը ստանալով համբուրում էր «Մեծ պապի» աջը և կամացուկ ասում.

Լույս Լուսավորչին,
Հավատք Քրիստոսին,
Հայ քրիստոնյային,
Մեռնեմ հավատքին:

Տան փոքրերից մեկը բարձրաձայն հարցնում էր. «Ո՞վ է Մեծ պապը»: Դերակատարը պատասխանում էր.

Լուսավորչի լույս արևն է,
Մեր ժամերի լույս ճրագն է,
Մեր տների շենք-շնորհքն է,
Մեր վանքերի զարդն ու տերն է...

Լայն իմաստով նկարագրված արարողությունը քրիստոնեական չէ, ավելին, որևէ եկեղեցական կանոն թույլ չի տա ինչ որ մի «Մեծ պապի» «Լուսավորչի լույս արև» կամ «Մեր վանքերի զարդ ու տեր» հայտարարել: Սակայն այն ամբողջովին տեղավորվում է քրիստոնեության ժողովրդական ըմբռնումների մեջ և այս կարգի երևույթների մենք դեռ կհանդիպենք տոնակատարությունների նկարագրությունների ընթացքում:

Հասկանալի է, որ այս գրքում ընդգրկված չեն բոլոր եկեղեցական տոները: Դրանք զգալի թիվ են կազմում: Եկեղեցական օրացույցի համաձայն, տարվա օրերը բաժանվում են երեք խմբի՝ Տոնական օրեր, Սրբոց օրեր և Պահոց օրեր: Տոներն իրենց հերթին բաժանվում են խմբերի, այն է՝ Տերունի տոներ, Աստվածածնի տոներ, Խաչի տոներ, Եկեղեցական տոներ և ազգային կամ կրոնական գաղափարներին նվիրված տոներ: «Տերունի» կոչվում են այն տոները, որոնք նվիրված են Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենսագրության զանազան դեպքերին: Հայոց եկեղեցական տոնացույցում դրանք են՝ Ծննդյան և Մկրտության տոնը, Տյառնընդառաջը, Ծաղկազարդը, Սուրբ Հարությունը կամ Զատիկը, Համբարձումը, Վարդավառը կամ Այլակերպության տոնը: Այս բոլոր տոներն ընդգրկված են գրքում, սակայն ներկայացված են, ինչպես ասվեց, հիմնականում ժողովրդական սովորություններն ու ծեսերը: Աստվածածնի տոներն իրենց հերթին առնչվում են Մարիամ Աստվածածնի կյանքի դեպքերին, մասնավորապես նրանց, որոնք կապված են Հիսուս Քրիստոսի հետ՝ Հղություն, Ծնունդ, Վերափոխումն Ս. Աստվածածնի և այլն: Սույն գրքում հիշատակվում է միայն Վերափոխման տոնը, ընդ որում՝ դարձյալ հիմնականում ժողովրդական ծեսի շրջանակներում, այն պարզ պատճառով, որ Աստվածածնի ութ տոներից միայն Վերափոխման տոնն է ժողովրդականացել կամ, որ տվյալ դեպքում ավելի ճիշտ կլինի ասել, Վերափոխման տոնը շարունակվել է որպես քրիստոնեությունից առաջ գոյություն ունեցած անահտական տոներից մեկը:

Այս գրքի նպատակը չէ հետազոտել տոների և դրանց արարողակարգի իմաստային դաշտերը, պատմական զարգացման ընթացքը, քննարկել այս կամ այն տոնի ու նրա հանդիսությունների բնույթը և արարողակարգի մեջ քրիստոնեության կամ պատմամշակութային զանազան հանգամանքների թելադրանքով կատարված փոփոխությունները, ինչպես նաև քրիստոնեական, բուն ժողովրդական և գիտական մեկնաբանությունները: Մեր խնդիրը շատ

ավելի համեստ է՝ վերածանոթացնել մեր ժողովրդին այն տոներին ու նրանց ծիսականուն, որոնք ներդաշնակորեն միաձուլվել էին մեր ժողովրդի կյանքին՝ ընդհուպ մինչև այդ կյանքում տեղի ունեցած կտրուկ, ավերիչ փոփոխությունները:

1915-1920թթ. եղավ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում ապրող հայերի բնաջնջման ու աշխարհասփյուռ լինելու շրջանը, միաժամանակ խաթարվեցին դարերի ընթացքում կերտված և ազգային դիմագիծը ամբողջացնող մշակութային շերտերը: 1920թ. Արևելյան Հայաստանում տեղի ունեցած քաղաքական ու հասարակական խոշոր փոփոխությունները իրենց հերթին կտրուկ փոխեցին անցյալից եկող ավանդական ազգային արժեքների բնականոն զարգացման ուղին, դրանց փոխարինելու եկան վարչակարգի գաղափարախոսությանը ծառայող և այդ գաղափարախոսությունը հաստատող արժեքները: Ավանդական ազգային տոնացույցն այդ արժեքների համակարգի մեջ չէր մտնում, ուստի և այն ոչ միայն չէր կատարվում, այլև հաճախ ենթարկվում էր գաղափարական հետապնդումների, իսկ կատարողները՝ քաղաքական հետապնդումների:

Սա նույնպիսի հետևողական պայքար էր ազգային մշակույթի դեմ, ինչպիսին ժամանակին մղում էր նորամուտ քրիստոնեությունը: Եթե քրիստոնեությունը վերածևեց ժողովրդական տոնացույցն իր կաղապարով, ապա ժողովրդական տոնահանդեսը գոյատևեց նրան զուգահեռ, նրա հետ միասին և այնուամենայնիվ՝ իր ուրույն կյանքով: Եթե նախաքրիստոնեական շրջանում հայ ժողովուրդն ուներ, դիցուք, կրակի պաշտամունքին նվիրված տոն, ապա քրիստոնեական Տյառնընդառաջի ժողովրդական տոնահանդեսը, քրիստոնեական արարողակարգի կողքին, շարունակեց պահպանել այդ նախաքրիստոնեական տոնի ազգային ծեսերը: Ավելին, քահանան իր մասնակցությունն էր բերում խարույկներ վառելու և նրանցով գուշակություններ անելու սովորույթին: Նույն կերպ քրիստոնեական Ս.Հարության, Համբարձման տոներում պահպանվել և նույնիսկ զարգացել են ժողովրդական Զատիկն ու Վիճակը: Տարբեր ձևերով, «ծպտվելով» քրիստոնեական հերոսների կերպարներում, երբեմն պահպանվել, գոյատևել և նույնիսկ զարգացել են որոշ նախաքրիստոնեական Աստվածների նվիրված ծեսեր (օրինակ, Սուրբ Սարգսին): Սա բնականոն զարգացման գործընթաց էր, այդ կարգի փոփոխությունների ենթարկվում են բոլոր ժողովուրդների մշակութային համալիրներն ընդհանրապես, տոները՝ մասնավորապես: Այլ էր 20-րդ դարի սկզբի բեկումնային շրջանը հայ ժողովրդի համար: Աշխարհասփյուռ արևմտահայ հատվածն այլևս հնարավորություն չուներ իր նախնիների տոնականուն վերադառնալու կամ դրանց զարգացումը շարունակելու: Ավելի ուշ առաջացած գաղթօջախներում, անշուշտ, եկեղեցական տոնացույցը շարունակեց գործել, բայց բնականաբար, հիմնականում եկեղեցական ծեսի շրջանակներում: Արևելահայ հատվածն էլ, շարունակելով ապրել իր հայրենիքում, արհեստականորեն դրվեց ո՛չ ազգային, հաճախ՝ մտացածին արժեքները խնկարկելու փաստի առջև: Նոր կուռքերը, սակայն, ժողովրդականություն չստացան և չմիահյուսվեցին տոնականու ժողովրդական պատկերացումներին, հինն էլ հետապնդումների ու պարսավանքների ենթարկվեց: Դրանց ներդաշնակ զարգացման ընթացքը խաթարվեց: Զգալիորեն նվազեց ժողովրդի, հասարակության ստեղծագործական մասնակցությունը տոնական մշակութաշինությանը. նրան մատուցվում էին պատրաստի ծեսեր (մայովկաներ, շքերթներ, հանդիսություններ), պատրաստի երաժշտություն, պատրաստի երգեր, պատրաստի ասմունք, որոշ իմաստով՝ ուտեստի պատրաստի, ստանդարտ տեսականի: Պակասեց ժողովրդական երաժշտական և տեքստային բանահյուսությունը, դրանց փոխարինելու եկան նոր, խորհրդային գաղափարախոսությունը ներկայացնող տոնական երգերը:

Այսօր մեր ժողովուրդը հայտնվել է այն իրավիճակում, երբ իր ազգային գոյությունը

շարունակելու երաշխիքներից մեկի՝ ազգային մշակույթի գիտակցված ընկալումը դարձել է առաջնային խնդիր: Շատ շատերը «ազգային մշակույթի» ակունքներին վերադառնալու փորձեր են անում, առանց հստակ գիտակցելու, թե ո՞րն է, կամ ի՞նչն է այդ «ազգային մշակույթը»: Այդպիսին է, օրինակ, ներկայացվում Միհրի պաշտամունքը, և Արևը խնկարկելու տոնահանդեսը քարոզվում է որպես ազգային տոն: Միաժամանակ՝ բազմաթիվ հասարակական կազմակերպություններից, մշակութային օջախներից, անհատներից հարցումներ են արվում, թե որո՞նք են մեր ժողովրդական տոները, ինչպե՞ս էին դրանք նշվում անցյալում, և ինչպե՞ս պիտի նշենք այժմ: Այդ հարցերին պատասխանելը թե՛ հեշտ է, թե՛ դժվար: Դժվար չէ, որովհետև, ի վերջո, կարելի է նկարագրել թե երբ, որտեղ, ովքեր և ինչ ձևով էին նշում այս կամ այն տոնը: Դժվար է, սակայն, որոշակիորեն ասել, թե պե՞տք է, արդյոք, մենք նշենք նո՛ւյն տոները և ավելի դժվար է պատասխանել այն հարցին, թե ի՞նչ ձևով պիտի այդ արվի: Բանն այն է, որ նախկինում դրանք նշվում էին որոշակի իրավիճակում, որոշակի աշխարհայացքով, որոշակի կենցաղով, որոշակի հակումներով, որոշակի ճաշակով ապրող մարդկանց կողմից, որոնցից մենք այսօր բավականաչափ հեռացել ենք: Այն, ինչ խոր իմաստ ուներ հարյուր տարի առաջ ապրող երիտասարդի, աղջկա, երեխայի համար, համայնքի կամ հասարակության համար ընդհանրապես, կարող է անիմաստ, երբեմն նույնիսկ տարօրինակ թվալ այսօրվա սերնդի համար, որն ապրում է բոլորովին ուրիշ կյանքով, ուրիշ հավակնություններով, ուրիշ աշխարհայացքով: Անշուշտ բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները կզարգանային, կփոխվեին հասարակության փոփոխությունների հետ համաքայլ, և տոնական արարողակարգը, առանձին ծեսերը ոչ միայն չէին իմաստազրկվի, այլև նոր որակով կխաղային ազգային կյանքով ապրելու գործընթացում ՏՈՆԻՆ վերապահված դերը: Քանզի ՏՈՆ-ը երևույթը, գաղափարը, դեպքը պարբերաբար վերահաստատելուց զատ, և նույնիսկ վերահաստատելու համար, պետք է շաղկապված լինի մարդկային տվյալ խմբի կյանքի ռիթմին և կատարի մարդկանց համախմբելու և նրանց հույզերի միասնականությանը արտաքին դրսևորում տալու իր կարևորագույն դերը: ՏՈՆ-ը, թերևս, մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողականն է ազգային արժեքների պահպանման գործում, ինչը խիստ կարևոր է մշակույթի բազմաթիվ տարրերի ապազգայնացման մեր դարաշրջանում: Բազմաթիվ ժողովուրդներ տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը: Ահա այդ կարևորագույն դերը կատարելու համար ժողովրդական տոնի հանդիսակարգը պետք է հարազատ և ընդունելի լինի այս կոնկրետ կյանքով ապրող մարդկանց: Ժողովրդական ՏՈՆ-ի ժամանակ ոչ թե պետք է «բանահյուսական-ազգագրական» խմբեր ելույթ ունենան, այլ ՏՈՆ-ի բոլոր մասնակիցները պետք է ընդգրկվեն այդ «բանահյուսական-ազգագրական» կոչվող երգ ու պարի կատարման մեջ: Բոլոր ընտանիքներում տվյալ տոնի օրը պետք է եփվեն նույն ճաշատեսակները, քող որ դրանք հարստանան տանտիկնոջ կարողություններով, այցելությունների անհրաժեշտ կարգը պահպանեն, նույնիսկ հագուստի մեջ ազգային տարազի գոնե որևէ մաս պահպանեն՝ դիցուք ազգային զարդածևերի անհրաժեշտ առկայությունն ապահովեն: Ներկայացման տարրեր ունենալով հանդերձ՝ ՏՈՆ-ը ներկայացում չէ: Այն կատարողներ ու հանդիսատեսներ չունի, համենայն դեպս՝ չպիտի ունենա: Տոնի ընթացքում բոլորը մասնակիցներ են, բոլորը կատարողներ են և ուրեմն՝ մշակույթի ազգային արժեքների հաղորդակիցներ: Այդ իմաստով տոնը պարբերաբար անդրադարձ է համազգային մշակութային արժեքներին տոնի բոլոր մասնակիցների կողմից: Հենց դրանից է զուրկ եղել մեր ժողովուրդը տասնյակ տարիների ընթացքում և հենց դրան վերադառնալն է դժվարն ու կարևորը: Դա է, որ ժողովրդական տոնը տարբերում է եկեղեցական կամ պետական, այլ կերպ ասած՝

պաշտոնական արարողակարգից և այդ պրոցեսում է, որ հիրավի ծաղկում են ժողովրդական երգարվեստը, պարարվեստը, բանահյուսությունը, խաղարվեստը, հարստանում խոհանոցը, ազգային զվարճաձևերը և այլն: Ամանորի երգերը, ծննդյան ու Զատիկ-Հարության ավետիսները, Ծառզարդարի շրջիկ խմբերի երգերը, վիճակի բախտագուշակ քառյակները ժողովրդական հավաքական երգարվեստի փայլուն նմուշներ են, բայց դրանք կանգ են առել 20-րդ դարի սկզբի մակարդակին և իրենց բովանդակությամբ ու կատարողական կողմով արտահայտում են այդ շրջանի հասարակական հարաբերությունների բնույթն ու մարդկանց հոգեբանությունը, պատկերացումներն ու ակնկալիքները: Դժվար չէ պատկերացնել, թե դրանց մեխանիկական վերականգնումն ի՞նչ արդյունք կտա. մասնագիտացված կամ սիրողական խմբերը կկատարեն, հանդիսատեսները կնայեն, կլսեն, և տոնի, տոնականության ու տոնահանդեսի համընդհանուր դրսևորում դառնալու փոխարեն դրանք տոնը կդարձնեն ներկայացում՝ անցյալի կյանքի մասին: Տոնի անքակտելի մասը դառնալու, լինելիության քննություն բռնելու համար այստեղ կպակասի տևական ստեղծագործության պահը, ընդ որում՝ ոչ թե անհատի, մասնագետի, այլ՝ ժողովրդական, զանգվածային, համընդհանուր ստեղծագործության, հանպատրաստի ստեղծագործության, որի կարևորագույն նախապայմանը համընդհանուր հուզականությունն է:

Պետք է ավելացնել, որ Հայաստանի անկախացումից հետո հաստատված պետական պաշտոնական տոնացույցը զգալիորեն ներդաշնակ է հայ ժողովրդի ակնկալիքներին: Սակայն այդ տոնացույցի նորամուտ տոները՝ Անկախության, Պետականության, Սահմանադրության, բոլորովին ժողովրդական ծիսակարգ չունեն և երբեք չեն դառնա համաժողովրդական տոնահանդեսներ, քանի դեռ դրանք կսահմանափակվեն պետական պաշտոնական ընդունելություններով:

Այս գրքում փորձ է արվում համալիր ներկայացնել մոտ հարյուր տարի առաջ մեր ժողովրդի կենցաղում կատարված տոները: Պարզ, առանց մեկնաբանությունների, առանց պատմական քննության նկարագրելով մինչև 20-րդ դարի սկիզբը հայ ժողովրդի կյանքում նշվող տոների կատարողական կողմերը, արարողակարգը, չի առաջարկվում դրանց վերադառնալ: Մարդկանց հայեցողությանն է թողնվում այս կամ այն տոնի այս կամ այն ծեսը, հանդեսը, սովորույթը իրենց կյանքում կիրարկելու հնարավորությունը: Վերստին կժողովրդականա՞ն արդյոք ժողովրդական տոները և եթե այո, ապա ի՞նչ ձևով: Հարցի պատասխանը թողնվում է գործնական կյանքին:

Առհասարակ՝ այս հարցում պատրաստի դեղատոմսեր չեն կարող լինել, քանի որ, ինչպես ասվեց, ժողովրդական տոնը ծրագրված երևույթ չէ, այլ ժողովրդի հավաքական ու տևական ստեղծագործության արդյունք, կատարողական կողմով անընդհատ փոփոխությունների ենթակա, բայց միաժամանակ՝ խիստ պահպանողական իր հիմնական բաղադրիչներով: Թվում է, թե երբեք ժամանակավրեպ չեն կարող լինել Ս. Սարգսի տոնին խաշիլ, Համբարձմանը՝ կաթնապուր եփելու, Զատկի «ախառի» սովորույթները, Վարդավառի ջրախաղերը, Ամանորին «Տարի հաց» թխելու ավանդույթները, Բարեկենդանի, Զատկի, Կրկնազատկի կամ Կանաչ կիրակիի խառը կամ խմբական պարերը և այլն: Այլ բան է, որ հավանաբար կփոխվեն դրանց կատարման ձևերը, երգերի տեքստային բովանդակությունը: Հազիվ թե այսօր որևէ մեկը Ծառզարդարին հարսնացուին եկեղեցում նվիրաբերություններ կատարի կամ նույն Ծառզարդարին վերապահի նորահարսին «դարձ» տանելու սովորույթը, բայց այդ օրը նորաբողբոջ ճյուղերով բնակարանը զարդարելու և միմյանց նվիրելու սովորույթը, մանուկների ու պատանիների «ճեռ» ու «կարկաչայի» ժամանակակից ձևերով զինված շրջայցերը, անշուշտ, կյանքի մեջ գեղեցիկ տոնական զանազանություն կբերեն: Զատիկին ձվեր ներկելու,

զարդարելու, նախշելու, փնջելու ավանդույթը այնքան գեղեցիկ է, որ այն պահպանած ժողովուրդներն այդ սովորույթը վեր են ածել ժողովրդական ստեղծագործության ուրույն մի բնագավառի և հասցրել այնպիսի կատարելության, որ ամբողջ սրահներ են պետք լինում դրանք ցուցադրելու համար: Հայ ժողովրդական զարդարվեստի և դասական մանրանկարչության վերազարթոնքի դրսևորման ձևերից մեկը կարող է դառնալ Զատկին ծուն գունավոր թելերով «փնջելու», ուլունքներով զարդարելու ու վրծինով, չորացրած կանաչներով նախշելու ավանդույթի վերականգնումը: Երեխաների մեջ գեղագիտական ճաշակ դաստիարակելու հիանալի միջոց է նրանց ծնողներին կամ միմյանց նվիրելու համար Զատկին այդպիսի մեկ ծու պատրաստելու հանձնարարականը:

Ավանդական տոնացույցի տարեկան համալիրի մեջ կարևոր դեր էր խաղում զանազան ձևերով դրսևորվող ժուժկալությունը: Կային կանոնիկ՝ պարտադիր և կամավոր, համընդհանուր և անհատական ժուժկալության դրսևորումներ: Կանոնիկ ժուժկալությունը սահմանված էր եկեղեցու կողմից պասերի միջոցով, իսկ կամավոր ժուժկալությունը մարդիկ իրենք էին սահմանում իրենց համար: Որևէ իղձի հասնելու համար մարդիկ ուխտ էին անում հեռու մնալ այս կամ այն գայթակղությունից: Դրանք պարզ, անպաճույճ ուխտեր էին, բայց մարդու օրգանիզմի վրա, անշուշտ, որոշակի բռնության կարոտ: Օրինակ, ուխտ էին անում մինչև այսինչ տոնը խնձոր չուտել, կամ այսինչ տոնի զվարճահանդեսներին չմասնակցել: Հատկապես դժվար և ուրեմն՝ կարևոր էր Զատիկից մինչև Համբարձում ընկած քառասուն օրերի ընթացքում կաթնեղեն չուտելու ուխտը: Այս ուխտի կարևորությունը պայմանավորված էր նրանով, որ մինչև Զատիկ կանոնով յոթ շաբաթ պաս լինելով՝ մարդիկ զրկված էին կաթնեղեն ուտելու իրավունքից, և այդ երկար, բայց հարկադրական ժուժկալությունից հետո դժվար էր դիմանալ գայթակղությանը և այս անգամ էլ կամավոր զսպել կաթնեղեն ուտելու ցանկությունը: Բայց իղձի իրականացման հնարավորությունը մեծանում էր զոհաբերության մեծության չափով: Ժուժկալության ուխտը միայն ուտելիքների վրա չէր տարածվում: Կային թե՛ կանոնակարգված, թե՛ կամավոր ժուժկալության դրսևորումներ հագուստի, սեռական հարաբերությունների, որոշակի աշխատանքներից խուսափելու և այլ բնագավառներում: Կային դեպքեր, երբ երիտասարդ աղջիկները ուխտ էին անում զարդեր չկրել այս տոնից մինչև այս տոնը կամ այս կամ այն տոնահանդեսին, նորատի կանայք՝ սեռական հարաբերություն չունենալ, իրենց սիրելիներին չհանդիպել և այլն: Այստեղ նույնպես ուխտի որոշումը, ձևը հաճախ պայմանավորված էր անհատի երևակայությամբ, պատկերացումներով: Ինքնազսպման ուխտի երևույթը բնորոշ է բազմաթիվ ժողովուրդների, բայց հայոց մեջ այն իրականացվում էր տոնական համակարգում:

Քրիստոնեական եկեղեցին կանոնակարգել էր պասերը՝ որպես ժուժկալության և հաճույքներից զրկվելու ճանապարհով հոգու մաքրման, ապաշխարհանքի միջոց: Պասը, անշուշտ, միայն քրիստոնյաներին չէ, որ բնորոշ է: Զանազան ձևի ու տևողության պասեր կան ինչպես տարբեր կրոնական համակարգերում, այնպես էլ ժողովուրդների աշխարհիկ մշակույթներում: Այս աշխատանքում չանդրադառնալով «պաս» երևույթի էթնա-մշակութային դրսևորումներին առհասարակ, հիշենք, որ հայ եկեղեցու կողմից սահմանված կանոնիկ պասերը, ընդհանուր առմամբ ընդհանրական լինելով քրիստոնեական մշակույթի հետ, ունեն նաև որոշ առանձնահատկություններ: Հայ առաքելական եկեղեցու կողմից սահմանված պասերը խմբավորվում են հետևյալ սկզբունքով.

- **Օրական պասեր** - շաբաթվա չորեքշաբթի և ուրբաթ օրերը: Այս պասերը հանձնարարված է առաքյալների կողմից բոլոր քրիստոնյաներին: Չորեքշաբթի օրը քրիստոնյաները պաս են պահում ի հիշատակ Քրիստոսի մատնության, ուրբաթ օրը՝ ի հիշատակ չարչարանքի:

- **Շաբաթապահք** - Եղիական, Հոգեգալստյան, Ս.Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուտի, Հիսնակի առաջին կիրակիի, Ս.Հակոբի ու Վարագա խաչի պասերը, տևում է մեկ շաբաթ:
- **Նավակատիքների պաս** - սրանք այն պասերն են, որ նախորդում են հինգ գլխավոր տոներին (Տաղավար տոներ) - Ծննդյան ութ օրերը, Հարության ութ օրերը, Վարդավառի, Վերափոխման և Ս.Խաչի հինգ օրերը: Այս պասերը սովորաբար կոչվում են իրենց հաջորդող տոների անուններով:
- **Քառասնորդական կամ Մեծ Պաս** - այս պասը նույնպես հանձնարարված է առաքյալների կողմից: Այն պահվում է ի հիշատակ չարչարանաց շաբաթվա և տևում է քառասուն օր: Քանի որ Քառասնորդական պասին հաջորդող Ավագ կամ չարչարանաց շաբաթը նույնպես պասի շրջան է, ապա միասին այս պասերը իրականում կազմում են քառասունութ օր:
- **Առաջավորաց պաս** - Ս.Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված պաս է՝ հինգ օր տևողությամբ: Այս պասը պահում են միայն հայերը: Նախորդում է Ս.Սարգսի տոնին:

Այսպիսով հայոց մեջ պաս օրերի ընթացքը զուգահեռվում է մասամբ ընդհանուր քրիստոնյա աշխարհի հետ, մասամբ՝ զուտ հայկական կանոնակարգով է: Առաքյալների կողմից քրիստոնյա աշխարհին հանձնարարված օրական պասերին և քառասնորդականին զուգահեռ հայոց մեջ գործել են Շաբաթապահքերը, մասամբ՝ Նավակատիքների պասերը, Առաջավորացը: Հայոց մեջ տարվա ընթացքում պաս օրերի ընդհանուր թիվը, այսպիսով, կազմում է 158 օր:

Ինչպես ընթերցողը նկատեց, «պաս» բառի հետ այստեղ որևէ սրբի անուն չգործածվեց: Հայոց եկեղեցին սրբերին նվիրված պասեր չունի: Սակայն ժողովրդի մեջ գործածական են «Ս.Սարգսի պաս», «Ս.Հակոբի պաս» և այլ արտահայտությունները: Ժողովուրդն այդպես է անվանել այն պասերը, որոնք նախորդել են այս կամ այն սրբի տոնին: Սույն աշխատանքում օգտագործվում է ժողովրդական բառամթերքը:

Ընդհանուր առմամբ «պաս» հասկացության մասնակի զուգահեռն է «Կիրակին»: Դեռևս հարյուր տարի առաջ մեր նախնիները մեծ լրջությամբ էին վերաբերում կիրակիներին: Տոն և կիրակի օրերին աշխատելը ընդհանրապես շատ դատապարտելի երևույթ էր: Սովորաբար քահանաներն ու տարեցները հսկում էին, հատկապես ամռանը, երկրագործական աշխատանքների ակտիվ շրջանում, որպեսզի մարդիկ չաշխատեին: Երբեմն այդ օրերին նույնիսկ մարդ էին ուղարկում հանդերը և եթե թաքուն աշխատող էին հայտնաբերում, նրան կամ մեկ օրով բանտարկում էին, կամ՝ տուգանում: Ինչպես կանոնիկ պասերին զուգահեռ մարդիկ կամավոր ժուժկալության կամ ինքնազսպման ուխտեր էին անում, այդպես էլ կիրակի օրերը աշխատելու քրիստոնեական արգելքը կամավոր աշխատանքային ինքնարգելքի նորանոր դրսևորումներ ուներ: Պարզվում է, որ հայոց մեջ ընդունված էր առանձին աշխատանքային օրեր աշխատանքի որոշ տեսակներից հրաժարվել՝ դրան տալով ծիսական, զոհաբերության բնույթ: Սովորական, օրացույցային կիրակիներից զատ, ընդունված էին զանազան «կիրակիներ», այսինքն՝ աշխատանքային արգելքներ, որ մարդիկ կամավոր իրենք դնում էին իրենց վրա: Օրինակ, Մեծ պասից մինչև Համբարձում, օրացույցային կիրակիներից զատ, «կիրակի էին պահում», այսինքն՝ չէին աշխատում բոլոր երկուշաբթիները նույնպես: Այս գրքում այդպիսի օրինակներ շատ կան: Կամավոր կամ ուխտյալ «կիրակիները» միշտ նպատակ էին ունենում. արտերը պաշտպանել մկներից, պաշտպանվել ջրհեղեղից, կարկուտից և այլն, առհասարակ՝ կանխել որևէ հնարավոր աղետ կամ չարիք: Ժողովրդական լեզվամտածողության մեջ «կիրակի պահել» հաճախ նշանակել է ինքն իրեն զրկել աշխատելու իրավունքից, եթե նույնիսկ այդ աշխատանքը խիստ հրատապ է: Սակայն տոնական կամ ծիսական «կիրակիների» զգալի մասն ունենում էին խիստ որոշակի աշխատատեսակների արգելքներ, և, ինչպես կտեսնենք տոների

նկարագրության մեջ, «կիրակի էր պահվում» շատ որոշակի նպատակով: Այստեղ օրինակի համար ասենք, որ արևելահայոց մեջ «կիրակի» էին պահում բոլոր չորեքշաբթի և ուրբաթ երեկոները («գըրգըրյուգու յա», այսինքն՝ «կիրակի երեկո է»): Համարվում է, որ չորեքշաբթի օրն արած աշխատանքը «բարաքյաթ չի ունենա», իսկ ուրբաթ արված աշխատանքը վատ հետևանք կունենա՝ կրակին զոհ կգնա հագուստ, գույք, երեխա: Կիրակի օրը չաշխատելու անհրաժեշտությունը գովերգվել է բանահյության մեջ, ստեղծվել են աշուղական երգեր, քառյակներ: Հիշենք դրանցից մեկը.

Մեր Տերն յոթ օր ստեղծմունք ըրեց,
Առաջ ինք պահեց սուրբ կիրակին,
Տվեց մեզի թանպեհ ըրեց,
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Որն որ Աստուց կենե,
Ականջ չենե սուրբ կիրակվան,
Ան մարդ քընց անօրեն դեն է (անօրենից վատ է),
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Որ կիրակի արտ կը վարե,
Անոր գործք մահուց չար է,
Արքայութենից պեպեր է(զուրկ է),
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Որ կիրակի արտ կը ցաքե,
Իր մարմնույն բան կը հոգա,
Մարմին ողջ է, հոգին տըքա,
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Որ կիրակի արտ կը քաղե,
Թշնամուն բնաղուն կաղա՜,
Մարմին ողջ է, հոգին կուզ է,
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Որ կիրակի սել (սայլ) կը բանա,
Աստուծո օրենք կը խառնե,
Պատիժ կուգա վըրեն չառնե,
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Որ կիրակի էրան կ'էնե,
Անոր հաղթող քահանան է,
Թարա ընող սուրբ սեղան է,
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Որ կիրակի փետ կը տաշե,
Անոր կրակ զայն կը խաշե,
Մարմին ողջ է, հոգին մաշե,
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Կիրակվան շատ կա հիսա,
Որ նոր կ'ելնե, զոր կը կիսե,
Ականջ ըրիր մեղա ք'իսա,
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Մեր մեծավոր Լուսավորիչ,

Մարդ կա գիտուն, մարդ կա ոչինչ,
Գրիր քսան ու չորս պատիժ,
Որ չպահե սուրբ կիրակին:
Կիրակմտի գործն էլ շատ է,
Որն որ անոր դադր գիտե,
Հարժամ (միշտ) զանոր մուրատ կուտա,
Մաքուր պահեք սուրբ կիրակին:
Հոտաղն ըսեց կիրակմտից,
Սելվոր սելն էն տեղ արձկեց,
Կես գիշեր բարձուկ կալ բերեց,
Մաքուր պահված սուրբ կիրակմուտ:
Մութն աշխարհիս բաներ սուտ է,
Որ սուրբ պահեց կիրակմուտ է,
Դատաստանին հոգուն ումուտ է,
Որ մաքուր պահե կիրակմուտ է:
Աշըղ Միրզոն հալպաթ կըմեռնի,
Աս աշխարհ հեմ քաղցր է, հեմ դառն է,
Օր մը Գաբրիել հոգին կ'առնե,
Գովա զկիրակին ու զկիրակմուտ[2]*:*

Տոնի, տոնական հանդիսության անքակտելի մասն էին կազմում խաղերը: Այսօր դրանք շատ են հեռացել իրենց ազգային ձևերից, իսկ զանգվածայնության իմաստով ուղղակի աղքատացել են: Ժամանակին բոլոր տարիքի մարդիկ, կին թե տղամարդ, ընդգրկվում էին ակտիվ խաղերի մեջ: Ընթերցողի ուշադրությանն առաջարկվող այս գրքում նկարագրված է մի քանի խաղ, բայց մեր ժողովուրդն ունեցել է բազմաթիվ սիրված խաղեր, որոնք ժամանակակից կյանքում ոչ միայն ժամանակավրեպ չեն լինի, այլև, հարստացնելով երեխաների, երիտասարդների, ինչու չէ՝ նաև չափահաս մարդկանց կյանքը, միաժամանակ կհագեցնեն ազգային կյանքի մթնոլորտը: Տոների ժամանակ կատարվող խաղերն ունեցել են մի շարք պայմանավորող գործոններ. նախ՝ դրանք այս կամ այն չափով համապատասխանել են տվյալ տոնի բովանդակությանը (օրինակ՝ Զատկի ձվախաղերը, Համբարձման և Վարդավառի ճլորթին ու ճոճախաղերը, Բարեկենդանի մրցախաղերը և այլն), երկրորդ՝ տվյալ տոնի սեզոնին (ձմեռային-գարնանային-ամառային խաղեր), երրորդ՝ տոնակատարության անցկացման վայրին (ուխտավայր, գյուղ, տան ներսում, դրսում, բակում, կալում), չորրորդ՝ խաղացողների սեռա-տարիքային կազմին (մանկական խաղեր, երիտասարդական, կանանց, տղամարդկանց, խառը կազմով) և այլն: Շատ են եղել ծիարշավները, ընբշամարտերը, վազքի մրցույթները, բանավիճային խաղերը, թատերախաղերը և այլն: Բոլոր դեպքերում խաղերը պահանջում էին մտքի ու մարմնի ճկունություն, սրամտություն, ֆիզիկական ուժ, բնաշխարհի իմացություն: Վ.Բդոյանի «Հայ ժողովրդական խաղեր» եռահատոր աշխատությունում նկարագրված բազմաթիվ խաղեր վերստին կարելի է վերականգնել՝ վստահաբար համոզված լինելով, որ խաղացողների կողմից դրանք կստանան իրենց դրսևորման ժամանակակից ձևերը: Իսկ տոներին ուղեկցող շատ խաղեր պարզապես անհրաժեշտ է իրենց նախկին կյանքին վերադարձնել:

2. *Սրվանձտյանց Գ. Երկեր, հատոր 1, Երևան, 1978, էջ 604:*

Մեր տոների ժողովրդական կատարումների զգալի մասը վկայում է, որ ժողովուրդը տոներին ի ցույց է դրել մարդու և բնության ամբողջականությունը, փոխկապակցվածությունը, միասնականությունը և տարբեր ձևերով միմյանց օգնելու ներդաշնակ կապը: Օրինակ, գարնան տոների մեջ կարմիր թելի նման անցնում է բնության զարթոնքի հետ մարդու հաղորդակցվելու և բնության հղության հրաշալի պահին մի կողմից հողը չվնասելու, մյուս կողմից հողի բարեբեր վիճակին առնչվելու և օգտվելու ձգտումը: Գարնան կենարար ցողը տարբեր ձևերով օգտագործելու, մարդկանց և անասուններին օծելու, բուժիչ և առատացնող խոտաբույսերը հավաքելու, ողջ տարվա ընթացքում խնայողաբար օգտագործելու և բազմաթիվ այլ սովորություններ, որոնց կհանդիպենք Մեծ պասից սկսած մինչև Վարդավառ ընկած տոների ժամանակ, հենց դրա վկայությունն են: Համբարձման տոնի «դյութիչ», «կախարդական» գիշերը, երբ ողջ տիեզերքը սիրով էր շնչում, իսկ սիրահար աստղերը գրկախառնվում ու համբուրվում էին, ամուլ զույգերը, ականատես դառնալով այդ տիեզերական համբույրին, կենակցում էին՝ պտղավորվելու հույսով, հավատալով, որ սիրո գիշերվա ամենազոր կախարդանքը կազդի իրենց ամլության վրա, ինչպես այն ազդում է ծառ ու ծաղկի, հողի, ընդերքի վրա: Տոներին միջոցներ են ձեռնարկվել նաև բնության ուժերին օգնելու, ինչպես, օրինակ, Ծառզարդարին պատանիները շրջում էին դաշտերում և ավետում գարնան գալուստը՝ կոչ անելով հողին արթնանալ: Վանում Մեծ պասի միջինքին ընտանիքի ամուրի անդամը, լիներ երիտասարդ, թե պատանի, արևածագից առաջ գնում էր իրենց ձյունից դեռ չմաքրված ցորենի կանաչող արտը՝ ավետելու գարնան գալուստը հետևյալ խոսքերով. «Աշխարհն լույս տալու եկողը թող քեզ էլ լիություն տա»: «Հողին օգնելու» նպատակով մատաղներ են արվել հանուն հողի (օրինակ՝ Համբարձման տոնի ժամանակ կաթնով են արել և շաղ տվել դաշտերում), Տյառնընդառաջի խարույկի մոխիրը և Ս.Սարգսի փոխինդը շաղ են տվել դաշտերում, Զատիկից մինչև Համբարձում, կիրակի օրերից բացի, ուրբաթ օրերը նույնպես տղամարդիկ հերկ չէին անում, աշխատում էին առհասարակ հողը չշարժել, «չտանջել», «շուռ չտալ» և այլն: Ջրին օգնելու նպատակով՝ կաղանդել-շնորհավորել են ջուրը, զոհաբերություններ են արվել ջրերի ակունքների, աղբյուրների մոտ և այլն: Սակայն տոնական ծեսերի ամենամեծ բաժինը, անշուշտ, անհատ մարդկանց և մարդկանց խմբերին օգնելու նպատակ են ունեցել. դրանց զգալի մասն ուղղված էր հասարակական ներդաշնակության ու սիրո ապահովմանը, սերնդաշարունակությանը, բերքի և նյութական բարեկեցության ապահովմանը:

Նախաբանի ընթերցողն, անշուշտ, նկատեց, որ այստեղ խոսք չգնաց տոներին բնորոշ խնջույքների, ուտելիքների, այցելությունների, նվերների, տոնական հագուստի, երգ ու պարի մասին: Դրանք առկա են բոլոր տոներում, յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունը և այդ մասին կխոսվի յուրաքանչյուր տոնի նկարագրության ընթացքում: Այստեղ երկու խոսքով ասենք, որ տոնական կյանքում այս երևույթներից և ոչ մեկն ինքնանպատակ չեն: Խնջույք չի կազմակերպվում պարզապես ուտել-խմելու համար, յուրաքանչյուր տոնին կազմակերպվող խնջույքը պիտի համապատասխաներ տվյալ տոնի իմաստին, և դրան համապատասխան ընտրվում էր խնջույքը կազմակերպելու վայրը, ժամը, նրա ուտեստի տեսականին, մասնակիցները (ներսո՞ւմ, թե դրսում, սարո՞ւմ, թե դաշտում, գիշե՞րը, թե ցերեկը, առավոտյա՞ն, թե երեկոյան, ընտանիքո՞վ, թե հասակային խմբերով): Տոներին մենք գործ ունենք ծիսական, սրբազան խնջույքի հետ, որտեղ ամեն ինչ՝ բնորոշ և անհրաժեշտ ուտեստի տեսականուց սկսած մինչև մատուցման և վայելման կարգը, հերթականությունը, ժամը և այլն խորհուրդ ունի և սահմանվում է սրբազան իրականությամբ: Հակառակ ընդունված կարծիքի՝ բոլոր տոներին չէ, որ տոնական խնջույքը պահանջում է առատ մսեղեն: Ընդհակառակն, Նոր Տարվա, Ս.Սարգսի, Համբարձման խնջույքի սեղանին մսեղեն բոլորովին չի եղել, սակայն դա չի խանգարել լիաթոք

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԿԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

զվարճանալ: Ավելին, հայոց ավանդական մշակույթը վկայում է, որ մի շարք տոների ժամանակ կատարվել են ոչ մսեղեն զոհաբերություններ: Սուրբ Սարգսին՝ փոխինդ և աղանձ, Համբարձմանը՝ կաթնով են զոհաբերել և, ինչպես ընդունված է մսեղենի դեպքում այսօր էլ, բաժանել են յոթ տեղ:

Նույն սկզբունքով տոնական խնջույքների մի մասը տարիքային հասցեականություն ուներ. կային պատանեկան խնջույքներ, աղջիկների խնջույքներ, տղաների խնջույքներ և այլն, և սրանք նույնպես պատճառաբանված էին ոչ միայն և ոչ այնքան հասարակական հարաբերությունների մշակույթով, այլև՝ տոնի ծիսական գործառույթներով: Օրինակ, Համբարձմանը դաշտերում, նորածիլ խոտերի ու ծաղիկների մեջ տեղի ունեցող աղջկական խնջույքի վաղնջական հիմնական միտումը երկու բեղմնընդունակ ուժերի՝ հողի ու երիտասարդ, պտղունակ տարիքի կանանց համակցմամբ ինչպես հողի, այնպես էլ՝ աղջիկների բեղունությունը զորացնելն էր: Տարվա այդ շրջանում հողը երիտասարդ աղջկա ունակություններով էր օժտված:

Տոներում շատ կարևոր և զգայուն տեղ ունի սիրո թեման: Համարյա բոլոր տոներին աղջիկների և տղաների փոխհարաբերությունների սահմանված նորմեր կան, որոնք տարբերվում են սովորական օրերի հարաբերություններից: Դրանք ոչ միայն միմյանց հանդիպելու հնարավորություններ են, այլև՝ սիրո խորհրդանիշեր փոխանցելու (խնձոր, փնջած ծու և այլն), սիրո տաղեր երգելու, պարելու, սրամտելու, առհասարակ իրենք իրենց ցույց տալու: Իսկ սիրո թեմայով արվող կանխատեսումները, հմայությունները, գուշակությունները տոներին անթիվ են:

Հայոց տոները շատ հարուստ երգեր ու պարեր ունեին: Երգերի բովանդակությունը համարյա միշտ համապատասխանել է տվյալ տոնի իմաստին; Նոր տարվա երգերում հնչել են ընտանիքի բարեկեցության ու անհատի երջանկության մաղթանքներ, Տյառնընդառաջի, Բարեկենդանի տոներին՝ հասարակական բարեկեցության, սիրային, չարխափան-հմայական երգերն էին շատ, Զատկի տոնից մինչև Վարդավառ՝ դաշտերի առատության, մարագների լիության, զույգերի երջանկության, սերնդաճի մաղթանքները, Վարդավառին՝ կատակերգերը, սիրային պչրանքը, ծաղրը և այլն: Ընտանիքներին ցորեն, գարի, հաց, յուղ, մեղր, շատ անասուններ, ոսկի ու արծաթ մաղթող երգերում թեման շարունակվում էր իղձերին հասնելու ցանկությամբ, սոցիալական դիրքի բարձրության մաղթանքով: Անթիվ են քնարական երգերը՝ սքանչելի համեմատություններով, բնության ու մարդկային հույզերի նրբագույն ելևէջների ներկայացմամբ, կարոտով ու սիրով թաթախուն, ուրախ ու տխուր, թախծոտ ու կենսունակ, սրամիտ, սյուժետային, հաճախ՝ սերնդե-սերունդ փոխանցված, երբեմն՝ հանպատրաստի: Տոնական երգ ու պարին մասնակցելը, դրանց իմացությունը մարդու գեղագիտական և հասարակական դաստիարակության մաս էին կազմում: Յուրաքանչյուր տարիքային խումբ ուներ իրեն հատկացված դերակատարումը: Ծննդյան, Հարության ավետիսները, Նոր Տարվա և Ծառզարդարի երգային բարեմաղթություններն ավելի շատ պատանիների դերակատարումներն էին, Բարեկենդանի, Զատիկի, Վարդավառի խմբային պարերի, գիշերային պարահանդեսների հիմնական մասնակիցները երիտասարդներն էին և այլն: Սակայն դրանց ուսուցումը կարևոր խնդիր էր և հասարակությունը այս կամ այն ձևով ու չափով կարգավորում էր այդ հարցը: Որպես օրինակ հիշենք Նոր Նախիջևանի հայկական համայնքում այդ գործընթացի կազմակերպումը: Այստեղ քաղաքի բոլոր թաղերն ունեին իրենց «Ավետիսի տները», որտեղ ձմռան ամիսներին երեկոները հավաքվում էին երիտասարդները: «Ավետիսի տունը» հիմնականում վարձված տուն կամ սենյակ էր: «Ավետիսի տները» կառավարելու համար թաղի երիտասարդների կողմից ընտրվում էին երկու երիտասարդ, որոնց պարտականությունն էր կարգ ու կանոն պահել

«Ավետիսի տներում», զսպել անկարգ անդամներին, լուծել թաղային երիտասարդության կոնֆլիկտները, Ջատկի և Վարդավառի ժամանակ մեծ ճոճ կամ ճլորթի կապել և ճոճել թաղի երիտասարդ աղջիկներին, նորահարսներին, տոների ժամանակ մրցախաղեր կազմակերպել և այլն: Այստեղ էր, որ կազմակերպվում էին Բարեկենդանի ներկայացումները, որոնք հետո պետք է հեղեղեին փողոցներն ու կալերը: Այս տներում էր, որ անչափահասներին սովորեցնում էին տոնական երգերը, պարերը, նույնիսկ երգ ստեղծելու արվեստը, դիմակավորվելը, շրջայցերը, խնջույք կազմակերպելու, նվերներ տալու և, հատկապես, նվերներ ստանալու արվեստը: Ինչպես կտեսնենք տոների նկարագրություններում, դրանք խիստ կարևոր գիտելիքներ էին:

Ինչ վերաբերում է ազգակցական կապերին, ապա տոներին դրանք տարբեր ձևերով, անշուշտ, արտահայտվել են: Սակայն տարին մի անգամ խոշոր ազգակցական համակարգը՝ գերդաստանը, ազգակցական կապերի ծիսական նորոգում է արել, վերահաստատելով ազգակցական կապերի ամրությունն ու կարևորությունը, և դա՝ Բարեկենդանին: «...Աշտարակում,- պատմում է Ե.Շահազիզը,- բուն բարեկենդանի կիրակի երեկոյան, երկու շաբաթվա կերուխումից, ուրախություններից, զվարճություններից ու գժություններից հետո, որոնք կատարվել են հրապարակավ, գյուղամիջում..., գյուղը հանգստացել է, և ամեն մարդ յուր ծանոթ-բարեկամին մնաս-բարև է ասել ու մտել յուր տունը, յուր հարկի տակ: Սակայն այդ հանգստությունը եղել է միայն արտաքուստ, իրոք դրանք, այդ ուրախություններն ու զվարճությունները, չեն վերջացած եղել, այլ շարունակվել են, միայն որ նրանք փոխադրվել են տները և փոխել իրենց աղմկալի բնույթը, ու դարձել համեստ, անմեղ, ընտանեկան զվարճություններ: Պապերի ու տատերի՝ տոհմի այդ զառամյալ ազգապետի շուրջը, նրանց հարկի տակ, հավաքվել են նրանց ազգուտակը, բերելով իրենց հետ, կապոցներով, իրենց տներում բարեկենդանից մնացած ուտելիքները, որովհետև այդ երեկո տոհմի անդամ ընտանիքներից և ոչ մեկի տանը օջախ չպիտի վառվեր, ծուխ չպիտի դուրս գար, բացի ազգապետի տանից, որտեղ պիտի օջախը վառեր, և այն՝ միայն բերանփակեքի ձվածեղը պատրաստելու համար: Այդտեղ նրանք համբուրել են ազգապետ զույգերի ձեռքերը, շնորհավորել են նրանց բարեկենդանը, բաց են արել իրենց կապոցները, խառնել իրենց բերածները նրանց տանն եղածի հետ, սեղանակից եղել, տատերի բաժանած տնային աղանդերով՝ կախանով, փշատով, շուջուխով և ալանիով, բերանները քաղցրացրել, ասել, խոսել, կատակներ արել, զվարճացել և մի-մի կտոր ձվածեղով բերանները փակելուց հետո, առել ազգապետների օրհնությունը ու ցրվել, գնացել իրենց տները: Դրանով նրանք տարեկան մին վերանորոգած ու ամրացրած են եղել իրենց կապերը բուն տոհմային տան հետ, որտեղից նրանք հեռացած են եղել տարիներ առաջ..., և պապենական սրբազան օջախից տարած պեծուկեծով վառել իրենց նոր օջախները»: Սակայն սրբազան, տոնական հարաբերություններում ազգակցական հարաբերությունները միշտ կանոնակարգված էին և յուրաքանչյուր տոնի ունեին իրենց առանձնահատկությունները:

Այս գրքում նկարագրված տոների մի շարք հանդիսութուններ իրենց ամբողջությամբ, անկասկած, միայն հայ ժողովրդին չեն բնորոշ: Այս կամ այն տոնին խարույկ վառելու, ջրախաղերի, ծաղկահավաքների ու ծաղիկ նվիրաբերելու, գուշակությունների, ծիսական հմայությունների, տոնական շրջայցերի սովորությունները բնորոշ են բազմաթիվ ժողովուրդների: Հայոց ժողովրդական տոնա-ծիսական մշակույթը մասնավոր ընդհանրություններ ունի հատկապես հնդեվրոպական մշակութային աշխարհի հետ: Սակայն դրանք տարբերվում են իրենց կատարման, դրսևորման և ընկալման ձևերով, ինչը և նկարագրված է ըստ տոների:

Անհրաժեշտ է ավելացնել, որ մեր ժողովուրդն ուներ շարժական և անշարժ տոներ: Անշարժն այն տոներն են, որոնք նշվում են պարբերաբար միշտ նույն օրը, ինչպես Ամանորը (հունվարի 1), Ծնունդը (հունվարի 6), Տյառնընդառաջը (փետրվարի 14) և այլն: Շարժական տոների նշման օրերն ամեն տարի փոխվում են: Մեր տոնացույցի շարժական տոների օրերը պայմանավորված են Զատկի տոնի՝ տվյալ տարին նշվելու օրով: Առանց պատճառներին անդրադառնալու հիշեցնենք, որ Զատիկը նշվում է գարնանային գիշերահավասարից հետո, լուսնի լրմանը հաջորդող կիրակի օրը և կարող է ընկնել մարտի 21-ից մինչև ապրիլի 25-ն ընկնող որևէ կիրակի: Բազմաթիվ տոմարագիտական աշխատանքներում տարբեր ձևերով հաշվելով պարզել են անցյալ ու ապագա մի շարք տարիների նշման օրերը, իսկ եկեղեցական օրացույցում ամեն տարի հրատարակվում է տվյալ տարվա Զատկի, ինչպես նաև նրանով պայմանավորված տոների օրերը:



ԱՐԱՆՈՐ, ՆՈՐ ՏԱՐԻ

Հունվարի 1-ին տարին սկսելու և Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը հայոց մեջ ընդհանրացել է համեմատաբար ոչ վաղ անցյալում: Արևմտահայոց շրջանում, Կիլիկիայի տարածքի հայերի մեջ, մասամբ՝ արևելահայ որոշ ազգագավառներում և հայկական մի շարք գաղթօջախներում 19-րդ դարում Նոր տարին նշվում էր հունվարի 1-ին և բավական կայունացած արարողակարգ ուներ: Սակայն մինչև 20-րդ հարյուրամյակի սկիզբը արևելահայ որոշ շրջաններում Նոր տարուն զուգահեռ, ավելի խանդավառ ու ջերմորեն նշում էին Նավասարդը՝ որպես Նոր տարի, և Նավասարդը նշող շրջաններում հունվարի 1-ին Նոր տարին նշելը սահմանափակվում էր ընդամենը միմյանց շնորհավորելով: Այնուամենայնիվ տոնակատարությունն արդեն կայունանում էր և նրանում ամրագրվում էին տարեմտին կամ Նոր տարում բնորոշ սովորույթները:

Տոնի անունները հայոց մեջ տարբեր էին: Հիշվում են Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար ձևերը, Նոր տարուն նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Խլվլիկ, Կախ կամ Կաղ, Գոտեկախ անուններով, իսկ համշենահայերի մոտ՝ Ծաղկըմուտ: Այս բոլոր անուններն ունեն իրենց բացատրությունները: Նախ՝ Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար ձևերը գործածվել են գլխավորապես արևմտահայոց միջավայրում, հունական ազդեցությամբ: Արևելահայոց մեջ առավել տարածված էին Նոր Տարի, Տարեմուտ ձևերը: «Լոլեի գիշեր» անունը, թերևս, գալիս է այն հանգամանքից, որ Նոր տարվան նախորդող օրը հայոց մեջ թխվող հացատեսակների շարքում՝ «փուռնիկ», «կլոճ» և այլն, հիշատակվում է նաև «լոլիկը»: Կախ կամ Կաղ բառերը ժողովրդական ստուգաբանությամբ բացատրվում են այդ գիշեր պահուստի թարմ մրգի «կախանները» տուն բերելու և առաստաղից կախելու, «գոտեկախը»՝ պատանեկան գիշերային շրջայցերի ժամանակ երդկից գոտիով գուլպաներ կամ զամբյուղներ կախելու սովորույթով:

Նույն կերպ որոշ տարբերություններ կային ծիսական սովորությունների կատարման ձևերում, սակայն դրանք իրենց բովանդակությամբ ընդհանուր էին:

Ամանորի սովորույթները խմբավորվում են հետևյալ երևույթների շուրջ.

- բնակարանը, բնակավայրը և մարդու մարմինն ու հոգին մաքրելը, հարդարելը,

- ծիսական ուտեստը,

- ծիսական այցելությունները,

- բախտագուշակությունները (անձնական, ընտանեկան, համայնքային, ազգային),

- հաջողությունն ապահովելուն միտված և չարը կանխարգելող հմայական խոսքերը, ծիսական մաղթանքները:

Նոր տարվա տոնին նախապատրաստվելու ընթացքում բնակարանի մաքրությանն առանձնակի կարևորություն էր տրվում: Ոչ միայն մաքրվում էր բնակարանը, այլև հնարավորինս դուրս էին նետվում անպետք իրերը, նորոգվում էին քանդված մասերը: Հանվում և մաքրվում էր ողջ ամանեղենը, լվացվում էր ողջ սպիտակեղենը: Բնակարանը ներծծվում էր մաքրության բույրով: Բնակարանը հարդարվում էր, զարդարվում: Զարդարանքները ոչ միայն գեղագիտական էին, այլև՝ չարխափան կամ բարեբեր: Չարխափանների շարքում կարելի է հիշատակել չար աչքի դեմ կիրառվող նշանները, որոնք տեղադրվում էին ինչպես մուտքի դռան վրա, այնպես էլ՝ պատերին:

Ապա ընտանիքի բոլոր անդամները լողանում էին և հագնում տոնական հագուստ, ցանկալի է՝ նոր հագուստ: «Նոր տարվա նախորդ օրերը շարուրցիների բոլոր երդիկներից անընդհատ ծուխ էր բարձրանում». օջախի վրա անընդհատ ջուր էին եռացնում: Եթե ընտանիքում գժտություն կար, աշխատում էին լուծել գժտության առիթը, հաշտեցնել գժտվածներին: Նույն կերպ գժտվածներին փորձում էին հաշտեցնել հասարակական միջավայրում:

Նոր տարվա գլխավոր նախապատրաստություններն ուտելիքների շուրջն էին: Տոնի ժամանակ օգտագործվող ուտեստի տեսականին, դրանց ծիսական բնույթն ընդհանուր առմամբ նույնական էին հայոց շատ ազգագավառների համար, սակայն երբեմն տարբերվում էին պատրաստման կերպով, մատուցման և ճաշակման ժամանակով, անուններով: Աշնանից սկսած այս տոնի համար պահած ունենում էին զանազան չորացրած ու թարմ մրգեր, պաստեղներ, ընկուզերշիկներ և այլն: Պետք է հիշել, որ հունվարի 1-ը, ընկնելով հայոց ծննդյան տոնի շաբաթվա մեջ, պաս օր էր, և ամանորյա ուտելիքները բաղկացած էին պասին թույլատրելի ուտելեղենից: Դեկտեմբերի 30-31-ին տանտիկինները ջանասիրաբար մաքրում էին լոբին, սիսեռը, ոսպը, բրինձը, ձավարեղենը, որոնք տարբեր կերակրատեսակների ձևով պիտի զարդարեին տոնական սեղանը: Տարբեր տեղերում այդ ճաշատեսակները տարբեր էին, բայց շատերը ջանում էին դրանց թիվը հասցնել յոթի: Ահա, օրինակ, ականատեսի նկարագրությունը Բալուի ամանորյա ճաշատեսակների վերաբերյալ «**ա)** Պղլուր (ձավար), աղընծած ու ծեծված և խյուսի վերածված շուշմա (սուսամ), քիչ մը ծեծված մանր կարմիր պղպեղ, բավական շատկեկ ջարդված սոխ, իրարու հետ խառնելով, կը լեցնեն զանոնք մինչև կեսը կամ քիչ մը ավելի ջուրով լեցուն պուտուկի մեջ, որուն կափարիչը վրան դնելով անոր բոլորտիքը կը ծեփեն խմորով ու կը դնեն թոնիրին մեջ որ եփի, ատոր կսեն Խորու: **բ)** Պղլուրով ու անոր երեք անգամ սիսեռով գրեթե թոփիկի հար և նման գնդիկ կը շինեն: **գ)** Անուշապուր, որուն նյութերն են ծեծված ցորեն, որ մաքրված է իր թեփերեն, ընկույզ, նուշ, չամիչ, մեղր կամ ռուպ, երբեմն գազպե ալ կը դընեն, երբ զայն ունենան: **դ)** Փերփերապուր, ասոր ալ նյութերը կը բաղկանան չորցված փերփերե, ծեծված ցորենե, կարմիր լոպիկե (լուբիայի տեսակ մը), աղացված ոսպ, չոր, բայց քիչ պղպեղե, սոխե և շուշմայի յուղե: **ե)** Պահոց քեշկեկ, աս՝ կը բաղկանա ծեծված ցորենե, ոսպե, սիսեռե՝ չորցված կանկարե, ավելուկ ըսված չոր բանջարե և շուշմայի յուղե: **զ)** Շուշմայի հետ ասիկա զուտ ցորենի ալյուրի շաղված խմոր մըն է զոր կը բանան խիստ բարակ ու կը տապկեն շուշմայի յուղին մեջ ու հետո անոնց ամեն մեկուն երկու երեսներուն վրա կը լեցնեն կամ կը քսեն ռուպով կամ մեղրով շուշմային խյուսին հետ խառնուրդը, և կը շարեն դրանք իրարու վրա, որպեսզի կակուղ մնան և թե ավելի անուշնան իրար ծծելով: Պետք է գիտնալ, թե այս բոլոր կերակուրները պահոց կերակուրներ են»:

Շատ ընդունված էին ոսպից, սիսեռից սարքած քյուֆթան, ոսպից, սիսեռից, լոբուց, ձավարեղենից ձեթով սարքած տոլման («սուտ տոլմա»), Բալուի կերակրատեսակների մեջ հիշատակված անուշապուրի տեսակները, որ շատ տեղերում «մայրամապուր» (Մարիամի ապուր) էր կոչվում, ինչպես, օրինակ, ծեծած կորկոտով, չամիչով, չոր ծիրանով ու սալորով եփված մայրամապուրը, որի մեջ եփելուց հետո դոշաբ են դնում: Լոռեցիների համար հատուկ նշանակություն ունեին լոբին և լոբաջրով պատրաստված կերակրատեսակները: «Նոր տարին գալ չի առանց լոբու», - ասում էին լոռեցիները:



Շատ մեծ նշանակություն էր տրվում մրգերին: Չոր ու թարմ մրգերը չամիչի ու ընդեղենների հետ կազմում են ամանորյա ընթրիքի հիմնական բաղադրիչները: Որոշ տեղեր դարձյալ ջանում էին պահել «յոթ» թիվը՝ յոթ տեսակ թարմ միրգ (օրինակ՝ խնձոր, տանձ, սերկևիլ, նուռ, խաղող, սեխ, զկեռ, արմավ և այլն), յոթ տեսակ չրեղեն կամ չոր մրգեր (սալորի, ծիրանի, խնձորի, տանձի, թզի, խաղողի, թթի, արմավի չրեր, զանազան չամիչներ, ունապ, փշատ և այլն), յոթ տեսակ ընդեղեն (օրինակ՝ ընկույզ, պնդուկ, նուշ, պիստակ, ծիրանի կորիզի միջուկը, շագանակ,

ձմերուկի կորիզ և այլն), յոթ տեսակ պաստեղ (օրինակ՝ սալորի, ծիրանի, հոնի, մոշի, խաղողի, սերկևիլի, արմավի և այլն): Ահա թե ինչպես են նկարագրում ականատեսները Դիարբեքիրի հայերի Նոր տարվա մրգեղենի սեղանը. «...«պրկիշը» (պղնձյա կլոր սեղան) տաքուկ թոնիրին վրա դրված կըլլա, լեցուն՝ քաղցրեղեններով, նպարեղեններով, բանդակներով և այլն..., որոնց նշանավորներն են ընկուզերշիկը, նշերշիկը, փստուղերշիկը: Անդեղտան ապակիի նման պաստեղը, նուռը, սերկևիլը, արմավը ..., սեխը, մեղրապոպը: Նաև պտուտակը, ուսապը, փշատը և այլն: Փոքր սեղանի մի վրա դրված է ... նշանավոր անուշեն հալվաները՝ ընկույզե, նուշե, շուշմայե, որոնց բույրը և համը աննկարագրելի է...»: «Տանտիկինը ցորեկին կպատրաստե «մեզեին պրկիշը»: Սեղանին վրա կը շարե նուրբ պնակներ՝ ամեն տեսակ մեզեղեներով լի՝ շաքարեղեններ, նուշ, լեպլեպի, կուտեր, նարինջ, խնձոր, նուռ և այլն: Իրիկունը, արևը մար մտնելեն վերջ, տան մեծավորը կը բազմի թոնիրին ճակատը, շուրջը ունենալով ընտանիքին մյուս անդամները: Հիմակ այս պրկիշը կը բերեն, կը դնեն թոնիրին վրա. սեղանի երկու կողմը կը վառվին խոշոր մոմերը, որոնք միշտ զույգ ըլլալու են, կարմիր ու ճերմակ օղիի շիշերն ալ կը շարվին սեղանին շուրջը: Բոլորովին գիշեր ըլլալուն պես ..., ընթրիքեն վերջ կը վերցվի մեզեի սեղանը, թոնիրի վրան կը մաքրվի, փոքրիկ մանչերն ու աղջիկները կ'ելլեն կը նստին թոնիրին վրա՝ անհամբեր սպասելով «Լօլե»-ին, որ ահա կը բերվի, և մեծ պրկիշ մը դարձյալ, լեցուն հետևյալ կարգով՝ կարմիր չամիչ, սև չամիչ, ընկույզ, նուշ, լեպլեպի, արմավ, թուզ, սիճուգ, բոլորը իրարու վրա լեցված, որոնց ամենուն վրա կը կենան քանի մի ծալ պաստեղ: Մանուկները կը սկսին երկու ձեռքով խառնել արդեն այս խառնուրդը, որուն կըսեն «լօլեն խառնել»: Լօլեն տակավին կատարյալ չէ մանկան համար, մինչև որ չբերվի «չաթալ մոմը». ասիկա հաստ արմատ ունեցող և արմատեն քանի մը նախշուն ճյուղեր արծակող, հատկապես Լօլեին համար պատրաստված մոմ մըն է: Երեք «չաթալեն» սկսյալ՝ մինչև քառասուն «չաթալները» կան: Ավանդություն մը կա, թե ընտանիքը քանի անդամե որ կը բաղկանա՝ այնչափ պետք է որ վառված ըլլան մոմի ճյուղերը»: Քեսապում տանտիկինը «ամբարեն կը հանէր թուզի ընտիր տեսակները, չիրը, չամիչը, պաստեղը, «սուճուխ»-ը, «մըլպի»-ն, ընկոյզը, կը բովէր բեվեկ, թրջած ցորեն ու սիսեռ, կը խառնէր իրարու: Չոր մրգերն ու բովածը (կ'ավուրմու) կը դնէր ծեղէ ամաններու մէջ, ինչպես նաեւ պահուած պտուղները՝ խնձոր, տանձ, նուռ, նարինջ, սերկեւիլ, ադամաթուզ: Ասոնք ճղիին ու գինիին հետ Նոր տարուան գիշերէն սկսեալ անպակաս կ'ըլլային սեղանէն մինչեւ Ս. Ծնունդի երկրորդ շաբաթը»:

Նոր տարվա սիրված անուշեղեններից էին նաև աղանձը՝ չամիչի, մաքրած ընկույզի, նուշի ու բոված կանեփի, երբեմն՝ բոված սիսեռի հետ խառնած, ինչպես նաև Նոր նախիջևանում «Կաղանդ» կոչվող անուշը: Վերջինս սպիտակելու աստիճան հարած մեղրի և կեղևից մաքրած ու բոված ընկույզի միջուկի խառնուրդն է:

Դեկտեմբերի 31-ի տոնական նախապատրաստությունների առանցքը, սակայն, կազմում էին բազմաթիվ խմորեղենները: Նախ՝ ամենուր այդ օրը հաց էին թխում, եթե նույնիսկ մեծ քանակությամբ հաց ունենային, Նոր տարին պետք էր նոր հացով սկսել: Նորոգում էին թխմորը: Նոր տարվա համար թխվող հացի ալյուրից մի քանի բուռ 8-10 տարեկան մի անմեղ աղջնակ շաղում էր՝ առանց թթխմոր խառնելու. այն պետք է թողնվեր ինքնաբերաբար թթվելու և սկսվող տարվա առաջին թթխմորը դառնալու: Այդ խմորից միայն մի փոքր կտոր ակշաթաթի վրա եփում և ուտեցնում էին երեխաներին, որ նրանց փորը չցավեր: Ապա թխվում էր տոնի կարևորագույն՝ «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փուռնիկ» և այլ անուններով հայտնի, ծիսական հացը: Տարբեր տեղերում այդ հացի բաղադրամասերը, ձևը տարբեր էր: ՏԱՐԻՆ կարող էր լինել գաթա, բաղարջ, ծվածն, կլոր, եռանկյունի, խաչածև և այլն՝ ըստ ճաշակի և ցանկության: Եթե գաթա է, ապա միջուկը՝ խորիսը, մեղրով է շաղախվում, և առհասարակ այս

գաթայի մեջ կաթ, մածուն, կարագ, յուղ չի գործածվում: Սրա իմաստը շատ պարզ է՝ հայոց Ամանորը պաս օր է: Ալաշկերտում ողջ խմորն է շաղախվում ընկույզով, չամիչով, կանեփով: Սասունում Տարի հացը կոչվում էր «փուռնիկ», խորիսը ընկույզի միջուկ էր, բոված կանեփի հատիկ և քաղցր պաստեղ՝ միասին ծեծած: Գլխավորն այն է, որ ՏԱՐԻ հացի մեջ որևէ նշան էր դրվում՝ կորիզ կամ լոբի, ավելի հաճախ՝ դրամ: «...Կաթան է Կաղանդի փառքն ու փայլը, - գրում է քսաներորդ դարասկզբի հեղինակներից մեկը: Կաթայի խմորն, եթե օրն է ուտիք, զի Աստվածահայտնության ու Զատկին ևս կաթա շինելու սովորություն կա, կաթով կը շաղվի, իսկ եթե պահքի օր է, որպես Կաղանդինը, մեղրով կը շաղվի և կըսվի խորիս կամ խորիսխ: Կաթայի երեսին վրա կը նկարվին տեսակ տեսակ կենդանիներու ձևեր և շատ անգամ տաճարներու նկարներ: Կաթայի ձևն է կլորակ, երբեմն խաչածև, ձվածև, եռանկյունի կամ քառակուսի: Ունի փոսիկներ, որոնց մեջ երեխեք, մանկիկ տղեկներ ցորենի հատիկներ դնելով, կը պարեն և հետո տանիքներու վրա դես ու դեն ձգելով կսպասեն, որ թռչնիկներ գան, կտցեն և ուտեն...»:

Տարբեր տեղերում ՏԱՐԻՆ տարբեր օր են կտրում՝ տարեմտի ընթրիքին, հունվարի 1-ի առավոտյան, հունվարի 4-ին, հունվարի 5-ին՝ ճրագալուծին, հունվարի 6-ին՝ Ծննդին: Սասունում աշխատում էին թխել այնպես, որ կեսգիշեր չեղած կտրեին: Ջավախքում Նոր տարվա արշալույսը բացվելու հետ, տանտիկինները «ՏԱՐԻՆ» դնում էին սկուտեղի մեջ, վրան մեղր ածում, դուրս գալիս տնից, դառնում դեպի արևելք և երեք անգամ ասում. «Դովլաթ, սարն էս, ձորն էս, արի տուն»: Ապա տուն էին մտնում, վրայի մեղրը բոլորին բաժանում, որպեսզի տարին անուշությունով անց կացնեն, իսկ «ՏԱՐԻՆ» պահում՝ հունվարի 4-ին կտրելու համար: Շիրակում պառավը տարին գրկում էր, տանում երդիկի շուրջը երեք անգամ պտույտ տալիս և այնտեղից գցում քուրսու վրա: ՏԱՐԻՆ կտրում էին տան բոլոր անդամների թվին հավասար, հաճախ բաժին հանելով նաև տան կենդանիներին, արտին, հանդին ...: Ում բաժնի միջից դուրս գար այդ նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանիքի հաջողությունը նրանից կգար: Օիսական հացի միջի նշանը նշանի տերը պահում էր ողջ տարին: Եթե կտրելիս դանակը դեմ էր առնում նշանին, նշանակում էր տարվա առատությունը գութանից, այսինքն՝ երկրագործությունից կգար: Ոմանք կտրում էին տասներկու մասի և գուշակում, թե տարվա առատությունը կամ բարեբախտությունը ո՞ր ամսից կգա:

«ՏԱՐԻ» հացից բացի, թխում էին զանազան ձևերի ու մեծության այլ խմորեղեններ, որոնք ունեին կանխատեսելու նպատակ, ինչպես նաև՝ հմայական խմորեղեններ: Առհասարակ ամանօրյա ուտելիքները ունեին մի քանի միտում, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- *հմայող-հաջողություն ապահովող,*
- *գուշակությունների համար,*
- *չարը կանխարգելող:*

Հմայող-հաջողություն ապահովող ուտելիքներից էին, օրինակ, բոլոր տեսակի հատիկները՝ ձավարեղենը, ցորենը և այլն, որոնց առատ օգտագործումը նախնական պատկերացումներում պիտի ապահովեր կյանքի հարատևությունը, մշտնջենականությունը: Որոշ պայմանականությամբ այդ շարքին կարելի է դասել նաև խմորեղենը, նոր թխվող հացը, որոնք նպատակ ունեին նաև տարվա առատությունն ապահովելու: Նույն իմաստն ուներ ընդեղենների առատ օգտագործումը: Մրգերի որոշ տեսակներ հայոց մեջ, ինչպես հայտնի է, հատուկ խորհուրդ ունեն: Դրանցից մասնավոր տեղ են գրաղեցնում խնձորը և նուռը: Խնձորը, որի բեղմնավորման և առատացման զորության մասին պատկերացումները խիստ տարածված են (հիշիր հեքիաթներում անպտուղ թագավորին ու թագուհուն բեղմնավորող խնձորի մասին պատմությունները, հարսանիքներում խնձորի օգտագործման իրավիճակները՝ ընդհուպ մինչև հարսի կուսության վկայություն

հանդիսացող «կարմիր խնձորը», խնձորի գործածության ձևերը սիրո խոստովանության դեպքերում, նշանադրության ժամանակ, երբ նորահարսի նշանի մատանին մատուցում են մի խնձորի մեջ խրած և այլն), ոչ միայն Նոր տարվա մրգեղենի անբաժանելի մասն էր, այլև պարտադիր էր այդ օրվա նվիրատվություններում, իսկ երբեմն՝ նաև գուշակություններում: Օրինակ, Պոնտոսի հայերը Տարի հացի փոխարեն տարվա «բախտավորության նշանը» խրում էին խնձորի մեջ: Հաջորդ առավոտյան ընտանիքի անդամների թվով խնձորներ էին դնում սկուտեղի մեջ, այդ թվում՝ նշանը պարունակող խնձորը, և առաջարկում բոլորին մեկական խնձոր վերցնել՝ ստուգելու համար, թե ու՞մ բաժին կընկնի «բախտի խնձորը»: Երջանիկին բոլորն աղմուկով և ուրախությամբ շնորհավորում են ի սրտե:

Գուշակություններ անելու նպատակով թխում էին նաև կլոր, մեջը ծակ, ցորենով ու գարիով զարդարված «հացի հոր», «գարու հոր» կոչվող խմորեղենները: Գյուղերում թխում էին «եզան պտուկներ», «արոր», «գութան», «խնոցի», քաղաքներում՝ ընտանիքի եկամուտը խորհրդանշող աշխատանքային գործիքի պատկերով խմորեղեն, ինչպես՝ «մկրատ», «մատնոց», «ուրագ», «քսակ» և այլն: Դրանց թխվելու ձևով (հաստ, ուռած կամ սմքած) գուշակում, կանխատեսում էին այդ խորհրդանիշերի իրական կրողների տվյալ տարվա վիճակը: Այսինքն՝ «հացի հորի» ուռչելը նշանակում էր հացառատ տարի, «խնոցու» ուռչելը՝ կաթնառատ տարի, «քսակի» ուռչելը՝ դրամառատ և այլն: Նույն տրամաբանությամբ յուրաքանչյուր մարդ կարող է թխել այն առարկայի խորհրդանիշը, որի վերաբերյալ ուզում է գուշակություն անել:



Գուշակություններ անելու նպատակով շատ տեղերում թխում էին նաև մարդակերպ ու կենդանակերպ թխվածքներ՝ ընտանիքի անդամների թվի համեմատ, և տան կենդանիների տեսակներից՝ մեկական (եզան, կովի, ոչխարի և այլն): Մարդակերպ խմորեղենները Լոռիում կոչվում էին Ասիլ-Բասիլ, Գանձակում՝ Վասիլ: Մարդակերպ հացիկները պատրաստում էին՝ աչքերի, բերանի և կրծքին դրած ձեռքերի վրա չամիչներ խրելով: Թխվելու ընթացքում դրանց ուռչելը կամ սմքելը համապատասխանաբար դրական կամ բացասական գուշակություն էր տվյալ տարվա համար: Օրինակ, եթե կնոջը ներկայացնող խմորեղենի որովայնը թխելիս ուռչում էր՝ ընտանիքում նոր երեխա պիտի ծնվեր: Թխում էին կլոր, մեջը ծակ խմորեղեններ, որ «կլկալ» էր կոչվում:

Կենդանիների, թռչունների անունով թխված խմորեղենները («կովի պտուկը», կամ «ոչխարի պճեղը») տրվում էին ուտելու հենց կովին, ոչխարին: Տրվում էին նրանց, ինչպես ստորև կտեսնենք, Նոր տարվա նոր, հոսող ջրում օծելուց հետո:



Որոշ խմորեղեններ ունեին միաժամանակ հաջողություն ապահովող և չարը կանխարգելող խորհուրդ: Օրինակ, թիֆլիսահայերը սովորություն ունեին, ի թիվս տոնական այլ խմորեղենների, թխել նաև երկու հաց, որոնցից մեկը կոչվում էր «էգ», մյուսը՝ «Չիք»: «էգը» ողջ տարին պահում էին ալյուրի մեջ, որպեսզի ալյուրը առատանար, «Չիքը» գցում էին հոսող ջուրը, որ չարիքը, «չկան» անցնող ջրի նման չքանան: Սեբաստիայում Նոր տարուն թխում էին «կայծակի հաց», վստահ, որ այն ուտելուց հետո կայծակնահար չէին լինի: Նույն Սեբաստիայում ամառորյա հացիկներից պահում էին մինչև գարուն և, եթե գարունը չորային էր լինում, երեք անգամ թրջելով կտոր-կտոր թափում էին որևէ այրու երդիկից, որպեսզի անձրև գար: Բութանիայում, Պոլսում այդ օրվա խմորեղեններից պահում էին մինչև Տյառնընդառաջ, այդ օրը չորացած հացը կոտրում և ուտում էին՝ որպես ատամնացավը կանխող միջոց:

Ուտելիքների միջոցով չարը կանխարգելող սովորություններից էր նաև, ինչպես ասվեց, առաջին թթխմորից մի փոքր կտոր թխելով երեխաներին ուտեցնելը, որ նրանց փորը չցավեր: Չարը կանխարգելելու նպատակով ընդեղենները ջարդվում էին միայն դեկտեմբերի վերջին օրվա գիշերը. հունվարի մեկից հետո մինչև Ծննդյան տոները այլևս ջարդել չէր կարելի, այլապես գութանը կվնասվեր: Առհասարակ՝ հունվարի մեկից մինչև Ծնունդ որևէ բան ջարդելը չարագուշակ նշան էր:

Այսօր դժվար է Նոր տարին պատկերացնել առանց տոնածառի: Այս համատարած երևույթի ուշագրավ դրսևորումներ հանդիպում ենք նաև որոշ հայկական սովորություններում: Օրի-

նակ, Պոնտոսի հայերի մեջ ընդունված էր Նոր տարվա երեկոյան ձիթենու համեմատաբար հաստ մի ճյուղ խրել նախապես թխված մեծ հացի կամ բաղարջի մեջ: Այդ ճյուղը «Կաղանդի ծառ» է կոչվում: Տնեցիներից յուրաքանչյուրը «Կաղանդի ծառից» կտրում էր փոքր ոստ և ինքն իր լուսավոր ճակատագիրն ապահովելու նպատակով զարդարում ընկուզեղենով: Առավոտյան տանտերը հաստ ճյուղը տանում էր եկեղեցի, քահանային օրհնել տալիս, հետ բերում տուն, տան անդամներից յուրաքանչյուրի մազերից մեկ-մեկ մազ հանում, փաթաթում ճյուղին և այն ամրացնում գերանին:

Բարեբեր իմաստն ուներ հասկերով կամ հասկերից պատրաստված «ծառերով» զարդարանքները, որոնց վրա նույնպես կախվում էին չարխափաններ:





Նոր տարվա տոնական խնջույքը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Շատ տեղերում այդ օրն այցելություններ չէին լինում, սակայն ընթրիքին ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Միայն նշանված աղջիկներն իրենց նշանածներին մետաքսյա գույնզգույն թելերով փնջած խնձոր էին ուղարկում և նրանցից նույնպես խնձոր էին ստանում՝ մեջը արծաթյա տաս կոպեկանոցներ խրած: Այլ տեղերում, ընդհակառակն, տոնական այցելություններն սկսվում էին հենց այդ երեկո, ինչպես, օրինակ, Քեսապում, ուր «Նոր Տարուան

գիշերը մօտիկ ազգականներ ու դրացիներ, մեծ ու պզտիկ, իրարու կ'այցելէին: Ոչ ոք տունը կը պարպէր կամ ճրագը կը մարէր: Կէս գիշերին կը հնչէր եկեղեցւոյ կոչնակը, կ'որոտային հրացանները: Գիւղացիք դուռը կը բանային, հին տարուան չարքերը դուրս դնելու եւ Նոր Տարուան բարիքները ընդունելու համար, ապա կարգով կը շնորհաւորէին իրարու Նոր Տարին»: Տան ավագագույն անդամը բարձրացնում էր առաջին բաժակը, օրհնում սեղանը, շնորհավորում տնեցիների և ընտանիքի Նոր տարին և առաջարկում բոլորին՝ առաջին բաժակի հետ մեղր համտեսել. «Անուշ մեղր ուտենք, որ տարին բոլոր անուշ զրուցենք, անուշ լսենք, անուշ վարվենք»: Որոշ տեղերում ընթրիքն սկսելուց առաջ տան գլխավորը երեք բուռ կաղին, ընկույզ էր նետում դեպի տանիք «Շեն կենա Կալանտար, բարով Կալանտար ըլլա» խոսքերով, վստահ, որ նետված այդ կաղին-ընկույզը առաջիկա տարվա առատությունը պիտի ապահովի: Ընթրիքին հաջորդում էր աղանդերի ճաշակումը, որ, ինչպես տեսանք, բաղկացած էր թարմ ու չոր մրգերից, խմորեղեններից, ընդեղեններից...:

Նոր տարվա համահայկական սովորություններից կարելի է առանձնացնել, առաջին հերթին, նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան տղաների, իսկ որոշ տեղեր նաև՝ աղջնակների խմբերի ծիսական շրջայցերը և տոնը շնորհավորելու ավանդույթը: Խմբերը պարելով շրջում էին փողոցներում և որևէ մեկի տանը մոտենալիս սկսում էին երգել: Սովորաբար շնորհավորում էին երգելով: Երգերի տեքստերը պարունակում էին բարեմաղթություններ, ընտանիքի անդամների գովք և տոնական ճաշատեսակների խնդրանք: Մինչ տներում զբաղված էին տոնական պատրաստություններով, տղաները երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում հին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը: Չնայած բովանդակային մեծ ընդհանրությանը, այդ երգերը շատ էին տարբերվում: Նախ դրանցից յուրաքանչյուրը կատարվում էր տեղական բարբառով, երգերում հիշատակվող ուտելիքների թվարկումից, ըստ էության, կարելի է պատկերացնել տվյալ տեղանքի Նոր տարվա անհրաժեշտ մթերքների առարկայական ցանկը, ապահով, բարեկեցիկ կյանքի վերաբերյալ տեղական պատկերացումները և այլն: Բերենք մի քանի օրինակ.

Կըտեր հողը խնգան փոշի
Ծոցը վրեն ծալած ոսկի,
Դուռը վըրեն փերթ ըրեքնակ,
Կտեր վրան բոլոր լիսնակ,
Տան սները կերոններ,
Ոսկե կամար գերաններ:
Բարի րիգիուն ալէլուիա,
Աշեն, հաշեն, էս տունը՝ շեն,
Սին ու գերան՝ սողոմաշեն,
Տուն ավլողներ՝ ջուխտ աղունակ,
Ձեռնավելը՝ փունջ մանուշակ,
Թորոնները խորանի են,
Հացթուխները՝ խանում խաթուն,
էս տանը կա երկու լիզու,
Մինը՝ բարի, մինը՝ չարի,
Չարինը՝ ընդի, բարինը՝ ըստի,
Բարին վեր գա, ձեզ հետ նստի,
Բարով թող գա ձեր նոր տարի,
Մուրազներուդ չիմ կատարի,

Ձեր տուն մտնու հազար բարի,
Ամար, ցորեն, կորեկ, գարի,
Լիքը հորեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք միշտ կուշտ փորով:

Լոռի

Այսպիսով, Լոռիում Նոր տարուն մաղթում էին «չարի անհետացում, բարու գալուստ», «մուրազների կատարում», «լիքը հորեր՝ ածարի, ցորենի, կորեկի, գարու», «կարմիր օրեր», «կարմիր՝ նոր շորեր», «կուշտ փոր»...: Իսկ «տունը շեն է», տան աղջիկները (ավլողները) աղավնի են, տան տիկնայք՝ (հացթուխները) խանում-խաթուն, տունն ինքն ամբողջովին հրաշք է. նրա թոնիրը խորան է, կտուրի հողը՝ խունկ, ոսկի, շրջապատված արևով ու լուսնով, տան սյուները կերոններ են և այլն:

Ալյուրը, ցորենը, կորեկը, հածարը մաղթվում է ամենուր.

Սարերի կարմիր լալեն եմ,
Բարով եկար,
Հազար բարի,
Իմ մոր մինուճար բալեն եմ,
Խերով եկար,
Թազա տարի:
Թասը լցնեմ կարմիր գինով,
Բարով եկար,
Հազար բարի,
Փլավ բերեմ ոսկե սինով,
Խերով եկար,
Թազա տարի:
Ամբարս լցնեմ բերք ու բարի,
Բարով եկար,
Հազար բարի,
Ալյուր, ցորեն, հածար, գարի,
Խերով եկար,
Թազա տարի:

Էջմիածին

Այս մաղթանքներին շատ նման է Հյուսիսային Կովկասի Ղզլար քաղաքի հայկական համայնքի միջավայրում Նոր տարուն երգվող երգում հնչող բարեմաղթությունները: Կիլիկիահայերի մեջ երգվող երգերում հնչում է հնի ու նորի սահմանակետում սպասելիքների ամբողջությունը, որում խտացած է ամեն ինչ. «թե խելք, թե կյանք, թե մալ»: Իսկ ահա Նոր Նախիջևանում՝ հայկական մեկ այլ գաղթօջախում, երգվող երգը շատ ավելի պարզ է. Նորը, Հարսը, Գալանտոսը եկել է՝ լրիվ նոր ու առատ, շալե շապիկով ու կարմիր գոտիկով, եկել է որպես Նոր տարի և համեստորեն համաձայն է «մեկ ավուձին»: Հիշենք դրանք.

Շնորհավոր նոր տարի,
Ձեր տունը շեն իլի,

Պարով նոր հաքնեք,
Միշտ ուրախ իլեք:
Հացը բոլ իլի,
Աչքը կուշտ իլի,
Ծեզ էլ փայ իլի,
Մեզ էլ փայ իլի:
Նոր տարին ուրախ,
Ուտենք գոգինաղ,
Չամիչ, թաթարու,
Ունենք ստանալու:
Եմիշ ու գինի,
Միշտ էլ բոլ իլի,
Միշտ ուրախ ապրենք,
Մե լավ քեփ քաշենք:
Տունը շեն իլի,
Բարաքյաթ իլի,
Միշտ ջոմարդ իլեք
Մեզ էլ միշտ հիշեք:

Ղզլար

* * *

Ալելուիա, ալելուիա,
Հինը գնաց, նորը կու գա,
Հինը ուրախ ճանապարհեք,
Նորի համար պատրաստեցեք
Դուռ, լուսամուտ բացեք,
Ինչ որ կամիք խնդրեցեք,
Թե կյանք, թե խելք, թե մալ,
Ամենքիդ մուրազն ալ
Կու տա, միամիտ եղեք:
Աղաներ ու խաթուններ,
Ձեզ շնորհավոր Նոր տարի,
Ապրիք շատ ու շատ տարի:

Կիլիկիա

* * *

Գալանտոս, տոս, տոս,
Գալանտոսը եկիլ է,
Դուռին տակը կայնիլ է,
Շիլա շապիկ հագիլ է,
Կարմիր գոտի կապիլ է,
Մեկ ավուծին խայիլ է:
Գալանտոս, տոս, տոս,
Գալանտոսը եկել է,
Դուռին տակին կայնիլ է,

Շիլա շապիկ հագիլ է,
Կարմիր գոտի կապիլ է,
Մեկ ավուձին խայիլ է:

Նոր Նախիջևան

Բալուում երգվող տարբերակում նույն ակնկալիքներն են.

Բարի եկար, Նոր տարի,
Տուր մեզի ցորեն, գարի,
լե, լե, լե, լե, ախ լե, լե,
Մեր փեթակն ալիր կուզե,
լե, լե, լե լե...
Տանտիկինը եղ կուզե,
լե, լե, լե, լե...
Բուխերիկս մուխ կուզե,
լե, լե, լե, լե...
Մեր օճախը փատ կուզե,
լե, լե, լե, լե...
Եգուն (այգին) պաղջին պտուղ տուր,
լե, լե, լե, լե...
Մեր աղջիկին փեսա տուր,
լե, լե, լե լե...
Մեր տղային հարս մը տուր,
լե, լե, լե, լե...
Հիւրնտություն (հիվանդություն) թող չըլի,
լե, լե, լե, լե...
Քեսատուքին (վաստակի նվազում) թող չըլի,
լե, լե, լե, լե...

Մեկ այլ երգում սպասելիքներն են տանտերերից, այդ թվում «շարոց, պաստեղ, չիր, ճըմուռ, քաղցու, բաղարջ, բլիթ, գաթա...» և այլն.

Ասօր կախ է, վաղն է կաղանդ,
Կախանն յո՞ր է, վաղն է կաղանդ, ալելա,
Շարոց, բաստեղ, չիր ու հեվեք,
Գոգնոց բացեք, գոգով տվեք, ալելա:
Տուն ու երդիք լիք են շարքով,
Բարով կաղանդ, բարկարեվով, ալելա,
Ճոլոտ մամուն ճըմուռ, քաղցու,
Ջոջիկ պապուն բաղարջ, բլիթ, ալելա:
Ճիժ-պիժերուս շարան-շարան,
Շարոց, բաստեղ, անոյշ կաթա, ալելա:
Գոգնոց բացեք, գոգով տվեք,
Ափով բաժնենք, ծափով ուտենք, ալելա:
Լոյս է իջեր վեր գերեզմընին,
Ողորմիս ձեր լոյս մեռելին, ալելա:
Գոգնոց բացեք, գոգով տվեք,
Ափով բաժնենք, ծափով վայլենք, ալելա:

Նոր տարուն Վանում երգվող երգը իր մեջ խտացրել է ժողովրդական պատկերացումները, քրիստոնեական խորհրդանիշերը, կոնկրետ գյուղի անճանց, տվյալ ընտանիքի ակնկալիքները և ողջ «հայ ազգի ողջության» մաղթանքը: Օրինակ, Վանի Լեզք գյուղում.

Շնորհավոր տոն ու տարին,
Նոր կաղանդն և յուր բարին,
Պատ վեր խըման, խիմ վեր քարին,
Վեմ քարն ի Պողոս Պետրոս
Բանլիս տվեց փրկիչ Հիսուս:
Տունը շեն, շեն շինական,
Յուղն ու բլիթ նստան, կերան,
Բասիլիոս անուն բարի,
Որ ազատեց խեն քրիստոնեն,
Տարին են տարին, օրն են օրեն:
Չեր տունը շեն հետ արևուն,
Արևն էրկներ ձեր տղեքներուն,
Չարը զատաներ, բարին մոտենար:
Օղորմի աղին, ծառ տընկողին,
Լեզկա ռես Բաղտոյին,
Գըզիր Խաչոյին, տան ճեռչին:
Ուտենք, խմենք անոյշ գինին,
Ասենք օղորմին, ողջութեն հայոց ազգին:

Երեկոյան սկսված շրջայցերը հաջորդ օրը շարունակվում էին, երբեմն՝ երկու-երեք օր, անդադրում ավետելով Նոր տարվա գալուստը և տոնական, զվարթ համարձակությամբ իրենց սպասելիքները թվարկում.

Ավետիս, ավետիս, ավետիս,
Հա՛յ, եկել է, եկել է,
Ով եկել է, գայլն եկել է,
Կարմիր կովեն յուղ կուզե,
Կուտուզ հավեն հավկիթ կուզե,
Ավետիս, ավետիս, ավետիս,
Ավետիս, ավետիս, ավետիս,
Յուղեն կռե, մեղրեն կռե, տանտիկին,
Սերեն բռնե, մեղրեն կռե, տանտիկին,
Քիչ մ՛ալ յուղ հետդ բերես տանտիկին,
Սախըն մատըդ ալ հետ չկռես, տանտիկին,
Ավետիս, ավետիս, ավետիս:

Բաբերդ

Աս օր կաղ է, վաղը կաղընտ,
Չեր մեռելին հոգուն տվեք ուր գա,
Տանտիկին, տանտիկին,
էլի գնա մարագն ի վար,
Կարճ բռնե, էրկան կըյե,
Կամացուկ ուր մատիկդ չկըյես:

Ով ուր տա՝ շեն կենա,
Ով ուր չիտա՝ հավուն տոտոզը չորնա:

Ակն

Տանտիկինը կախված տոպրակի մեջ դնում էր մրգեր, հատուկ այդ նպատակով թխված խմորեղեն, ընդեղեն, չամիչ և այլն:

Ընթրիքից հետո, կեսգիշերին երիտասարդները գնում էին թարմ, Նոր տարվա սկզբի հետ նորոգված ջուր բերելու: Շատ տեղերում աղբյուր՝ ջրի գնում էին ընտանիքի մի քանի անդամ՝ տարբեր նպատակներով: Առհասարակ այդ ժամին ջրին հատուկ զորություն էր վերագրվում: Որոշ տեղեր համոզված էին, որ ուղիղ կեսգիշերին, երբ հին տարին տեղը զիջում է նորին, գետի ջուրը մի պահ ոսկի է հոսում: Որոշ տեղեր մինչև կեսգիշեր յոթ անգամ գնում էին մեկական կուժ ջուր բերում և իրար ետևից շարում, մինչև կեսգիշերին՝ ութերորդ կժի ժամանակ հաջողեցնեին «ջրի հետ հոսող ոսկին որսալ»: Ջավախքում երիտասարդ տղաները երկաթե շիշը և ակիշը ծի արած արշավում էին դեպի գետը, նրա մեջ ցորեն ու գարի լցնում և սրբազան ջուրը տուն բերում: Երբեմն այդ ժամին բազմաթիվ մարդիկ շրջապատում էին աղբյուրը, ջերմորեն աղոթում և ջրի շիթերին խառնում Նոր տարվա բնորոշ խմորեղենների կտորներ, գարու, ցորենի հատիկներ՝ ասելով.

- Քեզի կուտամ ցորեն, գարի,
Դուն ա ինձի տու բարի,
Շնորհավոր Նոր տարի:

- Ջրին բարին, ջրին մորին,
Անդնդային թագավորին,
Ջուր կաղնդե՞ր ես:

Այսպիսով շնորհավորում էին ջրի Նոր տարին և միաժամանակ՝ մյուս խմորեղեններից, ինչպես նաև մի խուրձ խոտ թրջելով նորոգված ջրով, ջանում քաղել նրա զորությունը: Ջրի մեջ հատիկներ, հացիկներ գցելով՝ սովորաբար ասում էին.

Առ քեզի գարի,
Տուր մեզի բարի,
Առ քեզի քյոմուր (ածուխ),
Տուր մեզի էօմյուր (կյանք),
Առ քեզի հատիկ,
Տուր մեզի Ջատիկ:

տարբերակ
Առ գարի,
տուր բարի,
առ երկաթ,
տուր դովլաթ:

տարբերակ
Առ քեզի գարի,
տուր ինձի հազար բարի:

Ուշագրավ է, որ ջրի հետ առնչվող սովորություններում ակնհայտ զգացվում է կանանց ու տղամարդկանց որոշ տարբերություններ: Ջրին շնորհավորելու՝ «ջուրը կաղանդելու» սովորույթը վերապահված էր տարեց կանանց. նրանք էին ջրի մեջ հատիկներ ու հացի, խմորեղենի կտորներ գցում, նրանք էին ասում հմայական, շնորհավորական խոսքերը: Կեսգիշերին ջուրը կժերը լցնում էին տղաները, իսկ խոտի խրձերը ջրի տակ թրջում էին տղամարդիկ:

Այդ գիշեր ջրի տակ թրջած հացի մի քանի կտոր որոշ տեղեր ամբարի մեջ պահում էին մինչև տարվա վերջ, որպեսզի հացը առատ լիներ: «Հացի հոր» կոչվող կլոր, ծակ թխվածքը կախում էին տան պատից: Գիշերը թրջված խոտը, տան կենդանիների, երկրագործական գործիքների և այլ այս կարգի պատկերներով թխված հացիկները, ջրում առավոտյան թրջելուց հետո, ուտեցնում էին կենդանիներին: Որպես կանոն ուտեցնելու, հյուրասիրելու այդ պահը ուղեկցվում էր բարեմաղթություններով: Օրինակ, Շապին Գարահիսարում թռչուններին Նոր տարվա առաջին կերը տալիս երգում էին.

- Ճու, ճու, ճու, ձագուկներ, իմ սիրելի վառեկներ,
Մոտ եկեք տամ ձեզ հատիկ, որ տաք ինձի շատ հավկիթ,

Ճու, ճու, ճու, ճու, թռչնիկներ, կարմիր, ճերմակ հավուկներ,
Եկեք կաղնետեմ ձեզ ալ, տամ ձեզ հատիկ, ջուր զուլալ:

Նույն ձևով գոմում, անասուններին կերակրելիս ասում էին.

- Եկեք, սիրուն բուչիկներ (հորթեր), սիրամ (մուգ կարմիր) ու
կարմիր գույներով,
Ձեզի ալ տամ հատիկ, կեր, որ կաղնդչեք եմ բերեր:
Դուք ալ ապրիք տարիներ, ձեր սիրական զավակով,
Համբուրեմ ձեր ճակատներ, սյուսլի՜վ պուռմա կոտոշներ:

Ավելորդ է ասել, որ տան ջրի բոլոր անոթները լցնում էին նորոգ ջրով:

Ջրի կեսգիշերային զորությունը այնքան մեծ էր համարվում, որ ոմանք վստահ էին, որ այդ պահին հոսող ջուրը իր հետ կարող է տանել չքացնել դողերոցքով հիվանդի ցավը: Ջմեռվա այդ սառնամանիքին հիվանդներ կային, որ մերկանում էին և մի ակնթարթով մտնում գուռից հոսող ջրի տակ, ապա գրեթե մերկ վազում նստում թթի ծառի վրա: Ծառի տակից մեկը ծայն էր տալիս. «Ի՞նչ ես անում այդտեղ»: «Թութ եմ ուտում»,- պատասխանում էր հիվանդը: «Հիմա ու թու՜թ, հիմա ու դո՜ղ»,- գոչում էր ծառի տակինը և կացնով զորավոր հարված հասցնում ծառի բնին: «Ի՞նչ ես անում»,- «սարսափահար» հարցնում էր «թութ ուտողը»: «Խփում եմ ու եթե ձեռքիցս գա՝ հոգիդ էլ կհանեմ»,- սպառնում էր ծառի տակինը և իբրև թե սարսափահար դողը անմիջապես լքում էր հիվանդին:

Հացից ու ջրից զատ նորոգվում էր նաև կրակը: Դեռևս քսաներորդ դարասկզբին օջախն էր տաքացնում տունը, օջախի վրա էին կերակուր պատրաստում: Օջախն առհասարակ տան սրբազան անկյուններից էր, և նրա հետ կապված բազմաթիվ ավանդական սովորություններ ապահովում էին օջախի բարոյական ու առարկայական անձեռնմխելիությունը: Բայց Նոր տարվա օջախն առանձնահատուկ էր, երբ նորոգվում էր կրակը: Շատ տեղերում մի մեծ քոթուկ էին դնում օջախի մեջ՝ աստիճանաբար առաջ մղելու պայմանով այնպես, որ մինչև Ծնունդ կրակն անմար մնար: Բոլոր դեպքերում անմար էր պահվում Նոր տարվա գիշերվա և հաջորդ օրվա՝ հունվարի 1-ի օջախը: Ավելի ուշ, Ծննդյան երեկոյին վերցնում էին այդ քոթուկից մնացած խանձողները, տանում հանդերում թաղում, որ բերքն առատ լինի և կարկուտը չխփի, ինչպես նաև պահում էին ու կարկուտի ժամանակ դուրս նետում, որ կարկուտը կտրվի: Տնեցիներից ով էլ այդ օրը տուն մտներ, նույնիսկ օրվա ընթացքում մի քանի անգամ, անպայման հետը թեկուզ մի փայտ էր ներս բերում և դնում օջախը՝ մի տեսակ շնորհավորելով տոնի առթիվ: Միայն տան մեծի բերած փայտի կտորը մի փոքր վառվելուց հետո հանում էին, կրակը հանգցնում և մոխրում թաղում: Այդպես էին անում մինչև Զրօրհնեք, որից հետո տանում թաղում էին արտի ծայրում, որ հունձն առատ լինի: Այդ օրերին օջախի կրակի պայծառությունն առհասարակ «ապահովում էր» ընտանիքի կյանքի պայծառությունն ու ջերմությունը տարվա ընթացքում:

Բազմապիսի գուշակությունները, ինչպես ասվեց, Նոր տարվա տոնի բնորոշ, անբաժան մասն էին կազմում: Օրինակ, Ջավախքում նոր տարուն տնից առաջին անգամ դուրս գալիս հայրը գոմ էր մտնում տնեցիների ուղեկցությամբ, ձին քաշում գոմի մեջտեղը, և բոլորն անհամբեր սպասում էին, թե ձին ինքնուրույն ո՞ր ոտքը առաջինը կբարձրացնի: Աջը բարձրացնելը մեծ բարեբախտություն էր գուշակում, ձախը՝ ձախորդություն: Նույն Ջավախքում հունվարի 1-ն առհասարակ «բախտ-փորձուկ» էր: Երիտասարդ տղաներն ու աղջիկները նախորդ օրը թխված «ղառղռի կլիկները»՝ կլոր, փոքրիկ հացիկները դնում էին կտուրներին կամ դեզերի վրա և հետևում, թե դրանք կտցող ագռավները ո՞ր կողմը կթռչեն. այդ կողմից էլ սպասվում էր հարսնացուն կամ փեսացուն: Կիպրոսի հայերը նույն գուշակությունն անում էին եզան հետ. հունվարի մեկի առավոտյան տանտերը գոմ էր մտնում, լայնատերև թփով հարվածում պատերին, մսուրին, բոլոր ընտա-

նի անասուններին, ապա երկու կլոր խմորեղեն հագցնում սիրելի եզան կոտոշներին, այդ խմորեղեններին երկու վառվող մոմ փակցնում և եզանը դեպի դուռը հրում. եթե եզը դռան սեմը աջ կճղակով անցներ՝ բարի նշան էր, եթե ձախ՝ վատ, չարագուշակ: Ուստի ամեն ջանք գործադրում էին, որ եզը աջ կճղակով անցներ:

Այլ վայրերում գիշերը, երբ տնեցիները նստում էին մոմի լույսի ներքո և մոմի լույսից պատերին գծագրվում էին ստվերները, այդ ստվերների ձևերով, լուսավորության ու դժգունության աստիճանով գուշակում էին դրանց տիրոջ լուսավոր կամ մութ, անորոշ ապագան տվյալ տարվա համար: Աղջիկներն էլ ծուն մաքուր լվանում էին, մի թասի մեջ ճերմակ ծվի կողքին դնում էին ածուխ ու հինա և գիշերը թողնում թոնրի շրթին: Եթե առավոտյան ծուն կարմրած լիներ, ենթադրում էին, որ այն դնող աղջիկն այդ տարի կարմիր բախտի կարժանանա, այսինքն՝ կամուսնանա, սևանալու դեպքում սև բախտ էր սպասվում, նույնիսկ՝ մահ: Աղջիկների ճակատագրի գուշակության մեկ այլ ձև էր այն սովորությունը, երբ նրանք գիշերը երեք անգամ ավլում էին թոնրի պատերը և այդ նույն ավելը գիշերը դնում իրենց բարձի տակ: Եթե առավոտյան ավելի ճյուղերից ոչ մեկը ջարդված չէր լինում՝ լավ ճակատագիր էր գուշակվում:

Գուշակություններից զատ, մի շարք միջոցներ էին ձեռնարկում հաջողություններն ապահովելու: Նախ, այդ օրը խուսափում էին որևէ մեկին փոխ տալ, հատկապես՝ թթխմոր, դրամ, առհասարակ ծախս չէին անում: Առավոտյան տան դուռն առաջինը տան մեծն էր բացում, որպեսզի նա շատ տարիներ իր տանից անպակաս լիներ: Առավոտյան վաղ նոր բերած ջուրը հեղում էին տան անկյուններում՝ տան առատությունն ապահովելու համար, նույն նպատակով յոթ տան աղբանոցից փայտի խշուրներ էին հավաքում և գցում իրենց աղբանոցը, միմյանց նվերներ էին տալիս, հատկապես մեծերը՝ փոքրերին: Վաղ առավոտյան տան մեծը մատուցարանի մեջ շարում էր հաց, գինի, մեղր և չորս խնձոր, որոնց վրա չորս մեղրամոմ էր վառվում: Մատուցարանը տանելով տան չորս անկյունները՝ ասում էր. «Անուշ արեք, ովքեր չեք երևում, շնորհավոր նոր տարի»: Ապա դուրս էր գալիս և աղոթում Աստծուն, խնդրելով, որ ամբողջ տարին իր տան համար անցնի այնպես քաղցրությունով, ինչպես քաղցր է մատուցարանը, տուն մտնում, տան բոլոր անդամներին հրավիրում ճաշակելու հացից ու մեղրից, ասելով՝ «էսպես քաղցր պառավես»: Վերջապես մեղրից խաչածև քսում էր դռան ճակատին և վառած մեղրամոմի ծխով սևացնում քսած տեղը, մի կարմիր շոր կապում և ներս մտնելով՝ երեխաներին բաժանում նրանց համար թխված խմորեղենները: Դրանից հետո, մինչ նա «կաղնդում» էր հավերին, տան տղամարդը «կլկալներն» առած մտնում էր գոմ՝ նախապես գոմի դռան վերևը մեղրով խաչ քաշելով, գոմեշների աջ եղջյուրին մի-մի կլկալ անցկացնում, բերաններին մի քիչ մեղր քսում:

Նոր տարվա գիշերը Նոր Նախիջևանցիները վախենում էին «խոնջոլոզների» և «առայիմ-թառայիմ»-ների երևալուց: Խոնջոլոզները տանիքներում, կտուրի տակ ապրող էակներ էին, պատռված հագուստներով, որոնց ծվեններից երկաթե գնդեր էին կախված: Եթե նրանց հաջողվում էր որևէ մեկին բռնել, նստում էին նրա վրա և ճնշում իրենց ծանրության տակ: Առայիմ-թառայիմները կարող էին մտնել հնոցների ծխնելուղից և դուրս գալ վառարանի դռնից: Առայիմ-թառայիմները պատկերացվում էին երկաթե երկար եղունգներով, երկար ու սպիտակ մազ-մորուքով: Սրանք հիշեցնում են պարսկահայերի «խլվլիկը»:

Որոշ տեղեր Նոր տարվա հետ հմայում-հեռացնում էին բոլոր չարիքները: Այսպես, տան անդամներից մեկը բարձրանում էր տանիք և այնտեղ սկսում աղմուկ հանել, փայտով, կացնով, որևէ սուր բանով: Ներքևից մեկը հարցնում էր.

- Ի՞նչ ես անում:

- Սուկ եմ բռնել, - պատասխանում էր վերևինը:

- Ո՞ւր պիտի ուղարկես:

- Ստամբուլ (պատասխանը պիտի պարունակեր որքան հնարավոր է հեռու երկրի անուն):

Որոշ դադարից հետո վերսկսվում էր աղմուկը, կրկնվում էր հարցը.

- Ի՞նչ ես անում:

- Ցավ եմ կտրում:

- Ո՞ւր պիտի ուղարկես:

- Ինգլիզ (որքան անհասանելի է երկիրը, այնքան լավ, սակայն կարող էր «ուղարկվել» նաև մոտիկ թշնամի երկիր կամ նույնիսկ որևէ չսիրված մարդու տուն):

Այս երկխոսությունը կարող էր շարունակվել այնքան, մինչև տան բոլոր առկա և հնարավոր դժբախտությունները, կարիքները, չարիքը ուղարկեին, հեռացնեին:

Տան դուռը երբեք չէր փակվում: Առավոտ շուտ կարող էին սկսվել այցելությունները: Բոլոր հյուրերը խիստ ցանկալի էին: Այցելում էին տոհմի մեծերին, ծնողներին, խնամիներին, հարևաններին, քավորին, գյուղապետին, քահանային: Նշանված աղջկան «փայ» էին ուղարկում փեսացուի միջոցով: Շնորհավորելու գնացողները երբեք դատարկաձեռն տուն չէին մտնում, առնվազն մի խնձոր էին ավելացնում սեղանի բարիքներին՝ բարեկեցության և երկարակեցության մաղթանքներով: Թե տնեցիները, թե այցելուները տուն մտնում էին աջ ոտքը առաջինը մտցնելով, այլապես ձախորդություններն անպակաս կլինեին:

Շնորհավոր ձեր նոր տարին, առատ, ուրախ, անկորուստ տարի լինի, բարով հասնեք մեկ էլ էս օրվան, առողջ, երջանիկ լինեք, բոլոր պանդուխտները վերադառնան:



Գրականություն

1. Ալիշան Ղ. Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 302:
2. Ամատունի Ս. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 60:
3. Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 91:
4. Արշարունի Ա. Հայ ժողովրդական թատերախաղեր, Երևան, 1961, էջ 117-131:
5. Բդոյան Վ. Վանատուր և Ամանոր ծպտյալ պաշտամունքների հարցի շուրջ, «Լրաբեր», 1976, թ.12:
6. Բդոյան Վ. Պատառիկներ Վանատուր-Ամանոր դիցաբանական զույգի վերաբերյալ, Բանբեր Երևանի համալսարանի, 1980, թ. 2:
7. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 333:
8. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 67-68:
9. Լալայան Ե. Ջավախք,Երկեր, հ.1, երևան, 1983, էջ 266-270:
10. Լալայան Ե. Վարանդա, Երկեր, հ.2, երևան, 1983, էջ 193:
11. Լալայան Ե. Գանձակ,, Երկեր, հ.2, երևան, 1983, էջ 444:
12. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898:
13. Լալայան Ե. Զանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, էջ 106:
14. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 249-252:
15. Լիսիցյան Ս.Զանգեզուրի հայերը, Երևան, 1969:
16. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, երևան, 1981, էջ 67:
17. Կաղանդ: Նոր տարւոյ սովորութիւն, «Բազմավեպ», 1848:
18. Կարապետյան Ե. Սասուն, Ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 122:
19. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 224-227:
20. Ճանիկեան Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 102:
21. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 18-36:
22. Մարտիրեան Մ. Հայկական ամանոր, «Ազդակ», 1990, 3 հունվարի:
23. Մխիթարեանց Ադ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրիա, 1901, էջ 262-263:
24. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972, էջ 40:
25. Մովսիսյան Ե. Նոր տարի (պատկեր Շիրակի գյուղական կյանքից), «Արարատ», 1896:
26. Նազարեանց Յ. Նախապաշարմունք, Տփխիս, 1878, էջ 74-76:
27. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902. էջ 5-9:
28. Չոլաքյան Յ. Քեսապ, հ.Բ, Հալեպ, 1998, էջ 188-191:
29. Պողոսյան Ե. Նոր տարւոյ տոնը հին և նոր հայոց քով, Վիեննա, 1952:
30. Սարգիսեան Յ. Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 13-17:
31. Սրվանձտյանց Գ.Գրոց ու բրոց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 40:
32. Վահան վարդապետ Տէր-Միհասեան, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, հատոր Բ, Կ.Պոլիս, 1904:
33. Քաջբերունի Հ. Հայկական սովորություններ, ԱՀ, գիրք 7-8, Թիֆլիս, 1901:
34. Օդաբաշյան Ա. Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, ՀԱԲ, հ.9, Երևան, 1971:
35. Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892, стр. 119.
36. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник", 1, М., 1955:

ԾՆՈՒՆԴ (ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ), ՋՐՕՐՀՆԵՔ (ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ)

Ծննդյան տոնը (հին անունը՝ Աստվածահայտնություն) Քրիստոսի ծննդյան տոնն է և նշվում է աշխարհի բոլոր քրիստոնյա ժողովուրդների կողմից: Քրիստոնեության վաղ շրջանում այս տոնը նշում էին հունվարի 6-ին՝ Քրիստոսի մկրտության տոնի հետ միասին: 4-րդ դարում Հռոմի եկեղեցին որոշում ընդունեց ծննդյան տոնը նշել դեկտեմբերի 25-ին, Մկրտությունը՝ հունվարի 6-ին: Այս որոշումը 451թ. վավերացրեց Քաղկեդոնի ժողովը, որից հետո աշխարհի բոլոր քրիստոնյա ժողովուրդները, բացի հայերից, Ծնունդն ու Մկրտությունը նշում են անջատ-անջատ: Հայոց եկեղեցին հավատարիմ մնաց ծնունդը հունվարի 6-ին նշելու ավանդույթին և մինչև հիմա այդ օրենքը պահում է անխաթար: Նույն օրը նշվող Մկրտության տոնը խորհրդանշում է Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը: Ուշագրավ է, որ հայ եկեղեցու պատմության հեղինակ Մ.Օրմանյանը 303թ. հունվարի 6-ը համարում է Տրդատ թագավորի և պաշտոնապես ճանաչված հայ առաջին քրիստոնյաների մկրտության օրը Բագավանում, ինչով և հայ եկեղեցու համար հունվարի 6-ի տոնը կրկնակի իմաստ է ստանում՝ որպես Քրիստոսի մկրտության և առաջին հայ քրիստոնյաների մկրտության տոն: Այս տոնի կատարման հանդիսակարգի վերաբերյալ հայոց եկեղեցին ունի որոշակի կանոններ, ինչպես՝

- *Ծննդյան և աստվածահայտնության տոնը կատարվի հունվարի 6-ին, մեծ փառքով և սաղմոսերգությամբ ու հոգևոր երգերով:*
- *Պետք է և արժան է հայտնության օրը ջուր օրհնել և վրան մեռոն կաթեցնել՝ ի հիշատակ Քրիստոսի մկրտության:*

Ահա այս վերջին հանդիսությունը նկատի ունենալով, ժողովուրդն այդ տոնն անվանել է «Ջրօրհնեք»: Հիրավի, Ծննդյան ու Մկրտության տոնը ժողովրդին հայտնի է գլխավորապես «Ջրօրհնեք» անունով, չնայած հաճախ օգտագործվում է նաև «փոքր Զատիկ» անունը:

Հայ ժողովրդի կենցաղում Ծննդյան տոնի հանդիսությունները պտտվում էին նախ և առաջ եկեղեցական ծիսակարգի շուրջը: Բայց և այնպես դրանց միահյուսվել էին որոշ ժողովրդական սովորույթներ, որոնք տոնին մասնակիորեն հաղորդում էին ժողովրդական բնույթ: Ծննդյան տոնին նախորդող շաբաթը պաս էր ու չնայած այդ շաբաթվա մեջ էր ընկնում հունվարի 1-ի Նոր տարվա տոնը, հայերը, ինչպես տեսանք, խստորեն հետևելով պասերին բնորոշ կերակրատեսակներ օգտագործելու կանոնին, նույնիսկ Նոր տարվա տոնին չէին գործածում մսեղեն, կաթնեղեն, յուղ և կենդանական ծագում ունեցող այլ մթերքներ: Այդ նույն շաբաթ խստորեն արգելված էր գիշերն աշխատել, «այլապես Քրիստոսը կբարկանար»: Իսկ շատ տեղեր

առհասարակ որոշ տեսակի աշխատանքներ չէին անում, ինչպես՝ բուրդ գզել, ճախարակ մանել, բամբակ գզել: Վանում բացառիկ կարևորություն տալով Օննդյան տոնին, անհրաժեշտ էին գտնում, որ ընտանիքի բոլոր անդամները նոր զգեստ ունենան, առնվազն՝ գոնե մի նոր շապիկ, այլապես՝ «Զատիկը կծրտի»:

Հաստատված ավանդույթի համաձայն, հունվարի 1-ից մինչև հունվարի 6-ը օջախներում կրակը անմար էր մնում, ինչը այդ երկու տոներին հաղորդում էր որոշակի անընդհատություն: Հունվարի 5-ին եկեղեցում տեղի էր ունենում Օննդյան ժամերգությունը, որին ներկա էին միայն տղամարդիկ: Միայն ժամերգությունից հետո է, որ կարելի էր պասը բացել: Այն ընտանիքները, որտեղ եկեղեցի հաճախելու տարիք ունեցող արու անդամ չկար, կանայք դուռը բաց սպասում էին ժամերգությունից վերադարձողներին, որևէ տղամարդուց Օննդյան ավետիս լսում և պասը բացելու թույլտվություն խնդրում:



Հունվարի 5-ի երեկոն բոլոր հայ ընտանիքներում թաթախման երեկո էր, երբ, ժամերգությունից վերադառնալով, պասը բացում էին Օննդյան տոնին ընդունված ճաշատեսակներով: Առհասարակ Օննդյան տոնի բուն ժողովրդական հանդիսակարգը կենտրոնանում էր թաթախման երեկոյի ընթրիքի շուրջ: Ժամերգությունից տուն դարձողները տանում էին իրենց հետ այնքան մոմ, որքան անդամ կար տվյալ ընտանիքում: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սպասքի առաջ վառում էին նրա համար նախատեսված մոմը և մոմերի լույսի ներքո բոլորում սեղանի շուրջ: Այդ երեկո սեղանի գլխավոր զարդը ձկնեղենի զանազան տեսակներից պատրաստված խորտիկներն էին՝ խաշած, տապակած, ձկով կարկանդակ, խորոված ձուկ և այլն: Ձկնատեսակներին ուղեկցում էին առատ յուղով օծված բրնձի, ձավարի, արիշտայի խառը կամ անխառն փլավները, ալյուրից պատրաստված ու դոշաբով կամ մեղրով քաղցրացրած խաշիլը, սիսեռով ու չորացրած բանջարեղենով ապուրը, որ հայտնի է «մայրամա

ճաշ» անունով: Մշեցիները «մայրամա ճաշը» պատրաստում էին «սպիտկուկ» կոչվող կանաչիից, որ հայտնի էր նաև «մայրամա բանջար» կամ Մարիամի ծամեր անունով: Համոզված էին, որ այդ բանջարը ժամանակին ինքը՝ Մարիամն է քաղել: Նույն Մուշում կանայք հավատում էին, որ եթե Մայրամա ճաշից մի քիչ քսեին իրենց փոքր աղջիկների գոգին ու լիզեին՝ այլևս մազ չէր բուսնի:

Օննդյան տոնը հատուկ հանդիսավորություն ուներ Քեսապում: Ինչպես վկայում է քեսապցի Հակոբ Չոլաքյանը, «Օնունդի շաբաթը Քեսապի կնոջ համար հանգիստ չկար: Մինչև Խթման գիշերը կինը պետք է պատրաստեր բազմաթիվ անուշեղեններ ու ճաշեր և լեցներ բաց սեղանը, որ Նոր տարիեն մինչև Օնունդի երկրորդ շաբաթը լեցուն կը մնար»: Այստեղ անպայման թխվում էր Օննդյան հռչակավոր «փախլավան», որ մի ամբողջ օր էր տևում, ինչպես նաև թխում էին զանազան հացեր (ճիֆթով, ծոթրինով, պանրով և այլն):



Ծնունդի նախորդ օրը մորթվում էր կենդանին՝ հատկապես այդ օրվա համար խնամված խոյ, այծ, ոչխար կամ հորթ: «Ապա կինը կը ծեծեր կարմիր միսը, իսկ այրը կը մաներ լիցքի միսերը: Խթման գիշերով գլորի շաղը առատ կ'ըլլար: Նստասենեակի կրակին առջեւ կինը կը պատրաստէր **սուխմիկն** ու **ղավուրման**, ապա **գլոր** կը բանար, կը լեցներ, մեկ մասը կը տապկեր, մեկ մասն ալ կը ձգեր Ծնունդի օրուան **մածունով գլորի** համար: Շաղին մեկ բաժինն էլ փոքրիկ նկանակներու պես **քիշկիկ** կը բանար, կը տապկեր կամ սաճի վրայ կը խորովեր: Տապկած գլորն ու քիշկիկը սեղանեն պետք չէ պակսէին այդ շաբաթ: Խթման սեղանը կը լեցուէր գլորով, քիշկիկով, բոկեղով, հացի տեսակներով, փախլավայով, չիրեղեններով, խմիչքներով, գլխավորաբար՝ օղի և գինի: Խորովածը խթման գիշերվան սեղանին զարդն էր»:

Քեսապին հակառակ հայոց ազգագավառների մեծ մասում Ծննդյան տոներից առաջ երբեք անասուն չի մորթվել և «երբեք ներելի չէ այս օրվա մորթածը ուտել»:

Ծննդյան ընթրիքը կատարվում էր ուշ երեկոյան, ճրագի լույսի տակ: Ինչպես վարդապետ Վահան Տէր-Միհասյանն է գրում, «Մինչև երկնքի յոթը լույսերը չհաշվեին, պասը կամ ծոմը չէր լուծվի»: Ընթրիքից առաջ տանը խունկ էին վառում: Ընտանիքը նոր էր բոլորած լինում ընթրիքի սեղանի շուրջ, երբ դուռը ծեծում էին: Տանտիկինը հասկանում էր, որ դողերոցք ունեցող մեկն է, որ հիվանդությունը բուժելու նպատակով ուխտ է արել Ծննդյան ընթրիքին յոթ դռնից փայ հավաքել: Դժբախտին, անկասկած, գոհացնում էին: Ընթրիքը վերսկսվում էր, և դարձյալ դուռը ծեծում էին: Սա արդեն պիտի շարունակվեր բավական երկար: Քրիստոսի ծնունդն ավետող խմբերն էին, որ սկսել էին իրենց այցելությունները: Սպիտակ շապիկ հագած պատանիների 3-5, երբեմն՝ 6-7 հոգիանոց խմբերը շրջում էին տնետուն, երգերով ավետում Քրիստոսի ծնունդը և փոխարենը ստանում յուղ, ձու, ընկույզ, այլ մթերքներ կամ մանր դրամ: Մի խմբում առջևից գնում էր «շուն թակողը» մահակը ձեռքին (սա պետք է քշեր հարձակվող շներին), նրան հետևում էին «ալյուր տանողը»՝ տոպրակը շալակին, «ձու հավաքողը»՝ թասը գլխին և մյուսները: Մեկ այլ խմբում չորացած դդումի մեջ անցք են արել, հարմարեցրել, ճրագ սարքել, և այս ճրագը երդիկից, պատուհանից կամ դռնից ներս են տանում այն բոլոր տներում, ուր նրանք այցելում են: Նրանք գալիս են երգելով, աղմուկով: Երգի թեման ամենուր սկսվում է Քրիստոսի ծննդյան պատմությունից, այնուհետև պատմվում է, թե ինչպես է շինվել Երուսաղեմը, ինչպես այդ շինարարության ժամանակ սյուն ու գերանը պակասել են, առել են սղոցն ու կացինը և գնացել են ծառ կտրելու: Երբ կացինը ծառին կպել է, ծառը ճչացել է, երբ սղոցն է կպել, ծառից արյուն է բխել և այլն: Ապա երգողներն սկսում էին գովել այն տունը, որտեղ տվյալ պահին գտնվում էին, այն նմանեցնելով Երուսաղեմին, գովելով տան գույքը և վերջապես՝ տան պստիկ արու զավակին: «Ավետիս» երգերը շատ բազմազան էին, երգվում էին դրանք տեղական բարբառով և որպես կանոն ժողովրդական բանահյուսության արգասիքներ էին: Դրանցում դրսևորված էին Քրիստոսի ծննդյան ու կյանքի վերաբերյալ ժողովրդական պատկերացումները, գովերգվում էին Փրկչի առաքինությունները, հրաշագործությունները և այլն: Սակայն կային նաև Քրիստոսի հետ կապ չունեցող երգեր, որոնցում հնչում էր ընտանիքին արվող բարեմաղթությունների թեման և, այնուամենայնիվ, որպես Ծննդյան տոնի երգեր, դրանք նույնպես կոչվում էին «Ավետիսներ»: Բոլոր երգերը վերջանում էին «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, մեզի, ձեզի մեծ ավետիս» խոսքերով:

Ահա, օրինակ, Վանի գյուղերում երգվող «Ավետիս»-ը.

Այսօր տոն է Ծննդյան, ավետի՛ս,
Աշխար լցվավ լիություն, ավետի՛ս,
Մեր տերն էլավ նախատակ, ավետի՛ս,
Ծժողքն էլավ տուռ խորտակ, ավետի՛ս:

Ապա մեղեդին փոխվում էր.

Մարիամն կնաց տուռն հերին, ալելույա՜,
Օնավ, պիրեց Հիսուս որդին, ալելույա՜,
Քրիստոս որդի կյրկանոցին, ալելույա՜,
Քյավոր՝ Սիմոն խերն արեցին, ալելույա՜:

Սրան հաջորդում էր հարց. - Ինչպե՞ս է ձեր փոքրիկի անունը: Տնեցիները պատասխանում էին, դիցուք՝ Գրիգոր: Երգիչները շարունակում էին.

Գրիգորի ճուք ճըքացավ, ալելույա,
Քյանգ բարդի ծառ հերկնցավ, ալելույա,
Խեր կերավ խպառտացավ, ալելույա,
Մեր կերավ զվարթացավ, ալելույա,
Քյոր կերավ, խորոտկըցավ, ալելույա,
Ախպեր կերավ, հայլորցավ, ալելույա,
Մամիկ կերավ, ջըհելցավ, ալելույա,
Պապիկ կերավ, անմախացավ, ալելույա,
Խորքուր կերավ, գյումրախացավ, ալելույա,
Խորոխպեր կերավ, դանդըռնացավ, ալելույա,
Քեռաղեն կերավ, առողջացավ, ալելույա,
Քեռմամեն կերավ, բախտավորցավ, ալելույա,
Մորքուր կերավ, ինգավ թոնիր, կոտն իրիցավ, ալելույա,
Քյանիմ կերան, չպստկցավ, ալելույա,
չպստկցավ, ալելույա:

Իսկ ահա Լոռիում երգվող «Ավետիս»-ի մեկ օրինակ, որ զգալի տարբերվում է Վանա «Ավետիս»-ից.

Բարի րիգուն ձեզ, ալելույա,
Հա ցնծացեք, ուրախացեք,
Մեր Մարիամի պասը բացեք,
Մարիամը գնաց էլի ծնունդ,
Օննդվեցավ, ազատվեցավ,
Լուսաթաթախ մանուկ ծնեց,
Ոով ու ցամաք լույսով պատեց,
Յուր խաչ որդին, յուր սուրբ հոգին,
Բարուր կապեց էդ իր գոքին,
Դեռ չէր հասել օխտն օրական,
Լեզուն բացեց, այսպես խոսեց
- Ա մեր, ա մեր, Աստվածամեր,
Ինձ տար տուր տեր Ուհանին,
Ոսկե բերան էն գահանին;
Տարան տվին տեր Ուհանին,
Ոսկե բերան հայրապետին,
Կուս գգեստով շուրջառեցին,
Լուս մանուկը ձեռքը տվին,
Գետ Հորդանան մկրտեցին,
Հիսուս մանուկ անվանեցին,

Ողջ աշխարհը կանգնեց հուսով,
Հենց որ դարձավ տասը տարեկան,
Ամենքին էր խիստ սիրեկան,
Երկու տարին վրեն անցավ,
Տասներկուսը բոլորվեցավ,
Դարձյալ մոր հետ այսպես խոսեց,
Քաղցր լեզվով խնդրեց, ասեց
- Ա մեր, ա մեր, Աստվածամեր,
Ինձի շուտ տար երուսաղեմ,
Սուրբ գրքերից օգուտ քաղեմ,
Միտք իմանամ, միտքս բանամ,
Աստծու ճամփեն լավ հասկանամ:
Մայրը առավ, հետը տարավ,
Ըստեղ նա շատ գրուց արավ,
Վարպետներին հարցմունք արավ,
Հաղթությունը ինքը տարավ:
Վարպետները խիստ բարկացան,
Տեղներիցը շուտ վերկացան,
Խորհուրդ արին նրա մասին,
Խորհրդի մեջ այսպես ասին.
Սա չի անիլ մեզ մոնքութին,
Սա մեզ կանի վարպետութին,
Ըրեցներին գանգատ արեք,
Ավագներին կաշառեցեք,
Եվ Մարիամին շուտ զարգեցեք,
Իր որդու հետ ետ դարգեցեք:
Մայր ու մանուկ որ իմացան,
Նրանք էլ էստեղ շատ չի կացան,
Որդին տեսավ մորը լալով,
Լալով, լալով, մղկտալով,
Դարձավ ասավ նա յուր մորը.
- Ոչինչ բան ա էս բոլորը,
Ոչինչ, թե որ ինձ չեն թողում,
Իմ հոր տանը, իմ հոր հողում,
Բերան բանամ ուսուցանեմ,
Բարի գործոց սերմեր ցանեմ,
Բայց որ կգա, կգա ժամը,
Կառնուն դրանք իմ ուսման համը,
Չիք կդառնա չարակամը,
Կը մոտենա բարեկամը:
Մեր ու մանուկ շատ նեղացան,
Նրանք էլ այստեղ շատ չկացան,
Մանուկն ասաց, - Գնանք մեր տունը,
Ես կը կտրեմ աչքիս քունը,

Մած ու մանգաղ կբանեցնեմ,
Կաթնով աղբյուր կբխացնեմ,
Քոռ ու քաչալ կը սաղացնեմ,
Ես քեզ ընդով կը կերակրեմ:

«Ավետիս»-ի այս տարբերակը շատ տարածված էր: Ընդարձակ կամ համառոտ՝ այս բովանդակության «Ավետիսներ», տեղական բարբառներով, երգում էին շատ տեղերում: Օրինակ, Նոր Նախիջևանի հայկական գյուղերում երգվող մի շարք «Ավետիսներից» մեկի սկիզբն այսպիսին էր.

Քեզ երանի, կույս Մարիամ,
Պըտոր ծնանիս Աստվածորդին,
Աստվածորդին, Հայր, Սուրբ հոգին:
Մարիամ բերեց յուր մեկ որդին,
Բերեց իր հետ աշկերտութին,
Մենք գրեցինք Ա, Բ, Գ, Դ,
Նա կկարդար քերականներ,
Մենք գրեցինք քերականներ,
Նա կկարդար սաղմոսարան,
Մենք գրեցինք սաղմոսարան,
Նա կկարդար ավետարան
և այլն, և այլն:

«Ավետիս»-ներից առավել սիրված ու տարածված էին մանկական անպաճույճ խոսքերով տան գովքը, տան անդամների բարեմասնությունները գովող ու ընտանիքին բարեմաղթություններ պարունակող երգերը: Նույն Լոռիում, օրինակ, երեխաները երգում էին.

Բարրիգուն ծեզ, ալելուիա,
Աշեն, աշեն, էս տունը շեն,
Սին ու գերան սողոմքաշ են,
Էս տանը երկու օրորոց,
Մինը բարի, մինը չարոց,
Չարինը չարով կործանվի,
Բարին բարով առաջվի,
Տունը շեն, տունը շեն,
Չեր պստկի անումն ի՞նչ ա:

Հետևում էր պատասխանը, դիցուք՝ Արամ.

- Արամը գնաց մերին,
Եդ մտիկ արավ իրան հոր կանանչ քերին,
Չեռը ջիբը տարավ,
Չալ աբասին չարը տարավ,
Մի պոչատ հավ տվեք,
Կամ մի ստիլ եղ, ալելուեն տանի:

Տավուշում երգվող «Ավետիս»-ի բերվող տարբերակը դրսևորում է հիշյալ երկու ձևերն էլ.

Ալելույա, Ալելույա,
Աշեն, աշեն, էս տնաշեն,
Սեղան քաշեն էս տնաշեն,

Հրես իրի մի ձիավոր,
Լախտը ձեռին բոզ ձիավոր,
Աջու ձեռին ավետարան,
Ձախու ձեռին սաղմոսարան,
Ըստով գրեց, ընդով ջնջեց,
Քոռն ու քաչալ սըղըցրեց:
Ավագ մոնթին կաշառքեցին,
Դբա Մարիամ ուղարկեցին,
Մարիամն իրի լալով, լալով,
Լալ մի, լալ մի ճրնկեօհալով,
Որ ոտ փոխեր արքն հաղեր,
Փունջ մանիշակ ետնեն հաղեր,
Հրես իրի իրիցընին,
Իրար իդուս գեանգիշ արին,
Կաթնաղբյուրը փըլքըցրին:
Օրինել աստված կեարունքացավ,
էրգեան կյուքան մեգնըվեցավ,
Ջուխտ օրօրոց օրօրվեցավ,
Տընըշեն, տընըշեն, ձեր պստկի անումն ի՞նչ է:

Ինչպես միշտ, հետևում է պատասխանը, ասենք՝ Արամ ու Անուշ.

- Արամին ու Անուշին,
Հորը տա, մորը տա,
Ծաղկեն, ծլեն,
Ձեռը ջիբը տանեն,
Չալ աբասին հանեն:
Չարը տանի, - մի թունգի գինի,
Մի գթալ եղ, երկու ձու,
Երկու ձուկը, մի ջամ ալիր,
Ով որ էսքան ասածս չտա,
Կաղ գելը մորը տանի:

«Լախտը ձեռին բոզ ձիավորը» գլխավոր հերոսն էր Աշտարակում, Վաղարշապատում (էջմիածին) երգվող «Ավետիս»-ների: Աշտարակում, օրինակ, երգում էին.

Ալելույա, ալելույա,
Եվ ցնծացեք, ուրախացեք,
Մեր Մարիամի պասը բացեք,
Մարիամ գնաց լեռն ի ծնունդ,
Ծննդեցավ, ազատվեցավ,
Հրես եկավ մի ձիավոր,
Լախտը ձեռին բոզ ձիավոր,
Աջու ձեռին ավետարան,
Ձախու ձեռին սաղմոսարան,
Չինի, չինի, ձեր տղեքանց անունն ի՞նչ ա:

- Արուսյակ:

- Արուսյակին բախտը հանենք,
Աջու ձեռը ջիբը տանենք,
Դուշմանի աչքը հանի,
Տասը շահին չարը տանի:

Վաղարշապատում ավելի կարճ էին կապում.

Հրես եկավ մի ծիավոր,
Լախտը ձեռին բոզ ծիավոր,
Աջու ձեռին ավետարան,
Ձախու ձեռին սաղմոսարան:
Չինի, չինի, ձեր տղեքանց անունն ի՞նչ ա:

- Արշավիր:

- Արշավիրը նստի թախտը,
Ձեռը տանի ջիբը,
Մի բուռ ոսկի հանի,
Չարը տանի, բարին բերի:

Այլ երգերում երգասացներն ավելի ծավալվում էին տան պստիկի գովքի շուրջ, դրվատելով նրա բարեմասնությունները, արժանիքները, երանելի կյանքը.

Սեղան յառջև խազար բարին, ալելույա,
Կթխեն ի ձեռն նռան գինի, ալելույա,
Հակոբ նստե ծառի տկին, ալելույա,
Մազեր թալե ծառի ճօղին, ալելույա,
Հակոբ խեծեր կապուտ քուռակ, ալելույա,
Մեջքն ա զարկեր պողպատ-ուրագ, ալելույա:

Կամ

Վահանը ճուք՝ ճթացավ, ալելույա,
Քյանց բարդի ծառ երկնցավ, ալելույա,
Ճյողիր իթալ քյաղքե քյաղաք, ալելույա,
Հըմեն ճյողին ջուխտմ ճրագ, ալելույա,
Վերեն ի ծառի սինամահավք, ալելույա:

Ուրիշներում շեշտը դրվում է ողջ ընտանիքի բարեկեցությանը.

Թող ձեր սեղանն բոլորի, ավետիս,
Կթխան ի մեջ գինով ի լի, ավետիս,
Ձեր բարեկամքն ուրախանան, ավետիս,
Չարակամքն ի դուռս պատառին, ավետիս:

Կային նաև ավելի զուսպ, հասարակ «Ավետիս»-ներ: Գեղարքունիքում, օրինակ, տան երեխայի անունը ճշտելուց հետո հաջորդում էր.

Սուրեն խեծավ պոթ-պոթ քուռակ,
Մեջքն զանե պողբաղ ուրագ,
Ալելույա, ալելույա:

Աստված պահա ձեր Սուրեն,
Ձեր մալին, դովլաթին աջողում հեղի,
Մեզի էսօր փայ տվեք:

Որոշ տեղեր, ինչպես, օրինակ՝ Հադրութում, «Ավետիս» երգող տղաների խմբերը գնում էին հարևան գյուղերը, շրջում մի քանի օր, հավաքում մեծ քանակությամբ մթերքներ, որի մի մասը հետագայում բաժանում էին իրար մեջ, մյուս մասով մի քանի օր շարունակ խնջույքներ սարքում, որոնք վեր էին ածվում երիտասարդական հավաքների: Պետք է ասել, որ «Ավետիս» երգողները համեմատաբար կայուն խմբեր էին, որոնք մի քանի տարի շարունակ, մինչև դուրս կգային «շրջելու» հասակից, տարվա մեջ մի քանի անգամ զանազան տոների նույն դերի մեջ էին մտնում: Հայտնի էին հաջող և անհաջող խմբեր: Խմբերը սովորաբար ձևավորվում էին թաղեկիցներից, սակայն ամեն անգամ հայտնի երգողներին հրավիրում-քաշում էին բոլոր խմբերը:

Ծննդյան խորհրդավոր երեկոյի և գիշերվա հետ կապված էին զանազան պատկերացումներ: Բասենում, օրինակ, հավատում էին, որ ծննդյան երեկոյին ծնված մանկան եղունգին նոր մորթված սև հավի արյուն քսելու դեպքում այդ մանուկն ապագայում կդառնար եղունգով հմայող, գուշակ (ի դեպ, նույն հավատը կար նաև Ջատիկի երեկոյան ծնված մանկան հանդեպ): Եթե այդ օրը երեխա էր ծնվում, ծնողները մի գառ կամ սև ուլ էին մատաղ անում: Երեխան տաս-տասնմեկ տարեկան դառնալուց հետո նրան պատմում էին իր ունակությունը, մատաղացու կենդանու թիակը տալիս էին և առաջարկում եղունգին նայելով՝ գուշակել, թե ու՞ր է այս կամ այն կորած իրը: Այլ տեղերում վստահ էին, որ ծննդյան գիշերը հոսող ջրերը մի պահ կանգ էին առնում, և այդ պահին եթե որևէ մեկը որևէ իր ընկղմի ջրի մեջ, այդ իրն անպայման ոսկի կդառնա: Այդ գիշեր հոսող ջրերին առհասարակ վերագրվում էր հատուկ զորություն: Գանձակում, օրինակ, ամուլ կանայք երեք անգամ մտնում էին ջուրը և դուրս գալիս այն հաստատ հավատով, որ ծննդյան գիշերվա ջուրն իրենց զավակ կպարգևեր: Քեսապցիների հիշողության մեջ էլ մնացել է, որ կես գիշերն անցնելուց հետո, երբ լուսաստղը երևում էր, տան տարեց կանայք պատանիներին արթնացնում էին: Մի քանի տղաներ, բոլորովին մերկանալով, մեկ շնչով վազում էին ամենամոտ ջրավազանը, սուզվում ջուրը, հատակից մի փոքր քար վերցնում և դարձյալ մի շնչով, առանց ետ նայելու վազելով մտնում էին պարտեզ ու քարը դնում այն ծառի բնում, որից շատ բերք էին ակնկալում: Դրանից հետո, շարունակելով ետ չնայել, վազելով տուն էին մտնում, ուր կրակը թեժ վառած էին լինում: Այս ծեսը կատարվում էր պարտեզի առատությունն ապահովելու ակնկալիքով:

Հունվարի 6-ին, պատարագից հետո, կատարվում էր Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող արարողությունը, որն, ինչպես ասվեց, ժողովրդի մեջ հայտնի էր «Ջրօրհնեք» կամ «Խաչը ջուրը գցել» անունով: Հավաքված հասարակության աչքի առաջ քահանան խաչը ջուրն էր գցում և մեռոն կաթեցնում ջրի մեջ: Հավաքվածներն անմիջապես օրհնված ջրի մեջ թաթախում էին իրենց ձեռքերը, քսում մարմնի հիվանդ մասերին՝ համոզված, որ օրհնված ջուրը կլավացնի իրենց: Այդ ջրից թասերով, սափորներով տուն էին տանում, կաթեցնում յուղ ու պանրի կարասները, ամբարի մեջ և այլն՝ դրանց առատությունն ապահովելու հույսով: Այդ ջրից պահում էին մինչև հաջորդ տարվա տոնը և գործածում անհրաժեշտության դեպքում՝ մաքրում ապականված ամանեղենը, խմեցնում հիվանդներին, խառնում Տյառնընդառաջի մոխրին, գործածում կարկտի դեմ և այլն:

Մեռոնը ջրի երեսին կաթեցնելիս տարածվելու դեպքում գուշակում էին, որ տարին «լի է լինելու»: Քրդերը Ջրօրհնեքի առավոտյան շրջապատում էին հայ քահանաներին՝ հարցուփորձ

անելով. «Աստված սիրեք, խաչն ի՞նչ ասաց, ձմեռը խիստ կլինի՞, թե՛ մեղմ, ամառը լի՞ է, թե՛ նեղ»:

Խաչը ջուրը գցելու պահը ուղեկցվում էր հրացանների կրակոցներով, աղավնիներ թռցնելով, իսկ որոշ տեղերում այն վեր էր ածվում հիրավի ժողովրդական տոնախմբության, ընդհուպ մինչև՝ ձիարշավներ, այլ մրցախաղեր կազմակերպելը:

Օննդյան տոնին, որպես կանոն, այցելություններ չէին լինում: Մարդիկ միմյանց շնորհավորում էին փողոցում կամ հավաքատեղիներում հանդիպելիս: Սակայն կար մի բացառություն. այն ընտանիքները, որոնք Զատկից հետո ննջեցյալ էին ունեցել, ընդունում էին ցավակցողներին. փոքր Զատիկին ազգականները, մտերիմներն այցելում էին Զատիկից հետո կորուստ ունեցողների ընտանիքին:

Օննդյան տոնին սովորաբար տնօրինեքի ծես էր կատարվում: Հիշենք այստեղ Վանում տնօրինեքին ուղեկցող մի երգ.

Օրհնեցի տունն ու անդիւորն,
Պառավն ու խալիվորն,
Ախչիկն ու տղեն,
Խարսն ու փէսէն:
Թրքոտն ու մկնոտն,
Ձավարն ու կորկոտն,
Մաղազեն ու մառան,
Ամբարն ու հնձան:
Ձէթն ու եղաման,
Սոխն, սխտորն, սխտորաման,
Տաշտն ու մաղն,
Բիբարն ու աղն:
Թան ու թթխմոր աման,
Պանիրն ու չորթան,
Գեոմն ու մարայք,
Ըղծումն ու կարայքն:
Բակն ու ցանի տուն,
Հավն ու հավի բուն,
Պտտուրն ու փթիր,
Խաչէռկաթն ու թօնիր:
Ժաժիկն ու մածուն,
Պռվածքն ու թթուն,
Գիյնին ու ձուկն,
Մանդակն ու պտուկ:
Կարասն ու տյուճիկ,
Կուժն ու կադալիկ,
Ուտօղքն ու սեղան,
Պղինձն ու քեասան:
Արտն ու անդաստան,
Բաղչէն ու բոստան,
Կալն ու ճաղացն,
Յորեան ու հացը:

Ձին ու ջորին,
Խոտ, յարդն ու գեարին,
Կովն ու էշը,
Եզն ու գոմեշը:
Ծառն ու ճիւղն,
Բարն ու պտուղն,
Հովիւն ու ոչխար,
Էծն ու գեառ:

Վաղ անցյալում Ծննդյան տոնը հայոց մեջ շատ ավելի մեծ հանդիսություններ է ունեցել: Պատմում են նույնիսկ, որ ժամանակին թշնամիները լավ իմանալով, որ հունվարի 6-ին հայերը մեծ տոնախմբության պատճառով տներում չեն լինում, այդ օրերին էին գործում հարձակումները: Այդ առթիվ նույնիսկ հատուկ ասացվածք է պահպանվել.

Աստված պահե Հայտնությունե հեծելեն,
Վարդավառի հեղեղեն...

Շիրակում գտնում էին, որ Ջրօրհնեքի տոնից հետո օրը մի գարու հատիկի չափ երկարում է և սովորաբար ասում էին. «Պզտիկ գոլն ընկավ»:



Գրականություն

1. Ալիշան Ղ. Յուշիկք հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869, էջ 105-119:
2. Ավագյան Ս. Արծակ,ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 92:
3. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 333:
4. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 68-69:
5. Թումանյան Մ.Հայրենի երգ ու բան, Երևան, 1972,
6. Լալայան Ե. Վարանդա,երկեր, հ.2, երևան, 1988, էջ 194:
7. Լալայան Ե. Գանձակ, երկեր, հ.2, երևան, 1988:, էջ 444:
8. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898, էջ 249:
9. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903մ, էջ 252-256:
10. Լալայան Ե. Գողթան գավառ, ԱՀ, գիրք 12, Թիֆլիս, 1904:
11. Լալայան Ե. Վայոց ձոր, ԱՀ, գիրք 16, հ.2, Թիֆլիս, 1906:
12. Լալայան Ե. Նոր Բայազետի գավառ, ԱՀ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908:
13. Լիսիցյան Ս. Զանգեզուրի հայերը, երևան, 1969, էջ 106:
14. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, երևան, 1981, էջ 67-68:
15. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 227-229:
16. Ճանիկեան Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 104:
17. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 38-53:
18. Մանուկյան Մ. Ժողովրդական ավետիսներ, էջմիածին 1995:
19. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972, էջ 40:
20. Մխիթարեանց Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրիա, 1901, էջ 264:
21. Նազարեանց Յ. Նախապաշարմունք, Տփխիս, 1878, էջ 76:
22. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 14-15:
23. Չոլաքյան Յ. Քեսապ, հ.Բ, Հալեպ, 1998, էջ 191-193:
24. Շերենց Գ. Վանա սազ, Թիֆլիս, 1885, էջ 75-76:
25. Փորքշեյան Խ. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, ՀԱԲ, հ.9, Երևան, 1971:
26. Քաջբերունի Հ. Հայկական սովորություններ, ԱՀ, գիրք 7-8, Թիֆլիս, 1901:
27. Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892, стр. 119.
28. Давидбеков И. Село Гадрут, Джеванширский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып.6,отд.1, Тифлис, 1888, стр. 191.
29. Мелик-Шахназаров Е. Из поверий, предразсудков и народных примет армян Зангезурского уезда. СМОМПК, вып.13, Тифлис, стр. 197.

ՏՅԱՌԸՆԴԱՌԱՋ

ԻՒՈՆՋ, ՏԼՐԸՆԴԵՋ, ՏԵՐԻՆՏԱՋ, ՏԵՐԸՆՏԱԻ, ՏԵՐԻՆՏԵԻ, ԴԱՒԴԱՒՆՋ, ՏԱՆՏԱՒԵՋ, ՏԱՒԸՆՏԱԻ, ԻՒՆՏԱՒԻՆՉ, ՏՈՒՈՆՋ-ՏՈՒՈՆՋ, ԻՒՈՆՋ, ԻԵՆԴԱՒԱՋ, ԻՐՆԴԵՋ

Տոնի պաշտոնական՝ Տյառնընդառաջ անունը բացատրվում է Քրիստոսի կենսագրության այն իրողությամբ, որ հրեական օրենքի համաձայն՝ Փրկչի ծննդյան քառասուներորդ օրը նրա ծնողները՝ Մարիամն ու Հովսեփը, որդուն տաճար տարան: Այստեղ նրան ընդառաջ եկավ խոր ծերության հասած և տիրոջ գալստյանն սպասող Սիմոն ծերունին, որտեղից և տոնի անունը՝ **ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ**, Տիրոջն ընդառաջ: Տոնական հանդիսությունները, սակայն, ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Նշվում է փետրվարի 14-ին, և Տյառնընդառաջին վառվող խարույկը գարնան ավետաբերի խորհրդանշական դերն է կատարում: Տարածված էր այն պատկերացումը, որ Տյառնընդառաջի հետ վերջանում է «ձմռան քառասունքը»: Շիրակում Տյառնընդառաջին ասում էին, որ «Մենծ գուլն ընկավ»: Այն պատկերացումը կար, որ «Տըրընդեզի կրակը իր հետ բերում էր օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերրիություն և ամուսինների օրհնություն»: Ահա այս գաղափարների շուրջն էլ կառուցված էին տոնական արարողությունները:

Տյառնընդառաջի հիմնական ծեսը, հիրավի, խարույկ վառելն էր: Որոշ տեղեր խարույկը վառում էին միայն եկեղեցու բակում, այլ վայրերում՝ բոլոր տների բակերում, երրորդներում՝ միայն նշանված աղջիկների և նորապսակ ունեցող ընտանիքների բակերում: Գերադասելի էր խարույկի համար օգտագործել հատուկ՝ ցրդեն ծառի փայտ: Շարուրում գերադասում էին խաղողենու դյուրավառ փայտը: Սակայն անտառազուրկ վայրերում ծղոտ էլ էին վառում: Բոլոր դեպքերում խարույկի փայտը կամ այլ վառելիքը բերում էին նշանված ու նորապսակ երիտասարդները, ընդ որում բերում էին բուն տոնի օրը: Առաջինը, քահանայի օրհնությունից հետո, վառում էին եկեղեցու բակի մեծ խարույկը: Կրակը վառելու պատվավոր իրավունքը նորապսակ, այդ տարի ամուսնացած նորափեսաներինն էր. եթե գյուղում նույնիսկ 10 նորափեսա լիներ՝ բոլորն էլ պետք է մասնակցեին կրակը վառելու արարողությանը, պայմանով, որ յուրաքանչյուրը որևէ ընծա տար եկեղեցուն՝ մեկ ոչխար, մի տիկ գինի, դրամ և այլն: Այս խարույկը հատուկ էր, այն ողջ համայնքի ընթացիկ տարվա կյանքի նախագուշակը պիտի լիներ: Ամբողջ ժողովուրդն այստեղ էր հավաքվում՝ հետները նորանոր փայտեր, նույնիսկ գերաններ

բերելով և կրակը թեժացնելով և միմյանց կոչ անելով «ծմեռը վառել»: Հավաքվածներն ուշադիր հետևում էին խարույկի ծխի ուղղությանը. այն ցույց էր տալիս այդ տարվա առավել բերքառատ գոտին: Այս մեծ, գլխավոր խարույկից մասնակիցները խանձողներ էին տանում, որով վառում էին բակերի խարույկները:

Այստեղ արդեն ավելի քիչ մարդ էր լինում: Կրակ անհրաժեշտ էր վառել հատկապես նշանված կամ այդ տարի պսակված հարսնացուի կամ հարսի բակում, որոնց կեսուրները հարսին պետք է «կրակին ցույց տային»: Եթե հարսնացուն դեռևս հոր տանն էր, կեսուրը Տյառնընդառաջի առավոտյան նրան «փայ» էր ուղարկում, որ սովորաբար բաղկացած էր լինում աղանձից, զանազան ընկուզեղեններից, մրգեղենից, չամիչից, շաքարից և որևէ զարդից: Երեկոյան, եկեղեցու կրակից հետո, կեսուրը իր ազգական կանանց հետ այցելում էր հարսնացուի տուն և ինքն ուղեկցում հարսնացուին կրակի շուրջը պտտվելու: Նորահարս ունեցողները հրավիրում էին հարսի ընկերուհիներին, իսկ մյուս տների բակերում սովորաբար հավաքվում էին գերդաստանի անդամները:

Խարույկի շուրջը նախ պտտվում էին նորապսակ զույգերը: Սրանք հագնում էին պսակի հագուստը, և կրակի շուրջը պտտվելով ու օրհնանքներ ստանալով՝ մի տեսակ կրկնապսակ էր կատարվում, երկրորդ հարսանիք: Շարուրում նորահարսի գիրկը մի նորածին տղա երեխա էին դնում, որպեսզի առաջնեկը տղա ծնվեր: Կրակի վրայով նախ թռչում էր տան ամենատարեց կինը՝ որպեսզի իր «տունը ազատի չարքերից», ապա սկսում էին թռչել երիտասարդները, երեխաները: Կրակի վրայով թռչում էին նաև ամուլ կանայք, նոր ծննդաբերած, քառասունքը դեռ չլրացած կանայք, առաջինները՝ որպեսզի երեխա ունենան, իսկ երկրորդները կրակի վրայով թռչելով՝ համարվում էին քառասունքից դուրս եկած: Բանն այն է, որ ծննդաբերությունից հետո կինը քառասուն օր համարվում էր անմաքուր, ինչպես նաև բազմաթիվ փորձությունների ենթակա, հատկապես՝ չար ուժերի կողմից խոցելի: Տյառնընդառաջի խարույկը ազատում էր նրան բոլոր չարիքներից: Առհասարակ Տյառնընդառաջը «կտրում էր» բոլոր քառասունքները: Մոր ու մանկան պտույտը խարույկի շուրջ ապահովում էր նաև մոր բազմածնությունը և մանկան երկարակեցությունը, առողջությունը:

Կրակի մոտ էին դուրս բերում նաև հիվանդներին, և սրանք էլ իրենց հերթին էին ենթարկվում խարույկի մաքրագործող, հզոր ուժին: Որոշ տեղեր գտնում էին, որ Տյառնընդառաջի խարույկի վրայով ցատկողներն այդ տարի ապահովվում էին օձ ու կարիճի խայթոցից, կայծակի հարվածից: Այլ վայրերում մարդիկ այդ կրակով այրում էին իրենց վրայի հագուստից մի փոքր կտոր, թեկուզ մի թել՝ վստահ, որ օձն իրենց չի կծի, կապահովվեն չար աչքի ազդեցությունից կամ էլ կազատվեն ունեցած հիվանդություններից: Այդ նույն նպատակով ոմանք, հատկապես՝ կանայք, այրում էին մազի ծայրը: Կրակի վրայով թռչելու ժամանակ եթե չամուսնացած աղջկա շորի ծայրը վառվում էր, նշանակում էր, որ աղջիկն այդ տարի կամուսնանար: Անցյալում նորահարսերը ճյուղերի վրա տարբեր գույների կտորներ, լաթեր էին կապում, որևէ իղձ պահում մտքում և այդ ճյուղը գցում եկեղեցու բակում վառվող խարույկը:

Կրակի վրայով թռչողները տարբեր երգեր էին երգում կամ, ավելի շուտ, տարբեր իղձեր արտահայտում ու մաղթանքներ անում: Օրինակ, տարեցները գոչում էին. «Հավերնիս ածան ըլլա, կովերնիս կթան ըլլա, հարսներնիս ծնան ըլլա»: Երիտասարդ տղաները գոչում էին. «Տերնդեզ, քուրդ ինձի տաս, ես պագնեմ, դուն դուրանաս», կամ՝ «Տերնտաս, Տերնտաս, տերտերին ախչիկն ինձի տաս», «Տերընտաս, մարդ ինձի տաս, ես խնդամ, ու դուն լաս»:

Երեխաները մի-մի հավ գրկած կանգնում էին խարույկի շուրջը, որպեսզի խարույկի ուժով զորացած հավերը մեծ պասի ընթացքում շատ ձու ածեն: Հարքում եիտասարդները կրակի մոտ էին բերում հատուկ Տյառնընդառաջի համար պահած ցորենի հասկերը, վառում և հասկերը

փշրելով՝ ուտում ու բաժանում հավաքվածներին: Յուրաքանչյուրը, ով այդ տարվա ընթացքում փափագ ուներ, դրա իրականացման նպատակով այդ փափագելի բանից մի կտոր գցում էր կրակի մեջ (օրինակ՝ շորի կտոր, կամ՝ ցորենի հատիկներ, մանրադրամ...): Քանի դեռ կրակը վառվում էր, կանայք մի սկուտեղի վրա լցրած փոխինդը, աղանձը (ցորենից ու կանեփից), չամիչը, ընկույզը, կարմրացրած եգիպտացորենը, բոված սիսեռը, դդմի կորիզը և այլն բերում էին, պտտվում կրակի շուրջը, մի մասը բաժանում երեխաներին, մյուս մասը ներս տանում. երեկոյի լավագույն ուտելիքն էին դրանք: Կրակի մոտ շատերը փոխինդ էին շաղախում մեղրով կամ դոշաբով: Տարեկան երկու անգամ՝ Տյառնընդառաջին և Ս.Սարգսին շաղախած փոխինդ ճաշակելը ուղղակի անհրաժեշտություն էր: Հողագործ տանտերն էլ ամռանը հավաքած ցորենի հասկերը բաժանում էր երեխաներին և ամեն մի հանդիպողի:

Խարույկը մարելու հետ նորապսակ ունեցող ընտանիքների բակերում սկսվում էին պարերը, ու մինչ երիտասարդները զուռնա-դհոլի նվագի տակ պարում էին, մյուսները բակի խարույկից թիակով կամ մի ամանով կրակ էին վերցնում և տան շուրջը պտտեցնում, խանձողներ էին տուն տանում ու վառում տան ճրագը, օջախը՝ նորոգելով դրանց կրակը, խանձողներ էին գցում հավաբունը, գոմը՝ թռչուններին ու անասուններին ապահովելով բոլոր տեսակի չարիքների ներգործություններից: Շիրակում կրակախառն մոխիրը գոմի երդիկից ներս թափելով ասում էին.

Մեր հավերը գըռթան էղնին,
Մեր կովերն էլ՝ ծըռթան:
(Մեր հավերը թուխս ընկնեն, մեր կովերն էլ շատ կաթ տան):

Շատերն այդ խանձողներից պահում էին և Զատիկի թաթախման երեկոյան դնում կաթնովի կամ այն ճաշատեսակի տակ, որով պիտի թաթախվեին: Խանձողներով գծում էին երդիկի շուրջը և խաչ քաշում դռների շրջանակին՝ չար ոգիների դեմ: Կիսայրած ճյուղերը պահում էին մինչև հաջորդ Տյառնընդառաջ և ամեն անգամ օգտագործում օջախում կամ թոնիրում՝ նոր կրակ վառելիս:

Ընդհանուր առմամբ իշխում էր այն պատկերացումը, որ Տյառնընդառաջի կրակը բերում է «օդի բարեխառնություն, արտերի արգասավորություն և ամուսինների օրհնություն»: Որոշ տեղեր, ինչպես, օրինակ՝ Սղերդում, եկեղեցուց անմիջապես հետո կանայք ու տղամարդիկ վառվող փայտերով շտապում էին իրենց այգիներն ու արտերը և այնտեղ հրավառության հանդեսներ կազմակերպում՝ լավ բերք ապահովելու նպատակով:

Մեծ կարևորություն ուներ նաև Տյառնընդառաջի խարույկի մոխիրը: Նախ՝ հենց տեղում, հանգած կրակի մոտ, երիտասարդները վեր էին նետում մոխիրը և մոխրի՝ քամու քշած ուղղությամբ գուշակում իրենց ապագա կնոջ կամ ամուսնու ապրելու վայրը: Այդ մոխիրը, ըստ պատկերացումների, օժտված էր բուժող ու առատացնող զորությամբ: Այն լուծում էին ջրում և խմեցնում հիվանդներին, ծննդկանին՝ որ հեշտ ազատվի, քսում էին երեխաների վզին ու դեմքին, որ «լուսնի նորից» չազդվեն, չհիվանդանան, ձյունը թաթախում էին մոխրի մեջ և ուտում, որ ամռանը դողէրոցքով չհիվանդանան, մոխիրը աղի հետ խառնելով կերցնում էին անասուններին: Երիտասարդ աղջիկներն ու կանայք այդ մոխրով ներկում էին թարթիչները՝ աչքացավը կանխելու նկատառումով: Գարնանը մոխրից շաղ էին տալիս արտերում, որ մուկը ցանքսը չկտրի, խառնում էին գարնանը ցանվող սերմացու ցորենին՝ հունձքի առատության նպատակով, շաղ էին տալիս հավաբունում, գոմում: Շատերը այդ մոխիրը պահում էին և ամեն անգամ հաց թխելիս մի պտղունց գցում թոնրի կրակի մեջ: Ջավախքում մոխիրը տան երդիկից ներս թափելիս ասում էին՝ «կատուն ներսը, մուկը դուրսը», կարծելով, թե մկները կկոտորվեն:

Այն մայրերը, որոնց տղաներն այդ տարի էին ամուսնացել, իրենց գրպանները լցնում էին աղանձ, դդմի չորացրած կորիզ և գնում եկեղեցի: Այստեղ նրանք ժամերգության ժամանակ կատակներով ու ծիծաղով միմյանց վրա էին շպրտում գրպանի պարունակությունը: Այդ նույն ժամանակ այն պահին, երբ քահանան կարդում է Ավետարանի «Եվ ընդ քո անձն իսկ անցցէ սուր» բառերը, բոլոր ունկնդիրներն այրում էին իրենց շորի մի պատառիկ՝ չարքերից անխոցելի մնալու համար:

Տյառնընդառաջի տոնը հանում էր նաև նորափեսայի՝ աներոջ տուն այցելելու արգելքը (անցյալում ընդունված կարգի համաձայն նշանված և նորապսակ երիտասարդները խուսափում էին հարսի ծնողների, հատկապես աներոջ հետ հանդիպել, մինչև հատուկ հրավերք չկազմակերպվեր): Խարույկի վրայով ցատկելուց հետո նա այլևս ազատ էր իր կնոջ ծնողների տունն այցելել: Այդ երեկո նորափեսաներն իրենց ծնողների հետ մրգեղենի սկուտեղներով այցելում էին աներոջ տուն և մինչև կեսգիշեր մասնակցում այստեղ կազմակերպված խնջույքին: Այս այցելությունը կոչվում էր «խզեսցուք զկապանս», այսինքն՝ փեսային կապանքից ազատել:

Երեկոյան մանկահասակ երեխաներին մայրերը եկեղեցի էին տանում, օրհնել տալիս, որից հետո մայրը իր զավակի հետ այցելում էր իր ազգականներին, որտեղ երեխան նվերներ էր ստանում: Տյառնընդառաջի ծխով ու կրակով այրվում են «շվոտ», «խոնջոլոզ» կոչվող ոգիները, դևերը, որոնք իբր թե ի հայտ էին գալիս Նոր տարվա սկզբին և մնում մինչև այս տոնը: Երեկոյան ընթրիքից հետո տանտիկինը եկեղեցու մեջ վառված իր մեղրամոմից մի քանի կաթիլ կաթեցնում էր իր երեխաների գլխարկների ու գլխաշորերի մեջ, որպեսզի այդ գիշեր «շվոտ» կոչվող ոգին որևէ կերպ տուն չմտնի և նրանց չտանի: «Շվոտի» մուտքն արգելելու համար երդիկի ու պատուհանի կափարիչ տախտակները խարույկի մոխրով թաթախում էին: Համարվում էր, որ Տյառնընդառաջի երեկոյան ծնված երեխան շատ չար ու կրակոտ է լինում, որովհետև «կրակի հետ է ծնվել»: Այդ օրն ու Զատիկին ծնված տղաներին լուս-պարոն, աղջիկներին՝ լուս-խաթուն էին ասում:

Անցյալում, ինչպես վկայում է հայ մեծ բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը, «կաղանդին կամ տերեգլխույն այնքան հանդիսավոր չէ, որքան այսօր. մեծամեծ խնջույքներ և ուրախություններ կը կատարեն, տաղերով, երգերով, պարերով, ուտելիքով և ընպելիքով կը զվարճանան»: Նվագածուները շրջում էին խնջույքի հավաքված խմբերի մեջ, երգեր երգում, խնջույքի մասնակիցները միանում էին նրանց, արձագանքում նրանց երգերին:

- Կոյսը սիրեմ ես, կոյսը,
Կ'ըլմանի ժամու լոյսը,- *երգում էին աշուղները:*
- Տերնտաս, Մարդ ինձի տաս,
Ես խնդամ ու դուն լաս,-
ձայնակցում էին խնջույք անողները:
- Թագը սիրեմ ես, լոյս թագը,
Կ'ըլմանի ժամուն արեգակը:
- Տերնտաս, Մարդ ինձի տաս,
Ես խնդամ ու դուն լաս...
Երեսը սիրեմ ես, երեսը,
Կ'ըլմանի ժամուն խաչերեսը:
- Տերնտաս, Մարդ ինձի տաս,
Ես խնդամ ու դուն լաս...
Պօյիկը սիրեմ ես, պօյիկը,
Կ'ըլմանի ժամուն մոմիկը:

- Տերնտաս, Մարդ ինձի տաս,
Ես խնդամ ու դուն լաս...
Կուրծքը սիրեմ ես, կուրծքը,
Կ'ըլմանի ժամուն խունկիկը:
- Տերնտաս, Մարդ ինձի տաս,
Ես խնդամ ու դուն լաս...
Ծոցը սիրեմ ես, ծոցը,
Կ'ըլմանի ժամուն խնծորը:
- Տերնտաս, Մարդ ինձի տաս,
Ես խնդամ ու խնդամ, դուն լաս ու լաս...

Երգերում կանայք գովերգում էին Աստվածածնին՝ Ս. Կույս, Լուսնածին, Աստվածածին անվանելով նրան, և իրենց լավագույն երազանքներն արտահայտում, որոնցում ամենասքանչելի առաքինությունները դրվատում.

«Երթամ դատեմ բարություն, հոգիս գնա արքայություն».

Երագ, ճրագ ճշմարիտ,
Ճշմախոսիկ մարգարիտ,
Մեր սիրելի Քրիստոս:
Քրիստոս գնաց Հնդու քաղաք,
Բերեց անթառամ ծաղիկ,
Դրեց Մարիամի գլխին:
Մարիամ, Մարիամ դու կուս ես,
Հոգւով մարմնով յուս ես,
Էթամ դատեմ բարութիւն,
Հոգիս տանիս արքայութիւն:



* * *

Երագ, երագ, ճշմարտահատիկ,
Ճշմահատիկ մարգարիտ,
Բանամ պղնձեայ դուռը,
Քաղեմ անթառամ ծաղիկ,
Փնջեմ դնեմ ի գլխուս,
Քուն ըլլիմ մինչ ի լուս,
Արագըս ըլլի ի պարի,
Աստուած մուրազըս կատարի:
Ա՜յ Մարիամ, քո՞ւն ես, թե արթուն,
- Հազար քուն, հազար արթուն:
Ա՜յ Մարիամ, ա՜յ Մարիամ,
Աստուածածին, ես մեղամ:

Աստիճանաբար տոնի զբոսախնջույքները նվազել են և կենտրոնացել դիպվածային երևույթների շուրջ: Դրանցից էր, օրինակ, փեսացուի ընտանիքից նշանված աղջկան տարվող անուշեղենների փոքրիկ կապոցը, որի պարունակությունը վայելում էին հարսնացուի ընկերուհիները:

Ազգագրագետ Գայանե Շագոյանը վերջերս Սյունիքի մարզի Տաթև գյուղում հանդիպել էր տարեց կանանց, որոնք նույնպես պատմում էին, որ դեռևս հիսուն-վաթսուն տարի առաջ Տյառնընդառաջին նորահարսերի տանը երիտասարդ կանանց հավաքներ էին տեղի ունենում. «Իմ փոքր ժամանակվա տոներից Զատիկն եմ հիշում, հետո Նորահարսների տոնը, էդ ավելի շատ լավ եմ հիշում: Դա կազմակերպում են թաղամասի ջահել հարսները: Եթե մեր տուն ջահել հարս ա եկել, ջահել հարս-աղջիկ գալիս էին մեր կտուրին կանգնում ու էդ հարսին կանչում: Բոլթա են ասում, դա տենց պար ա, պարում են, ու կեսուրին հիշացնում են, որ մի տեղ պատրաստի, որ հաց պիտի ուտեն: էդ բանին կարող էին մասնակցել միայն 15-16 տարեկան աղջիկները, մեկ էլ ջահել հարսները: էն 30-40 տարեկան հարսներն է՛լ չէին կարող մասնակցել, միայն մինչև 5-6 տարվա հարսները: Գալիս են, երգում, պարում, ուրախանում, նվագ չի եղել: Իսկ էդ տան տերը, հարսի տերը նախապատրաստել է առանց ջրի ճաշ, ինչ ուզում ա լինի, ուզում ա՝ լոբի, միս լինի, փլավ, հավ, միայն առանց ջրի պիտի լինի: Հարսները պառկում էին (ննստում - Շ.Գ.), խաղում էին: էդ ժամանակ *«օթըրգըչիմի»* էին խաղում. երբ որ մի հարսը կռանում ա, մյուս հարսն էլ գալիս ա մեջքից թռնում ա ու ինքն էլ ա կռանում: Հետո *«էշուճկոռոքի»*. մեկը մի բանի վրա հենվում ա, հետո 2-3 հարս թռնում, վրան են նստում, մեջքը պիտի պահեր, էլի: *«Կոռոքի»*, այսինքն՝ կռանալ: Թռնելուց ծիծաղում էին, կատակ էին անում: Երգերն էլ սովորական երգեր են եղել, որ հարսանիքին էին երգում, ու էդ երգերի տակ էլ հարսին ման էին ածում: Իսկ օթըրգիչիմի և էշուճկոռոքիի ժամանակ ոչ մի բան էլ չէին երգում կամ ասում, միայն ծիծաղում էին: էն, որ չէր դիմանում, ճկռում էր, մյուսները ծիծաղում էին: Հերթով էին ճկռում: էդ օրը փետրվարի 14-ին ա եղել: Միշտ նույն օրն են արել, բայց մինչև երկրաշարժը (1931թ.): Երկրաշարժից հետո մեր գյուղում էդպիսի բաներ չի էղել»:

Անցյալում ննջեցյալ ունեցող ընտանիքների անդամները, մինչև «սգից դուրս չգային», տնից դուրս չէին գալիս: Միակ բացառությունը կազմում էին մահերը, որոնց դեպքում նրանք ստիպված էին այցելել նոր սգավորներին. նույնիսկ այդ դեպքերում էլ նրանք տնից դուրս էին գալիս և գնում էին միայն գիշերը: Սակայն Տյառնընդառաջին խնամի-քավոր-հարևան կանայք գալիս էին այդ ընտանիքները, տանտերերին տանում եկեղեցի, որտեղ երեկոյան ժամերգությունից հետո նրանք դուրս էին գալիս գավիթ, ներս մտնում, որից հետո արդեն կարող էին ցերեկը, «արևի ժամանակ» տնից դուրս գալ:

Տյառնընդառաջ-Տրնդեզի առավելապես տնտեսական հաջողությունների հետ ունեցած կապն են վկայում Ներքին Բասենում տոնի վերաբերյալ տարածված հետևյալ երգերը.

Տերընդեզ՝ դարմանը կես,
Առ հաց ու կես, ելիր գեղես,
Տերընդեզ, մխի (ծխի) դին (կողմը) տես,
Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես:

* * *

Տէրընդեզ, դարման ու կես,
Առնիմ մանգաղ՝ ելնիմ խոտի դեզ,
Տերընդեզ՝ ուչխուր վառէ,
Օր ազատվես օձէ, չարէ:

Այս տոնից հետո գյուղերում անասնակերը խնայողաբար էին գործածում: Տաք, արևոտ օրերին ոչխարը հանում էին չոր խոտ արածելու, իսկ խոշոր եղջերավոր անասուններին, կովերից բացի, այլևս խոտ չէին տալիս, կերակրում էին միայն դարմանով: Խոտը նրանց պետք էր գարնանացանի ժամանակ, երբ լծկան անասուններին հարուստ կեր պիտի տային:

Տյառնընդառաջը այնքան կարևոր, սրբացված օր էր, որ նրանով երբեմն երդվում էին կամ նրա անունը տալիս՝ որպես երաշխիք: Օրինակ՝ վանեցիները որևէ գործ սկսելիս, գործի հաջողությունն ապահովելու համար, ասում էին.

Եա պատվական խաչ,
Եա խէրվան Տէնդառաջ,
Տիւ քեաշես պիրես առաջ:

Այսպիսով, Տյառնընդառաջի տոնի ծեսերի, արարողությունների հիմնական միտվածությունը տնտեսական բարեհաջող ելքի, մարդկանց առողջության, սերնդաճի ապահովումն է, չարիքի կանխարգելումը: Դրանք ուղղակիորեն կապված են մյուս ժողովրդական տոների կամ մյուս տոների ժողովրդական ծեսերի հետ ինչպես իրենց տրամաբանությամբ, այնպես էլ՝ տոնի ժամանակ իրականացվող ծիսական համալիրով:

Պարերգեր

Աղջի, անունդ Վարդանուշ,
Դուն գեղեցիկ, պագդ անուշ,
Պագ մը տաս նէ, ի՞նչ կըլլայ,
Ոչ կը մաշի, ոչ հինանայ:

Գացեր էս էգին խաղող կը քաղես,
Շամամ ծծերով դու սեր կը մաղես,
Աչքով ունքերով սրտիկըս կը տաղես,
Եկուր, սրտիկս, քանի եռանդ էս:

Աղկեկ էս դուն, աղն ի՞նչ ընես,
Կլոր էս դուն, մաղն ի՞նչ ընես,
Գեղեցկութեամբ դու լեցուեր ես,
Դուն իմ սիրտս շատ տաղեր էս:

Աչքերդ սև, ունքերդ կամար,
Տէրն ստեղծեր քեզ ինձ համար,
Թե չես հավտայ, մօրդ հարցուր,
Ինչ ու ըսէ, խոսքին գին տուր:

- Այ Գուրգեն, Գուրգեն, դու շատ խոսեցար,
Ինչ որ պետքըն էր, դու զայն չասացիր,
Յար սիրելը խօլա է,
Տարդ քաշելը պէլա է:

- Այ դու աղջիկ, Վարդանուշ,
Ես քո տարդը կը քաշեմ,
Քար ու քռան կը տաշեմ,
Ես քեզ ուրախ կը պահեմ:

- Եթե խոստումդ կը հարգես,
Ելիր, գնա հայրըս տես,
Եթե հայրս խոստանա,
Դուն փափաքիդ կը հասնես:

* * *

Ես աս գիշեր դուրս ելայ,
Մութ գիշեր, չիկայ լուսնկայ,
Իմ եարս ալ՝ վարէն ի վեր,
Ձեռքն ի կայ ոսկուն մաշալա:
Թեւես բռնեց, ներս տարաւ,
Դուռ դրաւ, ախիկն ի վրան,
Փռեց սէրէսէր խալի,
Ուր գործած տասուերկու տարի:
Ձգեց խուշ թիւյի տօշակ,
Սէրէսէր բարձերն ի վրան,
Փըռեց սէրէսէր եաթախ,
Սռմալու վերմակն ի վրան,
Խուշ թիւյիվ բարձիկն ի գլխուն:
Ձարդարեց ոսկուն սեղան,
Հաւ խորված կաքաւուկն ի վրան,
Շարեց ֆերֆուռու ֆինճան,
Մէջն ի կայ նռան հատ գինի,

Սերը սիրողին վայլէ,
Աս գինին՝ անուշ խմողին,
Խմէ՞ ուր ըսիմ անու՞շ:
Ես մէվզա բռնեմ քիզի նուշ,
Անտունի ըսեմ, ուշէ ուշ:
Ինչեխ անտունի մ'ըսեմ,
Ուր թնտայ խետեճն ի ափիդ,
Խետեճն ի ափիդ թնտայ,
Սրմայ թել պույուխտ երեսիդ ցնծայ:



Գրականություն

1. Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, հ.Ր, Երևան, 1978, էջ 92:
2. Ավագյան Ս. Շարուր, Երեվան, 1998, 45:
3. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 334:
4. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 68:
5. Թորոսեան Հ. Ուրախության երգ, Նոր Գեղի, Ազգագրական հանդես, Բեյրութ, 1965, էջ 109:
6. Լալայան Ե.Ջավախք, Երկեր, հ.1, երևան, 1983, էջ 279-280:
7. Լալայան Ե. Վարանդա, Երկեր, հ.2, երևան, 1988, էջ196-197:
8. Լալայան Ե. Երկեր, Գանձակ, հ.2, երևան, 1988, էջ 446:
9. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898, էջ 253:
10. Լալայան Ե. Ջանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, էջ 107:
11. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 259::
12. Լալայան Ե. Վայոց ձոր, ԱՀ, գիրք 16, հ.2, Թիֆլիս, 1906, էջ 148:
13. Լալայան Ե. Նոր Բայազետի գավառ, ԱՀ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908, էջ 89:
14. Լալայան Ե. Վասպուրական, ԱՀ, գիրք 25, հ.2,Թիֆլիս, 1913, էջ 1:
15. Լալայան Ե. Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք 26, Թիֆլիս, 1916, էջ 193:
16. Լիսիցյան Ս.Ջանգեզուրի հայերը, երևան, 1969, էջ 262:
17. Կարապետյան Ե. Խասուն, Ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 122:
18. Ճանիկեան Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 105:
19. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, երևան, 1974, էջ 232-233:
20. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 59-71:
21. Միքայելյան Գ. Նոր Բայազետ, ՀԱԲ, հ.11, Երևան, 1980, էջ 146:
22. Մխիթարեանց Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրապոլ, 1901, էջ 265:
23. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972, էջ 41-43:
24. Նազարեանց Յ. Նախապաշարմունք, Տփխիս, 1876, էջ 77-78:
25. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 17-18:
26. Չոլաքյան Յ. Քեսապ, հ. Բ, Հալեպ, 1998, էջ 193-195:
27. Պռոշյան Պ. Հացի խնդիր, Երկեր, Երևան, 1984, էջ 104-105:
28. Սարգիսեան Յարութիւն. Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 17-20:
29. Բաֆֆի, Սալբի, Երկեր, հ.2, Երևան, 1983, էջ 98-106:
30. Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892, стр. 119.
31. Зелинский Ст. Этнографические очерки из быта армян-переселенцев из Персии, живущих в Нахичеванском уезде, СМОМПК, вып.2,отд.2, Тифлис, 1882, стр.20-21.
32. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник", 1, М., 1955:
33. Мелик-Шахназаров Е. Селение Арцеваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898, стр. 50.

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Սուրբ Սարգսի տոնը, ինչպես և Ս.Սարգսի պաշտամունքը մեծ ժողովրդականություն ուներ հայոց մեջ, հատկապես երիտասարդների շրջանում, և մասնակիորեն պահպանվել է մինչև մեր օրերը: Այն նշելու հաստատուն օր չուներ: Ս.Սարգսի տոնով սկսվում էր Բարեկենդանը, որին անմիջականորեն հաջորդող Մեծ պասի 49-օրյա շրջանը ավարտվում էր Զատիկով: Այսպիսով, անուղղակիորեն կապվելով 35-օրյա շարժականություն ունեցող Զատիկի հետ, Ս.Սարգսի տոնը նույնպես շարժվում էր 35 օրերի ընթացքում, նշվելով հունվարի 18-ից մինչև փետրվարի 23-ն ընկնող այն շաբաթ օրը, որը տվյալ տարվա Զատիկի տոնից առաջ էր ուղիղ 63 օր:

Ս.Սարգիսը ժողովրդական պատկերացումներում գորշ («բոզ») կամ ճերմակ ձիավոր էր, քաջ ու համարձակ: Նա իշխում էր հողմերին, քամուն ու բքին, կարկուտին ու կայծակին, և շատ հաճախ ձմռան ցրտերին նրանից էր կախված ճանապարհներին գտնվող մարդկանց կյանքը: Սուրբն իր գորշ, արագավազ ձիով սրընթաց շրջում էր լեռներում և օգնության հասնում կարիքավոր ճանապարհորդներին: Սակայն Ս.Սարգսի կարևոր դերակատարումներից մեկը երիտասարդ սիրահարներին, մասնավորապես՝ աղջիկներին, որոնց իրենց կամքին հակառակ հաճախ ամուսնացնում էին, օգնության հասնելն էր: Այդպիսի դեպքերում աղջիկները աղոթքներով Ս.Սարգսին օգնության էին կանչում: Ս.Սարգսի օգնության կարիքն ունեին հատկապես սիրահարված զույգերը, որոնց աղոթքն առ Ս.Սարգիս գրանցել է բանագետ Սարգիս Հարությունյանը.

Մուրազատու Սուրբ Սարգիս,
Դու հասնիս մըր երկուսիս:

Երիտասարդները գիտեին, որ Ս.Սարգիսը սիրո կողմնակից է, «սիրո ճանապարհը» բացող և սիրակոտոր երիտասարդների պատրաստակամ ու արագահաս օգնականը, եթե վերջիններս հարգանքով ու սիրով են հիշում Սրբին և դիմում են նրա օգնությանը.

Սուրբ Սարգիսն էր խըռ ձիավոր,
Ձեռքի մըզրախ փունջուխլավոր,
Առավ թռավ զըր սիրու կաքավ,
Սիրու ճամպախ մըզի տվավ:
Սուրբ Սարգիսն էր մեծ զորավոր,
Ձահել-ջիվան, ինք ձիավոր,
Տուշմընին հաղթող՝ իր սուրբ հավտով,
Ձինք ձենողին՝ շուտով հասնող:
Քըզի մեռնիմ, ով սըբ Սարգիս,

Ջրհել ձիով մըզի լե հասնիս,
Թոփ մըզրխովդ իմդատ էղնիս,
Ջմըզի հասցուս մըր մուրազին:

Երբեմն սիրահար զույգերը ծնողների կամքին հակառակ փախչում էին և դրա անունը դնում «ախջիկ փախցնել»: Փախած զույգը գիշեր-ցերեկ աղոթում էր Ս.Սարգսին, աղաչելով վերջինիս՝ մեղմել զայրացած ծնողների և ազգականների կարծրացած սրտերը:

Հարսանիքներին նորափեսայի օրհներգն անելիս հաճախ հիշատակում էին Ս.Սարգսին.

Սուրբ Սարգիսն իջավ սարեն,
Քառսուն աղբյուր բխաց քարեն,
Քսանևչորս սուրբ մարգարեն,
Օրհնեն այս մեր թագավորը:

Ս.Սարգսի օգնության կարիքն ունեին նաև հղի կանայք, և աղոթքներ կան, որոնցով նրանք դիմում են բարեգութ Սրբին: Առհասարակ այս Սուրբը համարվում է նաև ընտանիքների հովանավոր և, մասնավորապես նրան նվիրված տոնի գիշերը ակնկալում էին Սրբի թաքուն այցելություն ընտանիք, որի դեպքում տվյալ ընտանիքին մեծ երջանկություն էր սպասվում:

Ս.Սարգսի հիմնական ակտիվության շրջանը հունվար-փետրվար ամիսներն էին՝ բուքերի, ձյունամրրիկների շրջանը: Ի դեպ, փետրվար ամսին փչող քամիներին մեր հարևան վրացիներն անվանում են «հայերի» կամ «Սուրբ Սարգսի» քամի: Սակայն նա կարող էր հանդես գալ նաև տարվա այլ շրջաններում, կարկուտ բերելով մարդկանց արտերի վրա կամ, ընդհակառակն, կանխելով կամ կասեցնելով կարկուտը: Նրա օգնությանն էին դիմում նաև կայծակների ժամանակ: Սիրահարներին նա, բնականաբար, օգնության էր հասնում տարվա ամենատարբեր ժամանակներում, երբ դրա կարիքը կար:

Ս.Սարգսի տոնը, թեև զանգվածայնությամբ զիջում էր շատ տոների, սիրված ու սպասված տոներից էր: Այն նշվում էր գլխավորապես ընտանեկան միջավայրում, և սկսվում էր փաստորեն երկուշաբթի օրն սկսվող պասով: Հայոց եկեղեցական տոնացույցում այս պասը պաշտոնապես կոչվում է Առաջավորաց պաս, սակայն ժողովրդի կողմից այն միշտ անվանվել է Սուրբ Սարգսի, իսկ երբեմն էլ՝ «Խաշիլի պաս»: «Խաշիլի պաս» անունը գալիս է այն հանգամանքից, որ հնգօրյա այս պասի ընթացքում արգելված էր ուտել հայոց առտնին կենցաղում խիստ տարածված կերակրատեսակը՝ խաշիլը: Այս պասի առանձնահատկությունն այն էր, որ կենդանական մթերքից զատ, չէին ուտում նաև աղանձ ու փոխինդ, ինչպես նաև սրանցից պատրաստված խորտիկներ, այդ թվում, բնականաբար, նաև՝ խաշիլ: Այս բացառապես ժողովրդական արգելքները բացատրվում էին Ս.Սարգսի կերպարի շուրջ առկա ավանդազրույցներով, որոնց կարելի է ծանոթանալ այս գրքի վերջում ներկայացված «Սրբերը հայ ժողովրդական ընկալումներում» հոդվածում:

Պաս բոլորն էին պահում, բայց երիտասարդների մի մասը, ուխտ անելով, «անսվաղ» կամ «միաժում» ծոմ էին պահում: Անսվաղ ծոմն այն է, երբ մինչև պասը բացելը միայն ջուր էին խմում, միաժում ծոմ պահողներն ուտում էին օրվա մեջ միայն մեկ անգամ, մութն ընկնելուց հետո: Ծոմը պահում էին Սուրբ Սարգսի պատվին, և այդ ծոմ պահելն այնքան էլ անշահախնդիր չէր: Ծոմ պահողների ուխտի իղձը հիմնականում ամուսնությունն էր սիրածի հետ, և ծոմ պահելով Ս.Սարգսի պատվին՝ նրանից աջակցություն էին ակնկալում: Ակնում պահպանված մի երգ վկայում է, որ Ս.Սարգսի պասը պահողներին Սուրբն օգնություն էր խոստանում, չպահողներին սպառնում էր պատժել. «Ով իմ հինգ օր ծոմս պահե, առնեմ աջիկ (աջ) թևիս (կամ ճերմակ ձիուս) վրա, նետիմ կանաչ արտիս վրա: Ով իմ հինգ օր ծոմս չի պահե, առնիմ չոլախ (ձախ) թևիս վրա, նետիմ չորցած արտի վրա»:

Ս.Սարգսի պասի օրերին արգելքները տարածվում էին ոչ միայն ուտելիքների, այլև աշխատանքի որոշ տեսակների, մարմնի խնամքի վրա: Այսպես, այդ օրերին արգելվում էր լվացք անել, օճառ գործածել, լողանալ կամ գլուխ լվանալ, ճախարակ մանել, գործ ունենալ բրդի, մազի հետ: Վստահ էին, որ մազ լվանալու դեպքում Ս.Սարգսի ձիու ոտքերին թնջուկ կփաթաթվի և որպես պատիժ՝ իրենց մազերը կթափվեն: Որոշ տեղեր, սակայն, Ս.Սարգսի պասի ժամանակ շատ մարդիկ պոկում էին իրենց մազերը և աղոթքներով հանձնում քամուն, հավատալով, որ Ս.Սարգիսն իրենց մազերի հետ կտանի նաև իրենց ցավը:

Քեսապում ամբողջ շաբաթ անտառներից ու արտերի մոտերքից տաշեղներ ու արմատներ էին տուն բերում Ս.Սարգսի գիշերվա կրակի համար, որ պետք է վառվեր մինչև լույս: Այդ նույն շաբաթ երեխաների ամենասիրած խաղը «Մյուշտուկ» կոչված խաղն էր: «Մյուշտուկը» մեկ-մեկուկես թիզ երկարության փայտիկ է, որոնք կռվացնելով շահում էին միմյանցից. երեկոները հաղթածները հաճախ տուն էին բերում մի գիրկ «մյուշտուկ», որ շաբաթվա ընթացքում պատկառելի քանակություն էր դառնում: Այն հատկապես կուտակում էին՝ աղի հացը թխելու համար:

Գետաշեն գյուղում, որտեղ տոնը կոչվում էր «խաշլի պաս», ողջ շաբաթ երեխաները դարձյալ շրջում էին տնետուն, երգում և մթերքներ հավաքում: Ս.Սարգսի տոնին այստեղ երգում էին, ըստ երևույթին, մի շատ հին երգ.

Ես սառել եմ, սառել եմ,
Շատ խնձորներ կրել եմ,
Խնձորներս խլեցին, ամեն ինչից զրկեցին:
Հոգիս դուրս եկավ աղքատությունից:
Ես փոս կփորեմ, փոսում հինգ այծ կա,
Ո՞ւր է բայց առաջնորդը նրանց.
Ահա այնտեղ է, ժայռի կատարին,
Կանչեցի, կանչեցի, բայց նա չեկավ:
Սամիթ առաջարկեցի, կրկին չուզեց:
Սամիթը կեփեմ, այծիկը կպարի կաթսայի մոտ:
Այծիկին գետնով կտամ, հարստություն դուրս կգա:
Հարստությունը կտամ օտարին,
Նա ինձ կորեկ կտա, կորեկը կտամ ես ծտին,
Նա ինձ թևեր կտա, թևերով կթռչեմ,
Աստծո բակը կհասնեմ:
Բակի դռնապանը իր երգը կասի,
Ինձ իր երգը կասի ներսի սոխակը:
Փոքր եղբայրն էլ իր ասելիքը կասի:
Աստծո տվողին Աստված թող տա
Արծաթյա գոտիով որդի, իսկ չտվողին՝
Թող քոռ աղջիկ տա, ու նա էլ մեռնի:
Աստված կատարի, ամեն:

Հավաքում էին փոխինդ, դոշաբ, աղանձ, ցորեն, ալյուր:

Հայոց որոշ ազգագավառներում ծոմը սկսում էին կիրակի երեկոյան և այն տևում էր մինչև չորեքշաբթի երեկո, կամ, ընդհակառակն, ծոմն սկսում էին չորեքշաբթի առավոտից և շարունակում մինչև շաբաթ առավոտ, այսինքն՝ երեք օր: Այն վայրերում, որտեղ ծոմը տևում էր

մինչև չորեքշաբթի, չորեքշաբթի օրը մեծ տաշտի մեջ պատրաստում էին փոխինդի և խաղողի դոշաբի շաղախ, հարթեցնում, վրան խաչաձև նշան գծում և գիշերը տան ներսում պահում մատչելի մի տարածքում, հուսալով, որ ծիավոր Սարգիսն իր գիշերային սլացքի ժամանակ իրենց տուն կմտնի և ծիու պայտի հետքը թողնելով այդ անուշեղենի վրա՝ կհավաստի, որ տեսել է և գնահատում է իր տոնը պահող ընտանիքի նվիրվածությունն իրեն: Այդ նույն չորեքշաբթի երեկոյան տանտերը ընթրիքի ժամին մի բուռ փոխինդ է մոտեցնում իր բերանին և փչում՝ նմանակելով ձյունամրրիկի տեսարանը: Այնուհետև նա տնեցիներից յուրաքանչյուրին պատրաստված անուշեղենից մի-մի կտոր տալիս է՝ «Սուրբ Սարգիսը քեզ պահապան լինի» ասելով: Այդ նույն չորեքշաբթի երեկոյան ամուրի երիտասարդներն ու աղջիկներն էլ աղի բլիթներ են ուտում և այդպես ծարավ քնում՝ հուսալով երազում տեսնել իրենց ապագա կողակցին:

Ուշագրավ է Բայազետում պահպանված սովորությունը, որ հավանաբար նախկինում պետք է տարածված լիներ ամենուր: Այստեղ փաստորեն չորեքշաբթի օրվանից տոնահանդեսներ էին կատարվում. հրապարակային պարեր, երգեր, երաժշտություն, խաղեր: Պետք է ասել, որ սա միակ տոնն է, որին նախորդող պասի ընթացքում տեղի էին ունենում զվարճահանդեսներ: Եվ ահա այդ չորեքշաբթիից սկսած մինչև շաբաթ հասարակությանը զվարճացնում էին «Քօսա կելիճները» (թուրքերեն «քյոսա գյալդի»՝ «գոսը, անմորուքն եկավ» բառերից). սա այծի մորուքով, ցնցոտիներով, դիմակավորված մեկն էր, որ պատանիներով ու երեխաներով շրջապատված շրջում էր փողոցներում, ծաղրում անցորդներին, սրամտում, կատակում և ծիծաղեցնում հանդիսատեսներին: Նա կարող էր ծեծել ցանկացած դուռ և բոլոր դռները բաց էին նրա ու նրա թափորի առջև:

Նույնպես հնագույն սովորույթի համաձայն՝ Ս.Սարգսի չորեքշաբթի օրն ամեն տան մեջ աղանձ պիտի արվեր: Այդ օրվանից տղաների խմբերը շուն ծեծելով պտտվում էին տնետուն, կատակներ անելով տոնական ուտելիքներ պահանջում՝ միրգ ու աղանձ: Բոլոր տներում նրանց պահանջն, անշուշտ, սիրով բավարարվում էր: Շուն ծեծելու այս սովորույթը գալիս է այն հնագույն պատմություններից, ըստ որոնց Սարգիս անունով մի վարդապետ անցյալում գյուղից գյուղ շրջելիս հետը ունեցել է մի շուն, որին գյուղին մոտենալիս իրենից առաջ է ուղարկել, և շանը ճանաչող գյուղացիները դիմավորելիս են եղել շան տիրոջը: Այս շունը «Առաջնորդ» (Արցիվուր) անունն է ստացել: Սակայն վարդապետը բարի հիշատակ չի թողել և շուն ծեծելով տնետուն շրջող պատանիներն իրենց այդ խաղով իրականացնում էին դատապարտման, պարսավանքի, նախատինքի գործողությունը:

Հայոց ազգագավառների մեծ մասում ծոմը և պասը բացում էին շաբաթ օրը: Ուրբաթ օրը բոլոր տներում սկսվում էին թաթախման՝ պասը բացելու նախապատրաստական աշխատանքները: Մեղրաջրով, դոշաբով կամ պարզ շաքարաջրով փոխինդ էին շաղախում, ընտանիքի անդամների թվով գնդերի բաժանում: Շատերը գերադասում էին այդ գործողությունը կատարել Ս.Սարգսի անունը կրող սրբավայրերից որևէ մեկի մոտ: Երեկոյան հանդիսավորապես բացում էին Ս.Սարգսի պասը՝ փոխինդի իրենց գնդիկներն ուտելով: Սակայն ծոմ պահած երիտասարդները դեռ չէին ուտում: Նրանք քնելուց առաջ միայն խիստ աղի բլիթ էին ուտում, որպեսզի գիշերը երազում իրենց ջուր տվող մարդու շուրջ գուշակություններ անեն: Աղի բլիթի մի կտորը կտրում էին, դնում բարձի տակ, մնացածն ուտում:

Որոշ տեղեր այդ գիշեր հատուկ բաղարջ էին թխում՝ առանց թթխմորի և աղի: Խմորը երկու գունդ էին անում, երկու շերտերի բաժանում, շերտերից մեկի վրա շարում ընտանիքի հարստությունները խորհրդանշող առարկաներ (մրգի զանազան տեսակներ, մի կտոր պանիր, դրամ և այլն), ծածկում խմորի երկրորդ շերտով և թխում: Առավոտյան բաղարջը շերտատում էին երեխաների թվով և բաժանում. ում բաժնից ինչ դուրս գար՝ նրան համապատասխան

ժառանգություն էր սպասվում. մրգեղենը՝ այգիներ, պանիրը՝ անասուններ, դրամը՝ հայրական տունը: Եթե այդ առարկաներն աղջիկներին էին բաժին ընկնում, համապատասխանաբար նշանակում էր, որ նրա ամուսինը այգեպան, հովիվ կամ հարուստ մարդ կլինի և այլն:

Սիսիանում այդ երեկո նույնպես երեխաները խմբերով շրջում էին տներում, երդիկներից գուլպա կախում և Ս.Սարգսին նվիրված երգեր երգելով՝ մթերք հավաքում: Երգում էին թուրքերեն, Ս.Սարգսին անվանում էին Խըդըր Նաբի, որ հավանաբար Զանգեզուրի թրքացած քրդերից էր մնացել.

Խըդըր, խըդըր դեարլար,
Խըդըրրա չորաք գօալլար,
Մեան Խըդըրրըն դուլի յամ,
Այաղըննըն նալի յամ,
Բաշըննըն թորբասի յամ,
Խըդըր գետտի հայինան,
Բիր բալաջա թահինան,
Թայի փալչխա քաթթի,
Չխըարդի հայհայինան:

Խըդըր, խըդըր ասում են,
Խըդըրին հաց դնում են,
Ես Խըդըրի ծառան եմ,
Ոտքի տակի պայտն եմ,
Գլխի տոպրակն եմ,
Խըդըրը գնաց աղմուկով,
Մի փոքրիկ քուռակով,
Քուռակը ցեխը խրվեց,
Մեծ աղմուկով դուրս հանեց:

Թեհրանում փերիահայերը Ս.Սարգսի ուրբաթ օրը, եթե հատուկ իղձ էին պահած լինում, մատաղ էին անում: Այդ օրվա համար «չալաքի» (առանց աղի և թթխմորի հաց) էին թխում, որի մեջ դնում էին մատաղի միսը և յոթ տեղ բաժանում:

Այդ նույն գիշեր տանտիկինները մի սկուտեղի վրա փոխինդ էին լցնում, զգույշ հարթեցնում և դնում տան պատվավոր անկյունում և աղոթում. «Մեռնիմ քի, ատենահաս բոզ ծիավոր սըփ Սարգիս, դու կգաս քու ծիու ոտք զարկիս մեջ»: Վստահ էին, որ այդ գիշեր Ս.Սարգիսը դուրս պիտի գար մաճ գալու և մարդկանց այցելելու: Ում տուն մտներ՝ պիտի ստուգեր, թե պահվո՞ւմ է արդյոք իր տոնի գլխավոր ավանդական կարգը՝ փոխինդը պաս պահելը: Շատերն այդ գիշեր դուռը բաց էին թողնում: Ում տուն էլ այցելեր Ս.Սարգիսը, որպես իր հատուկ վերաբերմունքի նշան՝ իր ծիու պայտի հետքը պիտի թողներ փոխինդի վրա: Այսպիսով Ս.Սարգսին սիրով սպասում էին, երիտասարդները՝ իրենց սիրո հանգուցալուծման, տկարները, ճանապարհորդները՝ օգնության, բոլորը միասին՝ նրա զորության հետ հաղորդակցվելու հույսով:

Ս.Սարգսի տոնի ուրբաթ գիշերը Ս.Սարգիսն ինքը սպասված երջանկաբեր էր բոլոր հայերի համար, սակայն հատուկ անձկությամբ նրան սպասում էին սիրահարված եիտասարդները: Այդ կապակցությամբ արժե հիշել Ե.Լալայանի խիստ պատկերավոր մի նկարագրությունը. «Քնած էր ամբողջ բնությունը: Քնած չէր միայն մեկը՝ Ս.Սարգիսը: Հազարավոր խնդիրներ էին հասել նրան, հազարավոր սրտեր սպասում են նրան: Նա պիտի հասնի բոլորին էլ: Նա պիտի կատարի բոլորի էլ խնդիրքը և ահա թե ինչու՝ այդ մութ գիշերին, երբ աչք աչքի չի տեսնում, այդ քնի և հանգստի ժամանակ, երբ ամենայն ինչ հանգստանում է, նա իր «ղըռ» ծին նստած գնում է. ո՞ւր - միացնելու այն երկու էակները, որոնք միմյանց համար են ստեղծված և որոնք միասին միայն կարող են մի ամբողջություն կազմել և երջանիկ լինել: Գնում է միացնելու այն սրտերը, որոնք շանթակից ամպերի նման միմյանց ձգում են, գնում է ալեկոծված և հուսահատ հոգիները սիրո կայանը հանգչեցնելու: Եվ այս գաղափարը այնքան ոգևորում է նրան, որ նա մզրախը ձեռին, ալ ղափուտը վրան՝ խաղացնում է իր ղըռ ծին: Նրա պնչերից ամպեր են ցայտում և փաթիլ-փաթիլ ձյուն անում: Նրա ոտների տրոփյունից աշխարհք է թնդում, իսկ մզրախի խաղացնելուց սաստիկ բուք բարձրանում»:

Շաբաթ առավոտյան առաջին գործն, իհարկե, պատուհանի գոգին դրած փոխինդի ստուգումն էր՝ գուցե՞ իրենց մեծագույն բախտ է վիճակվել, և Սուրբն այցելել է իրենց տուն:

Հարսնացու աղջիկ ունեցող մայրերն այդ ժամին, փոխինդն ստուգելուն զուգընթաց, երգում էին՝ Ս.Սարգսից իրենց սիրասուն զավակի համար «արև, լույս փեսա» խնդրելով.

Սուրբ Սարգիս
Բռնե գոտիս,
Տուն ու երդիք
Առնուն լուսիկ:
Սուրբ Սարգիս,
Բռնե գոտիս,
Տուր զավակիս,
Սիրականիս
Արեւ լոյս փեսա,
Ջսքանչ լուսինկայ,
Աղուոր քաւոր,
Քաջ ծիավոր:

Եթե հանկարծ ծիու պայտի հետքը նշմարվում էր, աննկարագրելի ուրախություն էր ընտանիքում. ողջ գյուղը, բոլոր ազգականները, հարևաններն իմանում էին: Իսկ այդ հետքը երբեմն նշմարվում էր, քանի որ ընտանիքից մեկն ու մեկը երբեմն գիշերը պայտը կամացուկ հպում էր հարթեցված փոխինդին: Քսաներորդ դարասկզբի հեղինակներից մեկը պատմում է այդպիսի մի դեպք. կատակասեր մեկը թե՛ պայտն էր հպել փոխինդին, թե՛ մի փոքր կտոր ծիու թրիք էր գցել փոխինդի վրա: Երջանիկ ընտանիքը ոչ միայն այդ փոխինդն էր խաշիլ սարքել, այլև խաշիլին խառնել էին նաև ծիու թրիքի կտորը և թե՛ իրենք կերել մեծ հաճույքով, թե՛ հյուրասիրել շատերին:

Բոլոր դեպքերում, անկախ ծիու պայտի հետքից, շաբաթ առավոտյան այդ փոխինդից խաշիլ էին անում և պասը վերջնականապես բացում: Աղի բլիթ կերած տղաներն ու աղջիկներն էլ պատմում էին իրենց տեսած երազը: Այդ գիշերվա երազը անպայման պիտի պատմվեր: Երազատեսը պատմում էր, թե ո՞վ (կամ ինչպիսի՞ մարդ) իրեն ջուր տվեց, ինչպիսի՞ գավաթով, որքա՞ն ջուր կար գավաթի մեջ և այլն: Այդ մանրամասները գուշակության թեմաներ էին. ոսկե գավաթը հարուստ մարդ էր նշանակում, արծաթե գավաթը՝ միջակ հարստություն, փայտե, պղնձե կամ կավե գավաթը՝ աղքատ, լիքը գավաթը երկար ամուսնական կյանք էր կանխագուշակում, թերի գավաթը՝ կարճ և այլն: Շատերն ուղղակի ճանաչում էին ջուր տված մարդուն և դա հաստատ նշան էր, թե երազատեսի միջոցով ապագա ամուսինը կամ կինը այլևս հայտնի է: Սրանով, սակայն, չէին ավարտվում գուշակությունները: Ծոմ պահողներն իրենց փոխինդի գնդից մի կտոր կամ խաշիլից մի պատառ դնում էին իրենց տան երդիկին և հետևում, թե այդ կտորը կտցող թռչունները ո՞ր կողմ կթռչեն. այդտեղից էլ սպասվում էր ապագա ամուսինը կամ կինը: Բայց եթե թռչունը այդ պատառը տեղում էր կտցահարում և չէր թռչում, դա նշանակում էր, որ պատառի տեր տղան կամ աղջիկը երբեք չի ամուսնանալու:

Այս սովորությունների արտացոլումն է Նաղաշ Հովնաթանի «Տաղ ծիծաղական վասն կանանց» բանաստեղծության մեջ հետևյալ քառատողը.

Սուրբ Սարգիս փոխինդ մերայ,
Այս հինգ օրս հաց չկերա,
Ջիան նալն կոխեց վերայ,
Ինձ մէկ տղայ ջուր տուել այ:

Որոշ տեղեր Ս.Սարգսի պասը բացելը լավ առիթ էր աղջիկների հավաքվելու համար: Նրանք առավոտյան, դեռևս պասը չբացած, հավաքվում էին մեկի տանը, միմյանց շնորհավորում տեսած երազների համար, մաղթանքներ անում սպասումների համար, համատեղ պատրաստում օրվա հանդիսավոր կերակուրը՝ «հացըրդոնը», որ յուղի, ձվի ու ալյուրի սովորական շաղախ է՝ թավայի մեջ շերտերով տապակված: Բնականաբար այդ տների շուրջը պտտվում էին երիտասարդ տղաները՝ հեռվից հեռու (իսկ եթե բախտը ժպտա՝ նաև մոտիկից) իրենց սիրած աղջիկներին տեսնելու հույսով: Այլ վայրերում ծոմ պահող հարսնացուներին փեսացուների ընտանիքից զանազան անուշեղեններ էին ուղարկում որևէ նվերի հետ: Հարսնացուի ընկերուհիները հավաքվում էին միասին վայելելու անուշեղենները, և այս կամ այն հարսնացուի տանը կայացող այս աղջկական հավաքները այս տոնի միակ հասարակական դրսևորումն էր:



Շատերը, սակայն, տանը պասը չէին բացում: Գերադասում էին գնալ ուխտի՝ Ս.Սարգսի անունը կրող որևէ սրբավայր: Այստեղ մի քիչ ջուր էին լցնում խաչի վրա, և այդ խաչվայի ջրով ու մեղրով փոխինդից շաղախ պատրաստում և ուտում՝ պասը բացում: Այն մարդիկ, ովքեր այդ օրը գնացել էին Ս.Սարգսի անվամբ սրբավայր, ուխտավայրից վերադառնալիս որևէ մեկին հանդիպելիս ասում էին. «Խաչը քեզ ողջույն ուղարկի», ինչին վերջինս պատասխանում էր՝ «Ողջ մնաս»:

Ս.Սարգսի պասին խարկված ցորենից և աղացած փոխինդից պահում էին և փոթորիկների ու կարկուտի ժամանակ դադարեցնելու նպատակով շաղ տալիս չորս կողմը, հատկապես՝ դաշտերում: Այս սովորույթն ուղղակի կապվում է Ս.Սարգսի հողմային բնույթի հետ, ըստ որի նա կարողանում է փոթորիկ բարձրացնել, փոթորիկ դադարեցնել, ամպրոպ ու կարկուտ բերել և դրանք դադարեցնել: Պահպանվել է մի փոքրիկ քառյակ, որում Ս.Սարգսին խնդրանք կա՝ ցրելու վնասակար, կարկտաբեր ամպերը.

Իսկ ի յամպոց վնասակարաց
Եւ ի տօթոյ խիստ խորշակաց,
Դու լեր նոցին յետ դարձուցիչ,
Լուսաթռիչ սուրբ:

Ս.Սարգսի շաբաթ օրը վերջանում էր հաջորդ, շատ սիրված տոնի՝ Բարեկենդանի ազդարարումով: «Մեծ պապն» էր, որ պետք է ընտանիքները մտներ և հայտներ, որ Բարեկենդանը եկել է: Իրականում տան ավագագույն անդամը՝ պապը կամ տատը, շաբաթ օրը առավոտյան եկեղեցուց վերադառնալով տնեցիներին հավաքում էր սեղանի շուրջը և ինքը

դուրս էր գալիս: Ապա նա վերադառնում էր՝ ոչխարի մորթու մեջ փաթաթված, գլխին՝ խոշոր սրածայր քոլոզ, ձեռքին՝ մի հսկա գավազան: Տնեցիների ուրախ ծիծաղների ներքո նա մոտենում էր գինու կարասին, յուրաքանչյուրին մի-մի գավաթ գինի լցնում, հանձնում հերթական տիրոջը հետևյալ խոսքերով. «Եկավ Մեծ պապուկը, հազար բարով մեր Բարեկենդան»: Յուրաքանչյուրը, իր գինու բաժակը ստանալով, համբուրում էր «Մեծ պապի» աջը և կամացուկ ասում.

Լույս Լուսավորչին,
Հավատք Քրիստոսին,
Հայ քրիստոնյային,
Մեռնեմ հավատքին:

Տան փոքրերից մեկը բարձրաձայն հարցնում էր. «Ո՞վ է Մեծ պապը»: Դերակատարը պատասխանում էր.

Լուսավորչի լույս արևն է,
Մեր ժամերի լույս ճրագն է,
Մեր տների շենք-շնորհքն է,
Մեր վանքերի զարդն ու տերն է...

Ապա դերակատարը միանում էր սեղանի շուրջ նստածներին, բարձրացնում էր հացը, գինով լի բաժակը և մաղթում.

Օրըս բարով,
Տունըս լուսով,
Հաց ու գինի,
Տա Տէր բարով:

Կա, սակայն, դեռ երկրորդ բաժակը: Այս երկրորդ բաժակով արդեն անեծք է հղվում այն ամենին, ով կամ ինչը տվյալ ընտանիքի չարակամն է: Բաժակ բարձրացնողն ասում է, որ «այն ամենը, ովքեր իմ տանս հակառակ են՝

Օրըն չարով,
Աչուին կաւով,
Աստուած ի խռով,
Աւուրս յոլով,
Ծեծուի բրով,
Խեղդի ի ծով»:

Իսկ հաջորդ օրը պիտի սկսվի ամենաուրախ, զավեշտներով, ուրախություններով, ներկայացումներով, խաղերով, խնջույքներով ու որկրամոլությամբ, հարսանիքներով հարուստ Բարեկենդանի տոնը:

* * * * *

Ժողովրդական այլևայլ սովորություններ կան, որոնք վկայում են Սուրբ Սարգսի այլ հմտությունների մասին: Այսպես, այն դեպքում, երբ երեխայի աչքին խիլ է աճում կամ որևէ բան է ընկել աչքի մեջ, մայրերը թաշկինակի ծայրը թքով խոնավացնում էին, ոլորում և մրմնջալով հետևյալ աղոթքը, թաշկինակի ոլորած ծայրը մոտեցնում երեխայի վնասված աչքին. «Ալնիս, բալնիս, հավատամ Սուրբ Սարգիս, խիլ հան, տուր իս»: Երեխայի թարթիչների տակ թաքնված խիլը անմիջապես ընկնում էր:

Ամենահաս Սուրբը, ինչպես ասվեց, նաև հղի կանանց օգնականն էր: Հետևյալ աղոթքը ցույց է տալիս, թե ինչ սպասելիքներ ունեին հղիները կանանց կողմից խիստ սիրված այս սրբից.

Թաժա խացի խոտ ա գալում,
Ելեք, տեսիք, որն ա գալում,
Իրեք պօզ ձիավոր ա գալում,
Մէկ Յիսուս, մէկ Քրիստոս, մէկ Աստուածածին:
Էլան սարով, շրջուան ձորով,
Հրեշտակադէմ, առով փառով,
Ասաւ - Իմ Տէր, ու՞ր կէթաս հազար բարով.
- Կէթամ դուռն հիւրընդին,
էրդիս բանամ ծնընդկանին.
Բազպանս թալեմ վըր բարձին,
Որ չվախի սիրտ ի փորին,
Որ չկապուի լեզուն ի բերնին. ամէն:

Վանում էլ երգում էին հետևյալ երգը, որ, ըստ էության, նույն աղոթքն էր.

Սուրբ Սարգիս, ամուր պարիս (պարիսպ),
Ամուրական խաչն էր թիվիս,
Թազայ խացի խոտ իրե,
էլեյք, տեսեյք վով իրե:
Իրեյք բէոզ ձիավոր իրե,
Մեյն ի Հիսուս, մեյն ի Քրիստոս,
Մեյն ի Կենդանանից Աստվածածին:
Ասին՝ դեո՞ր կերթայք,
- Կելնեյնք սարով, արջվենք ձեորով,
Խազար խիյնգ բյուր խրիշտակներով,
Կերթանք դուռն խիվընդին,
էրդիս գեղցըվորին:
Ջընջիլ կապեյնք պիւլյոր պատին,
Պալնիս թալեյնք վիրև պառցին.
Որ չ՝վախի սիրտն ի փորին,
Չիւնմ ի գեողոյ դատաստանին:

Սուրբ Սարգսի օգնությունը ծննդկանի համար հայցող աղոթքները որոշ տարբերություններ ունեին.

Ճրագն ընցավ, չարն խափանավ,
Սուրբ Սարգիս վրա հասավ,
Բոզ ձիով,
Կանանչ խաբայով,
Լուսեղեն փիլոնով:
-Լուսունկիկ, լուսունկիկ, հու՞սկա կուգաս:
-Հեր Աբրահամու ծովուն վըրավեն:
-Դուն դեղին, ձիդե դեղին,
Մորուքդ էկել, գույնը դեղին,
Աջն ու խաչը բարձիս վրա,
Հերը լսե, որդին լսե,
Հոգինը սուրբ արնցուներ:

Գլխիկս վեր բարձին,
Հոգիս ամանաք, Սուրբ Աստվածածին:

Կորած անասունի տերը մինչ անասունին գտնելը աղոթքներ էր անում գայլի բերանը կապելու համար: Գելկապի աղոթքների շարքում հայտնի է նաև Սուրբ Սարգսին դիմելու հետևյալ աղոթքը.

Ութը մատով, երկու բթով,
Աստուածամօր քաղցրիկ կաթով,
Սուրբ Սարգսին ձիուն ձարով,
Հայրապետի աղօթքներով,
Գայլին, գազանին բերան,
Կալուին, կապ մնան:

Գիշերը գայլերի հարձակման վտանգին ենթարկվող մարդիկ նույնպես օգնության էին կանչում Սուրբ Սարգսին: Նա իր զորությամբ ոչ միայն կարող էր գայլերի երախը «կապել», այլև քարացնել, քար դարձնել այդ գիշատիչներին:

Այսպիսով Ս.Սարգսի տոնը, ինչպես և անունից երևում է, նվիրված էր շատ սիրված Ս.Սարգսին, որին վերագրվում էին բազմապիսի զորություններ և որի անվան ու պաշտամունքի շուրջ հայոց մեջ բազմաթիվ ավանդություններ են պահպանվել: Ս.Սարգսին վերագրվող զորությունները տարածվում են հետևյալ երևույթների վրա.

- *նա կարող է դևերին հալածել,*
- *հիվանդներին բժշկել, հղիներին պաշտպանել,*
- *պատերազմողներին հաղթանակ բերել,*
- *բանտարկվածներին և գերիներին ազատություն պարգևել,*
- *խռովությունները խաղաղեցնել,*
- *նեղ վիճակում գտնվողներին ուժ տալ, օգնել,*
- *ճանապարհորդներին պաշտպանել,*
- *ալեկոծված ծովերը հանդարտեցնել,*
- *կարկուտը և քամին հնազանդեցնել,*
- *սիրահարվածների փափագը կատարել,*
- *գայլին և այլ գիշատիչ գազաններին քարացնել կամ երախը «կապել»:*

Ս.Սարգսի հետ կապված բոլոր ավանդազրույցները, պատմությունները վկայում են, որ այս Սուրբն իր միջամտությամբ հիմնականում մարդուն մղում է գործել, նախաձեռնություն ցուցաբերել, չնայած քիչ չեն նրա կողմից անծնազոհ «նվիրաբերումները»: Նրա գործերը ոչ այնքան երկնային զորությամբ նվիրատվություն են, որքան՝ մարդու կողմից իր նախաձեռնությունը, իր միջամտությունը, իր խելքը, իր տրամաբանությունը գործածելու խրախուսանք: Նա մարդկանց օգնում է՝ նրանց մեջ ի հայտ բերելով իրենց իսկ կարողությունները: Գերիներին ազատելու նրա կարողությունը դրսևորվում է, օրինակ, գերիների փախուստի միջոցով, որ, ի վերջո, գերյալի գործողությունն է, ճանապարհորդներին օգնում է՝ նրանց կողմից փնտրտուքը ուղիղ ճանապարհի տանելով, աղջիկներին օգնում է՝ իր սեփական

ծիու գավակին նստեցնելով ու փախցնելով և այլն: Այլ կերպ ասած այս ժողովրդական Սուրբը շատ առարկայորեն է օգնում մարդկանց, կամ գոնե, մարդկանց պատկերացումներում իրենք այս կամ այն կերպ շփվում են նրա հետ: Պատահական չէ, որ մարդիկ իրենք էլ «փորձում են օգտակար լինել Սրբին առարկայորեն».- պահում են նրա պասը, օճառ չեն գործածում, ճախարակ չեն մանում և այլն՝ Սրբին օգնելու նպատակով: Անշուշտ բնակլիմայական երևույթների վրա Ս.Սարգսի ազդեցությունը երկնային-աստվածային է, և ինչպես հետազոտողները գտնում են, արտահայտում է Ս.Սարգսի վաղնջական-նախնական էությունը, երբ նա Աստված էր դիտվում և նրա աստվածային էությունը հողմի հետ էր կապված:

Հայոց քրիստոնեական սրբերի մեջ Ս.Սարգսին վերագրվող զորավոր ընդունակություններից էր այլադավաններին գերի ընկած հայ գերյալների փախուստին և առհասարակ գերությունից ազատվելուն օգնելը: Դրա առաջին գրավոր վկայությունը մոնղոլական գերությունից փրկագնով ազատված Վանական վարդապետի խոսքերն են: Վանական վարդապետի հետ միասին գերված էին այլ վանականներ, այդ թվում նաև հանրահայտ Կիրակոս Գանձակեցին: Ահա Վանական վարդապետը գերությունից ազատվելիս Կիրակոս Գանձակեցուն ասում է. «...Ես կգնամ Սուրբ Նշանի ոտքը, որ Սուրբ Սարգսի անունով է, և նրա միջոցով կխնդրեմ քո և մնացած վանականների ազատության համար...: Որովհետև Գագի մեջ բոլոր նեղվածների և մանավանդ գերվածների համար մի հրաշագործ խաչ կա..., ովքեր նրան ամբողջ սրտով ապավինեն, նույն ինքը Սուրբ նահատակ Սարգիսը բացում է բանտերի և արգելանոցների դռները, քանդում է շղթաները...»: Իսկապես Կիրակոս Գանձակեցին նույն գիշեր փախչում է գերությունից:

Սուրբ Սարգսին անվանում էին «Մեծ գերեհան» և այդ զորությունը փաստվում է սույն աղոթքի վերջին քառյակով.

ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳԻՍԻ ՋՕՐԱՎԱՐԻՆ ԵՒ ՈՐԴԻՅՆ

Երջանիկ մեծ զօրական և Քրիստոսի յաղթող վկայն,
Գլուխ զօրացն Կոստանդիայն,
Քաջ սպառազէն սուրբդ Սարգիս,
Իւծելոյ ամբարշտին, մոլորելոյն Յուլիանէ,
Չհանդուրժելով յանօրինին,
Եղեր պարիսպ սուրբդ Սարգիս:
Գեղեցկապէս անօրինեալ
Զայս Արարչին նախ սահմանեալ
Մեծ զօրավիգ մեզ առաքեալ,
Արիացեալ սուրբդ Սարգիս,
Որ յարեւմուտս յառաջ եկեալ,
Եւ յարեւելս եկեալ հասեալ.
Մեզ հասանիլ ի յօգնութիւն
Քաջ սպառազէն սուրբդ Սարգիս:
Սուրբդ Սարգիս ի մեզ գթա,
Մատո զձայն մեր մաղթանաց
Առ ողորմած Քրիստոս Աստուած:
Այն, որ օրհնել է Արարած
Քաջ սպառազէն սուրբդ Սարգիս:
Երկիւքն աղեաց քո եւ ծնունդ

Եւ սիրամարգն սիրասնունդ
Որդիդ սիրով հօրդ գոլով.
Սուրբ մարտիրոս ամբողջ մարմնով.
Քաջ սպառազէն սուրբդ Սարգիս,
Սիրով արքայն զձեզ ընկալեալ
Եւ մեծագոյն փառօք պատուիլ,
Մեծ զօրավիգ մեզ առաքեալ
Ի Տաճկաստան պահակ եդալ:
Իսկ գերելոցն այլասեռիցն,
Որք ի կապանս են յերկաթից
Հա՛ն զնոսա ի չար կապից,
Ու մեծ գերեհան սուրբդ Սարգիս:

Հօրն փառք, Որդւոյն Պատիւ եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ յաւիտեան. ամէն:
Ծառայիս Աստուծոյ խիալին:

Նոր Նախիջևանի հայերի մեջ Ս.Սարգսին նվիրված հատուկ աղոթքում նույնպես հիշվում է գերյալներին ազատելու այս առաքելությունը. «Գնա, ասա գերիներուն, ազատ կանե իր արևուն».

Քիշեր ասի տուս էլլայ,
Մէկ զորավոր սուփ տեսայ,
Ասի, լացի, ոթքն ինկայ,
Ասի, հայր սուրբ, անունդ ի՞նչ է,
- Իմ անունս սուփ Սարքիս,
Օրթուս անուն՝ սուփ Մայտիրոս,
Ծիս կըքալէ ամպի վըրան,
Անթաթար ծովի վըրան,
Գնա, ասա գերիներուն,
Ազատ կանէ իր արևուն:

Հայոց աշխարհի բազմաթիվ վայրերում կառուցվել են և շարունակում են կառուցվել Ս.Սարգսի վանքեր, եկեղեցիներ, մատուռներ: «Այսօր գրականության մեջ հայտնի Ս.Սարգիս սրբավայրերի թիվը 220 է»,- գրում է Համլետ Սարգսյանը[3]: Հայաստանի տարածքում կառուցված ամենավերջին Սուրբ Սարգիս եկեղեցին 1999թ. Երևանի Նոր Նորքի հինգերորդ զանգվածում կառուցված եկեղեցին է:



3. *Համլետ Սարգսյան, Պատմական Հայաստանի Սուրբ Սարգիս սրբավայրերի տեղաբաշխման որոշ հարցեր, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 103-106:*

Գրականություն

1. Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 92:
2. Բաբայան Ֆ. Դիտարկումներ Ս.Սարգսի և նրա սրբավայրերի մասին, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001, էջ 255-261:
3. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 334:
4. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 68:
5. Գրիգորյան Ռ.Գեղարքունիք, ՀԱԲ, հ.14, Երևան, 1983:
6. Լալայան Ե. Ջավախք,Երկեր, հ.1, երևան, 1983, էջ 270-272:
7. Լալայան Ե., Վարանդա, Երկեր, հ.2, երևան, 1988, էջ 195:
8. Լալայան Ե., Գանձակ, Երկեր, հ.2, երևան, 1988, էջ 444:
9. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898, էջ 250-251:
10. Լալայան Ե. Զանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, էջ 107:
11. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 256:
12. Լալայան Ե. Նոր Բայազետի գավառ, ԱՀ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908, էջ 146:
13. Լիսիցյան Ս. Զանգեզուրի հայերը, երևան, 1969, էջ 263-265:
14. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, երևան, 1981, էջ 68:
15. Կարապետյան Ե.Սասուն, Ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 123:
16. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 229:
17. Համլետ Սարգսյան, Պատմական Հայաստանի Սուրբ Սարգիս սրբավայրերի տեղաբաշխման որոշ հարցեր, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երեվան, 2002, էջ 103-106:
18. Հարությունյան Ս. Սուրբ Սարգիսը ժողովրդական բանավոր ավանդության մեջ, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երեվան, 2002, էջ 24-43:
19. Գ.Հովսեփյան, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1893, էջ 67:
20. Ղանալանյան Ա. Ավանդապատում, Երևան, 1969, էջ 364-368:
21. Ղափանցյան Գ. Արա Գեղեցկի պաշտամունքը, Երեվան, 1944:
22. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 55-59:
23. Մատիկյան Ա. Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930:
24. Մեսրոպ արք. Աշճեան, Սուրբ Սարգիս, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երեվան, 2002, էջ 6-24:
25. Մեսրոպ արք. Աշճեան, Արագահաս սուրբ Սարգիս, Երեւան, 2002:
26. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, Երևան, 1972, էջ 40-41:
27. Մխիթարեանց Աղ. Փշրանքներ Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրիա, 1901, էջ 264-265:
28. Մկրտչյան Սամվել, Սարգսյան Արմինե, Սուրբ Սարգիս, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երեվան, 2002, էջ 96-103:
29. Յարութիւն քհնյ. Ճուղուրեան, Աղա Սուրբ Սարգիսը և Մալաք տատի հեքիաթը, Թիֆլիս, 1899:
30. Յովնաթան Ն. Բանաստեղծութիւններ, Երեւան, 1956, էջ 101:
31. Նազարեանց Յ. Նախապաշարմունք, Տփխիս, 1878, էջ 77:
32. Չոլաքյան Յ. Քեսապ, հ.Բ, Հալեպ, 1998, էջ 199-201:
33. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 15-16:
34. Շերենց Գ. Վանա սազ, Թիֆլիս, 1885, էջ 67:
35. Պետրոսյան Ա. Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001,157-170:
36. Սարգսյան Համլետ, Պատմական Հայաստանի Սուրբ Սարգիս սրբավայրերի տեղաբաշխման որոշ հարցեր, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երեվան, 2002, էջ 103-106:
37. Սրուանձտեանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 558:
38. Джейранов Ф. Селение Чайкенд, Елисаветпольского уезда той же губернии, СМОМПК, вып. 25, отд.2, Тифлис, 1898, стр. 100.
39. Е.В. О народных праздниках и праздничных обыкновениях христианского населения за Кавказом и преимущественно в Тифлисе, Кавказский календарь, Тифлис, 1854, стр. 558.
40. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник", 1, М., 1955:
41. Мелик-Шахназаров Е. Селение Арцеваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898, стр. 50.

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Ահա եկավ հայոց ազգին օրերը,
Հանեցեք հիները, հագեք նորերը:

Բարեկենդանին երգվող պարերգի այս հատվածը տոնի ընդհանուր բնույթի ուսումնասիրության հետ միասին հետազոտողներին բերել է այն համոզման, որ Բարեկենդանը այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ժողովրդի կողմից այն ընկալվել է որպես ամենաազգային («հայոց ազգի օրեր»), ինչպես նաև ամենաերջանկաբեր տոնը: «Հայոց ազգի օրերը» (Բարեկենդանը) տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս.Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների, հրապարակային խնջույքների, կերուխումների, կատակների, ուրախության երկու շաբաթ, որոնց ընթացքում հասարակական հարաբերությունների, ընտանեկան բարքերի, հասակային խմբերի մինչ այդ ընդունված, առօրեական նորմերը գլխիվայր են շուռ գալիս. ժուժկալությունը փոխարինվում է անհագուրդ ուտել-խմելով, երիտասարդների սովորութային իրավունքով պարտադրված զուսպ, ենթակայական դիրքը տարիքավորների առաջ փոխարինվում է նրանց վարք ու բարքի համեմատական ազատությամբ, փոխվում են սոցիալական դերերը և այլն:

Սկսենք տոնական ուտեստի նկարագրությամբ: Բարեկենդանի երկշաբաթյա տոնական ուտելիքների մեջ նախապատվությունը տրվում էր մսեղենի, կաթնեղենի, յուղի առատությանը: Ամենօրյա գործածության մեջ էին տավարի, ոչխարի, թռչնեղենի մսից պատրաստվող զանազան ճաշատեսակները, կաթնասերը, մածունը, խաշիլը, խմորեղենները: Առաջին օրերին պատրաստվում էր մեծ քանակությամբ գաթա, հալվա: «Անոթցեր է՝ բարեկենդանի գաթեն միտքն է ընկի» վանեցիների առածը վկայում է Բարեկենդանին գործածվող գաթայի առատությունը: Ահա թե ինչպես է նկարագրում ականատեսը Բալուում Բարեկենդանի առաջին օրը. «Արշալույսեն առաջ, ժամերգութենեն վերջը, որ կանուխ կվերջանա, արևին ելնելեն առաջ, ճաշին սեղանը պատրաստ պիտի ըլլա: Ատոր համար ժրաջան տանտիկինները կերակուրներու դեզին տակ կքած՝ տապակին կոթը ձեռքեն չեն ձգեր, բռնած են զայն կրակին վրա իրարու ետևէ եփելու համար կերակուրներ Հայաստանի պատվական ու անխարդախ յուղերե, զորս պատրաստած են բուն իսկ իրենց ձեռքով: Այդ օրվան կերակուրներն են «փաթիլա», «սըռօն», «բխբխիկ»: «Փաթիլան» խմորեղեն մըն է: Խեղճ կիները ինչեր կը քաշեն զայն պատրաստելու համար,- զուտ ցորենի ալյուրով խմորը կը պատրաստեն, հետո փայտե սեղանի մը վրա չափին համեմատ զայն կը բանան շատ բարակ, մասի (մասունքի-Հ.Խ.) պես, տանտիկինը այդ բացած հացերը մեկիկ-մեկիկ առնելով կը դնե հղկուն կլորակ սեղանի մը վրա, մեջը չափով մը պանիր

կամ խավուրմա կը դնեն ու հետո անոր վրա բարակ հացով մը կը ծածկեն, երկու հացերուն եզերքները իրարու հետ փակցնելով կեփե սաճին վրա, այսպես խավ-խավ, մեկը մյուսին վրա դիզելով մեծ ափսեի մը մեջ, կը կտրե զայն՝ փոքր և քառակուսի պատառիկներու բաժանելով, ու վրան կը լեցնեն հալած սքանչելի յուղը: Սըռոնն ալ այսպես բարակ բացված հացով կը պատրաստվի: Աս ալ մանր պատառիկներու կը վերածեն ու սխտորված մածնաթանի մեջ թողելով կը հանեն ու կը շարեն խորունկ պնակի մեջ, վրան յուղ լեցնելով կուտեն: Բխբխիկը ալյուրով, հավկիթի դեղնուցով ու կաթով կեփեն յուղին մեջ, անոր ամեն մեկ պատառը ընկույզեն քիչ մը մեծ կ'ըլլա: Սեղանին վրա բերելեն առաջ վրան ռուպ կամ մեղր կը լեցնեն»: Նկարագրված ճաշատեսակներն, անշուշտ, պարտադիր չէին Հայաստանի բոլոր գավառների համար: Մեկ այլ տեղ գերապատվությունը տրվում էր փորը ծավարով ու զանազան համեմունքներով լցոնած և թոնիրում ամբողջովին խորոված ոչխարին, տվյալ վայրում առավել սիրված կերակրատեսակներին: Շատ էր թռչնեղենը: կային ընտանիքներ, որտեղ տասնյակից ավել հավեր, հնդկահավեր, սագեր էին մորթվում: Դրանք լցոնվում էին բրնձով, չամչով, շագանակով, խորովում, տապակում, ուղղակի խաշում էին: Պարտադիրը, սակայն, խաշիլն էր, որով սկսվում էր տոնը և որը երկու շաբաթ շարունակ պատրաստվում էր բոլոր տներում:

Բարեկենդանի առավոտից երեկո տևող խնջույքները մեծ մասամբ տեղի էին ունենում բացօթյա: Չնայած ձմռան ցրտերին, դրանց մասնակցում էին շատ շատերը. խնջույքի սեղանից հեռանում էին ցանկացած պահի, միանում էին ուրիշները: Երբեմն մի վայրում կեսօրին մասնակիցների մի կազմով սկսված խնջույքը կարող էր ավարտվել բոլորովին ուրիշ կազմով, ընդ որում մասնակիցների դիրքը, տարիքը կարող էր շատ խառը լինել: Մասնակիցներից շատերը խնջույքի սեղանին ավելացնում էին խորտիկների իրենց բաժինը:

Բարեկենդանի ուտելիքների տեսականու քանակը նույնպես կարևորվում էր: Դրանց թիվը գնալով աճում էր: Այսպես, եթե երեքշաբթի պարտադիր երեք տեսակ ուտելիք պիտի լիներ սեղանին, հինգշաբթի՝ հինգ, շաբաթ՝ յոթ, կիրակի օրը դրանց թիվը հասնում էր տասներկուսի: Այնքան էին ուտում, որ Բարեկենդանը երբեմն անվանում էին «փորեկենդան».

- Բարեկենդան, փորեկենդան,
Բարեկենդան օրեր է,
Խելքս գլխես կորեր է...

Վերջին օրը, երեկոյան, կաթնապուր ու մածուն էին ուտում, վրայից՝ խաշած ձու, ասելով. «բերաններս փակում ենք սպիտակ ձվով: Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու», - ակնարկելով, որ ահա սկսվում է Մեծ պասը, որի 49 օրերի ընթացքում այլևս ձու չպիտի ուտեն մինչև Զատիկ: Այդ օրերին այնքան շատ էին ուտում, որ տոնի վերաբերյալ տարածված էր հետևյալ կատակագրույցը. «Մի մարդ Բարեկենդանի վերջին օրը հյուր է լինում իր ծանոթի տանը: Տեսնում է, որ սրանք հա՛ ուտում են՝ տոլմա, փլավ, պանիր...: Քնելուց առաջ կինն ասում է. - Քա մարդ, մի բան մոռացանք ուտել: - Ի՞նչ,- հարցնում է ամուսինը: - Կովը չկթեցի, կաթն էլ ուտեինք, չէ՞ որ էգուց ջոջպասն է,- պատասխանում է կինը: Կովը կթում են, կաթն ուտում: Այդ ժամանակ հյուրն ասում է.- Մի կտոր հաց էլ ինձ մոտ կա, ես էլ կերեք, նոր քնեք»:

Որոշ տեղեր, սակայն, Բարեկենդանի վերջին օրը կրակ չէին վառում, կերակուր չէին եփում: Մարդիկ հավաքում էին բարեկենդանյան խնջույքներից մնացած մսեղեն-յուղեղեն ուտելիքները և հավաքվում գերդաստանի գլխավորի տանը, որտեղ էլ կայանում էր վերջին խնջույքը. ահա հենց այս տներում էլ միայն վառվում էր օջախը՝ բարեկենդանյան վերջին ձվածեղը պատրաստելու համար: Բոլորը միասին երեկոյան վայելում էին այն՝ ձվածեղով «փակելով» բերանները, ստանում գերդաստանի մեծերի օրհնությունը և ցրվում տները: «...Աշտարակում,- պատմում է Ե.Շահազիզը,- բուն բարեկենդանի կիրակի երեկոյան, երկու շաբաթվա

կերուխումից, ուրախություններից, զվարճություններից ու գժություններից հետո, որոնք կատարվել են հրապարակավ, գյուղամիջում..., գյուղը հանգստացել է, և ամեն մարդ յուր ծանոթ-բարեկամին մնաս-բարև է ասել ու մտել յուր տունը, յուր հարկի տակ: Սակայն այդ հանգստությունը եղել է միայն արտաքուստ, իրոք դրանք, այդ ուրախություններն ու զվարճությունները, չեն վերջացած եղել, այլ շարունակվել են, միայն որ նրանք փոխադրվել են տները և փոխել իրենց աղմկալի բնույթը, ու դարձել համեստ, անմեղ, ընտանեկան զվարճություններ: Պապերի ու տատերի՝ տոհմի այդ զառամյալ ազգապետի շուրջը, նրանց հարկի տակ, հավաքվել են նրանց ազգուտակը, բերելով իրենց հետ, կապոցներով, իրենց տներում բարեկենդանից մնացած ուտելիքները, որովհետև այդ երեկո տոհմի անդամ ընտանիքներից և ոչ մեկի տանը օջախ չպիտի վառվեր, ծուխ չպիտի դուրս գար, բացի ազգապետի տանից, որտեղ պիտի օջախը վառեր, և այն՝ միայն բերանփակեքի ճվածեղը պատրաստելու համար: Այդտեղ նրանք համբուրել են ազգապետ զույգերի ձեռքերը, շնորհավորել են նրանց բարեկենդանը, բաց են արել իրենց կապոցները, խառնել իրենց բերածները նրանց տանն եղածի հետ, սեղանակից եղել, տատերի բաժանած տնային աղանդերով՝ կախանով, փշատով, շուջուխով և ալանիով, բերանները քաղցրացրել, ասել, խոսել, կատակներ արել, զվարճացել և մի-մի կտոր ճվածեղով բերանները փակելուց հետո, առել ազգապետների օրհնությունը ու ցրվել, գնացել իրենց տները: Դրանով նրանք տարեկը մին վերանորոգած ու ամրացրած են եղել իրենց կապերը բուն տոհմային տան հետ, որտեղից նրանք հեռացած են եղել տարիներ առաջ..., և պապենական սրբազան օջախից տարած պեծուկեծով վառել իրենց նոր օջախները»:

Այդ օրվա խնջույքը շատ տեղերում ջնջում էր բոլոր տարիքային ու հասարակական տարբերությունները. «Իրար հետ սեղան են նստած ծերունի սկեսրայրը ու մանկամարդ հարսը, տղամարդ, կնիկմարդ, բոլորը միասին վայելում են գաթա, հալվա, լոխում, հավկիթ, հասութա, սեր, կարագ, մատակի մածուն, նոր ծնած կովի դալ, հավ, սագ, գառ, ոչխարի կամ կովի ղավուրմա, քյուֆթա, տոլմա, փլավ, յախնի...»,- այսպես էր ավարտվում Բարեկենդանը Ջավախքի պահպանողական հայերի մոտ:

Հարսանիքներն ու նշանդրեքները Բարեկենդանի անբաժան ուղեկիցներն էին: Դրանք, իրենց հերթին, նոր թափ էին հաղորդում տոնի հորդուն ուրախությանը: Ուրախ պարերը, որ Բարեկենդանի խնջույքների անբաժան ուղեկիցներն էին, հարսանիքներին իրենց շուրջն էին հավաքում բոլոր երիտասարդներին: Բայց միայն երիտասարդները չէ, որ մասնակցում էին պարերին: Բարեկենդանյան պարերը իրենց շրջապտույտի մեջ էին առնում կանանց ու տղամարդկանց, ընդհուպ մինչև զառամյալ ծերերը: Պարերը սկսվում էին հենց առաջին օրը և օրեցօր աշխուժանում, բազմամարդ դառնում ինչպես կատարողներով, այնպես էլ հանդիսատեսներով, խրախուսողներով: Պարում էին ինչպես զուռնա-դհոլի նվագի տակ, այնպես էլ՝ պարերգերի, որ բազմաթիվ էին: «Ճաշը ընելեն վերջը,- նկարագրում է 20-րդ դարի սկզբի Բարեկենդանի մասնակիցը,- տանիք կելլեն մեծ ու պզտիկ, մանավանդ կիներն ու աղջիկները, իրենց նախշուն ու բազմագույն զգեստներովը պճնված: Դեռ խմբական պարը չսկսած, հոս ու հոն, իրենց դուռներուն առջև, կամ իրենց տանիքներուն վրա, հինգ, տասը հարս ու աղջիկ կեցած կսպասեն պարին սկսվելուն: Չուշանար ան սակայն, և ահա, Եղսո Խաթունը, իբրև ամեն տարվան պարկցողն ու պար պարելու ամենեն վարպետն ու առաջնորդը, պարի շրջանակը կազմած, իր նրբանուշ և քաղցրաշունչ պարերգովը, պարողները իրեն կը կանչե, որուն անմիջապես կը փութան երթալ հոն պարին շրջանակը մեծցնելու: Հետզհետե պարը կը մեծնա, կընդարձակվի, տենդոտ ոգևորությամբ մը ամենքը կը հետևեն Եղսո Խաթունին վարժ շարժումներուն, կրկնելով անոր ըսածները, որ հետևյալն են.

Ծընկն ածո, ծընկն ածո,
Ծընկն ածոին քնարը,
Կրպո, ելիր տեները (տանիքը),
Կրպո, ելիր տեները,
Տես Մրոին թշերը,
Կարմիր խնձորի պես ը,
Մազերը ծոնի (ձյունի) պես ը,
Մազերը ոսկու պես ը,
Մազերը ոսկու պես ը,
Բոյը չինարի պես ը,
Նինի, նինի, նինի, նի,
Նինի, նինի, նինի, նի...

Կը փոխվի այս անգամ դրվատիքը որպես թե Մրոյին կողմեն ուղղված Կրպոյին.

Մրո, Կրպոն չինար ը,
Մրո, Կրպոն չինար ը,
Ան քո ուզած լավ յարն ը,
Ան քո ուզած լավ յարն ը,
էրնեկ քըզի որ ունիս,
էրնեկ քըզի որ ունիս
Կրպոյին պես նշանած,
Կրպոյին պես նշանած,
Աչքեր ունի եղնիկի,
Աչքեր ունի եղնիկի,
Սիրտ մը ունի սըրբի պես,
Սիրտ մը ունի սըրբի պես...
և այլն, և այլն:

Ավելանում են պարողները, ավելանում են հանդիսատեսները, փոխվում են պարերգերը.

Պաղչին պատը փըլեր ը,
Յարըս մեջը քներ ը,
Չան կուտամ, ծանըս չառներ,
Մըկըր իննմեն ցավեր ը:
Ըս օր աղկեկ մը տեսա,
Կուժն առավ ջուրը կերթա,
Ոտքը սըլըխվավ ինկավ,
Չեռքին բռնած կուժը կոտրավ:
Մի լար, աղջիկ, ըսի մի լար,
Կուժտ շինիմ ոսկի անկով,
Ջուրը լեցնեմ վարդի ռենկով...
և այլն, և այլն:

Հոգնած պարողները դուրս են գալիս շրջանակից, միանում են ուրիշները, իսկ պարերգերը չեն վերջանում, շարունակվում են անվերջ, մինչև ուշ երեկո.

Աղկեկ իմ, աղն ի՞նչ ընեմ,
Կոր իմ, մաղն ի՞նչ ընեմ,
Էլլամ տիներն ի՞նչ ընեմ,
Հոն տեսնելու յար չունիմ:

Յարըս ղարիպ երկիր ը,
Աշխարհն ինծի հոս մութ ը,
Էլին ծառնը ծաղկեր,
Իմս՝ կարկուտ նը զարկեր:

Աղկեկ կեսուր, խաթուն կեսուր,
Քու ըս տղուդ խոսք մը հասցուր,
Իս կը թողը կերթա պառկի՝
Մեծ ախոռին գոմշին մըսուր:

Մեր դուռը ձեր դռան դիմաց,
Հերիք էնիմ աչոք իմաց,
Ճեպիկըս խաշլըղ չը մնաց,
Բոլորը քո օղուրդդ գնաց:

Մեր տունը բակի կըլմանի,
Մազերըս թագի կըլմանի,
Անցավ, գնաց սիրականըս,
Գիտես քի պեկի կըլմանի:

Ռեհան ցանեցի, թեզ մի բուսցավ,
Խապարըտ եկավ ինծի հասավ,
Լըսեցի որ կարգըվեր ես,
Գըլոխդ երկինք հասավ:

Պարերգերը բազմաթիվ էին, տարբեր ազգագավառներում երգվում էին տարբեր բարբառներով, բայց բոլորը, որպես կանոն, սիրային բովանդակության (տղայի կամ աղջկա գովք, անձնագին սպասում, երանության խոստում և այլն): Մշո պարերգերից էին, օրինակ.

Աղջի, շիլեն ծալ էրե,
Շիլեն ծալ ու մալ էրե,
էդ քու թաֆթա թշերուց,
Պագիկ մը հալալ էրե,
Օալ էրե, հայ, ծալ էրե,
Շիլեն ծալ ու մալ էրե:

Աղջի, գեղդ Խնուսա,
Բարով ու խերով տեսա,
Էս աշխարհն ի՞նչ կը կորցու,
Դառնամ քու մորկան փեսա:
Օալ էրե, հայ, ծալ էրե,
Շիլեն ծալ ու մալ էրե:

Աղջի, նստի, ծամ էրե,
Նուռ մե թալիմ՝ համ էրե,
Մեջն ինչ խդեր կուտ էղնի,
Պագն ու պաչիկ թամ էրե:

Ծալ էրե, հայ, ծալ էրե,
Շիլեն ծալ ու մալ էրե:

Այ Նուբար

Ա՛յ Նուբար, Նուբար, Նուբար,
Սասնու սարեր քարուբար:
Սասնու գելներ բարակ ծուխ,
Կապիս փուշին, թողիս պուխ,
Ա՛յ նուբար, Նուբար, Նուբար:
Նուբար գնաց խիարնոց,
Քաղեց խիար, լցրեց ծոց,
Ա՛յ Նուբար, Նուբար, Նուբար;
Նուբար կանավ ամրոցին,
Արև դրավ իր ծոցին,
Ա՛յ Նուբար, Նուբար, Նուբար:
Նուբար գացեր էր ժախի,
Ջիմ սիրտն էր ծամից կախի,
Ա՛յ Նուբար, Նուբար, Նուբար:
Կը շորորեր՝ քընց մաքին,
Ոն տեսներ՝ ելներ հոքին,
Ա՛յ Նորբար, Նուբար, Նուբար:

Օրեցօր շատանում էին պարերը, բայց հատկապես վերջին շաբաթ-կիրակի օրերը դրանք դառնում էին համընդհանուր, համագյուղական, համաթաղական: Ամենուր այդ օրերին թաղամասերը, նույնիսկ ամբողջ գյուղերը շղթայվում էին կլոր պարախմբերով: Զանգեզուրում այդ ժամանակ առաջնորդը զանազան ձևեր էր անում, օրինակ՝ ծափ էր տալիս, պպզում էր, իր տրեխը հանում, զանազան կենդանիների ձայներ հանում և այլն: Պարողները նույնությամբ կրկնում էին նրա արածները, իսկ պարի առաջնորդը խստությամբ հսկում էր նրանց վրա և ճիպոտով խփում՝ եթե սխալ կամ ուշ էին կատարում: Կեսարիայում կիրակի օրը «երբ եկեղեցիեն դուրս կելլեին, ծեր մարդիկ ձեռք-ձեռքի բռնած հորա քաշելով գյուղին մեջ կը շրջեին, հետզհետե ավելի շղթան մեծացնելով, և ամեն դռան առջև գինին ճնկելով»: Իսկ Ակնում այդ նույն օրը նշանավորվում էր 80-90-ամյա պառավ կանանց պարով, որ ուղեկցվում էր հատուկ այդ պարին բնորոշ պարերգով.

Մտանք ի Բարեկենդան,
Կերթանք ի Զատիկ,
Իճապ մեկզմեկէ ինտո՞ր տի զատինք,
Եկեք պար մի բռնենք, ոսկեկ մի կ'աժէ,
Ոսկեկ մաման նստեր, չորթանը կոշտ է:
Եկեք բռնենք յոթը շաբաթ մեծ պահքը,
Զատիկ ելլանք, ուտեն խմեն տղաքը,
Հագնին, կապեն հոռոմներուն կտտաքը:
Ըհը եկան Հայոց ազգին օրերը,
Հանեցեք հիները, հագեք նորերը,

Բարկեննուն օրերը, Զատկուն կիրակին,
Եկանք ի Բարեկենդան, կերթանք ի Զատիկ,
Տնավեր Բարեկենդանք, վրան բաց Զատիկ,
Մենք ալ մեր յարերեն ինտո՞ր տի զատինք:

Բարեկենդանի գլխավոր զվարճությունը, սակայն, խաղերն ու թատերական ներկայացումներն էին: Հատկապես խաղերը, որոնց մասնակցում էին երեխաները, պատանիները, ծերերը, հարս ու աղջիկ, չափահաս կանայք ու տղամարդիկ: Խաղերը տեղի էին ունենում թե տներում, թե բակերում ու հրապարակներում: Շատ պատկերավոր է նկարագրել Պերճ Պռոշյանը Աշտարակի բարեկենդանյան խաղերի տեսարանը. «էլ ահել ու ջահել չկար, էլ երիտասարդ ու միրքավոր չէիր ջոկիլ, բոլորը միասին ջահելացել՝ կայտառացել էին: Պապիս պես պատվելի իշխանները կալերումը լախտի էին խաղում ու հաստ կտավե գոտիկից ոլորած լախտն էնպես էին ֆռռացնում, իրար մեջքի կպցնում, որ մեջքի զոլն էր վեր կենում: Տերտերն էլ վերարկուն ծալած մի կողմ դրած, կապի ծլըփան փեշերը կոկիկ հավաքած, գոտիկը խրած՝ էնպես ծուլ-ծուլ էր լինում ճժի բոլորքովը, որ կասես, թե սա իրան կյանքումը միշտ ըմբըշամարտ է եղել: Միմիայն լախտը, որ մեջքախառն ուսագլխին հասնում էր, զգում էր, որ էսպես բան իր օրումը չի տեսել: - Դե, հեր օրհնած, մի քիչ էլ կարգիս խնայեցեք, կամաց տվեք, է՛,- ասում էր մեր Տեր հայրն ու էլ ետ թռչկոտում ճժի չորս կողմը, աշխատելով լախտը բռնողի ձեռքիցը խլելու:

- Ոչինչ, տերտեր ջան, էսօր արծակուրդ ա, բարեկենդան օրեր ա, խելքներս կորել ա,- պատասխանում էին մեր իշխաններն ու իրանց խաղի հետ ընկնում:

Էսպես իրարանցում, էսպես հարայ-հիրոց թե ուրիշ ժամանակ լիներ, ամենքը կկարծեին, թե գյուղը կոխեցին, ավար տվին, մոտակա գյուղերիցն անգամ գուցե օգնություն կգային, բայց հիմի ամբողջ Արագածոտնյան գավառն է այդպես, ի՞նչ պետք է արած:

- Դե, հերիք ջարդվեցինք ծեծվելով, լավ ալիր-աղցան էլանք, մի քիչ էլ վեգ խաղանք, ով տարվի, մնի տեղակ երկու գավ գինի բերի»:

Բարեկենդանին այս պատկերն ամենուր էր: Խաղացողները շրջապատվում էին դիտորդներով, որոնք խրախուսում, ծաղրում, կատակներ էին անում խաղացողների հասցեին և հետո, իրենք փոխարինելով նրանց, ենթարկվում նույն կատակներին: Խաղերը սովորաբար ավարտվում էին խնջույքներով: Խաղերն ամենուր միատեսակ չէին, խաղում էին տվյալ վայրում առավել սիրված խաղերը, միատեսակը խաղացողներն էին, այն է՝ խաղում էին բոլորը: Եթե խաղերի կամ խնջույքների ժամանակ երիտասարդները կամ նույնիսկ երեխաները կատակների, ծաղրի մեջ չափն անցնում էին, մեծահասակների համար դառնում անհանդուրժելիորեն հանդուգն, և վերջիններս փորձում էին կարգի հրավիրել, սաստել նրանց, ապա ստանում էին ավելի հանդուգն պատասխան: Խաղերը, պարերը շարունակվում էին մինչև կեսգիշեր, երբեմն՝ մինչև առավոտ: Այդ գիշերային պարերին երիտասարդ սիրահարները ազատորեն միմյանց հետ պարում էին, խաղում. «Աբեղաթող օրերին ազատ իրավունք է իրար ձեռ բռնել պար խաղալ: Ճրագները դնում են, ամեն մի տան մեծ փնտրում է յուր ջահելներին: Բայց ո՞վ է նրանց խոսքը բանի տեղ դնողը, հիմա էլ խո հասարակ օր չէ, Բարեկանդան է...: Առաջ, որ մի հասակն առած մարդ ճիպոտը կառներ՝ ինչպես որ այծը ոչխարից, այնպես էլ տղամարդկանց կանանցից կջոկեր՝ այժմս անկարող է»: Այդպես էր բարեկենդանը, կլոր տարին ընտանեկան ու հասարակական բոլոր կաշկանդումներին անմռունչ ենթարկվողներն անգամ այդ օրերին դառնում էին ազատ ու ինքնագլուխ, ավելին, հաճախ այդ երկու շաբաթն ապրում էին կյանքի լիովին այլ հարթությունում, ուր չէին գործում սովորութային իրավունքով կարգավորված նորմերը: Տղաներն այցելում էին աղջիկների հավաքատեղիները, աշակերտները տարվա

ընթացքում կուտակված դժգոհությունն ուսուցիչներին արտահայտում էին ծաղրակատակներով, որդիները հանդիմանում էին հայրերին և այլն, այդ ամենն արդարացնելով Բարեկենդանի ամենաթողության իրավունքով.

- Բարեկենդան, Փորեկենդան,
Բարեկենդան օրեր է,
Խելքս գլխես կորել է:

Ջավախքում երգերով ծաղրում էին երիտասարդների ու հարսների հոգին հանած պառավներին.

Արի, պառավ, քեզի գովեմ,
Ջաղջէն ելած դև գլմանիս,
Բաղնեց հրեշտակ գլմանիս,
Սատանի սրպանք գլմանիս:
Արի, պառավ, քեզի գովեմ,
Դժոխքի բյութուկ գլմանիս,
Վրատ գլոխտ քրքրեր է,
Թեպուր փոխած հավ գլմանիս:
Գլոխըտ կապեր էս փուլի,
Դու եղեր ես համամ դուլի,
Ինքտ տուռնա, քիթտ զուռնայ,
Աչվներտ բաղնոց դուռնայ:
Էրէսիդ միսն է գնացէ,
Մէ օսկռնիտ է մնացէ,
Բերնիդ ակռայ չէ մնացէ,
Դուն լոլոզած կավ գլմանիս:
Նստեր էս ջահրա կը մանես,
Հաստ ու բարակ թել կը մանես,
Խոլըթէս հարս կը սպանես,
Գրող ու մահ՝ ցավ պառավ էս:
Նստիս կը պատերուն հովը,
Միջէցէտ հասնես կը գովը,
Ախ մէմ՝ ընկնիս խորունկ ծովը,
Մենք օր տեսնինք, այ դավ պառավ:
Ամեն օր հարսներուն հետ կռվիս,
Խայիս գոմշի պէս կը ռուիս,
Վառված կրակի մէջ էրվիս,
Դուն չորացած, այ դավ պառավ:
Փէտատ բերէք, մանչեր, փորենք,
Պառվներուն գլոխը հորենք:

«Պստիկը կես հանաքով համարձակ ասում է ծերին ինչ որ ունի իր սրտում և շատ անգամ ծաղրում երգելով.

- Արի, պառավ, քեզի գովեմ, ջաղցեն ելած դև կլմանիս,
Աչքդ փոս է, քիթդ դուս է, թեպլնին փոխված հավ կլմանիս....»-

պատմում է Ախալքալակի հայերի մասին քսաներորդ դարասկզբի հեղինակը: Նույն հեղինակը մանրամասն պատմում է նաև Բարեկենդանին ընդունված զանազան

զվարճություններից մի քանիսը, որոնցից մասնավորապես. «Երեկոները, ուրախության թունդ ժամանակին հանկարծ դրսից լսվում են կենդանական զանազան անճոռնի ձայներ: Գոմի դուռը բացվում է և հանկարծ ներս է ընկնում այլանդակ մեկը, երեսը ալյուրի կամ մրի մեջ կորած, այծի մորթուց մեծ մորուք շինած, խայտառակ ձևով մորթիներից շորեր հագած, ձեռքին երկար ծող կամ ակիշ բռնած, զանազան թռիչքներ անելով հարձակում է գործում ուրախություն անողների վրա: Բոլորը թե ծիծաղում են, թե վախենում այդ այլանդակ մեյմունից: Երեխաները սաստիկ երկյուղից սրտաճաք լինելով լալիս են, ամուր կպչում մայրերի կրծքին և գլուխները թաք կացնում նրանց թևերի տակ: Կանայք վախեցած, կես-ծիծաղ պահում են երեխաներին և հայհոյանքով ետ մղում հարձակում գործող մեյմունին: Բոլորը տեղերից վեր են թռչում, իրար են խառնվում...: Եվ վերջապես մեյմունը, տանտիրոջից յուր նվերը առնելով, յուր բազմաթիվ ընկերներով գնում է ուրիշ տեղ: Սակայն նրա գնալուց հետո էլ չի իմացվում, թե ով էր այդ չարաճճին: Մեյմունները ներկայացնում են կամ պառավ սատանա, կամ անճոռնի հրեշ, կամ տգեղ ուղտ, կամ սարսափեցնող շվոտ կամ դև կամ մի ուրիշ բան»:

Կերպարանափոխված կամ դիմակավորված խմբերով զվարճախաղերը և, ինչպես վերևում ասվեց, նույնիսկ թատերական ներկայացումները Բարեկենդանի առավել սիրված հանդիսություններն էին: Դրանց մասնակցում էին թե երեխաները, թե մեծահասակները: Երեկոյան, երբ խնջույքներից հոգնած մեծերը հավաքվում էին տանը, դուռը թափով բացվում էր և աղմուկով, երգով, թմբուկով ներս էր ընկնում դիմակավորված երեխաների խումբը: Տղաները հագած էին լինում աղջիկների հագուստ, փոքրերը՝ մեծի, երբեմն՝ ծաղրածուի: Արտաքինը պիտի հնարավորին չափ ծիծաղաշարժ լիներ, դեմքերին դնում էին ծիծաղելի դիմակներ կամ մուր, ալյուր քսում, ածուխով ներկում: Երեխաները տեսարան էին ներկայացանում գյուղի կյանքից կամ խաղում էին որևէ սրամիտ սյուժե:

Մեծահասակների ներկայացումների սյուժեներն, անշուշտ, ավելի բարդ էին: Նախ, Բարեկենդանի օրերին եկեղեցին նշում էր Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան զորավարի տոնը, և այդ օրերին հայոց տարբեր ազգագավառներում հաճախ էին ներկայացնում Ավարայրի ճակատամարտի որևէ դրվագ: Խումբը, օրինակ, բաժանվում էր հայերի և պարսիկների: Ձիուն բազմած Վարդան զորավարը խրախուսող ելույթ էր ունենում, հավաքում իր զորքը և արշավում մյուս ծայրից եկող զինված պարսիկների վրա: Փայտե սրերով խաղացվում է ճակատամարտի տեսարան, որտեղ հայերը հաղթում են: Հաջորդ դրվագում պարսիկների դերակատարները խեղճ են, դրանք քրքրված հագուստով, երեսները սևացրած գերիներ են, որոնց վրա քարեր են շպրտում, հայհոյում են, քաշքշում:

Ավարայրի ճակատամարտի հիշատակը մինչև 19-րդ դարի վերջը Բարեկենդանի հինգշաբթի օրը խաղերի կամ արարողությունների ձևով պահպանվել է Մոկսում, Վասպուրականում, Շատախում, Ռշտունիքում, Կարինում, Շիրակում և այլ գավառներում: Դրանք կոչվել են տարբեր կերպ՝ Վարդան Մամիկոնյանի ցուցք կամ ցուցմունք, Վարդան Մամիկոնյանի ծես, Վարդանանց պատերազմ, Ավարայրի ճակատամարտ: Ըստ 1909թ.-ին Վասպուրականում տեղի ունեցած ցուցքի, ժողովրդի մեջ մշակված է եղել գործողությունների որոշակի ծրագիր: Նախապես հայտարարվել է ցուցքի կազմակերպման մասին: Հրավիրվել են նախ բոլոր երիտասարդ տղամարդիկ: Ցուցքը տեղի է ունեցել Իշխան գյուղում, գյուղապետի, վարժապետի, սրբազան հոր և ավագների խորհրդի ղեկավարի գլխավորությամբ: Կատարվել է դերաբաշխում՝ Վարդանի, Ղևոնդ երեցի, Վասակի, նախարարների դերեր, հայ ու պարսիկ զինվորներ: Որոշ մարդիկ, տարիներ շարունակ այդ դերերը կատարելով, ունեցել են համապատասխան հագուստ: Պատրաստվել են դրոշակներ, զինանշաններ, վահաններ, գլխազարդեր և այլն: Դերեր են ստանձնել նաև ողբասաց կանայք: Ներկայացում-պատերազմը

սկսվել է երթով՝ դեպի եկեղեցի. երթը գլխավորել է Ղևոնդ Երեցը, որի աջ կողմից քայլել է Վարդանը, ձախից՝ Վասակը[4], նրանց ետևից՝ զինվորները, ապա՝ պատվավոր քաղաքացիները, արհեստավորները՝ իրենց դրոշներով ու նշաններով: Երթը ուղեկցվել է զուռնա-դհոլով, նվագել են ռազմական քայլերգեր կամ պարեղանակներ: 1909թ. Իշխան գյուղում ցուցքն ունեցել է ճակատամարտի ձև. հայ և պարսիկ զինվորները սկսել են կռվել, և նույնիսկ այնքան են տաքացել, որ նրանց բաժանել են որոշ դժվարությամբ: Այնուհետև խաղի մեջ են մտել ողբասաց կանայք, որոնք կատարել են որոշ թաղման ծեսեր:

Արդյունքում այս ամենն ավարտվել է պարերով, որոնց մասնակիցները, սակայն, դարձյալ միայն տղամարդիկ էին: Ընդ որում երբեմն այս պարերը գլխավորել են՝ պարագլուխ են կանգնել կա՛մ հոգևորականները, կա՛մ՝ Ղևոնդ Երեցի դերակատարը: Այս ծիսական պարերին հաջորդել են մրցախաղերը՝ ձիարշավը, մականախաղերը... Ավելի ուշ Վարդանանց պատերազմի հիշատակման արարողությունն սկսեցին կազմակերպել դպրոցները, որտեղ այն վեր ածվեց միջոցառման, որի ընթացքում արտասանում էին, երգում և միջոցառումն ավարտում բեմի վրա կատարվող թատերական ներկայացումով:

Երկու խմբերի բաժանված և կռիվ-պատերազմ նմանակող ներկայացումներն ընդհանրապես բազմազան էին և կային բազմաթիվ տեսարաններ, որոնք ներկայացնում էին պատերազմների վերաբերյալ ժողովրդական պատկերացումները: Դրանք վկայում են այն մասին, որ պատերազմն ընկալվել է որպես անմիտ, անիմաստ դաժանություն: Այդ թեմայով ներկայացումներն ավելի հաճախ կոչվում էին «շահ-շահ» կամ «ղոչուն-ղոչուն»: Ահա, օրինակ, այդպիսի մի տեսարան.

Երիտասարդներից մեկին ընտրում էին ռես կամ գզիր: Նրա երեսին մուր էին քսում, գլխին կեղծ թագ դնում, հագցնում ոչխարի կեղտոտ մորթի, մեջքին՝ թրիքի կապոցներ, ձեռքին՝ ծայրին հին լաթի կտորներով մի սրածայր ձող, ուսերին՝ ցախի դյուրավառ խրձեր: Նրան շրջապատում էին երեսներին մուր քսած և կեղտոտ, թրքոտ մորթիներով ծածկված մյուս երիտասարդները, և այս թափորը կռիվը ծաղրող, ձեռք առնող երգեր երգելով, գոռում-գոչյունով շարժվում էր դեպի մոտակա գյուղը: Ահա, օրինակ, այդպիսի երգի մեկ օրինակ.

Այլ իմն գել, թայլ իմն գել,
Գացէք, բերեք Նատօյի տէլ (քած շուն),
Նատօն քնի խոր քուն,
Կէչկէն (քած) ծռի վէր գլխուն,
Անծեղ փախի, մտի տուն,
Ձարկեց կոտրեց գէլի ճան (վէգ).
Փախաւ, ելաւ, մտաւ ածմու դէզ,
Մինծ խուրձ քաշեց վըրեն թէզ(արագ):
Կնիկ, կնիկ, ճուլ վէրու,
Թուլէներ (շան լակոտներ) թինտրան տար.
Փըշու մը դրինք վըր շըշին,
Ձէն էլ՝ ճամբինք քէշիշին,
Փըշու մը դնենք վըր լոգուն(փայտ քարդելու գործիք),
Ձէն էլ ճամբենք կիկոգին(գզրին):

Այսպիսի երգերով, միմոսություններով հասնում էին կողքի գյուղը, որտեղ նրանց կազմ ու

4. *Ուշագրավ է, որ չնայած իրական Ավարայրի ճակատամարտում Վարդանն ու Վասակը տարբեր, միմյանց դեմ կռվող բանակներում էին (Վասակը պարսիկների հետ էր), ծեսում ժողովուրդը նրանց «միավորել է»:*

պատրաստ սպասում էր նույնպիսի մի խումբ: Դհոլ-զուռնան ազդարարում էր կռվի սկիզբը, և խմբերը միմյանց վրա էին գնում՝ խրախուսելով յուրայիններին, ծաղրելով դիմացիններին: Խմբերից որը պարտվի, նրա «ռեսին» կամ «գզիրին» այնուհետև թարս նստեցնում էին ավանակի վրա՝ ավանակի պոչը ձեռքը տալով, ուսերի ցախի խրձերը կրակ տալիս և հրմշտելով, ծաղրելով՝ քշում մինչև գետ կամ որևէ դատարկ հոր: Հայտնվում էր տերտերը (տերտերի հագուստով բարեկենդանյան հերթական խեղկատակը), ավետարան էր կարդում, ազատում էր պարտվածին և փրկագին էր պահանջում պարտված խմբից: Սրանք հիմա էլ տերտերի վրա էին հարձակվում, և կրկին խառնվում էին մեծահարգ մարդիկ (այդ մարդկանց նմանակող դերակատարները)՝ այս նոր կռիվը կանխելու կամ կողմերին հաշտեցնելու:

Այս օրերին շատ էին կատարվում կենցաղային թեմաներով թատերախաղեր: Օրինակ, «խնամախոս» գնալու ներկայացումը.

դերակատարները կանացի զգեստով տղամարդիկ են, անճաճաչելի կերպով դիմակավորված: Խմբում մեկը առանձնանում է հումորով, ճարտարախոսությամբ: Խումբը գալիս է մի տուն, որտեղ հարսնացու աղջիկ չկա, սակայն կան երիտասարդ տղաներ կամ երիտասարդ կանայք: «Խնամախոսները» սկսում են բանակցությունները, խաղի մեջ ներքաշվում են տան անդամները: Խնամախոսները խնդրում են իրենց ներկայացնել «հարսնացուին»: Հարսնացուի փոխարեն դերակատարներին ներկայացնում են տան տղային կամ նույնիսկ տանտիրուհուն: Ձավեշտազրույցի ժամանակ նյութը ծավալվում է, դուրս գալիս խնամախոսության շրջանակներից, միմյանց հումորով լուրեր են հաղորդում, չարախոսում ուրիշներից: Խաղի պայմանն այն է, որ ներկայացման ընթացքում հնարավորին չափ շատ զվարճախոսեն իրական կյանքից, սակայն դերակատարները չպետք է ճանաչվեն տանտերերի կողմից:

Առավել տարածված թատերախաղերից էին իրենց իրականության ծաղրի զանազան դրսևորումները: Արցախում, օրինակ, երիտասարդներն իրենց ընկերներից մեկին հագցնում էին ոչխարենուց իրենց ձեռքով կարված զգեստ՝ բուրդը դեպի դուրս, վրան կախում էին ոսկորներ և զանազան հին զենքեր՝ թուր, դաշույն, ատրճանակ, հրացան, գլուխն էին խցկում մի քրքրված գլխարկ՝ ետևը դեպի առաջ, երեսին մուր էին քսում և նստեցնում մատակ էշին՝ դեմքը դեպի գավակը, ու էշի ագին ձեռքը դնելով, ողջ խմբով, զուռնաչիների ու թմբկահարի առաջնորդությամբ, բակից բակ էին գնում, գոռալով՝ «ճամփա իշի պարոնին», կամ՝ «անբեղն է գալիս, ճանապարհ» (թուրքերեն՝ «քյոսա գյալդի»): Երիտասարդները սրամտում էին, ծաղրում «պարոնին» ու բոլոր հանդիպողներին, ընծաներ պահանջում: Բոլոր հանդիպող տներից բերում էին ձու, յուղ, ալյուր, ցորեն, պատրաստի խորտիկներ, դրամ: Երեկոյան հավաքված մթերքներով ջահել տղաների ողջ խումբը խնջույք էր կազմակերպում:

Վանի հայկական գյուղերում երիտասարդները ծպտվում էին գնչու մաղավաճառների, կռվարար քրդուհիների, կիսախելագար մոլլաների կամ հեռու գավառների հայերի իրենց պատկերացրած կերպարներով և մտնելով այդ դերերի մեջ՝ զվարճացնում էին հասարակությանը: Այստեղ խաղացվող սիրված ներկայացումների նմուշներից է հետևյալ պատկերը, որ հայտնի է «Տախ ախչըկան տարան իրկան» կամ «Կակո-Մակոն նշնվեց» անունով.

«Բակում կանգնած, վատ հագնված, տգեղ ու պառաված աղջիկը ծիծաղելի անհամբերության նշաններով ինչ-որ եկվորի է սպասում: Ձեռնափայտին հենված ծերուկը պատանի, բայց հիմարավուն որդուն հրում է դեպի տան կտուրը, որ ուշադիր հետևի, և եթե որևէ օտարական երիտասարդ գյուղ մտնի, պատանին հարգանքով նրան առաջնորդի իրենց տուն:

Շուտով հայտնվում է և օտարականը: Պատանին երգով ընդառաջում է, երգի հետ նա զանազան ծամածռություններ է անում.

Պյարով էկավ մեր փեսեն,
Մեյ ոտ կարճ ի, մեյն հերկեն,
Ակընջկըներ մեյ գյազ են,
Գյավր շլվար ճըղճըղուկ,
Խելքից ասես ճննճըղուկ:

Աղջիկը վազում է «փեսացուին» ընդառաջ: «Փեսացուն» սարսափահար դեն է հրում նրան, ապա դառնում դեպի ժողովուրդն ու երգում.

Ասեք իմ շաշ անիրոչ,
Ես խավան չեմ ուր քյուրոչ,
Քթի առաճըն ի փուղոց,
Մատ-եղնքյներն են սղոց,
Իրես՝ քյըռնած փըթրի պես,
Ծամեր ճըճան՝ կյազի տեղ:

Լնգլնգալեն առաջ է շարժվում ծեռնափայտին հենված ծերուկն ու երգում.

Ես կուրբան եմ իմ փեսին,
Ինչ անուշ էր ծեր կըսեն,
Մեյ մեկու բոլ պատվեցիք,
Մտեքյ հոդեն դընջացեք:

Առաջ է վազում աղջկա կուզիկ, պառավ մայրը: Սա, պարելով ու երգելով, ասում է.

Օլրուկ խսիր պատի տես,
Նսեքյ՝ կուրբան ծե դադեն,
Սուփրեն պյացի դավաթի,
Մաթրաթ հլին չոր-քյառքու,
Կյարե խացեր, քան քըթու,
Կիրեքյ, խմեքյ, կըշտացեք,
Թռեքյ, տանիս փշտացեքյ:

Աղջիկն առաջ է բերում կոտրած ամանի կտորով կոյաջուր՝ չոր աթարի կտորտանքներով լիքը: Եթե փեսացուն ճարպկորեն դուրս չպրծնի, ապա մյուսները նրա գլուխը կխոթեն կոյաջրի մեջ...»:

Սոցիալական տարբերությունների և ամուսնության թեման բարեկենդանյան սիրված խաղերից էր ամենուր: Այդպիսի մի խաղ-ներկայացում է հետևյալ տեսարանը.

Չորս հոգի ներկայացնում են տվյալ միջավայրում հայտնի պետական բարձրաստիճան որևէ անձի ընտանիքը, որ առավել հայտնի էր իր բացասական հատկանիշներով: Դերակատարները ծպտվում էին անճանաչելի, բայց իրենց պահվածքով պիտի ցայտուն նմանակեին բնօրինակներին՝ սանրվածքով, հովհար բռնելու և պչրանքի ձևով, նայվածքի մեծամտությամբ, ժեստերով: Դերակատարները ներկայացնում են հոգնած, անտարբեր պաշտոնյային, նրա պչրուհի, շատախոս կնոջը, մեծամիտ, քաղքենի մորը, մտավոր հետամնաց, անդաստիարակ դստերը: Ներկայացման ընթացքը ցույց է տալիս ընտանիքի նախապատրաստությունները՝ ընդունելու խնամախոս եկող փեսացուին, սակայն վատ բնավորությունների և քաղքենիության պատճառով նրանք ձախողում են խնամախոսությունը:

Ուշագրավ ներկայացում խաղ է նկարագրված Արևմտյան Հայաստանի Բուլանըխի հայերի բարեկենդանյան կյանքից: Գյուղի երիտասարդներից երկուսը հրեա վաճառականների դեր են կատարում: Իբրև թե նրանք հեռու տեղից ապրանք են փոխադրում: Վաճառականները հայերեն

չգիտեն, սակայն ունեն թարգմանիչ: Դերակատարները ծպտվում են այնպես, որ համագյուղացիներն իրենց չճանաչեն: Մի քանի երիտասարդ խաղում են գողերի դերը, որոնք իբրև թե պիտի թալանեն հրեա վաճառականներին: Գողությունը կազմակերպելու համար նրանք գործարքի մեջ են մտնում գյուղի երիտասարդներից մեկի հետ, որը տեղյակ է, որ իրականում ներկայացում է պատրաստվում: Նրա օգնությամբ «գողերը» «թալանում են» վաճառականներին: «Հրեաները» աղմուկ են բարձրացնում, դիմում են տեղի «ոստիկաններին», որոնք որոշ աշխատանքից հետո ձերբակալում են «թալանչիներին» և տանում «գյուղապետի»՝ ռեսի մոտ: Գյուղով մեկ տարածվում է կատարված գողության և դրա բացահայտման լուրը: Գյուղացիները նույնպես հավաքվում են ռեսի մոտ՝ դեպքերի ընթացքին հետևելու: Ռեսի մոտ պատվավոր տեղերում բազմում են «թալանված վաճառականները», որոնք իրենց թարգմանչի միջոցով պահանջում են խուզարկություն կատարել և վերադարձնել իրենց գույքը, դրամը: «Լեզուն», որով խոսում են, անիմաստ հնչյունախմբերի կուտակում է, սակայն «թարգմանիչը» ջանասիրաբար հաղորդում է «հրեաների» պահանջը: Հավաքված բազմության առաջ սկսվում է խուզարկությունը: Այն երիտասարդը, որ իսկապես համաձայնվել էր օգնել «գողերին», կանգնում է դատաստանի առաջ. նրան սկսում են «խուզարկել»՝ մերկացնելով ամենայն լրջությամբ: Երբ նա արդեն ամբողջովին մերկ հայտնվում է բազմության առաջ, նոր միայն հասկանում է, որ ինքը բարեկենդանյան ներկայացման զոհ է:

Հետաքրքիր ներկայացում է նկարագրում Քեսապի հետազոտողը Քեսապի հայության բարեկենդանյան կյանքից: Բուն Բարեկենդանի գիշերվա խնջույքի պահին տան ներսում և բակերում պատահիները «կ'է՛շմուօր» էին խաղում: Խաղի էությունը կայանում էր հետևյալում. երկու պատանիներ ծպտվում էին հնարավոր չափով ծիծաղաշարժ հագուստով, մեկը՝ կնոջ, մյուսը՝ տղամարդու: Երեսները մրոտում էին, դառնում անճանաչելի և հնարավոր չափով՝ սարսափազդու, ծիծաղաշարժ: Սրանց «կ'է՛շմուօր» կամ «կ'աշմար» էին անվանում: «Կ՝աշմարի» վզից կախում էին դատարկ խխունջներից պատրաստած վզնոցների մի քանի շարք, որոնք ամեն շարժումի հետ միմյանց դիպչելով զնգզնգում էին: «Կ՝աշմարներին» շրջապատում էին թիթեղներով զինված ուրիշները, որոնք թափահարումներով կամ թիթեղները միմյանց խփելով մեծ աղմուկ էին բարձրացնում և երգելով շրջում փողոցներով.

Հաստէ տիկին,
Հաստէ տիկին,
Փակի, չիջնէ,
Շաբթէ շաբաթ,
Ամսէ ամիս,
Տարուէ տարի,
Հաստէ տիկին,
Հաստէ տիկին:

Սրան հաջորդում էր պարային ծափերով ուղեկցվող պարային կրկներգը.

Ղօմպըտը կ'աշմար, դիրանինա կ'աշմար,
Ղօմպըտը կ'աշմար, դիրանինա կ'աշմար,

Կամ՝

Ղօմպըտը կ'աշմար, դիրանինա կ'աշմար,
Ապու ազիզ պետտու պախշիշ:

Այս տողերում «ղոմպըտ» և «դիրանինա» բառերը պարի կոչելու կրկներգեր են, իսկ «Ապու ազիզ պետտու պախշիշ» արաբերեն է, որ նշանակում է «Ապու Ազիզը նվեր է ուզում»: Խումբն աղմուկով լցվում է պատահած առաջին տունը, խնջույքի նստածները նույն հանգերգով և

ուրախությամբ միանում են անճոռնի շարժումներով պարող «կ'աշմարիս», իսկ վերջում նուշ, ընկույզ, չիր ու չամիչ, նուռ, երբեմն էլ դրամ նվիրելով՝ ճանապարհում:

Մեկ այլ ներկայացում էր տարածված Զանգեզուրի Խնձորեսկ գյուղում: Այստեղ քսան-երեսուն երիտասարդ կանայք տղամարդու հագուստով, գլուխներին փափախ դրած, մի ձորակում լծվում էին գութանին և ծմեռվա կեսին վար անում: Հավաքված բազմությունը՝ կին ու տղամարդ, երիտասարդ ու ծեր, կատակներով խրախուսում էր նրանց:

Զանգեզուրում տարածված խաղերից էր նաև «Հարսը»: Բոլոր դերերը այս դեպքում կատարում էին տղաները: Նրանցից մեկը հագնում էր կնոջ ու տղամարդու խառը հագուստ և կատարում փեսայի դերը: Մյուսը հարսի հագուստով է: Հարս ու փեսին ուղեկցում են նվագածուները: Նվագում են հիմնականում շվի: Ծափերի, աղմուկ-աղաղակի տակ հարսն ու փեսան պարելով շրջում են փողոցներով, ապա մոտենում են որևէ մեկի տանը: Աղմուկից տնեցիները դուրս են գալիս: Որոշ ժամանակ պարելուց հետո ուղեկցողներից մեկը փայտի թրով խփում «սպանում» է հարսին կամ փեսային: «Սպանվածը հարություն է առնում» միայն այն ժամանակ, երբ տանտերերը նրանց համապատասխան մթերքներ են տալիս՝ ձու, ալյուր, պանիր, կաթնասեր, միս... Խումբը շարունակում է իր այցերը, հաճախ ստվարանալով յուրաքանչյուր հանդիպումից:

Մարաշի հայերը նույնպես Բարեկենդանի շատ սիրված ներկայացումներ ունեին, որոնցից հիշարժան է հատկապես «Թլխաղիր» կոչվածը: Կանայք բահի կամ թիի վրա հագցնում էին կնոջ, բայց հատկապես նորահարսի հագուստ, գլուխը հարդարում զանազան քողերով ու ծածկոցներով, այս կերպ պատրաստված մարդ-տիկնիկը կոչվում էր «թլխաղիր»: «Թլխաղիրին» այնուհետև հագցնում էին իրենց զարդերը և կատակերգերով պտտվում գյուղի թաղերում՝ տնետուն: Այդ օրն ամեն թաղում կարող էր լինել մեկ կամ մի քանի «թլխաղիր»: Զբոսապտույտից հետո «թլխաղիրը» տնկում էին մի բակում և մինչև երեկո շուրջը պարում: Ենթադրվում է, որ ծեսը «թլխաղիր» կոչվում է «թլոհ», «թլահիլ» բայից, որ «ծաղրել» բայի արմատն է:

Շատ խրախուսելի էր նոր սցենարներով նոր թատերախաղեր ստեղծելը: Եթե դրանք հաջողվում էին, արագորեն տարածվում էին, լրացվում նոր մանրամասներով, երբեմն անճանաչելիորեն փոխվում: Իսկ որոշ հաջողված կամ զավեշտական իրավիճակներ դառնում էին նոր երգերի թեմաներ, ինչպես, օրինակ, Նոր Նախիջևանի հայերի կենցաղում արմատավորված «Սեկրետարին պիրոգը» (ռուսերեն «Քարտուղարի կարկանդակը») երգը: Երգը հյուսվել է հետևյալ դեպքի առիթով: Նոր Նախիջևանի քաղաքապետարանի բոլոր պաշտոնյաները 19-րդ դարում հայեր էին, սակայն ռուսական կառավարությունը մշտապես վերահսկող մի անձ էր պահում քաղաքապետարանում՝ որպես գործավար-քարտուղար: Սրանք սովորաբար պաշտոնաթող անձինք էին և ժողովրդի հիշողության մեջ մնացել են որպես կաշառակերներ և հարբեցողներ: Այս քարտուղարներից (ռուսերեն՝ սեկրետար) մեկը Բարեկենդանի տոներին որոշում է իր տուն հրավիրել քաղաքի երևելի, աղա հայերին, այն մարդկանց, ում տներում ինքը հաճախ է հյուրասիրվել և ումից կաշառքներ է վերցրել: Հրավիրում է «պիրոգ» և «բլին» ուտելու: Հրավիրվածներն ուտում են «պիրոգ»-ն ու «բլին»-ը, խմում են օղին ու գինին և խնջույքը դառնում է աղմկոտ: Սկսվում է երգն ու պարը: Այդ պահին տանն է մոտենում երկու սահնակների լծված մի նավակ՝ զարդարված գորգերով, դրոշակներով, մի ծայրին՝ նվագախումբ: Սահնակը քաշում էին երեք եզներ: Պարզվում է, որ այն նախապես պատվիրած է եղել «սեկրետարը»: Տանտերը բոլոր հյուրերին մի-մի դիմակ է տալիս և առաջարկում նավով ճամփորդել քաղաքի փողոցներով: Տանտերն ու խնջույքի մասնակիցները նվագախմբի ուղեկցությամբ աղմուկով շրջում են քաղաքի փողոցներով, և այս պտույտն այնպիսի տպավորություն է թողնում քաղաքացիների վրա, որ դեպքի շուրջ երգ է հյուսվում, և սույն «սեկրետարը» դառնում է Նոր Նախիջևանի հայերի բանահյուսական հերոսներից մեկը.

Բարիկենդանին կիրակին,
Սեկրետարին պիրոգին,
Քեմեչեն ձեռքը Թիրաքին,
Համը նայեցավ քաղաքին:
Աս քաղաքը ծով գիտիս,
Խալըխներով կըբալիս,
էքի չանա, տերա էկյուզ,
Խախոլ Վասիլ ռեյուզ,
Դռնբացուքի տիմոնճի,
Թայֆալարը յաղրճի,
Սաղ քաղաքը պտուտ էկան,
Մասխարա էդած տուն էկան:

Բարեկենդանին խաղացվող թատերազվարճախաղերից մեկը, սակայն, խիստ ընդհանրացած էր Հայաստանի բոլոր գավառներում, և տեղական տարբերակներով ու տարբեր անուններով այն, անշուշտ, ամենուր մշտական ուղեկիցն էր այս տոնի: Դա «Փաշա», «Քյոխվա», «Շահ-շահ», «Խան», «Ղադի» (դատավոր) և այլ անուններով հայտնի ներկայացումն էր, որի գլխավոր տարբերակիչ առանձնահատկությունը օտար բռնակալի ու կոնկրետ հայկական համայնքի հանդիպման ծաղրապատկերն էր: Դիմենք դարձյալ Պերճ Պռոշյանի օգնությանը, որը նկարագրում է Աշտարակում այս թատերախաղի կենդանի մանրամասները.

«Մին էլ են տեսար՝ գլուխը երկար պոզավոր թաղիքի գդակը անցկացրած, ոչխարի գզգզված մորթին բուրդը դեպի դուրս մեջքին կապած, երեսն ալյուրոտ մի տղա, մի ահագին աթարոց ձեռքին սյուն տալով՝ եկավ, խոր գլուխ տվեց մեր իշխաններին:

- Հը՞, ի՞նչ մարդ ես, ո՞վ ես, ո՞ր աշխարհի քամին ա քեզ պտըտել, մեր գեղը քցել,-հարցնում է մի ծերունի:

- Արզ անեմ Աշտարակի էլ ու հասարակությունին, որ մեր Փարբու տերը՝ ղոչաղների ղոչաղ Եդգյար խանը՝ իր նագիր-վեզիրով, իր նոքյար-փեքյառով հինգ հարիր մարդով գալիս ա ծեր սուփրեն շեն անելու, մեր բարեկամությունը հաստատ պահելու: Նրա հրամանն ա, որ սաղ գեղով, իշխաններով դուս գաք նրա առաջը...

Ուռած-ուռած բազմած է մեր փարբեցի Եդգյարը իշի վրա, պոչը ձեռքին բռնած, երեսը դեպի ետ, մի երկար գերեմաստի ճիպոտ էլ մյուս ձեռքին իբրև չիբուխ դնչին դեմ արած, նրա գլխին դրած է գզգզած պարսից խանի երկար գդակ՝ վրան հին փալասներ փաթաթած: Նրա երեսը քսած է աթարով վառվող տան օճորքի մուր, նրա վիզը ձգած է զանազան ոսկորների կտորների շարք, հագած ունի նա մի պատառոտուն, ծլանքները հազար տեղից քարշ ընկած պարսկի արխալղահին: Նրա կուրծքը բաց է, նույնպես մրով սևացած, կողքիցն էլ մի երկար փայտե սուր կախած: Երկու երիտասարդ, նույնպես այլանդակ հագնված, քաշում են իշի սանձը, երկուսն էլ քամակիցը մի-մի գավազանի ծայրերը սրած՝ բզում են իշին: Դափ ու զուռնեն առաջին ածելով՝ քաշում է այդ հանդեսը դեպի տանուտերի կտուրը, իսկ խուռըն ամբոխը միշտ «յալլա» է կանչում...

Օիծաղ՝ որ էստեղ տես: Ամեն կողմից վեր են կալնում անլեզու անասունին յուր վերա բազմած խանի հետ միասին ուսերքի վրա և ելնում սանդուղքներով:

- Յալլա, - գոռում է բազմությունը, իսկ վերևիցը ալյուրը շաղ են տալիս խանի և իշի գլխին: Փոշին ողջ բակը բռնում է, բոլորը ալյուրոտվում են, ում երեսին կամ գլխին էլ որ քիչ է թափվում, ինքն յուր ընկերի մեջքից վերցնում՝ քսում է յուր երեսը: Իսկ մեր խանի համար՝ էլ մի հարցնիլ, երևակայիր մրի և ալյուրի մեջ կոլոլված մի գունդ միս:

- Գլուխ, գլուխ տվեք, Աշտարակու իշխաններ, մեր ողորմած խանին,- կարգադրում է ընդհանուր կառավարիչը:

Վեր են կենում բոլորը սեղանի վրայիցն ու իրենց տեղը կանգնած՝ խոնարհությամբ գլուխ իջեցնում: Վայ նրան, ով մի փոքր ուշ գլուխը կռացրեց. աչքով է անում խանն իր կառավարչին, և բարակ ճիպոտը կպչում է այդ հանդուգն մարդուն»:

Այնուհետև «խանը» սպառնալիքներ է թափում ներկաներին, նույնիսկ պատիժներ է տալիս և այլն, իսկ հյուրընկալները ջանում են տարբեր «ընծաներով» շահել զայրացած «խանի» սիրտը. - որպես ընտիր գինի մատուցվում է մի բաժակ քացախ, որպես որսամիս՝ մի ձողից կախված ագռավի մարմին, որպես գառ՝ մի սատկած կատու և այլն: Սրանցից զատ, սակայն, նա գյուղի ավագներին պատժելու սպառնալիքներով իրապես որոշ ընծաներ է ստանում՝ յուղ, բրինձ, ձու, հավ և այլն: Այս ամենն ավարտվում է իրական հյուրասիրությամբ: Բայց միշտ չէ և ամենուր չէ, որ խաղի կանոնները ենթադրում էին այսպիսի խաղաղ վերջաբան: Գանձակի հայկական գյուղերում և Գանձակ քաղաքում, որտեղ թատերախաղը կոչվում էր «շահ-շահ» կամ «ղոշուն-ղոշղուն», հանդես էր գալիս երկու խումբ: Այստեղ «շահը» ցնցոտիավոր չէր, այլ շատ թանկարժեք, ճոխ հագուստով, գլխին թագ դրված, կողքից թանկարժեք սուր կախած և գահին նստած: Գահը դրվում էր նախապես համապատասխան տեսքի բերված ընդարձակ հրապարակում և հենց գահի մոտ ծածանվում էր կարմիր-կանաչ դրոշը: «Շահը», անշուշտ, շրջապատված էր մեծաթիվ պալատականներով և այս ամենը հսկում էր փայտերով զինված զորքը: Զուռնա-դհոլը ազդարարում էր ներկայացման սկիզբը և հրապարակը աստիճանաբար լցվում էր բազմությամբ: Ականատեսների աչքի առաջ «շահի» վեզիրները պատմում էին նրան իր թագավորությունում կատարվող անարդարությունները, որոնք իրական էին, կապված գլխավորապես գյուղի կամ քաղաքի հայ համայնքի ավագանու հետ: «Շահը» հրամայում էր անմիջապես մոտ բերել այս կամ այն անարդարության հեղինակին, անկախ նրա հասարակական դիրքից, տարիքից, ունեցած կամ կարծեցյալ հեղինակությունից: Հավաքված հասարակության առջև տեղի էր ունենում հանցավորի քննություն, անհրաժեշտության դեպքում կանչվում էին վկաներ և այլն, և այս ամենը՝ ամենայն անաչառությամբ: Անհրավի հանցանքը հաստատելուց հետո «շահը» տուգանք էր դնում նրա վրա, և եթե վերջինս վճիռը չէր կատարում, զինվորները հարկադրում էին նրան: Ներկայացման ամենաթեժ պահին, երբ մեկը մյուսին էին հաջորդում դատավարությունները և դատավճիռները, լուր էր տարածվում, թե «շահի» թագավորության սահմաններն է թափանցել ինչ-որ ինքնակոչ և իրեն շահ հռչակել: Տեղի էր ունենում բախումը «իսկական» ու «կեղծ» «շահերի»՝ փայտերով զինված զորքերի միջև, երբեմն իսկական բախում, որն ավարտվում էր «շահերից» մեկի հաղթանակով: Հաղթողները պարտված «շահին» նստեցնում էին էշի վրա, ձեռքը տալիս էշի պոչը, երեսը մուր քսում և սկսվում էր շքերթը. պարտված շահը շրջում էր փողոցներով իր գլխահակ «զինվորների» և հաղթողների ծաղրական կատակների ուղեկցությամբ, իսկ հավաքված տուգանքն անցնում էր հաղթողների տրամադրության տակ:

Սրան շատ նման էր Բալուում ներկայացվող տեսարանը: Դարձյալ խոսքը տանք ականատեսին. «...կը հավաքվին հոն, ուր մեծ պարը և մեծերուն սեղանը կա, այդ պահուն հոն գյուղացիներուն թիվը պետք է ամբողջ ըլլա, վասնզի գյուղացիներուն բարքերուն, կամ ավելի ճիշտ գյուղին օգտին համար օրվա ռեսին ընելիքներուն վրա հարմարեցված թատերախաղը պիտի սկսի: Թատերախաղը ներկայացնողը «դատավոր» անունը կը կրե, ու կունենա իր ոստիկանները, իր գրագիրները, ամենքն ալ իրենց աստիճաններուն համեմատ զգեստներ կը հագնին: Ներկայացման ժամանակը եկածին պես, դատավորը փայտաշեն ձիու մը վրա հեծած՝ կը հառաջանա հոն, ուր կեդրոնական պարը կա, ուր գյուղին ռեսը և մյուս մեծերը նստած

ուրախություն կընեն: Կը հառաջանա ծանր, բայց խոժոռ ու դժնյա երևույթով մը: Անոր սուրհանդակ ոստիկանները առջևեն կուգան ճամփա բանալու լեցուն բազմութեան մեջեն: Երկու կողմերն ու ետևն ալ իր պահապան ոստիկաններն ունի անոր կյանքին պաշտպանություն ընելու համար: Ամենքն ալ ծպտված են: Եթե ձայներնին զիրենք չի մատնի, կարելի չէ ճանչնալ անոնց ով ըլլալը: Դատը պիտի տեսնե դատավորը: Դատը պիտի ըլլա անաչառ ու անկաշառ, դատվելիք անձերը նախապես ընտրված ու առած են: Քովն են ատոնք, գլխավորն ատոնցմե որպես թե գյուղին ռեսն է: Մյուսներն ալ գյուղին մեծերը: Այս նմանեցված կեղծ ռեսը և մյուս կեղծ մեծերը քննվելեն հետո դատավորեն կը պատժվին, նույն տեղվույն վրա բարձրացված ու ծայրերը իրարու միացված երկու հատ փայտե սանդուխներուն մեջտեղը նստեցնելով զանոնց, մեկիկ-մեկիկ ձեռքերն ալ շղթայված: Բայց իրական ռեսն ու մեծերն ալ դատավորին հանդիմանութենեն զերծ չեն կրնալ մնալ»:

Բարեկենդանյան ներկայացումների ժամանակ «փակ» թեմաներ, անձեռնմխելի անձեր չկային: Հոգևորականները նույնքան, որքան աշխարհականները, ենթարկվում էին բարեկենդանյան ընդհանուր տրամադրությանը: Նախ, խաղերը շոշափում էին նրանց կյանքի առանձին ելևէջներ, ապա՝ թատերախաղը կատարվում էր նաև վանքերի ներսում, վանականների մասնակցությամբ: Առաջին դեպքի օրինակներից է ուխտավորների տեսարանը: Դերակատարները ուխտավորներ են, որոնց մեջ կան կույսեր, քահանա, աբեղա: Կույսերից մեկը սիրաբանում է աբեղայի հետ, մյուսը խանդում է նրան: Ուրախ ուխտավորների այս խումբն ի վերջո սրբավայր հասնելու փոխարեն հարսանիք է ընկնում:

Բարեկենդանյան ուրախությունները, խաղերը, երգերը, ներկայացումները կատարվում էին նաև վանական միաբանություններում: Նվագածուները անարգել վանքերն էին թափանցում, զվարճացնում վանականներին, որոնք այդ օրերին դուրս էին գալիս միաբանության համար սովորական լռության և խիստ ենթակարգության շրջանակներից: Այս օրերի համար են ասում, թե վանականները

- Թողեր են Ավետարան,

Առեր են թամպուրան (նվագարանը):

Այդ օրերին վանքերում հնչող երգերը հաճախ խիստ աշխարհիկ էին, ինչպես.

Թասերըն չինի,
Կարմրիկ գինի,
Չեզ անուշ լինի:
Թող մազեն համեղ,
Գինին է զորեղ,
Դուք անուշ արեք:
Տաղերըն կանչեք,
Սագերըն ածեք,
Օափ տըվեք, պարեք:
Ղապլու խորովու,
Հավու քապապներ,
Խաշլամա գառըն:
Էս մեջլիսումըն,
Տըխուր ու դառըն,
Մարդ չըլնի գառըն:
Թասերըն շարած,
Ողջ ոսկեջրած,

Խըմողն է օրհնած:

Արթնանում էին վանականների սրտերի առավել զգայուն լարերը, աշխարհիկ կյանքի հիշողություններից առավել քնարականները, նուրբերը: Այս օրերին էր, որ վանականները երգում էին չնաշխարհիկ, զգայուն, անձկագին երգեր, որոնցում արտահայտվում էր նրանց հոգու խորը թաքցրած անրջանքները, երազներն ու պատկերները.

Ա՛յ եղվընիկ (աղավնի), գարուն էր ի գայ աշուն,
Ա՛յ եղվընիկ, ատ ի՞նչ խըտար քու ձէն անուշ էր իմ խուցերուն,
Ա՛յ եղվընիկ, մեռնիմ էտ քու նշխուն տոտերուն,
Ա՛յ եղվընիկ, զքու թեւեր
Աստված նշխուն է ստեղծեր,
Որ Իսան (Քրիստոս) է հաւներ:
Ա՛յ եղվընիկ, էտ ի՞նչ խըտար քու ձէն անուշ էր,
Որ կոլորտէր սարեր ու ձորեր.
Ա՛յ եղվընիկ, էտ ի՞նչ խորոտիկ ունիս թուշեր,
Ա՛յ եղվընիկ, մեռնիմ քու նշխուն աչվընեռուն,
Ատ ի՞նչ շատ խոցեր
Մէջ քու սրտին ունիս դուն:

* * *

Նստեալ կայր ու լայր կաքաւուկն
Ի վերայ քարին, այ հաւեր,
Ու գանգատ կ'աներ ձագերուն,
Թռչունք, այ հաւեր,
Ի բարձր լերունք ելայ,
Ի կանաչ մարգեր նայեցայ, ա՛յ հաւեր:
Իջի, որոգայթն ընկայ,
Ի վարկին մէջ, ի ծուակին, ա՛յ հաւեր.
Եկին, գիս ի վեր առին,
Զահաբեկ սուրըն ցըցուցին, ա՛յ հաւեր.
Զայս իմ կարկըուն վզիկս,
Յականջէ յականջ զենեցին, ա՛յ հաւեր.
Զայս իմ կարմրուկ արունս
Ի գետին ի վար թափեցին, ա՛յ հաւեր.
Զայս իմ մանտրուքայլ ոտկունքըս
Ի ծնկացս ի վար կտրեցին, ա՛յ հաւեր.
Զայս իմ գունըզգուն փետուրըս
Մէկն ի սար արին, մէկն ի ձոր.
Զայն՝ որ ի սարըն ընկեր,
Զայն իջեր ի քամիկն ու տարեր.
Զայն՝ որ ի ձորերն ընկեր՝
Զայն իջեր հեղեղն ու տարեր:
Եվ սուրբ Գրիգորի նման,
Զիս ի Խոր Վիրապն իջուցին,
Եկին, գիս ի վեր առին,
Մաճլիս հաւսար ցըցուցին,

Եւ սուրբ Յակովբայ նման
Մասըն մասըն կըտրատեցին.
Լաւաշն ինձ պատանք արին,
Ու կարմիր գինով գիս թաղեցին.
Եւ ծայն գերեմիային ածի,
Նախահօրըն եւ մօրըն Եւայի:

«Բուն կամ մեծ Բարեկենդանի շաբաթ և կիրակի օրերուն մեջ չկա այլ ևս աբեղայություն, տիրացու, սարկավագ, վարդապետ և եպիսկոպոս այլևս հավասար են, չկա ակնածություն, ամենքն են համահավասար, իրարու հետ ուտող ու խմող, պարող և երգող»: Հաճախ եպիսկոպոսն ինքն էր խրախուսում կատակներն ու զվարճահանդեսները, պարգև խոստանալով առավել սրամիտներին:

Վանքերում այս օրերը կոչվում էին Աբեղաթողի օրեր, և վերջին օրն այստեղ կատարվում էր Աբեղաթողի ծեսը կամ ներկայացումը: Ներկայացմանը հանդիսատես չկար, միաբանության բոլոր անդամները դերակատարներ էին: Հավաքվում էին միաբանության բոլոր անդամները, անկախ դիրքից, աստիճանից, տարիքից: Պարզ քվեարկությամբ կատարվում էր թափորապետի ընտրությունը. այն կարող էր լինել թե՛ եպիսկոպոս, թե՛ տիրացու: Թափորապետը նստում էր գահավորակին, գլխին դնում էին թղթից սարքած մեծ թագ, բռնում էր խոտերից հյուսված և աթարով ծեփված գավազան, վրան գցում էին նախապես պատրաստված թղթե շուրջառ, որի վրա գրված էին բոլոր միաբանների անունները: Չորս վանականներ բարձրացնում էին գահավորակը և վառվող մոմեր բռնած միաբանների շարականների ուղեկցությամբ թափորն սկսում էր շրջել վանքի տարածքում: Այդ օրվա գլխավոր շարականը Քրիստոսի էշով Երուսաղեմ մտնելու հիշատակին երգվող Ծաղկազարդի շարականն էր: Թափորը հասնում էր աբեղաների թաղը, որտեղ սկսվում էր ներկայացման երկրորդ մասը: Այստեղ ներկաներն սկսում էին հարցեր տալ թափորապետին, և սա պիտի սրամիտ և իրական պատասխաններով ներկայացներ միաբանների խառնվածքը, վանքում տիրող մթնոլորտը: Հարցերը աստվածաշնչյան թեմաներով էին, պատասխանները՝ միաբանության ներքին կյանքից: Օրինակ, հարց.

- Ո՞վ էր, Աստծու օրհնած հացը՝ մանանան, փորձեց պահել ուրիշ օրերու համար և որդնվեցավ:

Թափորապետը տալիս էր միաբանության անդամներից առավել ժլատի, կամ փնթիի, մի խոսքով՝ «որդընվածի» անունը: Եթե պատասխանը հաջող էր լինում, հաջորդում էին ծափահարությունները, ծիծաղը:

Հարց ու պատասխաններով միաբանության տեսանելի խոցերը վեր հանելուց հետո միաբաններից մեկը ծայն էր խնդրում և հարցնում թափորապետին.

- Երբ այս վանքին հիմքերը դրվեցան և պարիսպները շինվեցան, ո՞ւր էիր դուն:

- Դժոխքին մեջ,- հաջորդում էր պատասխանը:

- Վա՜յ, ուրեմն դուն դժոխքեն փախած ու հոս եկած, ուրեմն արժանի պատժի:

Եվ ինչպես հաճախ բարեկենդանյան ներկայացումների մեջ, գլխավոր դերակատարը «մեռցվում» էր. գահավորակը կործանում էին, թափորապետին ծաղրելով ու խփելով տանում գերեզմանոց՝ իբրև թե թաղելու:

Բարեկենդանի վերջին օրը խելահեղության էին հասնում խնջույքները, պարերը, խաղերը... Ջանում էին ուտել, վերջացնել բոլոր մսեղեն, յուղեղեն, կաթնեղեն կերակրատեսակները: Վաղն այլևս պաս է, Մեծ պասի առաջին օրը, և քառասունինը երկար ու ձիգ օրեր ոչ միայն ուտելիքի, այլև վարքագծի պահեցողության շրջանն է սկսվում: Ու թնդում էր պարերգը, հնչում էր զուռնան, պարպվում էին գավաթները, աղջիկները ճլոթու վերջին ճոճերն

էին անում, տղաներն էլ հրապարակ էին դուրս գալիս գլխավոր ծիարշավի, որը պիտի ավարտվեր «Ուտիս տատին» վռնդելու, «Պաս պապին» հրավիրելու ծեսով:

«Ուտիս տատը» գզգզված, քրքրված տիկնիկ էր, որ Բարեկենդանի վերջին օրը, երեկոյան, հանդիսավոր գլորվում էր սարի գլխից՝ այստեղ երիտասարդների բարեկենդանյան վերջին խնջույքը հովանավորելուց հետո: Դիմենք դարձյալ Պերճ Պռոշյանի օգնությանը՝ տեսնելու Աշտարակում Բարեկենդանի ավարտը: «Ապրին իմ տղերքը,- տնօրինեց տանուտերը,- Ուտիս տատին լավ ճամփու դրեք, տարեք ընչանք Ուլատիտիկու կոնդի գլուխը, ընդեղ մի լավ վերջին քեֆ շանց տվեք, բաց թողեք՝ գնա իր արևի ձեռն ածի պասակեր թուրքերի միջին, միհ էլ ով սաղ ա, ով մեռած ընչանք մեծ Զատիկ: Մեծ Պաս պապին էլ համեցեք արեք, թող գա՝ էգուց առավոտ ոտները երդիկներիցը քաշ անի:

- Էն ա, հա, Մեծ պաս պապը հիմի Ուլատիտիկի գլխին հաստ գոմշի կաշուց տրեխները դաղել, տրեխչվաններն ա կապում, համա մեր Ուտիս տատը գզգզոտված, ոտները բոբիկ՝ գլուխ ա առնում, պապի ձեռիցը փախչում, որ գնա, թուրքերի տներումը տափ կենա: Խեղճ Ուտիս, ինչ պիտի գտնի քաղցած թուրքերի մոտ, մի կտոր չորթան էլ չկա, որ բերանին քսի: Ճարը կտրած ինքն էլ պիտի պաս պահի:

- Ոչինչ, մի օր էլ պասի տրեխները կծակվին:

Մի մեծ սեղան, ամենայն բարիքներով լի, սպասում էր մեր կտրիճներին բլրի գլխին:

Երեկո էր, որ տղայքը ետ դարձան՝ հրացաններ արձակելով և երգեր ասելով Ուլատիտիկի գլխից: Նրանք գտան իշխաններին և ծերերին էլի Ազգենց կալումը, ուր նոքա փոքր ժամանակ առաջ եկել սպասում էին՝ ամբողջ օրը տանուտերի վերի կտերը ուրախություն անելուց հետո:

Երիտասարդները շնորհավորեցին իշխանների Մեծ պասը և ամեն մարդ գնաց յուր տունը»:

Քեսապի հայերի մեջ ևս Բարեկենդանի վերջին գիշերվա համար պահած խաղեր կային: Դրանցից մեկը հետևյալն էր. սեղանի վրա մնացած աղը թափում էին կրակի կայծերի վրա: Աղը այս ու այն կողմ ցայտելով՝ ճարճատում էր: Տնեցիները դես ու դեն նետվելով մարում էին կայծերը: Նույն պահին տղամարդիկ իրենց գավաթներում մնացած օղին լցնում էին կրակի վրա, որի հետևանքով կարմրակապույտ բոց էր բարձրանում՝ կիսամութ սենյակում մարդկանց դեմքերին դեղնականաչավուն գույն հաղորդելով: Մթնոլորտը դառնում էր խորհրդավոր, մի փոքր՝ սարսափազդու: Այդ պահին մեկը բոցերի վրա լայն պնակ էր բռնում այնպես, որ պնակի տակը ամբողջովին սևանար: Սևացրած պնակն այնուհետև ձեռքից ձեռք էր անցնում. վրայի մրով միմյանց դեմքերն ու ձեռքերը ամբողջովին սևացնում էին: Այս խաղը կոչվում էր «ապըտվիլ» (մրոտվել, սևանալ):

Նույն գիշեր նույն Քեսապում խնջույքի վերջում տան տղամարդիկ խաղում էին «ըրկան էգեն» (երկար ագին, երկար պոչը) խաղը. թելով խանձող էին կապում առաստաղից և ձեռքերը հետևը դրած՝ բոլորում շուրջը: Խաղավարը հրաման էր տալիս, բոլորն սկսում էին փչել: Յուրաքանչյուրն աշխատում էր փչել որքան ուժ ուներ, աշխատելով, որ դիմացի փչողի պատճառով խանձողն իր դեմքին չկպչի: Ոչ ոք, սակայն, չէր փախչում, այնպես որ խանձողն անպայման մեկն ու մեկի դեմքին կպչում էր՝ թեթևակի այրելով: «Երկար ագին մեջդ մտավ»,- ասում էին նրան: Այնուհետև փչում էին այնքան, մինչև որ կայծը բոլորովին մոխրանար: Ուշագրավ է, որ չնայած երեխաներին սովորաբար արգելում էին գիշերը կայծերի հետ խաղալ (այլապես՝ «տակը կթրջեին», այսինքն՝ անկողնում կմիզեին), այդ գիշեր նրանք էլ էին մասնակցում մեծերի խաղին: Ենթադրվում է, որ «Երկար ագին» հաջորդ առավոտ սկսվող Մեծ պասը կարող է դիտվել:

Բարեկենդանի այդ վերջին գիշերը Ղարաբաղի Հադրութ գյուղում երեխաներն ընթրիքից հետո իրենց հորը սկուտեղով մատուցում էին զանազան մրգեր, պարան ու մտրակ: Այս ընծայի դիմաց հայրը նրանց նվիրում էր մի քանի կոպեկ:

Վերջացավ Բարեկենդանը, երկար ժամանակով լռեցին երգն ու պարը, դադարեցին հարսանիքները, վերջացավ անհնազանդության իրավունքի շրջանը, բայց կյանքը մտավ ոչ թե առօրեական, այլ չափազանց խստակեցության շրջանը:

Պարերգեր

Բարեկենդանին շատ էին կատարվում պարերգեր, երբ խումբն ինքը երգում էր և նույն երգի մեղեդու տակ՝ պարում: Դրանց մեջ հատուկ տեղ էին զբաղեցնում այն երգերը, որոնք սկսվում էին «եկանք ի Բարկենդան, կերթանք ի Զատիկ» տողով սկսվող երգերը, որոնք կարող էին բազմաթիվ թեմաներ ընդգրկել՝ սիրո, զվարճության, պանդխտության: Դրանցից մեկին, որ սովորաբար երգում էին (և պարում) տարեց կանայք Բարեկենդանի վերջին օրը, ծանոթացանք տեքստում: Այժմ ծանոթանանք ևս մեկին, որի թեման պանդխտությունն է.

Եկանք ի Բարեկենդանք, կ'երթանք ի Զատիկ,
Ախպար, ելար կ'երթաս, ինտո՞ր տի զատինք.
Առաւօտանց կ'ելլես, բեռնակըտ բեռցիր,
Կ'երթաս ղարիպ երկիր, շուտով ետ դարձիր:
Ըհըն գարնից, եկան գարնան օրերը,
Հալեցան ձիւները, լցուան գետերը,
Բուսան առուեղերուն կանաչ խոտերը,
Թրան ի տան կ'երթան կաքւուն հետերը:
Լեռներուն գլուխը կանաչ մորի է,
Խարիպին մեկ օրը հազար տարի է.
Խարիպ, ելիր եկուր, խելվըտ խերար է,
Շատ չէ, շատ չէ, երեք տարին խերար է.
Երեք տարուէն վերջը քէրը հէրամ է,
Շատ կենալն ալ քու արեւուն զարար է:
Աշունը տի գայի, խարշլըխ չունեի,
Ըստամպօլ մեծ քաղաք՝ նմանը չի կայ,
Ես քեզ շատ սիրեցի, կիւմանը չի կայ:

Նույնիսկ տխուր, սրտամաշ երգերը Բարեկենդանին կարող էին դառնալ խմբապարերի հարմար երգեր.

Եարըս ինծի ձի մ'է խրկեր բարայով,
Կ'ուզես կեմով եկուր, կ'ուզես խարայով.
Բարձր քեօշկէր ունիմ չօրս դին ճամերով,
Եկուր նստինք, սեօհպէթ անենք դէմերով.
Սիրտիկըս լեցուն է տերտով խէմէրով:
Գետը պտուտ կ'երթա, ես մեջը փոս եմ,
Աղուոր, գացիր եկիր, ես տըհա հոս եմ.
Ըհըն գարուն եկավ, կիւլ պահար պահար,
Շատ վարդեր են բացուեր, կիւլ համար հազար:

Եկու՛ր, խարիպ պիւլպիւլ, իս մի լացըներ,
Իմ ուրախ սըրտիկըս մի տրտմեցներ.
Բարձըր քեօշկեր ունիմ, առջեւը ծով է,
Շըխտակ տեսկեր ունիմ, իրարու քով է:
Գնա մորըդ, ազապ մանուկ, քու սերըդ ո՞վ է.
Գնա՛ մօրըդ ըսէ, քեզ ինձի գովէ.
Աղջիկ, ի՞նչ կորուցիր՝ նստեր ես կուլաս,
Կորեր մատնիս մատէս, օղիկըս՝ ականջէս:
Եկուր ձիուս ետին, պտըտինք, ժուռ գանք.
Մանչ, դուն օտար մանչ իս, ինտո՞ր քու ձեն գամ,
Երկըրի սիթէմներ կը բերես վըրաս:
Նազ արէ, նազ արէ, նազըդ վերցընեմ,
Արի՝ քեզի նուշ ու շէքէր կերցնեմ.
Պիւլպիւլը կը կանչէ պախճան պարի պէս,
Մէկ մըն ալ չիգար, խապար առնեմ խարիպէս.
Ինչե՞խ եմ կարօտցեր հայվա, նարի պես:
Տէօշէկըս տախտակ է, բարձս չոր քար է,
Երկու ձեռքս երեսիս՝ մէնտիլըս թաց է.
Չար կասկամը (բու) կանչէ, տանըդ պէտ արէ.
Եար, եկուր ձեռքովդ պատանքըս կարէ,
Վերցուր, դիր գերեզմանս, քարը դուն շարէ:

Լալուխան

Պօպիկ մի քյելե, Լալուխան,
Փուշ կելնի տոտիկ, Լալուխան,
Առծթե կօտիկ, Լալուխան,
էրթանք Ստամբոլ, Լալուխան,
Պիրենք ոսկի բոլ, Լալուխան,
Առնենք ջուխտմ սոլ, Լալուխան,
Խայնենք դօրեդօր, Լալուխան,
էրթանք Պստիկ կյեղ, Լալուխան,
Ժողվենք նուկիմ յեղ, Լալուխան,
Անենք ծվածեղ, Լալուխան,
Ուտենք միատեղ, Լալուխան,
էրթանք էրէրին, Լալուխան,
Ոչխար վեր բերինք, Լալուխան,
Կթենք թուխ Մաքին, Լալուխան,
Լցնենք սյուրահին, Լալուխան,
Պառնանք սև եզան,Լալուխան,
Առնենք խարեզան, Լալուխան,
Քշենք դեի զոզան, Լալուխան,
Զոզան քյե մեյդան, Լալուխան:

Մաքրուհի

Քյարվան էկավ գընգզընգյալեն, Մաքրուհի ջան,Մաքրուհի,
Մեչ քյարվնին ճյորի մը կեր, Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Ճյորու քյամակ սնդյուկմ կեր, Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Մեչ սնդուկի բոխչեմ կեր, Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Մեչ էն բոխչին շուշփեմ կեր, Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Մեչ էն շուշփին հայլի մը կեր, Մաքրուհի ջան,Մաքրուհի,
Մեչ հայլկին ախչիկմ կեր, Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Աչքն ու ընքյվեր խրեղեն էր, Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Ախչիկ, ախչիկ, անունտ ինչ ի, Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Ախչիկ,ախչիկ, սերըտ տուր ծիկ, Մաքրուհի ջան, Մաքրուհի:

Թամզարա

Թամզարա, հայ, Թամզարա,
Թամզարա, հայ, Թամզարա:
Աղջի, դու լուսնյակ երես,
Թամզարա, հայ, Թամզարա,
Ինչ կեղնի ինձի սիրես,
Թամզարա, հայ, Թամզարա,
Կաքավ թռավ մեր արտեն,
Թամզարա, հայ, Թամզարա,
Կորավ իմ խաղի խայդեն,
Թամզարա, հայ, Թամզարա:
Աղջի, կանի, ո՞ւր կերթաս,
Թամզարա, հայ, Թամզարա,
Համ Ջատիկ իս, համ Ջոջ պաս,
Թամզարա, հայ, Թամզարա:
Սարերու բարծր սարն իս,
Թամզարա, հայ, Թամզարա,
Աշխարհն գինա իմ յարն իս,
Թամզարա, հայ, Թամզարա:

Թռչնոքի

Ով չը թռնա գիտա պար,
Ոտներ կոտրի քիսնա քար,
Կտրի ընդրա ճար ու վար:
Լեն տուն ու բոլոր յերկեն,
Խորոտկըներ իմ ջերգեն,
Սուն ու գերան բար պիտեր,
Սրտով-սիրով յար պիտեր,
Ով չի թռնա գիտա պար,
Ոտներ կոտրի՝ քիսնա քար:

Սարեն իջա, էկա ցած,
Կզա վերցի թաժա հաց,
Անտըրի շուն զիս էխած,
Ընձի ինչ խածել պիտեր,
Ով չի թռնա զիտա պար,
Ոտներ կոտրի՝ քիսնա քար:
Չուն թալի, սարեր լորխի,
Չիմ յար ու քում չըմ փոխի,
Յարոջ սենջին չըմ կոխի,
Չուխտակ սարեր հովն ընկավ,
Չուխտակ ջեյրան ծովն ընկավ,
Ով չը թռնա զիտա պար,
Ոտներ կոտրի՝ քիսնա յար:

Չինչ ու զի՞նչ

- Չինչ ու զի՞նչ տամ լողվորին,
Չոմա-զոմա էր,
- Չիմ գոտին տամ լողվորին,
Քոմա-քոմա էր:
- Ոչ առավ, ոչ հավնեցավ,
Չոմա-զոմա էր,
- Ոչ հանեց ծամքել ծովեն,
Քոմա-քոմա էր:
- Չինչ ու զի՞նչ տամ լողվորին,
Չոմա-զոմա էր,
- Չիմ լաչին տամ լողվորին,
Քոմա-քոմա էր:
- Ոչ առավ, ոչ հավնեցավ,
Չոմա-զոմա էր,
- Ոչ հանեց ծամքել ծովեն,
Քոմա-քոմա էր:
- Չինչ ու զի՞նչ տամ լողվորին,
Չոմա-զոմա էր,
- Չիմ շապիկ տամ լողվորին,
Քոմա-քոմա էր:
- Ոչ առավ, ոչ հավնեցավ,
Չոմա-զոմա էր,
Ոչ հանեց ծամքել ծովեն,
Քոմա-քոմա էր:
- Չինչ ու զի՞նչ տամ լողվորին,
Չոմա-զոմա էր,
- Չիմ պագիկ տամ լողվորին,
Քոմա-քոմա էր:

- Ոչ առավ, ոչ հավնեցավ,
Ջոմա-ջոմա էր,
- Ոչ հանեց ծամքել ծովեն,
Քոմա-քոմա էր:

Հանաներ

Հանաներ, նաներ, նաներ,
Ջանաներ, նաներ, նաներ:

Աղջի, քըզի նոր տեսա,
Գնա քու պապուն խոսա,
Ջիս անի ուրին փեսա,
Հանաներ, նաներ, նաներ,
Ջանաներ, նաներ, նաներ:

Աղջի, քու աստու սիրուն,
Չենիս գիսի էրերուն,
Թալիս հետև սարերուն,
Հանաներ, նաներ, նաներ,
Ջանաներ, նաներ, նաներ:

Աղջի, շող-շաֆղ իս թափի,
Բարակ մեջքդ շալ իս կապի,
Ջիմ խեղջ սրտիկն իս խաբի,
Հանաներ, նաներ, նաներ,
Ջանաներ, նաներ, նաներ:

Աղջի, քու կանանչ արև,
Հընցար՝ չտվիր բարև,
Պագիմ քու դնչի վերև,
Հանաներ, նաներ, նաներ,
Ջանաներ, նաներ, նաներ:

Առավոտ՝ թափիր փոշին,
Ջիմ դոշ զարկիմ քու դոշին,
Ինչօր հալվեն մըջ լոշին,
Հանաներ, նաներ, նաներ,
Ջանաներ, նաներ, նաներ:

Բազմաթիվ էին տղաների ու աղջիկների դեմ-դիմաց կանգնած պարող խմբերի խմբապար պարերգերը, երբ երգի քառյակները երգվում էին մերթ աղջիկների, մերթ՝ տղաների խմբի կողմից: Հաճախ այդ երգերի բառերը հանպատրաստի էին, համապատասխանելով դիմացի խմբի երգի բառերին՝ որպես պատասխան, բայց կային նաև շատ տարածված պարերգեր, ինչպես.

Ծամթելն ի ծովեն

- Ծամերուս ծանդրութենեն
Ծամթել կորավ, իրնկավ ի ծով:
- Լողվորի մեկ լե ես իմ,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ գլխու ֆաթեն կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ էնիմ գլխու ֆաթեն,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ վզի վզնոց կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ էնիմ վզի վզնոց,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ թուխ-թուխ աչքեր կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ էնիմ թուխ-թուխ աչքեր,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ շամամ ծծեր կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ էնիմ շամամ ծծեր,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ սրտի սրտնոց կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ էնիմ սրտի սրտնոց,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ թևի թևնոց կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ էնիմ թևի թևնոց,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ սերսուփ շապիկ կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ էնիմ սերսուփ շապիկ,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ սրտի սավդեն կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ անեմ սրտի սավդեն,
Չըմ հանե ծամթելն ի ծովեն:
- Իմ սիվտակ ծոցիկ կիտամ,
Դե, հանե ծամթելն ի ծովեն;
- Քու սիվտակ ծոցիկ կառնեմ,
Հանիմ զծամթելն ի ծովեն:

Նար - նար

- Աղջի, քու անուն Մայրամ,
Նար-նար-նար-նար,
էրթանք սարեր ի սեյրան,
Նար-նար-նար-նար:

- Տղա, անունդ Արմենակ,
Նար-նար-նար-նար,
Հոդի ի՞նչ կենիս մենակ,
Նար-նար-նար-նար:

- Աղջի, կենիմ գիր ու թուղթ,
Նար-նար-նար-նար,
Սըբ կարապետ էրթանք ուխտ,
Նար-նար-նար-նար:

- Տղա, դու չի՞ս էն տղեն,
Նար-նար-նար-նար,
Ջարկեր էր փեսի ջղեն,
Նար-նար-նար-նար:

Աղջի, քըզի բերիմ նուռ,
Նար-նար-նար-նար,
Բարով էրթանք ժամու դուռ,
Նար-նար-նար-նար:

- Տղա, կարդա քերական,
Նար-նար-նար-նար,
Քու յարն է տաս տարեկան,
Նար-նար-նար-նար:

- Աղջի, կտրինք մեր խսեն,
Նար-նար-նար-նար,
ես եմ քու մամուն փեսեն,
Նար-նար-նար-նար:

Տո, տղա լաո

- Տո, տղա լաո, գի կյետ ընցու:
- Ձիկ ի՞նչ կուտաս, որ ընցուցեմ:
- Ճայտիս մախչեն թող բյե էղնի:
- Ճայտիտ մախչեն ես ի՞նչ անեմ:

- Տo, տղա լաո, զի կյետ ընցու:
- Ձիկ ի՞նչ կուտաս, որ ընցուցեմ:
- Վիզ վզնոցս թող քյե էլնի:
- Վիզ վզնոցտ ես ի՞նչ անեմ:

- Տo, տղա լաո, զի կյետն ընցու:
- Ձիկ ի՞նչ կուտաս, որ ընցուցեմ:
- Մեճացս քյամար թող քյե էլնի:
- Մեճացտ քյամար ես ի՞նչ անեմ:

- Տo, տղա լաո, զի կյետն ընցու:
- Ձիկ ի՞նչ կուտաս, որ ընցուցեմ:
Տիւ ի՞նչ կուզես, որ ընցուցես:
Պաքյմ թէ տաս՝ քյե կնցուցեմ:

Ալ յայլուղը

- Յայլուղս կորավ ձեր դուռը,
Սրտես դուրս չի գա մրմուռը,
Բախտն ինձ գցեց էս հուրը,
Սիրուն տղա, տուր յայլուղս:

- Քո յայլուղը ինձ մոտ չկա,
Երդվում եմ, հոգիս վկա,
Ով գտել է, թող բերի տա,
Սիրուն աղջիկ քու յայլուղը:

- Յայլուղս յարիս բախշածն էր,
Օսկի թելերով նախշած էր,
Պատկերս վըրեն քաշած էր,
Սիրուն տղա, տուր յայլուղս:

- Ջահիլ-ջիվան սարերն ընկա,
Յավոտ սրտիս ճար չի գտա,
Քու սերն ինձի հոգի կըտա,
Թող ինձ մնա ալ յայլուղդ:

- Ախ, ինչ կասեմ ես իմ մորը,
Կամ ինչ պատմեմ ազիզ հորս,
Խաբար կըտան մեծ եղբորս,
Սիրուն տղա, տուր յայլուղս:

- Սևուկ աղջիկ, սպիտակ հագի,
Առ յայլուղդ, վերքս կապի,

Սիրուդ գերի, ինձ մի տանջի,
Երված աղջիկ, առ յայլուդդ:

Բարեկենդանի օրերին առավել տարածված խաղերից էին, բացի ձնագնդին ու պահմտոցին, լախտախաղերի, ճոճախաղերի բազմաթիվ տեսակները, զանազան գնդակախաղերը, փայտախաղերը և այլն: Նկարագրենք դրանցից մի քանիսը:

Լախտախաղեր

Լախտի կամ լախտ կոչվում են թելերից հյուսված կամ կաշվե գոտիները, որ ունենում են բոլոր խաղացողները: Խաղում են թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ Բարեկենդանին, իսկ սովորական օրերին՝ գլխավորապես երիտասարդները: Խաղացողների թիվը որոշակի չէ, կարող էին խաղալ մինչև քսան-երեսուն մարդ: Խաղացողները բաժանվում են երկու խմբի: Նախօրոք գծված կլոր շրջանի մեջ մտնում է մի խումբը՝ յուրաքանչյուրը իր լախտով, իսկ մյուս խումբը իր լախտերով շրջապատում է շրջանը: Շրջանի մեջ գտնվողները կլոր շրջանով գետնին շարում են իրենց լախտերը. նրանց խնդիրն է՝ թույլ չտալ շրջանից դուրս գտնվողներին փախցնել իրենց լախտը: Դրսիններն իրենց լախտերով հարձակվում են ներսիների վրա՝ ջանալով փախցնել վերջիններիս և տիրանալ նրանց լախտերին: Դրսիններն իրավունք չունեն խախտել սահմանը և անցնել շրջանից ներս, ներսիններն էլ դուրս գալու իրավունք չունեն: Ներսինները գետնին դրված իրենց լախտերը պաշտպանում են՝ ոտքը նրա վրա դնելով, իսկ դրսինների լախտերի հարվածներից պաշտպանվում են խուսանավելով կամ ձեռքերով, և եթե կարողանան՝ ոտքի հարվածներով հեռու են մղում նրանց: Ներսինների յուրաքանչյուր լախտի գրավում դրսինների կողմից՝ այդ լախտի տիրոջ խաղից դուրս գալ է նշանակում: Դրսինների հաղթանակը ներսինների բոլոր լախտերը փախցնելն ու նրանց տերերին գերի վերցնելն է: Իսկ ներսինները դրսիններին հաղթում էին՝ նրանց ոտքի թաթը տրորելու դեպքում: Շրջագծի վրա կամ նրանից ներս հայտնված ոտքը անմիջապես տրորվում էր ներսինների կողմից, և հարձակվող խմբի այդ անդամը դուրս էր գալիս խաղից: Հարձակվողներին այդպես հերթով չեզոքացնելուց հետո պաշտպանվող խումբը վեր է ածվում հարձակվողների, վերջինս՝ պաշտպանվողի:

Լախտախաղերի ինչպես անունները, այնպես էլ պայմանները հայոց տարբեր ազգագավառներում ունեն իրենց տարբերակները: Հայտնի էին «լախտի», «ճղլախտի», «գծալախտի», «կարպետ լախտի», «չվանոցիկ», «գոտու խաղ» և այլ անուններ: Խաղի տարբերակները միմյանցից շատ չէին տարբերվում: Օրինակ, մի դեպքում, եթե ներսինները կարողանում էին ետ խլել իրենցից փախցրած լախտը, ապա այդ լախտը դառնում էր դրսիններին ծեծելու գործիք: Ծեծողը, շրջանից դուրս չգալով, լախտով անխնա հարվածում էր դրսիններին՝ պաշտպանելով իր խմբի անդամներին:

Խաղի մեկ այլ տարբերակում ներսինները նստում էին իրենց լախտերի վրա, դրսիններն առանց լախտերի, միայն ոտքերով հարվածելով՝ փորձում էին խլել նրանց լախտերը: Խլված լախտերը դառնում էին հարվածելու գործիքներ:

Մեկ այլ տարբերակում ներսինները պաշտպանում էին միայն մեկ լախտ՝ դրսինների հարձակումը ետ մղելով աքացիներով: Ըստ պայմանի բոլոր հարվածները հասցվում էին միայն գոտկատեղից ներքև: Միաժամանակ ներսինները փորձում էին շրջանի ներսը քաշել հարձակվող խմբի անդամներից մեկին, և հաջողության դեպքում խմբերի դերերը փոխվում էին: Իսկ եթե դրսիններին էր բախտը ժպտում և նրանց հաջողվում էր փախցնել լախտը, ապա այդ լախտով սկսում էին հարվածել ներսիններին:

«Կարպետ լախտի» խաղի դեպքում պաշտպանվող խումբը նստում էր մի կարպետի վրա և վրան առնում մեկ ուրիշ կարպետ: Հարձակվողները, մի-մի լախտ ունենալով, սկսում էին հարվածել կարպետի տակ նստածներին, իսկ սրանք ջանում էին հարձակվողներից որևէ մեկի ոտքին խփել: Այդ դեպքում հարձակվողները վեր էին ածվում պաշտպանվողների, իսկ սրանք՝ հարձակվողների:

Առհասարակ, «լախտախաղերի» տարբերակներն անսահման կարելի է շարունակել: Հաճախ այն կախված է խաղացողների երևակայությունից, խաղի մեջ բազմազանություն մտցնելու շնորհքից և այլն: Խաղերի ձևերը կազմվում էին խաղացող խմբերի մեջ կայացող պայմանից, և այդ ձևերի մեջ խաղացողները կարող էին տարբերություններ մտցնել ըստ իրենց ճաշակի:

Գնդակախաղեր

Դեռևս 40-50 տարի առաջ ռետինե գնդակներ չկային: Խաղում էին հիմնականում թելից, կտորից, մեջը մազ կամ բուրդ լցրած տոպրակներից պատրաստված գնդակներով: Գնդակախաղերը նույնպես մեծ մասամբ խմբական խաղեր էին և ենթադրում էին խաղացող երկու խմբերի հավասար կազմ:

Բայց այս պայմաններից դուրս խաղերի տարբերակները դարձյալ մեծ բազմազանություն ունեին և կրկին փոփոխվում էին՝ խաղացողների պայմանի, կամքի, ճաշակի ու պատկերացումների համաձայն:

«Գծագնդակ» կոչվող տարբերակում խաղացողները, բաժանվելով երկու խմբի, որոշում էին «հարձակվող» ու «պաշտպանվող» խմբին: «Պաշտպանվողները» մտնում էին նախապես գծված մեծ շրջանի մեջ, «հարձակվողները» ցրվում էին: Գնդակը հարձակվողների մոտ էր: Սրանցից մեկը գնդակը թաքցնում էր ծոցում: Որպեսզի ներսինները չիմանան, թե գնդակը ում մոտ է, բոլոր հարձակվողները մի ձեռքը պահում էին ծոցում: Ապա սրանք շրջապատում էին շրջանը և խորհրդավոր լռությամբ պտտվում շրջանի ներսում գտնվողների շուրջը: Վերջիններս աչալրջորեն հետևում էին պտտվողներին: Գնդակը պահողը ծոցից գաղտնի հանում էր գնդակը և արագ խփում ներսիններից մեկին, որից հետո դրսինները փախչում էին տարբեր կողմեր: Եթե գնդակը դիպչում էր ներսիններից որևէ մեկին, ապա սա արագ վերցնում էր այն և շպրտում այն գցողի ետևից: Դիպուկ հարվածի դեպքում փախչողը համարվում էր «մեռած» և դուրս էր գալիս խաղից: Հակառակ դեպքում «մեռած» էր համարվում ներսի հարված ստացողը, և ինքն էր դուրս գալիս խաղից: Դրսի խփողը «մեռած» էր համարվում և խաղից դուրս էր գալիս նաև այն դեպքում, երբ գնդակը չէր դիպչում ներսիններից որևէ մեկին: Իսկ եթե ներսինները կարողանում էին գնդակը դեռևս գետնին չընկած բռնել ձեռքով կամ փեշով, խաղացողները փոխում էին իրենց տեղերը, հարձակվողները մտնում էին շրջագծից ներս, ներսինները դառնում էին հարձակվողներ:

Ներսինների կողմից գնդակը դրսինների վրա գցելուց հետո, վերջիններից որևէ մեկը բռնում էր այն և արագ փոխանցում խաղընկերոջը: Այսպես արագորեն միմյանց փոխանցելով ջանում էին կրկին խփել պաշտպանվողներից որևէ մեկին՝ մինչև բոլորը «մեռնեին» և խաղը տանուլ տային: Գնդակը ձեռքին երկար պահել չէր կարելի, այլապես հարվածը չէր հաշվվի:

Գնդակախաղի մեկ այլ տարբերակում մի մեծ քար թիրախ էին դնում և քարից մոտ մեկ մետր հեռու գիծ քաշում, որը խաղացող խմբերի սահմանն էր: Սահմանի և թիրախի միջև ընկած տարածությունը կոչվում էր «մայա»: Գնդակ ունեցող խումբը մնում էր «մայայի» ներսում, մյուսները՝ դրսում: Ներսում գտնվողները հերթով մոտենում էին սահմանագծին, ձախ ձեռքով

գնդակը նետում օդ և աջ ձեռքի հարվածով նետում դեպի մյուս խումբը: Եթե սրանք կարողանում էին գնդակը օդում բռնել, կամ գնդակը գետնին ընկած վայրից նետելով կպչել թիրախին, նետողը «մեռնում» էր և դուրս գալիս խաղից: Սրան փոխարինում էր հաջորդը այնքան, մինչև ներսում գտնվող բոլոր խաղացողները «մեռնեին», որից հետո խմբերը տեղերը փոխում էին: Իսկ եթե չէին կարողանում օդում բռնել կամ հարվածել թիրախին, գնդակ նետողը հինգ անգամ նետում էր, ինչն ապահովում էր իր խաղընկերներից մեկի «վերակենդանացումը» «մեռնելուց» հետո, այսինքն՝ սա «մեռնելուց» հետո խաղից դուրս չէր գալիս:

Դաստակով գնդախաղը նույնպես խաղացող երկու խումբ էր պահանջում: Խաղացողները մոտ հարյուր մետր հեռավորությամբ երկու գիծ էին քաշում, որը խաղացողների սահմանն էր: Վերին սահմանի մոտ կանգնում էին ներսիները, իսկ դրսիները ցրվում էին սահմանագծի միջև ընկած տարածությունում: Սահմանագծի մոտ կանգնածներից մեկի մոտ գտնվում էր «դաստակը», որը կես մետրանոց տախտակ էր՝ բաթ ու բռնակ ներկայացնող: Դրսիններից մեկը, վերցնելով գնդակը, գալիս կանգնում էր սահմանի մոտ, դաստակավորի դիմաց և գնդակը նետում դեպի նա: Սա «դաստակով» ամբողջ թափով հարվածում էր գնդակին և ինքը արագ վազում դեպի ներքին սահմանը: Դրսիններն աշխատում էին գնդակն օդում բռնել կամ, գետնից վերցնելով, արագ հետապնդել փախչողին ու խփել նրան, որով խմբերի դերերը փոխվում էին: Իսկ եթե այդ չէր հաջողվում ու փախչողը շուտ էր հասնում ներքին սահմանին, սա մնում էր այստեղ, իսկ վերին սահմանի մոտ այս գործողությունը կրկնվում էր: Այս անգամ «դաստակով» խփողի՝ ներքին սահմանը վազելու ժամանակ առաջին խփողը ետ էր վազում դեպի վերին սահմանը և խառնվում ընկերներին՝ կրկին հարվածելու իրավունք ստանալով: Երբ մնում էր վերջին դաստակավորը, սա երեք հարվածի իրավունք էր ստանում, որոնց ընթացքում ներքին սահմանի մոտ մնացած իր խաղընկերները կարող էին վազելով ետ վերադառնալ: Հաջողության դեպքում խաղը վերսկսվում էր հօգուտ իրենց, այլապես անցնում էր դրսիների տրամադրության տակ:

Բազմաթիվ էին «հեծյալ» գնդակախաղի տեսակները, որոնցից մեկն էր, օրինակ, ստորև նկարագրվող խաղը: Խաղացող երկու խմբերից մեկի անդամները բարձրանում նստում էին մյուս խմբի անդամների՝ «էշերի» ուսերին: Սրանք շրջանաձև կանգնում էին նախապես գծված շրջանի շուրջը: Հեծնողներից մեկը գնդակը նետում էր իր կողքի ընկերոջը: Եթե սրան հաջողվում էր գնդակը բռնել «էշերը» իրենց հեծյալներին ուսերին առած, մի շրջան պտտվում էին: Այդ ընթացքում հեծյալները երգում էին, կատակում, ծաղրում «գրաստներին»: Մեկ շրջան պտտվելուց հետո կանգնում էին, և գնդակ ունեցողը այն նետում էր հաջորդին, հաջողության դեպքում կրկին սկսվում էր պտույտը շրջագծի շուրջը: Սակայն, եթե գնդակը ընկնում էր, բոլոր հեծյալներն անմիջապես ցած էին թռչում և փախչում զանազան կողմեր: «Գրաստներից» որևէ մեկը շտապ վերցնում էր ընկած գնդակը և նետում փախչողների հետևից: Եթե չէր կպչում, սրանք վերադառնում էին, կրկին հեծնում «գրաստները» և խաղը վերսկսվում էր: Բայց կպչելու դեպքում դերերը փոխվում էին, և նախկին հեծյալները վեր էին ածվում «գրաստների»: «Էշը ելավ, տիրոջը հեծավ» ասելով՝ նախկին «գրաստները» նստում էին նրանց ուսերին և կրկին սկսվում էր գնդակաճետությունն ու պտույտը շրջանի շուրջը:

Ճոճախաղ

Ճոճախաղերը գլխավորապես կանանց ու աղջիկների, մասամբ նաև երեխաների խաղերն էին: Ճոճվում էին բարձր ծառի հաստ ճյուղից կամ որևէ գերանից օղակով անցկացված պարանի վրա նստելով, կամ երկու պարանե օղակների մեջ տեղադրված տախտակի երկու կողմերին

կանգնած կամ նստած: Ճոճախաղերը զվարճահանդեսի էին վերածվում, երբ ճոճվողների շուրջ հավաքված բազմության առաջ տվյալ պահին ճոճվողի ոտքերին ճիպոտով հարվածելով պահանջում էին որևէ գաղտնիք ասել: Առավել տարածված էր՝ ստիպել սիրած տղայի անունը բարձրաձայն ասել: «Ճոճախաղերը» հաճախ վեր էին ածվում մրցախաղերի՝ ով ավելի մեծ կորագծով կճոճվի:

Վեգ, ճան

Չափազանց տարածված էին վեգ (ճան) և ընկուզախաղերը: Բարեկենդանի վերջին երեկոյի մասին ականատեսը պատմում է. «Մի ուրախություն էլ նոր սկսավ, մի կողմում վեգ են գցում տղայքը, մյուս կողմը թոլոլանգի են խաղում հարս ու աղջիկները»: Նույն օրը Աշտարակում, երբ սեղանն արդեն հավաքված էր լինում, պապը կարգադրում էր. «Այ կնիկ, դե գնա մի քիչ պոպոքից-մոպոքից բեր, երեխեքանց առաջն ածա, մի քիչ էլ վեգ խաղան ու գնան իրենց տները»:

Թոլոլանգի

Երեխաները գետնին փոքրիկ փոսեր էին փորում, ապա հերթով մեկը մյուսի հետևից ընկույզ գլորում այնպես, որ առանց նշանակված գծից շեղվելու ընկույզն ընկներ մի փոսի մեջ: Հաջողեցնողը բոլոր գլորած ընկույզները յուրացնում էր: Մեկ այլ խաղում խաղացողները մի մետր տրամագծով մի շրջան էին գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք-չորս մետր հեռավորությունից գցում էին վեգերը՝ աշխատելով խփել ընկույզներին և գոնե մեկը դուրս հանել շրջանից, որով և շահում էին շարված բոլոր ընկույզները:

Տասսից

Պատի տակ մի շրջագիծ էին գծում, որի մի կողմը կազմում էր հիշյալ պատը: Այդ շրջագծից 6-10 քայլի վրա յուրաքանչյուր խաղացողից մեկական վեգ վերցնելով շարում էին այնպես, որ շրջանաձև բուրգ գոյանար. սա կոչվում է ՏԱՍՍԻՑ: Տասսիցի չորս կողմը 50 սմ տրամագծով շրջան էին գծում: Այստեղից խաղացողները իրենց «զախկա» կոչվող վեգերը գցում էին պատի տակ գծված շրջագծի մեջ: Ում «զախկան» ընկնում էր շրջանի կենտրոնը, նրան վերապահվում էր առաջինը խաղալու իրավունքը: Մյուսների հերթականությունը որոշվում էր շրջագծի կենտրոնին մոտիկ կամ հեռու ընկնելու չափով:

Առաջին խփողը «զախկան» նետում էր դեպի տասսիցը՝ այն ցրիվ տալու և գծից դուրս բերելու նպատակով: Նայած պայմանավորվածությանը՝ 3-5 ոտնաչափ տասսիցից հեռացնելու դեպքում խփողը յուրացնում էր այդ վեգերը և այնուհետև իր «զախկայի» ընկած տեղից սկսում էր խփել մյուս վեգերին, նույն պայմանով: Եթե «զախկան» վրիպում ու ալչու էր կանգնում, խփելը կրկնելու իրավունքը մնում էր առաջին խփողին, իսկ եթե թե՛ վրիպում էր, թե՛ վեգն ալչու չէր կանգնում, խփելու իրավունքն անցնում էր հաջորդ խաղացողին: Եթե սրա՝ խաղը սկսելու դեպքում տասսիցը փլված էր նախորդ խաղացողի կողմից, այս երկրորդ խփողը իր «զախկան» նախապես գցում էր պատի մոտի շրջագծից այնպես, որ կպչեր որևէ ընկած վեգի ու իր վեգն էլ ալչու կանգներ: Այս դեպքում նա խաղը վերսկսում էր իր «զախկայի» ընկած տեղից, հակառակ դեպքում խփելու իրավունքն անցնում էր իր հաջորդին և այսպես այնքան ժամանակ, մինչև որ տասսիցի բոլոր վեգերն սպառվում էին: Այնուհետև խաղը վերսկսվում էր:

Մատնի

Խաղում էին տանը: Տղամարդիկ բաժանվում են երկու կարգի և նստում խոնչայի երկու կողմերը: Մատուցարանի վրա դնում են 9 կամ 7 զանգակի նման պոզեր, որոնք կոչվում են «զառֆ»: Խաղացողներից մի կողմը տալիս է իր անդամներից մեկին մատանին պահելու (որի անունից խաղը կոչվում է «մատնի») զառֆերից մեկի մեջ: Մատանին պահելուց հետո շարված զառֆերը մատուցարանի վրա բերում դնում են խոնչայի վրա. հակառակ կողմը փորձում է գուշակել՝ երկու «զառֆ գլուխ» ասել՝ անվանել, և նրանց միջից գտնել մատանին: Եթե գտնում է, խաղը հաշվվում է նրա, եթե ոչ՝ հակառակորդ խմբի օգտին: Այդպես շարունակվում է մինչև 10 լրանալը: 10-ին տարվող կողմի անդամներից մեկի ճակատին կամ ձեռքին «զառֆի» մրոտ «բերանով» դաղմա (նշան) են խփում: 20-ը լրանալու դեպքում 2 դաղմա են խփում և տանող կողմը հրամայում է տարած գառը կամ հավերը 1-2 շիշ օղու հետ բերել ընթրիքի պատրաստության համար: Հրամանն իսկույն կատարվում է: Բայց մինչև ընթրիքը կպատրաստեին՝ շահող կողմը զանազան խաղեր էր հնարում պարտվողներին տանջելու համար: Հայտնի խաղերից էին «սաթռանջ», «դավա-օյին», «քարվան» և այլն: Եթե, օրինակ, «քարվան» է, տարվող խմբի անդամների վզերն իրար հետ կապում են մի պարանով և շահողները վրաները նստելով՝ տանը մի քանի անգամ պտտվում են: Պտույտն ուղեկցվում է «ուղտ» դարձածներին քաշքշելով, խփելով, ծիծաղով: Շարունակվում է այնքան, մինչև տանտիկինը հայտարարի ընթրիքի սկիզբը:



Գրականություն

1. Արշարունի Ա. Բարեկենդան-Աբեղաթող, «Տեղեկագիր», 1956, թիվ 10:
2. Արշարունի Ա. Հայ ժողովրդական թատերախաղեր, Երևան, 1961, էջ 21-85:
3. Ավագյան Ս. Արծակ ՀԱԲ, հ.Ր, Երևան, 1978, էջ 93:
4. Բդոյան Վ. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972:
5. Բդոյան Վ.Հայ ժողովրդական խաղերը, հ.1, Երևան, 1963; հ.2, Երևան, 1980; հ.3, Երևան, 1983:
6. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 336:
7. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 69:
8. Լալաեանց Ե. Ջավախքի բուրմունք, գիրք Բ, Թիֆլիս, 1892, էջ 38:
9. Լալայան Ե. Ջավախք, Երկեր, հ.1, Երևան, 1983, էջ 272-276:
10. Լալայան Ե. Վարանդա, Երկեր, հ.2,Երևան, 1988, էջ 196:
11. Լալայան Ե. Գանձակ, Երկեր, հ.2, Երևան, 1988, էջ 445:
12. Լալայան Ե. Ջանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, էջ 107:
13. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 257:
14. Լիսիցյան Ս. Ջանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 265-269:
15. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, Երևան, 1981, էջ 68-69:
16. Խաչատրյան Ժ. Պարի, ծեսի ու թատերական գործողությունների փոխկապը Վարդան Մամիկոնյանի ցուցմունքում, «Պար, երաժշտություն», Սրբուհի Լիսիցյանի ծննդյան 110-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2004, էջ 76:
17. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 229-230:
18. Ճանիկեան Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 105-106; 422-427:
19. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 73-81:
20. Մովսիսյան Ս.(Բենսէ), Հարք(Մշո Բուլանըխ), ՀԱԲ, Երևան, հ.3, 1972, էջ 43, 98-103:
21. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, 17-20:
22. Շահազիզ Ե. Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 221-222:
23. Չոլաքյան Յ. Քեսապ, հ. Բ, Հալեպ, 1998, էջ 195-199:
24. Պռոշյան Պ. Հացի խնդիր, Երկեր, Երևան, 1984, էջ 61-87:
25. Սարգիսեան Յարութիւն. Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 21-31:
26. Տեր-Մինասյան Վ. Անգիր դպրություն և հին սովորություններ, հ.1, Պոլիս, 1904թ., էջ 63-64:
27. Տեր-Մինասյան Վ. Աբեղաթող: Աբեղաձագ, Կ.Պոլիս, 1894, էջ 63-74:
28. Փորքշեյան Խ. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965, էջ 113-114:
29. Давидбеков И. Село Гадрут, Джеваншрский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып.6,отд.1, Тифлис, 1888, стр. 192.
30. Зелинский Ст. Этнографические очерки из быта армян-переселенцев из Персии, живущих в Нахичеванском уезде, СМОМПК, вып.2,отд.2, Тифлис, 1882, стр.21-22.
31. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник", 1, М., 1955:
32. Мелик-Шахназаров Е. Селение Арцеваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898, стр. 48-49.

ՄԵԾ ՊԱՍ

Վնհոգ ուրախությանը, զվարճախաղերին, անհագուրդ խրախճանքներին, կենցաղային թեթևամտությանը, հասարակական նորմերի ավանդական կարգի խախտումներին փոխարինելու էր գալիս հասարակական ու ընտանեկան հարաբերությունների դարերով մշակված նորմերին վերադառնալու խորհրդանշական շրջանը: Որպես խորհրդանշական ու անցումային շրջան՝ այն հասարակության կողմից մշակված հոգևոր արժեքները դրսևորում էր չափազանց խտացված ձևերով: Դա ինքնամաքրման, ինքնազոհաբերման, ապաշխարության, մաքրակենցաղության ու ժուժկալության պահեցողության յոթշաբաթյա շրջանն էր, որ հայտնի էր «Մեծ պաս» անունով, մեծ՝ որովհետև այն տարեկան պասերից ամենաերկարատևն էր:

Մեծ Պասի հենց առաջին օրը հաշտություն, համերաշխություն սահմանելու օր էր, գժտություններն ու թշնամությունները մեղմելու, հասարակության մեջ ներդաշնակ բարեկամական հարաբերությունները վերականգնելու օր: Միջնորդները գործի էին անցնում, հաշտեցնում նույնիսկ թշնամիներին: Ոչ ոք չէր կարող խուսափել այդ սովորույթից, այլապես կզրկվեր Մեծ պասի ավարտին հաղորդվելու իրավունքից: Մեծ պասի առաջին օրը եկեղեցի այցելելը պարտադիր էր: Էջմիածնում գտնում էին, որ ով այդ օրը եկեղեցում չլինի, հրեշտակները նրան հավատացյալ չեն համարի:

Նույն օրը հոգևոր մաքրության ապահովմանն ուղեկցում էր առարկայական մաքրության ապահովման սովորույթը: Բարեկենդանը վերջացել էր և Մեծ Պասի հենց առաջին օրը ջանում էին վերացնել բարեկենդանյան զեխության հետքերը՝ լվանալ ամանեղենը, լվացք անել, լողանալ, մաքրել տան ու բակի բոլոր անկյունները և այդպես մաքուր դիմավորել ինքնազսպման շրջանը: Որոշ տեղեր, ինչպես, օրինակ՝ Քեսապում, մոխրաջրով լվանում էին ամբողջ պղնձե ամանեղենը և հանձնում կլայեկելու. ողջ Մեծ պասի ընթացքում դրանք չէին օգտագործվում, քանի որ պահեցողության շրջանի կերակուրները պատրաստվում էին կավե ամանեղենի մեջ: Ջանգեզուրում մաքրում էին նույնիսկ թոնրի բերանը: Միաժամանակ դռներն ու երդիկը բանալով լաթերով, ծողերով, ավելներով դուրս էին անում տանը, գոմում, մառանում... հաստատված բոլոր մեծ ու փոքր ոգիներին՝ շվոտներին, ալքերին, մեզնե աղեկներին... Այնուհետև ողջ պասի ընթացքում պետք է թոնիրը վառ պահեին:

Այլևս պաս էր, արգելքի տակ էին կենդանական ծագում ունեցող բոլոր ուտելիքները, դրանց փոխարինելու էին գալիս բանջարեղենը, բուսական յուղերը: Անցյալում պասը շատ մեծ կարևորություն ուներ մարդկանց կյանքում: Պասը խախտելը լուրջ ու ծանր մեղք էր համարվում: Ավանդությունը պատմում է, որ մի լոռեցի իր բոլոր մեղքերը՝ գողությունը, զրպարտությունը, սուտ վկայությունն ու սուտ երդումը քահանային խոստովանելուց հետո կանգ է առել և լալով հրաժարվել իր ամենամեծ մեղքը խոստովանելու: Քահանայի ստիպելուց հետո հեկեկալով

ավելացրել է, թե Մեծ պասին մի օր յուղի երեսին դրած հացից մի կտոր կերել է: Պաս ուտողներին ծաղրում էին.

Պասանկեր, սև շան ընկեր,
Գլոր - մլոր, շան քաքահոր...

Մեծ պասի 49 օրերի ընթացքում պիտի ուտեին լոբուց, ոսպ ու սիսեռից, կարտոֆիլից ու գետնախնձորից, սոխ ու սխտորից, ծավարեղենից, զանազան թթու դրած ու չորացրած կանաչեղեններից պատրաստած խորտիկներ, բայց հատկապես՝ հռչակավոր «մախոխ» ապուրը: Մախոխը տարբեր տեղերում տարբեր կերպ էին պատրաստում, բայց այն Մեծ պասի ուղեկիցը, խորհրդանշական ճաշատեսակն էր ամեն տեղ: Շատ վայրերում կորկոտը լավ եռացնելուց հետո սառեցնում էին, շաղախում թթխմորով և լցնում կարասը՝ թողնելով, որ այն խմորվելով թթվի: Ոմանք էլ թթխմորով շաղախելուց հետո գնդեր էին շինում ու չորացնում: Անհրաժեշտության դեպքում ջրով բացում էին այդ գնդերը: Համարյա ամենուր այս ծիսական ճաշատեսակին ուղեկցում էին որոշակի ծեսեր: Օրինակ, շատերը հետևում էին, որ պասի ընթացքում մախոխը ուտելու և հատկապես պատրաստելու թիվը զույգ չլինի, այլ անպայման՝ կենտ: Ուրիշները մախոխը պատրաստելուց և կարասը լցնելուց հետո կանչում էին երեխաներին, որ նրանք կարասի մոտ մի քանի անգամ էշի նման խռանչեն՝ իբրև մախոխի շուտ թթվելու համար: Իսկ կարնոհայերը հատուկ Մախոխապուրի պար ունեին, որ պարում էին միայն Մեծ պասի առաջին օրը: Մախոխապուրի պարը պարել են բացառապես տղամարդիկ, ընդ որում՝ համայնքի, գյուղի բոլոր տղամարդիկ, չափահասներից մինչև ծերերը պարել են՝ մախոխապուրին նվիրված երգը երգելով, առանց նվագի: Մախոխապուրի պարերգով գովերգել են Մեծ պասը, նրա հիմնական ճաշատեսակը՝ մախոխը: Պարը կատարել են խումբ-խումբ, կլոր փակ շրջանով: Յուրաքանչյուր խումբը կատարել է յոթ պտույտ և հեռացել պարատեղից՝ տեղը զիջելով հաջորդ խմբին: Ինչպես իրենք՝ կարնոհայերն էին ասում՝ «կանանց օրենք չէր, որ պարեին, ամոթ էր, սուրբ օր էր»: Պարել են խաղ ասելով (երգելով), այդ օրը տիգ, չալղի (երաժշտական գործիքներ) ածելու իրավունք չկար».

Բարով էգար, թթու մոխոխ,
Ինչ լուր բերիր հայրենիքես:
Մէնճ Պասն էկավ, կայնավ թատին (ոտքի ծայրին),
Աշկըս մընաց հալվա կաթին:
Մէնճ Պասն էգավ դուռմիշ էղավ (նստեց, փռվեց),
Փօրիս փարգալ փոզմիշ էղավ (փորի աղիքները պահող թաղանթը փչացավ):
Պառվըները, պառվըները,
Ջուրը լըցվավ առվըները:
Ախչըգները ծալած բոխչա (այսինքն՝ ինչպես պահունի, տոնական հագուստ),
Հարսները՝ բաղ ու բախչա (ծաղկած, կանաչ, զարդարված):
Թըստան, հօդած պառվըները,
Գէնա լավ էն պառվըները:

Այդքան կարևոր, գովված մախոխը, սակայն, Մեծ պասի ընթացքում այնքան էին ուտում, որ պասը բացելիս արդեն երազում էին հրաժեշտ տալ այդ ուտելիքին: Նույնիսկ երգեր կային այդ մասին, ինչպես.

Ծառազարդը մոտեցավ, մոխոխ ապուրն հոտեցավ,
Էլ մի ուտե ձիթով խավիծ, թե չէ փորդ շատ կցավի:

Նույն կարնոհայերը «Մոխոխապուրի» պարից զատ նույն օրը, նույն կազմով պարում էին նաև «Ինչով ծեծենք սոխն ու սխտոր» պարը: Այս պարի ժամանակ պարի ղեկավարը հետևում էր պարաձևի ճիշտ կատարմանը և պարի ընթացքում շարժումները հարմարեցնելով պարերգի խոսքերին, ցույց տալիս, թե ինչով և ինչպես պետք է ծեծեն սոխն ու սխտորը: Մյուսները հետևում էին նրա օրինակին.

Արէք ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ,
Ինչօ՞վ ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ,
Գլխով ձէձէնք,
Գլխով ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ:
Արէք ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ,
Ինչօ՞վ ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ,
Ակընջօվ ձէձէնք,
Ակընջօվ ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանեղ:
Արէք ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ,
Ինչօ՞վ ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ,
Աշկօվ ձէձէնք,
Աշկօվ ձէձէնք սօխն ու սխտոր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ:

Եվ այսպես՝ երգելով պարում էին այնքան, մինչև «սոխն ու սխտորը, կանաչ կխտորն ու ջուխտ մանանեխը» ծեծում էին «քընթով», «բերնով», «ձեռքով», «դիրսըգով (արմունկով)» «օռով» (հետույքով), «ծընգով», «վօդկօվ»:

Այս պարի և պարերգի տարբերակներն են Բութանիայից հայտնի «Լազ հավասը» և «Ճաթ մանանան».

- Լազ հավասը,կըյկը, կըյկը,
Լազ հավասը, կըյկը, կըյկը,
Մուշեն բերած օսկի մ՝ունիմ,
Մուշեն բերած օսկի մ՝ունիմ,
Սուլթան հարսիս ճիտը կախիմ,
Սուլթան հարսիս ճիտը կախիմ:

Չեր քիրեղին ծառը կելլամ,
Քիրեղ քաղիմ, վարը կիլնամ:
Շալվարըս փուփը փռած է
Վըրան պուտիկ մը շըռած է:

- Սոխն ու սըխտորն ինչո՞վ ծեծինք.
- Մեյեր կայնինք ճիվով ծեծինք,
- Սոխն ու սըխտորն ինչո՞վ ծեծինք,
- Մեյեր կայնինք ձեռքով ծեծինք,
- Մեյեր կայնինք բերնով ծեծինք,
- Մեյեր կայնինք քինքով ծեծինք:

* * *

Ճաք մանանա, ճաք մանանա,
Ճաք մանանա, ճաք մանանա,
Օխտը կընիկ հետն ավարա,
Օխտը կընիկ հետն ավարա,
Ճաք մանանա, ճաք մանանա,
Ճաք մանանա, ճաք մանանա:
Սոխն ու սըխտորն ինչո՞վ ծեծիմ,
Սոխն ու սըխտորն ինչո՞վ ծեծիմ,
Մեյեր կայնիմ օտկով ծեծիմ,
Մեյեր կայնիմ օտկով ծեծիմ,
Մեյեր կայնիմ քընքով ծեծիմ,
Մեյեր կայնիմ ճակտով ծեծիմ,
Մեյեր կայնիմ գլխով ծեծիմ,
Մեյեր կայնիմ մատնով ծեծիմ,
Մեյեր կայնիմ բերնով ծեծիմ,
Մեյեր չոքիմ ծընկով ծեծիմ:

Մեծ պասի ծիսական ուտելիքների շղթան, սակայն, սկսվում էր առաջին օրը յոթ հատ անալի, ձեթով բաղարջ թխելուց, որը խորհրդանշում էր այդ երկարատև պասի յոթ շաբաթները: Իսկ լոռեցիները հավատում էին, որ եթե առաջին օրը աղանձ չուտեն, ապա պասի ընթացքում բերանները կհոտի կամ շրթունքը կճաքի: Առհասարակ՝ այդ օրը աղանձ, հատիկ ուտելն ընդունված էր շատ տեղերում: Մշեցիներն, օրինակ, այդ օրը ցորեն ու սիսեռ էին խաշում, որը կոչվում էր հատիկ, ինչպես նաև թխում էին անխաշ բաղարջ, որն էլ կոչվում էր «խուկլի», ուտում էին այն ու երգում.

- Խուկլի հաց ու հատիկ,
Բարով յիգա մեր Զատիկ:

Նույն երգը Շիրակի գյուղերում ևս ուղեկցում էր բաղարջին ու հատիկին, իսկ քաղաքացիներն այդ օրը «պոչով ապուր» էին ուտում (էրիշտայով, սիսեռով ու ոսպով), որին ուղեկցող երգն էր.

Պոչով ապուրն էկավ մեյդան,
Ուտեն՝ կուշտ փորով գկռտան...

Գեղարքունիքում այդ օրը ուտում էին բարեկենդանյան ուտելիքի կրճոնքը, որ «պսպոր» գային, այսինքն՝ իրենց ոչխարը, տավարը իրենց ճանաչեր:

Շատ տեղերում Մեծ պասը սկսում էին պասին բնորոշ ուտելիքների բազմազան տեսականու առատ հացկերույթով: Նոր Նախիջևանի հայերն, օրինակ, այդ օրը «սեղանի վրա սովորաբար դնում էին, բացի զանազան սնկի ջրից պատրաստած պասուց ապուրներից,

«սիսեռի թօփից», արևածաղկի կամ մանանեխի յուղով տապակած կարտոֆիլից և ալյուրաշաղախ արած ու տապակած սնկից, նաև ձիթապտուղ, խաշած, տրորած ու պաղեցրած «բակլա, բոհրած կաղին», չոր մրգեղեն, հալվա, անուշահամ «սարայլը»: Նույնիսկ երգերը արտացոլում էին պասի ուտելիքների տեսականին.

Ուտիս՝ հոտիս, պաս՝ աթլաս ու խաս,
Շնհավոր պաս, թասըմ րախի տաս,
Ես խըմեմ դու խընդաս,
Դուն ա բարով մեր տունը գաս:
Մեծ պասն էկավ, բարով էկավ,
Իցցուն օրը հետը պերավ,
Սոխ ու սըխտոր կանոն դըրավ,
Փորիս հալը խարապ էրավ:
Բարով էկար, զեյթոն ամի,
Հազար բարի, օրհնած լոբի,
Սիվել, կըճան, պոչով ապուր,
Բարի՜ էկաք, հազար բարի:

Մեծ պասի առաջին օրը տեղի էին ունենում թատերականացված ներկայացում-խաղեր: Վարանդայի Խաչ-մաչ գյուղում «մի էշ են թամքում, մի կին նստեցնում վրան, երեսին մուր քսում, դավուլ-զուռնայի առաջնորդությամբ շրջեցնում տնե տուն և դրամ հավաքում: Հետո այս դրամը պահ են տալիս, որ Զատկին մատաղ անեն: Այս սևերես կինը ներկայացնում է Մեծ պասը, և նրան պատվով շրջեցնում են, որպեսզի Մեծ պասը անփորձանք անցնի»:

«Մինչև 1915թ. Բարձր Հայքի շատ գյուղերում պահպանված էր պատանուն Ախըլոճ դարձնելու սովորությունը,- պատմում է ազգագրագետ Վ.Բդոյանը: Պատանիները նրան թարս դարձրած քուրք էին հագցնում և վրայից կապում կեմե գոտի: Գոտուց կախում էին մի քանի զանգակ: Ախըլոճն ունենում էր երկար բեղ ու մորուք, գլխին կրում բարձր ու բրդոտ փափախ: Երեսը մրոտում էին և ձեռքը տալիս մեծ դագանակ: Գոտուն կապած չվանը բռնած պատանին Ախըլոճին առաջնորդում էր տնից-տուն: Ախըլոճի հետ շրջում էին մի շարք տղաներ, որոնք տները մտնելիս մի պարեղանակ էին երգում, որից մեր բանասաց Սիմոն Դավթյանը հիշում է միայն երկու տող.

Օխտը շաբաթը էկավ,
Փորիս փառգալը բուզմիշ էղավ....

Այս երգը եղանակելու պահին Ախըլոճը հանկարծակի թփրտալով «ուշագնաց» վայր էր ընկնում, իբրև թե «մեռնում» էր: Դրան հաջորդում էին հարայհրոցը, սուգ ու շիվանը: Տան երեխաներին սարսափ էր պատում: Խնամածու պատանիներն սկսում էին մեռնողին շոյել, ձեռքերը շփել և արթնացնել: Հենց որ Ախըլոճն արթնանում էր, դագանակը վերցնում, ճոճելով շրջում էր տան մեջ, անխոս հետապնդում, վախեցնում դյուրահավատներին: Այս գործողություններն ավարտելուց հետո, երբ Ախըլոճը դուրս էր գալիս, տնեցիները նրա վրա ջուր էին սրսկում: Դրան ի պատասխան Ախըլոճը մտրակահարում էր իրեն թրջողին»:

Թատերականացված խաղերին զուգահեռ այդ օրը կատարվում էր նաև խորհրդանշական «Ախըլոճին» տուն բերելու ծեսը: Հայտնի են ինչպես անվան, այնպես էլ առարկայական տարբերակներ: Հայտնի են Ախալոճ, Ախըլոճ, Ախլոճ, Ախըլոջ, Ախացել, Ախելուճ, Ակլատիզ, Աքլատիզ, Գոգոռոզ, Խուխուլիճ, Խուլուճիկ, Մոռմոռոզ, Մռմռաս, Մեծպաս, Պապի պուլուլ, Պապի պլոր, Որոջբեկ, Ֆռիկ անունները: Ինչպես տեսանք Բարեկենդանի ժամանակ,

Աշտարակում վերջին օրը հանդիսավորապես վռնդում էին Ուտիս տատին և հրավիրում Պաս պապին: Այս Պաս պապը առարկայորեն իրենից ներկայացնում էր մի սոխ, վրան յոթ փետուր խրած և թելով առաստաղից կախ տված: Ամենուր այն ընդունվում էր որպես Պաս պապ, Լոռիում նույնիսկ այն կախելիս երգում էին.

- Տատը գնաց շերեփը ձեռին,
Պապը եկավ չոմբախն ուսին:

Աշտարակում Պաս պապին կախելիս տատն ասում էր. «...շնհավոր մենծ պաս, բարով հասնինք Զատիկը՝ ուրախ սրտով, ցամաք աչքով. պապին շնորհավորեցեք, տեսեք՝ թևավորված ոտները կախ արեց մեր երդիկովը, ծանր-ծանր նստեց, բարով պապի բմբուլները պոկելով տկլորացնենք, ումբրը լորի պոչ շինենք (այսինքն՝ կյանքը լորի պոչի նման կարծեցնենք), հետ ածենք գնա՝ քարափների տակին տապ կենա»:

Կարնոհայերը Պաս պապին կերպարանավորում էին ծերունու տեսքով տիկնիկի ձևով: Տիկնիկը պատրաստվում էր տղամարդու հագուստով, փարթամ ու սպիտակ բեղ ու մորուքով, միոտանի, որի ծայրին խրվում էր սոխը յոթ փետուրներով, պարզած թևերով, որոնցից քարեր էին կախվում: Ուրիշները ոլորած ճիպոտի ծայրին գլուխ սոխ էին ամրացնում, սոխի վրա այծի մազից բեղ ու մորուք սարքում, սոխի մեջ յոթ գույնզգույն փետուր խրում: Այն կախելու ժամանակ երեխաները երգում էին.

- Ակլատիզ, չվանը վիզ,
Եկավ մեզ հյուր՝ կախվավ երդիս:

Այլ վայրերում պարզեցված տարբերակն էր: Կախվում էր ուղղակի փետուրներ խրած սոխը, որին երբեմն փոխարինում էր գետնախնձորը, կարտոֆիլը, կավից կամ խմորից արված պարզ գունդը: Ըստ մշեցիների՝ փետուրները պետք է սև լինեին, որպես թե ձյունը շուտ հալվելու և գարունը գալու նկատառումով: Ուրիշները փետուրներից չորսը սպիտակ գույնի էին դնում՝ որպես Մեծ պասի առաջին չորս շաբաթները ձմռան հետ համապատասխանության նշան, մեկը՝ խատուտիկ, որպես անցումային շաբաթվա նշան, երկուսը՝ լրիվ սև, որպես Մեծ պասի գարնանը համապատասխանող վերջին երկու շաբաթների խորհրդանշան: Գեղարքունիքում չորսը սպիտակ, երեքը սև գույնի էր: Նոր Նախիջևանում, որտեղ այն կոչվում էր «Մըռմըռաս», փետուրները զարդարում էին գույնզգույն ժապավեններով: Ամեն շաբաթը իր գույնն ուներ, Զատիկինը՝ կարմիր, Ծաղկազարդինը՝ կանաչ, Լուսավորչինը՝ սպիտակ, մյուսները՝ սև: Շատ տեղերում փետուրների գույներին կարևորություն չէր տրվում, իսկ յոթ փետուրներից մեկը կոտրում էին և այդպես կիսած խրում: Բայբուրդում այն կոչվում էր կոկորիճ՝ խոշոր սոխի գլուխ, նույն յոթ փետուրներով: Այստեղ կոկորիճի տակ կա մի կծու կարմիր պղպեղ և դարձյալ մանր քարեր. մանրերը կարող են ընկնել պասը խախտող երեխաների գլխին, իսկ պղպեղը կվառի նրանց բերանը: Սոխը նույնպես առանձին անուն ունի՝ Խարախոնջոլող: Այստեղ ամեն շաբաթվա վերջում հանվող փետուրները առանձին-առանձին թաղում էին հողի տակ:

Ակլատիզի յոթ փետուրները, որ Մեծ պասի յոթ շաբաթներին էր համապատասխանում, յուրատեսակ օրացույցի դեր էին կատարում, յուրաքանչյուր շաբաթվա վերջում մեկ փետուրը հանվում էր: Շատերն ամեն շաբաթվա փետուրը հանելիս ուղեկցում էին բնորոշ երգերով: Շիրակում յուրաքանչյուր փետուրը հանելիս ասում էին՝ «ճիճու, ճիճվարանքը դուրս, ցորեն, գարին ներս» և ջարդում ու մի կողմ էին նետում փետուրը: Նախավերջին՝ վեցերորդ փետուրը հանելիս, երկար պասից հոգնած ու նեղված, «քար քաշելուց էլ ծանր» վերջին շաբաթն ի նկատի ունենալով, ասում էին.

- Հետին շաբաթ քարքաշան,
Ճժեր հալան ու մաշան:

Մինչև պասի վերջը սպասելուց հոգնած մարդիկ սկսում էին երազել վերջին փետուրները քաշելու մասին: Նոր Նախիջևանում նույնիսկ առած կար՝ «Մըռմըռասը փետփետելով զատիկը թեզ չի գալ»:

Ամենուր Ակլատիզ - Պաս պապին հատկացվում էր պասը հսկող դեր: Այն շարունակ ծոճվում էր օջախի կրակի, ծխի և օդափոխության շնորհիվ: Թելը պտտվում էր մեկ մի, մեկ՝ մյուս ուղղությամբ, ինչի համար էլ Սասունում այն կոչվում էր նաև «ֆռիկ»: Նրանով վախեցնում էին երեխաներին, որ հանկարծ ուտիսի կերակուրներ չուտեն: Զանազան պատմություններ էին պատմում Ուտիս տատի և Պաս պապի հակադրության մասին, որն արտահայտվում էր նրանց մշտական վեճով. ըստ լոռեցիների՝ պապը (պաս) լոբաճաշի մեծ շերեփով խփում էր տատի (ուտիսի) գլխին և դուրս անում տնից այն բանի համար, որ նա երեխաներին յուղալի, մսեղեն կերակուրներով է կերակրում և հոգին տկարացնում գեր մարմնի մեջ, իսկ պասի վերջում ուրախ և առույգ տատն էր գալիս ու մածնի յուղոտ շերեփով խփելով պաս պապի գլխին՝ դուրս անում նիհար, չորացած պապին, մի քանի հարված տալով նրա «փետրաթափ պլորին»: Ախալքալաքի Կորխ գյուղում Ակլատիզին ուղեկցում էին երկու ոգիներ՝ Փախլաճօղլին (բակլա մշակողի որդին) և Քէպէպճօղլին (խորոված անողի որդին): Փախլաճօղլին հսկում է պասը լուծող երեխաների վրա, իսկ Քէպէպճօղլին հսկում էր ուտիսի վրա: «Գյուղացիները... նկարագրում են այն պատերազմը, որ լինում է նրանց մեջ Բարեկենդանի վերջին օրերում: Բարեկենդանի վերջին հաղթում է Փախլաճօղլին, ավագ շաբաթվա վերջին՝ Քէպէպճօղլին»:



Մեծ պասի առաջին օրվա սովորույթները դրսևորվում էին նաև տան առատության ապահովմանը, չարիքը վերացնելուն կամ կանխելուն ուղղված զանազան արարողություններով: Օրինակ, նորահարսերը, որ մինչև Մեծ պաս ջրի չէին գնում, այդ օրը գնում էին առաջին անգամ և ետ դառնալիս իրենց հետ մի քանի չոփ էին բերում: Այդ չոփերը կոչում էին «դովլաթի չոփեր», պահում էին մինչև ամառ և կաթը եփելիս գցում էին կրակի մեջ, որպեսզի կաթը մշտապես առատ լիներ: Սիսիանում նաև քարեր էին բերում ու թափում տան անկյունում, իսկ աթար թխող հարսն էլ յոթ հատ աթար էր շինում և խփում գոմի պատի ներքին երեսին: Լոռեցիներն այդ օրը տանը «ճլորթի» էին կախում, մի քանի անգամ ծոճում երեխաներին, ապա հանդիսավորապես ճլորթուն բազմեցնում տան մեծ կնոջը՝ նանին: Նանը գոգի մեջ մի մեծ քար էր դնում, որից հետո հարսները ճլորթին ոլորում էին իր առանցքի շուրջը՝ պտտելով նստած նանին, ու բաց թողնում: Թոկի ոլորքը քանդվում էր՝ իր հետ հիմա էլ հակառակ ուղղությամբ պտտեցնելով նանին: Այդ պահին նա գոգի քարը գցում էր մի կողմ և ասում՝ «այսքան յուղ ինձ»: Հարսները քարն

անմիջապես վերցնում ու կրկին գոգն էին դնում: Պտույտը սկսվում էր, և, քարը երկրորդ անգամ գցելով, նանը ասում էր՝ «այսքան յուղ այս հարսիս», տալով հարսի անունը: Սա շարունակվում էր այնքան, մինչև նանը ապահովում էր բոլոր հարսների յուղի առատությունը: Այս ծեսը կոչվում էր «եղ հանել»:



Գեղարքունիքում այդ նույն օրը «կշեռք էին դնում», այսինքն՝ նոր հարսի տերերը երդիկից պարան էին կախում, հարսին կանգնեցնում մի նժարին, փեսին՝ մյուս նժարին: Այդ օրը թխում էին նաև յոթ փթիր (գաթայի նման քակոր) և պահում, որ Համբարձման օրը վառեն կաթի կաթսայի տակ:

Աշտարակում Մեծ պասի առաջին օրը աղջիկներն ուրախ ճլորթի էին գցում իրենց նորապսակ ընկերուհու տանը և, երկար զվարճանալուց, յուրաքանչյուր ճոճվողի սրտի գաղտնիքները ճիպոտածեծի սպառնալիքով բարձրաձայն ասել տալուց հետո, վերջում ճլորթին զիջում էին նորապսակ զույգին: Սրանք հանդիսականների աչքի առաջ անպայման պիտի միասին ճոճվեին:

Չարիքը, չարը վերացնելու ձևերը նույնպես տարբեր էին: Դրանցից մեկը վնասակար կենդանիները, միջատները աղալ - վերացնելու ծեսն էր: Այն կատարվում էր հետևյալ կերպ. մինչ

կանայք տանը զբաղված էին մաքրությամբ, տղա երեխաներից մեկը բարձրանում էր տանիք և երկու քար երկանքի քարերի նման մեկը մյուսին քսելով, բարձրաձայն հարցնում.

- Աղամ, աղամ, ի՞նչ աղամ:

Բակում կանգնած մեկ այլ տղա պատասխանում էր.

- Օձ ու կարիճ աղա:

Այսպես հարց ու պատասխանով «աղում» էին մուկը, գայլը, աղվեսը, վնասակար սողուններն ու միջատները:

Այդ նույն ժամանակ տղամարդիկ ստուգում էին իրենց աշխատանքային գործիքները, հատկապես երկրագործները, որոնց բահը, արորը, գութանը, ամիսներ շարունակ անգործության էին մատնված: Կարգի էին բերում, փչացած մասերը նորոգում: Միաժամանակ դուրս էին հանում անասունները, մանրազնին քննում նրանց աշխատունակությունը:

Շատ-շատերը Մեծ պասի ողջ առաջին շաբաթը «կիրակի» էին պահում, այսինքն՝ շաբաթվա այդ օրերին որոշակի աշխատանքներ չէին կատարում: Այսպես, առաջին օրը՝ երկուշաբթի, պահում էին «կրակի կիրակի», կրակի հետ գործ չէին անում, այլապես նրանց հագուստը, տունը կամ որևէ կարևոր բան կվառվեր, «կրակի բաժին կդառնար»: Հաջորդ՝ երեքշաբթի օրը, «ջրի կիրակին» էր՝ լվացք չէին անում, չէին լողանում և այլն, ջրի հետ գործ ունեցողը կխեղդվեր, կամ հեղեղը տունը կքշեր: Այդ օրը նաև մեծ քանակությամբ հաց էին թխում, այնքան, որ բավարարեր ողջ Մեծ պասի ընթացքում: Այնուհետև մինչև Զատիկ հաց չպիտի թխվեր: Չորեքշաբթին «մկան կիրակին» էր, այդ օրն աշխատողների հասկը մուկը կկտրեր, ցորենը կուտեր, հագուստը, մանած թելը կփչացներ: Այդ օրը վաղ առավոտյան կանայք եկեղեցի էին գնում, այլապես կզրկվեին ճախարակ մանելու ունակությունից, մանած թելն էլ միշտ կկտրվեր: Հաջորդ՝ հինգշաբթի օրը բոլոր տներում ճախարակ էին մանում: Շաբաթ օրը հայտնի էր «թալալոսի կիրակի» անունով, այդ օրն աշխատողներն իրենց և իրենց երեխաներին ենթարկում էին «թալկանալու»՝ ուշագնաց լինելու վտանգին: Բերված օրինակները, սակայն, բոլոր վայրերի համար նույնական չէին: Այսպես՝ Արաբկիրում կիրակի էին պահում չորեքշաբթին և այն կոչվում էր «գալիք»: Այդ օրը գործ անողները վտանգվում էին զանազան արկածների հանդիպելու ողջ տարին: Հինգշաբթին «ճանճնոցն» է, այդ օրը աշխատողները ողջ տարին ճանճերից պիտի ձերվեին: Ուրբաթը «մկնոց»-ն էր, համապատասխանաբար՝ այդ օրը աշխատած մարդկանց ողջ տարվա վաստակը մկներին էր բաժին ընկնելու: Շաբաթ օրն այստեղ կոչվում էր «անեծք մոր», և այդ օրը «կիրակի» չպահողները իրենց մայրերի կողմից անեծք կստանային: Արցախահայերը տարբեր անուններով ու նպատակներով «կիրակի» էին պահում Մեծ պասի երկրորդ շաբաթվա օրերը: Այդ շաբաթվա երկուշաբթին այստեղ կոչվում էր «գայլ կերածի և կատաղած շան» կիրակի, այսինքն՝ այդ օրն աշխատող մարդուն կարող էր գայլը ուտել կամ կատաղած շունը կծել, երեքշաբթին՝ «սել (հեղեղ) տարածի» կիրակի, չորեքշաբթին՝ «կայծակ խփածի» կիրակի և այլն: Մարաշի հայերն այդ կարգի «կիրակիներ» պահում էին Բարեկենդանի օրերին. այստեղ Բարեկենդանի չորեքշաբթին «գայլի տոն էր», այսինքն այդ օրը չէին աշխատում գայլի պատվին, որպեսզի իրենք իրենց և իրենց հարազատներին զերծ պահեին գայլի վտանգից, ուրբաթը «մկնատոն» էր՝ արգելված էին կար ու կարկատանը, գործելը և այլն, շաբաթ օրը լվացք չէին անում և այլն: Այս կիրակիները, ինչպես կտեսնենք, այլ տարբերակներով շարունակվում էին նաև Մեծ պասի ամբողջ շաբաթվա ընթացքում:

Չարիքը կանխելու և առատությունն ապահովելու ծիսաշարքի մեջ էր մտնում նաև սենյակը ալյուրով զարդանախշելու սովորույթը: Մշեցիները, Մեծ պասի առաջին օրը բնակարանը լիովին մաքրելուց ու փոշիները վերցնելուց հետո, երկար ծողի ծայրին մի քիչ բամբակ կամ մի կտոր լաթ էին փաթաթում, թաթախում ալյուրի մեջ և նախշում մրից սևացած

առաստաղն այնպես, որ գիշերվա աստղազարդ երկնքի նմանվի: Միաժամանակ՝ ալյուրով նախշազարդում էին նաև մրոտ սյուները և «ս» ձևով բամբակի պատրույգները կպցնում վրան, որպեսզի հավերը թուխս նստելիս այդ նախշերի չափ ճուտեր ունենային: Միաժամանակ՝ կանայք նորոգում էին կրակը և ամեն կերպ աշխատում, որ Մեծ պասի ընթացքում կրակը չմարի:

Ալաշկերտցիները նույնպես ալյուրով նախշում էին նոր մաքրած տան պատերը:

Էրզրումում այդ օրը հաց էին թխում և մի տաք հաց գիշերը երդիկից ցած գցում, ասելով՝ «Ով տաք հաց, դու առ Աստված ելնես, այս ցավն ու զոռը մեր տնեն-տեղեն վերացնես: Ով տաք հացի պահապան հրեշտակներ, լսեցեք, առ Աստված միջնորդ եղեք»:

Մեծ պասի տոնականությունը առաջին օրով կամ առաջին շաբաթով չէր ավարտվում: Քառասունինն օրերի ուղիղ կեսը, չորեքշաբթի, հայտնի էր **«Միջինք»** անունով և ուներ արարողությունների իր շղթան: Նախ՝ այդ օրը նշանված աղջիկ կամ տղա ունեցող ընտանիքներում ձեթով բաղարջ էր թխվում և ուղարկվում փոխադարձաբար հարսնացուին կամ փեսացուին: Այդ երեկոն կոչվում էր «Քառասուն մանկունք» և ժողովրդական մի շարք սովորություններ նվիրված էին այդ գաղափարին: Այդ երեկո չափահաս աղջիկները գաթա, հալվա էին պատրաստում և գնում իրենց նշանված ընկերուհու տուն: Այստեղ նրանք «քառասուն անգամ քառասուն» ծնրադրում էին՝ «Քառսուն մանուկ, քառսուն կուս, քառսուն մանկանց բարեխոս» խոսքերով: Կարնոհայերը բազմազանություն էին մտցրել այս խոսքերի մեջ, ասելով.

Քառսուն մանուկը լճին,
Թագն ու պսակը ծտին,
Ինչ որ տվիր բաղնեցպանին,
Անոր կեսն ա ինծի տուր:

Ողջ գիշեր քառասուն մանկանց հիշատակին ծնրադրելով, ժամանակ առ ժամանակ իրենց հետ բերած մթերքներով ուժերը վերականգնելով, աղջիկները առավոտյան լվանում էին մեկը մյուսի գլուխը և տանտերերից մի-մի գուլպա նվեր ստանալով՝ ցրվում:

Շատ ընտանիքներում այդ գիշեր մինչև լույս «լիճք» էին վառում, այսինքն՝ մի ամանի մեջ ձեթ էին լցնում, ոլորած պատրույգը դնում մեջը և վառում: Որոշ տեղեր «լիճքը» վառում էին եկեղեցում, մեծ կոնքի մեջ, իսկ առավոտյան կոնքի մեջ մնացած ջուրը բաժանում էին եկեղեցի եկողներին: Վերջիններս այդ ջուրը քսում էին հիվանդ ականջին, աչքին կամ վերքերին, ինչպես նաև խառնում էին այդ օրը թխվող բաղարջին, որի մեջ դրվող նշանը՝ դրամ, ուլունք և այլն բախտագուշակ իմաստ ուներ: Բաղարջը կոչվում էր Միջունք կամ Կլոճ և իր նշանակությամբ կրկնում էր «Տարի հացին»: Նոր Բայազետում «Միջինքի» խմորը հունցում էին տղաները՝ ոտքերով[5]: Այս բաղարջը կտրելիս, եթե դանակը հանդիպում էր դրված նշանին, դանակը նմանակում էին գութանին և գուշակում, որ տվյալ ընտանիքի վաստակը պետք է հողից, այսինքն՝ երկրագործությունից գա: Թխում էին նաև մեկ այլ խմորեղեն: Նոր Նախիջևանում դա երեսը մեղրաջուր քսած կլոր, մեջը ուռուցիկ հաց էր, որ կոչվում էր «պալից»: Մուշում այն բաղարջ էր՝ երեսը ընկույզով ու չամիչով զարդարած, կոչվում էր «հարեգիլ»: Միջինքին թխվող այս հացերը բաժանվում էին գլխավորապես աղքատներին: Այն ընտանիքներում, որտեղ այդ տարի մարդ էր մահացել, չէին թխում, և նրանց բերում էին բարեկամները:

«Միջինքը», պասը կիսելով, նաև գարնան գալստյան ավետաբերն էր: Տարվա այդ շրջանում դաշտերն արդեն կանաչում էին, ուստի «Միջինքին» հաջորդում էին զանազան

5. *Հայոց մեջ ավանդաբար մաքուր՝ անարատ համարվել են կանանց ձեռքերը, տղամարդկանց՝ ոտքերը: Այդ պատճառով խմորը սովորաբար կանայք են հունցում, հնձանում խաղողը ոտքերով տրորում են տղամարդիկ: Նոր Բայազետում Միջինքի խմորը հունցելը տղամարդկանց պարտավորությունը լինելով՝ այնուամենայնիվ ոտքերով է հունցվել:*

ծիսական դաշտագնացությունները: Որոշ վայրերում նորահարսի սկեսուրը հրավիրում էր իր և նորահարսի մոր բարեկամուհիներին, և պասի բազմատեսակ ուտեստեղենով այդ խումբը դաշտ էր դուրս գալիս զբոսնելու: Հնագույն ժամանակներից եկող սովորույթի համաձայն՝ նորահարսները ամուսնու տնից առաջին անգամ դուրս էին գալիս Միջինքին: Դաշտերը լցվում էին զբոսնողների խմբերով, շատ տեղերում զուռնա էր նվագում, երգեր էին երգում: Ուշագրավ է, որ այդ օրը նույնպես, ինչպես Մեծ պասի ընթացքում առհասարակ, երգում կամ պարում էին միայն տղամարդիկ: Այդ զբոսախնջույքը մասնավորեցվել էր «գյաշտ» (դաշտ բառից) անունով ու նույնիսկ հատուկ երգով.

Հարսները կնացած է գյաշտ,
Ի՞նչ են բերած՝ ջուխտ-ջուխտ լաշ (տղա),
Անունները ի՞նչ,
Մեկին՝ Ջաննակ, մեկին՝ Պամբակ:



Վանում այդ օրերին ընտանիքի ամուրի անդամը, լիներ երիտասարդ, թե՝ պատանի, արևածագից առաջ գնում էր իրենց ձյունից դեռ չմաքրված ցորենի կանաչող արտը՝ ավետելու գարնան գալուստը հետևյալ խոսքերով. «Աշխարհն լույս տալու եկողը թող քեզ էլ լիություն տա»: Նույն օրը երեկոյան տանտիկինները թոնիրը խառնելու երկար փայտի մրոտ ծայրով խաչեր էին գծում տան չորս անկյուններում, ասելով՝ «Պուպուշիկ, դուրս, պուպուշիկ դուրս», ապա նույնը կրկնում մթերանոցում ու մառանում, վստահ, որ «տան անկյուններում թաքնված գանգրահեր, փոքրիկ սատանայածտերը, որոնց պուպուշիկ էին կոչում, կթողնեն կփախչեն»: Մարաշում այս շաբաթվա ուրբաթ ու շաբաթ օրերը լվացք չէին անում:

Ղզլարի հայերը նույնպես գարնան գալուստը խորհրդանշող սովորույթ ունեին: Մեծ պասի հինգերորդ շաբաթվա սկզբին մի ամանում նրանք գարի կամ ոսպ էին ցանում, և երբ հատիկները ծլում ու հինգ մատի չափ բարձրանում էր, կանաչի շուրջը կարմիր ժապավեն էին կապում, չորս կողմը կարմիր ձվեր շարում և դնում սեղանին: Ջատիկին այն սեղանի ամենագեղեցիկ զարդն էր:

Մեծ պասի մարմնական ու հոգևոր ժուժկալությունը անձկագին սպասումներ էր առաջացնում փրկարար Ջատկի շուրջ, կարոտներ, որ երգերի հիմք էին դառնում, ինչպես.

Մըքըբեն բռներ հալայե,
Թանբալ կնկտուց եղեր կոլայե,
Հորու ջրով կ'էնեն ղալայե,
Երբ մըն իգա սըրբ Ջատիկե:
Թարխանա շորբան մերխոշե,

Նանան չեղնա, էնլե բոշե,
Ես կը սիրեմ քալագոշե,
Ե՞րբ մըն իգա սըրբ Զատիկե:
Գացինք հարցուցինք Թումաս աթթարեն,
Խաբար մի տա մըզի Զատկի թաթարեն,
Մըզի խաբար տվեց զեյթուն ու ձիթրեն,
Երբ մըն իգա սըրբ Զատիկե:
Քրիստոս հարյավ ըսեինք,
Երես երսի քսեինք,
Քաբաբ, ոսկուր կըրծեինք,
Երբոր իգար սըրբ Զատիկե:

Բայց ահա շուտով կվերջանա Մեծ պասը, վեցերորդ կիրակին է և այդ շրջանի կարևորագույն տոնը՝ Ծաղկազարդը:



ՃԱՂԿԱՋԱՐԴ

(ՃԱՂԱՐԴԱՐ, ՋԱՂՋԱՐԴԱՐ, ՃԱՂԿԱՏՐԱՆՔ, ՃԱՂԱՐԴԱՒՈՐ, ՃԱՂՃԱՐԴԱՐ)

ԱՎԱՆ ՇԱՀԱԹ

Ամենագեղեցիկ, լուսավոր, ծիծաղաշատ, ուրախաշատ տոներից է Ծաղկազարդը, իր անվան արմատի՝ «ծառ» կամ «ծաղիկ» նման անարատ, բուրումնավետ ու լուսառատ: Կարծեք թե իրավացի է Վահան վարդապետ Տէր Միհասյանը, երբ գրում է, թե Ծաղկազարդ/Ծառզարդարը հայոց Նար (հետո՝ Նուրի, գուցե նաև Հուրի) Աստծուն նվիրված տոն պիտի լիներ: Բանաստեղծորեն է նկարագրում սիրելի վարդապետը այս տոնի իր հերոսուհուն՝ Նար-Նուրինին, Թերափ անվանելով նրան: Հիշելով երաշտի ժամանակ Նուրի տիկնիկներով պտտելու և անձրև բերելու ջանքերը, Վահան վարդապետը գրում է. «Գիտէ՞ք, իմ Թերափս սիրունիկ է ու խատուտիկ, ծաղկազարդ և զարդարուն: Գիտե՞ք, իմ Թերափիս աչերեն կը ցողին անձրևի կաթիլները. Թերափես արցունքեն է շաղն ու ցողը: Թերափս գթած է և այնքան գթած, որ երաշտի ժամանակ, երբ մարդ ու անասուն տառապում են, ինքը արտասվում է, և նրա արցունքով թրջված հողից իսկույն ծաղիկ ու բույս են ծլում, ծաղկում ու դալարում: Եթե հարցվի, թե անունն ի՞նչ է՝ ՆՈՒՐԻ կամ ՀՈՒՐԻ... Թերափիս շապիկը լուսակերտ և նկարազարդ էր, իսկ մեջքի գոտին ծիածանն էր... Չգիտե՞ք, որ ծիրանի գոտին անձրևելու նշան է»:

Երաշտի ժամանակ հայ (և ոչ միայն հայ) գյուղացու այս փրկչուհին՝ Նուրին տարբեր անուններ ևս ունի: Նրան անվանում էին նաև Խուճկուրուրիկ, Չիչի-մամա, Ճիճի-մումա...»:

Ահա հայոց որոշ ազգագավառներում Ջաղկազարդ/Ծառզարդարին աղջիկների ու տղաների խմբերը առանձին-առանձին պատրաստում էին Խուճկուրուրուկ տիկնիկը, իսկապես մարդածև-կանացիակերպ. դեմքը՝ սպիտակ լաթով, աչք-ունքով, քիթ-բերանով...: Տիկնիկի գոտին գունավոր էր՝ գույզգույն կտորներով զարդարած, լաչակը՝ պսպղուն ուլունքներով, գլխին՝ ծաղիկներ, ծաղկեպսակ... Երբ Ծաղկազարդի այս հարսնացուն փողոցներով պպտեցնում էին, պատուհաններից ու դռներից ջուր էին լցնում թափորի վրա, իսկ թափորը կազմող երիտասարդներին նվերներ էին տալիս: Այս ծեսը չափազանց կարևոր էր. գարուն էր եկել, և նախապես հարկավոր էր ոռոգման ջրի, անձրևի խնդիրը լուծել, ի թիվս այլոց, նաև հմայությամբ, խնկարկելով...:

Նորապսակ երիտասարդները, նշանված տղաները շաբաթ լույս կիրակի կեսգիշերին արմատախիլ էին անում նոր բողբոջած ուռենիները և բերում եկեղեցի: Ողջ եկեղեցին զարդարում էին ուռենու բողբոջած ճյուղերով, մի մեծ կույտ ճյուղեր էլ դարսում էին կենտրոնում: Եկեղեցու մուտքն ամբողջովին «հավաքում» էին ծաղկե շրջանակով: Նրանց հետևում էին

անչափահաս տղաներն ու պատանիները՝ ձեռքներին զանազան ճռռացող ինքնաշեն խաղալիքներ՝ ճեռեր, կարկաչաներ: Մինչ երիտասարդները զարդարում էին եկեղեցին, սրանք ճեռերն ու կարկաչաները պտտացնելով, աղմուկով էին լցնում այն: Եկեղեցին աստիճանաբար լցվում էր բազմությամբ՝ տոնական հագնված աղջիկներով ու կանանցով, երիտասարդներով: Ծաղկազարդին, ի դեպ, ծմեռային հագուստները փոխվում էին գարնանայիններով: Դեռատի աղջիկները եկեղեցի էին գալիս այդ օրը հավաքած ծաղիկներով: Այդ գիշեր Քեսապում յոթը բուրավետ ծաղիկներ ու խոտեր դնում էին ջրի մեջ, որ գիշերվա ընթացքում խիստ զորավոր պիտի դառնար: Այս ջուրը կոչվում էր «Յութնյուս»: Առավոտյան պիտի լվացվեին այս ջրով:

Գալիս էր քահանան, հնչում էին եկեղեցու զանգերը՝ հրավիրելով ուշացածներին: Եկեղեցի եկողները շրջապատում էին ուռենու ծառերը, իրենց հետ բերած մոմերը վառելով՝ կպցնում դրանց ճյուղերին և հարյուրավոր մոմերի պայծառ լույսի տակ, կեսգիշերին սկսվում էր ուռենու ճյուղերն օրհնելու ծեսը: Եկեղեցում սովորական զսպվածությունն ու հանդարտությունը չկա, բոլոր կողմերից կատակներ էին լսվում, երեխաները ճռռացնում էին «ճեռերը», բարեկամները գտնում էին միմյանց, ողջագուրվում: Խիտ բազմություն էր հավաքվում հատկապես նշանված աղջիկների շուրջը, որին շրջապատում էին ինչպես իր, այնպես էլ փեսացուի ազգական կանայք, նվերներ տալիս: Ճյուղերն օրհնելու պահին փեսացուի կողմից ծառի նման ճյուղաշատ մի հաստ մոմ էին դնում նրա ձեռքին: Այդ օրը, ողջ Մեծ պասի ընթացքում առաջին անգամ, նշանախոսության խոսք էր լինում և հենց եկեղեցում, կեսգիշերին, տեղի էին ունենում հանպատրաստի նշանադրություններ: Օրինակ, փեսացուի մայրը, նախապես համաձայնեցրած լինելով հարսնացուի մոր հետ, ուռենու վրա վառվող մոմերից վառում էր մի հաստ մոմ, վրան հագցնում մի մատանի և լռելյայն հանձնում հարսնացուին. վերջինս ընդունում էր մոմը և այնուհետև նշանված էր համարվում: Նորատի հարսներն էլ այս օրվան մեծ անձկությամբ էին սպասում. ամուսնությունից հետո առաջին անգամ նրանք ծնողների տուն պիտի գնային՝ դարձ: Հենց եկեղեցուց էլ նրանց հարազատները իրենց հետ տանում էին երիտասարդ հարսին, որը ծնողների տանը մնում էր ընդհուպ մինչև Կանաչ կիրակի: Այդ առիթով է հյուսվել նորափեսաների երգը, որոնք իրենք իրենց մխիթարում էին.

Տարա՜ն, թող տանին, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Ջատկին կը բերեն, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Կանանչ մոմերով, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Դեղին սոլերով, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Նախշուն թաթերով, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Ոսկի բաղերով, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Անուշ հոտերով, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Կլոր տոտերով, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Սալու լաչիկով, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Գուհազ մեզարով, Ըընկլիկ, հանոր, նանանո՜ր,
Տարան՝ թող տանին, Ըընկլիկ,
Ջատկին կը բերեն, Ըընկլիկ:

Ժամասացությունը ավարտին մոտենալիս՝ բոլոր ժամավորները ջանում էին հնարավորին չափ շատ ուռենու օրհնված ճյուղեր վերցնել իրենց հետ: Եկեղեցուց դուրս գալու պահին նրանց արդեն սպասողներ կային՝ պատանիները, որոնք ուռենու ճյուղերով խփում էին դուրս եկողներին, հատկապես աղջիկներին ու նորահարսներին: Կանայք, վառված մոմերով դուրս գալով եկեղեցուց, շտապում էին գերեզմանատուն, մոմերն ամրացնում իրենց հանգուցյալի

գերեզմանաքարին, իսկ օրհնված ուռենու ճյուղերը տուն էին տանում: Այդ ճյուղերին վերագրվում էր չարխափան, առատացնող զորություն և ըստ այդմ՝ տարվա ընթացքում դրանք օգտագործվում էին բազմաթիվ առիթներով, մինչև հաջորդ Ծաղկազարդ: Այդ ճյուղերից գցում էին բոլոր մթերքների կարասները, ամբարը, թեթևակի խփում էին անասուններին, դրանցից մեկը պահում էին և ամեն անգամ կարագ հարելիս ստուգում խնոցին: Այդ ճյուղերը հյուսում, օղ էին անում, օղի միջով անցկացնում հավերին, որ դրանք գեր լինեն, խփում էին միմյանց մեջքին՝ «մեջքը տեղը, կամքը տեղը» խոսքերով: Ձավախքում էլ ճյուղերով սրան-նրան խփելիս ասում էին՝ «Քամու տեղ, սրտի դեղ», հուսալով, որ հիվանդությունները կանցնեն: Նոր Բայազետում ծաղկազարդի ուռենու օրհնած ճյուղը ամրացնում էին խնոցու պարանի վրա, որպեսզի «կաթը յուղոտ լինի..., ձձումին աչք չկպչի»: Շարուրում չամուսնացած երիտասարդները, որոնք այդ տարի ամուսնանալու մտադրություն ունեին, ուռենիների ճյուղերով շրջող պատանիներից ճյուղեր էին վերցնում, տուն տանում՝ այդ տարի ամուսնանալու ակնկալիքով: Փոթորիկի ժամանակ տանը պահված երկու ճյուղեր խաչածևում և կրակն էին նետում՝ վստահ, որ փոթորիկը կկտրվի: Վասպուրականում հավատացած էին, որ եթե Ծաղկազարդին ուռենիներ տնկեն, կարող են հետո կտրել և նրանցով հրաշքներ գործել: Այդ ճյուղերից մի քանիսն էլ օգտագործում էին Ջատիկին՝ զատկական կերակուրն եփող օջախի՝ կրակի մեջ գցելով:

Քեսապում կիրակի առավոտյան մի լաթի կտորի վրա յոթ շար շուլալ կար էին անում, յոթը թելերը ծայրում յոթ անգամ կապ գցում և լաթը նետում պարտեզ: Ապա լվացվում էին գիշերը յոթ ծաղիկների զորությունը քաղած ջրով: Իսկ Շարուրում երիտասարդ աղջիկները գույնզգույն կտորներով զարդարում էին ծառերը և աղերսում իրենց երազանքների իրականացում:

Այդ օրը բոլորը պիտի «հատիկ» ուտեին, ինչպես նաև՝ այն նվիրաբերեին տուն այցելող երեխաներին, ուստի տանտիկինները մեծ քանակությամբ խաշած ցորենից, սիսեռից, չամիչից ու շաքարահատիկներից «հատիկ» էին պատրաստում: Իսկ երեխաների այցերը չէին ուշանում: Երկու-երեք հոգով, երբեմն ավելի ստվար խմբերով, ճեռեր ճռճռացնող երեխաները մի-մի դույլ ու տոպրակ առած շրջում էին տնետուն, ծաղկազարդի երգեր երգում և որպես պարգև ձու ու հատիկ ստանում: Ջուն նրանց շատ էր պետք, չէ՞ որ առջևում Ջատիկն էր, որը պետք էր հավուր պատշաճ դիմավորել: Ծաղկազարդի անպաճույճ, պարզունակ երգերը շատ նման էին իրար: Բասենում, օրինակ, երգում էին.

Կարկաչա, կարին քյաչա,
Սև եզան, սև սամոդա,
Կարմիր կովը շատ եղ կուտա,
Ով որ ընձի հավկիթմ տա՝
Աստված իրեն հազար թող տա:

Սրան շատ նման էր մակվեցիների երգը.

Կարկաջա, կարինկաջա,
Սև եզան սև սամաքեռ,
Կարմիր եզան օղն ու կոճակ,
Ով որ չտա իմ երկու ձուն,
Մուկն ու կատուն իրենց թքուն,
Ով որ կտա իմ երկու ձուն,
Աստված պահե իր փեսացուն:

Մեկ այլ երգ ավարտվում էր հարսնացուին արվող մաղթանքով: Այն շատ նման էր հայտնի հեքիաթին.

- Ճըջանակ, անակ, անակ,
Եկեղեցո դուռը բանանք,
Դուս կյանք չալ եզը մատաղ անենք,
Պոզերը չարդախ անենք,
Վրեն պատարագ անենք,
Հաքուն խրազան անենք,
Չալթուկ թակենք տանք հավերին,
Հավերն ինձի մի-մի ձու տան,
Ձուձուն տանենք տանք պառավին,
Պառավն ինձի մի գաթա տա,
Գաթեն տանենք տանք խառատին,
Խառատն ինձի մի շվի տա,
Շվին տանենք տանք չոբանին,
Չոբանն ինձի մի գառ տա,
Գառը տանենք տանք Աստծուն,
Աստված ինձի մի ախբեր տա,
Աղբեր, աղբեր, ջան աղբեր,
Դու բերթի գլխին աղբեր,
Ես բերթի տակին, աղբեր,
Հուռում, հուռում կանչեցինք,
Հուռումի ձին թամբեցինք,
Հուռումը կնաց բանջարի,
Բանջար չիլավ, խոտ իլավ,
Խոտի տակին ծիտ իլավ,
Ծըլվըլալեն դուրս թռավ,
Հանգիստներին լիս իլավ,
Բերեք տվեք մեր երկու ձուն,
Աստված պահի ձեր հարսնացուն:

Աշտարակում հայտնի Ծաղկազարդի երգն էր.

Անակ, անակ, ճոճանակ,
Աստծո դուռը բանանք,
Մտնենք ժամ անենք,
Դուրս գանք պատարագ անենք,
Չալ եզը մերթենք, մատաղ անենք,
Պոզերը չարդախ անենք,
Միջին նստենք քյարգահ անենք,
Մատաղ սիրողը երկու ձու տա,
Ջատկին խաղանք քեֆ անենք,
Մինն ինձի, մինն իմ ընկերին,
Ով տա՝ զիգի բարձին նստի,
Ով չտա՝ չոր քարին նստի:

էջմիածնում և շրջակայքում շրջող տղաների խումբը երգում էր.

Անակ անակ ճոճանակ,
Աստծու դուռը բաց անեմ,
Մննեմ մեջը ժամ անեմ,
Դուրս գամ պատարագ անեմ,
Ընկերս ընկավ ծովը,
Ծովը ծիրանի դառավ,
Պատերը հայելի դառավ,
Բազեն եկավ կեռ կտուց,
Հավը տեղից թռցրուց,
Տակիցը մի ձու պլցրուց:

Այս երգի տարբերակը հանդիպում է Լոռիում.

Ճեռ ճեռ ճըճենակ,
Աստծու հալալ պըպենակ (թիթեռ),
Իմ հընգերը ծովն ընկավ,
Ծովը ծիրանի դառավ,
Չերեն (բազեն) եկավ կեռ կտուց,
Հավը թառեն թռցրուց,
Ջուխտ ձուն տակեն պըրցըրուց,
Տարավ կոտրեց բըլցրուց,
Մինն ինձի, մինն իմ ընկորը,
Ով մեր փայը տա՝ դլարի,
Ով որ տա ոչ՝ սլարի:
Կարնոհայերի երգածը.
Ծարծաթար, ծարծաթար,
Չեր տունն էկանք ծարծաթար,
Վար ըլլիք, չէն ըլլիք,
Սաղ աշխըրին տէրն ըլլիք:
Ժամ գընացեք, խունկ առեք,
Կապով դեղին մոմ առեք,
Ժամ էրէք, աղոթք էրէք,
Տասուերկու պատարագ էրէք:
Ծարծաթար, ծարծաթար,
Չեր տունն էկանք ծարծաթար,
Հատիկ տուէք էս օրուան,
Հավկիթ տուէք Զատկըվան:

* * *

Ճըռ ճըռ ճըչենակ,
Աստծո հալալ պիպեռնակ,
Ընկերս ընկավ ծովը,
Ծովն ելավ ծիրանա,
Խունկ առեք, մոմ առեք,

Տասներկու պատարագ արեք,
Իմ կարմիր հավին հավկիթը դուրս բերեք,
Ով որ բերե՝ շեն մնա,
Ով չբերե՝ հավի փորին դեմ կենա:

Կամ՝

Ծառզարդար, ծառին զարդար,
Խունգ առեք, խունգ ծխեցեք,
Սև հավեն հավկիթ գուզեմ,
Կարմիր կովեն եղ գուզեմ,
Վեվ օր տա՝ շեն մնա,
Վեվ օր չտա՝ չորչորնա:

Կամ՝

Կարկաչա, կարին կաչա,
Սև օձին սև սոմահա (ծիպոտ),
Խունգ առեք, մոմ առեք,
Տասերկու պատարագ արեք,
Իմ կարմիր հավկիթս դուս բերեք,
Ճերմակ հավկիթս նես տարեք:

Շիրակում հանդիպում ենք երկու տարբերակն էլ.

1. Ճեռ, ճեռ, ճեճենակ,
Ասսու հալալ պեպենակ,
Ընկերս ընկավ ծովը,
Ծովը դառավ ծիրանի,
Պատկերքը դառավ հայլի,
Խունկ առեք, մոմ առեք,
Տասներկու պատարագ էրէք,
Ջատկի հավկիթս դուրս բերեք:

2. Կարկաչա, կարին կաչա,
Սև եզան՝ սև սամոտէն,
Կարմիր եզան՝ օղն ու կոճակ,
Կարմիր հաւկիթս դուրս բերեք,
Թէ չէ կասեմ պօլատ Իրիցուն,
Կիգայ կոտրէ ձեր ձըձում:

Երգերի մեծ մասը վերջանում էին սպառնալիքով և բարեմաղթանքով, ինչպես.

Ով որ չտա իմ երկու ձուն,
Մուկն ու կատուն իրենց թթուն,
Ով որ կտա իմ երկու ձուն,
Աստված պահի իր փեսացուն (կամ՝ հարսնացուն)....

Շրջում էին այնքան, մինչև դույլերը ձվով լցնեին: Փոխարենը տալիս էին օրինված ուռենու մեկական ճյուղ:

Նկարագրված շրջայցերից զատ որոշ վայրերում տեղի էին ունենում Ծաղկազարդին բնորոշ խաղեր: Բալուում, օրինակ, շատ ընդունված էր հետևյալ խաղը.10-12 տարեկան տղաները նախապես հավաքում էին ուռենու կամ բարդու երկար ծողեր, կարմիր ներկում դրանք: Խաղացողներից մեկը իր ծողը շեղակի դեմ էր անում պատին, մյուսը իր ծողով հարվածում էր: Կոտրվածը հաղթողին էր բաժին ընկնում: Առավոտից երեկո խաղացողների հարվածների ձայնն էր լսվում և հաղթողների հաղթական գոչյունները: Կոտրվածները պահում էին Զատիկի թանապուրի տակ այրելու համար:

Այնուհետև Մեծ պասի ավարտին մնում էր մեկ շաբաթ, մեկ շաբաթ մինչև անձկալի Զատիկը, բայց ոչ ծանձրալի, սպասումներով լի շաբաթ: Այդ վերջին շաբաթն այնքան հագեցած էր տոնականությամբ, արարողությունների պարտադիր կարգով՝ թե՛ եկեղեցական, թե՛ ժողովրդական, որ պասի պարտադրող խստակենցաղությունը տեղի էր տալիս տոնական հուզումին: Օրերից յուրաքանչյուրն ուներ իր անունը և ըստ այդմ՝ իր բնորոշ դեմքը: Երեխաներն անգամ գիտեին, որ Մեծ պասի վերջին շաբաթվա օրերն են՝

Քոռ երկուշաբթին,
Պաս երեքշաբթին,
Չիք չորեքշաբթին,
Ավագ հինգշաբթին,
Հութի ուրբաթ օր,
Զատկի շաբաթ օր՝
Սուրբ հաղորդման օր,
Քյուֆթի կիրակի:

Շիրակի տարբերակ՝

Սև երկուշաբթի,
Շիլ երեքշաբթի,
Չիք չորեքշաբթի,
Ավագ հինգշաբթի,
Յուդի ուբաթ,
Զատկի շաբաթ,
Ախառ կիրակի:

Այս բնութագրերի գեղարքունիքյան տարբերակն է.

Հուշիկ, հուշիկ երկուշաբթի,
Երեքշաբթի՝ քարքաշիկ,
Չիք չորեքշաբթի,
Ավագ հինգշաբթի,
Հուդայի ուրբաթ,
Զատկի շաբաթ,
Ախարի կիրակի:
Երկուշաբթի մեռելոց,
Կանաչ-կարմիր կիրակի:

Երկուշաբթին ջրաղացպանների օրն էր, քանզի այդ օրը բոլորը պիտի ցորեն տանեին աղալու: ***Երեքշաբթին*** հիմար-իմաստունի վիճակը քաշելու օրն էր և մարդիկ շտապում էին եկեղեցի՝ իրենց որևէ մտադրությունը գուշակելու: Տասը թղթակտորներից հինգի վրա գրվում էր

«իմաստուն», հինգի վրա՝ «հիմար» բառերը, և տասը երեխա վերցնում էին մեկական թուղթ: Մտքում որևէ իղձ պահած մարդիկ նախապես ընտրում էին երեխաներից որևէ մեկին: Սրան «իմաստուն» վիճակն ընկնելը նշանակում էր իղձի իրականացում, «հիմարի» դեպքում՝ տապալում:

Սակայն կարևորագույն իրադարձություններն սկսվում էին ***չորեքշաբթի*** օրվանից, որ ամենուր «չիք» էր կոչվում՝ «չքել», «չքվել» բառից: Կրակի վրա շարունակ ջուր էր եռում ամանները լվանալու, լվացք անելու, տան բոլոր անկյունները սրբել-մաքրելու, բոլոր տնեցիների լողանալու համար: Տղամարդիկ մաքրում էին ծմեռվա ընթացքում գոմում կուտակված կեղտը, ամեն աղտեղություն, ամեն չար բան այդ օրը պիտի չքվի-վերանա: Շատերը գնում էին սրբատեղերը ուխտի, որպեսզի այնտեղ թողնեն իրենց տանջող ցավերը, «չքեն» չիք-չորեքշաբթու հետ: Կարնոհայերը կեսգիշերին «ցավիս վերջ» էին ասում և մինչև մյուս օրվա ժամերգություն լուռ մնում՝ վստահ, որ չիք-չորեքշաբթին իր հետ ցավերը կտանի: Լոռիում մի քանի ծու էին ներկում «չքի աչքը հանելու համար», ինչպես նաև եղունգների մեջտեղից գիծ էին քաշում, որ իրենց «բանը կիսատ - պռատ չմնար, ոչ էլ իրեց բախտը ուրիշին գնար»: Իսկ Զանգեզուրում այդ օրն էին աղում-չքում վնասատուներին: Երկու քար միմյանց քսելով ասում էին.

Չիք,չիք, մոկնը չիք,
Չիք, չիք լուն չիք,
Չիք, չիք, կարիճը չիք,
Չիք, չիք, օձը չիք,
Չիք, չիք, չարակամը չիք,
Չիք, չիք, հիվանդությունը չիք և այլն:

Ոմանք այդ օրն ամբողջ բնակարանը դատարկում էին, բոլոր անկյուններով իսպառ մաքրում, ապա տնեցիներից մեկը բարձրանում էր կտուրը, մի քար պտտեցնում երդիկի շուրջը և ձայն տալիս.

- Աղամ, աղամ, ի՞նչն աղամ:

Ներսից պատասխանում էին.

- Մուկն աղա՛...

- Աղամ, աղամ, ի՞նչն աղամ:

- Քունջ ու պուճախի տակերն աղա՛...

Ավագ չորեքշաբթի գիշերը սատանաներն շատ ակտիվ էին: Այդ գիշեր մարդիկ տուն էին տանում մասրենու թուփ կամ ճյուղեր, որ նրա փշերը պատառոտեն գիսավոր սատանային, նույն գիշեր զառիթափներում փայտ էին վառում սատանաներից ազատվելու համար, ծննդկանի վերմակի չորս բոլորը ասեղներ էին շարում և անքում հսկում՝ արգելելով չարերին մոտենալ նրան: Այդ օրվա երեկոյան դռան շեմին շամփուր, իսկ հագուստներին ասեղներ ու գնդասեղներ էին ցցում:

Մարաշցիներն էլ այս օրը դաշտերից հավաքում էին «խուրուկ» կամ «նվակ» խոտերը, եփում և ուտում: Այստեղ այն պատկերացումը կար, որ «Մեծ պասի» ընթացքում մարդկանց օրգանիզմի ճարպերը հալվում են, մնում է նշի մեծության մի կտոր ճարպ, որն էլ հալվում է «խուրուկն» ուտելու դեպքում: Գանձակում ոմանք գնում էին ուխտավայր, այնտեղից մի քիչ հող բերում, ջրում լուծում և խմեցնում աղջիկներին, որպեսզի նրանք շուտ ամուսնանան:

Չորեքշաբթի օրը «նշան»՝ խարան էին անում գառների ու ոչխարների ականջներին:

Վատը, չարը «չքացնող» չորեքշաբթուն հաջորդում էր արդար, առատ, մաքուր ***հինգշաբթին***: Տղամարդկանց առաջին գործն էր բերք չտվող ծառերին սպառնալ՝ իբր

պատրաստվում են այն կտրել, մինչև որևէ մեկը ծառի փոխարեն չխոստանար, թե այսուհետև բերք կտա: Շատերը ծառեր էին տնկում՝ վստահ, որ այդ օրը տնկած ծառը խիստ բերքատու պիտի լինի: Իսկ կանայք Մեծ պասի ընթացքում հավաքված մածունն ու հում սերը սկսում էին հարել խնոցիով: Շիրակցիների միջև կայացող հետևյալ հարց ու պատասխանը հստակ ցույց է տալիս այդ օրվա վերաբերյալ պատկերացումները.

- Մամի ջան, ախր էսօր կիրակի է, ճաշակվելու օր, էս դուք խնոցի եք հարում, մեղք չէ՞,- հարցրավ Կարոն:

- Հա, բալա ջան, էսօր շատ ծանոթ կիրակի է, տարվա միջի ամենաազիզ կիրակին է, համա խնոցի հարելը մեղք չէ: Պիտի հարենք, որ Ոտնլվային կարագ հասցնենք, համ էլ, որ էսօրվա խերն ու բարաքյաթը շատ է, թե որ էսօր խնոցի հարենք, մածուն մերենք, եղ ու պանրի մայա բռնենք, սաղ տարվա մասիլը, քան ու քացանը խերով, բարաքյաթով կեղնի:

Խնոցին հարելիս վրան նստեցնում էին մի գեր երեխայի, որ նրա քաշով կարագ լինի, տակն էլ մի խաչերկաթ էին գցում, որ սատանային փախցնեն:

Մուշում նորոգում էին թթխմորը, հաց թխում և երեսին կանեփ քսում: Այս հացը շատ էին թխում հատկապես ննջեցյալ ունեցողները: Սրանց բարեկամները այցելում էին՝ հետները նոր թխված հացերից «յոթ ջուխտ ու թաք» (15 հատ) բերելով: Երեկոյան եկեղեցուց դուրս գալով նրանք խմբով գնում էին գերեզմանները և այստեղ բաժանում իրենց հետ տարած հացերը:

Հինգշաբթի լոռեցիները սև թելի վրա յոթ հանգույց էին անում և դնում եկեղեցու պատի ճեղքվածքում, որպեսզի «թռչունները հավերի ծագերը չթռցնեն»: Որոշ տեղեր էլ այդ օրը «գլուխ չեն լվանում, որ չգժվեն, սապոն չեն գործածում, որ կսկիծ չտեսնեն»:

Այդ նույն ժամանակ աղջիկները դուրս էին գալիս դաշտերը զանազան ուտելի կանաչեղեններ հավաքելու: Հինգշաբթի օրը բոլորը պիտի նոր դուրս եկած կանաչեղեն ուտեին՝ հում կամ տապակած: Հում կանաչեղենից կարևորագույնը աղբյուրների մոտ աճած դաղձն էր: Հավաքում էին այնքան, որ բոլորին բաժին հասներ, նաև այն ընտանիքներին, ովքեր ինչ-ինչ պատճառներով դաշտ չէին դուրս եկել: Շատերը եփած կանաչեղենը տանում էին եկեղեցի և այնտեղ բաժանում որպես մատաղ: Ոմանք էլ, նախապես պայմանավորվելով, հենց եկեղեցու բակում, իսկ լավ եղանակին՝ ուղղակի դաշտում էին եփում կամ հում-հում ուտում հինգշաբթի օրվա հավաքած վայրի կանաչեղենը: Մարաշի հայերն էլ այս հինգշաբթիի համար հատուկ ուտելիքի տեսակ ունեին՝ «աղամաղ», որ նշանակում է «աղի-մաղի»: «Աղամաղը» սմբուկի գլխիկի կանաչ կեղևն է, որ չորացնում ու պահում էին այսօրվա համար: Ավագ հինգշաբթի այս չորացրած կեղևը խաշում էին, մանրացնում, հետը սոխ ջարդում, վրան աղ ու պղպեղ ավելացնում և ուտում:

Գիշերը, Ոտնլվայի ծեսին եկեղեցում բոլորը մի-մի կտոր օրհնված կարագ էին վերցնում և քսում մարմնի զանազան մասերին՝ աչքերին, ականջներին, ճակատին, ձեռքերին և այլն, իսկ շատերը նաև տուն էին տանում, գցում խնոցին, յուղի կարասը: Առաջին անգամ Մեծ պասի ընթացքում տեղի էր ունենում շեղումներ հասարակական նորմերից, գիշերը եկեղեցում, պատարագի ընթացքում տղաները հանգցնում էին մոմերը և մթության մեջ, ծիծաղի ու կատակների տարափի տակ կարում էին կանանց փեշերը միմյանց, համբուրում աղջիկներին: Այդ նույն գիշեր Կեսարիայում քահանան մի պահ կանգնում էր նստարանին, չորս երիտասարդներ նրան նստարանով հանդերձ բարձրացնում էին, հարցնում Զատիկը գալու օրը և պատասխան ստանալով՝ իջեցնում ցած:

Ավագ հինգշաբթի օրվա ոտնլվայի ջուրը խմեցնում էին վախեցածին՝ վախը վերացնելու, բուժելու նպատակով:

Ավագ հինգշաբթի օրը նաև Զատկի ձվերը ներկելու օրն էր: Ներկում էին առայժմ

սահմանափակ թվով ձվեր, ընտանիքի անդամների թվին հավասար կամ յոթ հատ, դրանցով պիտի թաթախվեին՝ պասը բացեին, իսկ բուն Զատկի համար նախատեսվող հսկայական քանակությամբ ձվերը պիտի ներկվեին - եփվեին շաբաթ օրը: Ներկում էին միայն կարմիր գույնով: Շատ տեղերում հավատում էին, որ Զատկի հինգշաբթի օրը ներկած ձու ուտողների ատամները չեն ցավի:

Հաջորդ՝ ***ուրբաթ օրը,*** ըստ եկեղեցական տոնացույցի, Քրիստոսի խաչվելու օրն է, ուստի ուրբաթը սգի օր էր և որպես այդպիսին՝ կիրակի, այսինքն՝ այդ օրը բազում աշխատանքներից խուսափում էին: Մեր ժողովրդի մեջ այդ ուրբաթը ավելի հայտնի է Հուդայի ուրբաթ անունով, որ շատ բարբառներում հնչում էր որպես Հուդի-Հութի-Ութի ուրբաթ: Եկեղեցական ծեսերից զատ այդ օրը կատարվում էին նաև մի շարք ժողովրդական արարողություններ, որոնցից կարևորագույնները հետևյալներն էին. հինգշաբթի լույս ուրբաթ գիշերը ոմանք «չորս մեխ էին շինում և պահում մինչև կանաչ կիրակի, երբ մի ուլ էին մատաղ անում և սրա ոսկորները մորթու մեջ փաթաթած՝ թաղում էին և այս մեխերը վրայից խփում, որպեսզի կարկուտ չգար»:

Վաղ առավոտյան աքլորականչից առաջ բոլոր հայ դարբինները, առանց խոսելու, գնում էին դարբնոց և երեք կամ յոթ անգամ մուրճով հարվածում զնդանին: Վաղնջական ժամանակներից եկող այդ սովորույթը բացատրվում էր իբրև թե շղթայված Արտավազդի շղթաներն ամեն տարի ամրացնելու միտումով: Դարբիններն ու ոսկերիչները վաճառում էին «ուրբաթաթուր» կոչվող հմայիլները, որոնք փոքրիկ օղեր, մատանիներ, ապարանջաններ էին, որ մայրերը գնում էին իրենց զավակներին չար աչքից զերծ պահելու համար և կարմիր-կանաչ թելերով կարում նրանց բաճկոններին կամ հագցնում մատին: Շատ տեղերում ուրբաթարուրներ պատրաստելու ընթացքը խիստ խորհրդավոր էր: Օրինակ, Զավախքում դարբինները ապարանջաններ, մատանիներ պատրաստում էին գիշերը, «մի ոտի վրա կանգնած, բոլորովին լուռ, յոթ ամրոցի դռներից հավաքած երկաթից... դրանք ... կոչվում էին «անժըմի»: Մյուս օրը եկեղեցու դռանը կանգնած անխոս վաճառում էին: ...Անժըմին քաշ էին անում երեխաների օրորոցից, իսկ ապարանջանները դնում աղջիկների և կանանց թևերին, որպեսզի չար աչքից ազատվեն»: Լոռիում այդ նույն գիշերը դարբինները «անխոս շինում են ուրբաթարուր՝ կեռ երկաթ, որ կարմիր ու կանաչ թելերով կարում են երեխաների ուսերին, որպեսզի չար աչքից ազատ մնան: Ոմանք այդ թելը գրպանում դրած տանում են եկեղեցի, պատարագին շանց տալի (ցույց տալիս)»:

Այդ օրը կանայք անպայման կար պիտի անեին՝ որպես կանոն դարձյալ «ուրբաթաթուր», այսինքն՝ չար աչքի դեմ երեխաների շորերի վրա արվող հատուկ նախշեր: Տղամարդիկ նույնպես կարևոր գործ ունեին. Ութի ուրբաթին անհրաժեշտ էր թեկուզ մի քանի ակոս վար անել: Ինչպես ասեղ օգտագործելը (կար անել), այնպես էլ վար անելը, ըստ ժողովրդական պատկերացումների, մի նպատակ ունեին՝ «ցավ պատճառել Քրիստոսին տառապանքների մատնած, դավաճան Հուդային»: Այդ նույն նպատակով Մուշում «հոտաղները դաշտում սուր փայտերով փորփրում էին գետինը՝ հուդայի աչքերը հանելու համար»: Այդ օրը ոմանք նաև «ձու էին ներկում, որպեսզի աչքը տրաքի»:

Ուրբաթ օրվա ուտելիքի առանձնահատկությունը կծու-թթվի անպայման օգտագործումն էր: Օրինակ, մարաշցիները «քացխլա շովրո», (քացախ ապուր) էին ուտում (քացախով համեմված ոսպապուր): Լոռիում «բանջար էին եփում, որպեսզի դրա ծակող զորությունը ոչնչանա, որովհետև Քրիստոսին բանջարով են ծեծել»: Մուշում կաղամբի թթու էին եփում, որ կոչվում էր «օձի թթու»:

Այս ուրբաթ կանայք բաղարջ էին թխում տան անդամների թվով, իսկ ոմանք՝ նաև ննջեցյալների անունով. վերջինս բաժանում էին (հարևաններին, աղքատներին):

Որոշ տեղեր այս ուրբաթը մեռելոց էր դիտվում և այցելում էին գերեզմանները: Այդպես էր հատկապես Վասպուրականում: Այստեղ ընդունված չէր հեռու տեղերում մահացած իրենց բարեկամների թաղումներին անպայման ներկա լինելու սովորությունը: Դրան փոխարինում էր «ուրբաթ» գնալու պարտավորությունը, որ տարածվում էր Ս. Խաչի տոնից հետո մահացած մարդկանց հարազատների վրա: Մեծ Զատիկին նախորդող ուրբաթը բացում էր այդ տարվա ննջեցյալների գերեզմաններն օրհնել տալու շրջան, որին մասնակցող հեռու ու մոտիկ հարազատներն իրենց հետ որոշ նվերներ էին բերում՝ գլխաշոր, շաքար, բաղարջ, ձու, հալվա և այլն: Երեկոյան համատեղ հոգեհաց-ընթրիքը խորհուրդ ուներ «սգից հանելու» ննջեցյալի ընտանիքի անդամներին:

Իսկ ի՞նչ չէր կարելի անել. «ծուռը չդնել, որովհետև Քրիստոսը խաչին է, խաչ չհանել, որովհետև Քրիստոսը խաչված է, դրամ փոխ չտալ և չառնել, որովհետև Քրիստոսը դրամի համար է մատնված» (Լոռի), «մուրճ չբանեցնել, որովհետև մուրճով են բևեռել Տիրոջը, փայտ չտաշել, որովհետև Քրիստոսի խաչափայտը տաշել են» (Զավախք): Չէր կարելի նաև մազ հյուսել՝ տարվա ընթացքում գլխացավ չստանալու համար:

Ուրբաթ գիշերը եկեղեցում էին անցկացնում, սգո, տառապանքի, լացի ու վշտի մթնոլորտում: Սակայն այդ ծանր, ցավով ու վշտով լի գիշերը վերջակետ էր դնում կենցաղային ու հոգեկան ինքնազսպման ու ժուժկալության իրական և ծիսական շրջային նոր, աշխատանքով և ուրախությամբ լեցուն կյանքի հերթական սկիզբը ազդարարելով:

Ահա և ***շաբաթ օրը,***

«Զատկի շաբաթ, կարմիր հավկիթ, կարմիր արև, կանաչ են սար ու ձորեր»:

Պատարագի հետ վառվում էին օջախները, «հարս - աղջիկ փեշ ի գոտիկ՝ քարաքոսով, ավելուկով, դաղձ ու սոխի կճեպով խետտիկ - մետտիկ հավկիթները ներկել սկսան: Մենձ կնդիքն աթարու փեշերը մեջքին ծալած, սալեն ձեռին փլավի բրինձն են քամըմ, ձուկը խաշըմ: Ահան, պատարագի զանգի ձենը - ծընկ, պասը իրա փասա - փուսեն քաշեց»,- պատմում է ականատեսը: Վաղ առավոտյան աղջիկները «ծոմ բերանով մոտակա արտերից նորածիլ բանջար էին հավաքում՝ երեկոյան յուղով - ձվով տապակելու համար, իսկ սամիրը (կաթով եփած կորկոտաճաշ) պարտադիր էր Մեծ Զատիկի խթումի օրը»: Իսկական ժամանակն էր Ակլատիզի վերջին փետուրի հետ պասը դուրս անելու: Պաս պապ-Ակլատիզի վերջին՝ յոթերորդ փետուրը հանելով բուն Ակլատիզին տան երիտասարդները տանում էին կալերը և չարախնդալով, դագանակների հարվածներով դես ու դեն քշելով՝ ջուրը գցում, ազատվում: Շիրակցիներն այդ միջոցին երգում էին.

- Չմեռն անցավ, գարունն եկավ,
Պասը գնաց, ուտիսն եկավ,
Քաշվի, կորի, Զատիկն եկավ:

Այնթափցիները, որոնք փետրազարդ սոխը կոչում էին Խուլուճիկ, Մեծ պասի վերջին օրը այն թաթախում էին մածնի մեջ և նետում տանիքը: Ըստ նրանց պատկերացումների, սոխը դառնում էր մկաններ, խռիվը՝ թևեր, ինքը՝ Խուլուճիկն ամբողջովին՝ թռչուն, որ թռչում - գնում էր հաջորդ տարին վերադառնալու պայմանով: Գեղարքունիքում ակլատիզի փետուրներից մերկացած գունդը՝ «կուկուն» գցում էին թոնիրը: Այսպիսով Պաս պապից ազատվելու ձևերը ի վերջո հանգեցնում էին «պապի»՝ պասի մեռցնելուն: Ամենուր Մեծ պասի ընթացքում որպես ակլատիզ ծառայած սոխի ծլած ծիլը կտրում էին և գցում Զատիկին եփվող կերակրի մեջ: Քղեցի Սուրեն Սարգսյանը նկարագրում է «Խուլուճիկը, որ իր կծու դիմագծով և հավքի թևերով իջնում

է տան երդմուղի բացվածքից Բարեկենդանի վերջին գիշերեն հետո և հոն հաստատում իր իշխանությունը:

- Ես չեմ սիրել Խուլուճիկը,-ասում է պարոն Սարգսյանը: Նա մեր բերանը Բարեկենդանով անուշցնելե հետո յոթը շաբաթ բռնապետի նման փակում է, որ այլևս չմոտենանք խավուրմային, յուղին ու տոմասթին: Մարդիկ Բարեկենդանի օրը կախում են իրենց **աղն ու մատաղը** և դառնում են ոսպով ու սիսեռով ապրող ծգնավորներ... Երբ գալիս է այն պատմական ժամը, երբ քաշում են յոթերորդ փետուրը, հոն դուք ուշք դարձուցեք տանտիկինին, նա դանակը ձեռքը, ասում ես հիմակ գոմեշ պիտի մորթի,-վար է առնում սոխը, վրեժխնդրությամբ կտոր-կտոր անում զայն և նետում է տապկված յուղի մեջ... որ թե իր սիրտը հանգչի, թե հրեշը վերնա մեջտեղից»:

Այսպիսով յոթ շաբաթվա հսկումից հետո դադարում է Ակլատիզի դերակատարումը և գարունը, նորոգ կյանքը մտնում է իր լիակատար իրավունքների մեջ: Վերջանում է պայքարը պապի ու տատի, ձմռան ու գարնան, զսպման ու հաճույքի միջև: Բնության ու հասարակության այս ներդաշնակ պահին է, որ տեղի է ունենում խոստովանությունն ու սուրբ հաղորդությունը, որից հետո միայն պասի երկար ու ձիգ օրերն ավարտվում են կարմիր ներկված ձվով «բերանները բաց անելով»:

Շաբաթը նաև բուն Զատկի տոնին նախապատրաստվելու օրն էր. կարգի էին բերում տոնական հագուստը, հարդարում բնակարանը, արևին էր տրվում անկողինը, ճերմակեցվում էին բնակարանի պատերը, տան դռների շրջանակներին փակցվում էր զատկական կարմիր ձվի կճեպներ, թխվում էին խմորեղենները: Պետք է հիշել, որ Զատկի կերակուրներն եփելիս կամ, գոնե, ձվերը կարմրացնելիս կրակի մեջ օգտագործվում էին նաև Տյառնընդառաջից և Ծաղկազարդից մնացած խանձված ծողերը, ճյուղերն ու ճիպոտները: Հատուկ պատրաստություններ էին տեսնում նշանված տղաների ու աղջիկների ընտանիքներում, որտեղ ներկվող ու զարդարվող ձվերի թիվը մի քանի հարյուրի էր հասնում, թխվող գաթաների ու բաղարջների թիվը՝ տասնյակների: Այստեղ էր, որ աղջիկները ցույց էին տալիս իրենց ճաշակն ու հմտությունը ձվանախշերի հորինվածքներում, ձվերի թելազարդման ու ուլունքազարդման կատարելությամբ: Առատորեն օգտագործվող կանաչ-կարմիր-դեղին բրդյա ու մետաքսյա թելերով «փնջված» ձվերը իրենց պատրաստողների վարպետության վկայություններն էին: Հաջորդ օրվա այցելություններին դրանք մի խնամու տնից մյուսը պիտի գնային ու զարդարեին զատկական սեղանը: Բազմաթիվ էին սոխի կճեպով կարմրացրած ձվերի վրա արված զարդանախշերը: Նորածիլ կանաչի տերևները կամ իրենց կողմից հորինված թղթե նախշերը սոսինձով ամրացնելով ձվին, այն մի քանի ժամով գցում էին թթու թանի մեջ, ապա զգուշությամբ հեռացնում կպցրած նախշը: Դաջվածքի շուրջը թթու թանից գեղեցիկ սպիտակում էր: Այսպիսով, Զատիկին ձվերը «փնջում» էին գույնզգույն թելերով, մանր ուլունքներով, ներկում զանազան, բայց հատկապես կարմիր գույնով, զարդանախշում և այլն:

Երեկոյան պատարագը սովորականից շուտ էր սկսվում, որպեսզի պատարագից հետո դեռ արևը մայր չմտած մարդիկ հասցնեն պասը բացել: Ճիշտ է, շատերը, անհամբերները հետները պատարագին ձու էին տանում և պատարագի ընթացքում «Քրիստոս հարյավ ի մեռելոց» կամ «Առեք կերեք» բառերից հետո հենց եկեղեցում ուտում ձվերը և բացում պասը: Սրանով Մեծ պասն ավարտվում էր:

Երեկոյան պատարագի մասնակիցները շտապում էին տուն՝ տնեցիներին ավետելու Քրիստոսի հարությունը և պասի վերջը: Ճանապարհին, անշուշտ, բոլոր հանդիպողները ողջագուրվում էին և միմյանց հայտնում ուրախ լուրը. «Քրիստոս հարյա՛վ ի մեռելոց», և լսում՝ «Օրհնյալ է հարություն Քրիստոսի»:

Պատարագից հետո շաբաթ օրվա երեկոյան, դեռ արևը մայր չմտած, թաթախման ընթրիքի

սեղանն էր պատրաստվում: Կարգ էր, որ ծննդյան թաթախման ընթրիքը ծրագի լույսի տակ արվեր, այսինքն՝ մթնով, Զատկի թաթախման ընթրիքը՝ արևի լույսի տակ, երեկոյան: Ընթրիքի հիմնական բաղկացուցիչներն էին կարմիր ծուն, ձկնեղենը, փլավը, ձվով տապակած բանջարեղենը, վերջում՝ թանձր եփած թանով սպասը կամ կաթով եփած կորկոտաճաշը: Սակայն մեծ տոնը՝ Զատիկը դեռ առջևում էր: Այն, փաստորեն, սկսվում էր այդ գիշեր:



ԶԱՏԻԿ

Հայոց բոլոր ազգագավառներում Զատիկ, Կարմիր Զատիկ անունով հայտնի տոնը համապատասխանում է եկեղեցական Սուրբ Հարություն տոնին, բայց այստեղ, ինչպես և նախորդ տոների նկարագրության ժամանակ, եկեղեցական ծեսին ու տոնիմաստին չենք անդրադառնա: Ասենք միայն, որ այն շարժական տոն է, այսինքն՝ նշվելու հաստատուն օր չունի: Ամեն տարի այն նշվում է գարնանային օրահավասարին՝ լուսնի լրմանը հաջորդող կիրակի օրը, այսինքն՝ միշտ մարտի 22-ից հետո, 35 օրերի ընթացքում այն կիրակի օրը, որը տվյալ տարին հաջորդում է համապատասխան լուսնի լրմանը:

Մեծ պասի վերջին շաբաթվա բոլոր սպասումները, տոնական հուզումները հագուրդ պիտի ստանային այսօր, և հիրավի, դրանք լիովին փոխհատուցվում էին: Զատիկ օրը, ասում էին, բախտ են բաժանում. ով այդ օրը քներ՝ բախտից կզրկվեր: Բայց ո՞վ կքներ. աշխատանքը և ուրախությունը եռում էր: Զատկի տոնի բոլոր նախապատրաստությունները տեսնվում էին, բայց դեռ չէին ավարտվում. գլխավորը՝ զատկական մատաղը, դեռ մնում էր: Այդ մատաղը սովորաբար հասարակական էր, այսինքն՝ համայնքի, գյուղի բոլոր ընտանիքները մասն ունեին այդ մատաղի մեջ: Հավաքված դրամով նախապես գնված մեկ կամ մի քանի եզները, կամ մի քանի ոչխարները շաբաթ երեկո զոհաբերվում էին եկեղեցու բակում և գիշերը եփվում խոշոր կաթսաներում: Զատկի մատաղը «ախառ» էր կոչվում և տարվա ամենաթանկ մատաղն էր համարվում:«Էս տարի սաղ գեղը մեկ եղած մէ տեղ էր մորթել ախառը,- նկարագրում է ականատեսը շիրակցիների կյանքից:- Գեղամիջի տուն գլօխ, ինչքան որ սրտերեն կանցներ, իրենց կարողության չափ, մեկ-մեկ, երկու-երկու կոտ ցորեն ժողովելով՝ ընդուր գնով էրգու մատղացու եզ առան: Իրիկունն այդ եզներու կոտոշներուն չալ ու չառպաստ մոմերը զարկած, վառելով, հետն էլ մի չանաղ աղ բերին ժամի դուռը: Տերտերն էկավ, օրհնեց աղը ու մատղացուները: Աղը տվին եզներուն ու տուն գլուխ մէ մարդ թոփ եղած տարան մատաղները կտրելու»,-պատմում է քսաներորդ դարի սկզբի Զատիկ տոնի ականատեսը: Բոլոր ցանկացողները մատաղի արյան մեջ թաթախում էին բռինչ ծառի հաստ ճյուղը և տնկում իրենց այգում կամ արտում՝ այն չար աչքից պաշտպանելու համար: Զատկական մատաղը, որ համարյա ամենուր «ախառ» էր կոչվում, հսկում էին համայնքի կողմից ընտրված արդար մարդիկ, իսկ եփվող կաթսաների շուրջ հավաքված երիտասարդները մինչև լույս խաղում էին զատկական ամենասիրված խաղը՝ ձվախաղը: Ձվախաղերը տարբեր էին, սակայն ամենահայտնի ձևերը հանգում էին հետևյալին.

- *Խաղում են երկուսով: Որոշում են, թե ով է առաջինը խփելու, և որոշյալը խփում է խաղընկերոջ բռան մեջ գտնվող ձվի երևացող սուր գագաթին: Եթե առաջին հարվածից ջարդվում է խփվող ձուն, խաղընկերն իրավունք ունի դեմ տալու նաև ձվի բութ գագաթը: Եթե ջարդվում է նաև երկրորդ գագաթը, ապա ջարդված ձուն տրվում*

է խփողին: Կարող են պայմանավորվել նաև այնպես, որ եթե խփողը ծուն ջարդում է, ապա նա ջարդված ծվի տիրոջից ստանում է մի ամբողջական, չխփված ծու: Եթե ջարդվում է խփողի ծուն, ապա նա պարտված կողմն է և անմիջապես խաղընկերոջն է հանձնում իր ջարդված ծուն կամ, ըստ պայմանավորվածության, մեկ ամբողջական, չջարդված ծու:

- *Մի քանի մարդկանցից բաղկացած խումբը միմյանց ետևից գլորում են իրենց ծվերը թեքության վրա և ջանում, որ այն դիպչի իրենից առաջ գլորածներից որևէ մեկի ծվին: Այդ դեպքում նա տիրանում էր մինչ այդ գլորված բոլոր ծվերին: Այս խաղը կարող են խաղալ նաև ջարդված ծվերով:*
- *Երեք-չորս-հինգ մարդ միաժամանակ, նույն գծից թեքության վրա գլորում են իրենց ծվերը: Ում ծուն ամենից ավելի արագ և երկար է գնում՝ նա շահում է բոլոր գլորած ծվերը: Այս խաղը կարող են խաղալ նաև ջարդված ծվերով:*
- *Երկու-երեք հոգի միաժամանակ, դատավորի հրահանգով, պտտեցնում են իրենց ծվերը: Ում ծուն ամենից ավելի երկար պտտվի, նա շահում է բոլոր պտտվող ծվերը: Սկզբունքորեն այս խաղը կարող են խաղալ նաև ջարդված ծվերով, բայց եթե խաղացողներից մեկի ծուն ամբողջական է, նրա շահելու շանսերը մեծ են:*

Ողջ գիշեր, անշուշտ, երգեր էին երգվում. երգում էին մատաղի եփը հսկողները, ծու կռվեցնողներն ու խաղացողները...) Մարդկանց հոգին խինդով էր լցված, և այն դուրս գալու ելքեր էր փնտրում: Զատկական երգերն անսպառ էին և կային կյանքի բոլոր իրավիճակների համար՝ խնջույքի, մրցույթի, սիրո խոստովանության, օրորոցային... Անհրաժեշտության դեպքում նաև հորինվում էին, բայց, իհարկե, զատկական տրամաբանությամբ՝ կամ գարնան գալստի ավետումով, կամ Քրիստոսի հարության ավետումով, կամ ծվերի, ախառի, կարմիր Զատկի հիշատակումով...: Բոլոր դեպքերում սիրո ու բարեկեցության, հաջողության մաղթանքները միշտ տեղին էին:

Մարտը կուգար ծաղկըներով,
Երկնից հաւքերն կարդըլով,
Ահա եկաւ մեզ սուրբ Զատիկ,
Բերենք ներկենք կարմիր հաւկիթ:

* * *

Արեւն է ծագեր վէր մեր երդիքին,
Ծագեր է ծագեր լոյս Լուսաւորչին:
Զատիկն է բերե լոյս մեր երդիքին,
Հաւիկն է արթուն սուրբ Կարապետին.
Կարմիր է հաւկիթն մեր սուրբ Զատիկին,
Հաւիկն է ածել սուրբ Կարապետին:

* * *

Գինին է կարմիր, տերտերը կ'օրհնէ,
Զատիկն է եկել, մատաղը կ'օրհնէ,
Մեր մատաղիկն է մեր աքլորիկ,
Մեռնեմ ես նրա խորոտ կատարին:

Զատիկն է մեր հաւկթիկ,
Նշխուն է մեր հաւկթիկ,
Օրոր, իմ զաւակիկ,
Օրոր, աչքիս լուսիկ,
Օրոր, Լուսաւորչիս,
Օրոր, իմ զաւակիս:

Մինչ մատաղները եփվում էին, նաև գիշերային պարահանդեսներ ու խաղեր էին լինում, որոնց մասնակիցները բոլորն էին՝ աղջիկներն ու տղաները, կանայք ու տղամարդիկ, և դեռ նրանք տարեցների գովեստը պիտի լսեին: Հիրավի շատ գեղեցիկ է նկարագրել Վահան վարդապետը իր տեսած զատկական գիշերը. «Միայն տաղերը չեն, որ սրտերին հոգեկան ավյուն ու խանդ են ներշնչում, այլ կան խաղեր, զատկական խաղեր, որոնք կարմիր հավկիթներով զարդարված լուսաղբյուրների մոտ են: Այս հավկիթները գովեստների հետ միասին տարեցների դողդոջուն ձեռքերից պիտի ստանան լավագույն պարողները: Աշուղները սազերն են նվագում և արծաթազարդ գլուխներով աղջիկները թեթևոտն պարում են «կճույթը»: Պարկեշտ հարսները «շորոր» անելով, դեմ-դիմաց ունենալով պատանիների շարքը, մերթ ընդ մերթ միմյանց մոտենալով և ետ քաշվելով՝ «ծափ»-ն են պարում, կամ՝ թևերը միմյանց ուսերին ձգած «ցատքըտանն» են պարում՝ քրդական «նաղարան» էլ խառնելով: Իսկ կարմիր շապիկ հագած և լաչակը վեր ձգած կանայք բոլորածև «դուրան» պարն են պարում: Հա՞րկ է արդյոք հիշել «վազքը» և «վարձքը». երիտասարդները շնչասպառ, հևիհև վազում են բարձր, հեռավոր վայրում նահապետի գավազանից կախված կարմիր հավկիթը վերցնելու: Հապա կարմիր ներկված գառնուկները, ուլիկներն ու մյուս անասուննե՞րը, որ այսօր արձակվել են, օրհնվել նահապետի կողմից և լուսաղբյուրի ջրով ցողվել, որպեսզի կենդանիներն էլ մասնակցեն զատկական ուրախություններին»:

Այդ նույն գիշեր ում տանը երեխա ծնվեր՝ մեծ բախտավորություն էր համարվում: Զատկի գիշերը ծնված երեխան եղունգ նայելու և գուշակելու շնորհքով օժտված էր համարվում: Նրա հայրը գառ կամ սև ուլ էր մատաղ անում և թիակները պահում, որպեսզի նորածինը մեծանալուց հետո այդ գառան թիակներին նայելով գուշակություններ աներ, գտներ կորած, գողացված իրերը և այլն: Այդ կապակցությամբ նույնիսկ հատուկ օրորոցային երգ կա.

Դան արա, դանդան արա,
Ղոչ գառը քի մատաղ արա,
Օսկոռը քի սայյա արա,
Մեջը նստե՝ դիվան արա:

Այդ գիշեր ծնված երեխայի ծննդյան լուրն անմիջապես տարածվում էր և հաջորդ օրը՝ Զատկի կիրակի, նրա ծնողները շնորհավորանքներ էին ստանում, իսկ ազգականները այցելում էին նրանց տուն՝ հատուկ մատաղը վայելելու: Սասունում այդ դեպքերում մի ամբողջ արարողություն էր արվում: այդ օրը ծնված երեխան այստեղ «փեջրար» էր կոչվում, այսինքն «փեջին»՝ գառան թիկնոսկրին նայելով գուշակություն անող: Նրա այդ կարողությունն ամրապնդելու նպատակով «փեջի»՝ մատաղացու գառան թիկնոսկրի լայն մասում պտուկի չափով անցք էին բացում, և առաջին անգամ երեխան մոր ստինքը բռնում ու կաթը ծծում էր այդ անցքով: Այդպես կերակրում էին յոթ օր, ապա «փեջը» տանում արտում թաղում էին այնպես, որ դրա մեջ արված անցքից ցորենի ծիլերն անցնեին և աճեին: Խնամքով հսկում էին այդ ցողուններն ու հասկերը, դրանց հատիկները աղում, խյուս անում և երեխային ուտեցնում էին՝ որպես մոր կաթից հետո առաջին սնունդ:

Գիշերային ուրախություններից, եռուզեռից, խաղերից հոգնած մարդիկ առավոտյան կողմ փորձում էին մի երկու ժամ քնել. բուն տոնահանդեսը դեռ առջևում էր, հարկավոր էր ուժ ունենալ: Սակայն ոմանք հենց արևածագից առաջ ակնդետ երկնքին էին նայում՝ արևելյան կողմը, տեսնելու հարությունն ավետող ղոչի դուրս գալը: Արցախի Քարին տակ գյուղում պատմում էին, որ արդար մարդիկ ամեն անգամ այդ օրը տեսնում էին, թե ինչպես է ղոչը երևում երկնքում, մի քանի րոպե խաղում արևի առաջ և անհետանում: Շիրակի մասին պատմողը մասնավորապես ասում է, թե «Զատկի առավոտը, երբ որ արևը նոր պիտի մորից դուրս գա, եթե լավ նկատես, կտեսնես, որ սովորականից դուրս, հանկարծ մի քանի մղրախաբոյ ցատկելով՝ դուրս կը թռչի, և ի պատիվ սուրբ Հարության՝ երկու ամբողջ ժամ անշարժ կանգնելով, աշխարհի չորս կողմին բարև կտա ու Քրիստոսի սուրբ Հարությունը արարոց աշխարհին ավետելով, նորից կսկսի առաջ գնալ: Այդ է պատճառը, որ Զատկի օրը մյուս օրերից երկու ժամ ավելի երկար է»:

Իսկ էջմիածնում շարունակում էին Նոր տարուն բնորոշ գուշակությունը. ոմանք տանիքին դնում էին մի կտոր հաց և հետևում, թե ուր կտանի թռչունը. եթե թռչեր գերեզմանների կողմը, գուշակողը մինչև մյուս Զատիկ կմահանար:

Վաղ առավոտյան, եկեղեցու զանգերը հնչելուն պես, ողջ հասարակությունը, տոնականորեն հագնված, շտապում էր եկեղեցի: Ժամերգությունից հետո, շատերը նախապես պայմանավորված լինելով, «ողջումաղբեր» կամ «ողջումաքույր» էին դառնում, այսինքն՝ քահանայի օրհնությունն ստանալով, եղբայրանում ու քույրանում էին միմյանց հետ: Զատկական քույր-եղբայրությունը սրբորեն պահվում էր և խորապես հարգվում հասարակության կողմից: Նրանց միջև ամուսնությունն այնուհետև արգելվում էր:

Սակայն եկել է մատաղը բաժանելու ժամը. «Ժամը որ արծակվեց,- նկարագրում է Պերճ Պռոշյանը,- տունը մի մարդ մի-մին փարխաջ (դույլ) ու աղլուխ ձեռներին կիտվեցին մատաղի կշտին ու մի փարխաջ մատաղի շորվա ու քանի էլ տանը հոգի կան, ծծկեր երեխեցը բռնած, ընչանք հալիվորներն ու պառավները, ամենի համար մի-մին լոշի մեջ փաթաթած մատաղ առան: Էսօր ամեն տանն էլ անպատճառ պտի մատաղի ջրով շորվա ըլի. ընչանք սուրբ ախառով չթաթախվեն, բերանները նշխարք չեն դնիլ, թեկուզ թուր ու սուր խաղացնես երեսներին, շլինքներովն օձ փաթաթվի»: «Զատկի կիրակի առավոտյան հայ քրիստոնեն պտի ծեգելահան ախառի մսով բերան բաց անի»; «էն քրիստոնեն, որ ախառով չմասնավորվի, սաղ տարին իրավունք չունի մսի համ տեսնելու»,-ասվում էր հայոց մեջ: Ախառը բաժանողները նույնպես շատ արդարամիտ, հարգանք ու վստահություն վայելող մարդիկ պիտի լինեին. «Զատիկ ախառ օրը մատաղ բաժանողներին կտակ եմ անում» արտահայտությունը սպառիչ վկայում է այդ մարդկանց բնութագիրը: Մատաղ ստացողները մաղթում էին հասարակության ընդհանուր բարեկեցություն,- «այս տարի մեր հորերը ցորեն-գարով լցվեն, արտերում ցորենը թումբ տա» և այլն:

Իսկ Լոռվա Օձուն գյուղում մինչև ախառը բաժանելը հավաքված բազմության առաջ մի քանի մարդ երգելով ավետում էին Քրիստոսի հարությունը, երգն ավարտելով հետևյալ բարեմաղթություններով.

Օրհնվի և պահպանվի
Ձեր դաշտն ու սարը, այծն ու ոչխարը,
Կովն ու կթանը, չութն ու գութանը,
Վարն ու վաստակը, գլուխն ու տակը,
Հանդն ու հանդստանը, արոտն ու այգեստանը,
Կալն ու ջաղացը, ցորենն ու հացը,
Ձին ու էշը, եզն ու գոմեշը,

Գառնարածը ու ոչխարածը,
Տվարածն ու հորթարածը:

Այս նույն Օձուն գյուղում զատկական ախառից զատ սովորություն կար նաև «թուրքատարուկ» մատաղ անել: Դա նույն համայնքի հավաքված միջոցներով գնված խոզն էր, որի միսը ախառի հետ հավասար բաժանում էին հասարակությանը՝ իբրև թե որպես թուրքերի հանդեպ տարած հաղթանակի վկայություն: Զատկի ախառն ամբողջովին ուտվում էր, իսկ ոսկորները, ում բաժնի մեջ դրանք լիներ, պահվում էին ամբողջ տարին. այդ ոսկորները տանը պահելու դեպքում տուն մրջյուն չէր մտնի:

Ախառն ուտելուց հետո էր, որ սկսվում էին այցելությունները և շնորհավորանքները: Դեռ կային նաև անհատական մատաղները, որ նույնպես «ախառ» էին կոչվում: Դրանք կարող էին լինել տարին չլրացած գառ, այծ, աքլոր: Բոլոր նշանված աղջիկներին փեսացուի ընտանիքից վզին կամ պոզին կարմիր ժապավեն կապած այդպիսի մի գառ էին ուղարկում՝ որպես մատաղացու, և խնամիների այցելության պահին այս մատաղն արդեն եփված-պատրաստ էր: Անհրաժեշտ այցելությունները խնամիների մեջ էին, հատկապես՝ նշանված տղայի ընտանիքի կանայք իրենց բարեկամուհիներով «զատկափայ» էին տանում հարսնացուին, որի բաղկացուցիչներն էին, անշուշտ, զարդարուն ձվերը, գաթաները ինչպես նաև տապակած - խաշած հավեր, քաղցրավենիք, որևէ նվեր հարսնացուին: Այս վերջինիս կողմից էլ բաժին էր ուղարկվում փեսացուին, և սրա գլխավոր զարդը կազմում էր հարսնացուի փնջած ձուն:







Այդ օրը տղամարդիկ եզները տանում էին դաշտ՝ նախապես նրանց կոտոշները կարմիր ներկով ներկելով: Նրանք պիտի պտտվեին «ծյունի հետ ունեցած կենակցությունից ծոցվոր դարձած հողի վրա»: Պայծառ եղանակին պարտադիր այցելություններից հետո, նախապես կազմված ազգականների խմբերով, մարդիկ նույնպես դուրս էին գալիս դաշտում խնջույքները շարունակելու: Այստեղ է, որ սկսվում էին խաղերն ու պարերը, որ այսուհետև պիտի շարունակվեին մի քանի օր կամ, որ ավելի ճիշտ է, համարյա երեք շաբաթ՝ բոլոր կիրակիները: «Արի, դու էստեղ ազապ տղերանց հունարը տես, ով մի քիչ հունար ունի, պիտի զարմացնի աղջկերանցն: Չիանը թամքել են, ղաջարու (ձիու ծածկոց) ապրշումի փնջուխները կախ քցել, մի-մի ջիրիդ ձեռներին բռնել ու ձիու վրա հենց սարքված նստել են, որ կասես ամեն մինը մի խանի տղա ըլնի»: Ջուռնան նվագում է ձիարշավի եղանակը և սկսվում է մրցույթը զվարճացող բազմությանը ի տես: «Չիու խաղը վերջացավ,- շարունակում է Պ.Պռոշյանը,- հերթն ընկավ աղջկերանցը: Դափն ու զուռնեն ածեցին ու յալլիբաշի (պարագլուխ) խանումը վեր կացավ տեղիցը, մի ձեռն աղլուխ առավ, մեկել կուժն էլ քըցեց իրա հարսին ու սկսեց խաղալ: Ջուռնեն ճռներն էր ընկել, հենց կոտրատվելով ժաժ էր գալի, մի-մին էլ աղլուխը պտտելով, որ ամենի սիրտն էլ հասրաք քցեց: Քոմմա էլ տեղներիցը վեր կացան՝ յալլին տաքացրին ու ծանր ու բարակ սկսեցին տմբտմբալով, լնկլնկալով պտիտ գալ: Աչքները խանումի վրա էր, նա ոտը ոնց փոխում էր, նրանք էլ հետը»:

Անչափահասներն ու պատանիներն էլ, երբ ձանձրանում էին ձու կռվեցնելուց ու գլորելուց, դարձյալ երգելով շրջում էին տնետուն և կարմիր ձվի նոր պաշարներ հավաքում առաջիկա խաղերի համար: Այդ օրերին էջմիածնում և շրջակայքում երգվող երգերից էին, օրինակ.

Երագ, ճրագ, ճշմարիտ,
Ճշմարիտ է Մարգարիտ,
Անմահական բանալիք,
Տար դրախտի դուռը բաց,
Քաղի անթառամ ծաղիկ,
Բեր դիր գլխիս տակ,
Վեր կենամ երազս բարի,
Ինչ խնդրեմ Տերը կատարի,
Երկնքի դուռը բաց ա,
Քրիստոս վրեն նստած ա,
Ոսկե գրիչ բռնած ա,
Լիսավորիչ կանգնած ա,
Մեծ ու պստիկ գրում էին,
Արդարներն խաղում էին,
Մեղավորներն լալում էին:

Ջատիկը թե՛ երգերի, թե՛ պարերի, թե՛ խաղերի ստեղծագործության անսպառ հնարավորություն էր տալիս: Հանպատրաստի, անպաճույճ երգերը, որով մայրերը շնորհավորում էին իրենց զավակներին, զավակները՝ ծնողներին, պարերգերը, որ ծնվում էին տղաների և աղջիկների մրցակից պարող խմբերի միջև, հիրավի ժողովրդական բանահյուսության գեղեցիկ նմուշներ են: Ահա, օրինակ, ինչպես էր մայրը շնորհավորում որդու Ջատիկը.

Ա տղա, տղա,
Դու ալ կպավոր,

Ղռմզի շալ կապավոր,
Դու իմ հայոց դաքավոր,
Բոթլով գինի խտուրն,
Ասամանի կապավոր,
Քո Զադիքը շնորհավոր:
Այս երգն էլ դստերն է ուղղված.
Օվսաննա ջան, Օվսաննա,
Ուրախ Զադիք լուսանա,
Բաբիդ գա Հնդստանա,
Բեռներ բերի քաթանա,
Քաթան դոշագ տակիտ է,
Ջառ թակալեն հագիտ է:

Բայց երգերի մաղթանքների ամենամեծ բաժինը, անշուշտ, անձրևինն էր, ցորենինը, հացինը.

Բյուրապատի՞կ, բյուրն պատիկ,
Ոսկե հատիկ ցորեն բշիկ,
Տա Աստված հազար Զատիկ,
Դուք լավ լինեք, շեն լինեք,
Տա ձեր արտին Աստված անձրև,
Ձեր ամենին՝ երկար արև,
Տեր, թոն արա, թոն, թոն արա,
Գարի հացը բոլ-բոլ արա:
Բյուրապատիկն եմ, փայ կուզեմ,
Չուլ եմ հագել, փայ կուզեմ,
Կարմիր կովի եղը կուզեմ,
Սև հավի հավկիթը կուզեմ:

Երգերի մեծ մասը խիստ պատկերավոր է, նուրբ, բնական, միաժամանակ՝ լիրիկական ու սյուժետային: Երգերում գովերգվում է անուշ հովը, անուշ լուսնյակը, անձրևի անուշ հոտը, հում կաթի անուշ պաղ սերը....

Քամին սարին զղզղաց,
Բարակ անձրև շղշղաց,
Դալար տերև դողդողաց:
Լուսնակն անուշ, հովն անուշ,
Անձրևի հոտն անուշ:

Երկար գոմը սալեցին,
Սև ձին մեջը նալեցին,
Սպիտակ ճակատ նշնեցին:
Լուսնակն անուշ, հովն անուշ,
Աղոթրանի լույսն անուշ:

Դռան առաջ հերկեցին,
Ջատկի ձվեր ներկեցին,
Դրկցին ողջույն տվեցին:
Լուսնակն անուշ, հովն անուշ,
Հում կաթի պաղ սերն անուշ:

Պար Բարեկենդանի և Ջատիկի (կանանց խմբապար)

Եալալի, եալալի, եկանք ի Բարկենտանք, երթանք, երթանք ի Ջատիկ,
Եալալի, եալալի, Աճապ մեկզմեկէ ինտոր տի զատինք,
Եալալի, եալալի, Կինէ եկաւ գարնան երկան օրերը,
Եալալի, եալալի, Հալեցավ ձները, ելավ գետերը,
Եալալի, եալալի, Բուսավ առուեզերուն կանաչ խոտերը,
Եալալի, եալալի, Կագվուկ, խնդաս երկու ձագկանը արևը,
Եալալի, եալալի, Թռչիս, իյնաս Ստամպօլու վերևը,
Եալալի, եալալի, Շատ հաց ու շատ բարև խրկեմ խարիպիս,
Եալալի, եալալի, Խարիպիս, խարիպիս, մեկիկ ախպորս:
Եալալի, եալալի, Այս երկու օրերը, Ջատկուն կիրակին,
Եալալի, եալալի, Ավաղ, մեր խարիպներն ին խարիպ երկիր:
Եալալի, եալալի, Ել եկուր, ել եկուր, խավլդ խարար է (պայմանդ բավական է),
Եալալի, եալալի, Իրեք տարին մեկ կտրիճին խարար է:
Եալալի, եալալի, Շատ կենալը քու արևուն զարար է,
Եալալի, եալալի, Ես ալ Ստամպօլու վարպետ պիտեի,
Եալալի, եալալի, Ստամպօլ քակեի, նորից շինեի,
Եալալի, եալալի, Վաղուց գնացողը սիլայ (հայրենիք) խրկեի:

Պատասխանը՝

Սիլաս ուր միտքս ինկավ, կերթամ, չիմ կենար,
Եաման աս տերդերուն ալ չեմ դիմանար,
Ստամպօլու սուրբ ժամեր ու սուրբ խաչեր,
Իմ տեր, մուրատս տուր, սիլաս իմ դարձեր,
Սիլաս ուր միտքս ինկավ, կերթամ, չեմ կենար.....

Ջատկի պար

Եալալի, եալալի, Մեր Տերն արուց ելել է,
Եալալի, եալալի, Հավը կարմիր ածեր է,
Եալալի, եալալի, Պողոս երազ տեսեր է,
Եալալի, եալալի, Պողոս, երազդ ի բարին,
Եալալի, եալալի, Շնորհավոր Նոր տարի,
Եալալի, եալալի, Նոր տարի ու նոր բարի:
Եալալի, եալալի, Աղբարս ի ուր ուր է,
Եալալի, եալալի, Պառկեր պախճան ի քուն է,

Եալալի, եալալի, Խումաշ բարծը գլխուն է,
Եալալի, եալալի, Ջուր վերևօքն անցեր է,
Եալալի, եալալի, Խումաշ բարծը թրջեր է,
Եալալի, եալալի, Աղբար, ելի ատ քնուն,
Եալալի, եալալի, Գինի խմե, աս գինուն,
Եալալի, եալալի, Գինին անպակ ի, խմե:

Բարեկենդանից մեզ արդեն ծանոթ պարերն ու պարերգերը շարունակվում, բայց նաև լրացվում էին գարնան գալուստի ուրախությամբ հագեցած կատակներով, զվարճախոսություններով.

Աղջիկ-Մեր տյուռնը ճըռճըռում ա,- ա տղա, տյու մի կյալ-կյալ,
Տղա-Ձեր տյուռնը ճըռճըռում ա,- մի ջամ ջրով կյամ, կյամ,
Աղջիկ-Մեր շունը հըչմաչում ա,- ա տղա, տյու մի կյալ, կյալ,
Տղա-Ձեր շունը հըչմաչում ա,- մի ճոթ հացով կյամ, կյամ,
- Մեր որձակը ծկըլթում ա,- ա տղա, տյու մի կյալ, կյալ,
- Ձեր որձակը ծկըլթում ա,- մի հափուռ կուտով կյամ, կյամ,
- Մեր խոխեքը լցմացում են - ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր խոխեքը լցմացում են՝ մին ջուբ չամչով կյամ-կյամ,
- Մեր ճըրաքը տըզվզում ա,- ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Մեր ճըրաքը տըզվզում ա - մին բժուրիկ նոթով կյամ-կյամ,
- Մեր կրակը թսվսում ա - ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր կրակը թսվսում ա՝ մին բեռ փայտով կյամ-կյամ,
- Մեր պառավը մըրթմըրթում ա, ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր պառավը մըրթմըրթում ա, մին հաց-մեղրով կյամ-կյամ,
- Մեր հալիվորը տընքըտընքում ա - ա տղա տյու մի կյալ- կյալ,
- Ձեր հալիվորը տընքըտընքում ա - մին կոլա գինով կյամ-կյամ,
- Մեր ձիանքը խըրխընջում են, ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր ձիանքը խըրխընջում են՝ մին խուրում յոնջով կյամ-կյամ,
- Մեր եզնիքը պռմռանչում են - ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր եզնիքը պռմռանչում են՝ - մին ճուվար տարմանով կյամ-կյամ,
- Մեր կովերը մըկմըկում են - ա տղա տյու մի կյալ-կյալ,·
- Ձեր կովերը մըկմըկում են՝-- մին խորում խոտով կյամ-կյամ,
- Մեր հորթերը կըմկըմում են ՝- ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր հորթերը մըկմըկում են՝ - մին քիչ կաթնեվ կյամ-կյամ,
- Մեր գոմաշները դըռլընկում են - ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր գումաշները դըռլընկում են ՝ մին խուրցի փոքավ կյամ-կյամ,
- Մեր իշերը գըռգըռում են - տղա տյու մի կյալ- կյալ,
- Ձեր իշերը գըռգըռում են - մին կուշ կարով կյամ-կյամ,
- Մեր նանին ճղճղում ա - ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր նանին ճղճղում ա ՝ մին շամխի քթկալով կյամ-կյամ,
- Մեր աղբերը կռվռում ա- ա տղա տյու մի կյալ-կյալ,
- Ձեր աղբերը կռվռում ա ՝ մին մղայի փափաղով կյամ-կյամ:

Նույն երգի արցախյան տարբերակը.

Տղա - *Սարերը ձիևը կոխալ ա,*
Քարհա, ես հո՞ւնց կյամ:
Աղջիկ - *Սարերը ձիևը կոխալ ա,*
Կանաչ թըլավ եկ:
Տղա - *Փողոց, փողոց պղնձի ա,*
Քարհա, ես հո՞ւնց կյամ:
Աղջիկ - *Փողոց, փողոց պղնձի ա,*
Լեն կըրմնջավն եկ:
Տղա- *Կտոր, կտոր լուսընկյա ա,*
Քարհա, ես հո՞ւնց կյամ:
Աղջիկ - *Կտոր, կտոր լուսընկյա ա,*
Օառեն շուքավը եկ:
Տղա - *Ձեր պառավը մըրթմըրթում ա,*
Քարհա, ես հո՞ւնց կյամ:
Աղջիկ - *Մեր պառավը մըրթմըրթում ա,*
Ետնուց դըվալավն եկ:
Տղա - *Ձեր շոնը հաչմաչում ա,*
Քարհա, ես հո՞ւնց կյամ:
Աղջիկ - *Մեր շոնը հաչմաչում ա,*
Պատառը քցի, եկ:
Տղա - *Ձեր որցակը ծկլթում ա,*
Քարհա, ես հո՞ւնց կյամ:
Աղջիկ - *Մեր որցակը ծկլթում ա,*
Կետանը քցի, եկ:
Տղա - *Ձեր դոռնը ճռճռում ա,*
Քարհա ես հո՞ւնց կյամ:
Աղջիկ - *Մեր դոռնը ճռճռում ա,*
Տափանը եղե, եկ:

Ու բոլորում էր պարը, շարունակվում անվերջ, կանաչ դաշտի վրա թափված ձվի կարմիր կճեպներից ու գույնզգույն ծաղիկներից կազմված բնական գորգի վրա, ձգվում մինչև մութն ընկնելը առաջիկա երկու օրերին շարունակվելու պայմանով: Շարունակվում էին ձվախաղերը, վարպետ խաղացողներն արդեն դույլերով ձու էին շահել, բայց չէին հեռանում խաղասպարեզից: Զատիկ էր:

Զատիկ էր, և ուրեմն նաև՝ տնօրհնեքի օր: Տնից տուն էին շրջում քահանաները, օրհնում իրենց մեկնված մատուցարանները, որոնց վրա շարված էին թթխմոր, աղ, խունկ, հացահատիկ, ջուր, կաթնեղեն և տան կարևորագույն այլ բարիքներ: Տաճտիրուհին մատուցարանի տակ ևս պահած բաներ ուներ՝ ձու, քակոր, ինչը նույնպես կարևոր էր իրենց համար: Օրհնվում էր բարիքը և տարվա լիությունն ապահովվում էր, իսկ քահանան հեռանում էր լիածեռն վարձատրված: Զատկի օրհնած կարմիր ձուն տանը պահում էին մինչև հաջորդ Զատիկ:

Հաջորդ օրը, երկուշաբթի, Զատկի մեռելոցն էր, տարեկան հինգ կարևորագույն մեռելոցներից մեկը: Բոլորը, նորատի հարսներից զատ, գերեզմանատներում էին, իրենց հետ ունենալով զատկական կերակուրներ: Շատերն այդ օրը անհատական զոհաբերություններ՝ գառներ էին մատաղ անում, որոնց միսը, կարմիր ներկած ձվերի հետ, գերեզմանատուն տարվող առավել անհրաժեշտ կերակրատեսակներից էր:

Պետք է ասել, որ անցյալում «մեռելոցը», մասնավորապես Զատկի և Սուրբ Խաչի, ոչ թե ողբի, այլ ուրախության օր էր: Շատ վայրերում այդ օրերին հենց գերեզմանատներում հացկերույթի սեղաններ էին բացվում, որոնք վեր էին ածվում տոնական խնջույքների: Խաղերը և նույնիսկ պարերը ոչ միայն արգելված չէին, այլև «մեռելոց»- ի անհրաժեշտ ծիսակարգի մեջ էին մտնում, մի տեսակ կարծեք իրենց ուրախությանը հաղորդակից դարձնելով սիրելի հանգուցյալներին: Սգի, ողբի օրերը ուրիշ էին՝ մահացածի տարելիցի, քառասունքի օրերը, Ծառազարդի, Մեծ պասի Ավագ շաբաթվա ուրբաթ օրերը և այլն: Զատկի երկուշաբթի և Սուրբ Խաչի մեռելոցները ուրախ տոներ էին:

Մի հետաքրքիր սովորություն կար Զատկի երկուշաբթի օրը. քարափում, մողեսների բների առաջ շաքարի կտորներ էին դնում՝ որևէ բան խնդրելով: Եթե մողեսը շաքարի կտորը դեպի բունն էր քաշում, խնդրանքը կկատարվեր, եթե ոչ՝ չէր կատարվի:

Վերջացավ Մեծ պասը և սկսվեց մեծ ուտիսի շրջանը: Այլևս մինչև Համբարձման տոնը, քառասուն օրերի ընթացքում, պաս չկա: Բայց կան այլ արգելքներ: Զատկից սկսած մինչև Համբարձում երեկոյան, արևը մայր մտնելուց հետո, կանայք այլևս ոչինչ չէին գործում, այլապես հավկուրություն կստանային, շիլ կամ կարճատես կդառնային: «Համբարձման կիրակմուտ» է կոչվում այդ մասնակի աշխատանքային ինքնազսպումը, որի ընթացքում «ամեն հայ էգը՝ ծաղիկ աղջիկ կամ նոր հարսնուկ, գլուխ կնիկ թե թոռոմ մամիկ,- ամենը կիրակմուտ են պահեր: Քառասնոցին՝ կար չեն կարած, գործ չեն ըրած իրիկունները. կիրակմուտի աշխատանքը «կրակ է»»: Զատկից մինչև Վարդավառ կիրակի էին պահում նաև երկուշաբթի օրերը: Դա «կարկտի կիրակին» էր և նպատակ ուներ արտերը կարկուտից պաշտպանել: Այդ ընթացքի երկուշաբթի օրերին երկանք չէին պտտում, խմոր չէին գնդում և թել չէին կծկում: Ուրբաթ օրերը հերկ չէին անում տղամարդիկ, աշխատում էին առհասարակ հողը չշարժել, «շուռ չտալ», որպեսզի հասկը լավ բուսնի:

Միաժամանակ աշխատում էին մինչև Համբարձում որևէ կերպ մերան կամ կաթ վերցնել հարևանից, որպեսզի նրա կաթի «բարաքյաթն» էլ մերանի կամ կաթի հետ գա իրենց տուն: Բնականաբար ուշի ուշով հետևում էին, որ այդ օրերին իրենք որևէ մեկին կաթ կամ մերան չտան:

Շիրակցիները, վստահ, որ «Մեծ զատկից առաջ չի կարող գարուն գալ», ասույթ ունեն.

Կարմիր Զատիկն ինձ տուր, կարմիր օրերը քեզ տամ:

Վերջում հիշենք այն ասույթները, որոնք կապված են Զատկի հետ և որոնք հրատարակված են Ռ.Հարոյանի «Զատիկ» գրքույկում.

1. ***Զատկե Զատիկ է՞, նավակատիկ է՞, չամչի հատիկ է՞:***
2. ***Ակլատիզը փետելով Զատիկը շուտ չես բերի:***
3. ***Ունեցողի համար ամեն օր Զատիկ է:***
4. ***Կուշտ ուտելը Զատկի իրիկունն է:***
5. ***Կարմիր ձուն Զատկին կսազե:***
6. ***Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:***
7. ***Զատիկը առանց ձվի չի լինի:***
8. ***Զատկից հետո կարմիր հավկիթ:***
9. ***Զատկի ձվի պես բոլորին էլ ատամովս եմ տվել:***
10. ***Հետ Զատկին, հալվան էժանագին:***

11. *Էլի (ժողովրդի) հետ սև օրն էլ Զատիկ է:*
12. *Հենց սովածանաև, Զատկի փլավը միտը կբերեն:*
13. *Պաս չբռնողը Զատկի համը չի գիտենա:*
14. *Ջրօրհնեքը ծրագլիսով, Զատիկը՝ արևլիսով:*
15. *Աղտոտ մարդը Զատկին էլ աղտոտ կլինի:*
16. *Փիս մարդը Զատկին էլ փիս կլինի:*
17. *Գժի համար ամեն օր Զատիկ է:*
18. *Ոչ տոն է, ոչ Զատիկ, խևև է հագել շալե շապիկ:*
19. *Զատիկն ավելի շուտ եկավ, քան Նավակատիկը:*
20. *Հազարից մի օր Զատիկ, էն էլ՝ Նավակատիկ:*
21. *Հերվա Զատիկդ շնորհավոր լինի:*
22. *Մինչև Զատիկը գա, Հարոյի հարսն էլ հերանց կգնա:*
23. *Յա կորեկի կալին կլինի, յա էշի Զատկին:*
24. *Էշի Զատիկը յոնջի հետ է դուրս գալիս:*
25. *Էշի Զատկին, գելի Բարեկենդանին:*
26. *Հավը կուտե հատիկ-հատիկ, ծով ծմեռնե կելնի Զատիկ:*
27. *Զատիկն ասել ա՝ հենց գամ արմանաս, հենց գնամ՝ զարմանաս:*
28. *Զատիկն էկավ՝ չունեմ կապա,*
    ով ևվիրի ինձ մի կապա, նրան կասեմ Հաջի պապա:
29. *Ծառզարդար - Զադկե Զադիկ:*



Գրականություն

1. Ամատունի Ս. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 8, 32, 60, 327, 334:
2. Արշարունի Ա. Հայ ժողովրդական թատերախաղեր, Երևան, 1961, էջ 106-111:
3. Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 94-95:
4. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 337-338:
5. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 69:
6. Գրիգորյան Ռ. Գեղարքունիք, ՀԱԲ, հ.14, Երևան, 1983:
7. Լալայան Ե. Ջավախք,Երկեր, հ.1, երևան, 1983, էջ 280-289:
8. Լալայան Ե. Վարանդա, Երկեր, հ.2, երևան, 1988, էջ 197-200:
9. Լալայան Ե. Գանձակ, Երկեր, հ.2, երևան, 1988, էջ 447-450:
10. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898, էջ 255-257:
11. Լալայան Ե. Զանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, 108-112:
12. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 223-225, 260:
13. Լալայան Ե. Գողթան գավառ, ԱՀ, գիրք 12, Թիֆլիս, 1904, էջ 152:
14. Լալայան Ե. Վայոց ձոր, ԱՀ, գիրք 16, հ.2, Թիֆլիս, 1906, էջ 149,:
15. Լալայան Ե. Նոր Բայազետի գավառ, ԱՀ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908, էջ 124-125:
16. Լալայան Ե. Վասպուրական. հավատք, ԱՀ, գիրք 25, հ.2, Թիֆլիս, 1913, էջ 42:
17. Լալայան Ե. Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք 26, Թիֆլիս, 1916, էջ 193:
18. Լիսիցյան Ս. Զանգեզուրի հայերը, երևան, 1969, էջ 109-111:
19. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, երևան, 1981, էջ 70-71:
20. Խաչատրյան Ժ. Ջավախքի հայ ժողովրդական պարերը, ՀԱԲ, հ.7, Երևան, 1975, էջ 50-52:
21. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 230-235:
22. Հարոյան Ռուդիկ, Ջատիկ, Երեվան, 1996:
23. Ճանիկեան, Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 106; 425-426:
24. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 93-143:
25. Միքայելյան Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրապոլ, 1901, էջ 195, 264-269:
26. Միքայելյան Գ. Նոր Բայազետ, ՀԱԲ, հ.11, Երևան, 1980, էջ 140, 145:
27. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972, էջ 43-45:
28. Նազարեանց Հ. Նախապաշարմունք, Տփխիս, 1878, էջ էբ, 78-80:
29. Շահազիզ Ե. Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 221-223:
30. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 20-27:
31. Շնորք պատրիարք Գալուստյան, Մեծ պահքի կիրակիների ոսկե շղթան, էջմիածին, 2001:
32. Չիթունի, Համբարձման «Վիճակ», Կ.պոլիս, 1919, էջ 14:
33. Չոլաքյան Յ. Քեսապ, հ.Բ, Հալեպ, 1998, էջ 201-205:
34. Պետոյան Վ. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 274-275; 342-343:
35. Պռոշյան Պ. Հացի խնդիր, Երկեր, Երևան, 1984, էջ 93-100,198:
36. Սարգիսեան Յարութիւն, Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 31-38:
37. Սարգիսեան Ս. Տոնական օրերը: Նոր Գեղի, Ազգագրական հանդես, Բեյրութ, 1965, էջ 52-53:
38. Վարդանեանց Տիգրան, Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1900, էջ 8-9:
39. Տէր-Մինասեան Վահան վարդապետ, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, Կ.Պոլիս, 1904:
40. Бунатов Г. Из поверий, предрассудков, народных примет армян Эчмиадзинского уезда, СМОМПК, вып. 13, Тифлис, 1892, стр. 182, 186-189.
41. Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892, стр.105.
42. Давидбеков И. Село Гадрут, Джеванширский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып.6,отд.1, Тифлис, 1888, стр. 192.
43. Джейранов Ф. Селение Чайкенд, Елисаветпольского уезда той же губернии, СМОМПК, вып. 25, отд.2, Тифлис, 1898, стр.98-99.
44. Зелинский Ст. Этнографические очерки из быта армян-переселенцев из Персии, живущих в Нахичеванском уезде, СМОМПК, вып.2,отд.2, Тифлис, 1882, стр.21-22.
45. Израелов Г. Село Кусапет Джеванширского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд. 2, Тифлис, 1892, стр. 49.
46. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, Кавказский этнографический сборник, 1, М., 1955:
47. Мелик-Шахназаров Е. Селение Арцеваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898, стр.49-50.
48. Мелик-Шахназаров Е. Из поверий, предрассудков и народных примет армян Зангезурского уезда, СМОМПК, вып. 13, Тифлис,1892, стр. 197.
49. Осипов Г. Селение Даш-Алты Шушинского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898, стр. 124-125.

ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ ԿՐԿՆԱԶԱՏԻԿ

Այսօր Նոր արեւ հարեալ ի Նորահրաշ արեգակնէ,
ի Նորահրաշ արեգակնէ:
Այսօր Նոր շուշան ծաղկեալ ի Նորատունկ բուրաստանէ,
ի Նորատունկ բուրաստանէ:
Այսօր Նոր վարդ վառեալ, լոյսն ի վերինն Երուսաղէմ,
ի վերինն Երուսաղէմ:

Զատիկին հաջորդող երկու կիրակիները նույնպես զատկական տոնական հանդիսությունների շարունակությունն էին: Առաջին կիրակին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կոչում է Աշխարհամատրան կիրակի՝ ի հիշատակ Երուսաղեմի առաջին եկեղեցու հիմնադրման: Աշխարհամատրան կիրակին կոչվում է նաեւ Կանաչ կիրակի՝ կապված բնության գարնանային զարթոնքի հետ:

Քչերը գիտեն, որ մինչև հիմա Երևանին հարող Առինջ գյուղի Գետարգել կոչվող վանքում Կանաչ կիրակի կոչվող տոնին հավաքվում է ուխտավորների հոծ բազմություն, մատաղներ են արվում, լարախաղացներ են գալիս, նվագածուներ, տոնավաճառներ են կազմակերպվում, մինչև ուշ երեկո զվարճանում են, պարում: Իսկ անցյալում Կանաչ կիրակին ամենաուրախ և սիրված տոներից էր: Ներկվում էին ձվեր, «ընչանք կանանչ կիրակին... ջեբերը լիքը ձու կլինի»: Ուշագրավ է, որ Ղզլարի հայերը Կանաչ կիրակի ձվերը ներկում էին կանաչ գույնով:

Այս տոնը նշվում էր բացառապես ուխտավայրերում, բացօթյա: Սիրված ուխտավայրերը բազմաթիվ էին՝ Ս.Սարգսի, Ս.Գևորգի, Ս.Կարապետի, Ս.Հակոբի, Կարմիր վանքի և այլն: Ուխտատեղիների հեռու լինելու դեպքում ուխտավորները ճանապարհ էին ընկնում շաբաթ օրը՝ Կանաչ Կիրակի օրը լիարժեք տոնական տրամադրությամբ անցկացնելու համար: Այդ օրը ուխտավայրեր էին գալիս շրջիկ թափառախմբեր, մանրավաճառներ և տոնի անբաժան ուղեկիցն էին դառնում հանպատրաստի տոնավաճառները: Չորս կողմից լսվում էր մորթվող գառների մայունը, տարածվում խորովվող ձկան հոտը, հնչում էր զուռնան, և պարող առաջին խմբերը հրապարակ էին իջնում: Մեկ ուրիշ տեղ ծուն նշանակետ ունենալու հրաձգության մրցույթ էր, իսկ հարթ դաշտերում ձիարշավները հաջորդում էին միմյանց: «Կնանիք սուփրեք ա, որ բաց են արել,- պատմում է Պերճ Պռոշյանը աշտարակցիների մասին,- Կանաչ ափները դառել են կարմիր ձվի խռճեպ, երեխեքը բոբիկ ոտով, գլուխները բաց ժանգուժունգ են անում, ճոճ քցած ծծկեր երեխանց ճոճնակելուցը մարդ մարդի խոսածը չի լսում: Մեկել կողմիցը, դրանցից բավական հեռու, ազապ տղեքանց ձենը զանգակի նման ա գալիս մի մխի կշտից, որ թե մոտ գնաս, բոլորը թագա ծուկն ա: Կնանիք իրանց սուփրիցը բաժին են հանում, դրկում իրանց

տղեքանցը, որը զանքաչ ա՝ փեսին, որը մեր ա՝ տղին, որը՝ բարեկամին: Տղեքն էլ իրենց կալած ձկնիցը բաժին են ղրկում կնանոցը, ուրախություն ա, որ ըլնում ա:



Հացից հետո թոփ էլած իրար կուշտ «լելե» են ասում ու խաղում (պարում): Աղջկեքն ու հարսներն էլ իրանց քեյվանոնց (կառավարողների) հրամանովը տղեքանցը «լելեովը» կուռ են բռնում ու «յալլի» խաղում»:

Այս ուրախ, ծեսերով ու պարտավորություններով չծանրաբեռնված տոնահանդեսը Նոր Նախիջևանի հայերի ամենաթեթև և սիրված տոներից էր: Այն այստեղ կոչվում էր «Խտռելեզի» (բառը, հավանաբար, թուրքերի «Խիդրելլեզ» տոնի անունից է, որը նման է Արևելյան Եվրոպայի ժողովուրդների կողմից նշվող Ս.Գեորգիի տոնին), և նրա գլխավոր հանդիսություններն անցնում էին Սուրբ Գևորգ եկեղեցում և մերձակայքում: Խոսքը տանք տոնի նկարագրին. «Ս.Գևորգ եկեղեցին գտվում էր քաղաքից դուրս, դաշտի միջին, երկու քաղքաների (Նախիջևան և Ռոստով) արանքում: Եկեղեցին ուներ շատ մեծ բակ, որը հավասար էր մի քանի հեկտարի: Տոնից մի քանի օր առաջ բակի մի կողմում շարվում էին չորս-հինգ կարուսելներ, նրանց կողքին կրկես, նրա կողքին լարախաղացներ և այլն: Բակի մյուս կողմում շարվում էին արևելյան անուշեղեններ վաճառող հալվաճիները, մրգեղեն, լիմոնադ և այլ ջրեր ծախողները: Առանձին կարգով շարվում էին երեխաների համար խաղալիքներ, գրքեր ծախողները, հարմոն նվագողները և այլն:

Քաղաքի և գյուղերի հայությունը սիրում էր խըտռելեզի տոնը: Գյուղացիք գալիս էին լավ ձիեր լծած: Երիտասարդ կանայք և աղջիկները գալիս էին ոտաբոբիկ, գալիս էին ուխտի նախօրյակին, երբ օրհնում էին մատաղացու անասուններին, մասնակցում նախատոնակին և միմիայն հետևյալ օրը ժամերգությունից հետո հագնվում և մասնակցում տոնահանդեսին:

Այս ուխտին մասնակցում էր Ռոստովի ողջ հասարակությունը. Մարիուպոլ քաղաքից և նրա բազմաթիվ գյուղերից գալիս էին հայերի հետ Ղրիմից գաղթած հույների ժառանգները...»:

Մատաղից հետո ուխտավորները խնջույք էին անում, երգեր երգում, պարում, ըմբշամարտ և այլ մրցախաղեր անցկացնում:

Նմուշներ խըտռելեզի տոնական հանդիսությունների երգերից ու պարերգերից՝ Նոր Նախիջևանի հայերի բանահյուսությունից.

Հայտցեք, տղաք, թափ լանք,
Խըտռելեզ ուխտ էշթանք,
Հոն սիրուն հայ աղջիկներ,
Մեզի կըսպասեն անհամբեր:
Ոսկի ֆեսերը գլոխները,
Խուլանով գոտին մեջքերը,
Ֆիտանի պես սոսուն բոյով,
Կտրիճ կուգին բոյով-բուսով:

* * *

Արիցեք տղաք, խտռելեզ էշթանք,
Խտռելեզ էշթանք աղջիկ նայինք:
Աղջիկ մը գտանք գեղեցիկ դեմքով,
Անուշ բնութքով, տեսոք անունով,
Սըրմա մազերով, մեռմեռ ճակատով,
Կամար ունքերով, կանթեղ աչքերով,
Պըզտլիկ քթով, օյմախ բերանով,
Խայթան բըռունկով, մարգրիտ ակռաներով,
Չաթալ կզակով, գեղեցիկ տեսքով,
Անուշ բընութքով, գեղեցիկ անունով,
Բայց քամին փչից, քողը վար ձգից,
Չուբառ երեսով մեկ ճամալ բացից:

* * *

Ասօր ուխտ է, խըտռելեզ,
Մամա, ձգե մեծ տրապեզ:
Հազիր էղիր, մեմը է՛լ մեյտան,
Գեղացի սոյերս պիտի գան,
Աղջիկները բոբիկ ոտքով,
Կտրիճները էկեռլը ձիով,
Վարը փռե մեծ քիլիմ,
Հացը մանտռե տիլիմ-տիլիմ,
Էփե պոլկեկ ձուկի բալման,
Թո ուտին ու կըշտանան:
Մենք ալ կեշթանք նացա տունը,
Կուտիկ նացա անպակ մածունը,
Համով էփած խուզի մատաղը,
Սերը, կարագը, անուշ խայմախը:

* * *

Ջատկի կանանչ կիրակին,
Մեկտեղ կեշքանք խըտռելեզ,
Քուռուշը քուռ,
Գտակը ծուռ,
Անունը Ծատուր:

* * *

Կուռաշ (ըմբշամարտ) կուգան կտրիճներ,
Սեիր կանեն աղջիկներ,
Մամաները սոլովեն,
Տեյմիշ կանեն հեռուեն:
Մեմալ նայիս, շամաթա էլավ,
Ղազարին կռնակը գետնին կպավ,
Պատանը շալից կոչ հավա,
Հալխը կանչեց՝ էվալլա՜:
Օղին լացից, Լուսիկը խնդաց,
Գեղացիք առին գըլոխը իրանց,
Տաուլ զուռնայով քեֆ արին,
Տանկըլ-տանկըլ խաղացին:

* * *

Վառուշը խտռլեզ գնաց,
Սիրտը շատ բան ուզաց,
Իրեն Պողոսին տեսած-չտեսած,
Օխտը պորտակալ (նարինջ) ուզաց:

Երեկոյանում է, հոգնած ուխտավորները պատրաստվում են տուն վերադառնալ: Նորատի հարսների հետևից ամուսնու տնից մարդ է գալիս նվերներով, և «դարձ» գնացած հարսը վերադառնում է ամուսնու մոտ:

1999 թվականին երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ այս օրը հռչակվել էր Նորավանքի ուխտի օր: Այդ տարի Կանաչ կիրակին Նորավանքում տոնախմբվեց առանձնահատուկ շուքով: Նորավանքի վանահայրության և ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համատեղ ջանքերով այդ օրը նշվեց նաև վանահամալիրի հիմնադրման 900-ամյակը: Նորավանքում ապրիլի 10-ին հավաքվել էին շուրջ 5 հազար ուխտավորներ Հայաստանի տարբեր մարզերից, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից, Արցախից, Ջավաքից և Սփյուռքից:

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Հաջորդում է Կանաչ կիրակիին, և իր բնույթով նրա կրկնությունն է: Որևէ պատճառով Կանաչ կիրակի օրը ուխտավայր չգնացած մարդիկ գնում էին հաջորդ՝ Կարմիր կիրակի: Ժողովուրդը անհամեմատ քիչ էր լինում, բայց երիտասարդների խաղերն ու պարերը շարունակվում էին: Ուխտ արած մարդիկ այսօր նույնպես շարունակում էին զոհաբերությունները, բայց գառին արդեն փոխարինում էր աքլորը, մի քանի ձվեր և այլն:

Այսօր Երևանի շրջակայքի Կանաչ-կարմիր կիրակիների ուխտավայրերից շարունակում է սիրված մնալ Կոտայքի շրջանի Պողոս-Պետրոս ուխտավայրը՝ կատարման նույն ձևերով:

Մնում է ավելացնել, որ ուխտագնացությունն, առհասարակ, մեր ժողովրդի ամենասիրած երևույթներից էր: Ուխտագնացությանն սպասում էին ամիսներով, իսկ ուխտի գնալուն մոտեցող օրերին մթնոլորտը խտանում էր հուզական սպասումով: Ուխտի գնալու հագուստը, զարդերը պատրաստվում էին մեծ փայփայանքով, գնալու նախընթաց օրը անցնում էր խմորեղեններ թխելու, եփելու, տապակելու մթնոլորտում: Հեռու ապրողները սիրված և ընդունված ուխտավայրերն էին գնում օրեր առաջ՝ սայլերով, կառքերով, գրաստներով, ոտքով, ով ինչով և ինչպես կարող էր: Ուխտի գնալու ճանապարհն ինքնին ամբողջովին տոն էր՝ սիրահետումներով, խնջույքներով, նվագով, տոնական կյանքի բոլոր հուզումներով:

Ուխտավայրեր գնում էին հատուկ նպատակով՝ որևէ իղձի հասնելու, որևէ տառապանքից կամ հիվանդությունից ազատվելու, ինչպես նաև՝ պարզապես տոնին մասնակցելու համար: Ուխտի օրերին զանազան ձևերով հաղորդակցվում էին ուխտավայրի մաս կազմող պաշտամունքի օջախներին՝ շոր կամ հագուստի մաս էին կապում շրջակա ծառերի ճյուղերին, կանայք երբեմն նույնիսկ ծամերն էին կտրում և կապում ծառերի ճյուղերին՝ հուսալով, որ այդպիսով սրբավայրում են թողնում չարիքը: Հիվանդները վզից հանում էին երկաթյա մանյակը, որ տվյալ խաչի (սրբի, սրբավայրի) սիրուն կրել էին ողջ տարին և կախում ծառից կամ դնում խաչարձանի առաջ: Ոմանք էլ մարդակերպ, կամ ոտքի, ձեռքի նմանությամբ երկաթե շինվածքներ, կամ էլ տիկնիկներ էին դնում խաչարձանի առաջ՝ հուսալով նրանց մեջ թողնել իրենց հիվանդությունը: Ամուլ կանայք ծառերի ճյուղերից ճոճք էին սարքում, մեջը տիկնիկ դնում, հուսալով այդ կերպ երեխա ունենալ:

Ուխտավայրերում տեղի էին ունենում աղջիկտեսեր, երբեմն նույնիսկ նշանախոսություններ, հին վեճերի լուծումներ, սկիզբ էին առնում ծանոթություններ, նոր բարեկամություններ:

Կանաչ-Կարմիր կիրակի օրերի պարերգեր, որոնք կատարվում էին նաև այլ տոների ժամանակ.

Յարեմ գորանի

Լե, լե, լե, լե, լե, լե,
Յարըմ գորանի,
Լե, լե, լե, լե, լե, լե,
Դեստըմ գորանի:
Մշու դաշտ կըսեն՝ հայ,
Որակի տեղէր,
էրկուս մեկ շապիկ, հայ,
Փողպըտիկ նեղ էր,
Յարըմ գորանի,
Դոստըմ գորանի:

Բոստան իմ ցանի, հայ,
Վըր դեմի գարին,
Շամամ մե չեղավ, հայ,
Ճամփեն ք իմ յարին,
Յարըմ գորանի,
Դոստըմ գորանի:
Մտեր իս յեգին, հայ,
Հադող կը քաղիս,
Շամամ ծծերով, հայ,
Շաքար կը մաղիս,
Յարըմ գորանի,
Դոստըմ գորանի:
Քամբախ Բուլանըխ, հայ,
Շատ անուշ տեղ էր,
Ուր ջուր օր կըսեն, հայ,
Հիվընդի դեղ էր,
Յարըմ գորանի,
Դոստըմ գորանի:
Ծծերդ ի ուռեր, հայ,
Ես կըսենք նուռ էր,
Չեռ տարա քաղիմ, հայ,
Դու ըսիր՝ ժուռ էր,
Յարըմ գորանի,
Դոստըմ գորանի:
Թե ժուռ, թե հասած,
Ընձի խաբուլ էր,
Քու լեզվին մեռնիմ, հայ,
Անուշ բլբուլ էր,
Յարըմ գորանի,
Դոստըմ գորանի:

Ջուր է յելի

Ջուրն է յելի առվըներ,
Աստված վերցու զպառվըներ,
Ջուրն է յելի ջաղջըկներ,
Աստված պահե զաղջըկներ:
Ջուրն է յելի կորդեր,
Աստված պահե զխորդեր:
Կանաչ վարոց տղեկներ,
Կարմիր խնձոր աղջըկներ,
Թաս ու թեփսի կընկըտիք,
Ուտիք- չուտիք՝ կըռվըտիք:

Խաղեր

Ջատկի տոնահանդեսներին խաղացվող խաղերից առավել հատկանշականն, անշուշտ, ձվախաղերն էին: Դրանցից մի քանիսին ծանոթացանք Ջատկի տոնակատարությունը նկարագրելիս: Ձվախաղի սիրված տարբերակներից էր «շարք խփելը»: 8-10-14 ձվեր շարում էին և երկու կողմերից մրցակից խաղացողները, շարքի ամեն կողմից մեկը, հերթով խփում էին մեկական ձվի՝ իրենց ունեցած փորձված, պինդ ձվերով: Ով ավելի շատ կոտրեր՝ շահում էր բոլոր ձվերը:

Սիսիանում խաղում էին «ըստում-ըստում»,- այսինքն՝ հողի երեք կույտերից մեկի մեջ մի ձու էին թաքցնում, հետո գալիս էր «ըստումի տվողը» և.

- Ըստում, ըստում,
Քարի տըննտում

ասելով մատով ցույց տալիս կույտերից մեկը: Եթե ծուն այդ կույտում էր լինում՝ շահում էր գուշակողը, եթե ոչ՝ պահողը:

Շատ էին խաղում նաև «չիլիկ դաստա» կոչվող խաղի զանազան տարբերակները, գնդակախաղեր, վեգ և այլն: Բերենք մեկական օրինակ.

Չիլիկ դաստա

Տափարակ խաղավայրի մի կողմում մի փոքրիկ փոս էին փորում, սա կոչվում էր «օբա»: Խաղացողները պիտի ունենային «դաստա»՝ 20-30 սմ երկարությամբ և 25 սմ տրամագծով ծյուղ կամ բռնակով տախտակ, և «չիլիկ»՝ 10-12 սմ երկարությամբ փայտիկ: Խաղացողները բաժանվում էին երկու մասի: Մի խումբը կանգնում էր օբայի մոտ՝ սրանք «վերիններն» էին, մյուսը՝ որոշ հեռավորության վրա, սրանք էլ վարիններն էին: Խաղը բաղկացած էր երեք մասից՝ «դմբուզ», «փոքր յոլլաբ» և «մեծ յոլլաբ»: Սկսվում էր «դմբուզ» մասով: Վերիններից մեկը կանգնում էր օբայի վրա, մի ձեռքով բռնում էր դաստայի բռնակից, նրա վրա տեղավորում չիլիկն այնպես, որ ուղղահայաց կազմի ու շփվի թե ձեռքին, թե դաստային: Ապա այդ նույն ձեռքի շարժումով չիլիկը վեր՝ օդ էր գցում և անմիջապես դաստայի ուժեղ հարվածով հեռու գցում: Վարիններն ջանում էին օդում բռնել չիլիկը, որի դեպքում խմբերը տեղերը փոխում էին: Բայց եթե չիլիկն ընկնում էր գետնին, վարիններից մեկը վերցնում էր այն և, ուշադիր նշան բռնելով, նետում դեպի օբան, որի վրա չիլիկին հարվածողը հարվածելուց հետո հորիզոնական դիրքով դրած էր լինում դաստան: Չիլիկը դաստային կպչելու դեպքում հարվածողը դառնում էր «կըռտված» և դուրս էր գալիս խաղից՝ տեղը զիջելով իր խաղընկերոջը: Հերթով բոլորին «կռտելու» դեպքում խաղախմբերը տեղերը փոխում էին: Իսկ եթե չէր կպչում, նույն հարվածողը ևս երկու անգամ կրկնում էր հարվածը: Երեք հաջող հարվածի դեպքում, եթե չիլիկը ետ նետելիս ոչ մի անգամ չէր դիպչում դաստային, հարվածողն ընկնում էր «փոքր յոլլաբ», այսինքն՝ մի ձեռքով օդ էր նետում չիլիկը, մյուս ձեռքով դաստայով խփում՝ թռցնում այն: Չիլիկն այս անգամ ավելի հեռու էր ընկնում, քան «դմբուզի» ժամանակ: Այս դեպքում եթե վայրինները կարողանային թեկուզ մատների ծայրով կպչել չիլիկին, հարվածողը դարձյալ «կռտված» էր համարվում: Բայց այս փուլում հարվածողը դաստան այլևս օբայի վրա չէր նետում, այլ ձեռքին սպասում էր չիլիկի ետ թռչելուն, որպեսզի հենց օդում ետ մղի այն: Եթե չիլիկն ընկնում էր օբան, ապա խփողը համարվում էր «կռտված», եթե չէր ընկնում, ապա հաշվում էին, թե այն քանի դաստաչափ հեռու է ընկել օբայից:

Փոքր յոլլաբի գործողությունը երեք անգամ կրկնելու դեպքում, եթե վեց դաստաչափ էլ

լրացել էր, հարվածողի «կռտված» ընկերներից մեկը կենդանանում էր, իսկ ինքը ընկնում էր մեծ «յոլլաբ»: Այս փուլում արդեն վարիների գործը շատ էր դժվարանում: Խփողը, որն արդեն իրավունք ուներ ձախ ձեռքով չիլիկը վեր նետել ու աջ ձեռքի դաստայով խփել օդում, կարող էր այն նետել շատ հեռու և ընդ որում՝ անկանխատեսելի ուղղությամբ: Դժվար էր այն թե՛ օդում բռնելը, քանի որ նաև բարձր էր թռչում, թե՛ ընկած տեղից օբան գցելը, քանի որ շատ հեռու էր ընկնում: Մեծ յոլլաբ խփողը երբեմն կարող էր այնքան խփել, մինչև բոլորը հոգնեին ու ձանձրանային խաղից, ու սա այդպես էլ ավարտին չհասներ: Մեծ յոլլաբի ժամանակ խփողը յուրաքանչյուր հարվածի ժամանակ վարիներին էր ուղղում հետևյալ նախադասություններից մեկը.

- Հաց եմ քաշում, սովածացած կլինեք,
- Էս՝ սեղանները:
- Էս՝ սուփրեն:
- Էս՝ աղաթասերը:
- Էս՝ հացը:
- Էս՝ շշերը:
- Էս՝ ափսեները:
- Էս՝ բողկը:
- Էս՝ քուֆթեն:
- Էս՝ տոլմեն:
- Էս՝ փլավը:
- Էս՝ իշխան ծուկը... և այլն:

Հոգնած, հալից ընկած վարիների դժգոհությունը տեսնելով՝ հարվածողը նրանց էր ուղղում վիրավորական.

- Էլ զատ չկա, լկի, լկի,
Շորվա լկի

խոսքը և թողնում խաղը:

Գնդակախաղ «Սատանի փոս»

Առջևև ազատ տարածությամբ մի պատի մոտ խաղացողներն իրենց թվի համեմատ նռան մեծությամբ փոսեր էին փորում, որոնք կոչվում էին հոբեր, մի լրացուցիչ փոս էլ փորում էին, որը կոչվում էր «սատանի փոս»: Խաղացողներից մեկը հոբերից 10 քայլ հեռավորությունից գլորում էր գնդակը: Վերջինս որ հոբի մեջ հայտնվեր, տվյալ հոբի տերը դառնում էր գլորող «մայր»: Նույն հեռավորությունից մայրը գնդակը գլորում էր դեպի իր ցանկացած հոբը: Գնդակն ում հոբի մեջ ընկներ, նա շալակում էր մորը և այդպես շալակած վիճակում գնդակն ուրիշի հոբն էր գլորում: Եթե կարողանար որևէ մեկի հոբի մեջ գցել՝ մայրն իջնում էր նրա շալակից և ինքն էր բարձրանում տվյալ հոբի տիրոջ շալակը: Սա շարունակվում էր այնքան ժամանակ, մինչև գնդակն ընկնում էր «սատանի փոսը»: Այդ դեպքում մյուսները ձեռքով փակում էին իրենց հոբերը: Ապա մայրը «սատանի փոսից» վերցնում էր գնդակը և սկսում հաշվել մեկից մինչև ինը: Այդ ընթացքում մյուս խաղացողները փախչում էին տարբեր ուղղություններով: Ինը հաշվի վրա մայրը գնդակը նետում էր փախչողներից մեկի ուղղությամբ: Ում կպչեր՝ նա մայր էր դառնում և նախկին մորը, այսինքն՝ իրեն գնդակով խփողին շալակում ու խփված տեղից մինչև հոբերն էր տեղափոխում: Վրիպելու դեպքում՝ նախկին մայրը մնում էր իր պաշտոնում և խաղը վերսկսվում էր:

Բազմաթիվ էին վեգախաղերը: Դրանք կարելի է անսահման երկար նկարագրել, սակայն շատ խաղացողներ հորինում էին զանազան տեսակներ, փոխում իրենց հայտնի խաղերի տարբերակները՝ ըստ խաղացողների ճաշակի ու պայմանավորվածության: Տղա երեխաներն ու պատանիները տասնյակ ու հարյուրավոր վեգեր էին ժողովում, հղկում դրանք քարերի վրա կամ ծանրացնում կապարով, ներկում և ըստ հարկի օգտագործում տարբեր խաղերի դեպքում: Վեգախաղերը սիրված էին տարվա բոլոր եղանակներին, բայց մեծ ջերմությամբ սպասվում էին տոն օրերին խաղալու համար: Նկարագրենք միայն մի պարզագույն խաղ:

Մատխփուցիկ

Խաղում էին միայն երկու հոգով, մի վեգով: Վեգը գցում էին, և ով թոխան էր բերում՝ ծալում էր մի մատը, ով ալչու՝ երկու մատը: Վեգի մյուս երկու կողմերը (սոզն ու գողը) այս խաղում հաշվի չէին առնվում: Գցողը, քանի դեռ թոխան ու ալչու էր գալիս, անընդհատ գցում էր, բայց հենց որ սոզ կամ գող ընկավ՝ հերթն անցնում էր ընկերոջը: Քանի որ վեգը գցում էին աջ ձեռքով, ապա հաշվելիս մինչև հինգը ծալում էին ձախ ձեռքի մատները, իսկ մյուս հինգը հաշվելիս հերթով բացում էին այդ ծալված մատները: Ով առաջինը կարողանում էր ծալել ու բացել հինգ մատները, այսինքն՝ լրացնել տասը թիվը, նա քաշում էր մյուսի ականջը՝ հարցնելով.

- Էշը ջրի տարա՞ր:

- Տարա,- պատասխանում էր պարտվողը:

- Սառը ջուր տվի՞ր, թե՞ տաք:

- Սառը:

- Կմրսի, կմրսի,- ասում և ուժգին քաշում էր ականջը:

- Տաք, տաք,- գոչում էր պարտվողը:

- Կվառվի, կվառվի,- ավելի ուժեղ էր քաշում ականջը հաղթողը:

Վեգախաղի երգեր

Ընդունված էր առաջին անգամ վեգը գցելիս փոքրիկ երգեր երգել, որոնք պետք է հմայեին ու հաղթանակ ապահովեին տվյալ վեգին: Դրանցից էին.

Ակլե, դյուկլե տնազ ա,
Շավեռ մավեռ տուտուզ ա,
Էծիկ մեծիկ մազոտ ա,
Ամբար աղեն պարոն պստիկ,
Մեջ կոլոտիկ:
Դանակ սրեմ,
Չեր խավերաց վիզը կտրեմ,
Եղտե կոճակ,
Տերը պողոճակ,
Ճակ, ճուկ:

* * *

Ակլե, տուկլե,
Չամըռզա,
Չարուխ Չըմրեն,
Պուպուզա,

Ոսկե նուքե,
Ալ բաբաթ,
Չըմե վարա,
Մախտե կոճակ,
Տուր պլոճիկ,
Ճանիճ ծուք:

* * *

Օո այ տղաք, ելել ի վեգ,
Գըլտոր - մըլտոր բաղդ նայեցեք,
Պէկ եք, մոնթ եք,
Խապար տվեք:



Գրականություն

1. Ամատունի Ս. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 8, 32, 60, 327, 334:
2. Արշարունի Ա. Հայ ժողովրդական թատերախաղեր, Երևան, 1961, էջ 106-111:
3. Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 94-95:
4. Ավագյան Ս.Շարուր, Երեվան, 1998, էջ 47:
5. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 337-338:
6. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 69:
7. Գրիգորյան Ռ. Գեղարքունիք, ՀԱԲ, հ.14, Երևան, 1983:
8. Լալայան Ե. Ջավախք, Երկեր, հ.1, Երևան, 1983, էջ 280-289:
9. Լալայան Ե. Վարանդա, Երկեր, հ.2, Երևան, 1988, էջ 197-200:
10. Լալայան Ե. Գանձակ, Երկեր, հ.2, Երևան, 1988, էջ 447-450:
11. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898, էջ 255-257:
12. Լալայան Ե. Զանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, 108-112:
13. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 223-225, 260:
14. Լալայան Ե. Գողթան գավառ, ԱՀ, գիրք 12, Թիֆլիս, 1904, էջ 152:
15. Լալայան Ե. Վայոց ձոր, ԱՀ, գիրք 16, հ.2, Թիֆլիս, 1906, էջ 149,:
16. Լալայան Ե. Նոր Բայազետի գավառ, ԱՀ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908, էջ 124-125:
17. Լալայան Ե. Վասպուրական. հավատք, ԱՀ, գիրք 25, հ.2, Թիֆլիս, 1913, էջ 42:
18. Լալայան Ե. Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք 26, Թիֆլիս, 1916, էջ 193:
19. Լիսիցյան Ս. Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 109-111:
20. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, Երևան, 1981, էջ 70-71:
21. Խաչատրյան Ժ. Ջավախքի հայ ժողեվրդական պարերը, ՀԱԲ, հ.7, Երևան, 1975, էջ 50-52:
22. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 230-235:
23. ճանիկեան Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 106; 425-426:
24. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 93-143:
25. Միքայելյան Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրապոլ, 1901, էջ 195, 264-269:
26. Միքայելյան Գ. Նոր Բայազետ, ՀԱԲ, հ.11, Երևան, 1980, էջ 140, 145:
27. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972, էջ 43-45:
28. Նազարեանց Հ. Նախապաշարմունք, Տփխիս, 1878, էջ 12, 78-80:
29. Շահազիզ Ե. Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 221-223:
30. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 20-27:
31. Չիթունի, Համբարձման «Վիճակ», Կ.պոլիս, 1919, էջ 14:
32. Չոլաքյան Յ. Քեսապ, հ.Բ, Հալեպ, 1998, էջ 201-205:
33. Պետոյան Վ. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 342-343:
34. Պռոշյան Պ. Հացի խնդիր, Երկեր, Երևան, 1984, էջ 93-100,198:
35. Սարգիսեան Յարութիւն. Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 31-38:
36. Սարգիսեան Ս. Տոնական օրերը: Նոր Գեղի, Ազգագրական հանդես, Բեյրութ, 1965, էջ 52-53:
37. Վարդանեանց Տիգրան, Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1900, էջ 8-9:
38. Վահան վարդապետ Տէր-Մինասեան, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, Կ.Պոլիս, 1904:
39. Փորքշեյան Խ. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը,Երևան, 1965; ՀԱԲ, Երևան, 1971:
40. Бунатов Г. Из поверий, предрассудков, народных примет армян Эчмиадзинского уезда, СМОМПК, вып. 13, Тифлис, 1892, стр. 182, 186-189.
41. Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892, стр.105.
42. Давидбеков И. Село Гадрут, Джеванширский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып.6,отд.1, Тифлис, 1888, стр. 192.
43. Джейранов Ф. Селение Чайкенд, Елисаветпольского уезда той же губернии, СМОМПК, вып. 25, отд.2, Тифлис, 1898, стр.98-99.
44. Зелинский Ст. Этнографические очерки из быта армян-переселенцев из Персии, живущих в Нахичеванском уезде, СМОМПК, вып.2,отд.2, Тифлис, 1882, стр.21-22.
45. Израелов Г. Село Кусапет Джеванширского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд. 2, Тифлис, 1892, стр. 49.
46. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, Кавказский этнографический сборник, 1, М., 1955:
47. Мелик-Шахназаров Е. Селение Арцеваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898, стр.49-50.
48. Мелик-Шахназаров Е. Из поверий, предрассудков и народных примет армян Зангезурского уезда, СМОМПК, вып. 13, Тифлис,1892, стр. 197.
49. Осипов Г. Селение Даш-Алты Шушинского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898, стр. 124-125.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, ՎԻՃԱԿ, ԿԱԹՆԱՊՐԻ ՏՈՆ

Զատիկից ուղիղ քառասուն օր հետո նշվում է Համբարձման կամ, ինչպես շատ տեղերում կոչում են, Վիճակի կամ Կաթնապրի տոնը: Սուրբ Հարությունից կամ Զատկից հետո Քրիստոսը ուղիղ քառասուն օր շրջել է երկրի վրա և քառասուներորդ օրը Համբառնել երկինք: Ահա այս համբարձման տոնն է քրիստոնեական տոնացույցում, որ հայոց մեջ կոչվում է նաև Վիճակի կամ Կաթնապրի տոն: Պայմանավորված լինելով Զատիկով, Համբարձումը բնականաբար շարժական տոն է, ամեն տարի տարբեր օրեր է նշվում: Սակայն այն միշտ ընկնում է հինգշաբթի օր, և տոնական հանդիսությունները սկսվում են չորեքշաբթի: Այդ չորեքշաբթի կանայք «ծաղկամոր կիրակի» էին պահում՝ խուսափում էին որոշ աշխատանքներից ի պատիվ «ծաղկամոր», որպեսզի նա իրենց երեխաներին զերծ պահեր «ծաղիկ» ու «կարմրուկ» հիվանդություններից: Ծաղկամայրը, ըստ ավանդության, Վարվառե անունով մի կույս է, որին քրիստոնեություն ընդունելու պատճառով հետապնդել է կռապաշտ հայրը, և նա, Արևմտյան Հայաստանից փախչելով, եկել հասել է Աշտարակի մոտ գտնվող Արայի լեռը ու թաքնվել նրա այրերից մեկում: Աղջկա հետքերով գնացած հայրը հասել է նրան, այրի մոտ ոչխար արածացնող հովիվները մատնել են աղջկա տեղը: Հուսահատ Վարվառեն նահատակվելուց առաջ խնդրել է Աստծուն, որ ծաղիկ ու կարմրուկ հիվանդություն ունեցող մանուկներն իր անունով բժշկվեն: Աստված կատարել է նրա խնդրանքը, և Վարվառեին աղոթող մայրերի զավակներն ազատվում են այս հիվանդությունից: Միաժամանակ Վարվառեն անիծել է իր տեղը մատնած հովիվներին, և սրանք իրենց ոչխարների հետ քարացել են: Մինչև այսօր աշտարակցիները ցույց են տալիս այդ քարերը: Համբարձման չորեքշաբթի - հինգշաբթի օրերը Արայի լեռան շրջակայքի ժողովուրդը մինչև վերջերս հավաքվում էր այստեղ մեծ ուխտի:

Այս տոնի ընթացքում հանդիսությունների հերթականությունը խստորեն կանոնակարգված և փուլերի էր բաժանված: Չորեքշաբթի վաղ առավոտյան սկսվում էր հիմնական ծեսի՝ վիճակի նախապատրաստությունը, որի պատճառով էլ հաճախ տոնը կոչվում էր «Վիճակ»: Աղջիկների նախապես ընտրված խմբերը՝ յոթական հոգի, դուրս էին գալիս ծաղիկ հավաքելու: Չնայած «ծաղիկ հավաքել» անվանը, նրանք ծաղիկներից բացի հավաքում էին մի փարչի մեջ յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր, յոթ տեսակ ծառից յոթ տերև, յոթ տեսակ ծաղիկ, հոսող առվից յոթ տեսակ քար: Համբարձման երգերում հաճախ հիշատակվում էին այն յոթ աղբյուրները, որտեղից աղջիկները ջուր էին վերցնում, այն ծաղիկները, որ քաղում էին: Այդպիսիներից էր, օրինակ, Բալուից հայտնի հետևյալ երգը.

Հատէ, Եղսո ու Մագո (Մարգարիտ), օխ լե,
Փարչեր դնենք մեր փիճին (ուս), օխ լե,
էրթանք առաջ Կաթնաղբյուր, օխ լե,
Ջուր լեցնենք մենք ընկէ (այնտեղից), օխ լե,
Փարչերուն մեջ ու դառնանք, օխ լե,
էրթանք մեկ մըլ Տողաղբիր, օխ լե,
Ենկե էրթանք Պաղաղբիր, օխ լե,
Քամուն աղբիրն էլ էրթանք, օխ լե,
Սեվ հատիկի պաղ, զուլալ, օխ լե,
Ջուրն էլ առնինք ու դառնանք, օխ լե,
էրթանք գեղին Մենծ աղբիրն, օխ լե,
Մեղրիկ ջուրն ըլ չի մոռնանք, օխ լե:

Ընդհանրապես աղջիկները դուրս էին գալիս բոլորից գաղտնի, աքլորականչից առաջ, և մինչև իրենց առաքելությունը չկատարեին՝ անխոս ու լուռ էին մնում: Խուսափում էին հատկապես տղամարդկանց հանդիպելուց, որոշ տեղերում տղամարդու հանդիպելիս նույնիսկ թափում էին փարչի պարունակությունը և լուռ վերսկսում իրենց աշխատանքը: Բայց կային այս կանոնից շեղումներ: Օրինակ, Շիրակում ծաղկահավաքը կատարվում էր օրը ցերեկով, ողջ համայնքի, գյուղի ուղեկցությամբ, զուռնա-դհոլի նվագի տակ: Բասենում աղջիկները ծաղկահավաքի ժամանակ Համբարձման երգեր էին երգում, նրանց ուղեկցում էին տղաները, ձայնակցում երգերին:

«Մի ուրախ, չտեսնված երիտասարդական թափոր էր ծաղկի գնալը,- պատմում է Բասենի ծաղկահավաքը նկարագրողը: - Խումբ-խումբ աղջիկներին հետևում էին տղաները: Աղջիկներն էլ, տղաներն էլ իրենց հետ վերցնում էին գամփռ շներ: Սրանք խաղալով, արտերի մեջ թավալ տալով, վազում էին իրենց տերերի առջևից, թռչկոտում, ուրախանում և փաթաթվում իրենց տերերի ոտքերին: Արևը դեռ չծագած՝ ծաղկի գնացողները պետք է տեղ հասած լինեին: Սովորություն կար նաև, որ նախքան ծաղիկ քաղելն աղջիկները երեսները դարձնում էին արևելք, դեպի հեռավոր Ալադաղ սարը, որը լողում էր նոր ծագող արևի առաջին շողերի մեջ և երգում.

Ալադաղ, բարձր Ալադաղ,
Աստըծուն մոտիկ Ալադաղ,
Կխնդրենք Աստըծմեն, քեզէն՝
Որ տաք մեզ բարի վիճակխաղ:

Ապա այս անգամ էլ շուռ էին տալիս երեսները դեպի հարավ, նույնպես արևի վաղորդյան շողերով-ու իր հավերժական ճերմակ ծյուներով շաղփողփող վեհատեսիլ Սուկավետ սարն ու մրմնջում.

Սարերու իշխան Քոսադաղ,
Սրբերու գերեզման Քոսադաղ,
Դու էլ մեր մուրազը կատարի,
Տուր մեզի բախտով վիճակխաղ:

Ի դեպ, ավանդություն կար Բասենի գյուղերում, որ Ալադաղ և Քոսադաղ սարերը Համբարձման գիշերն արշալույսին գալիս են Արագի ափին, Վարդիեր Վանքի մոտ

գրկախառնվում, համբուրվում և էլի ամեն մեկը ետ գնում, իր տեղը նստում»: Ավանդաբյունն ասում է, որ Ալադաղը մի հարուստ քրդի գեղեցիկ աղջիկ է եղել, Քոսադաղը՝ հայ տերտերի տղա: Սրանք սիրահարվել են միմյանց, բայց երկուսի ծնողներն էլ ընդդիմացել են: Համբարձման գիշերը երիտասարդները փախել են և թաքնվել գյուղերից մեկում: Ծնողներն անիծել են փախստականներին, և սրանք լեռ են դարձել միմյանցից հեռու, տղան՝ Հայկական Պարի մեջտեղում, աղջիկը՝ Վանանդ և Բասեն գավառների միջև, միշտ՝ աչքը մեկը մյուսի վրա, սառած արցունքներով, որ ձյուն է դարձել: Ամեն տարի հայ և քուրդ երիտասարդները Համբարձման տոներին ուխտ էին գնում Ալադաղ և սիրային երգեր երգում:

Քեսապում նույնպես այս ծաղկահավաքը նկատելիորեն ձևափոխվել էր. այստեղ չորեքշաբթի երեկոյան մանկահասակ աղջիկ-տղաների խումբը մի սափոր առած շրջում էին տնետուն «մէնթիվոր» հավաքելու: Նրանք յոթը տուն էին մտնում, յուրաքանչյուր տնից յոթ ափ ջուր, յոթ տերև և յոթ փոքրիկ քարեր հավաքելով դնում լաթով ծածկված սափորի մեջ: Սափորը երբեք գետնին չէին դնում, եթե անհրաժեշտություն էր առաջանում՝ դնում էին եռոտանու վրա կամ կախում էին գամից:

Փարչի մեջ գցվող ծաղիկներից զատ բազմաթիվ ծաղիկներ էին քաղում՝ զարդարվելու և Համբարձման ծաղկեփնջեր պատրաստելու համար: Հենց որ ավարտվում էր ծիսական փարչի համար անհրաժեշտ նյութերի հավաքչությունը, աղջիկներն սկսում էին խոսել միմյանց հետ, երգել, և ծաղիկներով զարդարվելու, ծաղկեպսակներ սարքելու ողջ ընթացքում ամենուր հնչում էին նրանց երգերը: Անթառամ և ապրիմ-մեռնիմ անուններով ծաղիկների տերևները պոկելով՝ երգում էին.

Քէօշ բեզիրկէն եկեր է,
Ձեր կալու տեղն իջեր է,
Ոսկի ցիցը զարկեր է,
Հրեղէն ձի կապեր է,
Քո բաղդ քո դուռ բերեր է:

Աս օրս Համբարձում է,
Աղջիկներուն հարցում է,
Ամեն աղջիկ պագ մի տայ,
Մէկէր աշխարհ կործում է:

-Ուրկի՞ կուգաս.- էլի Վանայ,
Տարտէդ եմ եղեր տիվանայ.
-Ես տիվանայ, դուն տիվանայ,
Աստուած մեզի դուռ մի բանայ:

* * *

Շօրօր մը՛ քելէ, փուշ է,
Խորոտկի պագն անուշ է,
Ընչան որ ես դուրս ելայ,
Լուսնակն անուշ կը ցոլայ:

Որոշ տեղեր ջուր և ծաղիկ հավաքող աղջիկների խմբերը տարբեր էին: Մինչ ծաղկահավաքներն զբաղված էին իրենց գործով, ուրիշները գնում էին յոթ աղբյուրից կամ յոթ

գետից ու ջրհորից «ջուր գողանալու»: Դա պետք է գաղտնի կատարվեր: «Գող աղջիկները» անխոս ու լուռ կատարում էին իրենց գործը, մի քանի քար գցում ջրի մեջ և անմիջապես վերադառնում՝ դարձյալ լուռ, առանց իրենց շուրջը նայելու և ողջ ընթացքում ոչ մի անգամ իրենց ամանը գետին չեն դնում: Նրանց թվում էր, թե սարերը, ծորերը, ծառերը, մարգագետինները իրենց ետևից գոռում են, և եթե ետ նայեն՝ անմիջապես կքարանան:

Աղջիկները վերադառնում էին միայն կեսօրին, ծաղիկներով լի մաղերը գրկին: Ծաղիկների մեջ գերիշխում էին դեղին գինարբուկը (հորոտ-մորոտ), ճերմակ ու վարդագույն սիրի-սիրին, կարմիր և ոսկեգույն կուժկոտրուկները, բոսորագույն աղբրաց արունը, ալ վարդակակաչը, դեղին ծաղիկները:

Սկսվում էր ծաղիկը երգերով գովելով փնջելու և վիճակի պուլիկը պատրաստելու հաճելի ծեսը: Աղջիկներից մեկը երգում էր, մյուսները խմբով շարունակ կրկնում էին.

Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան...

Ծաղիկը գովելով երգելու ընթացքում աղջիկները գովում էին «Վիճակն» առհասարակ, բայց երգերի զգալի մասի կարևոր մաղթանքը տիեզերքի՝ արևի, լուսնի, ծովերի, աստղերի... ողջ սերը այդ ծաղկաթասի մեջ հավաքելն էր.

Գացեք մեծ վարպետ բերեք,
Աղվորին խաբդան ձևեցեք,
Արեգակն երես արեք,
Լուսընկան աստառ ձևեցեք,

Ամպերով բոլոր նախշեք,
Ծովեն աբրեշում թել քաշեցեք,
Աստղերը կոճակ շարեք,
Ինչ սեր կա՝ մեջը կարեցեք:

Երգելու, ծաղիկ փնջելու ընթացքում միաժամանակ կատակով ծաղրում էին տղաներին, որոնք պատրաստվում էին աղջիկների պատրաստած Վիճակի պուլիկը գողանալ և, հավանաբար մոտակայքում թաքնված հետևում էին նրանց.

Ծաղիկ եմ քաղե էս ա,
Ճանիդ մեռնեմ, ճան փեսա,
Ծաղիկ քաղի մաղերով,
Վերև դրի շաղերով:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Ծաղկածորեն ձեն կիգա,
Ծաղկամերը քներ ա,
Թող քնի, ուր քունն անուշ,
Վիճակ խաղալ շատ անուշ:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Երդիկը բուն եմ դրե,
Տղեկներ շուն եմ դրե,
Խապար տարեք ըռեսին,
Գյադեք թափան շան մսին:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

էդ կոկած - մալած տներ,
Կիվազ ու նխշուն սներ,
էկան ազապ տղեկներ,
Կը մանին (նման են) կատղուկ շներ:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Պատրաստում էին հարյուրավոր ծաղկեփնջեր: Հաջորդ օրը դրանք պետք է նվիրաբերվեին: Պատրաստում էին նաև ծաղկեպսակներ. դրանք նախատեսվում էին իրենց՝ աղջիկների զարդարվելու համար: Վերջում պատրաստում էին ամենամեծ ծաղկեփունջը՝ «Ծաղկամերը», որը դրվում էր պուլիկի վրա: Այն պուլիկի, որի մեջ արդեն լցվել էր յոթ աղբյուրի ջուրը, յոթ տեսակ ծաղիկը, յոթ տեսակ ծառի յոթ տերևը, յոթ հոսող ջրի տակից հավաքված քարերը: Ծաղկեփնջերն ու պուլիկը պատրաստելն ավարտելուց հետո աղջիկները սպառնալի «նետում էին» աներևույթ տղաներին.

Իմ ծաղիկը քաղած ա,
Բարձր տեղում պահած ա,
Ով իմ ծաղիկին ձեռք տա,
Արյունաթաթախ գետին գա:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Մութն ընկնելուց հետո աղջիկները խոտերի մեջ թաքցնում էին վիճակի փարչը և շուրջ բոլորը զարդարում ծաղկեփնջերով: Շարուրում «կճուճը պահվում էր գյուղի ծայրին գտնվող հաստաբուն, մենավոր ծառի բնի, առանձին խոշոր քարի, աղբյուրի մոտ, այն պահ տալով աստղերին»: Գիշերը փարչը պիտի մնար բաց երկնքի տակ՝ «աստղունք», Համբարձման հրաշալի, կախարդական գիշերվա զորավոր հմայքին ենթարկվելու և առավոտյան ցողով օծվելու համար: «Աստղերը պիտի հաշվեն»,- ասում են մինչև այսօր Վարդենիսում: Նույն այդ նպատակով Արճակում չորեքշաբթի մայրամուտին ամեն տնից մի մանկահասակ աղջիկ հին փարչն առած անծպտուն շրջում էր մարգագետիններում, յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր, յոթ քար էր լցնում փարչը, բերանով յոթ անգամ էլ կանաչ թեր պոկում գցում փարչի մեջ, հետո վերադառնում էր, փարչը դնում կտուրը, մտնում տուն, որից հետո նոր կարող էր խոսել: Արևը դեռ չծագած տանտիկինները ցած էին բերում կտուրում պահված փարչը, ջրի մի մասը լցնում էին հարվող խնոցու մեջ, մյուսը՝ խառնելով ջրին, խմեցնում կաթնատու անասուններին, մի մասն էլ դատարկում էին վիճակի փարչը:

Համբարձման չորեքշաբթի լույս հինգշաբթի գիշերը մեկը մյուսից խորհրդավոր ու զարմանալի գուշակությունների, հրաշալիքների `ու կախարդանքների գիշերն է: Բուն Համբարձման գիշերը, մութն ընկնելուն պես կանայք քակորի մի շերտի մեջ կողպած կողպեք

դնելով՝ գցում էին դուրս: Ձեռքի ափով՝ թիզով, կանաչի էին չափում, մի թելով կապում: Առավոտյան ստուգում էին. եթե կանաչին երկարած լիներ՝ բախտավորության ու երկարակեցության նշան էր, հակառակ դեպքը դժբախտություն էր ավետում: Բախտավորության ավետաբեր էր նաև առավոտյան բացված կողպեքը: Այդ գիշեր աղջիկները մեկական ծու էին դնում տանիքին, որպեսզի հրեշտակները ծվի վրա իրենց բախտը գրեին: Առավոտյան ստուգելիս ծվի վրա կարմիր նշաններ գտնողներին երջանկություն, սև նշաններ գտնողներին դժբախտություն էր սպասվում:



- Համբարձում երկայն գիշեր,
Քոյր գնաց ծաղիկ չափել,
Ծառի տակի պաղ աղբիւր,
Լից տուր խմեմ, կերթամ հյուր...

Շատերը կես գիշերին նետվում էին հոսող ջրերի մեջ, քանի որ այդ գիշեր դրախտի անմահության կաթիլներ են կաթկթում գետերի ու վտակների մեջ, և դրանք բուժում են բոլոր տեսակի ցավերը: Գիշերվա ընթացքում առատորեն բուժիչ ցող է իջնում կանաչների վրա: Արշալույսին բորոտները թավալվում էին ցողով օծված կանաչների վրա՝ բորոտությունից

բուժվելու համար, առողջներն էլ ցող էին հավաքում, խառնում ջրին և լողանում, գլուխները լվանում՝ հիվանդություններից զերծ մնալու, մազերը երկարացնելու և ամրացնելու նպատակով: Ամուլ կանայք մի հին օրորոց էին դնում սուրբ հողի վրա և իրենց արգանդի համար շնորհ խնդրում: Ցավագարները նույնպես բուժվելու հույս ունեին. նրանք ջուր էին տաքացնում, յոթ ծաղիկ գցում ջրի մեջ և լողանում: Ամենուր օդը հագեցած էր սիրով, զորությամբ, հողը բեղմնավորված էր, և միաժամանակ ամեն-ամենը ենթակա էին զանազան չար ուժերի ազդեցության: Համբարձման գիշերվա դյութիչ կախարդանքը կկրկնվի մեկ էլ մեկ տարի հետո.

- Լուսնակն է կայներ դարին,
Պատկերն է քու պատկերին,
Լուսնակ ջան, շուտ մի երթար,
Չուր մեկել գալող տարին...



Համբարձման գիշերվա վերաբերյալ ամենուր տարածված էր Լեյլիի ու Մեջլումի հանդիպման առասպելը: Ծնողների պատճառով իրենց մուրազին չհասած սիրահար զույգը՝ Լեյլին ու Մեջլումը խնդրում են Աստծուն իրենց աստղ դարձնել և իր մոտ՝ վերև տանել: Աստված

կատարում է նրանց խնդրանքը, և տարին մի անգամ, Համբարձման գիշերը այդ աստղերը երկնակամարի տարբեր կողմերից գալիս միանում, ջերմ համբույրով գրկախառնվում են և դարձյալ վերադառնում իրենց տեղերը: Այդ համբույրին ականատես մարդկանց այդ պահին արված բոլոր խնդրանքները կկատարվեն: Համբույրի պահին ողջ տիեզերքը կանգ է առնում, կանգ են առնում և մի պահ շունչները պահում ծառ ու ծաղիկ, ջրերը, մարդիկ ու անասունները, որին անմիջապես հաջորդում է համընդհանուր ողջագուրանքը: Համբուրվում, միմյանց ողջունում են երկինքն ու երկիրը, ծառերն ու ծաղիկները...Լեռներն անգամ տեղից շարժվում են, մոտենում միմյանց, ողջագուրվում: Անմիջապես ծաղիկներն ու խոտերը սկսում են խոսել, միմյանց պատմել, թե իրենք ի՞նչ ցավի դեղ են, կամ իրենց արմատի մոտ ի՞նչ կա: Ով այդ պահին կարողանար Շահմար օձն սպանել, երկու հավասար մասի բաժանել և պոչի կողմն ուտել, նա կարող էր ծառ ու ծաղիկների լեզուն հասկանալ: Կանայք այդ գիշեր դուրս էին գալիս դաշտերը բուժիչ խոտեր հավաքելու:

Վանեցիները պատմում էին նաև, որ կախարդանքի այդ գիշերը բացվում էր Միերի փակված այրի դուռը, և Միերի ձին գանձեր էր դուրս թափում բաց դռնից: Պատմում էին նաև, թե ժամանակին մի մարդ անցնելիս է եղել այդ դռան մոտով, տեսել է բաց դուռը, ներս է մտել, ձին բեռնել ոսկի, արծաթ և դուրս եկել: Ապա նկատել է, որ ձեռքի փայտը թողել է այրում, վերադարձել է այն վերցնելու, բայց կախարդանքի ժամն անցել է, դուռը փակվել է, և մարդը մնացել է ներսում: Հաջորդ տարի նույն ժամին բացվել են այրի դռները, և փակվածը ողջ-առողջ, հավաքած գանձերի հետ միասին դուրս է եկել այրից:

Այդ կախարդական գիշերը չարքերն էլ հանգիստ չէին մնում: Նրանք կարող էին հարս ու աղջիկ փախցնել, կովերի կաթը ցամաքեցնել: «Մշում ու Բուլանըխում զանազան միջոցներ են ձեռք առնում իրենց կթի կենդանիները լեբչուց ազատ պահելու համար, որը բացօդյա տեղում ոչինչ անել չի կարող: Այդ պատճառով էլ իրենց կենդանիներով ու ընտանիքներով բացօդյա են անցկացնում այդ գիշերը: Լեբչին կամ լեբրարը կախարդ պառավ է, որ զանազան կախարդական գործողություններով աշխատում է դրացիների կթան կովերի «խերն ու բարաքյաթը» իր տունը փոխադրել: Այդ գործողությունները կոչվում են «լեբ», իսկ կատարողը՝ «լեբրար»: Պառավ «լեբրարը» այդ գիշեր մերկանում է, մի մազե պարանով կապում է կաշվե գոգնոց, ձնում է հարում, որի թանը թափվում է դրացիների կտուրների վրա: Ապա իջնում է նրանց բակը, ուր կով է կապված լինում, կովերի մի կողմից մյուսն է թռչում, հետո վերցնում է երկու սալաքար և մի քիչ խռիվ, վերադառնում է տուն և խռիվը վառում քարերի վրա (այս բոլոր գործողությունները կատարելիս նա կախարդական խոսքեր է մրմնջում): Այսքանով վերջանում է լեբը, և պառավի տունը միշտ լի է լինում դրացիների ձնումի «խեր ու բարաքյաթով»: Լեբրար կանանց վնասազերծելու մեկ այլ հնարավորություն, որ կիրառվում էր Մշո Բուլանըխում, Համբարձման գիշերը աթարը տների երդիկների և քիվերի շուրջը կլոր շարելն էր:

Համբարձման գիշերը չարքերը կարող էին հարս-աղջիկներ փախցնել, և փախցրածը միայն մեկ տարի հետո կարող էր վերադառնալ, ուստի հարկավոր էր շատ զգույշ լինել թափառումների այդ գիշերը.

- Աղջիկ, դու հուր ես, մուր ես,
Ես ծարավ եմ, դու ջուր ես,
Ես Համբարձման գիշերը,
Քեզ ման կուգամ, դու ո՞ւր ես...

Վանում գիշերը կանայք ավել էին հեծնում և յոթ անգամ տան շուրջը պտտվում՝ Համբարձման գիշերվա բացասական կախարդանքներից տունը պաշտպանելով:

Մուշում օրեր առաջ տների երդիկները և դռների քիվերը պատում էին ձեռքով թխած թրիքի աթարներով, որպեսզի տները Համբարձման գիշերվա կախարդանքից ազատեն:

Նոր Բայազետում չարը խափանելու համար չորեքշաբթի գիշերը տան շեմին քոռ մեխ էին խփում (ցանկալի էր՝ պայտի համար օգտագործած մեխ), ինչպես նաև գութանի խոփը թողնում էին շեմքի առաջ: Նույն գիշեր տանտիկինները ձմումին մեխ կամ փուշ էին խփում, հետո փոխանները հանում էին, կապում ձմումի բերանին և հեծնում: Կանանցից ով կարողանում էր, գաղտնի հեծնում էր նաև հարևանի կովը կամ մատակը և ասում.

- Եղդ ինձի,

Թանդ քեզի,-

որպեսզի հարևանների յուղն էլ իրենց գա: Նույն նպատակով նույն գիշեր հարևանի երդիկի շուրջը շշով գիծ էին քաշում: Երկու եփած ձվի միջից կապույտ թել էին անց կացնում և թաղում էին հարևանի բակում. այդ դեպքում հարևանի կովի կաթի յուղայնությունը պակասում էր, իրենցը՝ ավելանում: Երկու հարևանից երկու կտոր աթար էին գողանում և իրենց կաթսայի տակ վառում:

Վաղ առավոտյան կանայք սիրի-սիրի ծաղիկ կամ ավելուկի թուփ էին պոկում և դնում կաթնամանի վրա, որպեսզի կաթի առատությունն ապահովեին: Իսկ եթե հաջողվում էր գտնել սովորաբար եռատերև սիրի-սիրու երկտերևանոցը, շատ ուրախանում էին և գցում խնոցու մեջ: Միաժամանակ մի քար էին դնում ծառի ճյուղերի արանքում, ասելով. «Քո պտուղը քարի պես ամուր մնա, չթափվի», արմատի մոտ մոխիր էին ցանում՝ ասելով. «Ճիճու չընկնի քո մեջ»:

Բոլոր տներում վաղ առավոտյան կաթնապուր էին եփում: Կաթնապրի տակ վառվող կրակի մեջ էին գցում Մեծ պասին թխած յոթ քակորները, սակայն ջանում էին այդ օրը յոթ բակերից լուռ ու թաքուն չոփեր հավաքել և նույնպես գցել կաթնապուրի կրակը:

Որոշ տեղերում կաթնապուրը եփում էին խմբովի, արտերի մոտ, և մի քանի շերեփ շաղ տալիս արտերի շուրջը, նախ՝ հնձի առատությունը, ապա՝ արտը մորեխից ու կարկուտից ապահովելու նպատակով: Բոլոր դեպքերում այդ օրվա կաթնապուրը մատաղ էր, այն բաժանվում էր առնվազն յոթ տեղ: Շատ ընտանիքներում Զատիկից մինչև Համբարձում կաթնապուր չէին եփում, որպեսզի կովերի կաթը չպակասի, և Համբարձմանը առաջին անգամ եփվող կաթնապուրը հատուկ հանդիսավորությամբ էր ուտվում:

Հինգշաբթին, անշուշտ, տոնական հանդիսությունների հիմնական օրն է: Բոլորը, բոլորը, բոլորը՝ մանուկից մինչև ահել, տոնական հագուստով են, ծաղիկներով զարդարված: Ծաղիկներով զարդարված են նաև տները, անասունները, սրբավայրերը...: «Ցանուցիր ծաղկե պսակներ կան խաչքարերի և Թուխ մանուկների վրա, գցված են այնտեղ ի հուշ և ի հույս ամուսնական պսակի: Եվ հազարամյա կաղնին ու մյուս նվիրական ծառերը պճնված են շորերից պոկված հազարավոր կտորներով, որոնք կախված-կապված են կանաչ ճյուղերից օրերից մի օր ցավագարությունից բուժելու հույսով: Ոչ մի ձեռք չի համարձակվի այդ ծառերից մի ճյուղ կամ տերև պոկել: Հիվանդները այդ լաթերից պոկում են և իրենց ցաված տեղը կապում»: Երիտասարդները տենդագին պատրաստությունների մեջ էին: Աղջիկները նախ բերում էին իրենց պահած Վիճակի փարչն ու ծաղիկները: Լինում էին, սակայն, դեպքեր, երբ տղաները գտած էին լինում պահուստը և գողացած: Այսպիսի դեպքերում տղաները պարծենալով շրջում էին թաղերում և երգում.

- Վիճակ դրինք վըր բլին,

Ջան ծաղիկ, ջան, ջան,

Փստաց, ընկավ մըջ տղին,

Ջան վիճակ, ջան, ջան...

Դառնացած աղջիկները, թափուր գտնելով փարչի պահած վայրը, բանակցությունների մեջ էին մտնում տղաների հետ՝ փարչը և ծաղիկները ետ գնելու նպատակով: Այդպիսի դեպքերում հնչում էր աղջիկների հուսախաբ, տխուր և պարտված երգը.

Վիճակն ընկեր ի գերի,
Ազաբ լաճերաց ձեռն ի,
Տուն երկու ձու կժողվեմ,
Քե գերութենից կազատեմ:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Երկար բանակցություններից հետո աղջիկները ետ էին բերում փարչն ու ծաղիկները, բայց վիճակի զորությունն այլևս կասկածի տակ է ընկնում: Փոխարենը, անխաթար գտնելով պահուստը, հաղթական աղջիկները ծաղրական երգերով արտահայտում էին իրենց ցնծությունն ու հաղթանակը տղաների հանդեպ.

Կանաչ կենան աղջիկներ,
Մեջքակոտոր տղաներ,
Չեկան տարան վիճակներ
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Վիճակ նստե վեր պատին,
Ազաբ լաճեր վեր լակին,
Ջան վիճակ...

Վիճակ նստե վեր իշուն,
Իտև, առճև առբըշում,
Ազապ լաճեր վիճկին շուն,
Ջան վիճակ...

Վիճակ, սանյաքըտ գյուլբան,
Խալավտ ատլաս ոսկեպյան,
Ազապ լաճեր քյե կյուրբան,
Ջան վիճակ...

Վիճակ, անունըտ Նիգյար,
Աշկով անելն ի քյու քյար,
Ազապ լաճեր քյե նյոքար,
Ջան վիճակ...

Ես վիճակ չեմ, յալդուզ եմ,
Պարակ մեճացս շալ կուզեմ,
Ազապ լաճեր լալ կուզեմ,
Ջան վիճակ...

Վիճակ, արի քյե տանեմ,
Տանսե տանիս քյե խանեմ,
Ազապ լաճեր ախ անեն,
Ջան վիճակ...

Վիճակ, անունըտ Մանուշակ,
Տայտ փռուկ կութնի դոշակ,
Ազապ լաճեր քյե մշակ,
Ջան վիճակ...

Վիճակ, քյու լեզուն բլբուլ,
Նման ես սարի սմբուլ,
Ազապ լաճեր կյան քյե կուլ,
Ջան վիճակ...

Երգելով, ուրախանալով, աղջիկները միաժամանակ պատրաստվում էին հավկուրը շուռ տալու ծեսին և Վիճակի վերջին հարդարանքներին: Հավկուրը շուռ տալը հետևյալն էր. աղջիկներից մեկը՝ «գլխավոր» երգողը, փարչի պարունակությունը շուռ էր տալիս մի ամանի մեջ՝ ասելով.

Սկլա՜, սկլա՜, պատին տուր,
Հավկուրը շուռ տուր,
Վախում եմ քնեմ, քունս տանի,
Չարսավս տանիլ տամ:

Ապա կրկին ամանից շուռ էր տալիս փարչի մեջ՝ ասելով.

Սկլա՜, սկլա՜, պատին տուր,
Հավկուրը շուռ տուր,
Վախում եմ քնեմ, քունս տանի,
Շալս տանիլ տամ:

Սա շարունակվում էր այնքան, մինչև թվարկվում էին հագուստի բոլոր տարրերը, ընդհուպ մինչև մաշիկները, փաստորեն մինչև «մերկանալը»:

Իսկ Բասենում մեկ անգամ շուռ էին տալիս մի սկուտեղի վրա և ասում.

Էսոնք քուլլի պատին տանք,
Մեր հավկուրը հոս շուռ տանք,
Վախենանք քնենք ու մնանք,
Մեր վիճակը տանել տանք:

Ջատիկից մինչև Համբարձում հավկուրով չհիվանդանալու համար երեկոները չաշխատելու անհրաժեշտությունը վերացավ, այլևս հավկուրի վտանգը չկար: Ապա աղջիկները փարչի պարունակությունը լցնում էին մի բարակավիզ սափորի մեջ, սափորի կոկորդով գրտնակ անցկացնում, եզրերը փալասներով ամրացնում, գրտնակի վերին, ցցված մասում փալասներից գլուխ, ձեռքեր ու հագուստ հագցնելով տիկնիկ պատրաստում, որը զարդարում էին իրենց սեփական զարդերով, ուլունքներով: Այդ տիկնիկը հայտնի էր «Վիճակի տիկնիկ», «Արուս», «Վիճակի Արուս», «Կաթով ապրի Արուս» անուններով:



Անչափահաս մի աղջնակի զուգում էին հարսի հագուստով, և ամբողջ խումբը դուրս էր գալիս երգ ու պարով, սափորը պար ածելով, «Վիճակը» գովերգելով: Աղջիկների խումբը մտնում էր բակերը, երգերով բարեմաղթություններ հղում տանտերերին, նրանց ծաղկեփունջ ու փարչի «աստղունք» դրած ջուր նվիրում՝ փոխարենը ձու, կարագ, կաթ, պանիր ստանում: «Վիճակը» շրջելիս աղջիկները երգում էին.

Էսօր մեծ Համբարձում է,
Հանաեր, նաեր, նաեր,

Ծաղիկների հարցում է,
Ջանաներ, նաներ, նաներ:
Աստված երկինք համբարձավ,
Հանաներ, նաներ, նաներ,
Ամենքի բախտ բարձավ,
Ջանաներ, նաներ, նաներ:



Վանում ընդունված վիճակի երգերից էր.

Վիճակ նստե վէր իշուն,
Վիճկի փեշերն ի նխշուն,
Ազաբ լաճեր վիճկին շուն,
Ջան վիճակ, ջան, ջան...

Վիճակ նստե պեով կանի,
Վարդն իրիսին հով կանի,
Ջան վիճակ, ջան, ջան...

Կես լեանգյառի վարդ եմ ես,
Յարոջ համար պացվայ ես,
Ջան վիճակ, ջան, ջան...

Վիճակ նստե կար կանի,
Ասեղ կոտրավ, վըշ կանի,
Ջան վիճակ, ջան, ջան...

Վիճակ, արի քյե տանեմ,
Տանսէ տանիս քյե խանեմ,
Լէն անթարով քյե պախեմ,
Ջան վիճակ, ջան, ջան...

Տիսեյք վիճակ ինչ կանի,
Սրտի ուզածն ինչ ի,
Խորերով ցորեն կուզի,
Արտերով գարի կուզի,
Ջան վիճակ, ջան, ջան...

Տավուշում՝

Քնացի ծաղկի,
Վխծա մատս ծակի,
Հարսներին քաղել տվի,
Մոնթերին փնջել տվի,
Գզրին փայ անել տվի,
Գզրի փայը կտերը,
Օըլվըլալա ծտերը,
Տյուս պի մի թեփշի նուռը,
Որ չգնամ ես խանի դուռը:

Գեղարքունիքում՝

Վիճկի պուլիկն ա դեղին,
Առանք ընգանք մըջ գեղին,
Խոտաղներն էկան կըկլին,
Ջան վիճակ, ջան վիճակ,
երթանք բերենք մենք միջակ:

Խումբը որևէ մեկի տանը մոտենալիս մասնավորեցնում էր երգի բովանդակությունը.

- Տանուտեր, գնա բազար,
Օխչրներ էնե հազար,

Տանտիկին, մըր փայը տուր՝
Տանը չդիպնի նազար (չար աչք):

Կամ՝

- Դուռը բացեք, մարդ եկավ,
Սինին լիքը վարդ եկավ,
Գովեմ, գովեմ, ո՞ւմ գովեմ,
Մեր Արսենին գովեմ (տալիս են տան երեխայի անունը):

Բասենում վիճակի պարզ քառյակներ երգելով՝ վերջում ավելացնում էին.

Սև հավեն հավկիթ կուզեմ,
Ջան վիճակ, ջան, ջան,
Կարմիր կովեն եղ կուզեմ,
Ջան ծաղիկ, ջան, ջան:



Բալուեցիների երգերում ավելի մեծ պահանջներ կային, սակայն ավելի ազդեցիկ էին նաև մաղթանքները.

Վիճակն էկեր մեր դուռը, օխ լէ,լէ,լէ,լէ,լէ,
Յոթն աղբրեն ջուր կուզը, օխ Լէ,
Կարմիր կովուն եղ կուզը, օխ Լէ,
Սև հավուն հավկիթ կուզը, օխ Լէ,
Մեծ փեթկեն պլղուր կուզը, օխ Լէ,
Պզտըկ փեթկեն աղ կուզը, օխ Լէ:

Յոթն աղջիկ էինք էրեկ, լէ,լէ, հեյրան, լէ,լէ,
Յոթն աղբրեն ջուր բերող, լէ, լէ,
Տարինք ըտ ջուր պապուն, լէ, լէ,
Տեր պապն օրշնեց ըտ ջուր, լէ, լէ,
Ու խմցուցինք Վիճակին, լէ, լէ,
Ու սալը գցինք ամեն տուն, լէ, լէ,
Օրշնած ջուրեն մեյ մեկ թաս, լէ, լէ,
Տվինք ընոնց որ խառնեն, լէ, լէ,
Մածունին հետ խնոցու, լէ, լէ,
Որ օրշնվի մածունը, լէ, լէ,
Որ եղն ընոր շատ ըլի, լէ, լէ,

Յոթը կտրիճ աղեկուկ, լէ, լէ, հեյրան, լէ, լէ,
Շնարի պոյ ունեցող, լէ, լէ,
Առնենք էլլանք սարերը, լէ, լէ,
Պարենք մեկտեղ գոտիման /իրարու գոտին բռնած/ լէ, լէ,
Սարեր, ձորեր թող խնտան, լէ, լէ,
Մեր ձաներեն թանպուրա, լէ, լէ,
Ու շենցնենք մեր տներ, լէ, լէ,
Վարենք, ցանենք մեր լարեր (արտեր), լէ, լէ,
Որ տան մեզի շատ բերքեր, լէ, լէ:

Ալաշկերտում ավանդաբար երգվում է տվյալ տան պստիկի գովքը.

Կանչէք, կանչէք (օրինակ՝ Արսենին),
Արսէնի ձին ջորի յա,
Արսէնը ալ խնձորի յա,
Արսէն նստե գերանին,
Ոսկի դավալ բերանին,
Արսէն ուր ձին թամբեր ա,
Քշեր մեյդան ընցեր ա,
Անձրև եկեր թրջեր ա,
Արև զարկեր, չորցեր ա,
Խընձ քազուր վարդ բացվեր ա:
Արսէն նստե տոշակին,
Խելքն ու միտքն ա փեշակին,

Խմեր ա նռան գինին,
Հոտ կենա մանուշակին,
Արսէնի ձին արօտն էր,
Քուրն ուր աղբոր կարոտն էր...

Աղջիկների ևվիրած ջուրը լցնում էին խնոցին, որ յուղն անպակաս լինի, ծաղկեփունջը դնում էին ամբարի վրա, որ հացն անպակաս լինի, կամ կերցնում էին կաթնատու կովերին ու լծկան եզներին, իսկ իրենք ընտանիքի անդամների թվով մեկական փոքրիկ իր էին գցում վիճակի փարչը՝ իրենց բախտը գուշակելու նշան:

Մինչ աղջիկները շրջում էին տնետուն, ևվիրում և ստանում, տղաներն էլ անգործ չէին նստում: Մասնավորապես, նախրապան տղաները, օրինակ, Մուշում «իրենց նախրաց մեջեն սև ու ճերմակ խայծերով խայտաբղետ ու ընտանի եզ մը կընտրեին, որ նույն օրը գեղի ռեսեն շատ ավելի պատվավոր է, և վրան ծոպերով լեցուն գորգե բաճկոն մը հագցընելով՝ կը սկսին տեսակ - տեսակ ծաղրկներով զարդարել, այնպես որ աչաց խոշոր բիբերը պիտոր տեսնես՝ որ իմանաս թե եզ է: Ինչվան ժամեն կելլեն՝ արևը բավական բարձրացած կըլլա, և ահա երկրորդ արև մը հանդերձ յուր արբանյակոք կը շարժվի դեպ ի գեղ գալու: Հետևեն, առջևեն ու երկու քովեն կը ճեմէ բազմություն մը: Եզան վարոցներէ դեռ պալարած կռնակն ու կողերը ոսկեճամուկ ծիրանյաց մեջեն չտեսնվիր. այն վիզը, որ երեկ տաժանելի լծի տակ կը կորանար, կարգե դուրս գեղեցիկ բաշերով զարդարված է, իսկ պոչը գույնզգույն շորերով պճյալ, որուն համար կարծես թե ավելի պարծենալ կամ բերկրիլ կը ցուցընեն անոր չորս կողմանէ պարելով կայտռելով գնացող և կերպ-կերպ հագուստներով զարդարված կրակուրոց պահակները: Այդ է ահա Համբարձման եզը. բոլոր գեղը կը դղրդի և «Համբարձման եզը եկավ» ըսելով՝ խուռն բազմությամբ ի տես կերթան: Հոտաղներուն ոմանց ձեռը սապատ, ոմանց ալ բղուկ կա, որոնց մեջ տուներեն առած հավկիթներն ու կարագը կը դնեն ու կըսկսեն դռան ի դուռ ճեմեցունել այդ փառավոր եզը, յուրաքանչյուր տունե թիվ մը հավկիթներ ու կարագի քանակ մը ընդունելե ետև, իրենց շնորհակալությունը կհայտնեն, միատեղ ամենքը բարձրաձայն նույն տան համար «շեն մնա, շեն մնա» մաղթելով»: Եզան երթը երբեմն շարունակվում էր մինչև երեկո: Գյուղում այդ կարգի թափորներ կարող էին մի քանիսը լինել:

Այս սովորույթը զանազան տարբերակներով կրկրնվում էր շատ վայրերում: Ոմանք եզան փոխարեն ամենակաթնատու կովն էին «փնջում», ուրիշները՝ գառ ու ոչխար, բայց երթը կրկնվում էր ամենուր:

Վերջապես «Վիճակը» պտտված էր, նախրապաններն ու հովիվները՝ բավարարված, խմորեղենը՝ թխված, հավերը՝ խաշված, կաթնովը՝ կերված: Բոլորն այգիներն էին շտապում, դաշտերը, ուր տեղի պիտի ունենար Համբարձման կարևորագույն ծեսը՝ վիճակահանությունը: Շատ վայրերում, որտեղ այդ հնարավորությունը կար, խմբերը շարժվում էին դեպի դաշտերի, սարերի աղբյուրները: Այս երթը նույնպես, անշուշտ, ուղեկցվում էր երգերով.

Դըմպը՛ռ, դըմպը՛ռ, դը՛մպ, դըմպը՛ռ,
Ես պըճըլիկ աղջիկ մ՛եմ,
Եօթը աղբրկայ ջրիկ եմ,
Եօթը ծառի ճղիկ եմ,
Եօթը ծաղկի թերթիկ եմ,
Ես աղջիկն եմ, վըճուկն եմ,
Դըմպը՛ռ, դըմպը՛ռ, դը՛մպ, դըմպը՛ռ,
էլէք, էլէք, աջխըներ,

Արեւն երդիք մաղուէր է,
Օրն ամեն օր չըլմանիր,
Գարնան արեւ ցեթեր է.
էս օր վճակ վճկառուկ,
Քընծ արեւը ջուստ էլէք:

Սիա թե ինչպես է նկարագրում ականատեսը Համբարձման հինգշաբթին Մուշում. «Համբարձման օրը... կին, հարս, աղջիկ, ծեր, երիտասարդ, երեխա՝ զուգված, զարդարված, նստում էին ձիերի և էշերի վրա և ուրախ երգելով, խնդալով, խաղալով դիմում էին սարը, ու զանազան խմբեր կազմած՝ ուտում էին, խաղում, պարում, երգում և մինչև երեկո քեֆ և ուրախություն էին անում: Այդ օրը բանաստեղծական մի պատկեր էր ներկայացնում սարը: Այստեղ երիտասարդներից ոմանք ձիավարժություն էին անում, ոմանք՝ հրացան արձակում, այստեղ գոտեմարտում էին և զանազան խաղեր սարքում: Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած ուտում էին, խմում ու երգում: Մի քիչ հեռու հնչում էր զուռնան. երիտասարդներն ու կանայք շրջան կազմած, ձեռքերին թաշկինակ բռնած՝ պարում էին ու երգում:

Մի ուրիշ տեղ գյուղացիները խմբովի նստած՝ լսում էին իրենց սիրելի աշուղին, որը շրջում էր հանդիսականների մեջ և երգում ժողովրդի սիրած հին երգերից: Այսպես ամեն տեղ խնդում էին արտերը և թնդում երգերը մինչև ուշ երեկո»: Համբարձման տոնին Զատիկից հետո վերջին անգամ խնջույքների զարդն էր լինում կարմիր ներկված ձուն, որ մեկ էլ պիտի հայտնվեր հաջորդ Զատիկին: Այսպիսով փակվում էր զատկական տոնաշրջան:

«Փնջած» եզը վերջապես ազատվում է իր զարդարանքից՝ ծաղիկներից: Ծաղիկները թողնում էին դաշտում, եզը քշում «յայլան», իսկ իրենք՝ նախրապանները, հովիվները բոլորում խնջույքի սեղանի շուրջը:

Այդ նույն ժամանակ աղջիկների խմբերը բազմում էին խոտերի վրա, իրենց կենտրոնում ունենալով վիճակի փարչը: Փոքրիկ հարսնացուն նստում էր փարչի մոտ՝ երեսը քողով ծածկած: Որպես անարատ, միամիտ երեխա՝ նա էր, որ պիտի յուրաքանչյուր բախտագուշակ քառյակ-երգից հետո հաներ նշանները փարչի միջից և ըստ այդ քառյակի բովանդակության վճռվեր նշանի տիրոջ վիճակը՝ բախտը: «Վիճկի արուսը» համբուրում էին, բազմեցնում փարչի մոտ. սկսում էր լավագույն երգողը, մյուսները հանգերգում էին: Նախ հայտարարվում է, որ սկսվում է վիճակահանությունը.

էս օր հինգշաբթի, վաղը ուրբաթ,
Դռուիս կըղպենք, պատերն երկաթ,
Մարիամ նստէր վիճակ կուտայ,
Հարս աջխիկի պախթ մը բանայ:

Ապա դիմում էին վիճակի փարչին.

Վիճակ, վիճակ, ծաղկավիճակ,
Շալե շապիկ, նախշուն կոճակ,
Եզան տարան տիրոջ դուռը,
Ճակտին զարկին կարմիր նուռը,
Ջան, ծաղիկ, Համբարձում...

Նոր Նախիջևանում՝

Վիճակ, վիճակ,
Վիճակի չիչակ,
Վարդ մանուշակ,

Օսկի կոճակ:

Վանում՝

Տեսեք վիճակն ի՞նչ կուզի,
Սրտի ուզածն ի՞նչ ի,
Սարերով ցորեն կուզի,
Արտերով գարի կուզի:

Գլխավորը, ընդհանուրինը՝ ցորենն ու գարին ուզված էր, այժմ հերթը անձնական փորձություններինն էր.

Մերն ի կերե խավրծիլ,
Տղեն բերե ոսկեծիլ,
Հարս, հան վիճակն ի բարին,
Համբարձում դիլաքդ կատարի,
Հասնես քո սրտի մուրազին:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Կամ՝

Տիքրիս հասավ կյետ Մուրադին,
Տյու էլ հասար քյու մուրազին,
Խարս, խան վիճակն պյարի,
Համբարձում քյու դիլաք կատարի:

Այս մաղթանքից հետո, ահա, սկսվում էր հարյուրավոր քառյակների շքերթը շրջապատող բազմության մեջ, դրական վիճակ ընկած նշանի տիրոջ ուրախությունը կիսելու, բացասականին մխիթարելու ժամանակը: Երգվում էր մեկ քառյակ, և մինչ խումբը կրկներգում էր «ջան վիճակ, ջան, ջան...», փարչի մոտ՝ քողի տակ նստած հարսը հանում էր որևէ մեկի նշանը, ում և վերաբերվում էր քառատողի իմաստը.

Աղջի, մանէ մանածդ,
Գնա քաղե ցանածդ,
Այսօր վիճակի տոնն է,
Կը գտնես քո սիրածը:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Էս գիշեր լուսնակ գիշեր,
Ձինն էկել, գետին նախշել,
Դոշդ դեմ արա պաչեմ,
Կեռ ունքեր, կարմիր թշեր:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Բախտավոր, դրական արդյունքի դեպքում երգում էին.

Վիճակ, վիճակ, դուս էլավ,
Վիճակի վրեն լուս էլավ,
Էս ի՞նչ բարի բախտ էլավ:

Հաջորդը կարող էր տխուր, անհաջող գուշակություն լինել.

Առակ էլար մէջ գեղին,
Սիրտդ ընկավ օձու լեղին,
Քո հորն ու մորը ի՞նչ ասեմ,
Որ քե տվին տախ տղին:
Ջան վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Վիճակահանությունն ավարտվում էր փարչում մնացած ջուրը արտերում ու խոտհարքներում շաղ տալով: Շիրակում նույնիսկ հիվանդատերերը այս ջրից տանում էին, իրենց հիվանդի գլխին քսում, որպեսզի վերջինս շուտ առողջանա ու կազդուրվի: Վիճակի տիկնիկը մաս-մաս էր արվում, ամեն մեկը նրա վրա կախած իր զարդն էր վերցնում և մերկացած տիկնիկը մնում էր դաշտում: Ապա սկսվում էր աղջիկների սրբազան խնջույքը կենարար, նորածիլ կանաչի, ծաղիկների վրա, դարձյալ երգերով, կատակներով.

Վիճակ, վիճակ, ոսկի կոճակ,
Մամըս բերեր յոթն կտրճակ,
Ոլորտեն դուքնե դուքան,
Ջարկեն ոսկիե սիքան:
Բարձ բարձի վըրան,
Հրամմե, նստի վըրան,
Տըսվերկու աստղը ծագեր,
Ըմենն էլ քու բախտի վրան:
էրնեկ էն օր, որ դուն եղեր,
Երկինք, գետին խնդում եղավ,
Աստղերը ծափ ծեծեցին,
Էս ի՛նչ բարի պտուղ եղար:
Ինքը կը նմանի խաթունի խաթուն,
Ոսկին կուգա բիթուն, բիթուն,
Կոխեց ձըվկին, թըռավ թախթին,
Աշխարհքը ցանկացավ բախտին:
Վիրին շուկան տաքուկ հացիկ,
Վարի քուչան գըզման բամբկիկ,
Քրիստոս իր բերնովն ըսեր,
Ասի քու ճակտիկն է գրվեր:
Կանուխմանց մտա էգին,
Գըլոխս կըպավ թըփին,
Դեռ մուրատ չեմ առեր եմ,
Ի՞նչխե տի մըտնամ գետին:
Կանուխմանց իջա բախչան,
Բուլբուլն բաշլավ մայան.
Քաղեցի որթնոտ խաղողին,
Դըրի ոսկե սինին:
Երկնուց մատնի մի իջավ,
Էկավ մատըս խրճեցավ,

Ես գիտեի ակը խամ էր,
Բախտես գոհար բացվեցավ:

Դաշտերից վերադարձը նույնքան հագեցած, հուզառատ է, երգերով ուղեկցվող.

Աս ինչ կոճիկ մոճիկ է,
Էկեր իջեր մեր դուռը,
Շարեշապիկ հագեր է,
Քթան լաչկիկ ձգեր է,
Բակն արեւով լեցեր է,
Մանուկ տղան տեսեր է,
Գացեր մօրկան ըսեր է,
Մօրկան խելքիկըն անցեր է,
Խաչ մը մատաղ էրեր է:

* * *

Աղջիկն օղերով կ'ուզեմ,
Տղան փողերով կ'ուզեմ,
Դորդան տաւարով կ'ուզեմ,
Սնտուկը մալերով կ'ուզեմ,
Տունը թամալով կ'ուզեմ,
Էգին օրթոտով կ'ուզեմ,
Քար գողնամ, խիժ գողնամ,
Եօթն աղբիւրէ ջուր գողնամ,
Դըմպը՜ռ, դըմպը՜ռ, դը՜մպ, դըմպը՜ռ:

Երեկոյան տունդարձի երգը վկայում է տոնի ավարտը. սկսվում են աշխատանքով խիստ հագեցած օրերը:

Համբարձման երկուշաբթին,
Առեք փոցխն ու գերանդին...

«Համբարձման երկուշաբթին...» բառերով սկսվող պարերգը շատ տարբերակներ ունի: Այն տարածված էր հատկապես արևմտահայոց միջավայրում: Երգի առաջին տողերը՝ «Համբարձման երկուշաբթին» ակնարկում են այն մասին, որ Համբարձման տոնը երբեմնի, ըստ երևույթին, նշվել է կիրակի օրը: Երգի տարբերակները ներկայացնում են երկրագործական աշխատանքների հիմնական ցիկլը՝ վարուցանքից մինչև հունձը և կալը/կալսելը ներառյալ: Երգի տարբերակների հետազոտող Ռ.Խաչատրյանը գտնում է, որ նրանում արտահայտված է հանուն տնտեսական հաջողության ընդհուպ սեփական անձը զոհաբերելու պատրաստակամությունը. երգում մարդու մարմնի տարբեր մասերը «ի սպաս են դրվում» երկրագործական աշխատանքների կարիքներին. երգողները պատրաստ են «աչքերն աղբյուր դարձնել», «թևերը՝ թիակ, ձեռքերը՝ մանգաղ, մատները՝ հորսելի» և այլն.

Եկավ գարուն, եկան հավքեր,
Տաքցավ արև, գըլգլան ջրեր,
Եկավ վարուցանելու հըյամ,
Կըռունկ ամոլ լծեցի,

Ղազեր հորիկ լըծեցի
Ճըննճուղ հոտաղ վարձեցի,
Կաքավ հացվոր բռնեցի,
Արտիկս վարեցի՜, ցանեցի՜,
Ցանեցի՛ ու թըմմեցի...
Եկավ ջրելու հըյամ,
Աչքերս աղբյուր էրեցի,
Արտըսուքներս քամեցի,
Թևերս թիակ էրեցի,
Ջըրեցի՜ ու թըմմեցի...
Եկավ քաղելու հըյամ.
Ձեռքերս մանգզոն էրեցի,
Մաղեցի՜ ու թըմմեցի...
Եկավ փոծխելու հըյամ.
Մատներսը փոծխ էրեցի,
Փոծխեսի՜ ու թըմմեցի...
Եկավ կապելու հըյամ,
Մազերս կեմ ոլրեցի,
Մեկ ձեռքս բունքսի էրեցի,
Խոռմեցի՜ ու կապեցի,
Բարդեցի՜ ու թըմմեցի...
Եկավ կրելու հըյամ,
Պառեկս բալխիր էրեցի,
Կրեցի ու կալ լըցի,
Փըռեցի՜ ու թըմմեցի...
Եկավ ծեծելու հըյամ,
Լագլագ կործ լըծեցի,
Կիվիվ վըրեն նըստուցի,
Հելե՛վ հելե՛վ կանչեցի,
Ծեծեցի՜ ու թըմմեցի...
Եկավ թեղելու հըյամ,
Մատներս հոսելի արի,
Թեղեցի՜ ու թըմմեցի...

«Համբարձման երկուշաբթի» երգի տարբերակների զգալի մասն ավարտվում է «յարոջ» բերքը նրան հասցնելու և այդ միջոցին յարին տեսնելու, նրան հանդիպելու, նրա «գիրկն ու ծոցը» վայելելու հույսերի արտահայտմամբ: Համարյա միշտ այդ հույսը չի իրականանում՝ «յարը քնած է, քրտնած է, խռովուգ է...».

Յարոջ ցորեն կրեցի,
Յարոջ դռնով ընցուցի...

Յարոջ խոտիկ կրեցի,
Յարոջ դռնով ընցուցի...

Յարոջ դռնով ընցուցի,
Յար քնուկ էր՝ չիմցուցին:

Երգի տարբերակներում արտացոլված են նաև բուն Համբարձման տոնակատարության որոշ ծիսա-հմայական սովորություններ: Մարդիկ հավատում էին, որ այն մարդը, ով Համբարձման երկուշաբթի առաջինը կճաշակեր Համբարձման երկուշաբթի եփվող կաթնապուրի «քերքը», նրան էլ բաժին կընկներ այդ տարվա առատությունն ու ապահովությունը: Այս կարևոր սպասելիքն ապահովելու նպատակով մեծ ընտանիքով ապրող եղբայրների կանայք շտապում էին առաջ ընկնել, և դա կարող էր վեճի առարկա դառնալ: Ահա այս վեճի հիշատակությամբ է սկսվում «Համբարձման երկուշաբթին» պարերգի տարբերակներից մեկը.

Համբարձման երկուշաբթին,
Հայ նինարե, հայ նինարե,
Գռվան էրկու տեքերկին,
Հայ նինարե, հայ նինարե,
Գըռվան վըր պուտկի քերքին,
Թաթխան իրարու հոր դին;
Վերցին զփոցխ ու գերանդին,
Իջան հըտ ծորու ափին,
Քաղեցին, քաղքըփեցին,
Մանրիկ, մանրիկ խորմեցին,
Կէմիկ չեղավ՝ կապեցին,
Ձամբել կեմիկ էրեցին,
Հոտաղ չէղավ՝ քշեցին,
ճնճուղ հոտաղ էրեցին,
Խարզան չէղավ՝ քշեցին,
Սև օձ խարզան էրեցին,
Սելիկ չէղավ՝ բարձեցին,
Մեջկունք սելիկ էրեցին....

Համբարձումից մինչև Վարդավառ ուխտատեղի չէին գնում, համարելով, որ սրբերը համբարձված են: Այդ նույն ժամանակ ոմանք պահում էին Ս.Կարապետի պասը: Այս յուրօրինակ պասի ընթացքում շաբաթ և կիրակի օրերը թույլատրվում էր ուտել ուտիսի կերակուրներ, բայց՝ ոչ մսեղեն: Ինքնատիպ Ս.Կարապետի պաս պահողները ծամոն նույնպես չէին ծամում: Ս.Կարապետը հատկապես ցանկալի էր անժառանգներին, որոնք ուխտում էին այս պասը պահել յոթ տարի շարունակ: Այն ի վերջո ավարտվում էր Վարդավառին դեպի Մշո Ս.Կարապետ ուխտագնացությամբ, ուր ուղևորվում էին ընտանիքներով, Վարդավառից երբեմն մեկ ամիս առաջ:

Զվարճալի պարերգեր Վանից

Թէ կաղ եմ նա՝ կաքավ եմ,
Թէ շիլ եմ նա՝ շիրին եմ,
Թէ քյռնած եմ նա՝ շաքրով շինած եմ,

Թէ կուզ եմ նա՝ կռուզ եմ,
Թէ սև եմ նա՝ սերակեր եմ,
Թէ կօլոտ եմ նա՝ խօրոտ եմ,
Թէ գյեշ եմ նա՝ ատլասի փեշ եմ:

* * *

Կնացիյնք դարման գեյդ,
Շեն կէնար էն գեյդ,
Գինին պանցուցին ջրի տեղ:
Կնայցինք Հիզան,
Մեռելներ էլան, պուպուզան,
Կիյտեր կուլին,
Մարդեր կուտին եղան:
Կնացիյնք տունը վեր,
Կայնայնք սունը վեր,
Մարդ չ՝ասաց էկեյք վիրև:
Խնամի, ախ, խոշ ես իկե,
Դաստակ, ախ, բէօշ ես իկե,
Ջուխտմ բօլօճ ես պիրե,
Մէյ վէր շիման ես կիրե:

Պարերգ, որը տարածված էր Վանի, Մուշի, Բուլանըխի հայերի մեջ (մեկընդմեջ տղամարդ ու կին, ձեռք ձեռքի, ծնկածալիկ են պարում, և երգի յուրաքանչյուր տողը մի կամ մի քանի մարդ են երգում, իսկ «գըլեջան» ու «մըրալե», «տըլեմ, տըլեմ սընջարի» ասում են բոլորը միասին ու թռչում).

Սասման կ'ելներ բարակ ծուխ, *գըլեջան,*
Յարիկ մ'ունեմ Պուլանուխ, *մըրալե,*
Ջարկեց մախճան, թալեց պուխ, *գըլեջան,*
Երես կարմիր, աչքեր թուխ: *մըրալե:*
(խումբը) *Տըլեմ, տըլեմ սընջարի,*
Ըմրա տըլեմ սընջարի:

Նախըրգընեն վար կ'ընենք, *գըլեջան,*
Քոռ անծեղուն քար կ'ընենք, *մըրալե,*
Իմ հեր քե աղջիկ չի տա, *գըլեջան,*
Ջահիլություն թարկ էնենք: *մըրալե:*
(խումբը) *Տըլեմ, տըլեմ սընջարի,*
Ըմրա տըլեմ սընջարի:

Շաղ թափեր գետին, հալեր, *գըլեջան,*
Բոբիկ հետիկն էր կորեր, *մըրալե:*
Առա զհետիկն ու գացի, *գըլեջան,*
Յարոջ դուռ հանգըռցուցի: *մըրալե:*
(խումբը) *Տըլեմ, տըլեմ սընջարի,*
Ըմրա տըլեմ սընջարի:

Կաքավ կայներ վըր քարին, *գըլեջան,*

Կըտուց դրեր քընարին,
Ես աղջիկ ենք, բելլի ենք,
Նըշանլու ենք, տելլի ենք:
(խումբը)

Յարիկս 'ի բաղչեն էր քուն,
Բուրսայի բարձն էր գլխուն,
Գացի, գացի, հեռըցա,
Բանձր գեղին մոտեցա:
(խումբը)

Գացի բ' առնենք թազա հաց,
Անտեր թուլան գիս էխած,
Փախա էլա վըր դարին,
Հավար արի իմ յարին:
(խումբը)

Յարոջ դռնով ընցա ես,
Անձրև եկավ, թացվա ես,
Արև զարկավ, բըփռա ես,
Քանց կարմիր վարդ բացվա ես:
(խումբը)

Ջեռնական բերդն էր փլեր,
Յարիկս ի տակն էր քըներ,
Քըներ էր ու քըրտըներ,
Հիալով էր, ա՞խ կեներ:
(խումբը)

Բաղշո քաղաք ձորո մեջ,
Իմ յար գըտա քարի մեջ,
Հար ե՛րբ կենանք փախե փախ,
Արի անենք առ ու փախ:
(խումբը)

մըրալե:
գըլեջան,
մըրալե:
Տըլեմ, տըլեմ սընջարի,
Ըմրա տըլեմ սընջարի:
գըլեջան,
մըրալե:
գըլեջան,
մըրալե:
Տըլեմ, տըլեմ սընջարի,
Ըմրա տըլեմ սընջարի:
գըլեջան,
մըրալե:
գըլեջան,
մըրալե:
Տըլեմ, տըլեմ սընջարի,
Ըմրա տըլեմ սընջարի:
գըլեջան,
մըրալե:
գըլեջան,
մըրալե:
Տըլեմ, տըլեմ սընջարի,
Ըմրա տըլեմ սընջարի:
գըլեջան,
մըրալե:
գըլեջան,
մըրալե:
Տըլեմ, տըլեմ սընջարի,
Ըմրա տըլեմ սընջարի:

Շիրակի պարերգեր

Չատր եմ զարկել սարին,
Վադա եմ դրել տարին,
Մութն ընկավ, տուն արի, յարալու յար,
Մութն ընկավ, տուն արի, անջիգյար յար:
Գիտեմ նամուստ էտ էր,
Խի՞ մտար մեղքիս տակին:

Մութն ընկավ, տուն արի, յարալու յար,
Մութն ընկավ, տուն արի, անջիգյար յար:
Յար եմ գտել Սոսա,
Յարիս տունը փոս ա,
Մութն ընկավ, տուն արի, յարալու յար,
Մութն ընկավ, տուն արի, անջիգյար յար:
Աստված սիրող բան չտա,
Մեկ ու ճար է, ափսոս ա:
Մութն ընկավ, տուն արի, յարալու յար,
Մութն ընկավ, տուն արի, անջիգյար յար:
Այվան շինող իմ յարը,
Ղալամ բռնող իմ յարը:
Մութն ընկավ, տուն արի, յարալու յար,
Մութն ընկավ, տուն արի, անջիգյար յար:
Ջուրն առա ելա սարը,
Չտեսա Ֆիդան յարը:
Մութն ընկավ, տուն արի, յարալու յար,
Մութն ընկավ, տուն արի, անջիգյար յար:
Ուռի ես, կանաչել մի,
Մեր դռնեն հեռանալ մի,
Մութն ընկավ, տուն արի, յարալու յար,
Մութն ընկավ, տուն արի, անջիգյար յար:
Յար, Աստված կ'սիրես,
Հեռու ես, մոռանալ մի:
Մութն ընկավ, տուն արի, յարալու յար,
Մութն ընկավ, տուն արի, անջիգյար յար:

* * *

Մանրաթփիկ ըռեհան,
Էլնինք սարերը սեյրան:
Էլի պարը բոլորավ,
Յարս մեջը մոլորավ,
Մանրաթփիկ ըռեհան,
Էլնինք սարերը սեյրան:
Կայնա քարին ղուշ ելայ,
Սիրած յարիս թուշ ելայ:
Մանրաթփիկ ըռեհան,
Էլնինք սարերը սեյրան:
Ընկերներով միատեղ,
Ման ես գալի ամեն տեղ,
Մանրաթփիկ ըռեհան,
Էլնինք սարերը սեյրան:
Թէ որ հետս սեր ունիա,
Արի էրթանք հերանց գեղ:

Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:
Էս սարը բարձր սար է,
Տակը զանճռլու քար է,
Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:
Առածս մէկ ու ճար է,
Հաքածը ըռուքեար է:
Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:
Գլոխս եմ դրել յարին,
Սիրտըս է լիքը արին,
Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:
Յարիս եփած մըհլամը,
Դրեք իմ խոցված յարին (վերքին):
Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:
Հաց առա թազա-թազա,
Բոյը թամամ մի գազ ա,
Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:
Մէջն եմ դրել ծվածեղ,
Որ դնեմ յարիս մազա:
Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:
Ջուրս տաք է, ջուր բերեք,
էրըվընու նուռ բերեք,
Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:
էլ ու դույնս թամամ է,
Ազիզ յարիս տուն բերեք:
Մանրաթփիկ ըռեհան,
էլնինք սարերը սեյրան:

* * *

Սարերը լալա չ'կա, յարըս մի տանէր յայլէն,
Նստել կուլամ, չարա չ'կա, յարըս մի տանէր յայլէն,
Աչքս կըմնա ճամփեն, յարըս մի տանէր յայլէն,
Սարերը ծաղկոտել էր, յարըս մի տանէր յայլէն,
Ոչխարը տրկոտել էր, յարըս մի տանէր յայլէն,
Պուճուր աղջիկ զալում էս, յարըս մի տանէր յայլէն,
Մազերդ սղալում էս, յարըս մի տանէր յայլէն,
Ընձի տեսնում լալում էս, յարըս մի տանէր յայլէն,

Յետես ընկնում գալում էս, յարըս մի տանէր յայլէն,
Սարերի սինձը ի՞նչ է, յարըս մի տանէր յայլէն,
Կաթն ու բրինձը ի՞նչ է, յարըս մի տանէր յայլէն,
Յարն որ յարին սիրէ, յարըս մի տանէր յայլէն,
Խոսք ու զրիցն ի՞նչ է, յարըս մի տանէր յայլէն,
Կայնի, յարս, կայնի գամ, յարըս մի տանէր յայլէն,
Կայնի էղնինք բարեկամ, յարըս մի տանէր յայլէն,
Կայնի, յարս, գալիս եմ, յարըս մի տանէր յայլէն,
Քրտնել եմ,լալիս եմ, յարըս մի տանէր յայլէն,
Աղջի, անունդ Թաքուն, յարըս մի տանէր յայլէն,
Նստել էս հորդ սաքուն, յարըս մի տանէր յայլէն,
Ինչըխ չինար բոյ ունիս, յարըս մի տանէր յայլէն,
Երանի յարիդ հոգուն, յարըս մի տանէր յայլէն,
Ելայ գնացի սարը, յարըս մի տանէր յայլէն,
Քաշել եմ կաթի սերը, յարըս մի տանէր յայլէն,
Չ`տվին հերն ու մերը, յարըս մի տանէր յայլէն,
Պարտական տերտերները, յարըս մի տանէր յայլէն:

* * *

Էս օր նորը նորել է,
արի սիրական յար ջան,
Յարիս եզը կորել է,
գյարդանիտ տոլի մարջան:
Ով որ գտել է, թող տա,
արի սիրական յար ջան,
Քյամարս կուտամ մուժտա,
գյարդանիտ տոլի մարջան:
Գնա, գնա, քեզ հետ գամ,
արի սիրական յար ջան,
Հետ քո շուշի ձենին գամ,
գյարդանիտ տոլի մարջան:
Փառչըմ էղնիմ ու ջուր տամ,
արի սիրական յար ջան,
Պագըմ առնեմ ու հետ գամ,
գյարդանիտ տոլի մարջան:
Արևը կեռ ու կամար,
արի սիրական յար ջան,
Ես կը մեռնեմ քեզ համար,
գյարդանիտ տոլի մարջան:
Օխտը տարի դիմացա,
արի սիրական յար ջան,
Մենակ քու խաթեր համար,
գյարդանիտ տոլի մարջան:

ԱՇՏԱՐԱԿ

Խնձոր ունիմ, կծած ա,
Ջան գյուլում, ջան, ջան,
Չորս կողմն էրծաթած ա,
Ջան գյուլում, ջան, ջան,
Ախպերս ուզեց չի տվի,
Ջան գյուլում, ջան, ջան,
Ասի յարի ղրկած ա,
Ջան գյուլում, ջան, ջան:

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Ջան գյուլում, ջան, ջան...
Բարակ մեջքիս շալ կուզեմ
Ջան գյուլում, ջան, ջան...
Երբ ես էկա ձեր տունը,
Ջան գյուլում, ջան, ջան,
Ոսկին սարեսար կուզեմ
Ջան գյուլում, ջան, ջան...

Կիրակին էլ պաս կըլնի՞,
Էրծաթից լավ թաս կըլնի՞,
Որդիդ մեռնի, վարդապետ,
Սիրածը չհաս կըլնի՞:

Քանաքեռ բարձր տեղ ա,
Ջուրը հիվանդին դեղ ա,
Սիրածը սիրածին չեն տալ,
Ես ի՞նչ անիրավ գեղ ա:

Էն սարը բարձր սար ա,
Տակը գինջըլած քար ա,
Ես քեզ թաքուն սիրեցի,
Բաս ո՞վ արավ աշկարա:

Իմ յարն ինձ յար պտի,
Չեռումը զանար պտի,
Իմ յարի կանանց տեղը,
Մեկ չինարի ծառ պտի:

Այ տղա, հիլ անիլ տուր,
Մատնաչափ գիր անիլ տուր,
Ինձնից էլ քեզ ճար չի կա,
Կանանել ես բարձր սարին,
Չուխիդ նախշլու կարին,
Հեռու տեղից ես գալիս,
Ո՞ւր ա բերածդ բարին:

Քաքուլդ թափ ես տալիս,
Չեռներդ ծափ ես տալիս,
Էսօր-էգուց ասելով,
Ամեն օր խափ ես տալիս:

Գութանը հաց եմ բերել,
Բերանը բաց եմ բերել,
Տես քեզ ինչքան եմ սիրում,
Չկնով տապակած եմ բերել:

Այ տղա, յախինդ մով ա,
Սուրբ Կարապետ քեզ գովա,
Ես քեզ խիստ շատ եմ սիրում,
Քու սիրտն ինձանից հով ա:

Կանաչ խառեն քիսացու,
Կարմիր կովը մսացու,
Ես քու հորը հարսնացու,

Քաքուլդ վեր անիլ տուր:
Այ տղա, դու հադար ըլնիս,
Իմ ախպոր սադար ըլնիս,
Թե ինձնից ջոկ յար բռնես,
Դու սրտապատառ ըլնիս:

Քաքուլիդ կալիմ մեռնիմ,
Երեսիդ խալիմ մեռնիմ,
Լսել եմ կարդացող ես,
Սաղմոսիդ ծալիմ մեռնիմ:

Ամպել ես ամպի նման,
Շաքար ու դանդի նման,
Իմ նանն ինձ ո՞նց ա պահել,
Ծալած գյուլբանգի նման:

Կաննել եմ ախա, բախա,
Շավուղուս տուտը կախ ա,
Շեկ տղա, կարմիր աղջիկ,
Թող բռնենք իրար յախա:

Ամպել ա, ծուն չի գալիս,
Մթնել ա, տուն չի գալիս,
Ես անտեր բարձի վրա,
Առանց յար քուն չի գալիս:

Ոչխարն արել եմ բակը,
Դեմ տվել սելի ակը,
Ով իմ սիրածս առնի,
Չի վայելի գլխի թագը:

Կաքավը կաննել ա քարին,
Կտուցը լիքը արին,
Մի աղլուխ Վարդ եմ քաղել,
Դրկել իմ ախպոր յարին:

Իմ մեջքինս քամար ա,
Քու ունքերդ կամար ա,
Այ տղա, ինչ ես միտք անում,
Իմ ջանս քեզ համար ա:

Մտիկ տվեք էն ղազին,
Պուտպուտուրիկ բողազին,
Հողն էն հորն ու մոր գլխին,
Որ աղջիկ կտա չոլմազին:

Դու իմ մորը փեսացու:
Էրթկի վրեն թիկնել ես,
Էրթկի կոճը բռնել ես,
Հերս քեզ աղջիկ չի տալ,
Ափսոս քունդ կտրել ես:

Ես գիշեր, լուսնյակ գիշեր,
Ջինն էկել՝ գետինը նախշել,
Դոշդ դեմ արա պաչեմ,
Կեռ ունքեր, կարմիր թշեր:

Չիթ մինթարեդ հնմաշ ա,
Ունքերդ դալամքաշ ա,
Աղջի, ի՞նչ էս միտք անում,
Իմ ջանս քեզ փեշքեշ ա:

Քու սիրուց ինձ կսպանեմ,
Աղջի, քու չարը տանեմ,
Դու իմ խոսքիս կամ արի,
Նանիդ ռազի կանեմ:

Աղջի, ի՞նչ լավ մազ ունիս,
Սոխակի փարվազ ունիս,
Խոսքիս ջուղաբ չես տալիս,
Ինչ շատ էշխ ու նազ ունիս:

Մազերդ օլորվել ա,
Աչքերդ բոլորվել ա,
Իրեք օր ա չեմ տեսել,
Իմ սիրտը մոլորվել ա:

Ամպել ես ամպի նման,
Ծունկդ ծնկանս տակին,
Ես քեզ ի՞նչ տեղ սիրեցի,
Խնծորի ծառի տակին:

Պստի աղջիկ զալում ես,
Մազերդ սղալում ես,
Գեղարդի դասաբիբ գաս,
Միսն օսկորից հանում ես:

Պստի աղջիկ, լավ աղջիկ,
Ունիս մենծ համբավ, աղջիկ,
Իմ քեզ ծածուկ սիրելս,
Ինչո՞ւ հլավ չավ, աղջիկ:

ԷՋՄԻԱԾԻՆ

Սարի գլխին դուշ էլա,
Եթիմ տղի թուշ էլա,
Յարիս մայրիկը խորթ ա,
Խորթի աչքին փուշ էլա:

Յարիս երդիկը ծուխ ա,
Խուճուճ մազերը թուխ ա,
Աչքեր ունի՝ ջուխտ ծրագ,
Սիրտ ա էրում՝ անկրակ:

Բարձն ու խալիճ փռած ա,
Յարս վրեն քնած ա,
Աչքին, ունքին հավան եմ,
Համա ռանգը թռած ա:

Ձորի կածանը լեն ա,
Իմ սիրած տղեն էն ա,
Ինքը հազար հնարքով,
Տուն ու տեղով՝ շնորհքով:

Կաթից համովը սերն ա,
Կաթ կթողը իմ մերն ա,
էն գառնարած շեկ տղեն,
Աշխարք գիտի՝ իմ տերն ա:

Սարի դոշը արոտ ա,
Յարս նախշուն, խորոտ ա,
Խորոտությունն իր տեղին,
Բոյիցը շատ կոլոտ ա:

Ամա՜ն տարան իմ յարը,
Տարան իմ մեկուճարը,
Աստված սիրեք մոտ եկեք,
էս ո՞նց կըլնի իմ ճարը:

Ձեռներդ ծափ ես տալի,
Շորերդ թափ ես տալի,
Շեկ մազերդ շաղ էկած,
Ծովի պես լափ ես տալի:

Ծամս սանդրեմ, նոր խաղամ,
էրկանք դնեմ ու աղամ,
Հենց որ յարս անց կենա,
Աղունս կիսատ թողամ:

էրևանուց կասի յարս,
Անունը Աղասի յարս,
Շաքի, Շիրվան ու Շամախի,
Հնդաստանուց - կասի յարս:

ԳԱՆՁԱԿ

Ա յար, ա յար, կռնել ես,
Մնիշակի փունջ փռնել ես,
Բարև տվի, առար ոչ,
Ինձնից լավը գտել ես:

Աղջի, քնանք մեր հնձանը,
Գլուխդ դիր ծնկանս,
ես ու դու ուտենք պատունջան,
Դուրս գա մեր դուշմանի ջան:

Բաղումս կա բաղմանչի,
Շև կա շևին նման չի,
Թուփուն թալա տյուս տառան,
Մինն իմ յարին նման չի:

Այ ալին-ալին աղջիկ,
Ծամերդ ղալին աղջիկ,
ես քե որտեղ սիրեցի՝

Մեր տուն, ձեր տուն մին պտեր,
Միչի պատը չպտեր,
Միչի պատը ի՞նչ անի,
Քավթառ տատը չպտեր:

Մեր տունը ձեր տան դիմաց,
Աչքով կանեմ, ունքով իմաց,
ես քէ թաքուն էի սիրել,
Ո՞վ արավ խալխին իմաց:

Մթնել ա, մթնաճանաչ,
Դրանդա քոլն ա կանաչ,
Հրես եկավ իմ յարը,
Ալ հեսկի ծուփը կանաչ:

Նստած կըտուրս թախտ ա,
Ձիուս գլուխը ըռախտ ա,
Մի թազա յար եմ փռնել,

Քու հորանց կալին աղջիկ:

Արտին կյարին ա հսել,
Ղարղու ղամիշն ա հսել,
Նամարդ ըլես, ա իմ յար,
Բոյս բոյիդ ա հըսել:

Գետիս էն ղոլը բաղ ա,
Անգին հուր մեչին խաղա,
Ինձ մի թավադ յար ունեմ,
Համ մելիք ա, համ աղա:

Եթիմ ըրախին հեր անենք,
Կաթն ու մածնին մեր անենք,
Լավ գյուղում ասող աղջիկ,
Մինչև լիսը սեր անենք:

Էսօր պաս ա, պաս կենանք,
Չըհաս ա, չըհաս կենանք,
Չեռդ մեկնի ձեռք տանք,
Գյամին նստենք անց կենանք:

Էն տղան էն դռանը,
Թուխ յափնջին կռանը,
Շուռ տվավ տունը մտավ,
Աչքս մնաց կռանը:

Էսօր ուրբաթ, պաս ա,
Գլխինդ մառ-մառ խաս ա,
Ա տեր, քու կարքին մատաղ,
Խի՞ ասում ես չհաս ա:

Էստեղով քինա յաշի,
Չարղաթդ քցի մաշի,
Իմ մերս քե հավան չի,
Խորումտ թառանչ քաշի:

Կանգնել ես, կանչում էլ չես,
Բոյիցդ հմանչում էլ չես,
Եկա կըշտովդ անց կացա,
Տեր ես, ճնանչում էլ չես:

Կանաչ տափ ա, կարմիր լոր,
Բախծեն բյութուն ալ խնձոր,
Բաղը ես եմ, բարը տյու,
Իմ սիրելի յարը տյու:

Կետ ա քըյնում իրես-իրես,
Խոջա, աստված կըսիրես,

Պոչերը ըռըհանի վարդ ա:

Նստել ես հատիկ պատիկ,
Ունքերդ նռան հատիկ,
Ես տյու մի բախչում պտինք,
Ես վրթևոր, տյու զատիկ:

Նստել ես բարձր հովին,
Փռփռում է դոշի մովին,
Դու բարակ, մեջքդ բարակ,
Ղուլ գնամ ջեյրան ջանիդ:

Ոչխարս արել եմ դյուզը,
Ջոկել եմ դարագյոզը,
Յաղլախդ ղարկի նախշեմ,
Վարդով լցնեմ, քե բաշխեմ:

Չոլիցը պիրեմ ծիրանը,
Քոլիցը պիրեմ գերանը,
Լավ գյուղում ասող աղջիկ,
Անուշ կենա բերանդ:

Ջուրը ջրին առել ա,
Մարս ղալամ դառել ա,
Էն թուխ Բեղավոր տղեն,
Ուշքն ու միտքս տարել ա:

Ջրումս դրել եմ կաշի,
Աչքս ճամփա կը յաշի,
Չքանց իմ յարի կյալը
Հալալ կեսս կմաշի:

Տանձի ծառին ղուլ կըլի,
Նռան ծառին փուշ կըլի,
Էրնակ կըտամ էն յարին,
Սիրած յարին թուշ կըլի:

Քնացի ճյուրը ճրի,
Վետս ընգավ օձի լդի,
Իմ հորն ու մոր աշկը տյուս կյար,
Վեր ինձ տվին դարիբ տղի:

Ախչի, անումդ Ջանի,
Աչքեր ունես ջեյրանի,
Մին մատներդ դես պահի,
Քաշեմ ոսկի մատանի:

Ախճի Գյուլի բախտավոր,
Յարդ հենց ա թաքավոր,

Ինձ մի հեռու յար ունեմ,
Խեր խաբարը տյու պիրես:

Կյութանը վարի հողը,
Ղավալը կածի փողը,
Հով ընձանա քե ասի,
Վեչ ընգնի օխնած հողը:

Հունձ եմ արել, նեղացել,
Գետն եմ մտել, լղացել,
Ութ օրվա հիվանդ ի,
Ոոցդ եմ մտել, սաղացել:

Չեռնիս ա մածնի քսակ,
Ետնիցս եկաք հըսաք,
էն օրին մատաղ ըլնեմ,
Ես ու դու քընանք տե պսակ:

Չորերս լի դանդեր ա,
Չիմ ըրծաքի բանդեր ա,
Յար ջան, քու ջանին մատաղ,
Սիրածդ տանը անտեր ա:

Ղալամ քաշեմ էն քարին,
Նստած տեղս ա սարին,
Բզարից բերեմ յաղլուխ,
Ղարկեմ իմ սիրած յարին:

Մածուն եմ մերել սըրալի,
Յար եմ փռնել սըրտալի,
Հով որ յարը յարեն հանի,
Սև սըտանեն սերտը տանի:

Մատումըս կա մըտանի,
Համ թառ ա, համ ծիրանի,
Արի քընյանք դիվանի,
Հով սիրել ա, նա տանի:

Մեր բաղումը կա արոտ,
Շամամները խընկահոտ,
Յարիս համար եմ պահել,
Նա է իմ ծոցիս կարոտ:

Բարով մուրազի հասնեք,
Չեր վրթիվորը շնհավոր:

Ախճի, եկ քընանք բաղը,
Պուկենք շմամի թաղը,
Քու ըրեսիտ շափաղը,
Հանել ա սրտիս դաղը:

Այ ափը կյաս, ափը կյաս,
Մեծ ղզանին քափը կյաս,
Որ դու ըտենց խոսեցիր,
Բոյովդ մեկ տափը կյաս:

Այ տղա, եր անիլ տուր,
Մրուքդ վեր անիլ տուր,
Հերս քե աղճիկ չի տալ,
Տերտերին գիր անիլ տուր:

Գետիս էս ղոլը ցել ա,
Ցելը ջրով լցվել ա,
Խաբար արեք էն յարին,
Սիրածդ դարդով լցվել ա:

Դարդս հալեմ հըլցընեմ,
Ճրագ ածեմ կըպցընեմ,
Իմ նանին ճանգըս քըցեմ,
Իմ դարդն ասեմ, լըցըցընեմ:

Ես մի շամամի թաղ եմ,
Ոչ մեռած եմ, ոչ սաղ եմ,
Պիլոր օխտը տարի ա,
Ես մին խոսքի կարոտ եմ:

Ոալք եմ սարքել, հավան չեմ,
Ես իմ գլխին դիվան չեմ,
Ղինար-ղինար կըտորես,
Ես էն յարին հավան չեմ:

Կաքավը կանգնեց քարին,
Կտուցն ա կարմիր արին,
Տյուրուր մի տալ, լաց կըլնեմ,
Սիրտըս ա գյոլ-գյոլ արին:

ԻՋԵՎԱՆ

Ա տղա, քեզ ջրումը սեր ընկա,
Քարով տվիր վեր ընկա,

Այ հևա, հևա սիրտս,
Ոիրանի թել ա սիրտս,

Աչքս որ աչքիդ կպավ,
Օխտը կոճակ մեր ընկա:

Մեր տան քամակը գարի,
Աստված տա նանիս բարի,
Որ սրտիս ուզածի պես,
Ինձ ուզեց նազլու յարիս:

Թող իմ յարս յար ըլի,
Դարդիցս խաբարդար ըլի,
Թեկուզ որ սիրուն չըլի,
Խոսքերը շաքար բար ըլի:

Ախ, ինչ ասեմ քեզ, նանի,
Բաց անեմ՝ սև ա սիրտս:

Կաղնել ես սըռի հովին,
Քամին տա դոշիդ մովին,
էրնակ ծոցիդ քնողին,
Շամամ ծծերդ բռնողին:

Գյուլում, գյուլում գյուլասար,
Բուրդ եմ մանել հավասար,
էրնակ կըտամ էն օրին,
Որ եկար հետս խոսար:

ՇԻՐԱԿ

Կրակն արա մահանա (առիթ),
Արի մեր տուն ու գնա,
Մէ գամ էլ վրես աշէ,
Դունիան քեզի չի մնա:

Աղջի շամամ ծծերդ,
Թողնես բանամ ծծերդ,
Ինքն իրեն խշխշում է,
Սիպտակ քալամ ծծերդ:

Ջրի միջի ջլախոտ,
Անուշ կգա յարոտ հոտ,
Տեղ մը էրթաս՝ թէզ դառի,
Սիրտս կեղնի արյունոտ:

Հավը թռավ թառն էլավ,
Իմ բանս դավով էլավ,
Սաբաբի որդին մեռներ,
Դուշմանի սրտով էլավ:

Մեր դռան սուրու ղազեր,
Իմ յարոջ շեկիկ մազեր,
Իմ յարոջ դոշի ալը,
Ինչ կենեմ դունիեի մալը:

Աղջի, մազերդ իլվանի,
Քամին թել-թել կտանի,
էդ քո շողշող էրեսդ,
Շուտով հոգիս կհանի:

Տարին տասներկու ամիս,
Խնձորն է թոռմի գոտիս,
Քեաշկա բալուլ մեռնեի,
Յար, քո մտքեն չելնեի:

Ջաղացս ամն եմ տվել,
Սիրել եմ, ջան եմ տվել,
Ջաղցի քարեր մանրատաշ,
Սիրտս եղավ հալ ու մաշ:

էսօր արև պատել է,
Իմ յարն ինձի ատել է,
Յար, կանչէ, ձենիդ մեռնեմ,
Մերս ինձ ազատել է:

Առվե առու եմ թափել,
Քառսուն կաքավ եմ բռնել,
Քառսուն կաքավ միատեղ,
Յարիս փեշքաշ եմ դրկել:

ԱՐՑԱԽ

Ալ տղա ջան, ալ տղա,
Աչկերը չալ-չալ տղա,
էտ մուտանուն պէր մըեր տօն,
Ինձ գյըլաջաղ (հաջորդ տարի)
տար ծէր տօն:

Կընստիմ ըխպրի քարեն,
Կյիր կըկյըրիմ թազա յարեն,
Համ կյըրալ, համ փուշմանալ ըմ,
Սըէվ մընա ըստի տարէն:

Աղճի, աղճի, համ օնիս,
Չուրուք սլվանե ծամ օնիս,
Քա հօր, քա մօր աչքը լյուս,
Վըեր ինձ կյալի կամ օնիս:

Ախճի անումըտ ա Մանե,
Լեչակտ քամե կըտանե,
Յես ու տյու նըշանած բըդինք,
Իմ հար քու հօր խընամե:

Բոստանը բաղ ա տըէռալ,
Խըյարը թաղ ա տըառալ,
Իմ յարը մին խոսկ ա ասել,
Սըրտումըս դաղ ա տըէառալ:

Դինումըս ըմանումըս,
Շըհարին մըյտանումըս,
Աստուծ աշխարք կըսիրես,
Սիրածըդ խը՞է մուռանումըս:

էն ծըտէն յեշի, էն ծըտէն,
Վըեննը տըրավ էն լըծեն,
Ընդըղավ քյընեց մին ախճիգյ,
Աչքըս մընաց աջ ծըծեն:

Ըրիքյնակը ցըցվալ ա,
Իմ փայ կօլաս լըցվալ ա,
Փիս նանուն աչքը տյուս կյա,
Վըէր ինձ հընգըրմաչա քյընցալ ա:

Ըրիքյնակն ա մըրըմար,
Հալալ ըրեք, հար ու մար,
Վըէր առալ ա, կըտանէ,
Հընգըրմաչա կըհանէ:

Օրմակումըս կընի քաշկը,
Լավ կընի պէրակ մաշկը,
Ադա տյուս մըէ կյալ բազար,
Քյէ յէօր կոնէ չար աշկը:

Օրրավալ ըմ, ճյուր պիրէք,
Խորասանա հյուն պիրէք,
Խորասանա հյունն ինչ կանիմ,
Կօրած յարըս տօն պիրէք:

Կըքյնիմ չօլը վաստակ,
Քա հօր, քա մօրնը մաշնակ,
Թօխպը առաչըս կըտրեց,
Մընացէ բօյիտ հասրաթ:

Խընըէգես յըղըկալալ ա,
Վըէչխարըս կըզըկալալ ա,
էսա կյամ ա իմ յարը,
Բէղէրը շըղակալալ ա:

Թօռնումըս կա կուտանա,
Մաննումըս կա մուտանա,
Ա շան տղա, վըէր յես տյուս կյամ,
Յու կըկարե քա մուտանա:

Հավան ըմ, հավան ըմ,
Մըէծ կըրպըտէն խավան եմ
(խավից եմ),
Ադա կօգի հարյուրը խոսէ,
Ես քյէզ սըրտանց հավան ըմ:

Հինածս կապ ա յէկալ,
Սարան ճըպատ ա յէկալ,
Հալի ըրեք են տղին,
Մյուշտարիքս շատ ա յըէկալ:

Հօռէ ծառէն բար չի նիլ,
Դուշը յըրա թառ չի նիլ,
Տակը քար ա, վարթ չի նիլ,
էրած սըրտէն ճար չի նիլ:

Դուշը կանչեց բաղումը,
Խըյարը ծաղկեց թաղումը,
Իմ յարը մին խօսկ ասեց,
Մընաց սըրտես դաղումը:

Սուն ու գերան քար է պետք,
Սրտով սիրած յար է պետք,
Թուխ փուշին վզին կապած,
Շեկ ու կարմիր յար է պետք:

Հավը թռավ, հառն էլավ,
Բախտիս գինին դառն էլավ,
Սաբաբի որդին մեռնէր,
Մեր բախտի պատճառն էլավ:

ՋԱՎԱԽՔ

Ալ ձիուն նալն ի՞նչ էնե,
Եռունտը խալն ի՞նչ էնե,
Սիրունը սրտովս ըլլիր,
Աշխրքի մալն ի՞նչ էնե:

Ա՞խ էնեմ արուն գուգա,
Սև սրտիս գարուն գուգա,
Ի՞նչ էնեմ անպես յարը,
Պըտըտվի տարուն գուգա:

Ախով սիրտս վառեցավ,
Ալ արուես սառեցավ,
Անխիղճ մի ըլլի, իմ յար,
Սաղ աչքերս պաղեցավ:

Ախպեր, հանաքիդ մեռնեմ,
Օսկե դանակիդ մեռնեմ,
Ճամփա էրթող շեկ աղբար,
Դյուքան բազարիդ մեռնեմ:

Ախչի, մազերդ երկան ի,
Քամին թել-թել կտանի,
Միք մեխթրե սիրելիք,
Սերը՝ յաման կը տանի:

Ախչի, մազերդ հյուսեիր,
Թուշդ էրեսիս քսեիր,
էլլեիր վարդի ծառին,
Բյուլբյուլի պես խոսեիր:

Աղչի դու մորեդ ուշ էլար,
Մեծըցար կարմիր թուշ էղար,
Տունմ չունիմ, օր տուն էրթանք,
Քեզի առնեմ ո՞ւ ր էրթանք:

Ախպեր, բաղդ անուշ է,
Բաղիդ միջին եմիշ է,
Ախպեր, խաթրըդ չմնա՝
Յարս քեզնեն անուշ է:

էլեր ես փատ կըտաշես,
Ալամ աշխարհքին կաշես,
Ինձի սեր էրիր չառար,
Ալ ալխալուդդ չմաշես:

Ինի մանչուն գասը ալ է,
Դառնա դառնա ինծի կաշե,

Լուսնիակը երկար գիշեր,
Կեռ ունքվի կարմիր թշեր,
Խապար էրեք իմ յարին,
Չկենա, գա աս գիշեր:

Կայներ ես բաղի միջին,
Օտվիքըտ շաղի միջին,
Կանչե յար, ձենիդ մեռնիմ,
Ես եմ քու խաղիդ միջին:

Կարմիր վարդը դամով է,
Սիրած յարը համով է,
Աստ տեղ զոռի բան չկա,
Սերն ու սյավտան կամով է:

Հանդիտ հարոսին մեռնիմ,
Գինուտ կարասին մեռնիմ,
Ճամփա երթող շեկ տղա,
Սրտիդ հավասին մեռնիմ:

Դուշը թռավ մեր արտեն,
Կտրավ իմ սազիս զարտեն,
Աշըղ չեմ, աշըղ դառա,
Բեմուրատ յարիս դարտեն:

Մառմառ քարը տաշած է,
Յարըս դալմով քաշած է,
Աչքին ունքին հավան եմ,
Քիչըմ ռանգը թռած է:

Մուղնվա ջուրը սառն է,
Մուղնի երթողն իմ յարն է,
Թող երթա մուրազն առնե,
Ետ դառնա սիրածն առնե:

Սարերը հեշտացեր են,
Ջրերը շատըցեր են,
Խապար էրեք իմ յարիս,
Մուշտարիքս շատըցեր են:

Քաղեցի արտմ գարի,
Կանչեցի «արի,արի»,
Չեն տվի, ձենս չառավ,
Ինձ լացուց տարի տարի:

Քոչ կուգա, քոչ կանցնի,
Քոչ քոչի մեջ կանցնի,

Ինծեն քեզի զայդա չկա,
Գնա, գնա, ծամփատ աշե:

Իմ յարս դուռն է դրած,
Ալ գոտին նուռն է դրած,
Իմ յարիս պոյին մեռնիմ,
Ալ զասը ծուռըն է դրած:
Լուսնիակը էրգան գիշեր,
Կեռ օնքվի, կարմիր թշեր,
Աղչի, ախպորտ արևը սիրես,
Դաստուր տուր, գամ աս գիշեր:

Լուսնիակը կամար-կամար,
Ես մեռնիմ քեզի համար,
Սիրականս ինծի չեն տար,
Աստուծո խաթերն համար:

Լուսնիակը բոլըրեր է,
Ամպի մեջ կլորել է,
Աղչի քու ծոցիդ մեջը՝
Օրծերդ կլորել է:

Լաչակը պուկըս եմ ցկե,
Իմ յարս միտքս եմ ցկե,
Իրեք օր է՝ չեմ տեսե,
Կրակը սիրտս եմ ցըկե:

Դու կայներ ես կանա-կանա,
Քամին զարնէ, փեշերդ բանայ,
Ով որ ինծի քեզնէն կանայ,
Տարին բոլոր հիվանդանայ:

Սիրտս կրակն ընկեր կերի,
Ոչ կերի, ոչ կանցնի:

Սար բուն սինձը ինչ է,
Կաթն ու բրինձը ինչ է,
Ես եմ սիրել, ես կառնեմ,
Չեր կռիվ տալն ինչ է:
Աղջի, աղջի, ինչ ըլլիս,
Կատուներուն պոչ ըլլիս,
Աղամանի թաս ըլլիս,
Քաշքա հորս հարս ըլլիս:

Փոցխս ծիրանի կոթ է,
Սիրտս յարալու խոց է,
Սրտինս սիրտդ ընկնի,
Իմանաս սավտեն ի՞նչ է:

Այ տղա էդ ես մետ ես,
Խանչալդ մեջքդ նետես,
Դու գիտես տղամարդ ես,
Օմակի փթուկ փետ ես:

Պուճուր աղչի, մի թռնի,
Բարով քու մարդը մեռնի,
Չեմ ղըմըշի բան ըսեմ,
Քամին ձեռներդ քաշի:

Սարեն կելլեր էրկու մուխ,
Մեկը հընկավ, մեկը ծուխ,
էրկու գիզալ եմ սիրե,
Մեկը շեկլիկ, մեկը՝ թուխ:

ՆԵՐՔԻՆ ԲԱՍԵՆ

Ղարսա բերդը բլել է,
Յարս տակը քնել է,
Չեն տվի, ձենս չառավ,
Մագյամ թարգս տվել է:

Յարս եկավ ու գնաց,
Սարին դեմ առավ մնաց,
Սրտով իլխար չտվեց,
Սրտիս դարդ եղավ մնաց:

Տեղ եմ քցե փոթ կուգա,
Բարձ եմ դրել սոթ կուգա,
Մեռնեմ դաստա քյանքյուլիդ,

Նախրաքաշը ուռի ծառ,
Խնձոր ցքեմ արի տար,
Ուրբաթ, շաբաթ ժամանակ,
Լուս կիրակի արի տար:

Ջուրը լցվաց առվըներ,
Գրող տանի պառվըներ,
Ջուրը լցվավ աղեքը,
Աստված պահե գյադեքը:

երդիքը բուն եմ դրե,
Հորս ու մորս քուն եմ դրե,
Աղջի, յարիս հավասից,

Միջեն խնկահոտ կուգա:

Աղջի, գնա կալը տես,
Պաղ աղբրի սալը տես,
Պաղ աղբրեն ջուր խմէ,
Արի սրտիս հալը տես:

Բոստան եմ ցանե բազուկ,
Իմ յարն էր քեզէն նազուկ,
Ագար էնօր չե՞ս ճանչէ,
Թևիս ունի բիլազուկ:

Քյայլան քուռակն հեծել եմ,
Արագին մոտեցել եմ,
Արագ, ճամփա տուր անցնեմ,
Յարիս կարոտեր եմ:

Ամեն բան տուն եմ դրե:

Չադր եմ զարկե սարին,
Վադա եմ կտրե տարին,
Ինձի տվեք Ինտիզարը,
Չքաշեք ահուզարը:

Գեքլվա սարն ամպեր է,
Յարս մեր ձին քանբեր է,
Հեծել ջիլիթ է խաղցե,
Ոտեն գլուխ թրջեր է:

Գնա, գնա հետիտ եմ,
Ալ խնձոր եմ, գոտիդ եմ,
Որտեղ էլ որ դու էրթաս,
Սրտով քեզի մոտիկ եմ:

ԲՈՒԹԱՆԻԱ

Կաններ իս բախա, բախա,
Լեչեկիս տուտը կախ ա,
Խև աղջիկ, սիպտեկ տղա,
Բըռներ ին իրուր յախա:

Կայներ ես վանքայ հովին
Մամին տայ դօշիդ մովին,
էրնէկ քո ծոց քնողին,
Մէ ջուխտ շամամ փռնողին:

Կաններ իս, կանչում էլ չիս,
Բոյեդ մահաչում էլ չիս,
Աչքով, ունքով ըմ անըմ՝
Ինծանը փախչըմ էլ չիս:

Թենջիրիմը ձու խաշիմ,
Նինիմ կուտուրը մաշիմ,
Տեսնյամ յարըս գյալիս ա,
Վեր գյամ ճեզմանին քաշիմ:

ՍՈՒՐՄԱԼՈՒ

Կավն առա գացի աղբյուր,
Թասը տվի առա պաղ ջուր,
Հեր ու մեր, աչքերդ կույր,
Տղին տես, աղջիկդ տուր:

էրէվան խորամիջին,
Պաղ աղբյուր ձորամիջին,
էդ քու շամամ ծծերդ,
Կարմիր խնձորա միջին:

Իմ բաղդադին ալ կուզեմ,
Բարակ մեջքիս շալ կուզեմ,
Որ տունը որ մտնելու,
Ոսկին շարէ շար կուզեմ:

Սուրբ Կարապետ ուխտ կանեմ,
Ծամերս ջուխտ ջուխտ կանեմ,
Իմանամ՝ ինձ չես առնի,
Կ՝երթամ մոլլին թուղթ կանեմ:

Մե յար ունիմ, անուշ ա,
Անուշ ա, ալվան շուշա,
Քարափումն կայնած էր,
Ես ասի թառլան դուշ ա:

Կայներ էս, կաժ կը մանես,
Արեգնակի նման էս,
Իջի ստուց դեն գնա,
Շատ մարդ գլխից կիանես:

Կարմիր մաքին մսացու,
Դեղին մախմուր քիսացու,
Ես քո մորը հարսնացու,
Դու իմ մորը հըրսնացու:

ՎԱՆ

Տիւ ունես խազար մաքի,
Խազարի պճեղն ի ոսկի,
Խազարի կով կկթես,
Խազարի խով կնստես:

Ծով քեյ գիյնի,
Գեամին քեյ կթղայ,
Տիւ լից, տիւ խմի,
Աստված քեյ կուտայ:

Բոյիդ ասեմ չուխա կարեն,
Սրմալու խառջերն ի վերեն,
Մէճացդ ասեմ ոսկէ քյամար,
Ջավահիր ակներն ի վերեն:

Մատիտ ասեմ ոսկէ մատնիկ,
Ալմաստ ակներն ի վերեն,
Ոտացդ ասեմ կարմիր չըզմէյք,
Առծթէ նալչէքն ի վերեն:

Չեռացդ ասեմ կարմիր խիներն,
Սրմալի չարեյքն ի վերեն,
Գլխուդ ասեմ ոսկի թագը,
Ուռուսու մօհրն ի վերեն:

Գյուլ գյուլ նարգիյզ,
Իմ սիրուն Սարգիյս,
Էն սիրուհի վիզ,
Թալեմ վէր թիվիս,
Ճռվե վեր վզիս,
Խոտն առնի քյթիս:

Մամեն կիրե եղեղեն,
Տղեն պիրե խրեղեն,
Մամեն կիրե ծվածեղ,
Տղեն պիրե փալա-բեղ:

Մանի ըսեմ ու շարեմ
Լցնեմ տոպրակն ու կարեմ,
Քաղքից քաղաք ման կուգամ,

Տղա, դու ես բացե բաց,
դու ինձանից հեռու կաց,
Լոթի տղերանց մեջը,
Երևում ես գարի հաց:

Սարեն եկավ երկու ղոչ,
Մինը փնջած, մինը՝ ոչ,
Մեռնիմ, Աստված, դիվանիդ,
Մինին կուտաս, մինին՝ ոչ:

Էլա սարը սար տեսա,
Ծաղիկ ծաղկի նման չէր,
Աշխարհը ման եմ եկել,
Մեկն իմ յարիս նման չէր:

Հելնեմ սարը ոնց անեմ,
Քարը գլխիս բարձ անեմ,
Գնող գալող հեչ չունեմ,
Ղարիբ յարից հարց ունեմ:

Էլնեմ սարին ու քարին,
Գիր գրեմ ղարիբ յարին,
Թող կարդա ուրախանա,
Մինչ լրանա տարին:

Փանջարի փնջած մուկը,
Ես չեմ առնի դեղնուկը,
Դեղնուկը սրտովս չի,
Քյամարը մեջքովս չի:

Գյալան Ղային բարձր է,
Սիրած յարը քաղցր է,
Սիրեցի սիրած մնաց,
Իմ յարը բանակ գնաց:

Սիրել եմ սերն երեսին,
Անթառամ թերն երեսին,
Ով իմ սիրածն ինձ չտա,

Ես իմ սիրածս ճարեմ:

Մանի մանի ման բերան,
Սելը տանի ջուխտ գերան,
Գեշը սիրունի ծոցը,
Հեյ վախ, ու հազար բերան:

Աստծու կրակն էրեսին:

Ալագյազը բարձր է,
Սիրած յարը քաղցր է,
Տեղս մի քցե, դար է,
Առածս մեկ ու ճար է:
Ալագյազի ծորեն եմ,
Մենձ բաղի խնձորեն եմ:

Չեր տունը արևով լցվեց,
Չեր սեղանը՝ կարմիր խնձորով:



Գրականություն

1. Աբեղյան Մ. ժողովրդական խաղեր, Երևան, 1940, էջ 123-582:
2. Ալպոյաճյան Ա. Պատմություն հայ կեսարիոյ գավառի, 1937, հ.2, էջ 1769:
3. Ահարոնեան Ա. Սուրմալուի ժողովրդական երգեր, ԱՒ, գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 339-347:
4. Արշարունի Ա. Հայ ժողովրդական թատերախաղեր, Երևան, 1961, էջ 87-105:
5. Ավագյան Ս. Արճակ, ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 87-106:
6. Գալուստ Տեր-Մկրտչյան, Ճակատագրի տուները, «Հայագիտական ուսումնասիրություններ», Երևան, 1979, էջ 466-482:
7. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 339-341:
8. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 69:
9. Գրիգորյան Ռ. Գեղարքունիք, ՀԱԲ, հ.14, Երևան, 1983:
10. Դադեան Ա. Ջան գիւլումներ. Վարանդայի բանավոր գրականությունից, ԱՒ, գիրք 17, Թիֆլիս, 1908, հ.1, էջ 41-48; ԱՒ, գիրք 18, Թիֆլիս, 1908, հ.1, էջ 25-32:
11. Երեմեան Ա. Չահարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւնը, Վիեննա, 1923:
12. Թումաճյան Մ. Հայրենի երգ ու բան, Երևան, 1972:
13. Իսահակյան Մ.Շիրակի ժողովրդական երգեր, ԱՒ, գիրք Դ, հ.2, Թիֆլիս, 1898, էջ 161-176:
14. Լալայան Ե. Ջավախք,երկեր, հ.1, երևան, 1983, էջ 289:
15. Լալայան Ե. Վարանդա, Երկեր, հ.2, երևան, 1988, էջ 201:
16. Լալայան Ե. Գանձակ, երկեր, հ.2, երևան, 1988, էջ 450-473:
17. Լալայան Ե. Սիսիան, ԱՒ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898, էջ 258-265:
18. Լալայան Ե. Զանգեզուր, ԱՒ, գիրք 2, Թիֆլիս, 1898, էջ 112-116:
19. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՒ, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 266:
20. Լալայան Ե. Նախիջևանի գավառ, ԱՒ, գիրք 12, Թիֆլիս, 1904, էջ 152:
21. Լալայան Ե. Վայոց ձոր, ԱՒ, գիրք 16, հ.2, Թիֆլիս, 1906:
22. Լալայան Ե. Նոր Բայազետի գավառ, ԱՒ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908, էջ 124:
23. Լիսիցյան Ս. Զանգեզուրի հայերը, երևան, 1969, էջ 273:
24. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, Երևան, 1981, էջ 71:
25. Խաչատրյան Ռ. «Համբարձման երկուշաբթին» պարերգի իմաստատեքստաբանական վերլուծության փորձ, «Լրաբեր», 1991, թիվ 6:
26. Համբարձման տոնին հանդեսը Մուշ գավառին մեջ, «Բազմավեպ», 1868, մայիս:
27. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 236-241:
28. Ճանիկեան Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 107:
29. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 156-162:
30. Մխիթարեանց Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրոպոլ, 1901, էջ 194, 271-272:
31. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ. 3, 1972, էջ 45-46:
32. Նազարյան Ա. Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից, ՀԱԲ, հ.9, Երևան, 1978, էջ 116-120:
33. Նազարեանց Հ. Նախապաշարմունք, Տփխիս, 1878, էջ 82-84:
34. Նժդեհեան Գ. Վիճակի երգեր (Ալաշկերտ), ԱՒ, 7-8 գրքեր, Թիֆլիս, 1901, էջ 445-447:
35. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր նախիջեւանցիք, ԱՒ, գիրք Չ, Թիֆլիս, 1902, էջ 27-30:
36. Շահազիզ Ե. Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 221:
37. Շերենց Գ. Վանայ սազ: Հավաքածոյ Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների, Թիֆլիս, 1885, էջ 86-95:
38. Չիթունի, Համբարձման «Վիճակ», Կ.Պոլիս, 1919:
39. Չոլաքյան Յ. Քեսապ, հ.Բ, Հալեպ, 1998, 205:
40. Սարգիսեան Յարութիւն, Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 39-42:
41. Փորքշեյան Խ. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965, էջ 50-56:
42. Քաջբերունի, Հայկական սովորություններ, ԱՒ, գիրք 7-8, Թիֆլիս, 1901:
43. Григоров И. Село Саров, Джеваншрский уезд Елисаветпольской губернии, Сборник материалов для описания местностей и племен Кажказа (СМОМПК), вып.6, отд.2, Тифлис, 1888, стр. 130-131.
44. Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892, стр.105.
45. Е.В. О народных праздниках и праздничных обыкновениях христианского населения за Кавказом и преимущественно в Тифлисе, Кавказский календарь, Тифлис, 1854, їз 567.
46. Зелинский Ст. Этнографические очерки из быта армян-переселенцев из Персии, живущих в Нахичеванском уезде, СМОМПК, вып.2,отд.2, Тифлис, 1882, стр. 22-23ё
47. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник", 1, М., 1955:

ՎԱՐԴԱՎԱՌ, ՎԱՐԹԻՎԵՐ, ՎԱՐԹԵՎԱՐ

Վարդ ի բացվե առավոտվան խաղերով,
Իմ յար բաղջեն վարդ կը քաղի մաղերով:
Վարդն ի բացվե Վարթեվրվան կիրակին,
Քո սերն ինկէ մեջ իմ սրտի պուրակին:

Եկեղեցական պաշտոնական տոնացույցում «Այլակերպություն» կամ «Պայծառակերպություն» կոչվող այս տոնը նշվում է Զատիկից 98 օր հետո, ուստի և 35 օրվա շարժականություն ունի և կարող է ընկնել հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը որևէ կիրակի: Սակայն Հայաստանի որոշ շրջաններում ժողովուրդը երբեմն Վարդավառն նշում է հուլիսի 22-ին հաջորդող կիրակի օրը: «Այլակերպություն» կամ «Պայծառակերպություն» բառի բացատրությունը Քրիստոսի կենսագիրների թողած այն հիշատակությունից է, ըստ որի՝ Թաբոր կոչված լեռան վրա Քրիստոսի պայծառացած կերպարանքը երևում է առաքյալներից երեքին՝ Պետրոսին, Հովհաննեսին, Հակոբոսին:

Հայոց մեջ Վարդավառը հնագույն արմատներ ունեցող տոներից է: Նրա մեջ հասցրել են արտացոլվել հայոց պատմության և ամառային տոնակատարությունների բոլոր դրվագներից՝ Նոյի պատմությունը, Հայկ ու Բելի ավանդազրույցը, Անահիտ-Աստղիկ դիցուհիների կերպարները, հնագույն նավասարդյան տոնակատարությունները, քրիստոնեական մեկնաբանությունները, բուն ժողովրդական պատկերացումները: Ավանդազրույցը պատմում է, թե երբ Նոյ Նահապետը ջրհեղեղից փրկվելով հասնում է Մասիսի գագաթը և այնտեղից իջնում Նախիջևան, այդ օրվանից սկսվում է հայոց Նավասարդ կոչվող ամիսը: Եվ որպեսզի ջրհեղեղի հիշատակը անմոռաց մնա մարդկանց մեջ, Նոյը պատվիրում է իր որդիներին իրար վրա ջուր լցնել:

Վարդավառը ուխտագնացությունների տոն էր, ընդ որում՝ ուխտագնացությունների համար ընտրվում էին գլխավորապես լեռները, ջրերի ակունքները: Օրինակ, Զանգեզուրում Վարդավառի ամենասիրված ուխտավայրը Խուստուփն էր, չնայած շատ էին գնում նաև Մեծ Իշխանասար, Մռավ, Մեծ Քիրսի, Դիզափայտ և այլ լեռնագագաթներին գտնվող սրբավայրերը: Խուստուփ այցելում էին թե՛ Կապանի, թե՛ Մեղրու շրջանի ամենահեռավոր գյուղերից անգամ, և այստեղ հազարավոր մատաղներ էին արվում: «Լեռն ամբողջովին կորչում էր ծխի մեջ, զուռնա-դավալը դղրդացնում էր շրջակայքը»: Շատերի համար ամենասիրված ուխտատեղը Մշո Ս.Կարապետի վանքն էր: Ոմանք յոթ տարի շարունակ յոթական շաբաթ՝ Համբարձումից մինչև Վարդավառ «Ս.Կարապետի» կամ «Օխտն անվան» պաս էին պահում: Յոթ տարին լրանալուց հետո գնում էին Մշո կամ Տարոնի Գլակա կամ Իննակնեան վանքը «Մշու Սուլթան» - Յովհաննու

Մկրտչի գերեզմանին ուխտ, որ նույն ինքը՝ Մշո Ս.Կարապետի վանքն էր (անվան բացատրությունը տես սույն գրքի «Սրբերը հայ ժողովրդական պատկերացումներում» հոդվածում):

Սուրբ Կարապետ կատարվող ուխտագնացությունն ամբողջ իրադարձություն էր մարդկանց կյանքում: Հետազոտողներն ասում են, որ Ս.Կարապետի վանքը Տարոնում, հատկապես Վարդավառի համաժողովրդական տոնախմբությունների օրերին, դարձել էր համայն Մերձավոր Արևելքի թե՛ քրիստոնյաների, թե՛ այլադավանների սիրված ու հեղինակավոր սրբավայրերից մեկը: Տեսնենք այդ երևույթը Նոր Նախիջևանի հայերի օրինակով: Այստեղ Ս.Կարապետ ուխտի գնացածները յուրահատուկ հարգանք էին վայելում: Այս ուխտը ոչ այնքան եկեղեցու, հավատի հետ կապված երևույթ էր, որքան՝ հայրենասիրության, հայրենիքին նվիրումի: Եթե Երուսաղեմ ուխտի գնալը սովորաբար սոցիալական բարձր դիրքի, հարստության հետևանք և վկայական էր, ապա Սուրբ Կարապետ ուխտի գնալն ազգային նվիրման և հայությանը պատկանելության վկայական էր: Եթե Երուսաղեմ ուխտի գնացողները դառնում էին հաջի, և նրանց ուխտը քրիստոնեության հետ էր կապվում, ապա Սուրբ Կարապետ ուխտի գնացողներն ազգային նվիրյալների, հայրենասերների համարում ունեին: Նրանք հասարակության մեջ մեծ հարգանք էին վայելում և երբեմն, որոշ առիթներով, հանդես էին գալիս միասին: Օրինակ, Միքայել Նալբանդյանի թաղմանը Սուրբ Կարապետ ուխտի գնացածները մասնակցել են որպես մի խումբ:

Սուրբ Կարապետի ուխտին պատրաստվում էին երկար: Գյուղացիները Սուրբ Կարապետի անունով ցորեն էին ցանում և այդ ցորենը ծախելով՝ գնում էին ուխտի: Ծնողները երազում էին իրենց արու զավակների ուխտագնացությունը:

Սուրբ Կարապետի ցորենը մաղած,
Ամբարի աչքը իլինք լցրած,
Թոռու ձին դռանը կապած,
Խը՛ռ-խը՛ռ կանե հազիր կայնած,
Նալերեն թեք գնած, պահած,
Էկեռ թախըմ հազիր սարքած,
Հեպկենները կողեն կախած,
Ձենկուները օսկեջրած,
Լուկեն, տիզկին, շուլբուր ֆըսած,
Սև խաթռանով աղեկ ներկած,
Տղաս կանանչ կապան հագած,
Մոշթի գդակ գլոխը դրած,
Թուրը-սուրը քովեն կախած,
Ուխտ պիտ էշթա սուրբ Կարապետ,
Աստված անպակաս նարա հետ:

Ուխտն ընդունելի դարձնելու նպատակով ծոմ պահող մարդիկ մինչև ուխտագնացություն գնում էին եկեղեցի, աղոթում, որ իրենց ուխտն ընդունելի լինի: Նոր Նախիջևանում շատերն են հիշում Մելքոն անունով մի մարդու, որ ծանր հիվանդացել է, ապաքինվելու համար յոթ տարի պաս է պահել և յոթերորդ տարին մեկնել է Սուրբ Կարապետ՝ ուխտագնացությանը: Դժբախտը, սակայն, ճանապարհին մահացել է:

Սուրբ Կարապետ ուխտագնացությունը միայն հայրենասիրության վավերացում չէր: Ուխտավորները թաքուն կամ հայտնի երազանքներ էին ունենում և ուխտի գնալու նպատակն էր

լինում այդ երազանքների իրականացման համար Սուրբ Կարապետի զորակցությունն ստանալ: Ոմանք նպատակ էին դնում, օրինակ, խնդրել, որ իրենց «օխտը գոմշի ուժ տա», ուրիշները լարախաղացության հմտություն էին խնդրում կամ բանաստեղծական տաղանդ, երրորդներն իրենց ցավերի փարատում էին խնդրում, անզավակները զավակ էին խնդրում և այլն:

Վարդավառյան ուխտագնացությունները, սակայն, միայն Ս. Կարապետ չէ, որ կատարվում էին: Վարդավառի համար ուխտավայր կարող էր դառնալ ցանկացած սրբազան տարածք. բոլոր մատուռները, Թուխ Մանուկ սրբավայրերը, ուղղակի սարերն ու ջրերի ակունքները:

- Տոներից ոչ մեկն էլ չունի այս տոնի զանգվածային բնույթն ու գրավչությունը,- գրում է Բասենի տոները նկարագրողը 20-րդ դարի սկզբի համար: Հիրավի, Վարդավառը ամենաուրախ, զանգվածային, սիրված տոներից էր հայոց շատ ազգագավառներում, իսկ որոշ տեղերում՝ մինչև այսօր: Համբարձումից հետո, քանի դեռ «սրբերը համբարձված էին», ուխտագնացություն չէր եղել, սա ամռան առաջին տոնն էր, սիրված, սպասված տոնը: Հենց մեր օրերում Հայաստանի Հանրապետության զանազան շրջաններում Վարդավառից մի քանի օր առաջ գյուղերում նախատոնական եռուն կյանք է սկսվում: Հավաքվում են քաղաքներում ապրող համագյուղացիները, խմբեր են կազմում, ընտրում են տոնական խնջույքների բացօթյա հավաքատեղիները, խմորեղեն են թխում, սար գնալու պատրաստություն են տեսնում:

Ինչպես և յուրաքանչյուր տոն, Վարդավառը ևս ունի ու հատկապես ուներ տոնահանդեսի արարողակարգի հաջորդականություն, որ որոշակի հստակեցում էր մտցնում հանդիսությունների շղթայում: Անշուշտ, տոնական արարողակարգի տարբերություններ կային, սակայն տոնին բնորոշ որոշ ծեսեր այնքան ընդհանրական էին, որ ըստ դրանց ամենուր տոնը բնորոշվում էր. այդպիսիք էին, օրինակ, միմյանց վրա ջուր ցողելու, աղավնիներ թռցնելու, միմյանց ծաղիկներ նվիրելու, եկեղեցի հասկեր տանելու և օրհնել տալու սովորությունները, ուխտագնացությունները, զոհաբերությունները, գիշերային հանդեսները և այլն:

Կատարման ժամանակով Վարդավառը համընկնում էր դաշտերում հասունացած հացահատիկների հավաքին: Տոնի օրը գրեթե ամենուր հասկեր էին տանում եկեղեցի՝ խնդրելով, որ դաշտերը կարկուտից ու մորեխից անվնաս մնան: Հասկերը օրհնելիս թե քահանան, թե հասկատերը աղոթում էին. «Տեր, պահպանիր մեզ Վարդավառի բուքից ու կարկուտից, Տերնտասի տաք ու շոգից»: Բասենում առավոտյան եկեղեցու բեմը և սեղանը զարդարում էին հազարավոր ծաղիկներով ու վարդի փնջերով: Տարեցները հանգանակություն էին անում մատաղացուի համար. այս մատաղի հիմնական նպատակը նույնպես դաշտերը երաշտից, մորեխներից, հիվանդություններից և աղետներից պաշտպանելն էր:

Տավուշում տոնի նախորդ օրն աղջիկներն ամբողջ ցերեկը շրջում էին դաշտերում, բազմագույն և հատկապես «վրթիվերի» կոչվող դեղնագույն ծաղիկը հավաքում, խաչաձև փնջեր անում և գիշերը գաղտնի նետում իրենց թաղեկիցների կամ հարազատների բակը: Հատուկ պատրաստություն էին տեսնում նաև նշանված աղջիկները: Մի շարք խաչ-փնջերից նրանք ծաղկե «կսկարանք» էին պատրաստում (օջախին դրվող եռոտանու նման) և ընկերուհիների միջոցով ուղարկում նշանածի ընտանիքին: Խնդումի նման «կսկարանքը» նույնպես զարդարում էին, բայց այս դեպքում գլխավորապես՝ անուշեղեններով: Առաջ էին գալիս նաև «խաչբուռերը», որոնք ցորենի հասկից հատուկ վարպետությամբ հյուսված փնջեր էին, որ, ընդհանուր առմամբ, հիշեցնում էին կնոջ արտաքինը: Այդ խաչբուռերը սովորաբար պատրաստում էին հնձվորները արտերում հունձն սկսելուց առաջ կամ վերջացնելուց հետո, և նվիրում արտատիրոջը: Որոշ հետազոտողներ խաչբուռի մեջ տեսնում են բերքի հովանավոր Անահիտ աստվածության ծպտված կերպարի և նրա պաշտամունքի թաքնված պահպանվածությունը հայերի կենցաղում: Խաչբուռի հետագա զարգացումները վկայում են դրանց նկատմամբ խիստ գուրգուրալի

վերաբերմունքը: Խաչբուռերի տեսակները կախված էին այն հյուսող մարդկանց վարպետությունից, հմտությունից, ճաշակից և երբեմն դառնում էին արվեստի գլուխգործոցներ: Գյուղերում լավ խաչբուռ գործող մարդկանց անունները բոլոր գիտեին:



Թե «խաչ-փնջերը», թե «կսկարանքը», թե «խաչբուռը» ստացող տանտիկինները, որպես օրվա գլխավոր զարդ ու խորհրդանիշ՝ դնում էին ցորենի կամ ալյուրի ամբարի վրա և պահում մինչև հաջորդ Վարդավառ: Արցախում պահպանված հնագույն երգերից մեկում պահպանվել է խաչբուռի հիշատակությունը.

Արաբանե, Արաբանե,
Օժ տո բալաս թևեր անե,
Վեսկե հինի մազին անի,
Խաչբուռ շինի տոշին տնի,
Արև տեռնա, արև անե,
Արաբանե, Արաբանե:



Ընդհանրացված սովորույթ էր, որ մինչև Վարդավառ խնձոր չուտեին, այսպես կոչված «խնձորի պաս» էր, տարվա առաջին խնձորը ուտում էին Վարդավառին, ինչպես առաջին խաղողն ուտում էին Վերափոխման կամ Խաղողօրհնեքի տոնին: Որոշ վայրերում առաջին խնձորը վայելելը ուղեկցվում էր հատուկ նախապատրաստություններով: Այսպես, Շատախում երիտասարդները Վարդավառի շաբաթ երեկոյան դեզեր էին շինում, որոնցից մեկը պետք է մյուսներից մեծ լիներ: Մութն ընկնելուն պես հերթով սկսում էին վառել մանր դեզերը, որը տևելու էր մինչև լուսաբաց: Ահա այդ վառվող դեզերի մեջ խորովում էին խնձորը և ուտում: Զգուշանում էին, որ մյուս թաղերի տղաները չգային ու չվառեին իրենց դեզերը: Լուսաբացից առաջ վառում էին ամենամեծ դեզը, որի շուրջ սկսվում էր տղաների և աղջիկների խմբապարը, որ կարծես տոնը սկսելու ազդարարը լիներ և որում հնչում է երիտասարդների երազանքը Վարդավառին իր սիրածին, յարին հանդիպելու, եթե այդ «յարը գա վառվող կրակի»՝ Վարդավառի խարույկահանդեսին մասնակցելու.



Վարդըմ բուսավ վարդևորի կիրակին,
Չեմ դիմանա նոր հարսներու կըրակին:
Էսօր շաբաթ, վաղը ըլլիր կիրակի,
Եարըս էլլէր, էրթար վառման կըրակի:
Հալդը վարդ կըժողվէ, ես հորոտ-մորոտ,
Հալդը յար կըգտնի, ես յարէս կարօտ:

Աղջիկների և տղաների խմբապարերը սովորաբար ուղեկցվում էին երգային բանավեճերով, որ հաճախ տեղում հանպատրաստի հորինված երգեր էին, որոնք պարունակում էին անչար կատակ միմյանց հասցեի, սիրո հավաստիացում, սիրո ակնկալիք և այլն: Դրանք կարող էին շատ երկար տևել, այնքան, մինչև սպառվեր խմբերից մեկն ու մեկի երևակայությունը, պարտվեր: Արցախի Չայքենդ գյուղում, օրինակ, տղաների ու աղջիկների խմբերը նախապես մի խոշոր, համատեղ ծաղկեփունջ էին պատրաստում, պահ տալիս որևէ ծերունու. այդ ծաղկեփունջն ավելի ուշ պիտի ստանար

հաղթող խումբը: Մութն ընկնելուց հետո, հանդիսականների ոգևորող կատակների, ծիծաղի տակ տղաներն ու աղջիկները կանգնում էին դեմ-դիմաց: Աղջիկների մեջ ամուսնացած չպիտի լիներ, սակայն տղաները երբեմն կարող էին այդպիսի մրցույթներում հաղթող ճանաչված իրենց նորապսակ ընկերներին նույնպես հրավիրել: Սկսվում էր երգը, այսուհետև, մինչև մրցույթի վերջը, նրանք երգից բացի այլ կերպ միմյանց հետ խոսել չէին կարող, այլապես կպարտվեին: Երբեմն աղջիկները, օգտվելով մթությունից, իրենց մեջ էին առնում երիտասարդ աղջկա հագուստով ծպտված, հայտնի հորինող և երգող տարեց կնոջ: Եթե գաղտնիքը հայտնաբերվում էր, տղաների խումբը դեպքին պատշաճող քառատողեր հորինելով՝ երգով պահանջում էին, որ կինը դուրս գա խմբից: Աղջիկներն ընդդիմանում էին, մերժում իրենց շարքերում կնոջ գոյությունը, մինչև տղաները նրան կգտնեին հերթական երգողի մեջ: Եթե տղաները չհասկանային և չհայտնաբերեին «օտարին», հետագայում ծաղրի առարկա էին դառնում: Այս ամենը կատարվում էր երգերով, սովորական լեզվով խոսողը պարտվում էր: Երգային բանավեճը կարող էր տևել մինչև լուսաբաց: Հենց այս տեսարանն է բանաստեղծորեն նկարագրել Ավետիք Իսահակյանը հետևյալ քառատողում.







Պարողները՝ պայծառ, ուրախ,
Խաղ կը կանչեն, կըխաղան,
Սեր ու համբույր, ծափ ու ծիծաղ,
Ու միևչև լույս կխաղան:







Հաղթող կողմը ստանում էր նվիրական ծաղկեփունջը, իսկ հաջորդ օրը պարտվողները հաղթողներին խնջույքի մի ամբողջ սեղան էին կազմակերպում, որին իրենք չէին կարող մասնակցել:

Գիշերային բանավեճի ընթացքը և արդյունքը հետագա քննարկումների թեմա էր դառնում, պարտվողները քայլում էին գլխահակ, հաղթողները՝ հպարտորեն, հիշվում էին երգի լավագույն, սրամիտ հորինվածքները, որոնք հետագայում կրկնվում էին, դառնում բոլորի սեփականությունը:

Վարդավառի գիշերային խմբապարերի խաղիկներ, երգեր.

Վարդավառը գալիս է,
Իջնենք չայիրներ, բռնենք մեր պարը,
Իմ սիրտը փունջ ծաղիկ է,
Սարեր ջան, ետ գնացեք, տուն գա իմ յարը:

Էս գիշեր, անուշ գիշեր,
Իջնենք չայիրներ, բռնենք մեր պարը,
Ելնենք սարեր, բռնենք բոլորիգ պարը,
Սարեր ջան, ետ գնացեք, տուն գա իմ յարը:

Վարդավառը հասել ա,
Բան ու գործըս թարսել ա,
Թե սիրել ես, ջուր շաղ տուր,
Կըրակս թեժացել ա:

Վարթեվորի իր օրն ա,
Որդին հորը չի մոռնա,
Աղբերը գնաց սովդա,
Առջի սովդեն քըվորն ա:

Վարթեվորի իր օրն ա,
Որդին հորը չի մոռնա,
Ով իմ սիրածն ինձ չտա,
Սև շան նման թող ոռնա:

Վարդավառը մոտ ա,
Մեր ճամփեքը քարոտ ա,
Գընում եմ յարիս տեսնեմ,
Կասեն՝ ինձի կարոտ ա:

Վարդավառը գալիս ա,
Ծաղիկը հընձալիս ա,
Վարդեվոր ասող աղջիկ,
Սասըդ ծըլվըլալիս ա:

Վարդավառի պաղումն ես,
Պարի միջին խաղում ես,
Կաքավի պես սուրալով,
Տղաներին դաղում ես;

Կարմիր գինին թասումը,
Ես եմ քու հավասումը,
Երբ կտաքնան աղջիկներ,
Վարդավառի պասումը:

Այ ասինա, ասինա,
Կարմիր գինին թասին ա,
Տղերքը ե՞րբ կկոտորվեն,
Վարդավառի պասումը:

Հեյ Վարդավառ, Վարդավառ,
Վարդավառի պահը կա,
Վարդավառը սիրողին,
Դրախտը հինգ բազմոց կա:

* * *

Ծառան տակը մնացի,
Փէշտիմալըս լուացի,
Խապար էրէք իմ մօրկան,
Ես հոս ղերիպ մնացի:

Հիվանդ եմ, հալուկ չունիմ,
Ճահիլ եմ, եարուկ չունիմ,
Եարըս դրած խէֆէսը,
Տեսնլու ճարուկ չունիմ:

Տարին տասներկու ամիս,
Խնծորը գօտիս հոտաւ,
Նե խնծորին տէրն էկաւ,
Նե եարիս խապարն էկաւ:

Երգողների ու պարողների նոր խմբեր էին ձևավորվում արևածագին, մատաղները մորթելու պահին: Պարերը ծայր էին առնում այն պահին, հենց որ սկսում էր հոսել զոհաբերվող անասունների արյունը: Պարն սկսում էին տարեց տղամարդիկ ու կանայք՝ հայացքը դեպի արևելք: Նրանց շարունակում էին երիտասարդ տղաների ու աղջիկների առանձին խմբերը: Պարելու ժամանակ տղաները հաճախ իրարից գոտի ու կապա էին հանում, ստիպում էին «ն անածների անունն ասել»: Պարը տաքանում էր, «Յալի էին փռնում»: Սա կոչվում էր «ուռքան յալլի» (առավոտյան յալլի): Արևի բարձրանալով տարեցները դուրս էին գալիս պարահրապարակից, սակայն երիտասարդները դեռ երկար շարունակում էին պարը.

Յալի պար կյան, դնջանան,
Տասը հոքի մին տանա:
Քսան հոքի մին տանա՝
Պար կյա, ջանը դնջանա:
Ջանա, ջանա, ջան-ջանա,
Պար կյա, ջանը դնջանա,
Համեցեք անելն ինձանա:

Շարունակվում էին պարերը, փոխվում էին պարողները, ոմանք գնում էին, գալիս էին նորերը: Պարում էին մինչև մատաղների միսը կեփվեր, մինչև պարողների վրա ջուր կլցնեին, մինչև խաղերը կսկսվեին, մինչև ուժասպառ կլինեին...

Նախիջևանում վաղ առավոտյան կանայք, թելերի վրա ծաղիկներ, խնձոր, մանր վարունգ և վարդեր ամրացնելով, խաչածև կապում էին երեխաների կրծքին և տանում եկեղեցի:

Հաջորդ օրը՝ բուն Վարդավառի առավոտյան, սկսվում էր «ծաղկափայի» հավաքը՝ խաչ-փնջեր բաժանած աղջիկները տնետուն էին շրջում և իրենց նվիրաբերած ծաղկեփնջերի դիմաց ստանում զանազան կաթնամթերքներ, ձու, անուշեղեն և այլն, որոնցով նրանք իրենց աղջկական խնջույքը պիտի կազմակերպեին:

Անասունների հետ սարում գտնվողները մասնակցում էին նաև ծաղիկներով զարդարած կով, հորթ, խոյ պտտեցնելու արարողությանը: Զարդարում էին կենդանու ճակատը, վիզը, կոտոշները: «Տավարածները,- պատմում է Ղազախի մասին ականատեսը դարասկզբի համար,- Դամբլուրի սարում ծաղիկներ են քաղում, փնջում և գույնզգույն, խաչածև յուրաքանչյուր տան մի կթան կովի ճակատին մի ծաղկախաչ են կապում: Գեղեցիկ տեսարան է, երբ ճակատները զարդարած կովերը հպարտ քայլերով գնում են դեպի իրենց տիրոջ վրանները, և նրանց ընդառաջ են դուրս գալիս գյուղի երեխայքն ու երգում են հետևյալը.

Ական, ական, ական ի կովին,
Չալ - չալ աչքեր բախրի (եղջերու) կովին,
Ես քե մատաղ, սուրբ Ուհանես (Հովհաննես),
Ամեն իրիկուն իմն ըկանես,
Մատաղ անեմ դաբուլ կանես,
Քօռլուղինը քարն որ անես՝
Իմն աղաքըսըոր անես:

Եթե պատկերացնենք, որ այս թափորին ուղեկցում էին զուռնաչիները և հեծյալ երիտասարդները, որոնք պատրաստվում էին ձիարշավին, և որ տոնական նվագով ուղեկցվող այս թափորները միմյանց հանդիպելիս միանում էին մեկ խմբի մեջ, ապա պարզ կդառնա, թե ի վերջո ինչքան էին ստվարանում դրանք: Սրանք նույնպես իրենց բաժին տոնական մթերքը ստանում էին առատորեն:

Շարուրում հովիվներն ու անասնապահները այդ օրը գետակներում ու առվակներում լողացնում էին համարյա բոլոր ոչխարներին, լվանում կովերի ոտքերն ու աղտոտված մասերը, լողացնում գոմեշներին, ձիերին, ջորիներին, էշերին: Հովիվները, երիտասարդները, հատկապես աղջիկներն անասունների գլխի համար պատրաստում էին ծաղիկներից հյուսած գեղեցիկ պսակներ և ամրացնում նրանց ճակատամասում՝ եղջյուրների միջև:

Ագուլիսում դեռ մինչև Վարդավառ նշանված աղջիկները մի ամանի մեջ ցորեն կամ գարի էին կանաչեցնում: Տոնի օրը մեկ մետրանոց խաչածև մի փայտ էին տնկում այդ կանաչի մեջ ու զարդարում մանր վարունգներով, խնձորներով ու վարդերով՝ խաչի տեսք տալով այդ փայտին:

Զարդարված խաչաձև փայտը, կանաչի հետ միասին **ԽՆԴՈՒՄ** էր կոչվում, իսկ ողջ ծեսը՝ «խնդում տօք» (ժողովրդական ստուգաբանությամբ՝ «ուրախություն տալ»):



Գյուղում Խնդում կարող էր լինել մեկ կամ մի քանի հատ: Կեսօրից հետո մի պառավ կին վերցնում էր Խնդումը, տանում դնում գյուղի հրապարակը և «հսկում» էր այն: «Հսկումը» կատարվում էր հետևյալ կերպ. Խնդումի շուրջ հավաքված հանդիսականները, կին թե տղամարդ, պարում էին զուռնայի նվագի տակ: Պարերը հաջորդում էին մեկը մյուսին, պարող խմբերը փոխվում էին: Վերջապես՝ երաժշտությունը դադարում է, տիրում է լռություն: Որոշ ժամանակ հետո պառավը Խնդումը դնում էր գլխին ու սկսում պարել: Պառավը պարում էր՝ երգելով.

Խնդում օնիմ վարդավ լի,
Ջըրդըփչեծ խնձուր լի,

Վախիմ թա քունըս տանի,
Խնդումըս եաղին տանի:

Այս պահին տղամարդիկ հարծակվում էին պառավի ու Խնդումի վրա և նրանցից մեկը գավազանով ցած էր գլորում Խնդումը: Խնդումի վրայի վարունգները, մրգերն ու ծաղիկները խլխլում էին միմյանցից և համեմատական դադարից հետո պառավը կեղծ անիծում էր հարծակվողներին.

Խնդումըս եաղին տարալ ա՜յ,
Ճոր ըրահիք՝ ա՜յ հարայ.
Խզվըկուտուր էլի մօ (դեռահաս մեռնի),
Ով ամ Խնդումըս տարալ ա՜յ,
Աստված քու ջանիդ քուր տօյ,
Բութերիտ էղունք չի տօյ,
Ով ամ Խնդումըս տարած այ,
Տիսնիմ օր այսաղայուն տօյ, (այնքան նվաղի, որ ասեղը իրեն նեցուկ դառնա)
էթ կընընչկուտուր էլի (դալար մեռնի),
Արկու ակնավ խվարի (երկու աչքով կուրանա),
Չինդարու չունք պտօկ արի (Չինդարի սարի չափ վերքեր ունենա),
Երասխի չունք չիրք արի (Երասխի չափ թարախ ունենա):



Նույն Ագուլիսում հատուկ Վարդավառի համար շշի կամ որևէ ապակե ամանի մեջ վարունգ էին աճեցնում, այնուհետև վարունգ պարունակող շշի մեջ օղի լցնում և հյուրասիրում այցելուներին:





Քղեցիների նկարագրածով Վարդավառը՝ «հեթանոսական խրախճալի տօներից ամենեն նվիրականը, որ հիմա մերկացել է իր փառքեն, ցախավելե հարսը (Անահիտ) է դառել: Վարդավառը կարելի է ասել պատանիներու ամենեն սիրական տոնն էր, հարս-ցախավելը հետնին՝ անոնք դռնէ-դուռ ման էին գալիս և ժողովուրդը ջուր էր թափում անոր վրայ և տալիս էր պատանիների ցանկացածը»: Քղեցիները դարերի ընթացքում պահել էին Վարդավառի հնագույն ծեսը՝ ջրերի աստվածությանը նվիրաբերումները, և որպես այդ աստվածուհու հեռավոր հիշեցում՝ պտտեցնում էին կանացի կերպարանքով տիկնիկը:

Սարերում Վարդավառի ամենաուրախ հանդեսներին հավաքվում էին լարախաղացներ, կազմակերպվում էին տոնավաճառներ, և իհարկե, զբոսախնջույքներ: Ուրախ հանդեսները, մասնավորապես՝ բացօթյա զվարճավայրերն էին գրավում երիտասարդ աղջիկներին, ովքեր ամիսներով փակված էին տանը, այնպես որ դրանք միաժամանակ վեր էին ածվում «աղջիկտեսի», հարս ընտրելու: Նոր Նախիջևանի հայերը, որոնք Ղրիմից տեղափոխվելուց հետո այստեղ կառուցել էին Սուրբ Խաչ վանքը, Վարդավառը նշում էին այս վանքում և նրա շրջակայքում: Խ.Փորքշեյանը պատմում է, որ ամբողջ Նախիջևանը այդ օրերին տեղափոխվում էր Սուրբ Խաչի պարտեզը: «Քաղաքացիք գնում էին ամբողջ ընտանիքներով, հետները տանում սեղաններ, աթոռներ, ինքնաեռներ, ուտելիքներ. վրաններ շինելով, ապրում էին այնտեղ երեք օր: Երեք-չորս օր վանքի եկեղեցին անդադար կատարում էր արարողություններ. քաղաքի բոլոր քահանաները, տիրացուները, երգեցիկ խմբերը գնում էին Ս.Խաչը և այնտեղ ծառայում: «Վաշդևորի» ուխտագնացությունը հարս ընտրելու տեղ էր: Երիտասարդները լավ հագնված խումբ-խումբ ման էին գալիս պարտեզում: Աղջիկները պճնված, դարձյալ խումբ-խումբ զբոսնում էին խճուղիների վրա և իրենց ցույց տալիս «կտրիճներին: Հարյուրավոր վրաններում կատարվում էին բազմաթիվ նշանադրեքներ: Քաղաքի բոլոր երաժիշտները և նվագախմբերը այդ օրերը անց էին կացնում Սուրբ Խաչի պարտեզում... Երգ ու պար էր ամեն անկյունում»: Բավական է կարդալ Ռ.Պատկանյանի «Վարթևոր» պատմվածքը՝ պատկերացնելու համար այս

տոնի հանդիսությունների գոնե մի կողմը: «Վարթևորի կիրակին էր,- կարդում ենք այդ պատմվածքում:- Քանի որ միտքս դրել էի պսակվել, շատ էի ուզում այդ կիրակի Սուրբ Խաչ գնալ, գուցե, մտածում էի, երկնավոր տերը բախտս բանա...: Սուրբ Խաչ որ հասա՝ արդեն ժամը մեկը կլիներ: Վանքի բակը լի էր եռաձի ու քառաձի կառքերով, սայլերով ու սայլակներով. բոլոր սենյակները բռնված էին, հազար տեղ կրակ էր վառած, որի վրա կաթսա էր կախած՝ տեսակ-տեսակ կերակուրներով, որի վրա էլ խորովածի շամփուրներն էին պտույտ գալիս, վառած փայտի, քակորի, ցախի ու նրանց վրա կաթկթած յուղի հոտը աշխարհք էր բռնել: Ձիերի, եզների սայլերը, հարբած գյուղացիների կռիվն ու աղմուկ-աղաղակը, տիրացուների տաղերը, բոլորն իրար էին խառնվել»:

Վարդավառի ուխտագնացության օրը վանքի աղբյուրի մոտ «խաղում էին «Վաշդևոր», սառը ջրով իրար թրջում էին և մեծ ճվճվոցով ու աղմուկով զվարճանում»: Կեսօրին մատաղն էր: Նոր Նախիջևանի գյուղերում մատաղին մասնակցում էր ամբողջ հասարակությունը: Ամեն մի գյուղ ուներ շատ խոշոր կաթսաներ, որոնցում կարող էին եփվել մեկ կամ երկու եզ: Ուխտի համար ամեն գյուղ իր միջոցներով գնում էր մի կամ երկու եզ, մի քանի ոչխար: Եկեղեցում մատաղացուներն օրհնել տալուց հետո տանում էին գյուղական կառավարության բակը և մորթում: Ամբողջ գիշեր լիազորված անձինք եփում էին մատաղի միսը: Մատաղի համար բոլոր գյուղացիները հավաքում էին հաց, բլղուր, աղ և աթար: Մատաղն ուտելուց հետո, կեսօրին սկսվում էր տղաների ընբշամարտը: Ընբշամարտի ժամանակ զուռնա-դհոլն անընդհատ նվագում էր, համակիրները բարձրաձայն, աղմուկ-աղաղակով խրախուսում էին իրենց ընտրյալ ըմբիշներին: Ընբշամարտող կողմերին շատ էր ոգևորում հատկապես թամաշավոր աղջիկների ներկայությունը: Հաղթողն այն ըմբիշն էր, որը առնվազն երեք հոգու հաղթում էր: Հաղթողին տրվում էր մատաղացու կենդանու գլուխը, որն ուտում էին նույն օրն ընկերներով: Հաղթող ընբիշները մեծ ժողովրդականություն էին վայելում, նրանց մասին երգեր էին հյուսվում: Նրանք ոչ միայն օրվա, այլև տարվա հերոսներն էին.

Կուռաշ կուգան կտրիճները,
Սեիր կանեն աղջիկները,
Մամաները սոլովեն,
Տեյմիշ կանեն հեռուեն:
Մեմալ նայիս, շամաթա էլլավ,
Ղազարին կռնակը գետինին կպավ,
Պատանը շալից կոչ հավա,
Հալխը կանչեց՝ էվալլա՜:
Օղին լացից, Լուսիկը խնդաց,
Գեղացիկ առին գլոխը իրանց,
Տաուլ-զուռնայով քեֆ արին,
Տանկըլ-տանկըլ խաղացին:

Այնուհետև սկսվում էին պարերը, կատակները, զվարճախաղերը, աղջիկների ճլորթին, կատակերգերը.

- Հաքա, Մաշինկա, վտե՞խ իս,
- Ես սուբ Խաչի պաղջան իմ:
- Հետդ պարօար ի՞նչ առիր,
- Սամվար, չայնիկ, կռավատ:
- Կռավատդ լան արա,

Ինձի քովդ տեղ արա:
- Յորդան, դոշակ, կռավատ,
Արի՛ պառկենք ըռահաթ:
Հետդ բեր պոռտակալ (նարինջ), խնձոր,
Որ թուշերս ըլան կըլոր:

Թեհրանահայերը մինչև վերջերս Վարդավառին դուրս էին գալիս բացօթյա զբոսախնջույքների, որ կատարվում էին այգիներում: Այստեղ ծվածեղ էին սարքում, ասելով. «թող հոտը տա ծառերին, ծիրաններին...»:

Միաժամանակ տեղի էին ունենում բազմաթիվ խաղեր, մասնավորապես՝ շատ ընդունված էին ձիարշավները, գոտեմարտերը, զանազան ճոճախաղերը, ճլորթին և, իհարկե, Վարդավառի առանձնահատուկ խաղերը՝ ջրախաղերը, որոնց ժամանակ Վասպուրականում անընդհատ գոչում էին «Վարդավա՛ռ, վարձքդ կատար»:

Միմյանց կատակով ջուրը գցելը, միմյանց վրա ջուր լցնելը այս տոնին պարզապես խաղեր չէին, այլ Վարդավառի տոնի հանդիսավոր արարողություն, որն ուղղակի անհրաժեշտություն էր: «Ջուր էին նետում առանց հաշվի առնելու դիմացինի տարիքն ու հասարակական դիրքը: Ջուր էր շպրտում չխոսկան հարսը կեսրայրի վրա, իր կյանքում քավորի ներկայությունից փախչող սանամերը, եթե հաջողացներ քավորի վրա իր թաքստոցից ջուր շպրտել»: Վարդավառի կիրակի օրը, կեսօրից հետո, շատերին կարելի էր տեսնել ոտքից գլուխ թրջված, դույլը կամ թասը ձեռքին՝ պատրաստ յուրաքանչյուր հանդիպողի վրա լցնելու, անկախ նրանից՝ ծանո՞թ էր հանդիպողը, բարեկա՞մ, թե՞ անծանոթ մեկը, երիտասա՞րդ էր, թե՞ ծեր: Հատկապես երիտասարդները, առուների եզրին հավաքվելով, ժամեր շարունակ ուրախ կատակներով, ճիչ ու աղմուկով ջուր էին ցողում միմյանց վրա: Որոշ տեղերում նույնիսկ կեսօրից հետո տոնական հագուստը փոխում էին առտնին հագուստի՝ հանգիստ խղճով զվարճանալու համար: Ջուր ցանելուն շատ տեղերում ասում էին «վարդավառի տալ», «վարդավառ անել»:

Մյուս հատկանշական վարդավառյան ծեսը աղավնի թռցնելու սովորույթն էր: Ողջ տարվա ընթացքում գուրգուրանքով, խնամքով պահված աղավնիները դուրս էին բերվում ասպարեզ, տոնական եռուզեռից, աղմուկից, երաժշտությունից, մարդկանց գունագեղ խմբերից խենթացած աղավնիները օդ էին ճախրում և ամառային կապուտակ երկնքի տակ, հանդիսականների հիացական բացականչությունների ներքո, ցույց էին տալիս իրենց տերերի աղավնի վարժեցնելու հմտությունն ու սեփական վարպետությունը: Որոշ վայրերում այս սովորույթն այնքան մեծ տեղ էր զբաղեցնում Վարդավառի տոնակատարության ժամանակ, որ ուրիշ ազգերի կողմից այն անվանվում էր «գյուվերին փանայիրի»՝ աղավնիների տոն: Որոշ հետազոտողներ այս սովորույթը նույնացնում են Նոյի կողմից արձակված աղավնիների պարբերական անդրադարձին:

Այս տոնի զբոսախնջույքները գերադասելի էր կազմակերպել ջրերի ակունքներում, սարերում՝ աղբյուրների մոտ, հենց այնտեղ էլ կատարվում էին Վարդավառի զոհաբերությունները: Յուրաքանչյուր ընտանիք պարտավորված էր զգում այդ օրը մատաղ անել, հատկապես՝ գառ զոհաբերել: Բասենում «առավոտյան ժամերգությունից հետո, ամեն մի ընտանիք մատաղ էր անում: Ձեռում էին գառ, ուլ, փոքրիկ հորթ, իսկ չունևորները՝ աքլոր, հավ կամ աղավնի: Ընդունված կարգ էր, որ մատաղը մորթեն կտուրներում և արյունը պատի վրայով իջնի ներքև»:

Գամիրքում ավելի ընդունված էր ուլերի զոհաբերությունը, որ կատարվում էր բոլոր ընտանիքներում: Վարդավառը այստեղ մորթվող ուլերի առատության պատճառով ***ողլագ ղռան***

(ուլի կոտորած) էր կոչվում: Մարաշում շաբաթ երեկոյան ակեր, աղբյուրներն էին գնում, գիշերն այնտեղ էին մնում՝ ջրերի շատանալուն ականատես լինելու համար: Առավոտյան վաղ կանայք լվացվում էին Սուրբ Կատարինե անունը կրող աղբյուրում: Առավոտյան ուխտ էին գնում Թադեոս Առաքյալի ուխտատեղին, որ «Թադսառաքոլ» բլրին էր: Ուխտավորները վաղ առավոտյան գլխաբաց, ոտաբոբիկ, մի-մի քար շալակած բարձրանում էին բլրի գագաթը, որտեղ տակը քարակույտ ունեցող մի ծառ կար: Ուխտավորներն իրենց շալակի քարերը ավելացնում էին քարակույտին և զոհաբերություններ կատարում, ավելի հաճախ՝ աքաղաղ:

Դերսիմում Վարդավառը նշում էին Մնձուր լեռան հայտնի կաթնագույն, քառասունի հասնող ակնաղբյուրների մոտ, որոնք հավասարապես պաշտվում էին հայերի և այդտեղ ապրող քրդերի կողմից: Գտնում էին, որ Մնձուրի ակնաղբյուրները բխում են աստվածամայր Անահիտի ստինքներից և այդ սուրբ վայրը հավասարապես ցանկալի էր թե՛ հայերին, թե՛ քրդերին (քրդացած հայերին): Վարդավառի տոնը նույնպես նրանք միասին էին նշում. «Մի տեղ ձիարշավ էր, նշանաձգություն,- պատմում է ականատեսը: - Մի տեղ էլ սրինգների միալար հնչող լո-լո-լո-ն էր գեղգեղում, ուրիշ տեղ ջիրիդ էին խաղում... Մնձուրը թնդում էր հրաձգության որոտից, մատաղները քըլթքըլթում էին բացօթյա օջախների վրա: Խորովածների, մատաղների, թխվող սաճե հացերի հոտն ու բույրը միախառնված սրինգների գեղգեղանքին, վարդավառի ուխտագնացությանը տալիս էին նավասարդյան խաղերի տոնական երևույթ»:

Հայերի ու քրդերի կողմից Դերսիմում նշվող Վարդավառի ուխտագնացությունը շատ պատկերավոր է նկարագրել Վահան վարդապետ Տեր Մինասյանը. «Քղիի արևմտյան կողմում, Դերսիմի սահմանագլխի վրա, վեղարածև, սրածայր երկու գագաթներով վեր է բարձրանում Սուրբ Լույսը: Իրենից ավելի մեծ լեռ Քղիում չկա: Հայերի ու քրդերի ամենամեծ երդումը Սուրբ Լույսի սուր գագաթի վրա է: Եվ հավատում են, որ այդ սարի վրա ծնվող տղան շնորհալի կլինի, և նրան անվանում են Վարդերես:

Շաբաթ օրն սկսում էին ուխտագնացության պատրաստություն տեսնել: Թոնիրը վառում էին, ջուր տաքացնում, բոլոր տնեցիները լողանում էին... Ապա իրենց տոնական հագուստն ու զարդերը հանում էին: Տանտիկինները լավաշ հաց, գաթա էին թխում, խորտիկներ եփում: Եթե որևէ մեկը իր ընտանիքի անդամներից որևէ մեկի կամ որևէ հարևանի հետ գժտված էր, անպայման պետք է հաշտվեր, այլապես իր ուխտն ընդունելի չէր լինի: Առավոտ շատ վաղ, դեռ լույսը չբացված, ուխտավորները ճանապարհ էին ընկնում, մեծ մասամբ հետիոտն, շատ կանայք ու աղջիկներ բոբիկ էին քայլում... Առավոտյան վաղ հասնում էին Սուրբ Լույսի ստորոտի պաղ ջրին, որտեղ նախաճաշում էին: Ով ավելի վաղ էր տեղ հասած լինում, հաջորդների վրա ջուր լցնելու իրավունք ուներ... Այդ վայրից մինչև լեռան գլուխը քայլելով մեկ ժամ էր տևում... Վերևից ներքև նայելու դեպքում ամբողջ լեռը լերկ ապառաժ քարի զանգված է, ոչ անտառ և ոչ պուրակներ կան: Տեղ տեղ միայն մի քանի խոշոր գիհի ծառեր կան, այնքան հաստ, որ երկու մարդ միասին չեն կարող գրկել: Ոչ ոք չէր համարձակվի այդ ծառերից մի ճյուղ կտրել, քանի որ նվիրական էին:

Երբ ուխտավորները սուրբ լեռան կատարն են հասնում, հայ ու քուրդ բոլոր ուխտավորները կռանում են գետին, մի մի ափ հող վերցնում, երեսներին ու աչքերին քսում, քարերը համբուրում»:

Վանում պատանիները թաղ-թաղ բանակներ էին կազմում, պարսատիկներով և նետ ու աղեղներով «կռվում» միմյանց դեմ՝ ի հիշատակ Հայկ ու Բելի կռվի: «Յուրաքանչյուր թաղի մեջ թաղեցիք, մի քանի հերոսի անուն հանող խմբապետներու առաջնորդությամբ խումբերու բաժնված, կը զինվեին պարսատիկով, քարի պայուսակով, նաև բիրերով, եւ ուրիշ թաղի խումբերուն վրա յարձակում կը գործեին, որ իրենց լեզվով *պասալու* կը կոչվեր: Երկու ախոյան

խումբերը կատարյալ վրեժխնդրության ոգիով լի՝ կը սկսեին իրենց պարսատիկներով երկուստեք քարեր տեղալ իրարու վրա պատերազմներու հանգամանքով, երկու կողմեն վրա տալով շատ անգամ գլուխ, աչք և ուրիշ անդամներ, մինչև իսկ երբեմն ալ կյանքեր: Կռիվը երթալով կը տաքնար, մինչև սույն խումբեր երբեմն իրարու խառնված կը սկսեին գործածել նաև իրենց բիրերը՝ զանոնք իջեցնելով իրարու վրա կամ մենամարտելով գիրկ ընդ գիրկ: Ասկէ ետք կամ այն է, որ խումբերեն մեկը պարտված տեղի կու տա, կամ նույն թաղերուն մեջ եղած մեծավորներու միջամտությամբ վերջ կը տրվեր կռվին»:

Մարաշում տարածված էր այն համոզմունքը, որ Վարդավառի շաբաթ լույս կիրակի գիշերը ջրերը շատանում են:

Արցախում գտնում էին, որ Վարդավառին բոլոր սրբերի վրա լույս է իջնում, և ով որ տեսնի այդ լույսը, ինչ խնդրի՝ կկատարվի: Պատմում են նաև, թե Հոգեգալստին բոլոր սրբերը բարձրանում են երկինք, իսկ Վարդավառին կրկին իջնում իրենց տեղը՝ ընդունելով լուսավոր աստղերի կերպարանք: Ով որ աստղերի իջնելը տեսնի ու մի բան խնդրի՝ կկատարվի:

Խնջույքներից հետո տոնակատարությունը շարունակվում էր բազմապիսի խաղերով, որոնցից առավել հատկանշականը ճլորթու տեսակներն էին:

Եվ այսպես, Վարդավառի տոնակատարության առանձնահատկությունը դրսևորվում էր ցորենի խրձեր ու մրգեր զոհաբերելու, գիշերային խարույկահանդեսների, ջրերի և դրանց ակունքների մոտ կատարվող զոհաբերությունների, ծաղիկներ նվիրաբերելու, ջրախաղերի և աղավնիներ թռցնելու, զանազան մրցությունների, դաշտային զբոսախնջույքների մեջ:

Շատ հետազոտողներ գտնում են, որ Վարդավառը հայոց մեջ արմատավորվել է ի հիշատակ Նոյան Տապանի՝ Արարատ լեռան վրա նստելու: Ուրիշներն այն կապում են բերք ու բարիքի հովանավոր, մայրության Աստված Անահիտի և ջրերի դիցուհի Աստղիկ Աստվածուհու հիշատակների հետ: Ավելի ուշ, Գրիգոր Լուսավորչի սահմանած կանոնով, Վարդավառի տոնը քրիստոնեական եկեղեցին հայտարարել է Թաբոր լեռան վրա Քրիստոսի պայծառակերպության երևույթին նվիրված տոն, ինչի համար և այն պաշտոնապես կոչվում է Պայծառակերպության կամ Այլակերպության տոն:

Ավելացնենք, որ վերջին հարյուրամյակի ընթացքում ՀՀ հյուսիս-արևելյան շրջաններում կայունացել է Վարդավառը հուլիսի 22-ին հաջորդող կիրակի օրը նշելու ավանդույթը: Այն նշվում է հիմնականում սարերում, իսկ Վարդենիսի բոլոր գյուղերի բնակիչները ջանում են այդ օրը ուխտի գնալ Կարճաղբյուր գյուղի հնագույն ուխտատեղին՝ Դաշ կափուն:

Վարդավառի տոնին հայ բանաստեղծները հաճախ են անդրադարձել: Հայտնի են Ավետիք Իսահակյանի, Գուսան Աշոտի, Հրաչյա Հովհաննիսյանի, Թաթուլ Բոլորչյանի, Անդրանիկ Տերտերյանի և այլոց բանաստեղծությունները, որոնք ի մի են հավաքել և «Ջոն Վարդավառին» գրքույկով հրատարակել Հրաչյա Հունանյանը և Քրիստինե Ջիլֆուղարյանը: Ավետիք Իսահակյանը Վարդավառին նվիրված մի ամբողջ շարք ունի, որոնցից հիշենք «Արագածը իրար վրա» բանաստեղծությունը.

Արագածը իրար վրա,
Իր պերճ գորգերն է փռել,
Պերճ գորգերով քար ու ղռա,
Քյոշքերի պես զառ-զուգել:

Ձմրուխտեղեն թասերի մեջ,
Ինչպես ոսկի գինիներ,

Կըշողշողան ու կտան պեծ,
Ակն-աղբյուրներ, լճակներ:

Վառ վարդերի տոնն է այսօր,
Հարս ու աղջիկ զարդարուն,
Պտույտ կուգան օրոր-շորոր
Վարդափթիթ լանջերում:

Ու աղավնի կըթռցնեն
Ձյուների պես սպիտակ,
Իրար վրա ջուր կցանեն
Աղբյուրներեն անապակ:

Նազիկ-հավքերն անուշ կերգեն,
Ո՞վ իմանա էդ լոգուն,
Ով լացել է սիրու վերքեն,
Թռչուն դառել երազում:

Աղջիկները փունջ կըհյուսեն,
Ալ վարդերով շաղերով,
Իրենց սրտի սերը կասեն
Հուր հավքերի տաղերով:
Սիրո խնձոր
Խնձոր՝մ ունիմ խածած ի,
Չորս պյուլոր արծթած ի,
Ախպերս ուզեց, չ՝տվի,
Կ՝օրօխկեմ յարոջ դիարի:

Նշան աղա, տան տղայ,
Սամուր կապավոր տղայ,
Վէր պատերաց շուռ կուկեաս,
Նաղլի շաքյար կուլ կուտաս,
Հըմէն դանին որ տուն կյաս,
Խմրած դարդիս խօվ կուտաս:

Պարերգ (Սուրմալու)

Հայրիկս գնաց Թիֆլիզու քաղաք,
Էն տղին կառնեմ անունը Մաղաք,
Հայրիկս գնաց էրէվնայ բազար,
Էն տղին կառնեմ անունը Ղազար,
Մանեթը խուրդեմ, անեմ աբասի,
Էն տղին կառնեմ, անունն Աղասի,

Հաքեր եմ Ջովդան, կայներ եմ մեյդան,
Թառ բոյիդ մատաղ, նշնլու յար ջան:
Հաքեր եմ լաստիկ, կայներ եմ սաստիկ,
Թառ բոյիդ մատաղ, նշնլու աղջիկ:
Ես յանը ուռ ա, էն յանը ուռ ա,
Կողբեցու հարսի ջիբինը նուռ ա:
Ես յանը պօպօք, էն յանը պօպօք,
Սիրել եմ, կառնեմ, հաքինը սապօք:
Արի, Օսան ջան, գնա, Օսան ջան,
Ես քեզի դուրբան, սիրելի յար ջան:
Քվորս աղջկա անունը Շողօ,
Էն տղին կառնեմ, անունը եղօ:

Ծաղկի գովք (Սուրմալու)

Ա՛յ օրուն, օրուն ծաղիկ,
Կարմիր ու թոռուն ծաղիկ,
Ջահիլ աղջիկ եմ, գիտես,
Գամ քեզ գովելու ծաղիկ:

Ծաղիկ ծաղկավանա եմ,
Ասլ էրէվանա եմ,
Տարին մե հետ էս գալըմ,
Թազա նուբար խանա եմ:

Ծաղիկ ծաղկածորեն եմ,
Մենձ բաղի խնձորեն եմ,
Քամին տվեց վե քցեց,
Վաթանս մոլորել եմ:

Ծաղիկ, ես՝ քո ծառեն եմ,
Թէբրի միջի թառէն եմ,
Տարին մէ հետ ես գալըմ,
Մակեար ես քո մասխարե՞ն եմ:

Սիրային պարերգեր Էջմիածնից

Ծամերով յարս,
Ծամերով յարս,
Վառեց ջիգյարս,
Ծամերով յարս:
Աղջի, քու քելքը,
Տարավ իմ խելքը,

Ծամերով յարս,
Վառեց ջիգյարս:
Բոլոր ի տարին,
Կսպասեմ յարին,
Ծամերով յարս,
Վառեց ջիգյարս:

* * *

Քթկալը ծիտս եմ գցել,
էլինո յար,
Շեկ յարը միտս եմ գցել,
Թելինո յար,
Սարի խոտը կանաչ ա,
էլինո յար,
Աղջիկ տղին ճանանչ ա,
Թելինո յար,
էլել եմ Ալագյազը,
էլինո յար,
Չեմ առնի մալամազը,
Թելինո յար,
Ելա սարը սար տեսա,
էլինո յար,
Կարմիր գյուլպով յար տեսա,
Թելինո յար,
Ալագյազ ուխտ եմ արել,
էլինո յար,
Մազերս ջուխտ եմ արել,
Թելինո յար:

Պարերգ, Արցախ

Դնգըլ, դնգըլ, ման արի,
Գիշերները տուն արի,
Դնգըլ սարերի տակին,
Յարըս է արևը հաքին:

Դնգըլ, դնգըլ ման արի,
Հիշտեղ բյընիս՝ տուն արի,
Դնգըլ սարերի տակին,
Յարըս է՝ իմ սերը հագին:

Յարըս հանդին քաղ կանե,
Քաղեն մաչին խաղ կանե,
Յարիս թաժա հաց տանիմ,
Քլած սերտը պեց անիմ:

Տարեն վըեսկե տարե յա,
Մեր ադերն էլ պարի յա,
Քու հոր ղարկե կյա մեր տոն՝
Նշընվելու տարե յա:

Սիրային երգ

Դաշտու միջի խորոտիկներ,
Հընդրաց կ'իգան էգուց, ձորուց,
Քաղած են վարդ, մանուշակ,
Անուշ հոտ կ'իգեր ձեռներուց:
Մեռնիմ քըզի, սուրբ Թալալոս,
Հա՛ նա Շուշան ընձի խըսմաք էնես,
Ես հըմալ եմ Շուշանի սիրու՞ն,
Ինչ մեղրե մոմն էր դեմ գոլուն:
Ես հալանենք, ջուր դառանենք,
Էնոր ակն ու աղբրունք խառնվենք:
Կես գիշերին չուր 'ի մընկա,
Աղջիկ, քու ձեն անուշ կ'իգա,
Աչքովդ, ձենովդ գիս էրեցիր,
Քո սերն 'ի վրես թափեցիր:
Նախշուն մեզարով աղջիկ,
Ոսկի մազերով աղջիկ,
Քո սերն հազարով աղջիկ:

Ճլորթու երգ (Վան)

Քյուֆ, քյուֆ դարա, դարա,
Ես էլա բերդի բարա,
Կանչիցի տեր Զաքարա,
Խունկը մոմ հազըր արա:
Առավտուն պաշտոն՝մ արա,
Իրիկուն խթում արա,
Խարկի խաբար տեղն արա:

Թիվ էնա պուճախ, թիվ էնա պուճախ,
Մեր քեավորանց մեղրի պուճախ,
Շէն կէնա իմ հոր օջախ:

Քյուֆ քյուֆ դարա, դարա,
Ես էլա բերդի բարա,
Իմ ախպեր վեր էն բերդին,
Ոսկի թուր վեր էն թիվին,
Կէրթա խաղա տէմ լուսընկին,
Լուսնակ տփեց մէջ իրիսին:

Թիվ էնա պուճախ, թիվ էնա պուճախ,
Մեր քեավորանց մեղրի պուճախ,
Շէն կէնա իմ հոր օջախ:

Քյուֆ քյուֆ կերթամ կուկեամ,
Իմ ախպոր կնիկ ճարեմ,
Յուստ ճարե՞մ, յուստ չճարե՞մ,
Վարագա սարեն ճարեմ:

Թիվ էնա պուճախ, թիվ էնա պուճախ,
Մեր քեավորանց մեղրի պուճախ,
Շէն կէնա իմ հոր օջախ:

Դուռը տփեմ մարմար քեարով,
Մտնեմ ներս զարդարանքեով,
Խէրը խաբեմ թաս՝մ արաղով,
Մէրը խաբեմ մատ՝մ խինով,
Ախպէր խաբեմ պօլատ ձիով,
Ախչիկ պիրեմ խազար պարով:

Թիվ էնա պուճախ, թիվ էնա պուճախ,
Մեր քեավորանց մեղրի պուճախ,
Շէն կէնա իմ հոր օջախ:

Թյու էնա պարան, թյու էնա պարան,
Ամեն տարան, զիս չտարան:

Քյուֆ, քյուֆ մեր տղեն,
Կախվեր ի ծառի ճղեն,
Ծառ չինարի, խէրիկն էր,
Չինար բաժիկ, մէրիկն էր,
Եեօղմ ոըհան, քեյռիքյն էր:

Թիվ էնա պուճախ, թիվ էնա պուճախ,
Մեր քեավորանց մեղրի պուճախ,
Շէն կէնա իմ հոր օջախ:

Քանավեճային խմբերի երգեր Վանից

Ախչիկ սևավոր,
Շէկիկ ծամավոր,
Չեմ էլնի քավոր,
Կէլնեմ թագավոր:

Տղա, տղա, մեր մշակ,
Էրթեանք քեաղեյնք մանուշակ,
Պիրեյնք զանեյնք մեր դէօշակ,
Նստեյնք վերէն աղանակ,
Ծամերն իստկեյնք շրջանակ,
Թալեյնք իտև քրթանակ:

* * *

Խէրդ անիծած չըլկուն Կազար,
Հաղս ուզելով էլայ բէզար,
Դուռ տփելով մաշավ ճկիկ,
Անիծի քեյ սուրբ Մկրտիչ:

Որ հաղս ուզեմ կէլնես կուճիկ,
Կէրթաս մտնես նեղ պուրուճիկ,
Չօռ քեռ խոր կեակրթան,
Սարեկ պյաց, կատունը խան,
Խեյնք կոռաղա՞ր կմնայ դհան:

Թյությունի արտ վէր էնա դարին,
էրկու շուն լծիր ին, կը վարին,
էն վո՞վ կասի՝ թյություն փիս ի,
Կէս վարամ ի, կէս ցավ ի,
Թյություն խմողն ի՞նչ մարդ ի:

Վարդի երգ (պարերգ Վանից)

Վարդն ի պացվէ Վանայ քեաղքեի էկէյստար,
Աստուած սիրես մէկը պախկի ծիկը տար,
Քեա նազերով, քեա խորոտիկ տիւ վի՞րն ես,
Աշխարհ գիյտի, ալամ գիյտի, տիւ իմն ես:

Վարդն ի պացվե առաւտման խաւ խուսոց,
Իմ եար բախչէն կայնե էրկու ձեռն ի ծոց,
Վարդն ի պացվե առաւտման շաղերով,
Իմ եար բախչէն վարդ կըքեաղի մաղերով:

Վարդն ի պացվե Վարդվէրի կիրակին,
Քյո սերն ինգեյ մէջ իմ սրտի պրակին,
Քյա նազերով, քյա խորոտիկ աիւ, վի՞րն ես,
Աշհարհ գիյտի, ալամ գիյտի, աիւ, իմն ես:

Սոնա յար

Սոնա յար, Սոնա յար,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Վարդավառը գալիս ա
Սոնա յար, Սոնա յար,
Ծաղիկը ցնծալիս ա,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Ա՜յ գյուլում կանչող աղջիկ,
Սոնա յար, Սոնա յար,
Ձենըդ ծլվլալիս ա,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Կանաչ արտի բաղում ես,
Սոնա յար, Սոնա յար,
Պարի միջին խաղում ես,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Կաքավի պես սուրալով,
Սոնա յար, Սոնա յար,
Տըղաներին դաղում ես,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Սիրուն աղջիկ, նազ ունես,
Սոնա յար, Սոնա յար,
Շահզադայի սազ ունես,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Հողեմ շահզադի գլուխը,
Սոնա յար, Սոնա յար,
Դու իմ հոգում հազ ունիս,
Սոնա սիրուն, Սոնա յա՜ր:

Ավ.Իսահակյան

Տղան - *Այ սիրուն աղջիկ,*
Դրախտի ծաղիկ,
Դուրս արի, տեսնեմ,
Տեսքիդ կարոտ եմ:

Խումբը - *Ջան վարդավառ, վարդավառ,*
Մեր դռանը ոսկի ծառ:

Աղջիկը - *Այ խելառ տղա,*

Վարդերի վրա,
Իսկի չե՞ս քնել,
Երազ չե՞ս տեսել:

Խումբը - *Ջան վարդավառ, վարդավառ,*
Ոսկի բլբուլ վարդին թառ:

Տղան - *Այ երազ աղջիկ,*
Դրախտի ծաղիկ,
Մի պաչ տուր ինձի,
Ծարավ եմ քեզի:

Խումբը - *Այ վարդավառ, վարդավառ,*
Վարդ եմ քաղել քեզ համար:

Աղջիկը - *Այ ծարավ տղա,*
Գիշեր լուսնկա,
Բլբուլի երգով,
Չե՞ս հարբել գինով:

Խումբը - *Այ վարդավառ, վարդավառ,*
Թե տղա ես, արի տար:



Գրականություն

1. Ալիշան Ղ. Յուշիկք հայրենեաց հայոց, հ.Ա, Վենետիկ, 1869, էջ 293-310:
2. Ալիշան Ղ. Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 56, 283:
3. Ալպոյաճյան Ա. Պատմություն հայ կեսարիոյ գավառի, 1937, էջ 1769:
4. Աիսարոնյան Ա. Սուրմալուի ժողովրդական երգեր, ԱՀ, գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 21, 22, 23:
5. Արշարունի Ա. Հայ ժողովրդական թատերախաղեր, Երևան, 1961, էջ 111-116:
6. Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 97:
7. Ավագյան Ս. Շարուր, Երեւան, 1998, էջ 50:
8. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 242-243:
9. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980, էջ 69:
10. Թեմուրճյան Վ. Գամիրքի հայերը, ՀԱԲ, հ.1, Երևան, 1970, էջ 94:
11. Լալայան Ե. Ջավախք, երկեր, հ.1, երևան, 1983, էջ 290:
12. Լալայան Ե. Վարաձդա, հ.2, երևան, 1983, էջ 201:
13. Լալայան Ե. Ջանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, էջ 112:
14. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 267:
15. Լալայան Ե. Նախիջևանի գավառ, ԱՀ, գիրք 12, Թիֆլիս, 1904, էջ 150:
16. Լալայան Ե. Վասպուրական, ԱՀ, գիրք 25, Թիֆլիս, էջ 33:
17. Լալայան Ե. Նոր Բայազետի գավառ, ԱՀ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908, էջ 124:
18. Լեւոնյան Խ. Վարդավառի տօնը գաւառի մէջ, «Աւետաբեր», Կ.Պոլիս, 1914, թ.38, 39:
19. Լիսիցյան Ս. Ջանգեզուրի հայերը, երևան, 1969, էջ 274:
20. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, երևան, 1981, էջ 71-72:
21. Խատամյան Հ. Նոր Նախիջևանի պատկերներ, Նոր Նախիջևան, 1915:
22. Խաչատրյան Ռ. «Համբարձման երկուշաբթին» պարերգի իմաստատեքստաբանական վերլուծության փորձ, «Լրաբեր, 1991, թիվ 6:
23. Հալաջյան Գ. Դերսիմի հայերի ազգագրությունը, ՀԱԲ, հ.5, Երևան, 1973, էջ 260:
24. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 241-245:
25. Հարությունյան Ս. Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան,2001:
26. Ձոն Վարդավառին, Գիրքը հրատարակության են պատրաստել Հրաչյա Հունանյանը և Քրիստինե Ջիլֆուղարյանը, Երևան, 2000:
27. Ճանիկեան Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 107:
28. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 177-190:
29. Մխիթարեանց Աղ. Փշրանք շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրապոլ, 1901, էջ 272-273:
30. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972, էջ 46:
31. Նազարյան Ա. Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից, ՀԱԲ, հ.9, Երևան, 1978, էջ 78, 80:
32. Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991:
33. Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոև Նախիջեվանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 30:
34. Շերենց Գ. Վանայ սազ: Հավաքածոյ Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների, Թիֆլիս, 1885, էջ 23, 30, 41, 81:
35. Չոլաքյան Յ. Քեսապ, հ.Բ, Հալեպ, 198, էջ 205:
36. Պատկանյան Ռ. Վարթևոր, Երկեր, Երևան, 1955, էջ 696-674:
37. Սրվանձտյանց Գ. Երկեր, հատոր 2, Երևան, 1982, էջ 93:
38. Վարդանեանց Տ. ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1900, էջ 10:
39. Տեր-Մինասյան Վ. Անգիր դպրություն և հին սովորոյթներ, հ.Բ, Կ.Պոլիս, 1904:
40. Րաֆֆի, Սալբի, Երևան 1983, էջ 34-35:
41. Փորքշեյան Խ. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը,Երևան, 1965; ՀԱԲ, Երևան, 1971:
42. Օրմանյան Մ. Ճիսական բառարան, Երևան, 1992, էջ 6:
43. Григоров И. Село Саров, Джеванширский уезд Елисаветпольской губернии, Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып.6, отд.2, Тифлис, 1888 стр. 131.
44. Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892, стр. 105.
45. Зелинский Ст. Этнографические очерки из быта армян-переселенцев из Персии, живущих в Нахичеванском уезде, СМОМПК, вып.2,отд.2, Тифлис, 1882, стр.24-25.
46. Калашев Ал. Вардавар (сел. Чайкенд Елисаветпольской губернии), СМОМПК, вып.18, отд. 2, Тифлис, 1894, стр. 2-4:.
47. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник", 1, М., 1955:
48. Лисициан С.Гадание Арташеса 2-го, Կարոս խաչ: Ուսումնասիրություններ և բնագրեր, Երևան, 2000, էջ 51-58.
49. Мелик-Шахназаров Е. Селение Арцеваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898, стр. 50-51.
50. Петросян Э.Карос-волшебное растение мифологического гербария. Կարոս խաչ: Ուսումնասիրություններ և բնագրեր, Երևան, 2000, էջ 43-51:

ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ Ս.ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

Սուրբ Մարիամ Աստվածածնի երկինք վերափոխվելու տոնը նշում է ողջ քրիստոնյա աշխարհը: Ընդունված է այս տոնն անփոփոխ նշել օգոստոսի 15-ին: Հայոց եկեղեցին այն նշում է նույն շաբաթվա կիրակի օրը:

Քանի որ մինչև քրիստոնեությունը օգոստոս ամսին հայոց մեջ մեծ հանդիսություններով նշվում էր Նավասարդը, և նույնիսկ օգոստոս ամսվա անունը հայոց մեջ նավասարդ էր, ապա օգոստոսին նշվող Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը ժողովրդական տոնախմբություններում մասնակիորեն ներառել է նավասարդյան տոնակատարության առանձին տարրեր: Նավասարդի հանդիսությունները կատարվում էին հայոց աստվածամայր Անահիտին նվիրված մեհյաններում, որոնց տեղերում քրիստոնյա Հայաստանում կառուցվեցին Մարիամ Աստվածածնի անունով եկեղեցիներ, վանքեր: Քրիստոնեական այս օջախները «ժառանգեցին» Անահիտին նվիրված մեհյանների տոնահանդեսները, իսկ Մարիամ Աստվածածինը մասնակիորեն «ժառանգեց» Անահիտի գործառույթները: Անթիվ են այն աղոթքները, որոնք Սուրբ կույսին, Սուրբ Աստվածամորը, Սուրբ Աստվածածնին, Տիրամորը, Սուրբ Մարիամին, ուղղակի Մարիամին են ուղղված: Դրանցում դրսևորվում են այն սպասելիքները, որ մարդիկ կապում էին գթառատ Մարիամի հետ: Մարիամին ուղղված երգերում, աղոթքներում նրանից ակնկալում էին, ի թիվս այլոց, նաև հայ քրիստոնյայի պաշտպանություն:

Իմ Տերն էկաւ ամպախաղաց,
Աշխահ սարսեց չորեքդիմաց,
Գաբրիել եան փողը ծայնեց,
Մեղաւորի հոգին դողաց;
Դրախտենական ծառ ծաղկեցաւ,
Անմահութեան հոտ բուրաւ,
Մարիամ չոքեր՝ աղոթք կ'աներ,
Որ Տերն իր հայ քրիստոնէին
Մեղքը թողնէ, արժան անէ,
Արքայութեան բաց դռնակին:

Աստվածածնին ապավինում էին հատկապես կանայք, աղաչում էին օգնել իրենց զավակներին, իրենց զավակ պարգևել, նպաստել իրենց սիրային իղձերին, իրենց հիվանդներին

բուժել, իրենց ամուսիններին կամ ընտանիքի այլ անդամներին բռնությունից պաշտպանել, նույնիսկ՝ իրենց արտերը մորեխից ու բնական այլ աղետներից պաշտպանել, բերքն ապահովել... Հավանաբար ոչ մի Սրբի այնքան աղոթք չէր հղվում, որքան Մարիամին: Բազմաթիվ են նաև Մարիամին նվիրված երգերը, տաղերը: Հիսուս Քրիստոսի ծննդյան և հարության ավետիսներում Մարիամը կարևորագույն գործող անձ է: Ծննդյան պասը հայոց ավետիսներում հաճախ անվանվում է Մարիամի պաս .



Ալելույա, ալելույա,
Եվ ցնծացեք, ուրախացեք,
Մեր Մարիամի պասը բացեք,
Մարիամ գնաց լեռն ի ծնունդ,
Ծննդեցավ, ազատվեցավ...

Կամ՝

Բարի րիգուն ձեզ, ալելույա,
Հա ցնծացեք, ուրախացեք,
Մեր Մարիամի պասը բացեք,
Մարիամը գնաց էլի ծնունդ,
Ծննդվեցավ, ազատվեցավ,
Լուսաթաթախ մանուկ ծնեց...

Ջատկին՝ Քրիստոսի հարության տոնին երգվող երգերում զգացվում է այն գորովանքը, որ առկա էր «հոգով, մարմնով լույս» Մարիամի հանդեպ.

Քրիստոսն գնաց Հնդու քաղաք,
Բերեց անթառամ ծաղիկ,
Դրեց Մարիամի գլխին,
Մարիամ, Մարիամ, դու կուս ես,
Հոգով մարմնով լուս ես,
էրթամ դադեմ բարություն,
Հոգիս տանես արքայություն:

Հիրավի՝ Մարիամ Աստվածածինը ոչ միայն հայոց եկեղեցու Սրբերի մեջ ամենասիրվածներից է, այլև հայ ժողովրդի սրբազան ակնկալիքների ու սպասումների մեջ ունի իր մեծ տեղն ու դերը:

Մասնակիորեն ժառանգած լինելով Նավասարդյան տոների հանդեսները, Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնն, այնուամենայնիվ, չուներ Նավասարդի հնչեղությունն ու մասսայականությունը: Դա պայմանավորված էր նրանով, որ այս տոնին նախորդում էր Նավասարդի տոնակատարության մեծագույն ծանրաբեռնվածությունն իր վրա վերցրած Վարդավառը, և Աստվածածնի վերափոխման տոնահանդեսները հիմնականում վարդավառյան տոնահանդեսների շարունակությունն էին: Սակայն այս տոնն ստացել էր իր առանձնահատկությունը, այն է՝ օգոստոսի այս շրջանում հասունացող խաղողի օրհնության միջոցով շարունակել նավասարդյան, ապա նաև՝ վարդավառյան տոնակատարության հիմնական՝ բերքի օրհնության և նվիրաբերման գաղափարը, մի գաղափար, որ անահիտական տոների կարևորագույն բաղադրիչն էր: Խաղողն օրհնելու ծեսով էլ պայմանավորված՝ այս տոնը ժողովրդի կողմից ստացել է Խաղողօրհնեք անունը:

Բնական է, որ Մարիամ Աստվածածնի տոնահանդեսները կատարվում էին գլխավորապես նրա անունը կրող ուխտավայրեր ուխտագնացություններով:

Ինչպես ընդունված էր խնձոր չուտելը մինչև Վարդավառ, այնպես էլ ընդունված էր խաղող չուտելը մինչև օգոստոսի 15-ին նախորդող կամ հաջորդող կիրակի օրը՝ Խաղողօրհնեքի տոնը: Աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մեջ ավանդաբար պահպանված սովորույթ կա՝ հասունացած առաջին բերքը, առաջին պտուղները զոհաբերել ուխտավայրում կամ պաշտամունքի այլ օջախներում, որից հետո միայն կարելի է ուտել: Հայոց մեջ, ինչպես տեսանք, տարբեր տոների զոհաբերվող ուտելիքներից են ձուն՝ Զատիկին, կաթնովը՝ Համբարձմանը, հասկեր ու խնձոր՝ Վարդավառին, հատիկները տարբեր ձևերով՝ փոխինդ, աղանձ և այլն Նոր տարուն, Տյառնընդառաջին, Ս.Սարգսին, չոր ու թարմ զանազան մրգեր և այլն, իսկ խաղողին կամ խաղողաքաղի սկզբին նվիրված էր հատուկ տոն՝ «Խաղողօրհնեք»:

Քրիստոնեության ընթացքում ընդհանրացված սովորույթ էր դարձել առաջին խաղողի ողկույզները քահանային օրհնել տալը, ինչը, անշուշտ, շարունակությունն էր նախկինում տաճարներին կամ ուխտավայրերին նվիրաբերելու սովորույթի: Երբեմն խաղողի առաջին բերքը

տանում էին եկեղեցի, սակայն ավելի հաճախ քահանան էր գնում խաղողի այգին և տեղում օրհնում հասունացած և դեռ հասունացող բերքը՝ բարեմաղթելով բերքի առատություն: Բարեմաղթանքն այս պարունակում է հայոց համար բանկ շատ հիշատակներ: Օրինակ՝ քահանան մկրատով կտրում էր մի ողկույզ, բարձրացնում այն արևի դիմաց և մաղթում. «Երկնքի լույս Թուխ-մանուկներեն ցողված են այս մեր այգիների ողկույզները: Աստված օրհնեց մեր այգիները Նոյի տապանով, Մովսեսի տապանակով, Քրիստոսի Սուրբ Խաչով, Աստվածածնի արցունքով, Լուսավորչի լույս հավատով, Հաց ու գինի, Տեր կենդանի: Մեր այգիներն էլ միշտ պիտի դալար լինեն, ողկույզները՝ միշտ անսպառ»: Օրհնված խաղողից այնուհետև ողկույզներ են տարվում դրվում լուսաղբյուրների և խաչքարերի վրա, «որպեսզի թռչնակներն էլ անմասն չմնան երկրի այս բարեբերությունից»: Նույն օրհնված խաղողն է նաև, որ օրհնված գինի պիտի դառնա, և նույն խաղողից է, որ մարդիկ պահում են մինչև հաջորդ տարվա խաղողօրհնեք՝ որպես լիառատության ապահովման նշան:

Խաղող օրհնել տալը, սակայն, տոնի հանդիսության սոսկ առաջնային դրսևորումն էր: Տոնակատարությունը տարբեր վայրերում որոշ տարբերություններ ուներ: Օրինակ՝ Քեսապում շաբաթ օրը բոլոր թոնիրները վառվում էին և կանայք ձեթով բոկեղ էին թխում: Բոկեղի հոտը դառնում էր տոնի ուղեկիցը: Կիրակի առավոտյան տղամարդիկ խաղող, կանայք բոկեղ էին տանում եկեղեցի: Նույն Քեսապում կիրակի անպայման սմբուկով ու սիսեռով ճաշ էին եփում: Այս սմբուկը սովորաբար տարվա առաջին բերքն էր լինում: Այնքան տարածված էր այս ճաշատեսակը, որ հարևան թուրքերը Աստվածածնի տոնը «պատընճան պայրամ» (սմբուկի տոն) էին կոչում:

Շատ տեղերում մարդիկ օրերով պատրաստվում էին օգոստոսյան ուխտագնացությանը, իսկ բուն տոնի օրը վեր էր ածվում ուրախ, անվերջանալի զվարճահանդեսի: Մտերիմների, ծանոթների, ազգականների խմբերը, նախապես ընտրելով իրենց տոնական ուխտավայրը, հենց այդպիսի խմբերով էլ ճանապարհ էին ընկնում, երբեմն ամբողջ գիշեր գնալու պայմանով, որպեսզի արևածագը դիմավորեն նշանակված վայրում: Գիշերային այդ երթերը ինքնին տոնականության տրամադրություն էին ստեղծում, կարելի է ասել, նույնիսկ՝ տոնական հանդիսության մասն էին կազմում: Այդ ընթացքում երիտասարդները մտերմանում էին, կատակներն ու երգը ուղեկցում էին ճանապարհորդներին:

Առավոտյան ուխտավայրում հավաքված բազմությունը արևածագը դիմավորում էր արդեն տոնական տրամադրությամբ և խնջույքի պատրաստություններով: Մինչ մեծահասակները մատաղներ էին անում, սեղանի պատրաստություն տեսնում, երիտասարդները մի խմբում խաղում էին լախտի, ըմբշամարտ, գոտեմարտ, մեկ այլ խմբում պարում էին և այլն: Կեսօրին խմբերով նստում էին խնջույքի, որի կերակրատեսակների մեջ աչքի էր ընկնում մրգերի առատությունը, կաթնասերը, գաթան, հալվան և, իհարկե, մատաղի միսը: Սկսվում էր մթերքների տողանցը միմյանց. մի խմբից մյուսին էին ուղարկում իրենց սեղանի առավել պատվավոր ուտելիքներից, բայց անհրաժեշտաբար՝ խաղող: Հատկապես խնամիները խիստ պարտավորված էին միմյանց պատվել նոր պտուղներով, և նորապսակ հարսը կամ նշանված աղջիկը ամուսնու կամ փեսացուի ազգականներից մեծաքանակ սկուտեղներ էր ստանում՝ մրգերով ու որևէ նվերով լրացված:

Քեսապում «ուխտագնացությունը կը սկսի Կիրակի երեկոյան, երբ մատաղները կ'օրհնուին ու կը զենուին..., իսկ ավանդական հերիսայի պղինձները կը շարուին ծառին տակ, կրակարաններուն վրայ: Քովի թթաստանի ծառերուն տակ ուխտավորները կը բանան իրենց սեղանները, իսկ ծառին տակ կը փչէ զուռնան, կը թնդայ թմբուկը, ու մինչև լոյս շուրջպարը կը դառնայ: Երկուշաբթի առաւօտ տեղի կ'ունենայ հանդիսաւոր պատարագ: Պատարագիչ

սրբազանը կ'օրհնէ հերիսան, որ կը բաժանուի ուխտավորներուն: Խնջույքը, կերուխումը, զուռնան ու պարը կը տեւեն մինչեւ երեկոյ...»:

Ս.Աստվածանի տոնի ժողովրդական սովորություններով՝ հաճախ այցելություններ են կատարվել այլ սրբավայրեր: Դրանցից առավել հիշատակվողները Թուխ Մանուկ սրբավայրերն են: Ալաշկերտում, օրինակ, հավաքվել են Թուխ Մանուկ հուշարձանի մոտ, որ քարակույտ էր, և կոխոտել «այն վայրերն, ուր Թուխ մանուկներ քայլած են»: Համզաշեխ գյուղի մոտի Թուխ Մանուկի «ուխտագնացությունը կը պատահի օգոստոսին՝ Ս.Աստվածածնա տոնին»: «Խաստուրա Ս.Աստվածածին վանքը ուխտի եկող հասարակությունը Թուխ մանուկ ևս պիտի գնար, որ իր ուխտը կատարյալ համարվի»:

Վերափոխման կամ Ս.Աստվածածնի տոնին Արցախի հայերը գնում էին ուխտագնացության պատմական Ուտիքի նահանգի Գարդման գավառում՝, ներկայիս Դաշքեսանի շրջանում գտնվող «Պանդի սարի վրա գտնվող Պանդի սուրբը», զոհաբերություններ անում, զբոսախնջույքներ կազմակերպում, միմյանց հյուրասիրում, ամբողջ օրը, երբեմն նաև գիշերը մնում ուխտավայրում:

«Պանդը» համառոտումն է Պանտալէոն սրբի անվան, որի մասին «Համաքրիստոնէական սուրբեր»-ի հեղինակ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեանը գրում է, թե «Նիկոմիդացի է, որդի հեթանոս հօր եւ քրիստոնեայ մօր... Իր գործունէութեամբ երեք տեսակ չարիքներու առաջը կ'առնէր Պանատլէոն՝ աղքատութեան, հիւանդութեան եւ մեղքի. վասնզի թէ՛ հիւանդները կը բժշկէր Քրիստոսի ունունով, թէ՛ չքաւորներուն կը հասնէր եւ թէ՛ հոգիները դարձի կը բերէր...Ի վերջո կայսրը հրամայեց գլխատել Պանտալէոնը: Վկայաբանութիւններ կ'ըսեն, թէ արեան տեղ կաթ հոսեցաւ անոր կտրեալ պարանոցէն: Կոչուած է նաեւ Պանտալէիմօն, որ կը նշանակէ «ամենողորմած»՝ իր կատսրած անթիւ բարիքներուն համար, որոնցմէ վերջինը եղած է զինք չարչարողներուն համար թողութիւն խնդրելը»:

Ծագումով Նիկոմիդացի Պանտալէոնը հայկական Աղվանքի առավել սիրված սրբերից է եղել դեռևս վաղ միջնադարից: «Պատմութիւն Աղուանից աշխարհի» հեղինակը նրա մասունքների մուտքը Աղվանք կապում է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի հետ, որի նահատակվելուց հետո սրբի մասունքները, ըստ ավանդության, Կուրի ձախափնյակից տեղափոխում են Արցախ աշխարհ, որտեղ նրան մեծապես խնկարկում էին, մասնավորապես՝ Վաչագան թագավորը իր տիկնոջ հետ: Հրաշագործ Պանտալէոնի մասունքների զորությամբ անզավակ Վաչագանը նույնիսկ երեխա է ունենում՝ արու զավակ, որին և սրբի պատվին անվանակոչում է Պանտալէոն: Պանտալէոնի մասունքներն ամփոփվում են Արցախում, Դյութականում, որտեղ նրա պաշտամունքը հետագայում մեծ մասսայականություն է ստանում՝ հատկապես դաշտային Արցախում. Պանտալէոնը դառնում է ամենասիրված սուրբը, Պանտին՝ ամենասիրված ուխտավայրը, որի ուխտագնացությունն իրականացվում էր, ինչպես վկայում են ետնագույն աղբյուրները, Ս.Աստվածածնի տոնին: Այսպես, 1895թ. Մակար Բարխուդարյանը «Պանդալիոնի վանքի» մասին գրում է. «Վանքս հիմնուած է սարի բարձր գագաթին վերայ: Մատուռիցն մինչև սարիս գլուխն շարունակ զառիվեր է, բարձրանում է մարդ երկու ժամում և իջնում երեք քառորդ ժամում: Ջուաձև բարձրացած է վանքաբարձ սարն և բոլորովին առանձնացած իւր շրջապատի բոլոր լեռներից: Երկու մեծ կալատեղի չափ տափարակ է վանքասարիս կատարն, որի վերայ վաղուց եղած է մեծ վանք, շատ սենեակներն և միաբանութիւն: Բայց այժմ մի մատուռ է շինուած հին վանքի տեղում, որն վաղուց փլած է արդեն... Մեծ ուխտատեղի է մատուռս, որի ուխտի օրն է Ս.Աստուածածնայ տօնն»: Տողատակին հեղինակն ավելացնում է. «Վանքիս անուամբ ամբողջ սարս կոչւում է Պանդալիոնի սար, որը, կրճատելով ըստ տեղական սովորութեան, Պանդայ վանք, Պանդայ սար են անուանում...»:

Ե.Լալայանը նույն կերպ է բնութագրում ուխտավայրը. «Պանտալոնի վանք. Սա հիմնված է համանուն սարի գագաթին, որ գտնվում է Հաճիքենդի մոտ: Լեռը միայնակ, բրգաձև բարձրանում է մինչև 5000 ոտնաչափ բարձրության և գագաթին ունի մի փոքրիկ հարթ տարածություն: Այնտեղ, ուր այժմ կանգնած է մի փոքրիկ, հասարակ քարից շինած գմբեթավոր մատուռ, հնումը մի մեծ վանք է եղել, բավականաչափ խցերով և ունեցել է միաբանություն: Այժմ միայն Ս.Աստվածածնի տոնին բավական մեծ բազմություն ուխտ է գալիս այստեղ»:

Թե ժամանակին որքան սիրված է եղել այս ուխտավայրը՝ լավագույնս վկայում են Գանձակի գավառում ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը տարածված ժողովրդական երգերը, որոնցում շատ հաճախ է հնչում «Պանտի» անունը: Այն Համբարձման տոնի ամենալիրիկական քառյակներում հաճախ հանդիպող անուններից է, ինչպես.

Լուսինգան Պանտա տակին,
Ծունկս ծնկանդ տակին,
Ես քե որտեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին:

Լուսինը Պանտի տակին,
Մամուռը քարի տակին,
Ես իմ յարին կարոտ եմ,
Քանց վարդ-մանուշակին:

Շենը շեն ա, շեն շենա,
Եղձին տեսա, դեն կենա,
Որ սիրեր եմ կը տանեմ,
Պանցր Պանտը դեմ կենա:

Ժողովրդական ավանդազրույցի համաձայն Պանտը կամ Պանտալոնը մի թուրք տղա է եղել, որ ընդունել է քրիստոնեություն և քրոջ հետ միասին փախել տանից: Հետապնդող թուրքերը կարողոնում են սպանել երկուսին էլ և եղբոր նահատակման պատճառով լեռը կոչվում է Պանտ կամ Պանդ, քրոջ նահատակության վայրը՝ «նահատակ»:

Խորհրդային տարիների աթեիստական քարոզը և ժողովրդական ու քրիստոնեական տոների դեմ ծավալված արշավը ժամանակի ընթացքում Ս.Աստվածածնի տոնը դուրս մղեցին կենցաղից, սակայն սիրված ուխտավայրը շարունակեց մնալ և ժողովուրդը խորհրդային շրջանում Պանդի ուխտը կատարում էր օգոստոս ամսվա երրորդ կիրակի օրը: Մինչև Ադրբեջանից հեռանալը հայերը յուրաքանչյուր օգոստոսի երրորդ կիրակի գնում էին Պանդի տոնին, գնում էին ընտանիքներով՝ մեծով ու փոքրով, երբեմն՝ ամբողջ գյուղերով, այդ օրվա տոնին մասնակցելու համար գալիս էին հեռավոր քաղաքներում՝ Բաքվում, Երևանում և այլուր ապրող նրանց ազգական համագյուղացի քաղաքաբնակները:

Այսօր, Ադրբեջանի հայաթափությունից հետո, Հայաստանում Պանդի տոնը վերականգնելու ջանքեր են գործադրում ադրբեջանահայ փախստականները:

Առհասարակ, այս տոնը լիաբուռն, անկաշկանդ ուրախության դրսևորում էր, նվազագույն պարտավորություններով:

Հաջորդ՝ երկուշաբթի օրը, մեռելոց էր:

Ուխտի վայրերում երգվող երգերը գլխավորապես սիրային երգեր են, սակայն զգալի են նաև Մարիամին գովերգողները.

Գեղեցիկ գեղ, գովելի, աննման,
Վեհ տաճար, մաքուր, աննման,
Աննման կույս Մարիամ, աննման:

* * *

Դու լուսեղեն տաճար ես,
Ոսկիապատ խորան ես,
Դու մարգարիտ անգին ես,
Աստվածածին, մեղա քեզ:

* * *

Լուսնիակը կամար, կամար,
Քեզի կուզեմ ինծի համար,
Բարակ մեջքիդ օսկի քամար,
Քելե, քելե, պոյիտ մատաղ:

Աշնանը բուսնի կը ուռը,
Քեզի տեսա ժամին դուռը,
Գլոխտ կախ, ճիտտ ծուռ,
Քելե, քելե, պոյիտ մատաղ:

Քոչեր եկավ, անցավ ճալա,
Ճերմակ ճակատ, կարմիր վալա,
Քու սեր քաշեմ, հալայ, մաշայ,
Քելե, քելե, պոյիտ մատաղ:

Ուրտից գուգաս ուշիկ, ուշիկ,
Օտվիտ խրի մանդռ փուշիկ,
Դու ըռնտիկ, պուգտ անուշիկ,
Քելե, քելե, պոյիտ մատաղ:

* * *

Պօստընները գլլի բազուկ,
Թևերդ չինի պիլեազուկ,
Պօյտ երկար, մեջքտ նազուկ,
Կայնի սեյր անեմ, սեյր անեմ,
Մարալ պոյիտ ես հեյրան եմ:

Պոստընները գլլի համեմ,
Լեզուտ դի բերանս ծամեմ,
Սերըս սրտիդ մէջը քամեմ,
Կայնի սեյր անեմ, սեյր անեմ,
Մարալ պօյիտ ես հեյրան եմ:

Երևընու գուքա նուռը,
Դու կայներ ես դեմի դուռը,
Հարուր մանեք կուտամ չուռը,
Կայնի սեյր անեմ, սեյր անեմ,
Մարալ պօյիտ ես հեյրան եմ:

* * *

Էլէր էս՝ կայներ էս դուռը,
Մազերըդ ցկեր էս հուսը,
Երէսէդ կաթէ կը լուսը,
Կայնէ, ֆիտան պօյիդ դուրպան:

Էլէր էս կերթաս կը մարագ,
Թևերդ էրկան, մէջքդ բարակ,
Կերածդ է միշտ մեղրով կարագ,
Կայնէ, ֆիտան պօյիդ դուրպան:

Էլէր էս, կերթաս կը կալը,
Բարով մաշես գլխուդ շալը,
Երէսէդ կը կաթէ խալը,
Կայնէ, ֆիտան պօյիտ դուրպան:

Էլէր էս կերթաս կը սէյրան,
Մնացեր էմ պօյիդ հեյրան,
Դու գլմանիս չոլի ջեյրան,
Կայնէ, ֆիտան պօյիդ դուրպան:

Բարակ մէջքիդ քիրմա շալը,
Կաժես կը դու դիւնի մալը,
Չէս հարցնէ յեարիդ հալը,
Կայնէ, ֆիտան պօյիդ դուրպան:

Երևընու գուգայ նուշը,
Քու ձեռքը կայ ոսկէ դուշը,
Արի պագնեմ կարմիր թուշը,
Կայնէ, ֆիտան պօյիդ դուրպան:



Գրականություն

1. Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 97:
2. Թորոսեան Հ. Ուրախության երգ, Նոր Գեղի, Ազգագրական հանդես, Բ տարի, Բեյրութ, 1965, էջ 109:
3. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898, էջ 260:
4. Լալաեանց Ե. Ջավախքի բուրմունք, գիրք Բ, Թիֆլիս, 1892, էջ 19-20:
5. Լիսիցյան Ս. Ջանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 277:
6. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, Երևան, 1981, էջ 73:
7. Խառատյան Լ. «Պանդի օրը». Նոր ուխտավայրերի առաջացման մի դեպքի շուրջ, Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, 2, Երևան, 2003:
8. Տեր Մինասեան Վահան, Անգիր դպրութիւն և հայկական սովորոյթներ, Կ.Պոլիս, 1904, էջ 153-159:
9. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 244-245:
10. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 200-205:
11. Չոլաքեան Յ. Քեսապ, Ա հատոր, Հալէպ, 1995, էջ 341, Բ հատոր, 1998, էջ 205-206:
12. **Е.В. О народных праздниках и праздничных обыкновениях христианского населения за Кавказом и преимущественно в Тифлисе, Кавказский календарь, Тифлис, 1854, їз 574:**

ՍՈՒՐԲ ԽԱՉ (ՍՐԲԽԵՉ), ՈՒԼՆՈՑ

Սեպտեմբերի 14-ին նախորդող կամ հաջորդող կիրակի օրը մեր ժողովուրդը, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, նշել և նշում է քրիստոնեական տոնացույցում՝ Խաչվերաց, ժողովրդի մեջ տարածված՝ Սըրբխեչ կամ Ուլնոց անուններով հայտնի տոնը:

Պաշտոնապես տոնը նվիրված է Քրիստոսի խաչելության խաչի գերեդարձին: Խաչափայտը կույս Հեղինեն գտել և մեծագույն հանդեսներով տեղադրել էր Երուսաղեմի Ս.Հարություն եկեղեցում: 610թ. պարսիկները գրավում են Երուսաղեմը և, ի թիվս այլոց, գերի տանում նաև Խաչը: Հերակլ կայսրը 627թ. պարսիկներին հաղթելով՝ ետ է վերադարձնում Տիրոջ խաչը և կրկին հանձնում Ս.Հարություն տաճարին: Այդ առթիվ քրիստոնյա եկեղեցիները սեպտեմբերի 14-ին նշում են Խաչվերացի տոնը: Հայոց Եկեղեցին, որ սովորաբար կարևոր տոները կիրակի օրերին է նշում, ինչպես՝ Վերափոխման տոնը, Խաչվերացը նույնպես նշում է սեպտեմբերի 14-ին նախորդող կամ հաջորդող կիրակի օրը, այսինքն՝ սեպտեմբերի 11-17 օրերի մեջ հանդիպող կիրակին:

Վահան վարդապետ Տեր Մինասյանը գրում է, որ անցյալում այս տոնին կատարվում էին անթիվ ուխտագնացություններ ամենուր, «ուր ուխտատեղի կա, շեն վանք կա, Թուխ-մանուկ կա, Խաչ-աղբյուր կամ Խաչածոր կա...»: Սուրբ Խաչին «ամեն հայ մայր վանքերում իրենց ուխտը կատարելուց հետո գնում են Թուխ մանուկներ, որոնք անհիշելի դարերից ի վեր մանուկ սրբեր լինելով հանգչում են որևէ Խաչքարի ... կամ սուրբ ծառերի տակ, քանի որ այդ ծառերն էլ են դարեր ի վեր Թուխ-մանուկների մարտիրոսության վկա եղել... և այդ ծառերի տակ մեր հները հազարավոր տարիներ առաջ արդյո՞ք հմայություններ չեն արել <պրոբլեմներից> ազատվելու <նպատակով>: ... Լուսաղբյուրների կամ Խաչաղբյուրների ջրերից խմելով, զովանալով, երգում են անդադար այդ ուխտավայրերը գովերգող երգեր, ինչպես, օրինակ.

Խաչ աղբըրիկ, Խաչ աղբըրիկ,
Ինչ անուշ է քե պաղ ջրիկ,
Աջ կողմիդ է ջրջրիկ,
Ձախ կողմիդ է ջլվըլիկ:

Խաչ աղբըրի կիգայ կաթ կաթ,
Հոն լոգնողը կ'եղնայ երկաթ:
Խաչ աղբրկայ ջուրն անուշ է,
Հատ մի արախ սիրտէս կ'ուզե:

Ուխտաւորներ, ուխտաւորներ,
Եկեք տեսեք սուրբ-խաչ քարեր,
Թուխ-մանուկ խաչ հոն է կայներ,
Սուրբ ծառին տակ լուսն է ցեթեր:

Սուրբ Թուխ-մանուկ խաչն է օրհներ,
Խաչ աղբրկայ ջուրն ու քարեր,
Լուսն է ցեթեր մըջ աղբըրին,
Կամար կեապեր վերեւ գլխին:

Մեռնիմ քըզի Թուխ-մանուկ խաչ,
Ղուրպան եղնիմ դռանդ առաջ:

Քրիստոս Աստված, դու ողորմէ,
Իմ ցաւերը դու բժշկէ.
Սուրբ Թադեոս[6] դու հիմ դըրիր,
Թուխ մանուկ ժամ դու եիս շիներ»:

Պաշ-քալեի Սուրբ Բարդուղիմեոսի վանքում մի ճերմակ գոմեշ էին պահում, որ միշտ անկաշկանդ շրջում էր գյուղից գյուղ, կարող էր մտնել ամենուր՝ ցանքերը, հանդերը, ուտել՝ որտեղ կուզեր, պառկել՝ որտեղ կուզեր: Ոչ ոք իրավունք չուներ այդ գոմեշին ձեռք տալ կամ քշել: Եթե ւսյդ գոմեշը սատկում էր, հաջորդ գոմեշը կլիներ այն գոմեշը, որին երազում կտեւներ ծերունի վանականներից մեկն ու մեկը, և այդ նվիրական գոմեշը վանք էր բերվում հանդեսներով, երգ ու նվագով, նրա պատվին մատաղներ էին արվում: Միայն թե մատաղացուն գոմեշ չէր կարող լինել: Ահա այս ճերմակ գոմեշին Խաչվերացի օրը վանք էին վերադարձնում, վրան շուրջառ էին գցում, կոտոշները վառվող մեղրամոմերով զարդարում և դուրս բերում պտույտի՝ թմբուկներ զարկելով, սրինգ նվագելով, շարականներ երգելով:

Նույն Վահան վարդապետը պատմում է, որ Խաչի օրերին Մուշում Սուրբ Եղիայի անունով ուխտագնացություններ էին լինում բարձրաբերձ վայրերը: Մասնավորապես՝ գնում էին Մշո Հյուղի գյուղի մոտ գտնվող վանքը, որի մոտի մատուռը յոթ տարին մեկ անգամ կանաչում է Խաչվերացի օրը:

Որոշ տեղեր մարդիկ իրենք էին խաչ սարքում և այն զարդարում գույնզգույն ծաղիկներով, բայց հատկապես՝ ռեհանով: Ռեհանն է համարվում խաչի ծաղիկը: Մարաշում, օրինակ, «խաչը կը զարդարվեր պեսպիսուն, հոտավետ ծաղիկներով, որոնց մեջ կը գտնվեր Մարաշի անուշահոտ կանաչ ու լայնատերև ռեհանը: Կիները այս արարողությունը իրենց լեզվով կը կոչեին «ըռահեոն ուրշնիլ» (ռեհան օրհնել)»:

Ընդհանուր առմամբ՝ Խաչվերացը կամ Սըրբխեչը աշնան սկզբի և տնտեսական տարվա մի փուլից մյուսին անցնելու խորհրդանշական, ուրախ տոն էր, որն ավարտվում էր մեռելոցով, երբ տոնական աշնանային բարիքներից «մաս» էր հանվում հանգուցյալներին:

Շաբաթ օրը կանայք խմորեղեն էին թխում, տղամարդիկ՝ ուլ մորթում: Ուլի միսը այդ օրվա առանձնահատուկ, անցյալում անհրաժեշտ ուտելիքն էր, առանց որի տոնը լիարժեք չէր կարող լինել: Ջոհաբերվող ուլերի առատության պատճառով Շիրակում այս օրը կոչվում էր «ուլան դռան», երբեմն էլ թուրքերեն՝ «օղլաղ դռան», որն էլ աղավաղվելով դարձել էր «օղլան դռան»,

6. *Սովորաբար տրվում է այն սրբի անունը, որի անունով ուխտավայրում երգվում է:*

այսինքն՝ «տղաների կոտորած»: Մաշկված, մաքրված ուլը կախում էին թոնիրում՝ տակը նախապես դնելով ծավարեղենով լի կաթսան: Ողջ գիշեր ուլը դանդաղ խորովվում էր մարմանդ կրակի վրա, փակ թոնիրում, իսկ հալվող ճարպն աստիճանաբար ներծծվում էր տակը դրված ծավարի մեջ, առաջացնելով, ինչպես Շիրակում էին ասում, «քաշկակ»: Այս սովորությունը Վայոց ձորում կոչվում էր «խրով անել»: Ուլի մի բուդը հետագայում տրվում էր քահանային, այն կոչվում էր «մեռելափայ»: Իսկ Շիրակում առհասարակ ողջ ուլը կտորների էին բաժանում, «քաշկակի» հետ միասին լավաշի մեջ փաթաթում և տանում գերեզմանաքարերի վրա դնում: Այդ օրը գերեզմանօրհնեքից հետո քահանան և նրան ուղեկցող մարդիկ ուտում էին այդ կտորները:



Վաղ առավոտյան տնեցիների լավագույն նախաճաշը ուլի ճարպով ներծծված ծավարի փլավն էր, որից հետո ճանապարհվում էին մոտակա գերեզմանատուն, հետներն ունենալով մրգեղեն, հատկապես խաղող ու ծմերուկ, խմորեղեն, կաթնասեր, կանաչեղեն, պանիր և, իհարկե, խորոված ուլը: Այդ օրը գերեզմանատուն տարվող մրգերը «նան ու տրի» էին կոչվում: Գերեզմանատուն գնում էին բոլորը, ընդհուպ մինչև մանկահասակ երեխաները: Ուղղակի

տապանաքարերի մոտ, կողք-կողքի բացվում էին սփռոցները, որոնց վրա շարվում էին բերված ուտելիքները: Այդ օրը սգի, ողբի օր չէր, այլ՝ ուրախության, թեթևության: Քահանայի կողմից գերեզմաններն օրհնելուց հետո սկսվում էին խնջույքները, որոնք, որքան էլ մեզ համար զարմանալի է, անցնում էին թեթև, անկաշկանդ մթնոլորտում: Փոքր ինչ զուսպ էին միայն այդ տարի հանգուցյալ ունեցողները, որոնց մոտ հավաքված հարազատները, մտերիմները իրենց վշտակցությունն արտահայտում էին թեթև մռայլությամբ, բայց այստեղ նույնպես ողբի, սգի դրսևորումներ չպետք է լինեին և չկային: Մյուս խմբերում անպակաս էին կատակները, ծիծաղը, հյուրասիրությունը, միմյանց ուղարկվող մթերքները և իհարկե, ինչպես բոլոր մյուս տոներին, փեսացուի ընտանիքի կողմից հարսնացուին ուղարկվող տոնական «սեղանը» (մատուցարանը) ուլի լավագույն կտորներով:



Պետք է ասել, որ դիտվում են Սըրբխեչի տոնի կատարման որոշ տարբերակներ: Այսպես՝ Մուշ-Տարոնում գերեզմաններ «նան ու տրի» տանելով այցելում էին ուրբաթ օրը, Սիսիանում այդ տարի հանգուցյալ ունեցողները ուրբաթ օրը ոսպով շորվա էին եփում և բաժանում որպես հոգեբաժին, այլ վայրերում կիրակի օրը դիտվում է որպես ուխտագնացության օր, երկուշաբթին՝ մեռելոց և այլն:



Շատ տեղեր Սըրբխեչի տոնն ընկալվում էր որպես աշնանամուտ: Ինչպես ասում էին քեսապցիները՝ «Խաչ, վերմակը առ, ներս փախիր»,- այսինքն՝ բացօթյա գիշերողներն այլևս տուն են քաշվում: Մուշում այդ ասացվածքի զուգահեռն էր՝ «Աստվածածնա՝ բակը մտիր, Սըբ խաչին՝ ծակը մտիր»:



Գրականություն

1. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988, էջ 344:
2. Լալայան Ե. Ջավախք,Երկեր, հ.1, Երևան, 1983, էջ 290:
3. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898, էջ 260:
4. Լալայան Ե. Ջանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, էջ 112:
5. Լալայան Ե. Վայոց ձոր, ԱՀ, գիրք 16, հ.2, Թիֆլիս, 1906, էջ 155:
6. Լալայան Ե. Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք 26, Թիֆլիս, 1916, էջ 194:
7. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 210-212:
8. Մխիթարեանց Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրապոլ, 1901, էջ 274:
9. Մովսիսյան Ս. Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972, էջ 46-47:
10. Չոլաքեան Յ. Քեսապ, Բ հատոր, Հալէպ, 1998, էջ 207:
11. Տեր Մինասեան Վահան, Անգիր դպրութիւն և հին սովորոյթներ, Կ.Պոլիս, 1904:
12. Օրմանյան Մ. Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 22-23:
13. **Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892, стр. 105.**
14. **Е.В. О народных праздниках и праздничных обыкновениях христианского населения за Кавказом и преимущественно в Тифлисе, Кавказский календарь, Тифлис, 1854, стр. 577.**

ՍՐԲԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՍՈՒՐԲ ԶԵՎՈՐԴ, ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ

Սրբերի պաշտամունքը, նրանցից մի քանիսի անվան և ուխտավայրերի հետ կապված ժողովրդական սովորույթները զգալի բազմազանություն են բերել հայոց տոնածիսական կյանքում: Բացի նրանից, որ ժողովրդական տոների զգալի մասն անց էր կացվում ուխտավայրերում, որոնք կրում էին սրբերի անուններ, սրբերն ունեին նաև իրենց նվիրված տոնական օրեր: Հայոց ժողովրդական տոնածիսական կյանքում (տոնախմբություններ, ուխտագնացություններ, աղոթքներ...) առավել հաճախ հանդիպող սրբերը Մարիամ Աստվածածինն է, Սուրբ Սարգիսը, Թուխ մանուկը, Սուրբ Կարապետը, Սուրբ Գևորգը, Սուրբ Հակոբը (թվարկման հերթականությունը պայմանավորված է անվանյալ սրբի ժողովրդական պաշտամունքի ինտենսիվությամբ): Բոլոր թվարկվածները պաշտոնական եկեղեցու կողմից համարվում են ոչ հայազգի սրբեր, իսկ Թուխ մանուկն առհասարակ հայոց սրբերի պաշտոնական ցանկում չկա: Տոնածիսական կյանքում ժողովրդական տոնախմբություններ կատարվել են Սուրբ Սարգսի, Սուրբ Աստվածածնի, Սուրբ Կարապետի, Սուրբ Գևորգի, մասամբ՝ Սուրբ Հակոբի տոնական օրերին, իսկ անհատական, ընտանեկան շատ ուխտագնացություններ նվիրվել են Թուխ մանուկին: Ս.Սարգսի և Ս.Աստվածածնի տոներին, որոնք ունեին համաժողովրդական ընդգրկում, այս գրքում անդրադարձել ենք առանձին: Սուրբ Կարապետի հետ կապված տոնական հանդիսությունները մասնակիորեն արտացոլվել են Վարդավառի տոնի նկարագրությունում: Ճիշտ է, այս գրքում նկարագրվեց Կանաչ կիրակի օրը նոր նախիջևանցիների կողմից կատարվող մեծ ուխտագնացությունը Սուրբ Գևորգի եկեղեցի (Խտեռլեզի ուխտագնացությունը), սակայն դա, ինչպես նաև՝ Սուրբ Կարապետի ուխտագնացությունը Վարդավառի տոնին ոչ թե Սուրբ Գևորգի և Սուրբ Կարապետի տոներն էին, այլ՝ Կանաչ կիրակի տոնի կատարումը Սուրբ Գևորգի եկեղեցում և Վարդավառի տոնակատարությունը Սուրբ Կարապետում: Մինչդեռ՝ այս սրբերն ունեին հատուկ իրենց նվիրված տոնական օրեր: Այժմ որոշ չափով կանդրադառնանք Սուրբ Գևորգի, Սուրբ Հակոբի տոների նկարագրությանը, իսկ գրքի վերջում առանձին հոդվածով կփորձենք վերլուծել հայոց մեջ այս Սրբերի կերպարների և դրանց ընկալման որոշ առանձնահատկություններ:

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԴԻ ՏՈՆԸ

Որոշ վայրերում մեծ ուխտագնացությամբ և հատուկ ծեսերով հոկտեմբերի վերջին կիրակի օրը, այգու բերքը հավաքելուց հետո, նշում էին Սուրբ Գևորգի տոնը: Չնայած եկեղեցական տոնացույցը Սուրբ Գևորգի տոնը հաստատուն նշում է սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկնող շաբաթ օրը, և այն նախորդում է Վարագա խաչի տոնին, որն իր հերթին նշվում է սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկնող կիրակի օրը, ժողովուրդը Ս.Գևորգի ուխտագնացությունն անում է հոկտեմբերի վերջին, երբ, ինչպես ասվեց, դաշտային երկրագործական աշխատանքները հիմնականում ավարտված էին լինում: Սուրբ Գևորգի տոնը նշվում էր հատկապես Վանում, Քանաքեռում, Շիրակում, Նոր Նախիջևանում և այլն: Շատերը գերադասում էին գնալ ուխտավայրերը, հատկապես Ս. Գևորգի անունը կրող ուխտավայրերը: Բնիկ քանաքեռցի Գրիգոր Ավագյանը պատմում է Մողնու սուրբ Գևորգ ուխտ գնալը հետևյալ կերպ. «Աշնանը, այգիների բերքը հավաքելուց հետո, պատրաստություն էին տեսնում հոկտեմբերի վերջին կիրակի օրը Մողնի ուխտ գնալու համար: Տղամարդիկ, հատկապես՝ երիտասարդությունը, իրենց ծիերի շնորհքը ցույց տալու համար մեկ ամիս առաջ աշխատանքից հոգնած ծիերին բաց էին թողնում այգիներում հանգստանալու և գիրանալու համար, չէ որ Մողնի ուխտ գնալը միայն ուխտ գնալ չէր, դրա հետ միասին նաև՝ մրցույթ ու տոնախմբություն էր: Ջահել տղաները քյահլան ծիերը նստած, գեղեցիկ հագուստով, աղջիկներն ու հարսները գլխները շինած, աչքերը դեղ դրած, խաս ու ղումաշ հագած, զարդ ու զարդարանքով: Կանայք, նախօրոք խաշած հավերով, բուղլամա դրած գառներով, եփած ձկներով, հացերի մեջ փաթաթած, հաց, գաթա, հալվա բոլորը կապոց արած դրած սայլերին: Շաբաթ օրը աղոթարանին գյուղի ահել ու ջահել ոտքի վրա էին: Տեսնողը կկարծեր, թե գյուղը տեղահան է լինում:

Ամենքն ունեին իրենց փափագը. որի ամուսինը կամ որդին էր գտնվում օտարության մեջ, որը երեխա չէր ունենում, որը՝ հիվանդի, իսկ ջահելներն էլ՝ սիրո տեր լինելու համար:

Ուխտի ճանապարհը երկար էր ու բազմամարդ: Անծանոթ մարդիկ ծանոթանում ու բարեկամանում էին միմյանց...: Շատ երիտասարդ տղաներ ու աղջիկներ այստեղ էին ծանոթանում միմյանց ու սիրո խոստումներ տալիս:

Երեկոյան և ցերեկային ժամերգություններից հետո, երբ արդեն օրհնվել էին մատաղացուները, վառում էին օջախները, սեղան բացում կանաչների վրա, ու սկսվում էր քեֆը»:

Ս.Գևորգ տոնի ուխտագնացությունը ցանկալի և սպասված տոն էր Վանում: Վանի Արճակ գյուղացի Ս.Ավագյանը պատմում է. «Սկսած Վարդավառի տոնից մինչև սուրբ Գևորգի (Սըփ Կյորք) տոնը, ներառյալ՝ Աստվածածնա ու Սուրբ Խաչի տոնը, առհասարակ գյուղացոց աշխատանքային ամենաեռուն ժամանակաշրջանն էր: Այդ ժամանակամիջոցի համար էր հորինվել «կյետնի մեռել պիտի խանեն, պանցուցեն» փոխաբերական ասացվածքը: Այնինչ, Ս.Գևորգի տոնից հետո իշխում էր արդեն «ցախավելը կալից էկավ տուն» փոխաբերականը: Նշված տոնից հետո սկսվում էր որոշ չափով խաղաղ, անշտապ կենցաղը:

Ս.Գևորգի հնգօրյա պասից հետո շաբաթ օրվա կեսօրից սկսվում էր ուխտագնացության պատրաստությունը: Ուխտագնացությանը մասնակցում էին բնակչության տասնչորս-տասնհինգ

տարեկանից մինչև տարիքն առած երկսեռ անդամները: Ս.Գևորգի վանքը գնում էին արճակցի ու խառակոնիսցի ուխտագնացները՝ միասին, յուրաքանչյուր գյուղն իր ղեկավարով, նաղարա-զուռնայով: Ս.Գևորգ հասնելուն պես, վանքի կառավարիչներն այդ երկու գյուղերին առանձին-առանձին սենյակներ էին հատկացնում:

Ս.Գևորգի ուխտագնացության երթը սկսվում էր երեկոյան: Տեղ էին հասնում արևածագից առաջ: Արճակցիներն սպասում էին մինչև խառակոնիսցիները հասնեին Արճակի ներքևը, իրենք ևս գյուղից դուրս էին գալիս, միանում ու մեկտեղ ուղևորվում: Ուխտագնացությունը մեծ մասամբ լինում էր հետիոտն, բացառությամբ՝ ծի ունեցողների: Ուխտագնացների հետ լինում էին և մի քանի փասիճասայլ կոչվող թեթևաշարժ սայլակներ, որոնց վրա բարձվում էին ուխտավորների ուտելիքի պաշար կապոցները: Երկու գյուղի սակավաթիվ ծիատերերն էլ իրենց ծիերը տրամադրում էին ծանոթ-բարեկամների հասուն աղջիկներին, իսկ իրենք իրենց ծիերը նստում էին, երբ տեղ էին հասնում:

Ս.Գևորգի ուխտագնացությունը տևում էր երեք օր: Այդ նույն շաբաթ երեկոյան, երբ ուխտավորները պատրաստվում էին ճանապարհ ընկնելու, տանը սկսվում էր հարիսա դնելու գործողությունը: Հավով հարիսա, թե մսով կորկոտ, արճակցիների ձմեռային կերակրացանկում միշտ էլ կարևոր տեղ էր գրավում, սակայն Ս.Գևորգի տոնը պետք է նշվեր հավով հարիսա եփելով: Հարիսա էին դնում բոլորն անխտիր: Ամենասակավանդամ ընտանիքը պետք է դներ երկու հավով հարիսա, իսկ բազմանդամների տներում այդ օրը մորթվում էր ութից տասը հավ: Այս հարիսային նաև կալի կորկոտ էին ասում»:

Սքանչելի մի պատմություն է պահպանված Վասպուրական աշխարհում եփվող հարիսայի մասին «Պապիկ ու թոռնիկ» կոչվող գրքում. «Յանկարծ միտքս եկավ, թոռնիկ, ինչ զուգադէպ մի օր է այսօր, վաղը մեր Վարագա խաչի տոնն է: Ի նախնեաց անտի սովորութիւն եղած է, բոլոր Վասպուրական աշխարհ վաղը հարիսա կը դնէ, գյուղական ժողովուրդին համար աւելի ցնծության օր է, մեք այս աւուր կալի կորկոտ կասենք, վասն զի կալեր կվերջանան, կալի երախայրիքեն գիւղական տանտիկինները յատկապես ճերմակահատ ցորեններէն կորկոտ կը պատրաստեն հարիսայի համար, բոլոր գիւղի տները ամէն մէկ համբաներ մէկ մէկ եզ կը մորթէին հարիսայի համար, իրենց մեռելները հիշելով հոգւոյ հաց կը պատրաստէին... Գնաց, Թոռնիկ, այն առատութեան ժամանակ, թող եզն, բավ է թէ կարենան ուլ մի մորթել: Ի հնուց հարիսայի համար շատ երգեր կան, բայց ես նորէն մի երգ խոսիմ քեզ:

Էս օր, գիտե՞ք, թե ի՞նչ օր է,
Մեր Վարագայ Խաչի տոնն է,
Եւ մենք կասենք կալի կորկոտ,
Հարիսայի մեծ տոնն է,
Բոլոր աշխարհ Վասպուրական
Հարիսայի տօն կատարէ:
Է՜, տան տիկին, թոնիր վառէ,
Դիր մեծ պղինձ և պուտուկներ,
Մեք մորթեցինք մեր պարարտ եզն,
Միսն ու կորկոտ պատրաստ է, տե՜ս,
Բոլորեցեք շուրջ պըղընձին,
Բոլոր գեղի կըտրիճ լաճեր,
Հարեք ըզ սա, ուժգին հարէք:
Կասէ մեր Հայր Լուսավուրիչն,

Էնպէս հարէք մինչև հալին
Ոսկորն ու միսն ի միասին,
Հալին խառնին հետ կորկոտին
Այն է նշան լավ հարիսին:
Չոքեք, մանկտիք, թախտին վերայ,
Սըփռոց չուզեր, շինական եմք,
Լից տան տիկին ըզ հարիսան,
Լիճ լիճ արա եղն ի վերայ:
Տան հարսներ և աղջիկներ,
Շուտ շուտ բերեք ըղ թափթափան
Թոնրէն ելած տաք տաք հացեր:
Ի՞նչ անուշ է հարիսի հետ,
Առէք այն կոպիտ անտաշ,
Խոշոր խոշոր մեծ դըգալներ,
Կերէք, կերէք, անուշ արեք,
Վաստակաւոր մշակներ:
Օրհնեալ լինի մեր տանտիկին,
Լավ է եբեր ըղ հարիսան:
Օրհնեալ լինի Լուսավորի՜չն
Որ տուավ մեզ լոյս հավատ,
Հետ հավատին մեզ ավանդեց
Հարիսային այս հիշատակ:
Օրհնեալ լինի իւր յիշատակ,
Պահենք պահենք ու չը մոռնանք
Մեր փրկութեան մեծ օրն էր այն»:

Ըստ ավանդության՝ Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապից դուրս գալուց հետո քառասուն օր Վաղարշապատում քարոզ է կարդում և այդ ընթացքում նրա մեջ ցանկություն է առաջանում աղքատներին ճաշ տալ: Հազարավոր գյուղացիներին նա հազարավոր ոչխարներ ու մեծ քանակությամբ յուղ է բերել տալիս, միսն ու կորկոտը լցնել է տալիս խոշոր կաթսաների մեջ և հաստաբազուկ կտրիճ երիտասարդներին ասում, որ հարեն. «հարէք զսա», որից և այդ կերակուրի անունը մնացել է «հարիսա»:

Ջավախքում այս տոնը կոչվում էր Ծռատոն: Այդ օրը մարդիկ գործ չէին անում, որ չծռվեն: Պատմում են, թե այդ օրը գործ անողներ են եղել, և նրանց ձեռքերը, ոտքերը և այլն անմիջապես ծռվել են: Եթե մարդ հարկադրված էր որևէ գործ անել, պատժից ազատվելու նպատակով գործից անմիջապես հետո մի քիչ գարի էր ցանում: Այդ ցանված գարին ծուռ էր դուրս գալիս, իր վրա կրելով Ս.Գևորգի պատիժը:

Այլ վայրերում հարիսան եփում էին Ս. Հակոբի տոնին:

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲԻ ՏՈՆԸ

Կա երկու Սուրբ Հակոբ: Հիսուս Քրիստոսի եղբայր Հակոբը՝ Տյառնեղբայրը, և Մծբնի հայրապետ Ս.Հակոբը, որը Գրիգոր Լուսավորչի ազգականը և Մծբին ասորական քաղաքի եպիսկոպոսն էր: Հայոց մեջ նշվող Սուրբ Հակոբի տոնը կարող է վերաբերել երկուսին էլ: Քանի որ սուրբ Հակոբի տոնը պատահաբար զուգադիպել է ձմեռնամուտի շաբաթապահքին, ժողովուրդն այդ պասը Սուրբ Հակոբի պաս է անվանում, չնայած իրավամբ Սուրբ Հակոբի պաս չկա: Այս պասը որոշ ազգագավառներում կոչվում էր նաև Նախրաթողի պաս: «Նախրաթող» բառը նշանակում է տարվա այն պահը, ժամանակը, երբ ցրտի պատճառով նախիրն այլևս չեն տանում արոտ, նախրապահները «նախիրը թողնում են» (տես «Նավասարդի» նկարագրությունը): Հայոց որոշ ազգագավառներում ժողովրդական տոնախմբությամբ նշվող Ս.Հակոբի տոնը կատարման ժամանակով զուգադիպում է այլ ազգագավառներում նշվող «Նավասարդի» տոնակատարություններին: Գործնականում այս տոները «փակում էին» հայոց ժողովրդական տոնացուցի տարեկան բոլորաշրջանը, ինչպես, ի դեպ, նաև տնտեսական տարին:

Արդեն ասվեց, որ շատ տեղերում այդ տոնին հարիսա (քեշկեկ, քյաշկա) էին եփում և քանի որ այդ հարիսան մատաղի մսով էին եփում, այն, բնականաբար, բաժանում էին: Ինչպես կատարման ժամանակով, այնպես էլ հարիսա եփելու փաստով Ս.Հակոբի տոնը զուգահեռվում էր Նավասարդի տոնին: Քեսապում, օրինակ, անպայման հարիսա էին եփում: Ահա թե ինչպես է նկարագրում քեսապցի Հ.Չոլաքյանը Ս.Հակոբի տոնը. «Գյուղացիք առհասարակ իրենց ցանքերը վերջացուցած և արորն ու լուծը կախած կըլլային պատին: Կինը մարդուն հիշեցուցած կըլլար, որ անպայման «սնտաղբիկ» մը ցորեն պահէ ճերմակ ցորենի սերմնցուէն Ս.Հակոբի հերիսային համար: Այս ցորենը կինը կը ծեծեր տան փոքրիկ սանտին մեջ:

Շաբաթներ առաջ արդէն խոսք եղած կըլլար, թե որ աքլորը Ս.Հակոբին հերիսացու պիտի ըլլար: Սովորաբար մեծ աքլորը կըլլար ատիկա: Այդ տարվան վառեակները արդեն մեծցած էին, հետևաբար երկու-երեք տարեկան աքլորը կարելի էր զենել: Տան փոքրիկները հատկապես կը կերակրեին այդ աքլորը, որպեսզի ավելի գիրնայ:

Սովորություն էր, որ տան կնքահայրը մորթէր հերիսային աքլորը: ...Շաբաթ երեկո, հավերը թառը մտնելե ետք կը բռնէին աքլորը և կը տանէին գյուղի հրապարակը, ուր կը հավաքվեին հայրեր, կնքահայրեր ու մանավանդ թաղի բոլոր տղաքը: Երբ բոլոր աքլորները բերված ըլլային, տղաք կը սկըսեին յուրահատուկ գրավ մը, թէ որուն աքաղաղը գլխատվելէ ետք պիտի ոտքի ելլէ ու ամէնէն երկար թպրտայ ու տապլտկի: Գրավը կըլլայ տասը հատ ընկոյզի, երկու նուռի կամ գրպան մը թուզի կամ ափ մը չամիչի վրայ: Ասոր համար կարգ մը պզտիկներ կուզէին, որ իրենց աքլորը «ձեռքը թեթեւ»... մեկը զենի: Այսպէս կըսվեր անոր, որուն մորթած աքլորը գլխատուելէ ետք երկար կը թփրտար: Կնքահայրեր կը մորթէին աքլորները, եւ գլուխն ու արիւնոտ դանակը ձեռքին կը հետեւէին գլխատուած աքլորին շարժումին: ...Յետոյ գլուխը կը նետէին զառիթափէն վար, արիւնոտ դանակը կը սրբէին մոյկի ճտին ու ծալելով կը դնեին գրպանը: Ասիկա կըլլար հանդիսավոր կերպով: Մորթուած աքլորը կը տրուէր տղոց, որոնք կը շտապէին տուն, որպէսզի

վայրկյան առաջ մաքրուէր ու դրուէր կաթսային մէջ:

Սուրբ Հակոբի շաբաթ օրը երիտասարդներ ու այր մարդիկ սովորաբար որսի կերթային...: Որսը առատ ըլլալու պարագային քանի մը մոտիկ ընտանիքներ կայցելէին Հակոբի մը տունը: Ամէն թաղի մէջ քանի մը Հակոբ կը գտնուէր...: Խորոված կընէին: Նոր գինին առաջին անգամ այս գիշեր կը դնէին սեղանին:

Սուրբ Հակոբի հերիսան կուտեն Կիրակի կէսօրին»:

Ս.Հակոբի ժողովրդական տոնակատարությունը հայտնի էր նաև Նոր Նախիջևանում և չերքեզահայերի միջավայրում՝ Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում: Տոնի մատաղացուն դարձյալ աքլորն էր, սակայն՝ այստեղ աքաղաղների զոհաբերությունը կազմում էր տոնի առանցքը: Նոր Նախիջևանում և Արմավիրում գնում էին ընտանիքի արու անդամների թվով աքաղաղներ՝ նորածին երեխայից մինչև ամենատարեցը: Արմավիրում ընդունված էր լրացուցիչ ևս մեկ աքաղաղ զոհաբերել Ս. Հակոբի անունով, սակայն՝ աքաղաղների ընդհանուր թիվը պետք է կենտ լիներ: Եթե ընտանիքի արու անդամները Ս.Հակոբի հետ միասին զույգ թիվ էին կազմում, ուրեմն՝ լրացուցիչ մեկ աքաղաղ էին ավելացնում: Զոհաբերությունը կատարվում էր եկեղեցու մոտ, եփում էին տանը, կտորների վեր ածում և մի-մի կտոր հացի վրա դրած՝ բաժանում:

Տոնական տարին Մուշում փակվում էր Հորթըքողի և Նախրըքողի պասերով, որը Արևելյան Հայաստանում, ինչպես ասվեց, զուգադիպում էր «Նավասարդ» կոչվող տոնին:



Գրականություն

1. Ամատունի Ս. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 500:
2. Ասատրյան Գ. Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները, Երևան, 1961, էջ 95:
3. Ավագյան Ս. Արճակ, հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.8, Երևան, 1978, էջ 97:
4. Լալայան Ե. Երկեր, հ.1, երևան, 1983, էջ 290-291:
5. Շահազիզ Ե. Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 17::
6. Շահան Սիմոն, Արմավիրի քառաձայն երգեցիկ խմբի հուշարձանը, Տփխիս, 1914, էջ 79:
7. Չոլաքյան Յ. Քեսապ, հ.Բ, Հալեպ, 1998, էջ 207-209:
8. Պապիկ առ թոռնիկ, գրեց Հայոց Հայրիկ, էջմիածին, 1894, էջ 70-72:
9. Պետոյան Վ. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965:
10. Տեր Մինասեան Վ. Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, Կ.Պոլս, 1904, էջ168:
11. Օրմանյան Մ. Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 30:
12. Փորքշեյան Խ. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965:
13. Аракелян Г. Черкесогаи: историко-этнографическое исследование, Кавказ и Византия, т.4, Ереван, 1984, стр. 110.
14. Григоров И. Село Татев, СМОМПК, вып. 13, Тифлис, 1892, стр. 105:

ՆԱՎԱՍԱՐԴ, ՆԱԽՐԱԹՈՂ

Ով տայր ինձ զծուխ ծխանի
Եվ զառավոտն նավասարդի,
Զվազելն եղանց և զվարգելն եղջերվաց,
Մենք փող հարեաք և զթմբկի հարկանեաք
Որպես օրեն է թագավորաց:

Այս սքանչելի բանաստեղծություն երգը, որում ուղղակի ղողանջում է «Նավասարդի» կարոտը, նվիրված էր այն տոնին, որ հեթանոս հայերը նշում էին նավասարդ ամսի (համապատասխանում է օգոստոսին) ամառային օրերին, որպես Նոր տարի: Հնագույն տեղեկությունները վկայում են, որ այդ վաղնջական ժամանակներում նավասարդին Նոր տարին նշվել է մեծագույն շուքով, զվարճահանդեսներով, ձիարշավներով, բազմապիսի խաղերով, որոնց մասնակցում էին թե՛ հայոց թագավորը, թե՛ ազատանին, թե՛ ռամիկը: Տոնահանդեսները տևել են օրեր շարունակ, դրանց ընթացքում կատարվել են զոհաբերություններ, կազմակերպվել խրախճանքներ՝ երգ ու պարի ուղեկցությամբ, թատերախաղեր: Դրանք գլխավորապես բացօթյա, հաճախ՝ գիշերային խարույկների շուրջ կազմակերպվող հանդեսներ էին ուխտավայրերում, սպորտային և զվարճախաղեր, երգ ու պարի հանդեսներ, զոհաբերություններ, խրախճանք: Մեծաթիվ ուխտավորներ են հավաքվել հատկապես Բագրևանդ գավառի Բագավան ավանում, որտեղ տոնը նշելու են գնացել հայոց արքունիքն ու ազատանին, և որտեղ գտնվում էին հայ ժողովրդի պաշտելի աստվածություններին, այդ թվում՝ հայոց մեծազոր աստվածուհուն՝ Անահիտին նվիրված տաճարները: Այս շատ սիրված տոնի շուրջ ժամանակին բազմաթիվ ավանդազրույցներ են պատմվել, իբրև թե մեր նախահայր Հայկը Բելին հաղթել է հենց նավասարդին և այդ օրվանից պետք է սկսել հայ ժողովրդի պատմության սկիզբը: Պատմում էին նաև, որ այդ օրը Նոյան տապանի՝ Արարատի գագաթին իջնելու, և ջրհեղեղից մարդկության փրկության օրն էր, և նավասարդին նշվող Նոր տարվա տոնը պարբերաբար վերահաստատում էր մարդկության նոր պատմության սկիզբը:

Քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնապես ընդունվելուց հետո հեթանոսական շրջանից եկող ազգային մյուս տոների շարքում Նոր տարին նույնպես պաշտոնապես վերափոխվեց: Գրիգոր Լուսավորիչը նավասարդ ամսին նշվող այս շքեղ տոնը փոխարինեց Ս. Հովհան Կարապետին նվիրված տոնով: Արգելվեցին Բագավանի ուխտագնացությունները, տոնական զվարճահանդեսները, զոհաբերությունները և այլն, քանդվեցին հեթանոսական աստվածություններին նվիրված տաճարները: Տոնական ծիսաշարը պահպանվեց հուլիսին նշվող Վարդավառում, մասամբ՝ օգոստոսին նշվող Վերափոխման կամ Խաղողօրհնեքի տոնում,

սակայն բուն տոնը, արդեն Նավասարդ անունով, շարունակեց ապրել: Այն չընդգրկվեց որևէ տոնացույցի մեջ՝ ո՛չ եկեղեցական, ո՛չ քաղաքացիական: Նավասարդ-օգոստոս ամսից այն «վտարվեց» պաշտոնապես, բայց Նոր տարուն բնորոշ արարողակարգով ու Նավասարդի տոն անունով այն հարյուրամյակներ շարունակ նշվում էր նոյեմբերի 10-ին հաջորդող կիրակի օրը:

Հայոց որոշ ազգագավառներում մինչև մեր հարյուրամյակի սկիզբը փաստորեն նշվում էր երկու Նոր տարի, ժողովրդական-ազգային Նավասարդը՝ նոյեմբերին և քաղաքացիական-պաշտոնականը՝ հունվարի 1-ին: Այդպես էր, հատկապես, Արևելյան Հայաստանում՝ Ղարաբաղում, Գանձակում, Շամշադինում, Զանգեզուրում, Նախիջևանում, ընդհուպ մինչև Սալմաստ: Ինչո՞ւ, սակայն, նոյեմբերին: Որովհետև այդ ժամանակ ավարտվում էր երկրագործ հայերի տնտեսական տարվա մի փուլը. այգեկութն ավարտված է, դաշտի բարիքը՝ հավաքված, անասուններն էլ անցել են ախոռային կերի, այլևս արածելու չեն տարվում: Տարվա այն ժամանակը, երբ կանաչի պակասելու ու ցրտերն ընկնելու պատճառով նախիրն այլևս չեն տանում արոտ, հայոց մեջ կոչվել է «նախրաթող»՝ «նախիրը թողնել» բառերից: Հայկական գյուղերում ընդունված էր տնտեսական բազմաթիվ աշխատանքներ կարգավորել փաստացի գործող տոնացույցով: Օրինակ՝ հոտաղ վարձելիս աշխատանքի վերջը սահմանում էին Վարդավառը, կալվորին՝ մինչև Խաղողօրհնեք, հորթարածների ու նախրարածների աշխատանքներն ավարտվում էին Նավասարդին: Ահա այս պատճառով Նավասարդը կոչվում էր նաև Նախրաթող:

Նավասարդ-նախրաթողի անունների շուրջ Տավուշի շրջանում մինչև վերջերս պահպանված ավանդությունը պատմում էր, թե իբր գյուղի նախիրը պահ էին տվել Նավասարդ անունով մի նախրապանի: Գյուղում սկսվել էր աշնանային տոնահանդեսը, իսկ Նավասարդն անասունների պատճառով չէր կարող մասնակցել տոնին: Երկար տատանումներից հետո, չդիմանալով գայթակղությանը, նախրապանը լքում է նախիրը և գնում գյուղ՝ զվարճանալու: Իբրև թե այդ օրվանից աշնանային այդ տոնը ստանում է կրկնակի՝ Նավասարդ և Նախրաթող անունները:

Արևմտյան Հայաստանում, որտեղ նավասարդի տոնը չէր պահպանվել, դեկտեմբերին «հորթըթողի» ու «նախրըթողի» պասերից հետո տոնական տարին փակվում էր, որ պիտի վերսկսվեր հունվարի 1-ին Կաղանդով՝ Նոր տարով: Այստեղ Նախրաթողի պասը զուգադիպում էր Ս.Հակոբի պասին, և Ս.Հակոբի պասը հաճախ կոչվում էր նաև «Նախրաթողի պաս» (տես Ս.Հակոբի տոնի նկարագրությունը): Արևելյան Հայաստանում Նախրաթողով սկսվում էր տոնական բոլորաշրջանը (Նավասարդով՝ Նոր տարով): Նոր տարով ու նոր կյանքով, քանզի Նավասարդով վերսկսվում էին գարնանն ընդհատված հարսանիքների շղթան:

Տնտեսական աշխատանքների այս բնական տարեմուտը նույնքան բնականորեն կարգավորում էր տոնական կյանքը և դարեր առաջ արգելված ազգային նոր տարին նոր կյանքով մարդկանց կենցաղում շարունակում էր նշվել տնտեսական տարեմտին: Ահա թե ինչ է գրում ականատեսը 19-րդ դարի վերջին. «Ժողովուրդը Նավասարդը տոնում է այգեկութից ետը, այդ ժամանակ պահունի մրգերն առանձին արկղներում, տոպրակներում են լինում պահած, չիրն ու շիջողն առանձին, գինին՝ կարասները լիք, Աստծու տված մյուս բարիքներն էլ տան պուճախներում խլթխլթում են: Աշունքակեսից անց միջոցին, երբ վաղուց դուռ ու կտուր եղյամով, բանջարաբսուկներով զարդարված են, հայ գյուղացին զգում է, որ Նավասարդը մոտեցել է»:

Նավասարդի տոնակատարությունը 19-րդ դարի վերջին, անշուշտ, շատ էր տարբերվում մեր նախնիների նավասարդ-օգոստոսին նշվող Նոր տարուց, երբ «փողեր ու թմբուկներ էին խփվում» հատուկ ուխտավայրերում հավաքված ուխտավորների կողմից, զվարճանում էին արքունիքն ու գյուղացիները: Նավասարդին այլևս ուխտավայրեր չէին գնում, տոնը նշում էին

տանը, ընտանիքով, ազգականներով: Սակայն մարդիկ նախապատրաստվում էին տոնին հոգեբանորեն, ջանում էին մոռանալ վիրավորանքները, վճարել պարտքերը, մաքուր խղճով դիմավորել տոնը: Շաբաթ օրը խմորեղեններ էին թխվում (գաթա, նազուկ, բիշի): Երեկոյան, սովորաբար, ընթրիք չէր լինում, սակայն սեղանը զարդարվում էր այդ տոնը խորհրդանշող ուտեստով՝ թարմ ու չոր մրգեղենով, ընդեղեններով, թխվածքներով, որի շուրջ հավաքված ընտանիքը, հանդարտ զրուցելով, սպասում էր այցելուներին: Իսկ այցելուները շատ որոշակի էին՝ խնամիական կապերով կապված ազգականները: Այդ գիշեր նշանված աղջիկներն ընկույզ, չամիչ, չոր ու թարմ մրգեր, փեսացուի ընտանիքի անդամների համար մեկական զույգ գուլպա մի գլխաշորի մեջ ծրարած զգուշորեն մոտենում էին փեսացուի տանը և բաց երդիկից լուռ իջեցնում տոնական այդ նվերը: Տնեցիներն իրար էին խառնվում, դուրս թռչում տնից և ջանում բռնել փախչող հարսնացուին: Եթե հաջողվում էր՝ տուն էին բերում, հյուրասիրում և որևէ նվերով ճանապարհում: Հարսնացուի ընտանիքից այդպիսի այցելություններ հաճախ արվում էին նաև փեսացուի մերձավոր ազգականների տները: Առհասարակ այդ գիշեր բարեկամների երդիկից ընդեղեններ ու մրգեր, երբեմն նաև հավերի, խնձորների, գաթաների շարաններ գցելը ընդունված սովորություն էր: Այդ նույն գիշեր 10-12 տարեկան տղաների խմբերը շրջում էին գյուղում, երդիկներից դատարկ գուլպա իջեցնում և տոնական երգեր երգելով՝ տոնական մթերք պահանջում: Նախիջևանում, օրինակ՝ երգում էին.

Ակլը մարեմ, մարեմ,
Չեր տղայի սոլը կարեմ,
Չամիչ տվեք՝ ատամներս շարեմ,
Ընկույզ տվեք՝ ծակտիս դնեմ,
Նուշ տվեք՝ պորտս ոլորեմ:

Սրան շատ նման էր Սալմաստում երգվող տարբերակը.

Ակլե մարեմ, մարեմ, մարեմ,
Չեր տղայի սոլը կարեմ,
Չամիչ տվեք՝ ատամներս շարեմ,
Ընկույզ տվեք՝ գլուխս ճարթեմ,
Փշատ տվեք՝ փորս լարեմ,
Շաքար տվեք՝ չայ խմեմ,
Պնդուկ տվեք՝ սիրտս ուզելի,
Կարկատ տվեք՝ փորս լցնեմ
Քյոխվա տանտեր, մի՛ խնայի,
Աստված ձեր հարսն ու փեսան պահի:

Եվ տանտերերը, իրոք, չէին խնայում, գուլպան լցնում էին սեղանի բոլոր բարիքներից, թեև այցելող տղաների թիվը երբեմն անցնում էր մեկ տասնյակից: Չէին մոռացվում նաև անասունները: Այդ օրը գոմը մաքրվում էր հատուկ խնամքով, հարդ էր փռվում և հարդի վրա առատորեն գարի էին շաղ տալիս, իսկ կովերի պոչերին կարմիր թել էին կապում, որպեսզի առաջիկա տարին «առատ ու կարմիր օրերով անցներ» Իսկ տանն այդ ընթացքում պատրաստվում էր տոնի գլխավոր, ծիսական ուտելիքը՝ «կորկոտը» կամ «քյաշկան», Երևանի շրջակայքում ու Նախիջևանում՝ «հարիսան»: Խոր կաթսայի մեջ շերտընդմեջ դասավորում էին ծեծած ու տաք ջրով լվացած ցորենը, նոր մորթված անասունի (տավար, խոզ, ոչխար, այծ) մսի յուղոտ կտորները, խուփը ծածկում և դնում թոնիրը՝ մարմանդ կրակի վրա: Քյաշկան եփվում էր ողջ գիշեր: Այս ճաշատեսակին շերեփ չպիտի դիպչեր, Նավասարդի տոնական ճաշը եփվում էր առանց խառնվելու, որպեսզի տարին հստակ, առանց խժդժությունների անցներ: Այս ուտելիքն

այնքան զորավոր էր, որ անմաքուր խղճով մարդն անարժան էր համարվում քյաշկան ուտելու: Գիշերը շատերը չէին քնում: Պարսկահայոց մեջ, ինչպես վկայում է Րաֆֆին, «Նավասարդի վերջին գիշերում ամենևին չեն քնում և ոչ էլ իրանց փոքրիկ երեխաներին թույլ են տալիս, որ քնեն, կամ միայնակ տանից դուրս գան մութի մեջ: Մայրերը կամ հայրերը ամբողջ գիշերը արթուն են պահում բոլոր ընտանիքը... տեսակ-տեսակ մրգեղեններ, մանավանդ ծմերուկ և խարբուզակ ուտեցնելով... որովհետև Խլվլիկը, որ նույն գիշեր ման է գալիս երդիկի վրա, գողանալու էր երեխաներին...»: Խլվլիկը, ըստ այդ պատկերացումների՝ դև է, որի մարմնի մեջ ասեղ խրելու դեպքում դառնում է խիստ հնազանդ տան ծառայող, բայց մինչ այդ անորսալի է և բազում չարիքներ է պատճառում մարդկանց ու նրանց կենդանիներին: Ուրիշ շրջաններում գիշերային արթնությունը տոնական հուզականություն ուներ:

Առավոտյան կողմ, դեռ լույսը չբացված, բոլոր տներում վառվում էին լույսերը, սեղանին էր դրվում բուրումնավետ քյաշկան, ընտանիքը բոլորում էր սեղանի շուրջ: Տան ավագը շնորհավորում էր Նոր տարին և սկսվում էր սրբազան քյաշկայի ճաշակումը: Տոնական ճաշատեսակի հետ հաղորդակցումն այնքան անհրաժեշտ էր, որ յուղառատ հեղուկը քսում էին նույնիսկ նորածին մանուկների շրթունքներին: Արևը ծագելիս ընտանիքն արդեն զուգված էր տոնականորեն, և նրա անդամների մի մասը պատրաստվում էր տոնական այցելություններն սկսելու, մյուսներն՝ այցելուներին դիմավորելու: Անչափահաս երեխաների գրպաններն ու ծոցերը լցնում էին չոր մրգեղեն, ընկույզ, քաղցրավենիք, երիտասարդները վերցնում էին չիր ու չամիչով, խաշած հավերով ու խմորեղենով լեցուն մատուցարանները: Այցելում էին նախ այդ տարի ննջեցյալ ունեցած բարեկամների ընտանիքները, նորապսակներին: Զանգեզուրում առավոտյան միմյանց ուղարկվող մրգեղենով լի մատուցարանները «լուս» էին կոչվում, և այդ «լուսերը» ազգականների տներում կուտակվում էին տասնյակներով: Ջոքանչներն այցելուներ էին ուղարկում փեսաներին, վերջիններս՝ կնոջ ընտանիք: Փողոցում միմյանց հանդիպողները համբուրվում էին «քաղցր պառավես Նավասարդի պես, շնորհավոր Նոր տարի, որդով, դստրով բարով մեկ էլ էս օր հասնես» բարեմաղթություններով:

Տանտերերը եկող հյուրերի գլխին չիր ու չամիչ էին շաղ տալիս՝ առատության բարեմաղթություններով, իսկ վերջիններս, մատուցարանը տանտիրուհուն հանձնելով՝ շնորհավորում էին Նոր տարին, նույնպես առատ տարի մաղթում:

Առավոտից սկսած՝ միջոցներ էին ձեռք առնում տարվա առատությունն ու հաջողությունը ապահովելու: Մի կտոր կարմիր շոր էին գցում դռան վրա, որպեսզի տարին «կարմիր օրերով» անցներ, կժերը ջրով լցնում էին, առհասարակ աշխատում էին դատարկ ձեռքով տուն չմտնել: Ուշադիր հետևում էին, որ սեղանին դատարկ աման չմնար, կժերի ջուրը լրիվ չվերջանար, վստահ, որ լիքը ամանները լիքը ու բարեբախտ տարի կապահովեն: Վաղ առավոտյան հոգ էին տանում նաև անասունների ու հանդերի մասին, առատ կեր տալիս անասուններին, ցորեն ու գարի շաղ տալիս դաշտերում: Նույն ակնկալությամբ տուն մտած հյուրերին դատարկ ձեռքով բաց չէին թողնում, քաղցրավենիք էին լցնում գրպանները, որևէ նվեր (գուլպա, գլխաշոր, թաշկինակ) էին տալիս մտերիմներին:

Հադրութ գյուղում պահպանվել էր այդ օրը անպայման գյուղապետին այցելելու և շնորհավորելու սովորույթը: Գնում էին տղամարդիկ, իրենց հետ տանելով մեջը արծաթյա դրամ խրած մեկական խնձոր և մի շիշ օղի: Երբ հիմնական այցելուները հավաքվում էին, գյուղապետը բոլորին հրավիրում էր խնջույքի սեղանի շուրջ, որի գլխավոր զարդն, իհարկե, «քյաշկան» էր:

Ինչպես վերևում նշվեց, Նավասարդով էին սկսվում գարնանն ընդհատված հարսանիքները: «Օրինաբեր Նավասարդն է, - պատմում է մի հեղինակ,- որ իրավունք է տալիս զուռնաչիներին ծվանները մաքրել, ութ ամսվա լռությունը խզել, որովհետև Մեծ պաս մտնելով

ծվանն էլ ղբուլն (պատյան) է մտնում Նավասարդից ետը սկսվում են հարսանիքների, պսակների հանդեսները, դրանից վաղ սկսվածը հայկական հարսանիք չէր »: Բուն տոնի օրը, սակայն, հարսանիքներին չէ, որ նվագում էր զուռնան, այն ուղեկցում էր տոնական խնջույքները, ինչպես նաև Նավասարդյան բազմապիսի խաղերը, քանզի անցյալից ժառանգություն մնացած գեղեցիկ սովորություններից մեկն էլ խաղերն էին, որոնց անհամբեր սպասում էին երիտասարդները: «Գյուղի ծայրին,- պատմում է նույն հեղինակը,- ջահիլներից ոմանք խաղում են ջղալախտի, կսկարանքի, կնդափետի, հեծի, կռանթուկի, հալի-հալի և ուրիշ շատ պատվական խաղեր. ոմանք կոխ են բռնել, ոմանք ղոչ են կռվացնում: Բայց տես խալխը (բազմությունը) վազում է կալերի կողմը, ինչո՞ւ, գիտե՞ս. ջիրիդ (ձիարշավ) կա, իգիթ տղեքը, լավ ձի նստողները մեյդան են դուրս եկել, որ իրենց կտրիճությունը չափեն»: Այս խաղերը, որոնց անուններն անգամ անծանոթ են մեզնից շատերին, ոչ վաղ անցյալում մեր ժողովրդի տոնական կյանքի անքակտելի մասն էին կազմում: Ծանոթանանք դրանցից մի քանիսին.

Կռռան թոփի (ձեռքի գնդակ)

Խաղացողները բաժանվում են երկու խմբի: Խմբերից մեկը նշանակված տեղը մի քար է դնում, որի շուրջը խմբվում են խաղացողները: Մյուս խմբի խաղացողները ցրվում են բավական ընդարձակ դաշտում: Քարի մոտ խմբվածներից մեկը տախտակի հարվածով գնդակը նետում է ցրվածներին: Եթե սրանցից մեկն ու մեկը գնդակը օդում բռնում է առանց վայր գցելու՝ խմբերի դերերը փոխվում են: Եթե գնդակը չի հաջողվում օդում բռնել, ապա ցրվածներից մեկը գնդակը սղղացնելով-գլորելով գետնի վրա՝ ջանում է դիպցնել քարին: Այդ դեպքում քարի մոտից տախտակով գնդակին խփողը «կտրվում» է և դուրս գալիս խաղից՝ տեղը զիջելով հաջորդ խաղընկերոջը: Իսկ եթե գնդակը քարին չի դիպչում, ապա խփողը շարունակում է հարվածները: Խմբերը իրենց տեղերը փոխում են նաև այն դեպքում, երբ առաջին խմբի բոլոր խաղացողները հերթով «կտրվում» են:

Հալի-հալի

Խաղացողները բաժանվում են երկու խմբի և կանգնում դեմ-դիմաց: Մի կողմը գնդակը «հալում» է, մյուս կողմը՝ բռնում: «Հալել» նշանակում է գնդակը բարձր օդ նետել: Գնդակը օդում որսացողը այս անգամ էլ ինքն է «հալում»: Այն խումբը, որի անդամները երեք անգամ որսում-բռնում են գնդակը, ընտրում են իրենցից մեկին, որը հեծնում է գնդակը օդ նետած դիմացի խմբի խաղընկերոջը: Վերջինիս ընկերներից մեկը կանգնում է հեծնողի առաջ, մյուսը՝ ետևը: Հեծածի ընկերներից մեկը գնդակը նետում է այն հաշվով, որ հեծածը օդում բռնի: Եթե գնդակը բռնում են կռացածի առջևը կամ ետևը կանգնած իր խաղընկերներից որևէ մեկը, ապա դերերը փոխվում են. հեծածը իջնում է, կռանում, իսկ մինչ այդ կռացածը հեծնում է նրան: Այս գործողությունը կոչվում է՝ «էշը փալան է անում»: Իսկ եթե հեծածը երեք անգամ գնդակն օդում որսում է, ապա նրա ընկերները բոլորը թռչում են հակառակորդ խմբի խաղացողների շալակը, շրջանաձև կամ քառանկյունաձև շարվում և գնդակը միմյանց նետում: Այս գործողությունն էլ կոչվում է «քյաշկա»: Երեք անգամ գնդակը առանց վայր գցելու միմյանց փոխանցելու դեպքում «էշերը» տեղերը փոխում են, և հեծածները շարունակում են խաղը:Գնդակը վայր գցելու դեպքում խաղը վերսկսվում է:

Կընդափետի

Խաղացողները բաժանվում են երկու խմբի: Խաղի գործիքներն են մի թզաչափ ծող՝ «կունդը», և մոտ կես մետրանոց ծողը՝ «կընդափետը»: Ընտրվում են հատկապես ամուր փայտից

պատրաստված ծողերը: Կընդափետի ծայրին, մի քանի սանտիմետր դեպի խորքը, խազում են այնպես, որ եթե կունդը դրվի այդ խազին՝ այն կանգնի կընդափետի վրա: Խաղացողները հերթով «թոխմախ» են անում. յուրաքանչյուրը կընդափետի խազին կունդը դնելով՝ վեր է թռցնում օդ և օդում հարվածելով հեռու գցում, ապա կընդափետը հորիզոնական դնում նախապես արված փոքրիկ փոսի՝ «հոբի» վրա: Եթե կունդը ընկած տեղից ետ են շպրտում այնպես, որ այն կպչում է կընդափետին, կունդը հոբի մոտից նետողը կտրվում է: Իսկ երբ խաղացողը հաջող «թոխմախ» է անում, նա խաղի իրավունք է ստանում և դառնում հոբի տերը: Այդ դեպքում նա կունդը դարձյալ դնում է կընդափետի խազին, ծուլ անելով օդ նետում և կընդափետով ամուր խփում: Հակառակորդները ջանում են օդում որսալ կունդը, կամ գետնից վերցնելով՝ ետ նետել այն հաշվով, որ այն ընկնի հոբի մեջ: Այդ դեպքում հոբի տերը կտրվում է և իր տեղը զիջում իր խմբի հաջորդ խաղընկերոջը: Խաղում հաղթում է այն խումբը, որն ավելի շուտ է լրացնում նախօրոք որոշված «սալերի» թիվը: Կարող է լինել 10, 20, 30 կամ ավելի սալ: Համապատասխան քանակով սալեր հավաքած խմբի անդամներից յուրաքանչյուրը, հաղթելուց հետո, «զու» է կանչել տալիս հակառակորդ խմբի այն անդամին, ով իր գցած կունդը ետ էր նետել: «Զու» կանչելը հետևյալն է. հաղթողներից մեկը կունդը ուղղահայաց ցցում է հոբի մոտ, կընդափետով խփում՝ թռցնում, կընդի ետևից բարձրաձայն «զու՛» կանչելով գնում է հակառակորդը և առանց «զու՛ն» ընդհատելու, այսինքն՝ առանց շունչ քաշելու, այն ետ բերում մինչև հոբը: Եթե «զուն» ընդհատվի՝ ամբողջը նորից կրկնվում է: Այսպես «զու՛» են կանչում բոլոր պարտվածները:

Ջղալախտին, ինչպես առհասարակ «լախտի» խաղի մյուս տեսակները, Նավասարդյան սիրված խաղերից էին, սակայն դրանց մենք ծանոթացանք Բարեկենդանյան խաղերի շարքում:



<u>Գրականություն</u>

1. Ամատունի Ս. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 500:
2. Առաքելյան Հ. Դաշտային ազգագրական նյութեր Շամշադինի, Իջևանի, Կրասնոսելսկի շրջաններից 1971-1975թթ.:
3. Լալայան Ե. Գանձակ, Երկեր, հ.2, Երևան, 1988, էջ 444:
4. Լալայան Ե. Վարանդա, Երկեր, հ.2, Երևան, 1988, էջ 193:
5. Լալայան Ե. Ջանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1898, էջ 112:
6. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք Գ, հ.1, Թիֆլիս, 1898, էջ 259:
7. Լալայան Ե. Նախիջևանի գավառ, ԱՀ, գիրք 12, Թիֆլիս, 1904, էջ 154:
8. Լիսիցյան Ստ. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, Երևան, 1981, էջ 67:
9. Լիսիցյան Ստ. Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 259:
10. Րաֆֆի, Սալբի, Երևան, 1983, էջ 26:
11. Քամալեանց Ս. Նաւասարդի տօնը, Երկասիրութիւններ (առաջին կապուկ), Թիֆլիզ, 1896, էջ 145-166:
12. Давидбеков И. Село Гадрут, Елисаветпольской губернии Джебраильского уезда, СМОМПК, вып. 6, отд.1, Тифлис, 1888, стр. 189-190.
13. Джейранож Ф. Селение Чайкенд Елисаветпольского уезда той же губернии, СМОМПК, вып.25, отд. 2, Тифлис, 1898, цтр.99.
14. Е.В. О народных праздниках и праздничных обыкновениях христианского населения за Кавказом и преимущественно в Тифлисе, Кавказский календарь, Тифлис, 1854, їз 552.
15. Зелинский П. Этнографические очерки из быта армян-переселенцев из Персии, живущих в Нахичеванском уезде Эриванской губернии, СМОМПК, вып.2, отд.2, Тифлис, 1882, стр. 19-20.
16. Осипов Г. Селение Даш-Алты Шушинского уезда Елисаветпильской губернии, СМОМПК, вып. 25, отд. 2, Тифлис, 1898, стр. 124:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

«Հայ ժողովրդական տոները» գրքի երկրորդ մասում ներկայացվում է երկու հոդված, որոնցից մեկում փորձ է արվում վերլուծել հայ ժողովրդական տոնախմբություններում զգալի դեր կատարող որոշ սրբերի կերպարների ժողովրդական ընկալումները, իսկ մյուսում Ուտիս տատի և Պաս պապի ծեսերի վերլուծությամբ բնութագրվում են տղամարդուն ու կնոջը վերագրվող հասարակական վարքի նորմերը հայոց ժողովրդական մշակույթում:

Նույն երկրորդ մասում ներկայացվում է Վարդավառի տոնակատարության սցենար, որն իրականում առաջարկ է, թե ինչպե՞ս կարելի է այսօր կազմակերպել այդ տոնի, ինչպես նաև՝ առհասարակ հայ ժողովրդական տոների ժամանակակից տոնախմբությունը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑՈՒՄ ԸՆԴՈՒՐԿՎԱԾ ՍՐԲԵՐԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Տոների նկարագրություններին ծանոթանալիս տեսանք, որ ժողովրդական տոնակատարություններում զգալի տեղ է հատկացված սրբերին: Նրանք առկա են ինչպես առանձին տոնակատարությունների ծեսերում, ուխտագնացություններում, այնպես էլ՝ որոշ տոնահանդեսներ ամբողջովին նվիրված են այս կամ այն սրբին:

Հայ Եկեղեցու կողմից պաշտոնապես ընդունված սրբերից 223-ը օտարազգի են, 66-ը՝ հայեր[1]: Այդ ցուցակում վերջինը Գրիգոր Տաթևացին է, որը սրբացվել է 15-րդ դարում: Դրանից հետո մեր եկեղեցու սրբացուցակում փոփոխություններ չեն եղել: Ընդհանուր առմամբ՝ սրբերը տարբեր ձևերով հիշատակվում են Հայ Եկեղեցու արարողություններում, իսկ շատերին նվիրված տոնական օրեր կան: Հայոց Եկեղեցու տոների զգալի մասը շարժական է, այսինքն՝ տոները հաստատուն օրեր չունեն, և այս հանգամանքը տարածվում է նաև սրբերին նվիրված տոների ու հիշատակման օրերի վրա: Տոների ու հիշատակման օրերի շարժականությունը որոշ բարդություններ է առաջացնում տոնացույցի ընկալման հարցում, և եկեղեցու առաջադեմ մտավորականները պարբերաբար քննարկման նյութ են դարձրել Հայ Եկեղեցու տոնացույցի բարեկարգման խնդիրը: Դրանցից վերջինը կարելի է համարել, օրինակ՝ Մեսրոպ արք. Աշճյանի կողմից արված առաջարկների շարքը, որոնք ամփոփված են «Հայոց Եկեղեցու սուրբերն ու սրբոց տօները» հոդվածում[2]: Այնուամենայնիվ՝ հարցը տեղից չի շարժվում, ինչի հետևանքով շատ դժվար է հստակ դասակարգել Հայ Եկեղեցու կողմից ընդունված սրբերի հիշատակումների օրերը, առավել ևս՝ դրանց հետ կապված ժողովրդական ըմբռնումները: Մեր պատմության ընթացքում որոշ սրբերի հիշատակի օրեր անհետացել են, երբեմն դրանք վերականգնվել են, երբեմն՝ անվերադարձ մոռացվել: Ինձ համար, օրինակ, այդպես էլ հասկանալի չդարձավ, թե ե՞րբ և ինչպե՞ս է սահմանվել Սուրբ Հակոբի տոնը, և վերջապես՝ Սուրբ Հակոբի ժողովրդական կերպարն ո՞ւմ պետք է վերագրել՝ Հիսուս Քրիստոսի եղբայր Հակոբի՞ն, որի մասունքների վրա կառուցված փառահեղ եկեղեցի ունենք Երուսաղեմում, թե՞ Լուսավորչի ազգական Հակոբ Մծբնեցուն: Այս հարցերի պատասխանները չկային նաև հայոց սրբերի և եկեղեցական

1. *Աշճյան Մեսրոպ արք., Հայոց եկեղեցու սուրբերն ու սրբոց տօները, Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001,էջ 12-13:*
2. *Աշճյան Մեսրոպ արք., Հայոց եկեղեցու սուրբերն ու սրբոց տօները, էջ 7-18:*

տոնացույցի ամփոփիչ աշխատանքներում[3]: Վահան վարդապետ Տեր Մինասյանը գրում է, որ դեկտեմբերին տոնվող Սուրբ Հակոբի տոնը Մծբին ասորի քաղաքի հայ եպիսկոպոսին նվիրված տոնն է[4]: Քանի որ ժողովրդական և աղբյուրագիտական ավանդազրույցները վերաբերում էին վերջինիս, տրամաբանական համարեցի Սուրբ Հակոբի տոնն էլ կապել նրա անվան հետ, չնայած կատարման ժամանակով այն կարծեք թե մոտենում է նաև Հակոբ Տյառնեղբոր հիշատակման օրերին՝ դեկտեմբերի վերջերին:

Պետք է շեշտել, որ հայոց կենցաղում իրենց զգալի տեղն ունեցող ոչ բոլոր սրբավայրերն ու սրբերն էին ընդունված Հայ Առաքելական Եկեղեցու կողմից, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու կողմից ընդունված ոչ բոլոր սրբերն ունեին իրենց անվան և սրբավայրերի հետ կապված ժողովրդական տոնակատարություններ կամ ծեսեր: Նախ, Հայ Առաքելական Եկեղեցու կողմից ընդունված հարյուրավոր սրբերի բացարձակ մեծամասնությունը հայոց ժողովրդական մշակույթի հետ կապ չի ունեցել, և նրանց մասին ու նրանց հանդեպ ժողովրդական մշակույթ կամ ժողովրդական վերաբերմունք չի ձևավորվել: Նրանցից շատերի անուններն անգամ անծանոթ են մեր ժողովրդի աշխարհիկ մարդկանց, իսկ երբեմն՝ նույնիսկ հոգևորականներին, ընդ որում՝ անծանոթ են ոչ միայն օտարազգի սրբերի անունները, այլև՝ հայազգի: Նույնիսկ քրիստոնեությունը Հայաստան բերած Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների կերպարները գրական-եկեղեցական խնկարկումից քիչ են հեռացել և, եթե նրանց անուններով վանք, եկեղեցի չլիներ՝ հազիվ թե մարդիկ մտաբերեին նրանց անունները: Ժողովրդական ծեսերում, աղոթքներում, սրբերից մարդկանց անձկագին կամ տագնապալի սպասումներում ավելի շատ տեղ են գտել կամ հայազգի սրբերը (Սուրբ Սարգիս, Թուխ մանուկ, Սուրբ Հակոբ), կամ՝ այն քրիստոնեական սրբերը, որոնք այս կամ այն կերպ «հայկականացել են», այսինքն՝ ժողովուրդը նրանց այս կամ այն պատճառով համարում է հայազգի (Սուրբ Գևորգ, Սուրբ Կարապետ), կամ նրանք, որոնց վրա ամբողջովին տարածվեց նախաքրիստոնեական հայկական Աստծու գործառույթները (օրինակ՝ Մարիամ Աստվածածինը, որի պաշտամունքը հայոց կենցաղում մեծ չափով «տեղավորվեց» Անահիտ աստվածուհուն հասցեագրված սպասելիքներում ու ծեսերում): Ըստ էության՝ «մաքուր քրիստոնեական», «չհայկականացված» սրբերից հիմնականում Մարիամ Աստվածածինն է ժողովրդայնացել: Ավելին, Մարիամ Աստվածածինը, չլինելով Աստվածուհի, ձեռք է բերել Աստվածուհուն բնորոշ գործառույթներ, քանի որ նրա կերպարում հայոց մեջ դրսևորվել է հայկական Անահիտ Աստվածուհին՝ իր ողջ զորություններով: Մարիամ Աստվածածնի պաշտամունքի միջոցով հայոց մեջ շարունակվել է պաշտվել Անահիտը, առավել ևս, որ Աստվածածնին նվիրված տոնին հայերն իրականում շարունակում էին Անահիտին նվիրված ծեսերը: Նրան նվիրված երգերն ու նրա զորությանն ապավինող ժողովրդական աղոթքներն ավելի շատ են, քան քրիստոնեական բուն աստվածությանը՝ Քրիստոսին:

Չնայած վերոհիշյալ բոլոր սրբերը եկեղեցու ներկայացմամբ օտարազգի ծագում ունեին, սակայն իրականում՝ նրանք, կամ նրանց վերագրվող զորությունները, նրանց գործառույթները կային մինչև քրիստոնեությունը, ունեին մեծ ժողովրդականություն և հենց այդ հանգամանքն էր, որ ապահովեց նրանց կենսունակությունը: Վերջ ի վերջո՝ սրբերը հայոց մեջ պաշտվում էին ոչ թե իրենց, կամ պաշտոնապես իրենց վերագրվող գործունեության համար (օրինակ՝ քրիստոնեություն տարածել, հանուն քրիստոնեության նահատակության պսակն ընդունել՝

3. *Վարդանյան Ռ. Հայոց տոնացույցը (4-18 դարեր), 1999: Ինչ վերաբերում է Շնորհք արք. Գալուստեանի աշխատանքին, ապա նրա «Աստուածաշնչական սուրբեր» բաժնում հիշվում են երկու Հակոբ: Նրանցից մեկը՝ «Յակոբ որդին էր Իսահակի և անմիջական նախահայրը Իսրայէլի տասներկու ցեղերուն», և այս Հակոբի հիշատակը մենք նշում ենք նախահայրերի հետ (էջ 60-63): Հիշենք, որ նախահայրերն են Ադամը, Աբէլը, Սէթը, Ենովսը, Ենովքը, Նոյը, Մելիքսեդեկը: Մյուս Հակոբը «Յակոբոս տեառնեղբայրն է», որի հիշատակը կատարում ենք իբրև Ավագ տոներից առաջինը՝ Դավիթ մարգարեի հետ, դեկտեմբերի վերջերին, Գալուստեան Շնորհք արք., Աստվածաշնչական սուրբեր, Երևան, 1997, էջ 88, 202-204:*

4. *Տեր Մինասեան Վ. Անգիր դպրութիւն և հին սովորոյթներ, հ.Բ, Կ.Պոլիս, 1904, էջ 168:*

մարտիրոսանալ և այլն, որի համար էլ նրանք սրբացվում էին եկեղեցու կողմից), այլ՝ նրանց վերագրվող այն զորավոր հրաշագործությունների համար, որոնցով նրանք ուղղակիորեն «օգնում» կամ «վնասում» էին մարդկանց և որոնք, վերջ ի վերջո, իրենց ակունքներով ժողովրդական պատկերացումներից էին: Նույն տրամաբանությամբ, օրինակ, եկեղեցու կողմից սահմանված պասերի զգալի մասի անունները, որոնք ոչինչ չէին ասում այդ պասերը պահող մարդկանց, ստացել են իրենց ժողովրդական զուգահեռները և հենց այդ երկրորդ, զուգահեռ անուններով էլ հիշվել: Այսպես, «Եղիական» պասին անվանել են «խոտհնձի», «Լուսավորչի» պասին՝ «գարեխաշի», «Հիսնակի» պասին՝ «հորթըքթողի», Ս.Հակոբի պասին՝ «նախրըքթողի», «Առաջավորաց» պասին՝ «Ս.Սարգսի» կամ «խաշլի», «Ծննդյան» պասին՝ «ութօրեք»[5]: «Խոտհնձի» անվանել են, քանի որ այդ ժամանակ էին հնձում խոտը, «գարեխաշի»՝ քանի որ գարին արդեն հասնում էր, «հորթըքթողի» ու «նախրաթողի»՝ քանի որ հորթն ու նախիրը ցրտերն ընկնելու պատճառով դադարում էին արոտ տանել, «ութօրեք» ասում էին այն պատճառով, որ ի տարբերություն հինգ օր տևող մյուս շաբաթասերի, Ծննդյան պասը տևում էր ութ օր: Ուշագրավ է, որ այս պասից անմիջապես հետո լրիվ ութ օր ուտիս էր, այսինքն՝ օրապասերը չկային: Ս.Խաչի պասը նույնպես ուներ իր անվան ժողովրդական տարբերակը՝ «բըղըքաղի» կամ «այգեքաղի» պաս: Լուսավորչի պասին անվանում էին նաև «պառավի պաս» և դրա վերաբերյալ ավանդազրույցն ասում է, որ մի պառավ ամռան շոգին պաս է պահել, որ Աստված հով եղանակ անի և իր որդին կարողանա հեշտությամբ հնձել իրենց հասած արտը: Դրա համար էլ ամառվա այդ պասը կոչվում էր պառավի պաս[6]: Այս անունները բխում էին ժողովրդի տնտեսական կյանքի փուլերի տրամաբանությունից, հասկանալի էին նրան և գործածության իմաստով հեշտ էին:

Եկեղեցական տոնացույցում հիշյալ բոլոր սրբերը, Թուխ մանուկից զատ, ունեն իրենց տոնական օրերը, իսկ նրանցից ոմանց նվիրված են մեկից ավել տոնական օրեր: Այսպես՝ մեկ տարվա ընթացքում կան Աստվածածնի ութ հիշատակում կամ եկեղեցական տոներ, որոնք վերաբերում են Մ.Աստվածածնի կյանքի տարբեր դրվագների (նրա ծննդյան օրը՝ սեպտեմբերին, իր հղիության մասին ավետումն ստանալու օրը՝ ապրիլին, Վերափոխման տոնը՝ օգոստոսին, Սուրբ կույսին տաճարին ընծայաբերման օրը՝ նոյեմբերին և այլն)[7]: Սուրբ Կարապետն ունեցել է բազմաթիվ տոնական օրեր, սակայն այսօր եկեղեցու կողմից ընդունված են չորսը[8]: Հայոց Եկեղեցին, ըստ Յայսմավուրքների, ունեցել է Գրիգոր Լուսավորչին նվիրված բազմաթիվ տոներ: Սակայն դրանցից Տոնացույցում մնացել են մի քանիսը, այդ թվում՝ «Մուտն ի Վիրապ», «Գիւտ նշխարաց ի Կոստանդնուպոլիս», «Ելն ի Վիրապ» և այլն[9]:

Հայոց Եկեղեցու սրբերից Աստվածածնի և Սարգսի տոներից զատ ուրիշ ոչ մեկինը համահայկական, համաժողովրդական բնույթ չեն կրել և համաժողովրդական տոնախմբության չեն վերածվել: Ճիշտ է, եկեղեցին ամենուր նշել է նրանց նվիրված տոները, սակայն այստեղ խոսքը գնում է ժողովրդական տոնախմբության մասին: Սուրբ Գևորգի, Սուրբ Հակոբի տոների ժողովրդական տոնախմբություններն ունեցել են տեղային բնույթ և դրանց է, որ այս գրքում մենք անդրադարձանք: Տեղական ժողովրդական տոնախմբություն ունեցող սրբերից կարող ենք հիշել Սուրբ Պանտալեյմոնին (Պանդի օրը): Թուխ մանուկն առհասարակ ոչ մի տոնական օր չունի: Սակայն Թուխ մանուկն այն հասարակ սուրբն էր, որին դիմում էին ամենաառաջնային, ամենահիրատապ դեպքերում և, ըստ էության, ամենահասարակ մարդիկ: Թուխ մանուկ սրբավայրերը, ինչպես կտեսնենք ստորև, մշտական ուխտատեղի էին բոլոր տոնական օրերին:

5. *Մխիթարեանց Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա., Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 260:*
6. *Ավանդապատում, Երևան, 1969, էջ 414:*
7. *Վարդանյան Ռ.Հայոց տոնացույցը, էջ 522:*
8. *Վարդանյան Ռ. Հայոց տոնացույցը, էջ 588:*
9. *Վարդանյան Ռ. Հայոց տոնացույցը, էջ 612:*

Այլ կերպ ասած՝ Հայոց Եկեղեցու կողմից խորապես մեծարված սրբերը ժողովրդական տոնախմբություններում հիմնականում տեղ չգտան, որի պատճառներից մեկը, թերևս, այդ սրբերի կերպարների ժողովրդական ընկալումներն էին:

Այժմ անդրադառնանք այս սրբերի կերպարներին և դրանց ժողովրդական ընկալումներին:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Հետազոտողները ցույց են տվել, որ Սարգիսը հայոց կրոնական մշակույթում ունի հնագույն ակունքներ: Իր նախնական, նախաքրիստոնեական էությամբ նա զուտ հայկական ծագում ուներ և հայոց մեջ պաշտվել է որպես հողմային Աստված, ունենալով նաև երկրագործական, հացահատիկային գործառույթներ: Սուրբ Սարգսի կերպարում արտացոլվել են մեռնող-հարություն առնող աստվածների գործառույթները, երկնային ուժերի՝ ամպրոպի, կայծակի, հողմերի հետ կապերը, երկրագործության հովանավորի առաքելությունը և այլն: Նրա կերպարում տեսնում են կապեր Արա Գեղեցիկի, Վահագնի հետ: Ունենալով հանդերձ այս ազդեցությունները, իրականում Սարգիսն ինքնուրույն Աստված էր, ինքնուրույն կերպար՝ իր ինքնուրույն գործառույթներով[10]:

Պետք է ենթադրել, որ հայոց մյուս նախաքրիստոնեական աստվածությունների շարքում Սարգիսն ուներ առանձնահատուկ դիրք, քանի որ քրիստոնեության ակտիվ տարածման և մինչքրիստոնեական պաշտամունքների դեմ պայքարի ընթացքում չհաջողվեց ոչնչացնել ոչ Սարգսի պաշտամունքը, ոչ նրան ուղղված բազմաթիվ ծեսերն ու արարողությունները: Ըստ երևույթին՝ չհաջողվեց նաև նրա կերպարը փոխարինել որևէ քրիստոնեական կերպարով: Ինչպես կտեսնենք ստորև, Սարգիսն ազնվականների, նախարարների համար երկրորդական դեր ուներ. նա չուներ Արամազդի, Վահագնի, Անահիտի կամ Աստղիկի հավակնոտությունը, նա անհամեմատ հասանելի էր հասարակ մարդկանց, ժամանակակից տերմինով ասած՝ անհամեմատ դեմոկրատ էր, առարկայորեն հասկանալի, քմահաճ չէր և միշտ պատրաստակամ էր իրեն դիմողներին օգնության հասնելու: Նա մեծ ժողովրդականություն էր վայելում հենց հասարակ մարդկանց շրջանում և առաջին հայացքից, թերևս, մեծ վտանգ չէր ներշնչում նորամուտ քրիստոնեության առաջնորդներին: Պայքարելով առաջնային, «կարևոր» Աստվածների և նրանց սրբավայրերի, կուռքերի դեմ, որոնք խնկարկվում էին ազնվականների կողմից, առաջին քրիստոնյա հայրերը համեմատաբար քիչ ջանքեր են գործադրել հասարակ մարդկանց, ըստ էության՝ ժողովրդի լայն զանգվածների կողմից սիրված և նրանց հասկանալի կերպարների դեմ: Եվ, մինչ Բագինների կուռքերը կործանվում էին, նրանց մեհյանների տեղերում եկեղեցիներ ու վանքեր էին կառուցվում, ժողովուրդը շարունակում էր իր հնայածիսական արարողությունները, շարունակում էր հուսալ իրեն հասկանալի Աստվածների ու Սրբերի հովանավորությունը, և դիմում էր նրանց օգնությանը: Եվ երբ եկեղեցու հայրերն ուշքի եկան, տեսան, որ արդեն արմատավորվող քրիստոնեության կողքին ծաղկում է ժողովրդական Աստվածը: Ինչպես համոզվեցինք Ս.Սարգսի տոնի նկարագրությունից, նրա պաշտամունքը տներում էր կատարվում, և հնարավոր չէր մեկ առ մեկ բոլոր տներից, բոլոր ընտանիքներից, անհատ մարդկանց սրտերից, նրանց բառամթերքից, նրանց երգերից ջնջել վերացնել այս ամենահաս և սիրված կերպարը: Սրբազան կյանքում, կրոնական հարաբերություններում Սարգիսը չէր էլ պայքարում քրիստոնեության դեմ: Նրա գոյությունը և գործառույթները ոչ

10. *Մատիկյան Ա. Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930; Ղափանցյան. Արա Գեղեցկի պաշտամունքը, Երևան, 1944; Աբեղյան Մ. Երկեր, հ.է; Յարությունյան Ս. Սուրբ Սարգիսը ժողովրդական բանավոր ավանդությամբ «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 24-43; Պետրոսյան Ա. Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001,157-170:*

հերքում, ոչ հաստատում էին քրիստոնեական գաղափարախոսությունը: Նա չէր պահանջում եկեղեցի գնալու փոխարեն իր ուխտավայրերն այցելել, նա նույնիսկ զոհաբերություններ չէր պահանջում: Նա ընդամենը պատժում էր անազնիվներին, ստախոսներին, անիրավներին, օգնում էր ընտանիքներին և նեղության մեջ ընկած մարդկանց, սիրահարվածներին և սպասում էր, որ մարդիկ տարին մեկ անգամ հինգ օր իր հիշատակին որոշ զոհողությունների գնան՝ պաս պահեն, որոշ գործեր չանեն: Անհրաժեշտության դեպքում նա դրսևորում էր իր ամպրոպային բնույթը՝ օգնելով մարդկանց տնտեսական աշխատանքներին: Բնական է, որ նա զգալի դեր ուներ հայ ժողովրդի պաշտամունքներում:

Չկարողանալով վերացնել նրա պաշտամունքի դրսևորումները կենցաղում, քրիստոնեության շրջանում ստիպված էին այս կերպարը պաշտոնականացնել: Ըստ էության՝ Սարգիսը միակ նախաքրիստոնեական կերպարն է, որ մտավ պաշտոնական եկեղեցու սրբացուցակ և նրա անունով տոն սահմանվեց: Գրիգոր Լուսավորիչը, չկարողանալով վերացնել ժողովրդականություն վայելող այս աստվածության պաշտամունքը, հարկադրված էր օրինականացնել այն: Նա սահմանում է Առաջավորաց պասը, որը աշխարհի քրիստոնյաների մեջ միայն հայոց տոնացույցում կա, և դրան հաջորդող Ս.Սարգսի տոնը: Վաղ շրջանի քրիստոնյա երկրները մեղադրում էին հայերին այն բանի համար, որ նրանք քրիստոնյա աշխարհին անծանոթ կերպար և սուրբ ունեն, որին հատուկ տոն են նվիրել: Այդ շրջանում հայոց եկեղեցին խնդիր ուներ բացատրություն տալու, թե ի՞նչ տոն է այս տոնը, ի՞նչ սրբի է նվիրված և ինչո՞ւ իրենք անհրաժեշտ են համարում պահպանել այն: Քրիստոնեության վաղ շրջանի «գլոբալիզացիոն» քաղաքականության ընթացքում դա հեշտ խնդիր չէր, և ահա՝ ձևավորվում է Սուրբ Սարգսի քրիստոնեական առասպելը: Այդ առասպելը Սարգսի մասին ձևավորում է մի կերպար, որի համաձայն՝ Հայոց Եկեղեցին սրբացրել է կեսարացի ոմն զորավար Սարգսի, քանի որ նա պայքարել և նահատակվել է քրիստոնեության համար: Պատրաստվում են բացատրություններ, գրություններ, փնտրվում են ապացույցներ: Ի վերջո՝ քրիստոնյա աշխարհին ներկայացվում է հետևյալ տարբերակը.

Հռոմեական Հուլիանոս ուրացող կայսեր հալածանքներին ենթարկվող կեսարացի քրիստոնյա զորավար Սարգիսը չորրորդ դարում իր որդի Մարտիրոսի հետ անցնում է Հայաստան, փորձելով ապաստան գտնել հայոց Տիրան թագավորի մոտ: Վերջինս, տագնապելով Հուլիանոսի վրեժխնդրությունից, խորհուրդ է տալիս նրան գնալ Պարսկաստան: Այստեղ նրան սիրով ընդունում է Շապուհ երկրորդը և, հիանալով քաջ ու հմուտ զինվորականով, նրան նշանակում է զորահրամանատար: Սարգիսը բազում ծառայություններ է մատուցում պարսից Շապուհ արքային, այդ թվում՝ կռվում է իր հայրենակից հռոմեացիների և Հուլիանոսի դեմ և հաղթում նրան: Միաժամանակ նվիրյալ քրիստոնյա լինելով, դավանափոխ է անում պարսիկ զինվորներին, ինչի համար Շապուհը խիստ զայրանում է, իր մոտ է կանչում Սարգիս զորավարին և առաջարկում նրան ընդունել իր կրոնը: Վերջինս, բնականաբար, մերժում է: Ավելին, զայրույթի մեջ նա ջարդում է պարսկական կուռքերը, ինչով սաստիկ վիրավորում է իր շուրջը հավաքված ամբոխին, և վերջիններս սպանում են Սարգսի մանկամարդ որդի Մարտիրոսին, իսկ հաջորդ օրը Շապուհի հրամանով նահատակում են նաև իրեն՝ Սարգսին, և նրա հորդորով հավատափոխ դարձած պարսիկ զինվորներին: Այս դեպքը տեղի է ունենում 361թ. հունվարի 31-ին: Որոշ անորոշություն կա, թե որտե՞ղ տարվեց նահատակված զորավարի, նրա որդու և զինվորների մարմինները: Մի տարբերակի համաձայն դրանք տարվել են «Հռոմաց աշխարհ», մեկ այլ տարբերակի համաձայն՝ թաղվել են Պարսկաստանում, Մազանդարանի Դաղման կոչվող քաղաքի մոտ: Այնուհետև սկսվում է զորավարի երկրորդ, կարելի է ասել՝ «հայկական կյանքը»: Ըստ քրիստոնեական առասպելի՝ Մեսրոպ Մաշտոցը նահատակ

զորավարի մարմինը, այլ կերպ ասած՝ մասունքները, տեղափոխում է Հայաստան և հողին հանձնում Կարբի ավանում, Ուշիում, որտեղ և կառուցում է Ուշիի Սուրբ Սարգիս վանքը: Իսկ նահատակի ատամը զետեղում է մի խաչափայտի մեջ և տեղափոխում Գագա դաշտ, որտեղ նույնպես կառուցում է Սուրբ Սարգիս անունով վանք (ներկայիս Նոյեմբերյանի Կոթի գյուղից վեց-յոթ կիլոմետր հեռավորության վրա), այսպիսով՝ սրբերի շարքը դասելով նրան: Այս մասին բանաստեղծական վկայություն է պահպանվել.

Կանգնեցեր նշան ի մէջ մացառաց եւ ի Խուժիստան,
Բարձր ի Դիտակ ի Գագա գագաթան,
Որով պահպանի քառանկիւն սահման:

Ժողովրդական ավանդազրույցն այս մասին պատմում է, որ «էդպես Սուրբ Սարգիսը Կոթի գեղի սարերն ու հանդերը օխնել ա, դրա համար էլ նրա սուրբ սղնատամն էն օխնած տեղն ա, որ կենըմ ա: Թե հանեն ուրիշ տեղ տանեն, էլի դուս կգա իրա տեղը կփախչի: Աշխարքի ամեն ծերից ամեն տարի ուխտավոր ա գալի Կոթի գեղի հանդը, Գվարգնից վերև, մուրազն առնըմ ու ետ գնըմ»[11]:

Մեսրոպ արք. Աշճեանը մի ամբողջ ուսումնասիրություն է նվիրել այս դեպքերի լուսաբանմանը[12]: Նա մասնավորապես հիշում է Ներսես Շնորհալու կողմից շարադրված Սուրբ Սարգսի կանոնը, որը վերջանում է հետևյալ տաղով.

Խաչաչարչար սուրբ դիտաւպետ,
Նշանագործ անուամբ ի խաչ եւ յեկեղեցի,
Առաւել պայծառ ի գլուխն Գագայ,
Ի գագաթան տեղւոյն օրհնեալ սրբոյն Մեսրոպայ,
Երագահաս սուրբդ Սարգիս բագնեաց կործանիչ
Բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

«Երագահաս սուրբդ Սարգիս բագնեաց կործանիչ» տողերը պետք է բոլորին համոզեին, որ Սուրբ Սարգիսը հանուն քրիստոնեության տարածման կործանել է նախաքրիստոնեական Աստվածներին: Եվ դրանով ինքնին նվաճել է քրիստոնեական Սուրբ լինելու իրավունքը:

Այսպիսով՝ ժամանակի կրոնա-մշակութային քաղաքականության մեջ տեղավորվելու նպատակով, հայկական աստվածությանը ոչ միայն որպես նահատակ էին ներկայացնում, այլև՝ ոչ հայազգի: Այդպես ծնվում է Սուրբ Սարգսի կերպարի եկեղեցու պաշտոնական բացատրությունը: Սուրբ Սարգսի այս կերպարը Սահակ Մովսիսյանն անվանում է «եկեղեցական Սուրբ Սարգիս»[13]:

Քրիստոնյա աշխարհը երկար ժամանակ այս բացատրություններով չէր բավարարվում, և հայոց եկեղեցին (և ոչ միայն եկեղեցին, այլ նաև՝ աշխարհիկ իշխանությունները) դեռևս շատ երկար պետք է բացատրություններ տար քրիստոնյա համայնքի առաջնորդներին, թե ինչո՞ւ իրենք աշխարհի մնացած քրիստոնյաներից զատվում են մի առանձնահատուկ տոնով, և ինչո՞ւ իրենց սրբերի շարքում տեղ է գտել մնացյալ քրիստոնյաներին անհայտ մի Սուրբ: Շատ երկար, վեց-յոթ հարյուր տարի շարունակ թե՛ եկեղեցու հոգևորականները, թե՛ աշխարհիկ իշխանությունները պաշտպանում էին Սարգսի լինելության իրավունքը հայկական միջավայրում, հաճախ այդ պաշտպանության նպատակով հղելով Սարգսի ոչ հայկական՝ հռոմեական ծագումը, միշտ նորանոր մանրամասնություններով «ապացուցելով» իրենց առասպելը: Պաշտոնական մշակութային համահարթեցման քաղաքականության պարագայում

11. *Ճուղուրյան Հ. Ադա Սուրբ Սարգիս, 1899, էջ 41-42; Ավանդապատում, էջ 438:*
12. *Աշճյան Մեսրոպ արք., Սուրբ Սարգիս, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 6-24; Աշճյան Մեսրոպ արք., Արագահաս սուրբ Սարգիս, Երևան, 2002:*
13. *Բենսէ, Յարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972, էջ 41:*

դա հեշտ գործ չէր, և հայոց եկեղեցին ստիպված էր «արդարանալ» աշխարհի քրիստոնյա համայնքի, մասնավորապես՝ Հռոմի առաջ, բացատրություն տալ, թե ինչո՞ւ իրականում հայոց մեջ շարունակվում է նախաքրիստոնեական ազգային Աստծու խնկարկումը: Եվ հայոց քրիստոնյա հայրերը շարունակում էին արդարանալ, միշտ պնդելով, որ սա հայ չէ, որ սա կեսարացի զորավար է, որին հայերը պաշտում են նրա քրիստոնեահաճո գործունեության և հատկապես՝ նահատակության փաստի պատճառով: Այս ձգձգված վեճը այնպիսի խոր հետք է թողել մեր եկեղեցու վրա, որ նույնիսկ մեր օրերում Ս.Սարգսի մասին խոսելիս եկեղեցականներն սկսում են «Ս.Սարգիս ազգով հայ չէ» բանաձևից: Այսպես, Շնորհք արք. Գալուստեանը իր եռահատոր աշխատանքում Ս.Սարգսին զետեղելով «Հայազգի սուրբեր» բաժնում, նրա մասին գրում է. «Ս.Սարգիս ազգով հայ չէ, ոչ ալ նահատակված է Հայաստանի մէջ: Միւս եկեղեցիները մեծ կարեւորութիւն չեն տուած անոր յիշատակին եւ եթէ մինչեւ իսկ հնումն յիշատակած են զայն, այսօր գրեթէ մոռացութեան տուած են: Իսկ միւս կողմէն՝ նկատի ունենալով, որ մեր մէջ, ընդհակառակը, ամենէն մեծ ժողովրդականութիւն շահած սուրբերէն մէկն է, ուստի մենք կը դասենք զայն Հայազգի սուրբերու շարքին»[14]:

Սարգսի հայազգի լինելու ժխտման շարունակական անհրաժեշտությունը և դրա շուրջ ապացույցների փնտրտուքն ինքնին պերճախոս հաստատումն է հակառակի. Սարգիսն իսկապես հայազգի էր:

Այսպիսով՝ նորադարձ քրիստոնյա հայերն իրենց նախկին աստվածությանը քրիստոնեական նոր կերպարի մեջ ամփոփելով, շարունակեցին խնկարկել, «փրկելով» ազգային Աստծուն: Փրկելով Ս.Սարգսի տոնը: Սուրբ Սարգիսն ինքը, նախաքրիստոնեական շրջանում Աստված լինելով, զգալի փոփոխությունների ենթարկվեց և «քրիստոնեացավ»: Նույն «Երագահաս սուրբդ Սարգիս բագնեաց կործանիչ» տողը ըստ էության նշանակում էր նաև, որ Սարգիսն ինքն իրեն է կործանել: Եվ իսկապես՝ նրա աստվածային կարգավիճակը փոխվել էր. Սարգիսն աստվածությունից դարձել էր Սուրբ: Նրա «վերակենդանացման» միակ հնարավորությունը կարգավիճակի նվազեցման մեջ էր:

Հայոց Առաջավորաց պասը և Սուրբ Սարգսին չընդունող հունական եկեղեցին, և ապա, նրանից ազդված մի շարք այլ եկեղեցիներ Սարգսին հայ են համարում և հունական բացատրությունը հայ Սարգսին ներկայացնում է որպես բացասական կերպար: Ըստ հունական առասպելի՝ «Սարգիս անունով մեկը, հայոց մոլորութեալ վարդապետ, մի շուն ուներ Արցիվուր անունով: Սակայն այս բառը նշանակում է «առջևից գնացող» (առաջավոր): Սարգիսը սատանայի ազդեցությամբ այս շանը գործ էր ածում իբրև իր գալստեան ավետաբեր և յայտարար ամէն անգամ, երբ մի գիւղ, մի քաղաք, կամ ուրիշ տեղ երթար, ուր իր մոլորութեան ժանտախտից բռնուած աշակերտներ էին բնակում: Երբ սրանք տեսնում էին շանը, հաջորդ օրը թափորով մի քանի մղոն ընդառաջ էին գնում իրենց վարդապետին: Մի անգամ, երբ շանը սովորական պաշտոնով մի տեղ ուղարկեց, գայլերը ճանապարհին պատառեցին նրան: Սարգիսը երկրորդ օրը գնալով նոյն տեղը և տեսնելով, որ ոչ ոք իրեն ընդառաջ չի գալիս, ինչպես սովորութիւն էր, սաստիկ բարկացավ: Երբ քաղաք մտնելով իմացաւ, թէ իր առաջընթաց շունը այնտեղ չէ հասած, մարդիկ ուղարկեց փնտռելու համար, և գտնուած ոսկորներից գուշակելով թէ գայլերն են կերել, հրամայեց ամենայն Հայոց՝ որ ամէն տարի, սահմանեալ օրեր, նրա մահուան համար ծոմ պահեն և մեծ սուգ բռնեն, և այս պասը կոչեց ***արցիվուրց*** պաս»[15]: «Առասպելի մի ուրիշ ձևն ունին ռումինացիք,- շարունակում է Հ.Աճառյանը,- որոնց մեջ բառը դարձել է ***Արցիվուրցի:*** Ռումին առասպելի մեջ արցիվուրցի է կոչվում մի հայ աւագերեցի շուն: Աւագերեցը

14. *Գալուստեան արք. Շնորհք, Հայազգի սուրբեր, Երևան, 1997, էջ186:*
15. *Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, հ.1, Երևան, 1971, էջ 252:*

անտառով անցնելիս մոլորվել է և այդ շան միջոցով կարողացել է գտնել ճանապարհը: Հայերը այդ շունը սրբերի կարգն են դասել և ի պատիւ նրա՝ Ս.Սարգսի Բարեկենդանին պաս են պահում և Զատկի թաթախման երեկոյին էլ նրան նվիրված մի տօն են կատարում»[16]: Հ.Աճառյանը գտնում է, որ հույն աղբյուրներից ռուսերենին է փոխանցվել арцывурiй կամ арцывурiева недыля, որն այդ լեզվում ստացել է Սբ.Գրիգորի հիշատակին պահվող պաս իմաստը: Ռուսերեն բացատրական բառարանը լրացնում է, որ հույները հայերին ծեռ առնելով ասում են, թե այդ պասը Սերգիի՝ գայլերի կողմից կերված շան հիշատակին է[17]:

Բոլոր դեպքերում՝ Սարգիսը մնաց հայոց մեջ, և նրան վերաբերող աղոթքները, նրան նվիրված ծեսերը, բազմաթիվ ավանդազրույցները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այս սիրված հերոսի կերպարի ժողովրդական ընկալման մասին: Քրիստոնեական եկեղեցիների պաշտոնական պատմություն-բացատրությունների կողքին մինչև մեր օրերն են հասել նաև ժողովրդական ավանդազրույցները, որոնք իրենց մեջ պարունակում են հայ ժողովրդի կողմից մեծապես սիրված այս սրբի կերպարի ժողովրդական ընկալումները: Այդ կերպարում տեղ են գտել ինչպես քաջության, նեղության մեջ գտնվողին օգնության հասնելու, հողմերին սանձահարելու նրա կարողությունները, այնպես էլ՝ ճանապարհորդներին, երիտասարդներին և հատկապես՝ կանանց օգնելու պատրաստակամությունը, որոնք տեսանք տոնի նկարագրության մեջ: Սրանք բոլորը գալիս են ազգային ակունքներից:

Սուրբ Սարգսի տոնակատարությունների նկարագրությունը ցույց տվեց, որ նրան վերագրվում էին մի շարք գործություններ.

- *նա կարող է դևերին հալածել,*
- *հիվանդներին բժշկել, հոիներին պաշտպանել,*
- *պատերազմողներին հաղթանակ բերել,*
- *բանտարկվածներին և գերիներին ազատություն պարգևել,*
- *խռովությունները խաղաղեցնել,*
- *նեղ վիճակում գտնվողներին ուժ տալ, օգնել,*
- *ճանապարհորդներին պաշտպանել,*
- *ալեկոծված ծովերը հանդարտեցնել,*
- *կարկուտը և քամին հնազանդեցնել,*
- *սիրահարվածների փափագը կատարել,*
- *գայլերին և այլ գիշատիչ գազաններին քարացնել կամ երախը «կապել»:*

Սուրբ Սարգսի մասին հայոց մեջ պատմվող ավանդազրույցները հաստատում են թվարկված վերագրումները:

Ավանդազրույց 1. Ղզլբաշների Ուշապ (Վիշապ)[18] անունով թագավորը մի անգամ հրամայում է, որ հայերը թողնեն քրիստոնեությունը և Աստծու փոխարեն սկսեն պաշտել Արևն ու Կրակը: Հայերը չեն ենթարկվում հրամանին, և զայրացած թագավորը պահանջում է տանջել հայերին: Լսելով այդ մասին, Սուրբ Սարգիսը իր քաջերի հետ հարձակվում է ղզլբաշների զորքի վրա: Ուշապ թագավորը հրամայում է բռնել Սարգսին և իր ձիու հետ միասին կտոր-կտոր անել: Իսկ բորբոքված Սարգիսը ամպի նման որոտում է, կայծակի նման շանթեր արձակում, Ուշապ թագավորի բոլոր ամրոցները կործանում՝ ազատելով այնտեղ փակված հայերին[19]:

16. *Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, հ.1,էջ 252:*
17. *Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, հ.1,էջ 252-253:*
18. *Տվյալ պատմությունում «ղզլբաշ» բառն օգտագործված է «պարսիկ» իմաստով, իսկ «Ուշապ» անունը «Շապուհն» է:*
19. *Ղանալանյան Ա. Ավանդապատում, Երևան, 1969, էջ 366:*

* * *

Ավանդապրույց 2. Թշնամիները խիստ նեղել էին հռոմեացիներին, և վերջիններս դիմում են հայերի թագավորին՝ խնդրելով օգնության հասնել իրենց: Սարգիս անունով մի հայ իր զորքերով գնում է թշնամիների դեմ: Դաժան կռվում Սարգիսը իր զինվորների հետ ոչնչացնում է թշնամիներին և կործանումից փրկում հռոմեացիներին: Հռոմեացիների թագավորին վախեցնում է Սարգսի հաղթանակը: Նա մտածում է, որ եթե հայերը այդքան ուժեղ ժողովուրդ են, ապա մի օր դա դժբախտություն կբերի իրենց: Թագավորը հրամայում է, որ Սարգսին ու նրա կենդանի մնացած 39 ռազմիկներին տանեն քառասուն հույն աղջիկ, որպեսզի սրանք հարբեցնեն նրանց ու սպանեն: Երեսունինը աղջիկները կատարում են իրենց թագավորի կամքը և սպանում մեկական հայ զինվորի: Բայց Սարգսի գլխավերևում նստած աղջիկը չի կարողանում կատարել դաժան հրամանը և դառը-դառը լաց է լինում: Նրա արցունքը կաթում է Սարգսի ճակատին ու արթնացնում հերոսին: Սարգիսը, աղջկանից իմանալով եղելությունը, Աստծուց օգնություն ու պաշտպանություն է խնդրում: Բարձրանում է աներևակայելի փոթորիկ, որից օգտվելով, Սարգիսը, իրեն փրկող աղջկա հետ միասին, հեծնում է իր ճերմակ (այլ տարբերակում՝ բոզ) ձին, թռչում քաղաքի պարսպի վրայով ու փախչում Հայաստան[20]: Հույները խորապես ատում են Սարգսին և նրա պասի օրերին անպայման յուղ ու միս են գործածում: Պատմում են, որ եթե հույները նույնիսկ միս չճարեն, տրեխը թրջոց կդնեն, կխաշեն և այդ օրերին որպես միս կուտեն[21]:

* * *

Ավանդապրույց 3. Հռոմեացիների Հուլիանոս կայսրը կռվում էր հայերի դեմ: Նրա դեմ դուրս եկավ սուրբ Սարգիսը: Յոթ օր ու գիշեր առանց ուտելու ու խմելու կռվում էր քաջ Սարգիսը: Կռվից հետո քաղցն այնքան է ուժեղանում, որ նա նստում է մտածելու, թե որտեղից մի կտոր հաց ձեռք բերի: Այդ մտածմունքի ժամանակ հանկարծ քամի է բարձրանում և երկնքից նրա մոտ իջեցնում մի քանի ցորենի հասկ: Սարգիսը հավաքում է այդ հասկերը, տրորում ափերով և ուտում հատիկները: Քաղցը հագեցնելուց հետո, սուրբը դիմում է երկնքին, որ նա կատարի այն մարդու իղձը, ով տարվա մեջ յոթ օր պաս կպահի, իսկ ուրբաթ գիշերը փոխհնձ կուտի[22]:

* * *

Ավանդապրույց 4. Կոթի գեղի սարը Սբ.Սարգսի բերդն ա ըլել: Վաղ ժամանակ, երբոր ղզլբաշի (պարսիկների) Ուշաբ թագավորն ու պարսիկները ջարդելիս են ըլել հայերին, Սուրբ Սարգիսը նրանց ճանգերից ազատված եսիրներին փախցրել, բերել ա բերդումը պահել: Առ ու փախի վախտն էնպես ահ ու երգյուղ ա ըլել, որ մարդ կրացել չի թա գլուխը ծակիցը հանի: Խեղճ խալխը (ժողովուրդը) բերդըմը ծարավից կոտորվելիս են ըլել: Սբ.Սարգիսը կաղնել ա մի տեղ ու ասել. էստեղ փորեցեք, ջուր դուս գա: Վեր են կալել մի քանի գազ փորել են թե չէ, սառը ջուրը ախմիշ ա ըլել (հորդել է): Սբ.Սարգիսը կաղնել խաչակնքել ա, թե՝ «Սրանից դենը ով որ գա էս ջրիցն էրեսովը տա, ինչ հիվանդություն ունենա, թողնելու ա ու գնա: Հմի էն ջուրը նրա հրամանով չվել (մինչև) օրս էլ կա ու հիվանդի դեղ ա»[23]:

* * *

Ավանդապրույց 5. Սպիտակ ձիավոր Սարգիսը ութ օր շարունակ կռվում էր վրացիների դեմ: Ութերորդ օրը քաղցած հերոսը գրպանից հանում է իր հետ վերցրած աղանձը, բայց

20. *Ավանդապատում, էջ 15, 365-366:*
21. *Բենսէ, Հարք (Մշո Բուլանըխ), էջ 42:*
22. *Ավանդապատում, էջ 366:*
23. *Ավանդապատում, էջ 103-104:*

տեսնում է, որ կռվի ընթացքում այն իր գրպանում այնքան է հարվել, որ փոխինձ է դարձել: Սարգիսը ուտում է փոխինձը և շարունակում կռվել: Կռվի ընթացքում նրա հետ ծիու գավակին նստած որդին վայր է ընկնում: Վրացիները անմիջապես հարձակվում են որդու վրա և սպանում: Հուսահատված քաջը իջնում է ծիուց, գրկում որդու մարմինը և դառնում հակառակորդներին. «Որդուս խավարեցրիք, եկեք ինձ էլ խավարեցրեք»: Վրացիները հորն էլ են սպանում, բայց հանկարծ՝ « ճառաղակապած լիսը վրեն եկավ, լիս էր՝ լիս դառավ» (սրբացավ)[24]:

* * *

Ավանդազրույց 6. Ալաշկերտի բերդի հարավ-արևելյան կողմում գտնվում է Սուրբ Սարգսի ուխտատեղին: Ավանդությունն ասում է, թե երբ ժամանակին Ալաշկերտի բերդը պաշարված էր մի բռնավորի կողմից, Սարգիս անունով զորավարը ինքնակամ անձնատուր է լինում թշնամուն, որպեսզի փրկի բերդի ժողովրդին: Բայց երբ թշնամին չարաչար տանջում է Սարգսին, բերդի ժողովուրդն այդ տեսնելով, ուժեղ դիմադրություն է ցույց տալիս և վանում թշնամուն: Ասում են նաև, թե Սարգիսը եղել է Ս.Սուքիասանց ընկերներից մեկը, որն իր ընկերների նահատակության ժամանակ խույս է տվել և թշնամին, վրա հասնելով, սպանել է նրան այս վայրում[25]:

* * *

Ավանդազրույց 7. Մի հարուստ ու ագահ գյուղացի, որի մարագները լիքն են եղել դարմանով, աչք է դրել անճար պառավի այծերի ու ուլերի բաժին դարմանին և գողացել է այն: Հրեշտակը գաղտնի ծակել է նրա քթոցի տակը և հարդը մաս-մաս թափվել է գետնին: Իմանալով այդ մասին, պառավը անիծել է ագահ հարուստին: Դեպքը պատահել է Ս.Սարգսի պասին, օդը պայծառ ու տաք է եղել: Հարուստը, խաբվելով օդից, արածելու է ուղարկել իր ոչխարների հոտը: Վրա է հասել Ս.Սարգիսը և այնպիսի փոթորիկ բարձրացրել, որ կոտորվել է հարուստի ամբողջ հոտը: Սուրբ Սարգսի բարձրացրած այդ փոթորիկը (թիփի) Պառավի ցուրտ է կոչվում, իսկ երկնքում եղած աստղերի մի խումբն էլ՝ Հարդագողի ճանապարհ[26]:

* * *

Ավանդազրույց 8. Շամշադինի շրջանի Բերդ գյուղի անտառի բլրի վրայի Սուրբ Սարգսի անվամբ մատուռի մասին պատմում են, թե Սարգիս անունով մի կտրիճ տղա է եղել. թշնամիների դեմ կռվելիս նա վիրավորվել է, վիրավոր վիճակում եկել է աղբյուրի մոտ, մի ըրբյուն տեղ (ծառ չաճող) նստել: Սրա քույրը լսել է, որ եղբայրը վիրավորվել է, կաղալով (նա կաղ է եղել) եկել գտել է եղբորը: Եղբայրը ջուր է խնդրել քրոջից. մինչ սա բերել է ջուրը, վիրավոր եղբայրը մեռել է: Նրան թաղել են բլրի վրա, գերեզմանին մատուռ կանգնեցրել: Այդ մատուռը ուխտատեղի է դարձել շրջակա բնակչության համար և հայտնի է Սուրբ Սարգիս անունով[27]:

* * *

Ավանդազրույց 9. Ավանդաբար պատմում են, որ մի կին մահվանից առաջ ամուսնուն խնդրում է, որ իր մահից հետո նա ամուսնանա այն կնոջ հետ, ում ձեռքին կգա իր ապարանջանը: Քա՜նի-քա՜նի անգամ փորձում է ամուսինը որևէ կնոջ հագցնել ապարանջանը, ապարդյուն՝ ոչ մեկի ձեռքով չի գալիս: Մի անգամ ապարանջանը հագնում է այդ մարդու աղջիկը, և այն ասես

24. *Լալայան Ե. Երկեր, հ.3, Երևան, 1969, էջ 242:*
25. *Ավանդապատում, էջ 271:*
26. *Ավանդապատում, էջ 8:*
27. *Ավանդապատում, էջ 267:*

իսկը նրա ձեռքով է լինում: Հայրը վճռում է բռնությամբ նրան իր կինը դարձնել: Երկար դիմադրությունից հետո աղջիկը օգնության է կանչում Սուրբ Սարգսին: Սարգիսը հայտնվում է իր անբաժան ձիու հետ և նստեցնում աղջկան ձիու գավակին: Աղջիկը գրպանից հանում է մի բուռ փոխինձ ու նետում: Բարձրանում է սուրբ Սարգիսի փոթորիկը և փոխինձով կուրացնելով հորը՝ աղջկան հնարավորություն է տալիս փրկվելու[28]:

* * *

Ավանդազրույց 10. Արցախում Սուրբ Սարգսի մասին տարածված ավանդազրույցներից մեկը պատմում է հետևյալը. մի անգամ մի աղջիկ իր ծննդկան մոր մոտից գնում է հարևանի տուն՝ կրակ բերելու: Երբ տուն է վերադառնում, տեսնում է, որ դուռը փակ է, իսկ ներսից ձայն է լսվում: Ձայնն ասում է, որ նորածին երեխան երբ մեծանա և ամուսնանալիս լինի, թող ձուկ դառնա ու ջուրն ընկնի: Աղջիկը հասկանում է, որ այդ ձայնը երեխայի ճակատագիրը գրող հրեշտակինն է:

Երեխան մեծանում է, գալիս է ամուսնության ժամանակը: Քույրը խստորեն պահում է Սուրբ Սարգսի պասը և ջերմորեն աղոթում, որ նա օգնի իր եղբորը, թույլ չտա ձուկ դառնալ: Սուրբը լսում է քրոջ աղաչանքը, հարսանիքին գալիս դառնում է նորափեսայի խաչեղբայրը: Հարսին բերելիս, երբ անհրաժեշտ էր մի գետակից անցնել, Սուրբ Սարգիսը նստում է փեսացուի հետ նույն ձին և ամուր գրկում նրան: Բայց հենց գետակի մեջտեղում տղան ձուկ է դառնում ու ջուրն ընկնում: Այսպիսով, ոչ ոք, լինի մարդ, թե սուրբ, չեն կարող ճակատի գիրը խափանել[29]:

* * *

Ավանդազրույց 11. Մի մարդ սուրբ Սարգսի ծոմը անսվաղ բռնում է (ողջ պասի ընթացքում բոլորովին ոչինչ չի ուտում): Պատահում է, որ նրա եղբայրը ծանր հիվանդանում է, և նա ստիպված է լինում գնալ մոտակա գյուղ քահանա կանչելու, որ գա եղբորը հաղորդություն տա: Ճանապարհին նրան շրջապատում են գայլերը, իսկ ինքը ոչ մի զենք չի ունենում պաշտպանվելու: Մարդը հավատով օգնության է կանչում սուրբ Սարգսին: Մեկ էլ տեսնում է, որ մի «ղըռ» ձիավոր եկավ ու իր նիզակով բոլոր գայլերին հալածեց: Գայլերը հեռու են փախչում ու պպզում: Մարդը գնում է իր ճանապարհով: Վերադարձին նա նկատում է, որ գայլերը նույն տեղում նույն ձևով պպզած են, բայց ոչ մի շարժում չեն անում: Վախենալով մոտենում է նրանց ու տեսնում, որ բոլոր գայլերը քար են դարձել: Ահա այսպես սուրբը օգնում է իր պասը սրբությամբ պահողներին,- եզրակացնում են պատմողները[30]:

* * *

Ավանդազրույց 12. Մի անգամ կոշկակարն ու հյուսնը Ադանա քաղաքից գնում էին իրենց գյուղը: Կոշկակարի խուրջինում թրիք էր, հյուսնի խուրջինում՝ ոսկի: Ճանապարհին նրանց հանդիպում է մի հեծյալ՝ սպիտակ ձիու վրա: Նա հարցնում է հյուսնին. «Ի՞նչ կա քո խուրջինում»: Հյուսնը վախեցած պատասխանում է,- «տաշեղներ»: «Թող տաշեղներ լինեն»,- ասում է հեծյալը և նույն հարցով դիմում կոշկակարին: Վերջինս, ամաչելով, որ թրիք է տանում, պատասխանում է,- «ոսկի»: «Ինչպես ասացիր, թող ոսկի էլ լինի»,- ասում է հեծյալը և անհետանում: Տուն հասնելով, մեր հերոսները ստուգում են խուրջինների պարունակությունը: Հիրավի, հյուսնի ոսկին վեր էր ածվել տաշեղների, կոշկակարի թրիքը՝ ոսկու[31]:

28. *Ավանդապատում, էջ 365:*
29. *Լալայան Ե.Երկեր, հ. 2, Երևան, 1969, էջ 195; Ավանդապատում, էջ 367:*
30. *Ազգագրական հանդես, Երկրորդ գիրք, էջ 252:*
31. *Ավանդապատում, էջ 367:*

* * *

Ավանդազրույց 13. Սուրբ Սարգսի մասին ամենուր պատմվող ավանդազրույցներից առավել հաճախ հանդիպողն այն մասին է, թե ինչպես Սարգիսը, սիրահարվելով հույն թագավորի աղջկան (կամ քրոջը), փախցրել է նրան: Հետապնդողներից ազատվելու համար նա խիստ բուք է բարձրացրել և շատերին խեղդել: Ամենուր պատմում են, որ հույներից վրեժխնդիր լինելու համար ամեն տարի իր տոնի օրերին նա բուք է բարձրացնում և մի հույն խեղդում: Որոշ պատմություններում հույներին փոխարինում են վրացիները, բայց պատմության բովանդակությունը նույնն է: Սուրբ Սարգիսն ինքն իր երազանքին հասնելով միշտ օժանդակում է երիտասարդների սիրային ծրագրերի իրագործմանը:

* * *

Ավանդազրույց 14. Մի հույն (կամ վրացի) ճանապարհին հանկարծ բքի է հանդիպում: Նա դիմում է Ս.Սարգսին՝ խնդրելով խնայել իրեն, խոստանալով մի զույգ մոմ: Ս.Սարգիսը դադարեցնում է հողմը և հույնն անվնաս ծիով իր տունն է հասնում: Ձին թողնում է բակում, մտնում սենյակ և կնոջն ասում. «Կնիկ, ես Ս.Սարգսին խաբեցի: Նա ինձ բքից ազատեց, բայց ես իմ խոստացած երկու մոմը երբեք էլ չեմ նվիրելու»: Ապա նա դուրս է գալիս ձին գոմը տանելու, բայց Ս.Սարգիսը բուք է բարձրացնում և նրան խեղդում[32]:

* * *

Ավանդազրույց 15. Բասենում մի փշատերև բույս կա, որը կոչվում է գազ և պաշտվում է տեղի ժողովրդի կողմից: Գազերը բուսնում էին հատկապես ավազոտ բլուրներում և ղըռեր կոչված տեղում: Դրանց բնի և ճյուղերի մեջ մածուցիկ, մեղրանման նյութ կա, այն կոչվում էր գազի յուղ և այդ յուղն օգտագործում էին Ս.Սարգսի պասին: Ավանդությունը պատմում է, որ երբ Ս.Սարգիսը հույնի աղջկան փախցրած բերելիս է եղել, Բասենով անցնելիս աղջիկը մրսել է, քանի որ ձմեռ էր, և լաց է եղել: Ս.Սարգիսը ձիուց իջել է, գազերը վառել, աղջկան տաքացրել, ապա նոր ճանապարհը շարունակել: Այս բույսը սրբացվել է այդ պատճառով: Ամուլ կանայք իրենց մեջքի գոտին կապում էին այդ ծառին, որպեսզի երեխա ունենային[33]:

* * *

Ավանդազրույց 16. Բասենում պատմում են, որ Քոսադաղ սարը եղել է Ալաշկերտի Խաստուր գյուղից մի ջահել, սիրուն տղա, Սուքիաս անունով: Նա հոր հետ գնացել է Բինգյոլ ոչխար գնելու, այնտեղ հանդիպել է Արաքս անունով մի չքնաղ աղջկա և սիրահարվել: Սերը եղել է փոխադարձ: Երկուսն էլ ամաչել են իրենց ծնողներին խոստովանել իրենց մեծ սերը, և Սուքիասը հոր հետ վերադարձել է Խաստուր: Մի քանի տարի երիտասարդներն իրենց հույսը դնում են Ս.Սարգսի վրա, պահում են նրա ծոմը, նրան աղաչանք-պաղատանք անում, քանի որ Ս.Սարգիսը սիրահարվածների մուրազը կատարողն է: Մի օր էլ Սուքիասը իրենց ոչխարներն արածացնելիս հասնում է Քոսադաղի սարերը, բարձրանում մի բարձր գագաթի, և այնտեղից տեսնում Բինգյոլը. ամբողջ օրը սոված, ծարավ, ոչխարներին մոռացած Բինգյոլին է նայում, որտեղ իր սիրած Արաքսն էր, վերջում էլ Ս.Սարգսին խնդրում է իրեն քար դարձնել, որպեսզի միշտ կարողանա նայել իր սիրած Բինգյոլին: Ս.Սարգիսը լսում է նրա խնդրանքը և Սուքիասը դառնում է մի մեծ, բարձր սար, որը հենց Քոսադաղն է: Քոսադաղ անունը թուրքերեն է, այդ սարին Սուկավիտ են ասում: Իսկ Արաքսը Սուքիասի կարոտից այնքան է լացում, որ նրա արցունքներից Արազ գետն է առաջանում, որը Քոսադաղի փեշերին քսվելով գնում է Մասիսի կողմերը[34]:

32. *Աբեղյան Մ. Երկեր, հ.է, Երևան, 1975, էջ 79:*
33. *Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 265:*

* * *

Ուզունլարից փոքր ինչ հեռու սարում, Խեչի Խոռի Ս.Սարգսի մոտ կաղնու ծառեր կան, որոնք ամենայն հիվանդությունների բուժիչ են համարվում: Այստեղ ուխտի են գալիս: Սրանց փոշուց, որ «օխնություն» է կոչվում, ջրի մեջ լուծում և տալիս են հիվանդներին իբրև դեղ[35]:

* * *

Ըստ որոշ պատկերացումների, Ս.Սարգիսը հատկապես թշնաբար էր տրամադրված քրդերի նկատմամբ: Քրդական որոշ ցեղեր նրա երկյուղից տոնի օրերին դադարեցնում էին բոլոր տեսակի աշխատանքները: Նրանք համոզված էին, որ եթե տոնը սրբապղծեն աշխատանքով, ապա այդ տարի բքի տակ կընկնեն: Ս.Սարգսին քրդերը կոչում էին Խըղըր Նաբի և նրա տոնի օրը բուք ու փոթորիկից վախենալով՝ նույնիսկ մի գյուղից մյուսը չէին՝ գնում[36]:

* * *

Սուրբ Սարգիսը մարդկանց օգնում էր նաև այն դեպքերում, երբ այլ սրբերն էին նրանց վնասում: Օրինակ՝ կարկուտ գալու ժամանակ, որը ըստ պատկերացումների՝ եղիա մարգարեն էր անում, մարդիկ գոռում էին. «Եղիա մարգարա, էս շենլիկ ա, քարերին, խարաբա աշխարհին տուր»: Եվ եթե Եղիա մարգարեն չէր լսում, Ս.Սարգսի փոխիներից փչում էին դուրս, ասելով. «Ս. Սարգիս, դու բարեխոս ըլիս Եղիա մարգարեին, որ մեր մարդկերանց աշխատանքը մեզ ղըսմաթ անի»[37]:

* * *

Հարսանիքներին նորափեսայի օրհներգն անելիս հաճախ հիշատակում էին Ս.Սարգսին.

Սուրբ Սարգիսն իջավ սարեն,
Քառսուն աղբուր բխաց քարեն,
Քսանևչորս սուրբ մարգարեն,
Օրհնեն այս մեր թագավորը:

* * *

Սուրբ Սարգիսը չէր խրախուսում շատակերությունը, հատկապես կանանց մոտ: Ամուսնացած երիտասարդ մարդիկ, հատկապես հարսները, երբեք չպիտի լիքը գդալով ուտեն: Իսկ մինչև ամուսնանալը աղջիկները միշտ իրենց ափսեի ուտելիքը կիսատ էին ուտում, մի փոքր թողնում էին, որպեսզի Ս.Սարգիսն իրենց հարսանիքին բուք չբարձրացնի: Հարսանիքի ժամանակ բուք ու բորանը Ս.Սարգսի դժգոհության նշանն էր երիտասարդ զույգի շատակերության պատճառով[38]:

* * *

Աղոթքները վկայում են, որ Ս.Սարգսին վերագրվում էր գազանների երախը, սողուններին, թրավորներին, նույնիսկ ծովը «կապելու»՝ սանձահարելու զորություն:

34. *Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, էջ 307-308:*
35. *Լալայան Ե. Երկեր, հ.3, էջ 197-198:*
36. *Աբեղյան Մ. Երկեր, հ.է, էջ 79:*
37. *Լալայան Ե. Երկեր, հ.3, էջ 207:*
38. *Աբեղյան Մ. Երկեր, հ. է, էջ 80:*

....Սուրբ Սարգսի ձիուն ձարեն,
Կապե գելը, կապե գազանը,
Կապե գիճն ու գիճավորը,
Կապե օձն ու թրավորը,
Կապե մեջ գիշերվա ծովը,
Որ սինառը մտավ՝ բերանը գոցվի,
Սինառեն էլավ՝ բացվի[39]*:*

* * *

Սուրբ Սարգսի թուրը հրեղեն է: Սուրբ Սարգսի անունը նույնիսկ մանկական խաղերում հիշատակվում է՝ որպես սիրելի կերպար, որին հավատալու դեպքում խաղացողի թուրն էլ հրեղեն կլինի.

Ալնիս-Բալնիս,
Հավատամք Սուրփ Սարքիս,
Խրեղեն քի թաթիս,-

շուտասելուկի պես կրկնում էին երեխաները խաղի ժամանակ, երբ փնտրում էին հակառակորդի կողմից պահված իրը[40]:

Ավանդազրույցները վկայում են, որ Սուրբ Սարգսին մեր ժողովուրդը հայազգի էր ընկալում և նրանից սպասված օգնությունը խիստ առարկայական էր: Նա հայտնվում է նեղության մեջ ընկածի կողքին (ավանդազրույց 7, 11), նա կամավոր շտապում է ծննդկաններին օգնության հասնելու (աղոթքները), ամուլներին կարող է երեխա պարգևել (ավանդազրույց 15), հիվանդներին բուժել, նրան դիմում են սիրահարվածները (Ս.Սարգսի տոնի ուխտերը), արյունապիղծ կապից խուսափողները (ավանդազրույց 9), բռնության ենթարկվածները (ավանդազրույց 4), գերյալները (ավանդազրույց 4, աղոթքները), կորած անասունի տերերը (գելկապի աղոթքը), բքի ու ձյունամրրիկի հանդիպածները (ավանդազրույց 14): Նա կարող է բուժիչ ջրեր բխեցնել և տրամադրել մարդկանց (ավանդազրույց 4): Նա անձնազոհ է, ինքը կամավոր գերի է հանձնվում՝ ուրիշներին փրկելու համար (ավանդազրույց 6): Սարգիսն ինքն է նետվում կռվի՝ հանուն արդարության, հանուն նեղյալներին օգնության (ավանդազրույց 11): Նա նաև քրիստոնյաների պաշտպանն է, հաղթում է պարսիկներին (ավանդազրույց 1), օգնում հայոց զորքին, առհասարակ օգնում է հայերին (ավանդազրույց 1, 3) և այլն: Նա պատժում է անարդարներին, ստախոսներին (ավանդազրույց 7, 12): Ս.Սարգիսն օգնում է ընտանիքի բարեկեցությանը, դաշտերի բերքատվությանը (Ս.Սարգսի փոխինդի հետ առնչվող ծեսերը): Եվս մի կարևոր հատկանիշ՝ Ս.Սարգիսը կարող էր բարեխոսել այլ սրբերի, մասնավորապես՝ Եղիային, կարկուտը դադարեցնելու և մարդկանց աշխատանքը նրանց «ղըսմաթ անելու». արդյո՞ք այստեղ չի հնչում յուրայինի միջոցով օտարի վրա ազդելու ավանդական սովորույթը: Եվ այդ ամենի դիմաց նրա ողջ ակնկալիքն այն էր, որ մարդիկ իր հնգօրյա պասը պահեն, և այդ պասի ընթացքում իրեն խանգարելու հնարավորություն ունեցող գործեր չանեն՝ փոխինդ չուտեն, օճառ չգործածեն, մազ չլվանան և այլն: Նա երբեք չի պահանջում իր անունով սրբավայր կառուցել, ծանրակշիռ զոհեր մատուցել իրեն:

Ամփոփելով կարելի է ասել, որ Սուրբ Սարգիսն ընկալվում էր որպես անձնազոհ, գթասիրտ,

39. *Աբեղյան Մ. Երկեր, հ.է, էջ 93:*
40. *Միքայելյան Գ. Նոր Բայազետ, ՀԱԲ, հ.11, Երևան, 1980, էջ 122:*

հզոր և կարող կերպար, որի հիմնական գործը մարդկանց օգնելն էր: Մի կարևոր նրբություն՝ Սուրբ Սարգսից չէին վախենում:

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ԿԵՐՊԱՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Սուրբ Կարապետին եկեղեցական տոնացույցում նվիրված են չորս տոներ: Դրանցից առաջինը նրա ծննդյան օրվան նվիրված տոնն է, որ Հայոց Եկեղեցին նշում է հունվարի 14-ին, երկրորդը՝ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակինն է՝ Զատկին հաջորդող շաբաթ օրը, երրորդը՝ Լուսավորչի կողմից Հովհաննես Մկրտչի մասունքները Հայաստան բերելու առիթով, որ շարժական տոն է և նշվում է Ս.էջմիածնի տոնի հինգշաբթի օրը, և վերջապես չորրորդը՝ «Հովհաննես Կարապետի և Հոբի» հիշատակին՝ Վերափոխման տոնին հաջորդող երրորդ շաբաթվա հինգշաբթի օրը: Սակայն եկեղեցու կողմից նշվող այս օրերից և ոչ մեկը հայ ժողովրդի մեջ մասսայականություն չի ստացել և ժողովրդական տոնախմբության չի վերածվել: Այլ կերպ ասած, հայ ժողովուրդը Ս.Կարապետի տոն չի նշել: Ս.Կարապետի անունը կրող քրիստոնեական սրբավայրերից առանձնանում և խիստ կարևորվում էր Մշո Սուրբ Կարապետի վանքը, որը Վարդավառի ժողովրդական տոնահանդեսներին դարձել էր ինչպես հայերի, այնպես էլ՝ քրդերի ու, թերևս, այլ ժողովուրդների սիրված մեծահանդես ուխտավայրը:

Այս վանքի եկեղեցում էին թաղված Հովհաննես Մկրտչի մասունքները, որոնք Գրիգոր Լուսավորիչը բերել էր Կեսարիայից: Հովհաննես Մկրտիչը Հիսուս Քրիստոսին մկրտողն էր: Հայաստանը և հայ ժողովրդին քրիստոնեության դարձրած Գրիգոր Լուսավորիչը քրիստոնյա Հայաստան է բերում նաև որոշ քրիստոնյա սրբերի մասունքներ, այդ թվում՝ Հովհաննես Մկրտչի մասունքները, թաղում դրանք Մուշ քաղաքի մոտ և թաղման վայրում եկեղեցի կառուցում[41]: Հովհաննես Մկրտչի անունը կրող եկեղեցին հայտնի է դառնում Հովհաննեսի հայկականացած անունով՝ Կարապետ: Ս.Կարապետի վանքի առաջին եպիսկոպոս է նշանակվում Մամիկոնյաց տոհմից Հովհան Մամիկոնյանը (Ջենոբ Գլակ), որի անունով էլ վանքը հաճախ կոչվել է նաև Գլակա վանք[42]: Այսպիսով՝ այս վանքը հայտնի է մի շարք կամ կրկնակի անուններով՝ Գլակա իննակյա վանք, Գլակա Ս.Կարապետ[43]: Կրկնակ անուններով հարուստ այս վանքը կամ, որ տվյալ դեպքում ավելի ճիշտ է, այս սուրբը կոչվում է նաև «յոթնանուն»: Բանն այն է, որ Կարապետ անունը Հովհաննես Մկրտչի յոթ անուններից մեկն է: Նրա յոթ անուններն են՝ Հովհաննես, Մկրտիչ, Առաքյալ, Մարգարե, Մարտիրոս, Ավետիս, Կարապետ: Այս բոլոր անունները տարբեր ձևերով բնութագրում են նրա գործունեությունը՝ Մկրտիչը բնութագրում է Հիսուս Քրիստոսին մկրտելու փաստը, Առաքյալը՝ քրիստոնեության քարոզչությունը, Մարգարեն՝ Քրիստոսի գալը նախապես գուշակելու փաստը և այլն: «Կարապետ» անունը նրան տրվել է արդարության առաջամարտիկը՝ կարապետը լինելու կապակցությամբ: Այս յոթ անունների պատճառով Սուրբ Կարապետին ընդունված էր անվանել նաև «յոթ անվան տեր Սուրբ Կարապետ», իսկ նրա անվամբ վանքը նաև՝ «Յոթնանուն»:

Հովհաննես Մկրտչի կամ Սուրբ Կարապետի եկեղեցին կառուցելու վայրը, ինչպես Լուսավորչի կողմից քրիստոնեական եկեղեցիների հիմնադրման այլ դեպքերում, ընտրվում է այն պատճառով, որ այն արդեն կրոնական մեծ արժեք և նշանակություն ուներ: Մինչև Հովհաննես Մկրտչի մասունքների բերելը և այստեղ թաղելը, այս տարածքում կանգնեցված էին Դեմետրի և

41. *Գալուստեան Շնորհք արք., Աստուածաշնչական սուրբեր, էջ 165:*
42. *Հովհան Մամիկոնյան, Պատմություն Տարոնո, 1941, էջ 49, 53:*
43. *Յարությունյան Ս. Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը և Ս.Կարապետի կերպարն ըստ ժողովրդական ավանդության, «Հայոց սրբերն ու սրբավայրերը», էջ 21:*

Գիսանեի անուններով կուռքեր, որոնք Մամիկոնյանների նախարարական տան խորհրդանշական և պաշտամունքային կուռքերն էին[44]: Իր հերթին՝ Գիսանեի և Դեմետրի կուռքերը կանգնեցնելու համար այս վայրն էին ընտրել, քանի որ այստեղ բնական ինը աղբյուր կար և վայրն ինքը կոչվում էր Իննակնյա տեղեր (ինը աղբյուր ունեցող), և համարվում էր սրբազան տարածք: Քանի որ Գիսանեն գիսավոր էր, այսինքն՝ ծամ ուներ, նրան պաշտողները նույնպես ծամ էին պահում: Ուշագրավ է, որ նույնիսկ քրիստոնեությունն ընդունելուց հետո Մամիկոնյաններն իրենց երեխաների գլխին ծամ էին պահում՝ իրենց հին հավատը հիշելու համար[45]:

Սուրբ Կարապետի մասին հայտնի ավանդազրույցները քիչ են նպաստում այս սրբից մարդկանց ակնկալիքները բացահայտելուն: Դրանց մեծագույն մասն այս կամ այն կերպ առնչվում է կամ Մշո Սուրբ Կարապետ վանքի կառուցմանը, կամ՝ Գրիգոր Լուսավորչի կողմից Սուրբ Կարապետի մասունքները Հայաստան բերելուն, և հազվադեպ են ակնարկում Սուրբ Կարապետի զորությունների մասին:

Ավանդազրույց 1. Գարեգին Սրվանձտյանցի կողմից գրի է առնվել «Սուրբ Կարապետի կաղ դևի ավանդությունը»[46]: Այս ավանդությունը պատմում է, որ Մշո Սուրբ Կարապետ վանքի մեջ մի կաղ դև կար, որ ժամանակին, Լուսավորչի կողմից կուռքերն ու մեհյանները կործանելու ժամանակ, Գրիգոր Լուսավորչին շատ աղաչել է իրեն չհալածել կամ չկործանել, որի դիմաց հանձն է առել կուռքի տեղում կառուցվող վանքի փոշին կրել թափել: Լուսավորիչը ընդառաջել է կաղ դևին, կատարել է այդ խնդրանքը, և մինչև այսօր այդ դևը շարունակում է իր գործը Մշո Սուրբ Կարապետ վանքում: Այս առիթով աշուղներն ու բանաստեղծները նույնիսկ երգեր էին երգում, որոնցից մեկն էլ հետևյալն էր.

Սուրբ Լուսավորիչ ժողվեց դիվան, լցեց զնդան,
Թոփալ դևն եկավ յաման,
Ասաց, զիս մի դներ զնդան,
Ես կեղնիմ սուրբ Կարապետու փոշեհան,
Տանիմ թափեմ Փրե պաթման,
Մինչ օր Քրիստոս գա դատաստան[47]:

* * *

Ավանդազրույց 2. Մշո դաշտի Շմլակ գյուղում գտնվող Սուրբ Կարապետ վանքի մասին պատմում են, որ «երբ Գրիգոր Լուսավորիչը Սուրբ Կարապետի մարմինը ջորու վրա բարձած բերում է Մշո դաշտի Քարկե (Բազմա) լեռը, ջորին ճանապարհին մի տեղ չոքում է: Ջորու չոքած տեղում Լուսավորիչը սկսում է վանք կառուցել: Նրա ցերեկվա շինածը գիշերը քանդում են դևերը: Լուսավորիչը բռնում է դևերին և լցնում վանքի զնդանը: Մի կաղ դև խնդրում է ազատել իրեն զնդանից, խոստանալով մինչև աշխարհի վերջը մաքրել վանքի փռան մոխիրը: Լուսավորիչը կատարում է կաղ դևի խնդրանքը, և մինչև հիմա էլ նա, մաքրելով վանքի մոխիրը, թափում է Բաթման գետը»[48]:

44. *Հարությունյան Ս. Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը..., էջ 21:*
45. *Հարությունյան Ս. Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը..., էջ 21, 110-111:*
46. *Սրվանձտյանց Գ. Երկեր, հ.2, Երևան, 1982, էջ 98-99:*
47. *Սրվանձտյանց Գ. Երկեր, հ.2, էջ 93:*
48. *Ավանդապատում, էջ 153-154:*

* * *

Ավանդազրույց 3. Մշո Ս.Կարապետ վանքից քառորդ ժամվա հեռավորությամբ գտնվող քարի վրա ցույց են տալիս ջորու ոտքի հետքերը: Ասում են, թե երբ Ս.Կարապետի նշխարները ջորու վրա բարձած տանելիս են եղել, այս քարի մեջ խրվել է ջորու ոտքը և նա մնացել է անշարժ[49]:

* * *

Ավանդազրույց 4. Երզնկայի Յալանզպաղ գյուղի մոտի Սուրբ Կարապետի անունով վանքի մասին պատմում են, որ «երբ սուրբ Կարապետի մարմինը ջորու վրա դրած Կեսարիայից բերում են Հայաստան, ջորին հանկարծ շեղվում է ճանապարհից և անհայտանում: Երկար փնտրելուց հետո նրան գտնում են բեռը շալակին: Ջորու գտնված տեղում վանք են կառուցում և անունը դնում Միավոր կամ Սուրբ Կարապետ»[50]:

* * *

Ավանդազրույց 5. Զեյթունի Սուրբ Կարապետ վանքի մոտով անցնելիս թեճիրլիցի վրանաբնակ թուրքմենները չարչարում և խոշտանգում են Ս.Կարապետ վանքի վանահորը, որպեսզի նա ցույց տա պահված դրամների տեղը: Տեսնելով, որ վանահայրը լռում է, թուրքմենները մերկացնում են նրան և բլուրի գագաթից քաշքշելով հասցնում մինչև ձորը, արյունլվա անելով նրա մարմինը: Վանահայրը դարձյալ ոչ մի ծպտուն չի հանում: Թուրքմենները ստիպված թողնում են նրան և հեռանում: Ճանապարհին հեղեղանման անձրև է տեղում, ողողում չորս կողմը և քշում տանում թուրքմենների մեծ մասին: Այս բանը վերագրելով չխոսկան վարդապետի դեմ գործած իրենց հանցանքին, կենդանի մնացած թուրքմենները դրանից հետո տվյալ վայրը կոչում են Սեոյլեմեզ դարասի (Չխոսկանի ձոր) անունով[51]:

* * *

Ավանդազրույց 6. Մշո դաշտի «Ակռա վանքի» պատմությունը նույնպես որոշ առնչություն ունի Սուրբ Կարապետի անվան հետ: «Հլո անունով մի գյուղացի ունենում է Գելո անունով մի շուն: Սա մի անգամ կծում է տիրոջը: Տերը մանգաղով խփում է շանը և երկու ատամը հանում բերանից: Բայց հետո զղջում է և հանած ատամները թաղում մի բլրի վրա՝ սալաքարերի տակ: Երբ Գելոն սատկում է, նրան թաղում է ատամներից քիչ հեռու՝ մի փոսի մեջ: Ժամանակ անց մեռնում է նաև Հլոն: Նրա թոռը՝ տաս տարեկան մի աղջիկ, երազում տեսնում է Սուրբ Կարապետին, որը նրան ասում է, որ իմ ատամներս թաղված են ձեր բլուրներից մեկի վրա գտնվող սալաքարերի տակ: Եթե այնտեղ վանք չշինեք, ձեր գյուղից երաշտն ու սովը անպակաս կլինեն: Աղջիկը երազը պատմում է մորը, մայրը՝ սկեսրոջը, սկեսրայրը՝ գզրին, գզիրը՝ ռեսին, ռեսը՝ տերտերին, տերտերը՝ վարդապետին: Հավաքվում են բոլորը, գնում բլուրը, աղջկա ցույց տվածով գտնում ատամները և դրանց տեղում վանք կառուցում: Վանքը շինվում է սալաքարերի վրա և այդ օրվանից գյուղը կոչվում է Ակռա-վանք: Վանքի մեջ հաստատվում են վարդապետներ, եպիսկոպոսներ: Դառնում է ուխտատեղի: Մի ծերունի, Մրգե անունով, ասում է, որ վանքի տեղում թաղվածը ոչ թե Սուրբ Կարապետի, այլ Գելոյի ատամներն են: Հոգևորականները և ժողովուրդը, երբ լսում են, թոկը գցում են ծերունի Մրգեի վիզը և խեղդելով թաղում են Գելոյի կողքին:

Անցնում են տարիներ: Ակռա-վանքի գյուղացիները բերք չեն ստանում, սովամահ են լինում: Միայն Մրգեի տղաների արտերն են ազատվում երաշտից և բերք տալիս: Գյուղացիք

49. *Ավանդապատում, էջ 74:*
50. *Ավանդապատում, էջ 244:*
51. *Ավանդապատում, էջ 49:*

հավաքվում են Մրգեի տանը, հետաքրքրվում, թե ինչու իրենց արտերը բերք չեն տալիս, իսկ նրանցը տալիս են: Մրգեի մեծ տղան՝ Գլսպեն պատասխանում է, թե՝ որովհետև դուք շան ատամները սուրբ եք դարձրել և պաշտում եք, իսկ մենք՝ ոչ: Եթե չեք հավատում, գնացեք հանեք Գելոյին, վերցրեք վանքում ոսկյա տուփի մեջ պահվող ատամները և չափեցեք, կտեսնեք, որ դրանք Գելոյի ատամներն են: Գյուղացիները կատարում են այդ խորհուրդը և տեսնում, որ Գլսպեի ասածը ճիշտ է: Վարդապետներին ու եպիսկոպոսներին ծեծելով դուրս են անում վանքից և վանքն էլ քանդում են»[52]:

* * *

Ավանդազրույց 7. պատմում են, որ «Մարիամ Սուրբ Կույսը յոթ տարի շարունակ պահում է Ս.Կարապետի ծոմն ու պասը: Հրեշտակը գալիս է սրա հոգին առնում, գնում է: Ճանապարհին սա տեսնում է յուր մորը, որի ծծերը երկու օձ ծծում են: Անցնում է: Պատահում է հորը՝ մինչև կոկորդը ավազի մեջ թաղված: Ս.Կույսը հարցնում է հրեշտակին յուր ծնողների չարչարանքի պատճառը, և նա պատասխանում է, թե մայրը երկու երեխա է խեղդել, իսկ հայրը կնոջը շատ նեղություն է տվել: Ս.Կույսը խնդրում է հրեշտակին՝ ազատել գոնե մորը: Հրեշտակը սլանում է երկինք և Հայր Աստծուց պատասխան բերում, թե՝ Ս.Կարապետի պասը պահե՝ մայրը տանջանքից կազատե: Ս.Կույսը համաձայնում է, նորից կենդանանում, գալիս աշխարհ և երեք տարի էլ պաս պահելով ազատում մորը տանջանքներից»[53]:

* * *

Ավանդազրույց 8. Հին Նախիջևանի Ապրակունիս գյուղի Ս.Կարապետի վանքի արևելյան կողմում գտնվող «Կաթանք» կոչվող աղբյուրի ջուրն այնքան առատ է եղել, որ բավարարել է պարսիկներից հալածական և Ս.Կարապետի տարածքում ապաստան գտած շրջակա գյուղերի հայ բնակիչներին: Աղբյուրը ցամաքել է մի վարդապետի մեղքերի պատճառով, որն իր անվայել արարմունքով Վարդավառի տոնին անարգել է նրան[54]:

* * *

Ավանդազրույց 9. Սեբաստիայի Կովտուն գյուղի մոտի Ս.Կարապետի անվամբ աղբյուրի մասին պատմում են, որ երբ Գրիգոր Լուսավորիչը Հայաստան է եկել, նրա ջորու ոտը այստեղ խրվել է գետնի մեջ, որտեղից և սկսել է աղի ջուր բխել: Դրա համար էլ կոչվում է Ս.Կարապետի աղբյուր[55]: Այս զրույցը գրանցած Կ.Գաբրիկյանը ավելացնում է, որ «Աղի ջուրին շրջակայքը ընդարձակ մարգագետին է, գլխավոր բույսը՝ Մոմիկ և Աղի խոտ, երկուքն ալ աղի խոտեր և բուսաճարագ: Մոմիկը Ս.Կարապետի ուխտին վառված մոմերն են՝ զոր սուրբը այդ խոտին փոխակերպած է: Ուխտի բերված մանուկներու վիզը կկապեն այս խոտեն՝ Խույտ, Խուստ հոս մնա ըսելով»[56]:

* * *

Ավանդազրույց 10. Մշո Սուրբ Կարապետ վանքի մատուռ կանանց արգելված էր մտնել: Վահան Տեր Մինասյանը պատմում է մի ավանդազրույց գեղջուկ աղջկա մասին, որը խախտել էր այս արգելքը և դրա համար դաժանորեն պատժվել:

52. *Ավանդապատում, էջ 254:*
53. *Ավանդապատում, էջ 214; Լալայան Ե., Երկեր, հ.1, էջ 214:*
54. *Ավանդապատում, էջ 96:*
55. *Ավանդապատում, էջ 105:*
56. *Գաբրիկյան Կ. Բառգիրք Սեբաստահայ գավառա լեզվի, 1952, էջ 655, 671; Ավանդապատում, էջ 438:*

Մի գեղջուկ աղջիկ մտնում է այդ մատուռը՝ խնդրելով Սուրբ Կարապետին իրեն գեղեցիկ ամուսնու արժանացնել: Եվ հանկարծ տաճարի գմբեթները թնդում են գերեզմանի խորքից եկող ձայներից, որ բարբառում են. «Արու-էգ դառնաս»: Հուրի աղջիկն անմիջապես կերպարանափոխվում է, բեղեր են առաջանում և դեռ ավելին՝ պոչ է աճում: Սարսափահար մանկամարդ գեղջկուհին ամոթից ուխտում է Սուրբ Կարապետի վանքից չհեռանալ, ծառայել նրա օջախի կրակն անմար պահելու գործին: Այնուհետև նրա կյանքը վեր է ածվում դժոխքի: Սուրբ Կարապետի վանքին ծառայող այս խառն արարածը՝ Հուրին, որ այլևս արու և էգ էր միաժամանակ, անընդհատ վառում է Սուրբ Կարապետի օջախը, իր պոչով մաքրում այն, սակայն նույն վանքում Տիր անունով մեկը գաղտագողի մարում էր օջախը: Հուրին թաքնվում է, հետևում իր թշնամուն, և պատեհ առիթն օգտագործելով՝ հաստ բրով ուժգնորեն զարկում է, վիրավորում Տիրին և անիծում նրան՝ ասելով. «Այսուհետև Սուրբ Կարապետի օջախի փոշեհանը լինես և կաղանաս»: Բայց Տիրն էլ իր հերթին է վրեժխնդիր լինում իրեն վիրավորողին: Մի օր նրան հաջողվում է կառչել Հուրիին, կծել նրա պոչը և պոկել: Կատարվում է ամենասարսափելին. Հուրին հղիանում է և ծնում մի զավակ՝ Լոշտակին: Եվ ահա ձայներ են լսվում, որոնք վավերացնում են զարմանալի այն իրողությունը, որ այդ եղեմական միջավայրում, անուշ ջրերի ու ծաղկունքի մեջ կարող է այդպիսի դառնաղի աղետ լինել.

Ո՜ ջուրք անոյշ, որ զեդեմին ծանեայք ըզռահիս,
Եւ գրգեցեքն զծաղկունըս,
Ձեր զի՞ վիժակք քաղծրութեան,
Անդէն յաղի աչաց աղբիւր դառնացան[57]*:*

Այնուհետև խեղճ աղջիկը պիտի կոչվեր Անպոչ ճգնավոր: Իսկ սուրբ Կարապետը, գթալով Անպոչ ճգնավորին, նրան կտրված պոկված պոչի փոխարեն մորուք է պարգևում, մինչև ոտքերի ծայրերը հասնող փառավոր մի մորուք, որով վերջինս շարունակեր մաքրել իր օջախը[58]: Սակայն հետն էլ շնորհք է տալիս Անպոչ ճգնավորին, երգելու և սազ նվագելու շնորհք: Եվ այս նախկին սիրավառ աղջիկը երգեր է երգում, որոնցում գովերգում է բնությունն ու սերը.

Այդ վայրի լեռներէն ի վայր,
Ջուրն ի շինիդ անցանի, ա՜յ,
Թուխ-մանուկ մի դուրս էլեր,
Ձեռք ու զերես է լուացեր, ա՜յ,
Դարձեր ի ջուրն՝ հարցունք աներ, ա՜յ,
- Ջուր, դու ի յո՞ր լեռնէն կուգաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՜յ:
- Ես այն լեռնէ կուգամ,
Որ հին ու նոր ձիւն ի վերայ, ա՜յ:
- Ջուր, դու ի յո՞ր առու կերթաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՜յ:
- Ես այն առուն կ'երթամ,
Որ փունջըն շատ է մանուշակին, ա՜յ:

. . . . . .

- Ջուր, դու ի յո՞ր աղբիւր կ'երթաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՜յ:

57. *Տեր Սիմասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 44:*
58. *Տեր Սիմասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 42:*

Կարապետի օջախը մարած է և այն հարցին, թե ինչո՞ւ է մարած, մատնանիշ են անում քարարծանը, ասելով՝ «դատավորն ահավոր, դատաստանն արդար»[61]:

Հիշյալ ավանդազրույցները վկայում են, որ Սուրբ Կարապետը ավելի կիրառում էր իր պատժող, քան՝ նպաստող, օգնող գործառույթները: Ընդ որում՝ նա պատժում էր ոչ թե առհասարակ անարդարներին, այլ՝ ի՛ր նկատմամբ անարդարներին կամ ի՛ր կամքը չկատարողներին, հակառակ նրան, որ այդ կամքը նույնիսկ չիմանալով է խախտվել: Դրանք ցույց են տալիս, որ Սուրբ Կարապետն առանձնապես չի շտապում օգնել մարդկանց: Ավելին, նրան սրբորեն ծառայողներն ընկնում են զանազան արկածների մեջ, տառապում են, և այստեղ նույնիսկ օգնության որևէ ակնարկ չկա: Եթե նույնիսկ չարը պատժվում է, համենայն դեպս՝ բարին անողը օգնություն չի ստանում, չի խրախուսվում (ավանդազրույց 5-ում նրա վանքը անձնազոհաբար պաշտպանող վանահայրն օգնություն չի ստանում, բայց պատժվում են վանքն անարգել ցանկացող թուրքմենները): Սակայն՝ մարդիկ շարունակում են նրան հավատարիմ մնալ, ավելին՝ հանուն նրա գնում են նոր զոհաբերությունների (ավանդազրույց 10: Անպոչ ճգնավորն իր որդուն անարժան է համարում Ս.Կարապետի հողը կոխել և անիծում է նրան): Սուրբ Կարապետը կամ պահանջատեր է (յոթ տարի պաս պահեք) և պահանջը չկատարելու դեպքում՝ վրիժառու, կամ նրա անունը հիշվում է չեզոք իրավիճակներում (ավանդազրույց 3, 4, որոնք պատմում են, թե ինչպես Հովհաննես Մկրտչի մասունքները Հայաստան բերող Գրիգոր Լուսավորչի ջորու կանգնած տեղերում Ս.Կարապետի անվան վանքեր են կառուցվել): Ավանդազրույցներից միայն 7-րդն է վկայում սրբի արած առարկայական օգնությունը, այն էլ՝ մեկ ուրիշ սրբի՝ Մարիամ Աստվածածնին: Ընդ որում՝ դա ահավոր օգնություն է՝ տառապանքներից ազատել երկու երեխա սպանած մորը: Պատժող է Սուրբ Կարապետը, պատժող նույնիսկ թեթև զանցանքների համար, և նրա պատժի հետևանքները տարածվում են անմեղ մարդկանց վրա (ավանդազրույց 6, 8): Նա ոչ միայն անմեղ մարդկանց զրկում է իր վանքի մոտ գտնվող առատ ջրից՝ ցամաքեցնելով աղբյուրը (ավանդազրույց 8), այլև՝ նույնիսկ նրա անունով կոչվող աղբյուրը, ըստ ավանդազրույցի, աղի է (ավանդազրույց 9) և որևէ խոսք չի ասվում այդ ջրի օգտակար հատկանիշների մասին, ի տարբերություն, օրինակ՝ Ս.Սարգսի և Ս.Հակոբի աղբյուրների, որոնց բխեցրած ջուրը հիվանդություններ է բուժում: Դաժան սուրբ էր Կարապետը: Դևին խղճալով ավել է տալիս և թույլ տալիս մինչև Աստծո դատաստան ծառայել իր վանքում (ավանդազրույց 1, 2), իսկ խեղճ գեղջուկ աղջկան, որի միակ մեղքը Սուրբ Կարապետի օգնությունը հայցելն էր, մորուք ու պոչ է տալիս և դատապարտում տառապանքների (ավանդազրույց 10): Իսկապես՝ պահանջկոտ սուրբ է և ոչ մի համեմատություն չի կարող ունենալ դժբախտներին, գերյալներին, բռնությունների ենթարկվողներին,

---

Վանեցիները, ըստ Գալուստ Տեր Մկրտչյանի, չափազանց կարևորում էին լոշտակը. «Այս մարդակերպ արմատը մի կատարյալ դյութական գավազանի հատկություններն ունի՝ տալիս է մարդկանց իմաստություն, ուրիշների վրա իշխելու կարողություն. բժշկում է ամեն հիվանդություն, հալածում է չար ոգիներ, մի խոսքով մի քանի բույսերի հատկություններն իր մեջ է միացնում, սեր էլ է հաջողեցնում, ինչպես և ցույց է տալիս առասպելական գանձերի թաղված տեղը: Վանեցի երեխաներն անգամ հետամուտ են այս չնաշխարհիկ բույսը ձեռք բերելու, որպեսզի դժվար գործը հեշտանա, ոսկիներ գտնեն, ուժով լինեն, անվախ սիրտ ունենան և այլն, և այլն:

Ափսո՜ս, որ այս հազվագյուտ արմատը ձեռք բերելը կապված է գրեթե անկարելիությունների հետ, նրա արմատը շա՜տ խորն է, հարկավոր է իմանալ կախարդական աղոթքներ, որ պիտի ասել նրան հանելու ժամանակ, իսկ այդ աղոթքները միայն կախարդները գիտեն: Վանեցին ասում է, որ այդ արմատը հանողը շատ անգամ պետք է կյանքից ձեռք վերցնի. ով որ լոշտակի ձայնը լսի, որ նման է երեխայի ծղոցի, իսկույն կմեռնի: Ահա այդ պատճառով քչերն են հետամուտ լինում նրան, թեև՝ անխտիր բոլորի համար տենչալի բան է: Լոշտակը, ըստ վանեցու հավատալիքի, մինչև 40 արշին խորն է թաղված, այնպես որ անհնար է այս բույսի արմատն ամբողջությամբ հանել: Նրա մի մասն ստանալու համար այս գործողություններն են կատարում: Մի քանի հոգի միացած՝ արմատի չորս կողմը փորում են աղոթքներ մրմնջալով, որպեսզի նրա կտրվելու ձայնը չլսեն ու մեռնեն, բերում են, մի քաղցած շուն են կապում բույսին, մի քիչ հեռու միս են դնում, ու իրենք ականջները բռնում, փախչում: Շունը, աշխատելով միսն ուտել, ծիգ է տալիս կապը և կտրում հանում է արմատը, բայց ինքը տեղնուտեղը սատկում: Ուրիշ տեղերում շունը փոխարինում են մի ուլով կամ հավով, որը իբրև նվեր՝ զոհ է ծառայում և մեղմացնում է ոգու բարկությունը: Լոշտակ հանելու հարմար ամիսը մայիսն է», - Գալուստ Տեր Մկրտչյան, Ճակատագրի տոնը, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1979, էջ 469-470:

61. *Տեր Մինասեան Վ. Անգիր դպրություն, էջ 45:*

սիրահարված զույգերին մշտապես կամավոր և արագորեն օգնության հասնող Սուրբ Սարգսի հետ: Սուրբ Սարգսին բաժին ընկած պասն էլ ընդամենը մի չւսբաթվա պաս էր, դարձյալ ոչ մի համեմատություն Սուրբ Կարապետի համար արվող զոհաբերություններին՝ յոթ տարվա պաս, ծանր ծոմ, մատաղներ: Վարդավառի տոնակատարության նկարագրության ընթացքում խոսվեց այն մասին, որ Սուրբ Կարապետ ուխտի գնացողները յոթ տարի պաս էին պահում: Այս երկարատև ժուժկալության պահանջատերն ինքը՝ խստաբարո Սուրբ Կարապետն էր:

Այլ կերպ ասած, Սուրբ Կարապետից մեր ժողովուրդը մեծ սպասելիքներ չուներ: Բայց նրանից վախենում էր, որպես «ահավոր դատավորից» («դատավորն ահավոր, դատաստանն արդար»): Այնուամենայնիվ՝ կան որոշ վկայություններ այն մասին, որ Սուրբ Կարապետը հանդես է եկել որպես օգնական: «Տարոնի պատմության» հեղինակ Մամիկոնյան պատմիչը մի քանի անգամ ասում է, որ պարսիկների դեմ կռվելիս հայերը Ս.Կարապետին էին օգնության կանչում և նա հասնում էր օգնության. «...հանկարծ հայտնվում էր մի մազավոր տղամարդ (այր մի հերավոր) և նրա մազերից լույս էր փայլատակում...»[62]: Հավանաբար այս հատվածները պետք է մեկնաբանել այն իմաստով, որ Մամիկոնյանների նախկին կուռքը՝ Գիսանեն, վերանվանվելով Ս.Կարապետ, շարունակում էր Մամիկոնյանների պահապան հրեշտակի դերը կատարել: Քանի որ Ս.Կարապետի առաջին և գլխավոր սրբավայրը Մշո Ս.Կարապետի վանքն էր, որտեղ նախկինում Մամիկոնյանների պաշտելի Գիսանե և Դեմետրե կուռքերն էին, որտեղ ինն աղբյուրներն էին, և որն առհասարակ սրբազան տարածք էր, արդյունքում նրան ժողովուրդն օժտել է այն բոլոր հատկանիշներով, որոնք արդեն առկա էին Իննակնյա տեղերում, ունեին Դեմետրե ու Գիսանե կուռքերը, և, անշուշտ, քրիստոնեական մշակույթն էլ ավելացրել է իր պաշարներից: Իննակնյա տեղերի ջրային ոգիների հետ կապն է, հավանաբար, պատճառը, որ Սուրբ Կարապետի ժողովրդական ուխտագնացության ամենամեծ տոնը Վարդավառն էր՝ ջրերի հովանավոր ոգիներին խնկարկելու, սիրաշահելու, նրանց զորությունների հետ առնչվելու տոնը: Այս են վկայում նաև այն ժողովրդական սովորությունները, որոնք կատարվում էին Վարդավառի տոնակատարության ժամանակ:

Ի՞նչ կարող էր անել Սուրբ Կարապետը հասարակ մարդկանց համար: Ս.Կարապետ ուխտի գնացողները երազում էին «օխտը գոմշի ուժ ստանալ, լարախաղացի, սազ ածողի, բանաստեղծություն հորինողի շնորհ ստանալ»[63]: Ս.Կարապետը կարող էր բուժել, խելք ու իմաստություն շնորհել, պանդուխտներին հայրենիք վերադարձնել, հարստություն և ունեցվածք պարգևել, երաժշտական, սպորտային, բանաստեղծական ձիրքերով օժտել իրեն դիմողներին,[64] անզավակներին մանուկ պարգևել և այլն: Սակայն՝ այս ձիրքերը շնորհելու և իղձերը կատարելու համար նա շատ ծանր պայմաններ էր դնում մարդկանց առաջ: Ս.Կարապետից ակնկալիք ունեցողները յոթ տարի շարունակ կամ ամեն տարի յոթական շաբաթ «Ս.Կարապետի» կամ «Օխտն անվան» պաս էին պահում, իսկ վերջին՝ յոթերորդ տարին, ոմանք նաև ծոմ էին պահում (յոթ շաբաթ, մյուսները՝ մեկ շաբաթ): Ուխտն ընդունելի դարձնելու նպատակով՝ ծոմ պահող մարդիկ մինչև ուխտագնացություն գնում էին եկեղեցի, աղոթում, որ իրենց ուխտն ընդունելի լինի: Նոր Նախիջևանում շատերն են հիշում Մելքոն անունով մի մարդու, որ ծանր հիվանդացել է, ապաքինվելու համար յոթ տարի պաս է պահել և յոթերորդ տարին մեկնել է Սուրբ Կարապետ՝ ուխտագնացության: Դժբախտը, սակայն, ճանապարհին մահացել է[65]:

62. *Մամիկոնյան Վ. Պատմություն Տարոնոյ, 1941, 219, 239, 264, 371 և այլն:*
63. *Մխիթարյանց Ար. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 272:*
64. *Հարությունյան Ս. Մշո Սուրբ Կարապետ..., էջ 27:*
65. *Փորբշեյան Խ. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965, էջ :*

Անզավակների ամենաանվիրական, կարևոր իղձն էր համարվում զավակ ունենալը: Անզավակ ծնողները, յոթ տարի շարունակ պաս պահելուց հետո, Ս.Կարապետ էին գնում, գոտիները գերեզմանաքարի վրա դնելով աղոթում էին և անծանոթ մեկին խնդրում, որ գոտին իրենց մեջքին կապի: Երեխա ծնվելու դեպքում այդ անծանոթը դառնում էր երեխայի քավորը: Զավակ ունենալու դեպքում այս ծնողներն ուխտում էին երեխայի մազերը չկտրել, մինչև նա ինքը Ս.Կարապետի գերեզմանին ուխտ չգնար: Այստեղ սափրում էին երեխայի մազերը, այդ մազերից բարակ պարան ոլորում և կապում այն ավելի ծայրին, որով ավլում մաքրում էին գերեզմանն ու վանքը[66]: Այս սովորույթն, իհարկե, Գիսանեի հետ կապված հավատից էր գալիս և երեխայի մազերը չկտրելու խոստումը մազավոր Գիսանեին պիտի ուղղված լիներ:

Սուրբ Կարապետի եկեղեցի, մասնավորապես՝ եկեղեցու մեջ գտնվող մատուռ, որը ծառայում էր որպես Հավիաննես Մկրտչի մասունքների գերեզման, ինչպես վերն ասվեց, կանանց արգելված էր մտնել: Թե՛ գրական ավանդույթում, թե՛ ժողովրդական ավանդազրույցներում հիշվում են մի շարք դեպքեր, երբ այս արգելքը շրջանցողները պատժվել են: Օրինակ՝ երբ Արծրունյաց Մարիամ տիկինը խախտում է այս արգելքը, մտնում է վանք և իր ուխտը կատարելուց հետո դուրս է գալիս, հանկարծ տեսնում է իրեն մոտեցող Սրբին, երեխային տալիս է դայակներին և ահաբեկված ասում. «Տեսնում եմ մի գիսավոր (ծամ ունեցող, ծամավոր) տղամարդ ամպի նման որոտացող և գալիս է դեպի ինձ. տեսնում եմ նրա մոտ սրված և արյունաներկ զենք»: Այս խոսքերի վրա Սուրբ Կարապետը հարվածում է նրան և տեղնուտեղը սպանում[67]: Սուրբ Կարապետի վանք կանանց մտնելը չթույլատրող արգելքը խախտողները միշտ այս կամ այն կերպ պատժվում են: Սասունցիները, օրինակ, գտնում էին, որ Սուրբ Կարապետի վանքի խորանի աջ կողմում գտնվող մատուռը մտնող կանայք «կծռեին», այսինքն՝ կխելագարվեին[68]: Արդեն հիշեցինք Անպոչ ճգնավորի պատմությունը:

Այնուամենայնիվ՝ հայոց եկեղեցու կողմից Սուրբ Կարապետն այնքան է մեծարվել, այնքան շատ են շարականները, ալելուաները, տաղերը, գանձերը, մեղեդիները, քարոզները, որոնցում պատմվում կամ հիշատակվում են Հովհաննես Մկրտչի կյանքի քրիստոնեահաճո դրվագները, որ նրան համարում են «հայ հոգևոր երաժշտության գլխավոր և ամենասիրված հերոսներից մեկը»[69]:

Դրան հակառակ՝ Ս.Կարապետը խիստ հազվադեպ է հանդիպում ինչպես աշուղական երգերում[70], այնպես էլ՝ ժողովրդական բանահյուսության մեջ: Մասնագետները նույնիսկ զարմանում են, որ չնայած Ս.Կարապետը համարվում էր երաժշտական և բանաստեղծական ձիրքեր շնորհող սուրբ, ժողովրդական երգահանները նրան շատ քիչ են հիշատակում: Ավելին՝ ժողովրդական բանահյուսական նյութում նույնիսկ Սուրբ Կարապետի գործառույթները չեն երևում, դրանք պարզապես Սրբի անվան հիշատակումներ են: Դրանցում նա երբեմն անվանվում է «մուրազատու», և «մուրազը կատարելու» խնդրանք կա, բայց զարմանալի համառությամբ չի հիշատակվում կոնկրետ մուրազը.

Սուրբ Կարապետ խորան խորան,
Մեջը կէրվի օսկի օրան,
Յոթը գլուխ սուրբ ավտրրան,
Մուրազիս տուր, սուրբ Կարապետ[71]*:*

66. *Մխիթարյանց Ող. Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 272:*
67. *Հարությունյան Ս. Մշո սուրբ Կարապետ..., էջ 27:*
68. *Պետոյան Վ. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 373:*
69. *Բաղդասարյան Ա., Դիլանյան Ե., Խուդաբաշյան Կ. Սուրբ Կարապետին նվիրված հայ հոգևոր և ժողովրդական երգերը, «Հայոց սրբերն ու սրբավայրերը», Երևան, 2001, էջ 30:*
70. *Բաղդասարյան Ա., Դիլանյան Ե., Խուդաբաշյան Կ. Սուրբ Կարապետին նվիրված հայ հոգևոր և ժողովրդական երգերը, էջ 32:*
71. *Բաղդասարյան Ա., Դիլանյան Ե., Խուդաբաշյան Կ. Սուրբ Կարապետին նվիրված հայ հոգևոր և ժողովրդական երգերը, էջ 34:*

Կամ՝

Սուրբ Կարապետ քու վանքը,
Վա՛յ լե, լե, լե, լե,լե,
Վա՜յ սիրելի ջան;
Ղազախի նախշուն թամքը,
Սրտովի սիրել ես,
Մոլորը թորկել ես,
Վա՜յ անուշիկ ջան:

Կամ՝

Սուրբ Կարապետ ուշ էր, մուշ էր,
Բոպիկ մ՛երթար ճամփան փուշ էր,
Գերեզմնին հոտն անուշ էր,
Մուրազատուր Սուրբ Կարապետ:

* * *

«Սրբ Կարապետի գովք» կոչվող մի երգում նկարագրվում է, թե ինչքան շատ մարդ է գնում նրա անվամբ վանքը որպես ուխտավոր, այդ թվում՝ «շատ կաղ ու կուր», ինչքան շատ մատաղներ են արվում, ինչքան լավն է վանքը, որտեղից գետեր են սկիզբ առնում, մեջը կանաչ խոտ է բուսած, գմբեթները հեռվից երևում են, խաչը ոսկի է, քարը՝ կանաչ, բակում ունի ջուխտակ աղբյուր, այս ամենի պատճառով մարդու հոգին փառավորվում է: Ինը քառատող ունեցող երգում միայն երկու տող է բնութագրում իրեն՝ սրբին, և այդ երկու տողերից մեկն ասում է, որ Սուրբ Կարապետը կանանց չի սիրում՝ «Մինակ կնկտուց կիշկե խոլոր», իսկ մյուսը հաստատում է, որ Սուրբ Կարապետի վանքը կառուցվել է չարքերի ու դևերի վայրում և «է՛ն խափանեց չարք ու դիվան»: Եվ, այնուամենայնիվ, երգն ավարտվում է՝ Սուրբ Կարապետին հայոց ազգի փրկիչ անվանելով:

Սրբ Կարապետ բանձր ու բոլոր,
Ուր դուռ գիկան շատ ըխտավոր,
Որ ոտավոր, որ ձիավոր,
Մշու սուլթան սրբ Կարապետ:

Սրբ Կարապետ բանձրաքումպեթ,
Խոսք կը բանա մեր յըմնու հետ,
Էլ չը հարցու մանտրիկ ու բեդ,
Մշու սուլթան սրբ Կարապետ:

Սրբ Կարապետ մըջ պրակին,
Ջուխտակ աղբուր մըջ ուր բակին,
Ինոր մատաղ գառն ու մաքին,
Մշու սուլթան սրբ Կարապետ:

Սրբ Կարապետ դաշտն է բոլոր,
Ճամպեք ունի օլոր-մոլոր,
Մինակ կնկտուց կիշկե խոլոր,
Մշու սուլթան սուրբ Կարապետ:

Սըբ Կարապետ աղբուր ու ջուր,
Ուր դուռ կիգան շատ կաղ ու կուր,
Էրթըցողին մոլրազն էտուր,
Մշու սուլթան սըբ Կարապետ:

Սըբ Կարապետ յելման գետեր,
Մեջն է բուսի կանանչ խոտեր,
Ուրնե գիկան խնկի հոտեր,
Մշու սուլթան սըբ Կարապետ:

Սըբ Կարապետ չանգլի դիվան,
Քումպեթներ հեռվեն կերևան,
Է՛ն խափանեց չարք ու դիվան,
Մշու սուլթան սըբ Կարապետ:

Սըբ Կարապետ զորավոր խաչ,
Խաչն է օսկի, քարն է կանաչ,
Մարդ կա՞ ինոր չեղնի ճանանչ,
Մշու սուլթան սըբ Կարապետ:

Սըբ Կարապետ մըջ աշխըրքին,
Փառավորե մարդու հոգին,
Տեր ու փրկիչ հայոց ազգին՝
Մշու սուլթան սըբ Կարապետ[72]*:*

Սուրբ Կարապետի անվան հիշատակությունը ժողովրդական բանահյուսությունում հաճախ է կապվում Մշո Սուրբ Կարապետ վանքի շինարարությանն առնչվող ավանդազրույցի այն դրվագին, ըստ որի վանքի կառուցման վայրում նախկինում դևեր էին ապրում: Ահա այս պատմությունների թեմաներով են աշուղները գովերգել Սուրբ Կարապետին.

Հիմքն Սուրբ Կարապետին լուսածիր ա բոլորն,
Սկսեց Լուսավորիչ հայրն սուրբ Գրիգորն,
Մինչ իրիկուն կաշխատեր, միշտ քանդվում էր գիշերն,
Լուսաբացին տեսնում էր չի կա տեղն մին քարն,
Հրամայեց ծառային՝ քանդեց քառասուն գազ հորն,
Բռնեց ածեց բանդի մեջ էն անիծած դևերն,
Նոր կրկին ձեռնադրեց, որ շինեն լույս տաճարն:

.....

Արևից արևմուտ իսկի չի կա նմանն,
Կաղ դևն ծառա գրվեց, որ լինի փոշեհան,
Երևելի քրտնում ա լուսաբուղխ գերեզմանն,
Չունի երեսպաշտություն, ուղիղ է դատաստանն,
Հույս հավատով խնդրողին կը տա մուրտատ յուր տանն.
Ամեն խորհուրդ կատարող՝ նա Մշու սուլթանն,
Սրբոց միջին երևելի, որ չի կա բարեբարն:

72. Բենսե, Հարք (Մշո Բուլանըխ), էջ 139:

Հայոց ազգիս պարծանքն ա, չի կա թայն երկրում,
Հավանել ա, նստել ա Քուրդուստան Բալուա սարում,
Մանանայն երկինքից վեր ա գալիս ծառերում,
Աշխարիքն լիանում ա, փափագով շատ են գնում,
Լիասիրտ գնացողներ շուտով մատաղն են բերում,
Աշխարհի չորս կողմից նրա մատաղն են բերում,
Չի կա հեսապ մատաղին ավուրն Վարդավառն:[73]

Գարեգին Սրվանձտյանը մեծ ցավով գրում է, որ Սուրբ Կարապետի բոլոր ուխտավորները, մոռանալով Մշո Սուրբ Կարապետ վանքի բակում թաղված և սրբացած հերոսներին՝ Գայլ Վահանին, Առյուծ Մուշեղին, յոթ Խոտաճարակներին և այլոց, միայն կաղ դևի պատմությամբ էին հետաքրքրվում և անձկությամբ աղաչում էին իրենց ցույց տալ նրան: Եվ չէին հավատում այն հավաստիացումներին, որ այդպիսին չկա, դա հնարանք է: Մի անգամ վանքի դռնապանը, ուխտավորների հերթական թախանձանքներից ձանձրացած, ցույց է տալիս վանքից կես ժամվա հեռավորությամբ գտնվող Բազու գյուղի ժամկոչին, որը հիրավի երկու ոտքից կաղ, ծռված մարմնով, խառնակ մորուքով մեկն էր, ասելով, թե դա է կաղ դևը: Ուխտավորը զարմացած խաչակնքում է երեսը՝ ասելով. «Դևերն ալ մեզ նման են, փառք քեզ, Աստված, փառք քեզ»:

Այլ խնդիր է, որ հայ ժողովրդի ժողովրդական տոնախմբություններում Սուրբ Կարապետի անվան ուխտավայրերը լայնորեն ներառված էին և համարյա ամենուր ժողովրդական ուխտագնացությունների մեջ կարող ենք հանդիպել դրանց: Սակայն պետք է ավելացնել, որ Սուրբ Կարապետի անունով եկեղեցիների, մատուռների թիվն զգալի էր, ինչպես նաև հայոց մեջ համարյա չկար քիչ թե շատ կարևոր եկեղեցի կամ վանք, որ Սուրբ Կարապետի անունով որևէ խորան չունենար: Այնպես որ կամա-ակամա դրանք պետք է ներառվեին ժողովրդական ուխտագնացությունների մեջ:

Ամենագեղեցիկ ժողովրդական երգը, որ երգվում էր Սուրբ Կարապետի անվան շուրջ, գովերգում է Սուրբ Կարապետի վանքը և վերջում ավարտվում ցանկությամբ՝ «գլուխը դնել Սուրբ Կարապետի վանքի քարին ու հոգին տալ Թուխ մանուկին»: Ահա այդ երգը.

Սուրբ Կարապետ բարձըր բոլոր,
Քե ճամբըխներ օլոր մոլոր,
Շատ ուխտաւոր քե դուռ կիգայ,
Շատ ուխտաւոր՝ որ ոտաւոր,
Որ ձիաւոր, պոշ ձիաւոր:

Սուրբ Կարապետ եմ գնացեր,
Պառկուկ եմ, մեջն եմ մնացեր,
Սերս եմ առեր, չեմ իմացեր,
Ումուտատուր Սուրբ Կարապետ:

Ինն աչերու լուսաղբիւրներ,
Կաթ կու կաթեն լոյս լոյս ջըրեր,
Ուռին բարտին շուք են եղեր,
Սիրականիս շնորհք են տըւեր:

Ի հոն դընեմ գլխիկս քարին,

73. *Բաղդասարյան Ա., Դիլանյան Ե., Խուդաբաշյան Կ. Սուրբ Կարապետին նվիրված հայ հոգևոր և ժողովրդական երգերը, էջ 46:*

Հոգիս ի տամ Թուխ մանուկին,
Ի հոն քնեմ Սուրբ Կարապետ,
Ումուտատուր Սուրբ Կարապետ:[74]

Այս երգը վկայում է այն մասին, որ մարդկանց «շնորհք» տվողները Մշո Ս.Կարապետի «ինն աչերու լուսաղբյուրներն» և «ուռին, բարդին են», և այդ շնորհները գովերգողի վերջնական իղձը հոգին Թուխ մանուկին տալն է. «հոգիս ի տամ Թուխ մանուկին»: Սակայն բոլոր գովեստներն ու փառաբանումները հասցեագրվում են Սուրբ Կարապետի վանքին:

Պետք է ավելացնել, որ եթե Մուշում, առհասարակ՝ Տարոն աշխարհում Սուրբ Կարապետի կերպարը բավականաչափ հայտնի էր, ապա արևելահայոց մեջ Սուրբ Կարապետը երբեմն ընկալվել է որպես Սուրբ Սարգսի որդին.

- Անունըդ ի՞նչ է.
- Սուրբ Սարգիս,
- Որդուտ անունն ի՞նչ է,
- Սուրբ Կարապետ:

Այս հարց ու պատասխանից հետո շարունակվում է արդեն Սուրբ Սարգսից սպասելիքները.

- Շատ մարդ ընկնի գերութեն,
էրթաս էնես ընկերութեն,
Թուրտ քաշես էնես փրկութեն[75]*:*

Այսպիսով, Սուրբ Կարապետի կերպարի ժողովրդական ընկալումը նրան վերագրում է չար ու բարի զորություններ: Նա դատավոր է, բայց դատում է անհասկանալի չափանիշներով և սկզբունքներով: Նա կարող է մարդկանց արվեստի ձիրքեր տալ, բայց անհասկանալի է, թե ինչպես պետք է հասնել նրա բարյացակամությանը: Նա մարդկանցից պահանջում է խիստ և չափազանցված անձնազոհություն, բայց նույնիսկ այդ դեպքում կարող է չկիրառել իր նվիրատու կարողությունը: Նա պահանջում է անվերապահ նվիրում, բայց դրա փոխարեն հովանավորություն չի երաշխավորում: Նրանից վախենում են, բայց նրան խնկարկում են: Նա նաև կնատյաց է: Թերևս սա այն դեպքն է, երբ դիմացինդ այնքան հզոր է և դաժան, որ ցանկացած պահի կարող է քեզ սպանել, բայց չի սպանում, և դու անսահման երախտապարտ ես նրան ու համարում ես լավը: Քանի դեռ քեզ չի սպանել: Գուցե սա է պատճառը նաև, որ կանայք, որոնց Սուրբ Կարապետն ատում էր, ավելի ջերմեռանդորեն էին պահպանում սրբի պատվիրանները և ավելի հաճախ էին նրա անունով պաս պահում: Որովհետև վախենում էին:

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ ԿԵՐՊԱՐԸ

Սուրբ Գևորգը ծնվել է Կապադովկիայում, քրիստոնյա ընտանիքում: Թաքցնելով իր քրիստոնյա լինելու փաստը, զինվորագրվում է հռոմեական բանակին, արագորեն զորավարի աստիճանի է բարձրանում և դառնում կայսր Դիոկղետիանոսի սիրելին: Սակայն, երբ վերջինս մի խորհրդակցության ժամանակ քննարկում էր քրիստոնյաներին հալածելու հարցը, Գևորգը հակառակ կարծիք է արտահայտում, որով բացահայտում է իր քրիստոնյա լինելու հանգամանքը: Նրան բանտարկում են, չարչարանքների ենթարկում և փորձում դարձի բերել: Գևորգը համաձայնվում է տեսնել կուռքերին, և հենց որ նրան բանտից տանում են կուռքերի մոտ,

74. *Տեր Մինասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 10:*
75. *Լալայան Ե. Ջավախք, երկեր, հ.1, 1988, էջ 350:*

կործանում է դրանք: Դիոկղետիանոսն անմիջապես գլխատել է տալիս հանդուգն քրիստոնյային[76]: Սուրբ Գևորգը պատկերագրության մեջ երևում է ձիու վրա նստած՝ վիշապ սպանելիս: Շնորհիք Գալուստեանի ներկայացմամբ, այդ պատկերը խորհրդանշական է և բնորոշ է քրիստոնեության համար պայքարած զինվորներին. վիշապը բնութագրում է աշխարհի չարությունը, բռնակալությունը, չարիքի դիվական զորությունը և զորավարի պատկերով դևերին սպանող քրիստոնյա ռազմիկների պատկերները այլաբանորեն բնութագրում են չարիքի դեմ պայքարի գաղափարը[77]:

Հայոց եկեղեցական տոնացույցը Սուրբ Գևորգի տոնը հաստատուն նշում է սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկնող շաբաթ օրը, և այն նախորդում է Վարագա խաչի տոնին, որն իր հերթին նշվում է սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկնող կիրակի օրը[78]: Ժողովուրդը, ինչպես ասվել է, Ս.Գևորգի ուխտագնացությունն անում էր հոկտեմբերի վերջին, երբ դաշտային երկրագործական աշխատանքները հիմնականում ավարտված էին լինում: Սուրբ Գևորգի ժողովրդական տոնահանդեսը սրբի կերպարի մասին վկայություններ չի պարունակում, բացի, թերևս, այն սովորությունից, որ առկա էր Ջավախքում: Հիշենք այն. «Ջավախքում այս տոնը կոչվում էր Ծռատոն: Այդ օրը մարդիկ գործ չէին անում, որ չծռվեն: Պատմում են, թե այդ օրը գործ անողներ են եղել, և նրանց ձեռքերը, ոտքերը և այլն անմիջապես ծռվել են: Եթե մարդ հարկադրված էր որևէ գործ անել, պատժից ազատվելու նպատակով գործից անմիջապես հետո մի քիչ գարի էր ցանում: Այդ ցանված գարին ծուռ էր դուրս գալիս, իր վրա կրելով Ս.Գևորգի պատիժը»[79]: Այս կոնկրետ դեպքում մենք գործ ունենք Սուրբ Գևորգի պատժիչ գործառույթի հետ. սուրբն իր տոնի հանդեպ հարգանք է պահանջում, հակառակ դեպքում՝ պատժում է: Ավանդազրույցները նույնպես քիչ հնարավորություն են տալիս պատկերացնելու, թե ի՞նչ էին սպասում մարդիկ Սուրբ Գևորգից: Դրանք վկայում են այն մասին, որ Ս.Գևորգի եկեղեցիները կառուցվել են նախկին, նախաքրիստոնեական կրոնական կառույցների տեղում, կամ այնտեղ, որտեղ նա ինքն է կամեցել: Մի անգամ նա հիշատակվում է Ս.Սարգսի հետ միասին, որտեղ վերջապես երևում է, որ նա չարիքի դեմ պայքարելու գործառույթ ուներ, սակայն ոչ մի կոնկրետ իրավիճակ ցույց չի տրվում: Ավելի լավ է, սակայն, նախ ծանոթանանք հայտնի ավանդազրույցներին.

* * *

Ավանդազրույց 1. Սեբաստիայի հարավ-արևելյան կողմում գտնվող Դեվոցա կամ Տեվքսե անունով վանքի մասին պատմում են, որ այս վանքի տեղում առաջ դևեր են բնակվել: Հետագայում դևերը հալածվել են և կառուցվել է Սուրբ Գևորգի վանքը: Այդ պատճառով էլ վանքը կոչվել է Դեվոցա կամ Տեվքսե վանք[80]:

* * *

Ավանդազրույց 2. Իրանի Ղարադաղ գավառում պահպանված ավանդազրույցը Սուրբ Գևորգի մասին վկայում է, որ այս սուրբն օգնել է ինքն իրեն: Այդ ավանդազրույցի համաձայն՝ Ղարադաղի Հուժ գյուղը թաթարների կողմից ավերվելուց, թալանվելուց և անմարդաբնակ դառնալուց հետո մի թուրք գյուղացի գալիս է, գյուղի Ս.Գևորգ եկեղեցու դուռը հանում, շալակում տանում, որ իր բնակարանի համար օգտագործի: Թուրքը դուռը տեղ հասցնելով,

76. *Գալուստեան Շնորհիք արք., Համաքրիստոնեական սուրբեր, Երեւան, 1997, էջ 155:*
77. *Գալուստեան Շնորհիք արք., Համաքրիստոնեական սուրբեր, էջ 155-156:*
78. *Օրմանյան Մ. Ճիսական բառարան, երևան, 1992, էջ 39:*
79. *Լալայան Ե. Ջավախք, երկեր, հ.1, էջ 290-291:*
80. *Ավանդապատում, էջ 256:*

որքան չարչարվում է, չի կարողանում դուռը շալակից ցած դնել. այն կպել էր մեջքին: Թուրքի համագյուղացիները, մտածելով, որ եկեղեցին Աստծո տունն է, և նրա դուռը հանել տանելը մեծ հանցանք է, համոզում են դուռը հանած թուրքին մատաղ խոստանալ և դուռը տանել, նախկին տեղը դնել: Վերջինս համոզվում է, մեկ ոչխար է մատաղ անում և դուռը ետ է տանում: Եկեղեցու մոտ դուռը պոկվում է թուրքի մեջքից և վերջինս այն վերստին տեղադրում է նախկին տեղում[81]:

Զարմանալի է, չէ՞, սուրբ Գևորգը ոչինչ չի անում մի ամբողջ գյուղ սրի քաշելու և ավերելու պահին, բայց պատժում է իր անունն ունեցող վանքի դուռը հանողին:

* * *

Ավանդապրույց 3. Վասպուրականի Անգղ գյուղի մոտի Անգղա վանքի մասին պատմում են, որ մի խումբ ճգնավորներ այստեղ ժամանակին սկսում են վանք կառուցել: Սակայն, նրանց ցերեկվա կառուցածը գիշերը քանդում են չարքերը: Այսպես կրկնվում է երեք օր: Ճգնավորները, հուսահատվելով, թողնում են և հեռանում: Ճանապարհին նրանց հանդիպում է հրեղեն նժույգով Սուրբ Գևորգը և առաջարկում է վերադառնալ ու շարունակել վանքի կառուցումը: Այդպես էլ անում են: Չարքերն այլևս չեն համարձակվում մոտենալ և վանքը մեկ օրվա մեջ ավարտվում և օծվում է[82]:

* * *

Ավանդապրույց 4. Մի օր լճափին հանգստացող հովիվները ջրի խորքից զորավոր խրխինջ են լսում և սարսափից ուշաթափվում են: Երբ ուշքի են գալիս, ավազների վրա տեսնում են ծիու սմբակների թարմ հետքեր... Ասում են, թե Ս.Սարգիսն ու Ս.Գևորգը հեծած այս լճի մեջ ապրող իրենց ձիերին՝ խելահեղ թափով հասնում են այնտեղ, ուր գլուխ է բարձրացնում և ավերներ է գործում չարը[83]:

* * *

Ավանդապրույց 5. Մեկ այլ զրույցում պատմվում է, որ «մի հայ գյուղացի քուրդ հովվին մի կտոր հող է նվիրում: Քուրդը ընտանիք կազմելով կամաց-կամաց հավաքում է գլխին իր բարեկամներին ու ցեղակիցներին, որոնք սկսում են նեղել հայերին: Հայերն ստիպված գաղթում են ուրիշ տեղ: Գյուղում մնացած ժամկոչին Ս.Գևորգը երազում պատվիրում է վերցնել եկեղեցու սեղանի տակ փորված մասունքով պուտուկը և հեռանալ գյուղից: Ժամկոչը հանում է պուտուկը և շալակելով գալիս է Մոկս: Մոկսի կառավարիչ Միր Հասանը, տեսնելով, որ ժամկոչի մեջքից լույս է ճառագում, կանչում է իր մոտ: Ժամկոչը փախչում է դեպի եղերով լեռը: Երբ Միր Հասանի մարդիկ հասնում են նրա ետևից, ժամկոչը պուտուկը դնում է մի քարի, կանգ է առնում: Քարը պատռվում է, ընդունում է պուտուկը և նորից փակվում: Ժամկոչի և ուրիշ քրիստոնյաների ջանքերով, այդ տեղում մի եկեղեցի է շինվում, որի անունը դնում են Փութկի (Պուտուկի) Սուրբ Գևորգ[84]: Այս նույն «Փութկի» Ս.Գևորգի վանքի մասին ասում են նաև, որ «Փութկի» նշանակում է «Փոթորկի», և պատմում են, որ «Փութկու կամ Փոթորկի Սուրբ Գևորգի վանքը միշտ կուենեար աքաղաղ մը, որը կգուշակեր ձյունափոթորիկը, կանչելով կամ լուռ մնչալով և կզգուշացներ ճամփորդները ճամփա ելլելե»[85]:

Ե.Լալայանը, որպես իրականություն, պատմում է, որ «Փութկու Ս.Գէորգ վանքում պահվում

81. *Ավագյան Ա. Իրանի Ղարադաղ գավառի հայերի ուխտավայրերը, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 1991, 282-283:*
82. *Ավանդապատում, էջ 248:*
83. *Ավանդապատում, էջ 86:*
84. *Ավանդապատում, էջ 252:*
85. *Թեմուրճյան Վ. Գամիրքի հայերը, ՀԱԲ, հ.1, Երևան, 1970, էջ 193:*

է մի աքաղաղ, որ «Ս.Գէորգայ դիկ» է կոչվում: Սա պատահական աքաղաղ չի լինում. պահանջվում է, որ Ս.Գէորգը մարդկանց երազում երևա և ասի, թե այսինչ աքաղաղը ինձ նվեր բերեք: Այս աքաղաղը վանքում կուսակրոնի կյանք է վարում, զրկված հավերի հասարակությունից, նա ազատորեն օգտվում է վանքի բոլոր բարիքներից և ապահովված է, որ ոչ ոք նրան վնաս չի հասցնի, և մեռնելիս էլ պատվով ու պատանքով կթաղվի Ս.Գէորգի եկեղեցու ժամատանը: Նա գույնզգույն ուլունքներով և արծաթե դրամներով զարդարված մի մանյակ էլ ունի, որ հաճախ գցում են նրա վիզը: Մարդկանց նա շատ ընտելացած է, հեշտությամբ բռնվում է, ազատ շրջում է եկեղեցու մեջ և գիշերում ժամատանը: Երբ սաստիկ բքից նեղված ճանապարհորդներն ապաստանում են այս վանքում, սրտատրոփ սպասում են, թե ո՞ր գիշերն աքաղաղը պիտի կանչի, որովհետև հավատում են, որ եթե փոթորիկը շարունակվելու լինի, աքաղաղը չի կանչի, ուստի և նրա կանչը համարվում է ազդարար լավ եղանակի, այնպես որ աքաղաղը կանչած միջոցին ճանապարհորդները պատրաստվում են և ճանապարհ ընկնում, այլևս չկասկածելով, որ այդ օրվա ընթացքում փոթորիկ է բարձրանալու: Ոմանք էլ բռնում են աքաղաղը և կանգնեցնում իրենց գլխի վրա. վերջինս արդեն սովոր լինելով հանգիստ կանգնում է: Ապա բռնողն ուխտ է անում, եթե պիտի արժանանամ ապահով տեղ հասնել, կամ եթե վիճակված է ինձ այսինչ աղջկա կամ տղի հետ ամուսնանալ, և կամ եթե այսինչ հիվանդը պիտի առողջանա, թող աքաղաղը երեք անգամ կանչի: Եվ շատ անգամ աքաղաղը մարդու գլխի վրա կանգնած կանչում է»[86]:

* * *

Ավանդազրույց 6. Կիլիկիայի Արամո գյուղի հյուսիսային կողմում գտնվող Սուրբ Գևորգ եկեղեցու մասին պատմում են, որ երբ այստեղ արարողություն է կատարվել, շատերը եկեղեցու հյուսային պատին տեսել են Սուրբ Գևորգի ստվերը: Ասում են, թե մինչև արարողությունը չի վերջացել, ստվերը չի անհայտացել[87]:

* * *

Ավանդազրույց 7. Ասում են, թե Շիրակի Բագարան գյուղի միջնաբերդի հինավուրց մատուռի մեջ թաղվածը ոչ թե Սուրբ Գևորգն է, այլ Գևորգ Մարզպետունի զորավարը: Նրա գերեզմանը ուխտատեղի է, ուր ամեն տարի սեպտեմբեր ամսին մեծ բազմություն է հավաքվում[88]:

* * *

Ավանդազրույց 8. Պատմում են, որ երբ նորաշին Անդրանիկին քահանան ուզում էր կնքել, հանկարծ դրսում լսվում է ձիու պայտերի ձայն: Ներս է գալիս մի մարդ, խլում է մանկանը քահանայի ձեռքից, թաթախում սուրբ ջրի մեջ, հետո նորից տալիս քահանային ու ինքն անհայտանում: Մարդիկ նկատում են, որ երեխայի մեջքին մի խաչ է դաջվել և գլխի են ընկնում, որ դա Սուրբ Գևորգն էր: ասում են նաև, որ երբ հետո Անդրանիկը կռիվ էր գնում, գնդակները չէին խոցում նրան: Ամեն անգամ կռվից վերադառնալիս նա թափ էր տալիս շորերը և գնդակները թափվում էին գետին: Սուրբ Գևորգի խաչը պահում էր նրան[89]:

Ավանդազրույցները վկայում են, որ այս զորականը օգնում է հիմնականում ինքն իրեն: Անտարբեր թույլ է տալիս, որ թուրքերը մի ամբողջ գյուղի բնակչություն կոտորեն ու

86. *Լալայան Ե. Վասպուրական, ԱՀ, գիրք 25, հ.2, Թիֆլիս,1914, էջ 45:*
87. *Ավանդապատում, էջ 258:*
88. *Ավանդապատում, էջ 270:*
89. *Ավանդապատում, էջ 298:*

տեղահանեն, սակայն չի թույլ տալիս, որ նույն անօրեններն իր եկեղեցու դուռը տեղահանեն (ավանդազրույց 2): Հանդուրժում է, որ քրդերը իրենց լավություն արած հայերին նեղեն, սակայն փախչող քրիստոնյաներից վերջին պահին միայն իր անունով վանք կառուցել է պահանջում (ավանդազրույց 5): Մարդկանց ցույց է տալիս իր զորությունը (ավանդազրույց 6), սակայն օգնության օրինակներ չի տալիս: Պահանջատեր է, եկեղեցիներ է կառուցել տալիս իր անունով (ավանդազրույցներ 3, 5): Երբ խոսք է գնում չարի դեմ պայքարելու մասին, նա հանդես է գալիս Սուրբ Սարգսի հետ (ավանդազրույց 4): Որոշ աղոթքներում նույնպես Սուրբ Գևորգը հանդես է գալիս Սուրբ Սարգսի հետ միասին.

Սուրբ Սարգիս զորավարին, սուրբ Գևորգ ձիավորին,
Սև օձ բռնեցին, կթեցին, մերեցին, սև ձձում զարկեցին,
Սև կարագ հանեցին, չար աչից դեղ էրին...[90]

Ինչպես տեսնում ենք աղոթքի տեքստից, ամենահաս և արագահաս Սարգիսը նաև «զորավար էր», իսկ Գևորգը պարզապես «ձիավոր էր»: Համարվում է, որ հայոց պատկերագրերում վիշապին հաղթող ձիավոր ասպետ զորականը կամ ասպետը Սուրբ Գևորգն է[91]: Աղոթքներում նրանից սովորաբար բուժում էին խնդրում, այսինքն՝ նրան վերագրվում էր բուժիչ գործառույթ[92]: Ինչո՞ւ պիտի վիշապին հաղթող քաջ ասպետը, զորավորը բուժիչ գործառույթներ ունենար: Պարզապես՝ որովհետև սուրբ էր, իսկ սրբից սպասվում էր հրաշագործ միջամտություն, այդ թվում՝ բուժում: Սա սպասվում էր և սպասվում է բոլո՛ր սրբերից: Ինչպես բոլոր սրբերից սպասվում է իղձերի կատարման օժանդակություն: Սուրբ Գևորգի տոնին ուխտի գնացողները «Ամենքն ունեին իրենց փափագը. որի ամուսինը կամ որդին էր գտնվում օտարության մեջ, որը երեխա չէր ունենում, որը՝ հիվանդի, իսկ ջահելներն էլ՝ սիրո տեր լինելու համար»[93]: Կարելի էր ասել, որ Սուրբ Գևորգը մասնավոր, առանձնահատուկ գործառույթներ չուներ, եթե չլիներ Արճեշի Ականց գյուղի Ս.Գևորգի վանք ուխտի գնացողների մասնավոր իղձը. այստեղ գնում էին պարանոցի վրա «խժխըժայ» կոչվող վերք ունեցող հիվանդների համար[94]: Բայց պետք է նկատի ունենալ, որ Ականց գյուղի Ս.Գևորգի վանք ուխտի գնացողները գնում էին գլխավորապես վանքի մոտ «սուրբ և հրաշագործ համարվող հացի ծառերի» զորության համար. այդ ծառերի առջև խունկ էին ծխում, մոմ վառում և դրանց տերևներով լվացվում[95]:

Թերևս սա էր պատճառը, որ Շիրակում Ս.Գևորգ անունով ուխտատեղին վերջ ի վերջո վերագրվում է Գևորգ Մարզպետունուն (ավանդազրույց 7): Քսաներորդ դարում առաջացած ավանդազրույցը, ըստ որի՝ Սուրբ Գևորգը «թրծել», անխոցելի էր դարձրել Անդրանիկին (ավանդազրույց 8), ակնհայտորեն միջնադարյան ժողովրդական ազատագրական շարժումը կազմակերպած Գևորգ Մարզպետունու հատկանիշները քսաներորդ դարի նույն գործառույթներն իրականացնող ժողովրդական հերոսին փոխանցելու խորհրդանշական միտումն է: Հնարավոր է, որ հենց ա՛յս Գևորգն է Անդրանիկ զորավարին «թրծողը», որը չնայած եկեղեցու կողմից չի սրբացվել, սակայն սուրբ է համարվում ժողովրդի կողմից:

Ամփոփելով կարելի է ասել, որ Սուրբ Գևորգը մարդկանց համար անհասկանալի սուրբ էր. անհասկանալի են նրա արած գործերը, անհասկանալի են մարդկանց սպասելիքները նրանից: Թերևս՝ նրան կարելի է եսասեր անվանել, բայց մարդկանց ընկալումներում չկա նաև եսասիրական բնութագիրը: Նրան վերաբերում են չեզոք անտարբերությամբ: Բայց նրա պահանջները պետք է կատարել, որովհետև նա կարող է պատժել:

90. *Անտոնյան Յու. Հայոց բուժարար սրբի մոդելի ձևավորման հարցի շուրջ, «Հայոց սրբերն ու սրբավայրերը», էջ 424:*
91. *Ժամկոչյան Ա., Հակոբյան Ն. Մեռոնաման աներ Սուրբ Գևորգի պատկերով, «Հայոց սրբերը և սրբավայրերը»:*
92. *Անտոնյան Յու. Հայոց բուժարար սրբի մոդելի ձևավորման հարցի շուրջ, «Հայոց սրբերն ու սրբավայրերը»:*
93. *Ասատրյան Գ. Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները, Երևան, 1990, էջ 95:*
94. *Լալայան Ե. Վասպուրական, էջ 42:*
95. *Լալայան Ե. Վասպուրական, էջ 42:*

Ս.Հակոբի ժողովրդական տոնախմբությունը, որը նկարագրված է ***«Սրբերը հայ ժողովրդական տոնակատարություններում»*** բաժնում, աղերսներ չունի Ս.Հակոբի անվան հետ կապված ավանդազրույցների հետ: Սրանցում իշխում է Ս.Հակոբի կողմից Նոյի տապանը տեսնելու իղձը, աղբյուրներ բխեցնելու կարողությունը և մի միջադեպ, որ տեղի է ունեցել երիտասարդ կանանց ու սրբի միջև, որի արդյունքում սուրբն օժտվել է ծյուն բերելու կարողությամբ: Սուրբ Հակոբը նույնպես անիծելու վատ սովորություն ուներ, և, դարձյալ ի հակադրություն Ս.Սարգսի, իրեն անարգողներին ոչ թե ինքն էր պատժում իր ֆիզիկական կամ մտավոր կարողություններով, այլ օգնության էր կանչում Աստծուն՝ անիծելով: Ծանոթանանք դրանց.

* * *

Ավանդազրույց 1. Սուրբ Հակոբը գիշեր-ցերեկ Աստծու փեշերը պոկում, աղոթում է, որ նա օգնական լինի իրեն Մասիս բարձրանալու համար: Քանի-քանի անգամ բարձրանում, հասնում է Մասիսի կեսը, քունը տանում է: Հրեշտակները գալիս են մտնում թևերը, իջեցնում, բերում սարի տակը: Շատ որ Աստծուն աղաչում-պաղատում է, Աստված ասում է Գաբրիել հրեշտակին. գնա Նոյի տապանի տախտակից մի կտոր կտրի բեր տուր Սուրբ Հակոբին: Գաբրիելը կատարում է Աստծու պատվերը և Սուրբ Հակոբը նոր հրաժարվում է Մասիսից[96]:

* * *

Մծբնի մեծ եպիսկոպոսը գնաց հայոց լեռները՝ Սարարադ լեռը, Արարատյան տերության Կորդվաց գավառի սահմանը: Նա մեծ տենչանքով Աստծուն աղաչում էր տեսնել Նոյի տապանը, քանի որ նա ջրհեղեղից հետո այս լեռան վրա էր կանգնել: Ս.Հակոբը ինչ երազում էր, Տերը նրան տալիս էր: Մինչ բարձրանում էր Սարարադ լեռան անջրդի անապատով, նա և նրա հետ գտնվող մարդիկ սաստիկ ծարավում են: Մեծն Հակոբը ծունր է իջնում, գլուխը դնում հողին և աղոթում: Եվ այնտեղ, որտեղ նրա գլուխն էր, աղբյուր է բխում և նրանք բոլորը ջուր են խմում: Մինչև այսօր այդ աղբյուրը կոչվում է Հակոբի աղբյուր[97]:

* * *

Ավանդազրույց 2. Մասիս լեռան ստորոտին գտնվում է Ս.Հակոբա աղբյուրը: Երբ մորեխ ու թրթուր է լինում, շրջակա բնակիչները այստեղից ջուր են բերում և ցրում դաշտերում: Ջուրն իր հետ բերում է վնասակար միջատներին ոչնչացնող սև ու սպիտակ փետրավոր թռչուններ (թքի ղուշ կամ Ս.Հակոբա սարյակ անունով):[98] Ե. Լալայանը լոռեցիների մասին պատմում է, որ «Երբ մորեխն արտերը կոտորում են, գնում են Մասիսի վրայից Ս.Հակոբա աղբյուրի ջրից բերում և... սրսկում արտերին: Իսկույն երևում են ժեռ կոչվող թռչունները, որոնք կոտորում են մորեխներին»[99]: Հեռավոր ու մոտիկ տարբեր տեղերից մարդիկ խմբերով գնում էին այդ ջուրը բերելու[100]:

* * *

Ավանդազրույց 3. Սքանչելի Հակոբ եպիսկոպոսը և իր հետինները գալիս հասնում են

96. *Ավանդապատում, էջ 371:*
97. *Ավանդապատում, էջ 370:*
98. *Ավանդապատում, էջ 97:*
99. *Լալայան Ե. Երկեր, հ. 3, էջ 196:*
100. *Լալայան Ե., ԱՀ, գիրք 17, Թիֆլիս, 1908, էջ 96-97:*

Ռշտունյաց երկաթահանքերով և կապարահանքերով լեռը: Լեռան ստորոտում նրանք խիստ ծարավում են, քանի որ օրեր շարունակ չէին կերել և չէին խմել: Ծնրադրում է սուրբը, գլուխը դնում հողին և աղոթում: Անմիջապես աղբյուր է բխում, և բոլորը խմում են: Եվ այնպես, ինչպես Սարարադ լեռան դեպքում էր, Ռշտունյաց ծովեզերքի Ընձաքիարս լեռան ստորոտին մինչև այսօր կա այդ աղբյուրը, և այն նույնպես կոչվում է Հակոբի աղբյուր[101]:

* * *

Ավանդապրույց 4. Թուրքերը, գրավելով Ակն քաղաքի մոտ, Տափակ ծոր կոչված վայրում գտնվող Սուրբ Հակոբի վանքը, ուզում են արևելյան դուռը դարձնել դեպի հարավ: Ինչքան չարչարվում են, չեն կարողանում. դուռը միշտ գտնվում է իր տեղը և բացվում դեպի արևելք[102]:

* * *

Ավանդապրույց 5. Պատահեց, որ Մծբնա հայրապետ Սուրբ Հակոբը մոտենում էր Մասիսի ստորոտի Արտամետ գյուղին, և իր ճանապարհին մի աղբյուր կար: Այնտեղ կանայք և աղջիկներ էին լողանում: Նրանք չամաչեցին հայրապետից և չծածկեցին իրենց ոտքերը, այլ նրան արհամարհելով՝ անամոթաբար շարունակեցին իրենց գործը, իսկ ոմանք նույնիսկ կշտամբեցին Աստծո մարդուն: Սուրբն անիծեց աղբյուրը, այն ցամաքեց, իսկ աղջիկների մազերը ճերմակեցին պառավի նման[103]:

* * *

Տարբերակ. Սուրբ Հակոբը եկավ Տոսպ գավառի Արտամետ գյուղը: Այստեղ աղջիկները աղբյուրի մոտ լվացք էին անում: Սրանք չամաչեցին Սրբից, և նա անիծեց. աղբյուրը ցամաքեց, իսկ աղջիկների մազերը ճերմակեցին: Տեղի բնակիչները խնդրեցին Սրբին աղբյուրը կրկին բխեցնել և աղջիկների մազերը սևացնել: Սուրբն աղոթեց, աղբյուրը կրկին բխեց, բայց աղջիկների մազերը չսևացրեց, քանի որ նրանք այդ տեսնելով չէին մոռանա Աստծո երկյուղը[104]:

* * *

Տարբերակ. Պատմում են, որ մի օր Սուրբ Հակոբին ծաղրում են աղբյուրի մոտ լվացք անող աղջիկները: Սուրբը բարկանում է և անիծում, որ նրանց մազերը ճերմակեն: Աղջիկները, տեսնելով իրենց մազերի ճերմակելը, ամոթահար, լալագին խնդրում են. «Հա՜յր սուրբ, հա՜յր, ի՞նչ է լինելու մեր հալը»: Սուրբը տխրում է և, մինչ լեռն ի վեր քայլում է, անընդհատ լսում է. «Հա՜յր սուրբ, հա՜յր, ի՞նչ է լինելու մեր հալը»: Չի դիմանում Սուրբը, ծունր է չոքում և բազկատարած վերև նայում. «Տէր իմ, Տէր, ես մեղա, ծանր պատիժ տալով նրանց: Գթա, Տէր, այս աղջիկներին, և որպեսզի ծածկվի նրանց մազերի ճերմակությունը, մի շնորհք տուր ինձ, Տէր. ամեն անգամ, որ մորուքս շարժեմ, թող բովանդակ աշխարհը ճերմակի, ձյունով ճերմակի»: Եվ երկնքից մի ձայն է լսվում. «Եղիցի»: Այդ օրվանից մինչև այսօր ամեն անգամ Սուրբ Հակոբը մորուքը թափ է տալիս ճիշտ այն օրը, երբ այն աղջիկների համար աղոթեց, և երկինքը ձյուն է դնում: Ժողովուրդն էլ երախտապարտ է, որ այդ ձյունը ծածկում է իրենց հողն ու արտը[105]:

---

101. *Ավանդապատում, էջ 107:*
102. *Ավանդապատում, էջ 255:*
103. *Ավանդապատում, էջ 371:*
104. *Ավանդապատում, էջ 371-372:*
105. *Տեր Մինասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 169:*

* * *

Ավանդազրույց 5. Ասում են, թե Սուրբ Հակոբը ժամանակին բարձրացել է Ռշտունյաց գավառի Ընձաքիարս կամ Կապուտկող լեռան գագաթը և այնտեղից գլուխը բաց աղեծք է կարդացել ամբողջ գավառին, որովհետև Մանաճիրի անունով Ռշտունի մեծ իշխանը, հակառակ նրա թախանձանքներին, ծովն էր նետել ծերունի հայրապետի անմեղ սարկավագներին: Սրբի աղեծքը կատարվում է, և Ռշտունյաց գավառում երեք տարի շարունակ անձրև չի գալիս[106]: Փավստոս Բուզանդը, այս պատմությունը պատմելով հետևյալ մանրամասներն է հաղորդում. «Աստծու քահանայապետ Սուրբ Հակոբը բարձրացավ լեռան գլուխը և անիծեց այն աշխարհը, որպեսզի այնտեղից իսպառ խռովությունը չպակասի, նրա համար, որ նրանք չլսեցին տերունական խաղաղության խոսքին: Հետո Սուրբ ավետարանիչ եպիսկոպոսը գնաց իր տեղը: Իսկ նրա գնալուց երկու օր հետո այդ գավառում մահացավ Մանաճիրհի կինը իր յոթ որդիներով. հետո ինքն էլ ծակոտվելով չարաչար մահով գնաց այս աշխարհից: Եվ նրա ասածի պես՝ այն օրից ի վեր խաղաղություն չեղավ այս աշխարհում»[107]:

* * *

Ավանդազրույց 6. Մի անգամ Ս.Հակոբը երևում է Լեճանցոց (Լոռու գյուղերից) և ասում, թե՝ բերեք, մատաղ արեք: Սրանք չեն անում, կայծակը խփում, մի աղջիկ է սպանում[108]:

* * *

Ավանդազրույց 7. Լոռու Ամոճ գյուղի մոտ, մի բլրակի վրա գտնվում է Ս.Հակոբ ուխտատեղի, ուր կան մի քանի սուրբ համարված ծառեր՝ շորի կտորներով ծածկված: Պատմում են, թե Ս.Հակոբը յուր գավազանը դրել է այդտեղ, որը բուսել՝ այդ ծառերն է դարձել[109]:

Այսպիսով, Սուրբ Հակոբի մասին պատմող զրույցները վկայում են, որ նա աղբյուր բխեցնելու կարողություն ունի, ընդ որում՝ այդ աղբյուրների ջրերը սովորաբար օգտակար են: Նա Տիրոջ հետ ուղղակի կապ ուներ, և Տերը նրա խնդրանքները սովորաբար կատարում էր: Սակայն՝ Սուրբը զարմանալիորեն իր այդ մեծագույն շնորհը մարդկանց ի շահ քիչ է գործածում, ընդհակառակն, մարդկանց հետ հարաբերություններում նա ավելի շատ անիծում է, և քանի որ Տերը նրան շատ բարեհաճ էր վերաբերում, նրա աղեծքները կատարվում են: Ցավալիորեն, սակայն, նրա աղեծքից տուժում են նաև անմեղ մարդիկ, ինչպես 5-րդ ավանդազրույցում է: Նրա աղեծքները երբեմն շատ դաժան են, ինչպես հուշում են 5-րդ և 6-րդ ավանդազրույցները, երբ իրեն չլսելու համար նա մարդ է սպանում կամ ամբողջ երկիր խռովության մեջ գցում, երբեմն՝ ավելի շուտ խրատատու են: Նա վրիժառու է, և այդ վրեժը պատճառաբանված չէ: Չգիտես ինչու նա Տիրոջ օգնությունը չի հայցում անհնազանդ ու խստաբարո Մանաճիրհին մեղմացնելու ծրագրերում, և անկարող լինելով այդ անել ինքնուրույն, անիծում է ողջ Ռշտունյաց աշխարհը: Այսպիսով՝ նա կարող է նաև դաժան լինել: Բայց մարդիկ նրանից առանձնապես չեն վախենում, միաժամանակ նրան չեն վերաբերում ոչ պատկառանքով, ոչ սիրով, ոչ գորովանքով... Այնուամենայնիվ՝ տարին մի անգամ նրա անունով մատաղ են անում (տես Սուրբ Հակոբի տոնը): Ճիշտ է, այդ մատաղն ընդամենն աքաղաղ է և չի կարող համեմատվել Ս.Կարապետին արվող զոհաբերությունների հետ:

106. *Ավանդապատում, էջ 372:*
107. *Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 83-84:*
108. *Լալայան Ե. Երկեր, հ.3, էջ 197:*
109. *Լալայան Ե. Երկեր, հ.3, էջ 197:*

Սուրբ Հակոբը գութ և զղջալու ունակություն ունի և չի հապաղում Տիրոջից շնորհ խնդրել՝ շտկելու իր իսկ անեծքի հետևանքները:

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿԻ ԿԵՐՊԱՐԸ

1. «Թուխ մանուկը» սրբավայրերի, ուխտավայրերի անուն է: Դրանք կամ քարակույտ են, կամ՝ խաչքար, կամ՝ փոքրիկ մատուռ, որի ճարտարապետական հորինվածքը յարզագույն է. այսինքն դրանք ուղղակի քարերից սարքված փոքրիկ կառույցներ են, որի կառուցման համար առանձին հմտություն և նույնիսկ վարպետություն չի պահանջվում: Գ.Արվանձտյանցն այսպես է բնութագրում այդ կառույցները. «Ամենափոքրիկ մատուռ մը, կամ՝ առանց կավաշաղախի շարված քարերով շենք մը, որո մեջ տղա մ՛անգամ չպարունակիր, խաչքար մը, ողջ կամ կոտրած, կամ գերեզմանաձև շենք մը, և ադոնց մեջ ճրագ ու խնկանոց, ուր կերթան բարեպաշտ կանայք և ցավագար կամ ախտավոր անձինք ձեթ և մոմ վառելու, խունկ ծխելու... Թուխ մանուկն այս է: Թե փողոցներու մեջ լինի այն, թե տուներու մեջ և թե այնպիսի տան մը կամ այգիի մը կամ արտի մը մեջ, զորս հայոցմեն առած լինին տաճիկները, այսու ամենայնիվ հայերը ազատ են իրենց սուրբին ուխտի երթալու...»[110]: Առարկայորեն Թուխ մանուկ սրբավայր մատուռ կարող էր կառուցել ամեն ոք, նույնիսկ՝ կանայք:

2. Թուխ մանուկ սրբավայրերը շատ էին, համարյա չկար որևէ բնակավայր, որ Թուխ մանուկ կամ նույնիսկ մի քանի Թուխ մանուկ հուշարձան, ուխտավայր չունենար: Նույնիսկ բուն Աղվանքի տարածքում գտնվող հայկական ճալեթ գյուղն ուներ Թուխ մանուկ, որը հիշվում է կախարդահմայական բանաձևերում.

Գանձասարայ սուրբ Նըշանին,
Ջալեթու Թուխ մանուկին[111]:

3. Ամենօրյա կենցաղում Թուխ մանուկին հիշում էին գլխավորապես պառավները՝ տարեց կանայք, որոնք կիրակի օրերը մոմ էին վառում նրա անունով, խունկ ծխում: «Կիրակնամուտին պառավները ձեթ էին տանում՝ Թուխ մանուկի ճրագները վառում»[112]: Վասպուրականի հայերի մեջ տարածված հավատալիքները նկարագրող Ե.Լալայանը հիշում է Վան քաղաքի Այգեստան թաղամասի հնագույն մի բլրի գագաթին գտնվող մատուռը, որը Թուխ մանուկ էր կոչվում: «Ամեն կիրակնամտին վանեցի հայ կանայք ուխտ են գնում այս ուխտատեղին, մոմ վառում, խունկ ծխում, և ձեթ ածում նրա կանթեղի մեջ: Պատմում են, թե երբ կանթեղի ձեթը պակասում է, մատուռի շուրջը լույս է վառվում, և այս տեսնելով վանեցիներն շտապում են ձեթ տանելու: Հաճախ աղոթողների բերանից լսվում են հետևյալ խոսքերը. «Ով թուխ (սև) մորուս Թուխ մանուկ, դու իմ մանուկը սիվտակ մորուս անես, արևշատություն տուր իմ կտրիճին՝ իր խոր տան ճրագ էլնի, գա քեզ հա՛ ճրագլոս պիրի, քո կիւրակնամուտ վառ պահի»»[113]: Թուխ մանուկին հիշում և մոմ էին վառում նաև այն օրերին, երբ գիշերը տան անդամներից մեկը վատ երազ էր տեսած լինում, խնդրելով, որ Թուխ մանուկը կանխարգելի վատ երազի իրականացումը[114]: Թուխ մանուկին կանայք իրենց աղոթքներում հիշում էին շատ հաճախ, նրանից օգնություն էին ակնկալում ամենատարբեր առիթներով՝ հիվանդության բժշկում, տեսած վատ երազի կատարման կանխարգելում:

110. *Արվանձտյանց Գ. Գրոց ու բրոց, Երկեր, հ.1, Երևան, 1978, էջ 79-80:*
111. *Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, «Թուխ մանուկ», Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001, էջ 102:*
112. *Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, էջ 97:*
113. *Լալայան Ե. Վասպուրական, էջ 55:*
114. *Դաշտային ազգագրական նյութեր:*

4. Վերոհիշյալ այցելություններից զատ Թուխ մանուկ էին գնում հիվանդները: Որոշ տեղեր Թուխ մանուկի բուժիչ գործառույթը շատ որոշակի հիվանդությունների վրա էր տարածվում, ինչպես Արճակում, որտեղ նա բուժում էր «էկզեմա, կրծքի վերք, ականջացավ... Թուխ մանուկին վերագրում էին նաև վատ երազը բարի դարձնելու զորություն: Թուխ մանուկին մատաղ անելու սովորություն չկար: Պարզապես գնում էին ու նրա հողից մի պտղունց վերցնում, ցանում վերքին...»[115]: Այլ տեղերում նա բուժում էր այն ամենը, ինչի համար դիմում էին՝ ոտքի ցավ, որովայնի ցավ, գլխացավ, երեխայի փորլուծ...[116]: Շատ հեղինակներ մասնավորեցնում են Թուխ մանուկների բուժիչ զորությունը ջրերի միջոցով. «Թուխ մանուկներու ջրերը հիվանդություններ կը բժշկեն»,- վկայում է Դ. Խաչկոնցը[117]: «Բաղեշի մեջ ջուրին ակը սուրբ համարված է, Թուխ մանուկներու ջուրերը ախտաժետներուն բժշկություն կը պարգևեին»[118]:

5. Ամենօրյա այցելություններից զատ, սակայն, Թուխ մանուկ սրբերն ու սրբավայրերն ամենատարբեր ձևերով ընդգրկվում էին տոնական հանդիսությունների մեջ: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Թուխ մանուկ հուշարձաններ այցելելը բոլոր գլխավոր տոների անբաժան մասն էր: Թուխ մանուկ սրբավայրեր գնում էին որպես ուխտավայր՝ տոնական զվարճահանդեսները շարունակելու:

5.1. Վերափոխման տոնին քահանան մկրատով կտրում էր մի ողկույզ, բարձրացնում այն արևի դիմաց և մաղթում. «Երկնքի լույս Թուխ-մանուկներեն ցողված են այս մեր այգիների ողկույզները: Աստված օրհնեց մեր այգիները Նոյի տապանով, Մովսեսի տապանակով, Քրիստոսի Սուրբ Խաչով, Աստվածածնի արցունքով, Լուսավորչի լույս հավատով, Հաց ու գինի, Տեր կենդանի: Մեր այգիներն էլ միշտ պիտի դալար լինեն, ողկույզները՝ միշտ անսպառ»[119]: Օրհնված խաղողից այնուհետև ողկույզներ էին տարվում դրվում լուսաղբյուրների և խաչքարերի վրա: Ա.Մնացականյանը մասնավորեցնում է Ս.Աստվածածնի տոնակատարության ընթացքում Թուխ մանուկ սրբավայրերն այցելելու սովորույթը. Ալաշկերտում հավաքվել են Թուխ մանուկ հուշարձանի մոտ, որ քարակույտ էր, և կոխոտել «այն վայրերն, ուր Թուխ մանուկներ քայլած են»[120]: Համզաշեխ գյուղի մոտի Թուխ մանուկի մասին նույնպես վկայվում է, որ «ուխտագնացությունը կը պատահի օգոստոսին՝ Ս.Աստվածածնա տոնին»[121]: «Խաստուրա Ս.Աստվածածին վանքը ուխտի եկող հասարակությունը Թուխ մանուկ ևս պիտի գնար, որ իր ուխտը կատարյալ համարվի»[122]: «Մայիսի 7-ը Մեռոնի կիրակի է,- ասում է Վ.Տեր Միհնասյանը, - Թուխ-մանուկների և լուսաղբյուրների մոտ խնջույքի օր»[123]:

5.2. Սուրբ Խաչին «ամեն հայ մայր վանքերում իրենց ուխտը կատարելուց հետո գնում են Թուխ մանուկներ, որոնք անհիշելի դարերից ի վեր մանուկ սրբեր լինելով հանգչում են որևէ Խաչքարի... կամ սուրբ ծառերի տակ, քանի որ այդ ծառերն էլ են դարեր ի վեր Թուխ-մանուկների մարտիրոսության վկա եղել..., և այդ ծառերի տակ մեր հները հազարավոր տարիներ առաջ արդյո՞ք հմայություններ չեն արել <պրոբլեմներից> ազատվելու <նպատակով>: ...Լուսաղբյուրների կամ Խաչաղբյուրների ջրերից խմելով, զովանալով, երգում են անդադար այդ ուխտավայրերը գովերգող երգեր, ինչպես, օրինակ.

---

115. *Ավագյան Ս. Արճակ,էջ 97:*
116. *Իմ դաշտային նյութերը վկայում են, որ Արզնիի ձորում գտնվող Թուխ Մանուկին շրջակա բնակավայրերի բնակչությունը դիմում էր ամենատարբեր առիթներով և բոլոր հնարավոր հիվանդությունների դեպքում:*
117. *Բիւրակն,1989, էջ 202:*
118. *Աշճյան Մեսրոպ արք., Թուխ Մանուկ, «Թուխ մանուկ», Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001, էջ 17:*
119. *Տեր Միհասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 157:*
120. *Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, էջ 91, 101:*
121. *Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, էջ101:*
122. *Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, էջ101:*
123. *Տեր Միհասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 130:*

Խաչ աղբըրիկ, Խաչ աղբըրիկ,
Ինչ անուշ է քե պաղ ջրիկ,
Աջ կողմիդ է ջրջրիկ,
Ձախ կողմիդ է ջլվըլիկ:
Խաչ աղբըրի կիգայ կաթ կաթ,
Հոն լոգնողը կ'եղնայ երկաթ:
Խաչ աղբրկայ ջուրն անուշ է,
Հատ մի արախ սիրտէս կ'ուզե:

Ուխտաւորներ, ուխտաւորներ,
Եկեք տեսեք սուրբ-խաչ քարեր,
Թուխ-մանուկ խաչ հոն է կայներ,
Սուրբ ծառին տակ լուսն է ցեթեր:

Սուրբ Թուխ-մանուկ խաչն է օրհներ,
Խաչ աղբրկայ ջուրն ու քարեր,
Լուսն է ցեթեր մըջ աղբըրին,
Կամար կեապեր վերեւ գլխին:

Մեռնիմ քըզի Թուխ-մանուկ խաչ,
Ղուրպան եղնիմ դռանդ առաջ:

Քրիստոս Աստված, դու ողորմէ,
Իմ ցաւերը դու բժշկէ.
Սուրբ Թադեոս[124] դու հիմ դըրիր,
Թուխ մանուկ ժամ դու եիս չիներ»[125]:

Այս երգը վկայում է, որ Թուխ մանուկի օրհնության զորությամբ Խաչ աղբյուրի ջուրը ձեռք է բերել այդ ջրով լողացողին երկաթի նման ամրություն հաղորդելու, գուցե՝ անխոցելի դարձնելու ունակություն. «Սուրբ Թուխ-մանուկ խաչն է օրհներ Խաչ աղբրկայ ջուրն ու քարեր» և նրա օրհնության հետևանքով «Խաչ աղբըրի կիգայ կաթ կաթ, հոն լոգնողը կ'եղնայ երկաթ»:

5.3. Համբարձման տոնին Թուխ մանուկ հուշարձանները զարդարում էին ծաղիկներով:

6. Գյումրիում երիտասարդներին համքարությունների մեջ ընդգրկելիս մկրտում էին «Թուխ մանուկ» հուշարձաններում[126]:

Թուխ մանուկին նվիրված տոն չկար: Պաշտոնական սրբացուցակում չլինելով, նրա անունով եկեղեցիներ չեն կառուցվել: Գործնականում նույնիսկ ավանդազրույցներ չկան: Ամենահամեստ սուրբն է: Նրան մատաղներ չեն անում, զոհեր չեն մատուցում, նրա հիշատակին պաս չեն պահում, նրանից որևէ վտանգ, սպառնալիք չեն տեսնում, նա որևէ բան մարդկանցից չի պահանջում, ոչ իսկ եկեղեցիներ: Թուխ մանուկը մարդկանց չի պարտավորեցնում, իր օգնության դիմաց որևէ անձնազոհություն չի պահանջում, որևէ նյութական զոհողություն չի ակնկալում: Նրան շատ հաճախ էին դիմում: Ո՞վ է այս Սուրբը, ինչո՞ւ է այսքան անշահախնդիր, և առհասարակ սո՞ւրբ է արդյոք:

---

124. *Սովորաբար տրվում է այն սրբի անունը, որի անունով ուխտավայրում երգվում է:*
125. *Տեր Մինասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 160-161:*
126. *Սեդրոսյան Կ. Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, ՀԱԲ, հ. 6, Երևան, 1974, էջ 235:*

Հետազոտողներից շատերը գտնում են, որ Թուխ մանուկն իր նախնական շրջանն սկսում է նախաքրիստոնեական հայկական մշակույթից, և փորձում են հասկանալ նրա սկզբնական բնույթն ու հետագա ձևափոխությունները: Նրան համարում են նախնական քաջամարտիկ հերոս և համեմատում են հյուսիսկովկասյան, մասնավորապես նաև՝ օսական Նարտերի «սև հերոսների», «սև պատանու» կերպարների հետ, գտնելով, որ դրանք ազգակից են հնդեվրոպական «սև հերոսների» հետ[127]: Հր.Աճառյանը «մանուկ» բառը համարում է բնիկ հայերեն և հետևյալ իմաստներն է տալիս. ա/ երեխա, բ/ պատանի, սպասավոր, զինվոր, գ/ փոքր, մանկահասակ[128]: Ա.Մնացականյանը գտնում է, որ «մանուկ» բազմիմաստ բառը «Թուխ մանուկի» դեպքում օգտագործվել է «կտրիճ», «քաջ», «արի», «ճարտար» իմաստներով[129]: Ա.Պետրոսյանը, լեզվա-մշակութային վերլուծություն կատարելով, Թուխ մանուկի կերպարի զուգահեռներ է բերում Վահագնի հետ և ապա ընդհանրություն է տեսնում Թուխ մանուկի «թուխ»-«սև» լինելու և Մամիկոնյանների տոհմական հովանավոր Գիսանեի գույների ու կերպարի մեջ, քանի որ Գիսանեն «սև էր և մազավոր»: Քանի որ Գիսանեին հետագայում հաջորդեց Սուրբ Կարապետը, Մեսրոպ Արք. Աշճյանը ենթադրում է, որ Թուխ մանուկի մեջ ընդհանրացել են Վահագնի, Գիսանեի և ետնագույն Սուրբ Կարապետի կերպարների որոշ գծեր[130], հատկապես այն դեպքում, երբ նրա մեջ բացահայտում են ամպրոպային բնույթի աղերսներ[131]: Թերևս պատահական չէ, որ Թուխ մանուկի գովքը երգող և սիրո փափագին հագուրդ տվող իղձը Թուխ մանուկի լվացված ջրին հաղորդակցվելու միջոցը պարունակող Անպոչ ճգնավորի երգը Մշո Սուրբ Կարապետում էր երգվում կամ, գոնե, համարվում է, որ այնտեղ է ծնվել: Գուցե նույն, մի փոքր անորոշ զուգահեռն ունի Սուրբ Կարապետի վանքում երգվող երգի այն հատվածը, որտեղ արտահայտվում է Սուրբ Կարապետի վանքի իննակունք լուսավոր ջրերի մոտ գլուխը դնել քնելու և հոգին Թուխ մանուկին տալու ցանկությունը.

Ինն աչերու լուսաղբիւրներ,
Կաթ կու կաթեն լոյս լոյս ջրեր...
Ի հոն դընեմ գլխիկս քարին,
Հոգիս ի տամ Թուխ մանուկին...[132]

Ջեյմս Ռասսելը դիտարկում է «մանուկին»՝ ռազմիկին նրա բոլոր գույներով՝ սև, կարմիր, ոսկեգույն, շիկահեր և նրա գործառույթները տեսնում է գործնականում համայն հնդեվրոպական մշակույթում՝ որպես փրկիչ, ջրաբեր, վերածնվող, մարտիրոս, հերոս և այլն[133]:

Ա.Մնացականյանը ենթադրում է, որ «Թուխ մանուկը» հետագայում դարձել էր երիտասարդների, հատկապես կտրիճ ռազմիկ երիտասարդների և նրանց միությունների պաշտելի և օրինակելի կերպարը, որի օրինակով դաստիարակվում էին այդ միությունների անդամները, դրա հաստատումներից մեկը տեսնելով այն սովորույթում, ըստ որի՝ Գյումրիում երիտասարդներին համքարությունների մեջ ընդգրկելիս մկրտում էին «Թուխ մանուկ» հուշարձաններում[134]:

Որոշ հետազոտողներ Թուխ մանուկների պաշտամունքը կապում են ջրերի պաշտամունքի

127. *Պետրոսյան Ա. «Թուխ Մանուկ». հնագույն ակունքները: «Թուխ մանուկ», Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:*
128. *Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, հ. 3,Երևան, 1977, էջ 255:*
129. *Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, էջ 94:*
130. *Աշճյան Մեսրոպ արք., Թուխ Մանուկ, էջ 16-19:*
131. *Պետրոսյան Ա. «Թուխ Մանուկ». հնագույն ակունքները; Այդինյան Ա. «Թուխ Մանուկի» պաշտամունքի որոշ արտացոլումներ հայրեններում, «Թուխ մանուկ», Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:*
132. *Տեր Մինասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 10:*
133. *Russel R.James, The Armenian shrines of the black youth (T'ukh Manuk), «Թուխ մանուկ» նստաշրջանի նյութեր», Երևան, 2001:*
134. *Սեղբոսյան Կ. Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, էջ 235:*

գաղափարների հետ: Ա.Մնացականյանը նրա ջրային էության հետ կապված բանահյուսական նյութի ընտրանի ունի, որոնցից մեջբերենք երկուսը.

Այդ վայրի լեռնեդ ի վայր՝
Ջուրն ի շինուդ մէջն անցաներ, հա՜յ,
Թուխ մանուկ մի դուրս ելեր,
Ձեռքն ու զերեսն էր լուացեր, հա՜յ...[135]

Այս երգի ավելի ընդարձակ տարբերակը հիշում է Վահան Տեր Միհասյանը, որպես Մշո Ս.Կարապետին ծառայող Անպոչ ճգնավորի սիրակարոտ երգի տարբերակ: Նրա գրառած երգն ավարտվում է Թուխ մանուկի ձեռքն ու երեսը լվացած ջրով սնվող աղբյուրում սիրո ծարավը հագեցնելու փափագով.

- Այդ վայրի լեռներէն ի վայր,
Ջուրն ի շինիդ անցանի, ա՜յ,
Թուխ-մանուկ մի դուրս էլեր,
Ձեռք ու զերես է լուացեր, ա՜յ,
.....
.....
- Ջուր դու, ի յո՞ր աղբիւր կ'երթաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, ա՜յ:
- Ես այն աղբիւր կ'երթամ,
Որ գայ քո եարն ու ջուր խմէ,
Դէմ գամ, ըզդունչըն պագնեմ,
Ապա սիրովն յագենամ:[136]

Մեկ այլ՝ Ներսես Սարգիսյանի գրառած երգը թե՛ Ա. Մնացականյանը, թե՛ Մեսրոպ Աշճյանը համարում են Թուխ մանուկների կողմից ջուր բխեցնելու զորության վկայություն[137].

Ես ունէի երկու թուխ ու թամ կտրիճ,
Անչափ քար ու խիճ երին,
Ինչուր հանին աղբուրն ի սահրին,
Որն որ էն աղբուրի ջուրն խմէր՝
Ամեն կտրիճ ու մանուկ բերեր[138]*:*

Այս երգը վկայում է նաև, որ «Թուխ» կտրիճների կողմից քար ու խիճից մաքրած և բխեցրած աղբյուրի ջրից խմողները «ամեն կտրիճ ու մանուկ բերեր», այսինքն՝ բոլորը երեխա կունենան: Այսպիսով, ջուր բխեցնելուց զատ, Թուխ կտրիճն այն օժտում էր նաև պտղաբերությանն օժանդակելու զորությամբ: Ավելին, նրանց բխեցրած ջրից խմողների զավակները «կտրիճ ու մանուկ» էին:

Վերը տեսանք, որ Թուխ մանուկի օրհնության զորությամբ Խաչ աղբյուրի ջուրը ձեռք է բերել այդ ջրով լողացողին երկաթի նման ամրություն հաղորդելու ունակություն:

Թուխ մանուկին աղաչում էին բերքն անվնաս պահել, թերևս նկատի ունենալով նրա ամպրոպաբեր, անձրևաբեր զորությունը.

135. *Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ»..., էջ 105:*
136. *Տեր Միհասեան Վ. Անգիր դպրութիւն, էջ 44;*
137. *Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ»..., էջ 105; Աշճյան Մ. «Թուխ Մանուկ», էջ 17:*
138. *Աշճյան Մեսրոպ արք., Թուխ Մանուկ, էջ 17:*

Մեռնիմ քըզի, սըբ Թուխ մանուկ,
Ճուղ ճուղ կորեկ թորկես կայնուկ...[139]

Թուխ մանուկը կարող էր չարերին, դևերին վերացնել, ինչպես վկայվում է հետևյալ երկտողում.

Ախտավորաց բժիշկ ես դու,
Դիվահարաց սրբիչ ես դու...[140]

Թվում է, թե գործ ունենք անձի հետ, ինչպես սովորաբար սրբերի դեպքում լինում է. Սուրբ Սարգիս, Կարապետ, Հակոբ..., Սըբ Թուխ մանուկ: Սակայն՝ Թուխ մանուկի առարկայական կերպարանավորումը չկա: Արդեն տեսանք նաև, որ Թուխ մանուկները հիշվում են նաև հոգնակի և ոչ առարկայական. «Երկնքի լույս Թուխ մանուկներեն ցողված են այս մեր այգիների ողկույզները...»: Այսինքն՝ երկնքում կարծեք թե Թուխ մանուկները շատ են:

Այսպիսով, Թուխ մանուկ/մանուկները կտրիճ է/են, զինվոր, քաջարի: Նա/նրանք անընդհատ մեր կողքին է/են, ամեն րոպե կարելի է դիմել նրան/նրանց: Նրա/նրանց զորություններն են.

- *բուժել,*
- *ջրեր բխեցնել,*
- *ջրերի միջոցով անխոցելի, «երկաթ» դարձնել մարդկանց,*
- *ջրերի միջոցով անզավակներին կտրիճ մանուկներ պարգևել,*
- *խափանել չար երազների կատարումը,*
- *նպաստել բերքին,*
- *թերևս կարող են ամպրոպ ու անձրև բերել,*
- *նա/նրանք օրինակելի վարք ունի/ունեն երիտասարդների համար և օրինակ է/են ծառայում նրանց,*
- *նա/նրանք անշահախնդիր է/են, ոչինչ չի/չեն սպասում և ոչինչ չի/չեն պահանջում:*

Ի՞նչ էին «տալիս» Թուխ մանուկին.

- *Նրա անունով կանայք մոմ էին վառում ու խունկ էին ծխում,*
- *տոնական ուխտագնացություններից հետո այցելում էին Թուխ մանուկ հուշարձաններ,*
- *Համբարձմանը ծաղիկներով զարդարում էին Թուխ մանուկները,*
- *Վերափոխման տոնին օրհնած խաղողի ողկույզներ էին տարվում Թուխ մանուկներին:*

Հնագետ Հ.Հակոբյանը, վերլուծելով հունա-հռոմեական, իրանական, հնդկական կրոնական մշակույթում երբեմնի առկա այն ընկալումը, ըստ որի՝ մարդու մահից հետո նրա հոգին կարող էր ձեռք բերել երկնային լուսավոր գոյություն, կամ՝ ստորին խավար գոյություն, որից հետո այդ հոգիները դադարում էին անհատականություն լինել և ձեռք էին բերում խմբային վարքի նորմեր, դառնալով «լուսեղեն կամ մռայլ հոգիներ», համեմատում է այն Թուխ

139. *Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, էջ 103:*
140. *Աշճյան Մեսրոպ արք., Թուխ Մանուկ, էջ 12:*

մանուկների շուրջ հայոց պատկերացումների հետ: Որպես խմբային հավաքականություն, հունա-հռոմեական միջավայրում նրանց դիմում էին հոգնակի ձևով՝ «լեմուրներ»: Մահացածների այդ հոգիներն, ըստ էության, մարդկանց նախնիներն էին: Եթե նույնիսկ որևէ ծեսում դիմում էին որևէ կոնկրետ մահացած նախնու, ապա նա սովորաբար մյուս մահացած նախնիների ներկայացուցիչն էր ու կապավորը, բազմության ներկայացուցիչը[141]: «Լեմուրների» հետ հաղորդակցությունն ընտանեկան էր՝ ամեն ընտանիքի գլխավորն ինքն էր իրականացնում դիմումը նրանց, զոհաբերությունը, ոչ թե պաշտոնական կրոնի հոգևորականները[142]: Տան գլխավորն ինքը դառնում էր հանգուցյալների պաշտամունքն իրականացնող գլխավոր քուրմ[143]:

Եթե այս ընկալմամբ դիտարկենք Թուխ մանուկների երևույթը հայոց մեջ, ապա հիրավի նրա/նրանց պաշտամունքն իրականացնող անձիք տան գլխավորներն են (պառավները պայմանականորեն կամ իսկապես կարող էին այդ գործառույթն ունենալ), նրանց լուսավոր երկնային էության մասին կարող է վկայել Վերափոխման տոնին խաղողն օրհնող քահանայի ասած բանաձևը. «Երկնքի լույս Թուխ մանուկներեն ցողված են այս մեր այգիների ողկույզները»: Տվյալ դեպքում Թուխ մանուկներին պետք է ընկալել որպես մահացած նախնիների հավաքական լուսավոր կերպար, որից կարելի է ակնկալել օգնություն: Թ.Թորամանյանն առհասարակ գտնում է, որ Թուխ մանուկների պաշտամունքը նախաքրիստոնեական հերոս նախնիների պաշտամունքն է[144], իսկ Ե.Լալայանը ենթադրում է, որ «Թուխ-մանուկ կոչված ուխտատեղիները հավանականորեն նախահայրերի գերեզմաններ են»[145]: Այս ենթադրությունն է հաստատում նաև այն իրողությունը, որ Թուխ մանուկի/մանուկների ամենալայնածավալ հիշատակման օրը հայոց ժողովրդական մեռելոցների մեջ ամենամեծն էր՝ Սըրբխեչը. «Սուրբ Խաչին ամեն հայ մայր վանքերում իրենց ուխտը կատարելուց հետո գնում են Թուխ մանուկներ, որոնք անհիշելի դարերից ի վեր մանուկ սրբեր լինելով հանգչում են որևէ Խաչքարի..., կամ սուրբ ծառերի տակ... Լուսաղբյուրների կամ Խաչաղբյուրների ջրերից խմելով, զովանալով, երգում են անդադար այդ ուխտավայրերը գովերգող երգեր...»: Այսինքն՝ մերօրյա հանգուցյալներին այցելելուց հետո այցելում էին վաղագույն հանգուցյալներին՝ նախնիներին:

Հիրավի, եթե ակնարկ նետենք հայոց մեջ հանգուցյալների հետ առնչվող ծեսերին, կտեսնենք, որ Թուխ մանուկի հանդեպ վերաբերմունքի և հանգուցյալներին առչվող պատկերացումներում զգալի ընդհանրություններ կան: Օրինակ՝ հայոց մեջ բոլոր խոշոր տոներին հաջորդում է մեռելոց, այսինքն՝ այցելություն հանգուցյալներին, հանգուցյալների հիշատակություն: Նույն բանը, փաստորեն, կատարվում է Թուխ մանուկների դեպքում: Մեռելոցներին գերեզմաններ այցելող մարդիկ հետները տոնին վայելող մթերքներ էին տանում հանգուցյալներին: Նույն կերպ Համբարձման տոնին ծաղիկներ էին տանում Թուխ մանուկներին, Խաղողօրհնեքին՝ օրհնված խաղող: «Ինչպես իրանցիների մեջ..., այնպես էլ հայերի մեջ մեռելների հոգիները դեռ շաբաթ օրը՝ նավակատիքին, տոնի նախօրեին երկնքից իջնում են երկիր: Այդ նախօրեին նրանց հիշատակը պետք է նշվի խունկ ու մոմով: Խունկն ու մոմը համարվում են հոգիներին տրվող զոհաբերություն»[146]: Ինչպես հանգուցյալների ընտանիքներում երկար ժամանակ գիշերը ճրագը վառ էին թողնում, որպեսզի հոգին վերադառնալու դեպքում չմոլորվի[147], նույն կերպ, ըստ էության, «Կիրակնամուտին պառավները ձեթ էին տանում՝ Թուխ

141. *Հակոբյան Հ. «Թուխ Մանուկների» պատկերագրությունը հին Հայաստանում, «Թուխ մանուկ» նստաշրջանի նյութեր, Երևան, 2001, էջ 54:*
142. *Հակոբյան Հ. «Թուխ Մանուկների» պատկերագրությունը հին Հայաստանում, էջ 52-67:*
143. *Հակոբյան Հ. «Թուխ Մանուկների» պատկերագրությունը հին Հայաստանում, էջ 55:*
144. *Թորամանյան Թ. Նյութեր հայկական ճարտարապետության, Երևան, 1942, էջ 42:*
145. *Լալայան Ե. Վասպուրական, էջ 54, տողատակի ծանոթագրություն:*
146. *Աբեղյան Մ. Երկեր, հ. է, էջ 27:*

մանուկի ճրագները վառում», Բուլանըխում «Թուխ մանուկ եկեղեցի մ'ևս ի Կոփ կգտնվի, և շաբաթ երեկոները կը հարգվի խնկով ու ճրագլուսով (ձեթ)»[148], «Ամեն կիրակնամտին վանեցի հայ կանայք ուխտ են գնում այս (Թուխ մանուկ) ուխտատեղին, մոմ վառում, խունկ ծխում, և ձեթ ածում նրա կանթեղի մեջ: Պատմում են, թե երբ կանթեղի ձեթը պակասում է, մատուռի շուրջը լույս է վառվում, և այս տեսնելով վանեցիներն շտապում են ձեթ տանելու»:

Հայոց ժողովրդական պատկերացումներում «հոգին լույս է կամ փայլ»[149], «հանգուցյալներին «լուսահոգի» են կոչում»[150]: Կենդանի մարդիկ ամեն ինչ անում էին, որ իրենց սիրելիները մահից հետո լուսավոր հոգի ունենան: Այսպես, մահացած մարդուն լողացնելիս մաղթում էին.

Քարդ քաղած ըլի,
Հողդ մաղած ըլի,
Աջու դասին արժանի ըլես,
Աչքդ օջախիդ վրա քաղցր ըլի,
Մենք էլ քե չմոռանանք:
Օղորմի քի, լիսեղեն էիր, լիս դառնաս,
Դատաստանդ քաղցր ըլի,
Ճամփեդ բարի ըլի[151]:

Այսինքն մահացածին պիտի դատեն, և «քաղցր դատաստանի» դեպքում «ճամփեն բարի կլինի» ու «լիս կդառնա»: Այս մաղթանքում «լիսեղեն էիր, լիս դառնաս» բանաձևը արտասանելը այն հնարավորությունն է, որ երկրում ապրել շարունակող մարդիկ փորձում են անել՝ նպաստելու, որ իրենց հարազատի հոգին լույս լինի: Թերևս նույն նպատակն ունի Գանձակի հայերի մեջ ընդունված այն սովորույթը, ըստ որի՝ հանգուցյալի ողորմաթասը «ճրագով են խմում, որպեսզի հոգին լուսավորվի»[152], իսկ Բանանց և մի քանի այլ գյուղերում թաղման օրը գերեզմանի վրա կրակ էին վառում, որպեսզի «հանգուցյալի հոգին այն աշխարհում կրակի պես իր շուրջը լույս սփռի»[153]: Հիշենք նաև, որ Սուրբ Սարգսին նվիրված ավանդազրույցներից մեկում, որում պատմվում է վրացիների կողմից նրա և նրա որդու սպանությունը, զրույցն ավարտվում է հետևյալ կերպ. «քաջը իջնում է ձիուց, գրկում որդու մարմինը և դառնում հակառակորդներին. «Որդուս խավարեցրիք, եկեք ինձ էլ խավարեցրեք»: Վրացիները հորն էլ են սպանում, բայց հանկարծ՝ «լիսը վրեն եկավ, լիս էր՝ լիս դառավ» (սրբացավ): Արդյո՞ք սա վկայությունը չէ այն բանի, որ մահն ինքը «խավարն է», բայց՝ ոչ սրբակենցաղների, քաջերի, արդարների համար: Նրանք լուսավոր հոգիներն են, կամ՝ արդար հոգիները «լույս» են (համեմատել «Երկնքի լույս Թուխ մանուկներեն ցողված են այս մեր այգիների ողկույզները»): Գանձակի հայերից մեկ այլ ավանդազրույց վկայում է, որ լույսը գերեզմանի վրա իջնելը հաստատում կամ վկայում է հանգուցյալի արդար լինելը, և այդ հանգուցյալները պաշտվում էին[154]:

Ինչո՞ւ են, սակայն, այս մանուկները «թուխ» կոչվում: Վերլուծաբանները զգալի աշխատանք են ներդրել «Թուխ մանուկի» «թուխ» մակդիրի մեկնաբանության համար: Վարկածները զարգացել են գլխավորապես «թուխ» բառի առաջին՝ «սև» իմաստի

147. *Աբեղյան Մ. երկեր, հ. է, էջ 27*
148. *Աշճյան Մեսրոպ արք., Թուխ Մանուկ, էջ 14:*
149. *Աբեղյան Մ. երկեր, հ. է, էջ 21:*
150. *Աբեղյան Մ. երկեր, հ.է, էջ 26:*
151. *Харатян З. Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян, ՀԱԲ, հ.17, Երևան, 1989, էջ 34:*
152. *Լալայան Ե. երկեր, հ.2, Երևան, 1988, էջ 413:*
153. *Նույն տեղում:*
154. *Լալայան Ե. երկեր, հ.2, էջ 438:*

վերլուծություններից: Սակայն «թուխ» բառը երկրորդ, ընդհանուր հնդեվրոպական ակունք ունի, որը, ըստ Հր.Աճառյանի, ունի ինչպես «մթին, խավար, մութ, մռայլ» իմաստները, այնպես էլ՝ «ծուխ», «սուգ», պարսկերեն «տուխան»՝ ծուխ....իմաստները[155]: Դիտարկենք «Թուխ մանուկների» «թուխը» որպես սուգը, մահը իմաստավորող մակդիր, որը «մանուկների» հետ կարող է նշանակել երկրային գոյությունը դադարեցրած, կտրիճ ու քաջ մարդկանց հոգի, կամ հոգիների հավաքական ամբողջություն: Սրան համադրենք Հ.Աճառյանի կարծիքը, ըստ որի՝ բարբառներում Թուխ մանուկ նշանակում է «նոր յայտնված կամ անանուն սուրբի գերեզման, որուն վրայ փոքրիկ տնակ մը կշինուի՝ իբր ուխտատեղի»[156] և Թուխ մանուկ ուխտավայրերը նախահայրերի գերեզմաններ համարող Ե.Լալայանի կարծիքը: Այս նյութերի հիմամբ կարելի է մեծ հավանականությամբ ընդունել Թ.Թորամանյանի կողմից առաջադրված, Ա.Մնացականյանի կողմից ընդունված, Հ.Հակոբյանի կողմից զարգացված այն տեսակետը, ըստ որի՝ «Թուխ մանուկները» մահացած նախնիների, հավանական է՝ տղամարդ նախնիների հավաքական կերպարներն էին, որոնց պետք էր մշտապես հիշել, սակայն որոնցից կարելի էր անկաշկանդ օգնություն խնդրել՝ առանց լրացուցիչ պարտավորությունների (հիմնական պարտավորությունը նրանց մշտապես հիշելն է), առանց ծանր զոհաբերությունների: Նրանք այս կամ այն ձևով միշտ առկա են մեր երկրային կյանքում: Իհարկե՝ նախնիների մեջ եղել են լավերն ու վատերը, և նրանց հոգի-ոգիների մեջ նույնպես պետք է լինեն չարերն ու բարիները: Հիշենք, որ Ղ.Ալիշանը «Հին հավատքում» Թուխ մանուկին տալիս է «սատանա» որակումը և հանում է զենդական «տուխ»-«չար ոգի» իմաստից: Երկրային կյանքում մարդկանց ապրած կյանքն ինքն է կանխորոշում նրա հանդերձյալ կյանքը,- խավա՞ր կընկնի, թե՞ լուսավոր անդրաշխարհ: Անշուշտ՝ հանգուցյալների հարազատները միշտ կուզենան, որ իրենց մահացած հարազատի հոգին լուսավոր անդրաշխարհ ընկնի:

Եթե Թուխ մանուկը/մանուկները մահացած նախնիների հավաքական կերպարներն են, ապա միշտ հարց է մնում՝ բոլո՞ր նախնիների, թե՞ Թուխ մանուկը/մանուկները որոշակի նախնիներ էին: Կարծում եմ այս հարցին պատասխանելուն օգնում է հայոց մեջ տարածված մի հանրահայտ սովորություն: Բոլոր հասարակ մահկանացուների մահերը հանգուցալուծվում էին գերեզմանատներում, որտեղ նրանք թաղվում էին: Սակայն կային մարդիկ, որոնց թաղումը գերեզմանատներում չէր: Դրանք տարբեր մարդիկ էին, և նրանց միավորում էր մի ընդհանրություն. նրանք մահացել էին բռնի մահով՝ բքախեղդ էին եղել, սպանվել էին, կայծակնահար էին եղել, ընկնող ծառի տակ էին մնացել, գիշատիչ գազաններն էին վրան հարձակվել... Մահվան այն բոլոր դեպքերը, որ անակնկալ էր և կանխատեսելի չէր: Պատերազմում զոհվողը նույնպես ի վերջո բռնության զոհ է, բայց դա կանխատեսելի մահ է: Անկանխատեսելի, բայց հատկապես բռնության հետևանք հանդիսացող մահերը հասարակության մեջ միշտ առաջացրել են շփոթմունք, և իրենց մեջ պարունակել են տագնապներ: Այդպիսի հանգուցյալներին ամենից ավելի հաճախ թաղում էին մահվան վայրում: Իսկ եթե չէին թաղում այդ վայրում, փոխարենը այդ վայրում հուշարձան, հուշաղբյուր էին կառուցում: Այս սովորույթը մեծ չափով շարունակվում է մինչև այսօր. մերօրյա միայնակ շիրիմները ճանապարհների եզրերին, անտառներում վկայում են, որ այդտեղ, հենց շիրիմի տեղում մարդ է զոհվել՝ ավտովթարից, զենքից, կայծակից, որևէ այլ բնական աղետից կամ մարդկային բռնությունից: Նույնիսկ 1988թ. երկրաշարժից զոհված որոշ մարդկանց թաղեցին նրանց զոհվելու վայրում, կամ՝ այդ վայրում հուշարձան դրվեց, աղբյուր կառուցվեց: Ընդհուպ մինչև 19-րդ դ. վերջերը այս սովորույթին նպաստում էր նաև եկեղեցին՝ հրաժարվելով

155. *Աճառյան Հր. Հայերեն արմատական բառարան, հ.2, Երևան, 1973, էջ 203:*
156. *Աճառեան Հ. Հայերէն գաւառական բառարան, էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Թ, Թիֆլիս, 1913, էջ 377:*

անհաղորդ մահացածների թաղումն իրականացնել արդար քրիստոնյաների հանրային գերեզմանատներում: Այսպիսի շիրիմները միշտ հատուկ զգայականություն են առաջացրել և հատուկ վերաբերմունքի արժանացել: Անցյալում դրանք կամ քարկոծման էին ենթարկվում, կամ՝ հատուկ խնամքի, սրբազան երկրպագության: Վերաբերմունքը կախված էր հանգուցյալի, մասնավորապես՝ նրա մահվան շուրջ ձևավորված առասպելից, շրջող լուրերից:

Գնդակից, թրից, կայծակից մահացած մարդկանց շիրիմները հայոց շատ ազգագավառներում պաշտամունքի վայրեր էին: Կայծակը համարվում էր հրեշտակների թուրը, որով նրանք սպանում էին չար ոգիներին: Կայծակի խփած վայրը, ինչպես նաև կայծակնահար մարդը համարվում էր բոլոր չար ուժերից մաքրված և սրբազնացված: Նրանք, ինչպես հավատի մարտիկները կամ հանուն հավատի զոհվածները, համարվում էին նահատակներ: Միշտ չէ, որ նրանց շիրիմներն ստանում էին տապանաքարեր: Հաճախ դրանք ուղղակի քարերի կույտ էին, կամ՝ ուղղակի հողե շիրիմ: Արցախում, Զանգեզուրում այդ շիրիմներին տարբեր պատճառներով վերագրվում էր բուժիչ կարողություն: Այս շիրիմների մոտ էին բերում հատկապես վախից հիվանդացածներին, ջուր խմացնում, ձեռքերին ջուր լցնում շիրիմի վրա կամ շիրիմի հողից մի բուռ ծծրակին քսում[157]: Նույն զորությունն ուներ նաև հերոսություն արած մարդկանց շիրիմը: Օրինակ, Արցախի Մելիք Շահնազարյան տոհմից Գայանե անունով մի աղջիկ, խուսափելով հետապնդումից, սպանել էր թուրք զորավար Սուլեյման Բեգին: Նրա շիրիմի մոտ արված փոսից նույնպես ջուր են խմում վախեցածները[158]: Բոլոր այս շիրիմներն արդյունքում սրբացվում էին և հաճախ դառնում ուխտագնացության ու զոհաբերության վայրեր: Այդ վայրերը հենց այդպես էլ կոչվում էին՝ սուրբ: Այդ կարգի սրբերը միմյանցից տարբերելու համար հաճախ ասվում էր այն տեղանունը, որտեղ գտնվում էր սուրբը՝ այսինչ գյուղի սուրբը, այսինչ սարի սուրբը... Երբեմն էլ անվանում էին տվյալ սրբի գործառույթով՝ ականջի սուրբ՝ եթե ականջն է բուժում, աչքի սուրբ... Այդ կարգի սրբեր էին նաև բուժիչ աղբյուրները, որոնք նույնպես կարող են խմբավորվել «սուրբ» հավաքական անունով: Թերևս հենց այս կարգի սրբերի ուխտատեղերում գիշերը լուսացնելն է հիմք հանդիսացել «լույս պահել» արտահայտության համար, որ ղարաբաղյան բարբառում նշանակում է ուխտատեղերում մինչև լույս արթուն մնալ[159]:

Հայոց կրոնական մշակույթում այս կարգի սրբացվող զոհերը կարող էին լինել ցանկացած ազգի կամ կրոնի ներկայացուցիչ: Մշո Բուլանըխի Համզաշեխ գյուղի մոտի Թուխ մանուկի մասին ավանդազրույցն, օրինակ, ասում է, որ «քրդու լամուկ է եղած և քրիստոնյա դառնալով նահատակվեր է և սուրբ դարձեր»[160]: Գուցե հենց այս հանգամանք է պատճառներից մեկը, որ այս ուխատավայրերը այցելության սիրելի վայրեր էին ոչ միայն հայերի համար, ինչին առանձնահատուկ ուշադրություն են դարձրել շատ հետազոտողներ:

Վերադառնանք Թուխ մանուկի հարցին: Վկայակոչելով Հ.Աճառյանի նյութը, ըստ որի՝ բարբառներում Թուխ մանուկ նշանակում է նոր հայտնված կամ անանուն սրբի գերեզման, որի վրա մի փոքրիկ տնակ են շինում՝ իբրև ուխտատեղի, մեծ հավանականությամբ կարելի է եզրակացնել, որ Թուխ մանուկը/մանուկները ոչ սովորական հանգամանքներում զոհված մարդկանց հոգիներն են: «Մանուկ» բառը թերևս մասնավորեցնում է, որ դրանք զոհված տղամարդկանց հոգիներ են: Թուխ մանուկների տղամարդ լինելու մասին է վկայում նաև Վանում Թուխ մանուկներին արվող աղոթքի հետևյալ հատվածը. «Ով թուխ (սև) մորուս Թուխ մանուկ»: Այս կրկնվող «թուխ»-ը կողմնակի վկայություն է այն բանի, որ «թուխ»-ը «սև» չի նշանակում, այլ՝ մահ, այլապես կարիք չէր լինի շեշտել մորուքի թխությունը: Ինչ գույնի էլ լիներ զոհվածը՝ նա

157. *Лисицян С. Армяне Нагорного Карабаха, Ереван, 1992, с. 146, 148, 149:*
158. *Лисицян С. Армяне Нагорного Карабаха, 148:*
159. *Աճառեան Հ. Հայերեն գաւառական բառարան, էջ 434:*
160. *Աշճյան Մեսրոպ արք., Թուխ Մանուկ, էջ 14:*

«թուխ» էր, մահացած էր: Այսպիսով զոհվելուց/նահատակվելուց հետո տղամարդիկ Թուխ մանուկ էին դառնում (մահացած կտրիճ), չար մարդիկ՝ չար հոգիներ[161]: Չարերից պետք էր պաշտպանվել, բայց լավերին, բարիներին, քաջերին, արիներին, ուժեղներին պետք էր ընդօրինակել: Նախնիներից լավերը միշտ օրինակելի վարքի աղբյուր են այսօվա ապրողների համար (երիտասարդական միությունների կապը Թուխ մանուկի/մանուկների հետ): Լինելով անդրաշխարհում, նրանք մշտական կապ ունեն չար ու բարի հոգիների հետ և կարող են կանխարգելել չար երազների իրականացումը:

Բնական է, որ յուրաքանչյուր ընտանիք ինքն էր իրականացնում կապերը իր նախնիների հետ, սակայն զոհվածները՝ Թուխ մանուկները, դուրս էին գալիս ընտանեկան շրջանակից, սրբացվում և ստանում հասարակական, համայնքային դերակատարում: Նրանք «սրբացվել» են ոչ թե ինստիտուտների (եկեղեցի), այլ՝ մարդկանց կողմից, և մարդիկ էլ հոգ են տարել նրանց մասին: Մարդիկ, այլ ոչ թե եկեղեցիներն էին սրբացնում այդ մարդկանց, և նրանք էլ շարունակում էին նրանց հետ սրբազան հարաբերությունները: Նրանք էին «նոր հայտնված կամ անանուն սրբի գերեզմանին մի փոքրիկ տնակ շինում՝ իբրև ուխտատեղի»: Մարդիկ, ըստ էրևույթին, նաև ավելի հիմնավոր կառույցներ էին շինում իրենց նախնիների հիշատակին, ինչպես կողմնակիորեն վկայում է Մեսրոպ արք. Աշճյանի կողմից «Դիվան հայ վիմագրության» շարքի Վայոց Ձորին նվիրված հատորից կատարված հղումը: Այստեղ հիշատակվում է Բոլորաբերդ գյուղի Թուխ մանուկ կոչվող եկեղեցին, որի հյուսիսային կողմի խաչքարի վրա կա հետևյալ արձանագրությունը. «Յիսուսի Քրիստոսի հրամանաւ, մեք՝ ծուկրուկոյ ջամահաբս կանգնեցրինք Թուխ Մանուկ եկեղեցիս ի յիշատակ հոգոց մերոց»[162]: Բացառիկ դեպք, երբ Թուխ մանուկի անվամբ եկեղեցի է կառուցվել, և այդ եկեղեցին կառուցվել է հասարակ մարդկանց, ողջ համայնքի ջանքերով:

Ամփոփելով ժողովրդական տոնախմբություններում սրբերի դերակատարությունների որոշ եզրեր, կարող ենք մի շարք եզրակացություններ անել.

- *հայոց ժողովրդական տոնախմբություններում զուտ քրիստոնեական կերպարները, որոնք չեն ներառել իրենցից առաջ առկա ժողովրդական պատկերացումները կամ նրանց շուրջ պաշտոնական գաղափարախոսությունը չի ջանացել ժողովրդական արարողակարգ սահմանել և իրականացնել, չեն ընդգրկվել հայ ժողովրդական տոնախմբություններում և մնացել են եկեղեցու նեղ շրջանակներում: Նույնիսկ այնպիսի խոշոր կերպարներ, ինչպես Գրիգոր Լուսավորիչն էր և Մեսրոպ Մաշտոցը, որոնցից յուրաքանչյուրն իր ձևով համաժողովրդական հեղաշրջում բերեցին մեր ժողովրդի ողջ հետագա ճակատագրում և մշակույթում, ժողովրդական ծիսա-արարողական կյանքում էական դեր չունեցան: Պարզապես, որովհետև նրանց գործունեությունը ոչ ոք որևէ ձևով չկապեց ժողովրդական մշակույթի հետ: Հասարակ մարդիկ, լայն իմաստով՝ ժողովրդական զանգվածը նրանցից սպասումներ չուներ: Անհրաժեշտության դեպքում մարդկանց օգնության էին հասնում Անահիտը (ետնագույն Մարիամ Աստվածածինը), ջրերի ոգիները (Նուրին, Հուրին), կրակի ոգին-Աստվածը, երկնային ուժերի՝ ամպրոպի, կայծակի, քամու Աստվածը (Սուրբ Սարգիս), նախնիների ոգիները (Թուխ մանուկներ), երկրային և երկնային երևույթների հետ փոխազդեցության մեջ մտնելու հմայական հնարավորությունները*

161. *Թե «թուխ», թե «մանուկ» բառերը հանդիպում են նաև չարերի բնութագրիչներում - անեծքներում հանդիպում ենք «Թուխ», «Թուխ Մանուկ», «Աղեկ Մանուկ» չար կերպարների:*
162. *Աշճյան Մեսրոպ արք., Թուխ Մանուկ, էջ 13:*

(բազմաթիվ չարխափան և հաջողություն ապահովող ծեսերը) և այլն, և այլն: Իսկ ի՞նչ պիտի տային մարդկանց Գրիգոր Լուսավորիչը, Մեսրոպ Մաշտոցը: Նրանց գործունեության իրական ծավալները շատ ավելի մեծ էին, բայց նրանց գործունեության տեսակն այնպիսին էր, որ դրանք գնահատողը պետք է ինստիտուտները լինեին (պետություն, եկեղեցի...): Նրանք հիրավի գնահատեցին, բայց՝ միայն իրենց համար: Նրանք այս կերպարների շուրջ ժողովրդին, մարդուն, անձի մարմնին ու հոգուն տվող ոչինչ չասացին: Եվ նրանք հեռու մնացին ժողովրդից: Ըստ էության՝ միայն Աստվածածինն է ընկալվել որպես առանձին և սիրված կերպար, և բազմաթիվ աղոթքներ են հղվել և հղվում Աստվածածնին:

- Սրբերի վերաբերյալ գոյություն ունեցող ավանդազրույցները և նրանց նվիրված ժողովրդական ծեսերը վկայում, իսկ գիտական հետազոտությունները հաստատում են, որ ժողովրդի մեջ արմատավորվել և սիրվել են այն սրբերը, որոնք իրենց գործառույթներով ծագում էին հայկական ժողովրդական մշակույթից և մարդկանց կողմից ընկալվել են որպես հայազգի: Այդպիսին էր, օրինակ, Սուրբ Սարգիսը: Քրիստոնյա հայրերը պատմում էին կեսարացի զորական Սարգսի մասին, որը քրիստոնյա էր դարձրել պարսիկ զինվորներին, և առաջարկում էին դրա համար պաշտել նրան: ժողովուրդը սիրում և պաշտում էր Սարգսին, բայց այն Սարգսին, որն օգնում էր նեղության մեջ ընկածներին, սիրահարվածներին, հիվանդներին, օգնում էր լավ բերք ստանալ... Այդ Սարգիսը նախկինում էլ կար, հետո էլ մնաց: Այս Սարգսին նա հասկանում էր և սիրում: Իսկ Գրիգոր Լուսավորչին չէր ճանաչում և չէր հասկանում: Չճանաչելով ու չհասկանալով՝ չէր խնկարկում, նրա «դուռը չէր գնում», նրանից ոչինչ չէր խնդրում և նրան ոչինչ չէր տալիս: Ավելին, եթե ժողովուրդը Լուսավորչին գիտեր, ապա նախ և առաջ որպես մի անձի, որը քանդել էր տալիս իրենց հասկանալի սրբավայրերը, արգելում էր խնկարկել իրենց պաշտամունքի առարկաներին: Այս Լուսավորչից մարդիկ վախենում էին, ինչպես հաճախ վախենում էին նրա հետ եկած սրբերից՝ Սուրբ Կարապետից, Սուրբ Գևորգից, որոշ չափով՝ Սուրբ Հակոբից: Այդ սրբերը «պատժում էին», բայց «չէին օգնում»: Համենայն դեպս, մարդիկ չգիտեին, թե ի՞նչ հարցերով, ի՞նչ առիթներով, ե՞րբ կարելի է նրանց օգնությանը դիմել: Նույնիսկ, երբ գնում էին այդ սրբերի անունները կրող քրիստոնեական ուխտավայրերը՝ վանքերը, եկեղեցիները, այդ սրբերին դիմում էին գլխավորապես դրանց տեղերում մինչև քրիստոնեությունը եղած սրբավայրերի զորությունների համար (ինչպես, օրինակ, Սուրբ Կարապետին անզավակները խնդրում էին զավակ ունենալու համար, և ուխտում էին իրենց ապագա զավակի մազերը չկտրել, «գես» պահել յոթ տարի, որ, անտարակույս, Մշո Սուրբ Կարապետ վանքի նախաքրիստոնեական Գիսանե կուռքի հիշատակին էր, կամ՝ գնում էին Վարդավառին ինը աղբյուրների ջրերի համար): Այդ են վկայում նաև այն սակավաթիվ աշուղական երգերը, որոնք ստեղծվել են Սուրբ Կարապետի շուրջը.

Ականջ արեք, աղաներ, երկու աշուղ հյուր են եկել,
Փա՞ռք սրանց Ստեղծողին, միտքերն շատ սուր են եկել,
Սուրբ Կարապետի վանքից ողջ և առողջ լուր են եկել,
Մաքուր սուրբ գերեզմանից անուշահոտ բուր են եկել,
Յոթն անվան շնորհող անապառ աղբուր են եկել,
Բոլոր համայն սուրբերից անմահական ջուր են եկել,

Իսկապես խորհուրդ արած՝ լի ոսկի սափուր են եկել[163]*:*

Այն փաստը, որ նույնիսկ ավանդազրույցներում Ս.Կարապետի և Ս.Գևորգի վանքերի տեղերում նախկինում դևեր են ապրելիս եղել, իսկ Ս.Սարգսի եկեղեցիների շուրջ այդպիսի ակնարկներ չկան, նույնպես վկայում է Ս.Սարգսի տեղացի, հայազգի լինելու և նախաքրիստոնեական ակունքների մասին:

- *Եթե Սրբերին համեմատենք բացարձակ նույն գործառույթներում, կտեսնենք, որ զգալի տարբերություն կա նրանց վարքում: Օրինակ, գործնականում բոլոր սրբերն էլ ջրեր բխեցնելու կամ ջրերը բուժիչ զորություններով օժտելու ունակություն ունեն: Սակայն ե՞րբ, ի՞նչ նպատակով են նրանք այդ անում և ի՞նչ հետևանքներ են ունենում՝ էապես տարբեր է: Սուրբ Սարգիսը ջուր է բխեցնում բերդում գերյալների համար և ոչ միայն փրկում մարդկանց ծարավից, այլև՝ առանց նախապայմանների բուժիչ ջուրը թողնում նրանց հայեցողությանը: Սուրբ Հակոբը ջրեր բխեցնում է ինքն իր համար: Սակայն այդ ջրերը ունեն օգտակար հատկանիշներ և մարդիկ կարող են օգտվել դրանցից: Սուրբ Կարապետը տիրացել է իննակնյա ջրերին և իր հայեցողությամբ որոշում է՝ ում թույլ տալ դրանց զորավոր ունակություններից օգտվել, ում՝ ոչ: Սեբաստիայի Կովտուն գյուղի մոտի Սբ.Կարապետի անվամբ աղբյուրի ջրերն աղի են*[164]*: Դրանք ոչ «լուսաղբյուրներ» են, «ոչ կաթնաղբյուրներ», ինչպես Թուխ մանուկների աղբյուրներն են, որոնց ջրերից մարդիկ անարգել օգտվում են:*
- *Հայ ժողովրդի համար ընդհուպ մինչև 19-րդ դ. վերջը այդպես էլ չհստակեցվեցին քրիստոնեության գլխավոր կերպարները, այն աստիճան, որ նույնիսկ «Հիսուս Քրիստոս» կերպարը մի շարք աղոթքներում ներկայանում է երկու անձով և հավասարվում այլ սրբերին: Օրինակ՝ բազմաթիվ աղոթքներում մարդիկ դիմում են Հիսուսին, Քրիստոսին (Հիսուս Քրիստոսը ընկալվում է երկու անձ՝ Հիսուս և Քրիստոս) և Սուրբ Սարգսին՝ հավասարապես, կամ՝ Հիսուսին, Քրիստոսին և Աստվածածնին, Սուրբ Գևորգին, Կարապետին և այլն: Բերենք միայն մեկ օրինակ, չնայած դրանց թիվը շատ մեծ է.*

Հրես էկավ երեք ծիավոր,
Մինը Հիսուսը,
Մինը Քրիստոսը,
Մինը Մարիամ Աստվածածինը.
Թամքեց սև ծին,
Հագավ սև շորը,
Սարի էս կռնովը վեր էլավ,
էն կռնովը վեր էկավ,
Դուշմանի աչքը հանեց*[165]*:

163. *Բաղդասարյան Ա.,Դիլանյան Ե., Խուդաբաշյան Կ. Սուրբ Կարապետին նվիրված հայ հոգևոր և ժողովրդական երգերը, էջ 47:*
164. *Ավանդապատում, էջ 105:*
165. *Լալայան Ե. Երկեր, հ.3, էջ 226-227:*

Առհասարակ «երեք ծիավորը», որոնցից մեկը Հիսուսն է, մեկը՝ Քրիստոսը, աղոթքներում ու երգերում հաճախ են հանդիպում.

Սուրբ Գևորգը քուն է,
Սուրբ Հակոբը արթուն է,
Ահա եկավ երեք ծիավոր,
Մեկը Հիսուս,
Մեկը Քրիստոս,
Մեկը հայր Աբրահամ...[166]

166. *Լալայան Ե. Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 344:*

«ՈՒՏԻՍ ՏԱՏԸ» ԵՎ «ՊԱՍ ՊԱՊԸ»

ԿՆՈՋ ԵՎ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՕՊՏՎԱԾ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՔԻ ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՏՈՒՄՆԵՐԸ

Կանանց ու տղամարդկանց դերերի, փոխհարաբերությունների հարցը բոլոր մշակույթների ու հասարակությունների ամենաքննարկվող խնդիրներից է և ամեն ինչից դատելով, կմնա դեռ երկար ժամանակ: Հասարակական, քաղաքական, ընտանեկան և այլ ոլորտներում այդ դերերը մշտապես տարբեր են եղել, և տարբերությունների խնդիրը մեկնաբանվել է ինչպես կենսաբանական, այնպես էլ՝ հասարակական-մշակութային, այն է՝ մարդու կամային միջամտությամբ: Չմտնելով խնդրի մանրամասների մեջ, այստեղ որոշ անդրադարձ կանենք հայոց տոնա-ծիսական կյանքում դարեր ի վեր կատարված մի ծեսի, որում խտացված է կնոջ ու տղամարդու կարևորագույն դերակատարության վերաբերյալ պատկերացումը:

Խոսքը գնում է տարվա ամենաուրախ, ամենազվարճալի, ամենախելահեղ տոնի՝ Բարեկենդանի և նրան անմիջապես հաջորդող յոթշաբաթյա խստակենցաղության շրջանի՝ Մեծ պասի մասին: Բարեկենդանը սովորաբար տևում էր երկու շաբաթ և այդ երկու շաբաթների ընթացքում հանվում կամ փոխվում էին այն բոլոր արգելքները, որոնք կարգավորում էին առտնին կյանքի հարաբերությունները և լուրջ արժեք ունեին հասարակության մեջ: Հայոց ավանդական մշակույթում ընդունված հասարակական, տարիքային և սեռային արգելքները, հնազանդությունը և ենթակարգային հարաբերությունները վեր էին ածվում հորիզոնական հավասարության հարաբերությունների, իսկ առօրյա կյանքին բնորոշ ժուժկալությունը, զսպվածությունը և հարաբերությունների խստությունը՝ համարյա զեխության ու թեթևամտության: Երկու շաբաթ տևող տոնի ընթացքում աստիճանաբար թեժանում էին բոլոր կատարումները՝ խնջույքները, խաղերը, այցելությունները, թատերական ներկայացումները, պարերը... Երկու շաբաթ շարունակ մարդիկ բացի ամենաանհրաժեշտ գործերից օրվա ողջ հնարավոր ժամանակը նվիրում էին զվարճանքին: Այս շատ բովանդակալից ու հարուստ տոնի մանրամասներին ծանոթացանք սույն գրքի «Բարեկենդանի» տոնի նկարագրության ժամանակ: Տեսանք, որ տոնի բոլոր մասնակիցները՝ կանայք ու տղամարդիկ, աղջիկներն ու տղաները, տարեցներն ու երիտասարդները, հոգևորականներն ու աշխարհիկները, հարուստներն ու աղքատները..., ըստ էության, իրենց տոնական վարքով դուրս էին գալիս առտնին կյանքին բնորոշ բոլոր նորմերից. երիտասարդները հանդգնաբար ծաղրում էին տարեցներին, երիտասարդ հարսներն առավոտից մինչև ուշ գիշեր պարում էին իրենց հասակակիցների հետ,

զանազան խաղեր խաղում, այցելում միմյանց առանց ծնողների, ամուսինների կամ կեսուրների համաձայնությունը հարցնելու, խաղերի ժամանակ երիտասարդ տղաներն անխնա հարվածներ էին հասցնում խաղին մասնակից տարեցներին, ծաղրի կամ ծիսական գանակոծության էին ենթարկում սոցիալական սանդղակի ամենավերին շերտերը իմիտացնող դերակատարներին... Այլ կերպ ասած՝ ամենօրյա կյանքի անհրաժեշտ վարքի նորմերը շուռ էին գալիս, դերերը փոխվում էին, և այս ամենը տոնի տրամաբանությամբ ընկալվում էր նորմալ, ցանկալի և նույնիսկ՝ խրախուսվում էր կատակներով: Սույն հոդվածում թերևս իմաստ ունի ավելացնել, որ Ստ. Լիսիցյանի հաղորդման համաձայն, Հովհաննես Թումանյանը պատմել է, թե ինչպես իրենց գյուղում՝ Դսեղում, Բարեկենդանին կանայք լաթի կտորներից երկար ֆալոսներ էին պատրաստում, մեջը բուրդ կամ մազ լցնում և դրանցով տարբեր խաղեր խաղում ու միմյանց հարվածում[167]: Այս խաղերն, ըստ երևույթին, պետք է ակնարկեին վաղ անցյալում Բարեկենդանի տոնին բնորոշ սեռական ազատությունները:

Բարեկենդանի վերջին օրը խելահեղության էին հասնում խնջույքները, պարերը, խաղերը... Հաջորդ օրն այլևս պաս էր, Մեծ պասի առաջին օրը: Սկսվելու էր յոթ շաբաթվա երկար ու ձիգ օրերի ոչ միայն ուտելիքի, այլև վարքագծի պահեցողության շրջանը: Ու քնդում էին պարերգերը, հնչում էր զուռնան, պարպվում էին գավաթները, աղջիկները ճլոթու վերջին ճոճերն էին անում, տղաները հրապարակ էին դուրս գալիս գլխավոր ձիարշավի, որը պիտի ավարտվեր «Ուտիս տատին» վռնդելու, «Պաս պապին» հրավիրելու ծեսով: Ահա այս ծեսի մասին է խոսքը: Բարեկենդանի, Մեծ Պասի, Ծաղկազարդի տոների նկարագրություններում ծեսի մանրամասները նկարագրված են, սակայն սույն հոդվածի շեշտադրումների համար կարևոր է դրանք կենտրոնացված տեսնելը:

Բարեկենդանի վերջին օրը Ակնում կատարվում էր 80-90-ամյա պառավ կանանց պարը, որն ուղեկցվում էր հատուկ այդ պարին բնորոշ պարերգով.

Մտանք ի Բարեկենդան,
Կերթանք ի Ջատիկ,
Իճապ մեկզմեկէ ինտո՞ր տի գատինք,
Եկեք պար մի բռնենք, ոսկեկ մի կ'աժէ,
Ոսկեկ մամաճ նստեր, չորթանը կոշտ է:
Եկեք բռնենք յոթը շաբաթ մեծ պահքը,
Ջատիկ ելլանք, ուտեն խմեն տղաքը,
Հագնին, կապեն հոռոմներուն կտտաքը:
Ըհը եկան Հայոց ազգին օրերը,
Հանեցեք հիները, հագեք նորերը,
Բարկենննուն օրերը, Ջատկուն կիրակին,
Եկանք ի Բարեկենդան, կերթանք ի Ջատիկ,
Տնավեր Բարեկենդանք, վրան բաց Ջատիկ,
Մենք ալ մեր յարերեն ինտո՞ր տի գատինք[168]:

Մինչ պառավները՝ ***կանայք***, պարում էին, երիտասարդ տղաները պատրաստում էին կնոջ կերպարանքով տիկնիկը, որ «Ուտիս տատ» էր կոչվում:

«Ուտիս տատը» կնոջը կերպարանավորող գզգզված, քրքրված տիկնիկ էր, որ Բարեկենդանի վերջին օրը, երեկոյան, հանդիսավոր գլորվում էր սարի գլխից՝ այստեղ

167. *Լիսիցյան Ստ. Լեռնային Դարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, Երևան, 1981, էջ 70:*
168. *Ճանիկեան Յ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 106; 425-426:*

երիտասարդների բարեկենդանյան վերջին խնջույքը հովանավորելուց հետո: Աշտարակում Բարեկենդանի ավարտը նկարագրող Պերճ Պռոշյանն այսպես է նկարագրում ծեսը. «Ապրին իմ տղերքը,- տնօրինեց տանուտերը,- Ուտիս տատին լավ ճամփու դրեք, տարեք ընչանք Ուլատիտիկու կոնդի գլուխը, ընդեղ մի լավ վերջին քեֆ շանց տվեք, բաց թողեք՝ գնա իր արևի ձենն ածի պասակեր թուրքերի միջին, մին էլ ով սաղ ա, ով մեռած ընչանք մեծ Զատիկ: Մեծ Պաս պապին էլ համեցեք արեք, թող գա՝ էգուց առավոտ ոտները երդիկներիցը քաշ անի:

- Էն ա, հա, Մեծ պաս պապը հիմի Ուլատիտիկի գլխին հաստ գոմշի կաշուց տրեխները դաղել, տրեխչվաններն ա կապում, համա մեր Ուտիս տատը գզգզոտված, ոտները բոբիկ՝ գլուխ ա առնում, պապի ձեռիցը փախչում, որ գնա, թուրքերի տներումը տափ կենա: Խեղճ Ուտիս, ինչ պիտի գտնի քաղցած թուրքերի մոտ, մի կտոր չորթան էլ չկա, որ բերանին քսի: Ճարը կտրած ինքն էլ պիտի պաս պահի:

- Ոչինչ, մի օր էլ պասի տրեխները կծակվին»[169]*:*

Բարեկենդանի նույն վերջին օրը Ղարաբաղի Հադրութ գյուղում երեկոյան ընթրիքից հետո երեխաները իրենց հորը սկուտեղով մատուցում էին մրգեր, պարան ու մտրակ[170]:

Ահա այսպես վերջանում է Բարեկենդանը. Ուտիս տատին՝ կանացի գզգզված տիկնիկին, այլ կերպ ասած՝ «ԿՆՈՋԸ» վռնդում էին, այսինքն՝ վերջանում էր ԿՆՈՋ տնօրինության շրջանը. երկար ժամանակով լռում են երգն ու պարը, դադարում են հարսանիքները, վերջանում է անհնազանդության իրավունքի շրջանը: Կյանքը, սակայն, մտնում է ոչ թե առօրեական, այլ չափազանց խստակեցության շրջանը: Եվ այդ խստակենցաղության պահապանը հայրն էր՝ տղամարդը, որին Բարեկենդանի վերջին օրը մատուցում էին «պարան ու մտրակ»՝ «համաձայնվելով» նրա վերահսկողական ու պատժիչ իրավունքին:

Մեծ պասի հենց առաջին օրվանից կանանց դերակատարումները կտրուկ նվազում էին: Մինչ նրանք մաքրում էին բարեկենդանյան զեխության հետքերը և բնակարանները նախապատրաստում Մեծ պասի զուսպ ու ժուժկալ կենցաղի համար, տղամարդիկ մտնում էին ակտիվ ծիսական դերակատարման մեջ: Կանանց պարով փակվեց Բարեկենդանը: Տղամարդկանց, և միա՛յն տղամարդկանց պարով սկսվում է Մեծ պասը: Նրանք, և միա՛յն նրանք հավաքվում էին կալում պարելու, ընդ որում պարում էին միայն երկու պար: Պարն սկսում էին մոխոխի գովերգով, դանդաղ, կլոր-փակ շրջանով, ձեռք-ձեռքի բռնած: Խումբը պարի ընթացքում յոթ պտույտ էր անում, ապա նրանց փոխարինում էր հաջորդ խումբը[171].

Բարով էգար, թթու մոխոխ,
Ինչ լուր բերիր հայրենիքես:
Մենձ Պասն էկավ, կայնավ թատին[172]
Աշկըս մընաց հալվա կաթին:
Մենձ Պասն էգավ դուռմիշ էղավ[173]***,***
Փօրիս փարգալ փոզմիշ էղավ[174]***,***
Պառվըները, պառվըները,
Ջուրը լըցվավ առվըները:

169. *Պռոշյան Պ. Հացի խնդիր, երկեր, Երևան, 1984, էջ 198; Շահազիզ Ե. Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 222:*
170. *Давидбеков И. Село Гадрут , Джеваншурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып.6,отд.1, Тифлис, 1888, стр. 191.*
171. *Խաչատրյան Ժ. Ջավախքի հայերի ժողովրդական պարերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 7, Երևան, 1975, էջ 50-51:*
172. *Ոտքի ծայրին:*
173. *Նստեց, փռվեց:*
174. *Փարդա, վարագույր, այլաբանորեն՝ աղիներն այլևս չեն դիմանում:*

Ախչըգները ծալած բոխչա,[175]
Հարսները՝ բաղ ու բախչա,[176]
Թըստան, հօդած պառվըները,
Գէնա լավ էն պառվըները[177]*:*

Տղամարդկանց դանդաղ պարը աստիճանաբար արագանում է, աշխուժանում, պարեղանակն ու խոսքերը փոխվում են. սկսվում է «Ինչով ծեծենք սոխն ու սխտոր» պարը.

Արէք ձէձէնք սօխն ու սխտօր,
Կանաչ կըխտոր, ջուխտ մանանէղ,
Ինչօ՞վ ձէձէնք սօխն ու սխտօր,
Կանաչ կըխտօր, ջուխտ մանանէղ,
Գլխով ձէձէնք...

Երգելով պարում էին այնքան, մինչև «սոխն ու սխտորը, կանաչ կխտորն ու ջուխտ մանանեխը» ծեծում էին «քընթով», «բերնով», «ձեռքով», «դիրսըգով (արմունկով)» «օռով» (հետույքով), «ծընգով», «վօդկօվ»[178]:

Հայտնի է, որ այս պարերին կանայք չէին մասնակցում. «կանանց օրենք չէր, որ պարեին, ամոթ էր, սուրբ օր էր»[179]: Պարերին երաժշտական գործիք նույնպես չկար, պարում էին միայն երգելով:

Այսպիսով՝ մեծ պասի հենց առաջին օրը «հայտարարվում» էր «սուրբ օր», որով փաստվում է բարեկենդանյան օրերի «անսուրբ» ընկալումը: Ավարտվում են «անսուրբ» օրերին թույլատրելի կանանց ազատությունները, սակայն դրան հաջորդում են ոչ թե սովորական օրերը, այլ հատուկ՝ «սուրբ օրերը», որոնք, ինչպես ասվեց, բարեկենդանյան «վայրի ազատությանը» հակադրում են Մեծ պասի չափազանցված խստակենցաղությունը: «Սուրբ օրը» սկսվում է զուտ տղամարդկային սուրբ պարով, «դուրս մղելով» «ծալած բոխչա աղջիկներին, բաղ ու բախչա հարսներին, թըստան, հօդած պառվըներին », նրանց հետ դուրս մղելով նաև «հալվան, կաթը» ու հրավիրելով «թթու մոխոխը»:

«Սուրբ օրը» կանանց դերակատարումը նվազեցնելու միտումը երևում է նաև այդ օրվա թատերականացված խաղերից: Ավելին, այդ օրվա տեսարաններում ի ցույց է հանվում կնոջ անառակությունը դատապարտող տեսարանը: Այսպես, Մեծ պասի առաջին օրը Վարանդայի Խաչ-մաչ գյուղում «...մի էշ են թամքում, մի կին նստեցնում վրան, երեսին մուր քսում, դավուլ-զուռնայի առաջնորդությամբ շրջեցնում տնե տուն և դրամ հավաքում: Հետո այս դրամը պահ են տալիս, որ Զատկին մատաղ անեն: Այս սևերես կինը ներկայացնում է Մեծ պասը....»[180]: Խաչ-մաչում կատարվող այս ծեսը ներկայացնող Ե.Լալայանը սևերես կնոջը համարում է Մեծ պասի ներկայացուցիչը, բայց հայտնի է, որ հայոց մեջ այս տեսարանով հասարակական պարսավանքի էին ենթարկում անառակ կանանց: Մեծ պասի առաջին օրը կնոջը փաստորեն ներկայացնում էին նրա՝ հասարակության կողմից վարքի դատապարտման հայտնի տարբերակով: Սակայն եթե իրական կյանքում այս տեսարանը կատարվում էր կոնկրետ կնոջ նկատմամբ՝ կոնկրետ իրավիճակում, ապա տոնական կյանքում այս տեսարանը հավաքական տեսարան էր, որը բնութագրում էր, ըստ երևույթին, Բարեկենանի տոնի ընթացքում կանանց վարքի թեթևամտությունը, որը, ճիշտ է, թույլատրված էր տոնական կյանքի սկզբունքներով, սակայն իրական կյանքում դատապարտելի էր: Այս ծեսը, թերևս, կնոջ բարեկենդանյան կյանքի

175. *Այսինքն՝ ինչպես պահունի, տոնական հագուստ:*
176. *Ծաղկած, կանաչած, զարդարված:*
177. *Խաչատրյան Ժ. Ջավախքի հայերի ժողովրդական պարերը, էջ 93:*
178. *Խաչատրյան Ժ. Ջավախքի հայերի ժողովրդական պարերը, էջ 93:*
179. *Խաչատրյան Ժ. Ջավախքի հայերի ժողովրդական պարերը, էջ 51:*
180. *Լալայան Ե, Երկեր, հ.2, Երևան, 1988, էջ 197:*

վաղնջական սեռական ազատությունների դրսևորումների խորհրդանշական դատապարտումն էր:

Մեծ պասի նկարագրությունում հիշեցինք, որ Բարձր Հայքի գյուղերում պահպանվել էր պատանուն Ախըլոճ դարձնելու սովորությունը[181]: Պատանիները նրան թարս դարձրած քուրք էին հագցնում և վրայից կապում կեմե գոտի: Գոտուց կախում էին մի քանի զանգակ: Ախըլոճն ունենում էր երկար բեղ ու մորուք, գլխին կրում բարձր ու բրդոտ փափախ: Երեսը մրոտում էին և ձեռքը տալիս մեծ դագանակ: Գոտուն կապած չվանը բռնած պատանին Ախըլոճին առաջնորդում էր տնից-տուն: Ախըլոճի հետ շրջում էին մի քանի տղաներ, որոնք տները մտնելիս երգում էին Մեծ պասին նվիրված երգեր: Երգելու պահին Ախըլոճը հանկարծակի թփրտալով «ուշագնաց» վայր էր ընկնում, իբրև թե «մեռնում» էր: Դրան հաջորդում էին հարայհրոցը, սուգ ու շիվանը: Տան երեխաներին սարսափ էր պատում: Խնամածու պատանիներն սկսում էին մեռնողին շոյել, ձեռքերը շփել և արթնացնել: Հենց որ Ախըլոճն արթնանում էր, դագանակը վերցնում, ծոճելով շրջում էր տան մեջ, անխոս հետապնդում, վախեցնում դյուրահավատներին: Այս գործողություններն ավարտելուց հետո, երբ Ախըլոճը դուրս էր գալիս, տնեցիները նրա վրա ջուր էին սրսկում: Դրան ի պատասխան Ախըլոճը մտրակահարում էր իրեն թրջողին»: Ներկայացումը նկարագրող ազգագրագետ Վ.Բդոյանը այս խաղի մեջ տեսնում է մեռնող-հարություն առնող Աստծո պաշտամունքի վերապրուկը[182]:

Թատերականացված խաղերին զուգահեռ այդ օրը կատարվում էր նաև խորհրդանշական «Ախըլոճին»-«Ակլատիզին» տուն բերելու ծեսը: «Ախըլոճ-Ակլատիզի» անվան Լոռվա տարբերակը՝ «Պապի պուլուլ, Պապի պլոր»[183] ուղղակի մատնանշում է նրա տղամարդկային՝ արական էությունը: Ինչպես տեսանք Բարեկենդանի ժամանակ, Աշտարակում վերջին օրը հանդիսավորապես վռնդում էին Ուտիս տատին և հրավիրում Պաս պապին: Այս տեսարանը զանազան տարբերակներով կատարվում էր հայոց բոլոր ազգագավառներում: Եթե Ուտիս տատին մարմնավորում էր կանացի կերպարանքով գզգզված հագուստով տիկնիկը, ապա Պաս պապին մարմնավորում էր խստահայաց ծերունու տեսքով տիկնիկը: Կարնոհայերը տիկնիկը պատրաստում էին տղամարդու հագուստով, փարթամ ու սպիտակ բեղ ու մորուքով, միոտանի, որի ծայրին խրվում էր սոխը յոթ փետուրներով, պարզած թևերով, որոնցից քարեր էին կախվում[184]: Ուրիշները ոլորած ճիպոտի ծայրին գլուխ սոխ էին ամրացնում, սոխի վրա այծի մազից բեղ ու մորուք սարքում, սոխի մեջ յոթ գույնզգույն փետուր խրում: Այն կախելու ժամանակ երեխաները երգում էին.

- Ակլատիզ, չվանը վիզ,
Եկավ մեզ հյուր՝ կախվավ երդիս:

Այլ վայրերում պարզեցված տարբերակն էր: Կախվում էր ուղղակի փետուրներ խրած սոխը, որին երբեմն փոխարինում էր գետնախնձորը, կարտոֆիլը, կավից կամ խմորից արված պարզ գունդը: Ըստ մշեցիների՝ փետուրները պետք է սև լինեին, որպես թե ձյունը շուտ հալվելու և գարունը գալու նկատառումով: Ուրիշները փետուրներից չորսը սպիտակ գույնի էին դնում՝ որպես Մեծ պասի առաջին չորս շաբաթները ձմռան հետ համապատասխանության նշան, մեկը՝ խատուտիկ, որպես անցումային շաբաթվա նշան, երկուսը՝ լրիվ սև, որպես Մեծ պասի գարնանը համապատասխանող վերջին երկու շաբաթների խորհրդանշան[185]: Գեղարքունիքում չորսը

181. *Բդոյան Վ. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 450*
182. *Բդոյան Վ. Երկրագործական մշակույթը Հայաստանում, էջ 450:*
183. *Լալայան Ե. Երկեր, հ. 3, Երևան, 2005, էջ 219, 243:*
184. *Բդոյան Վ. Երկրագործական մշակույթը Հայաստանում, էջ 449-450:*
185. *Տէր-Մինասեան Վահան վարդապետ, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, հ.Բ, Կ.Պոլիս, 1904:*

սպիտակ, երեքը սև գույնի էր: Նոր Նախիջևանում, որտեղ այն կոչվում էր «Մըռմըռաս», փետուրները զարդարում էին գույնզգույն ժապավեններով: Ամեն շաբաթը իր գույնն ուներ, Ջատիկինը՝ կարմիր, Ծաղկազարդինը՝ կանաչ, Լուսավորչինը՝ սպիտակ, մյուսները՝ սև[186]: Շատ տեղերում փետուրների գույներին կարևորություն չէր տրվում, իսկ յոթ փետուրներից մեկը կոտրում էին և այդպես կիսած խրում: Բայբուրդում այն կոչվում էր կոկորիճ՝ խոշոր սոխի գլուխ, նույն յոթ փետուրներով: Այստեղ կոկորիճի տակ կար մի կծու կարմիր պղպեղ և դարձյալ մանր քարեր. քարերը կարող էին ընկնել պասը խախտող երեխաների գլխին, իսկ պղպեղը կվառեր նրանց բերանը: Սոխը նույնպես առանձին անուն ուներ՝ Խարախոնջոլոզ: Այստեղ ամեն շաբաթվա վերջում հանվող փետուրները առանձին-առանձին թաղում էին հողի տակ[187]:

Ամենուր այն ընդունվում էր որպես Պաս պապ, Լոռիում նույնիսկ այն կախելիս երգում էին.

-Տատը գնաց շերեփը ձեռին,
Պապը եկավ չոմբախն ուսին[188]:

Լոռիում ասում էին, որ «պասը պապ է, իսկ ուտիսը՝ տատ: Պապը զայրացած հարձակվում էր միայն մարմնականի մասին մտածող տատի վրա, լոբու, սպասի ահագին շերեփով խփում նրա գլխին և տանից դուրս անում՝ ասելով. «Գնա, հեռացիր, անզգամ, բավական է, որքան որդիներիս պարարտացրիր, ճարպերը ավելացրիր, հանցանքների մեջ ձգեցիր, ժամանակն է, որ թողնեն այդ մարմնական զվարճությունները և մի քիչ հոգեկան սնունդով սնվելով հավիտենականության համար պատրաստվեն»: Տատը հնազանդվում էր և դուրս փախչում[189]:

Աշտարակում Ակլատիզը կախելիս տատն ասում էր. «...շնհավոր մեծ պաս, բարով հասնինք Զատիկը՝ ուրախ սրտով, ցամաք աչքով. պապին շնորհավորեցեք, տեսեք՝ թևավորված ոտները կախ արեց մեր երդիկովը, ծանր-ծանր նստեց, բարով պապի բմբուլները պոկելով տկլորացնենք, ումբրը լորի պոչ շինենք (այսինքն՝ կյանքը լորի պոչի նման կարճեցնենք), հետ ածենք գնա՝ քարափների տակին տապ կենա»:

Ակլատիզի յոթ փետուրները, որ Մեծ պասի յոթ շաբաթներին էր համապատասխանում, յուրատեսակ օրացույցի դեր էին կատարում, յուրաքանչյուր շաբաթվա վերջում մեկ փետուրը հանվում էր: Շատերն ամեն շաբաթվա փետուրը հանելիս ուղեկցում էին բնորոշ երգերով: Շիրակում յուրաքանչյուր փետուրը հանելիս ասում էին՝ «ճիճու, ճիճվարանքը դուրս, ցորեն, գարին ներս» և ջարդում ու մի կողմ էին նետում փետուրը[190]:

Ակլատիզի յոթ փետուրները, որ Մեծ պասի յոթ շաբաթներին էր համապատասխանում, յուրատեսակ օրացույցի դեր էին կատարում, յուրաքանչյուր շաբաթվա վերջում մեկ փետուրը հանվում էր: Շատերն ամեն շաբաթվա փետուրը հանելիս ուղեկցում էին բնորոշ երգերով: Շիրակում յուրաքանչյուր փետուրը հանելիս ասում էին՝ «ճիճու, ճիճվարանքը դուրս, ցորեն, գարին ներս» և ջարդում ու մի կողմ էին նետում փետուրը[191]:

Ակլատիզ - Պաս պապին հատկացվում էր պասը հսկող դեր: Այն շարունակ ճոճվում էր օջախի կրակի, ծխի և օդափոխության շնորհիվ: Թելը պտտվում էր մեկ մի, մեկ՝ մյուս ուղղությամբ, ինչի համար էլ Սասունում այն կոչվում էր նաև «ֆռիկ» կամ «ճոճո»[192]: Նրանով վախեցնում էին երեխաներին, որ հանկարծ ուտիսի կերակուրներ չուտեն, անկարգություն

186. *Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 20-27:*
187. *Տեր Միհասեան Վ. Անգիր դպրութիւն:*
188. *Լալայան Ե.Երկեր, հ. 3, էջ 243:*
189. *Լալայան Ե.Երկեր, հ. 3, էջ 219:*
190. *Միքայելյան Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Աղեքսանդրապոլ, 1901, էջ 195, 264-269:*
191. *Միքայելյան Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 195, 264-269:*
192. *Պետոյան Վ. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 342-343:*

չանեն, մեծերին լսեն[193]: Պաս պապի ամենատես աչքից ոչ մի օրինազանցություն չէր վրիպում, իսկ Պապի «չոմբախը» պատրաստ էր պատժել յուրաքանչյուր անհնազանդություն:

Այնուհետև 48 օր շարունակ հասարակության մեջ և ընտանիքում իշխում էին բացարձակ հնազանդության, ենթակարգության, սննդային պահեցողության, մարմնական ու հոգևոր ժուժկալության, սեռական ու նյարդային զսպվածության չափազանցության հասնող նորմերը: Բոլոր տաբուները խստորեն կատարվում էին: Այդ օրերին շատերն էին հաճախակի նայում երդիկից ճոճվող Ակլատիզին՝ անհամբերությամբ հաշվելով նվազող փետուրները:

Մինչև պասի վերջը սպասելուց հոգնած մարդիկ սկսում էին երազել վերջին փետուրները քաշելու մասին: Նոր Նախիջևանում նույնիսկ առած կար. «Մըռմըռասը փետփետելով Զատիկը թեզ չի գալ»: Նախավերջին, վեցերորդ փետուրը հանելիս, երկար պասից հոգնած ու նեղված «քար քաշելուց էլ ծանր» վերջին շաբաթն ի նկատի ունենալով, ասում էին.

- Հետին շաբաթ քարքաշան,
Ճժեր հալան ու մաշան [194]***:***

Վերջին փետուրը հանելու օրը նաև Պաս պապի վերջին օրն էր: Պասը վերջանալու հետ գալիս է նաև պասը հնկող Պաս պապից ազատվելու ժամանակը: Ծեսի կարևորագույն մասը, ահա, այս Պապից ազատվելու կերպն էր: Այդ «կերպն» ի վերջո հանգում էր Պապի ծիսական «վռնդելուն», ինչպես ժամանակին Տատին էին «վռնդել»:

Զատիկի՝ Հարության տոնի նախորդ օրը, երբ բոլորն զբաղված էին տոնական պատրաստություններով, կանայք՝ ձվեր ներկելով, փլավների նյութը մաքրելով..., իսկ տղամարդիկ՝ զատկական հասարակական մատաղի նախապատրաստություններով, իսկական ժամանակն էր Ակլատիզի վերջին փետուրի հետ պասը դուրս անելու: Պատարագի զանգերը խփելու պահին Պաս պապ-Ակլատիզի վերջին՝ յոթերորդ փետուրը հանելով բուն Ակլատիզ-տիկնիկին տան երիտասարդները տանում էին կալերը և չարախնդալով, դագանակների հարվածներով դես ու դեն քշելով՝ ջուրը գցում, ազատվում: Գեղարքունիքում ակլատիզի փետուրներից մերկացած գունդը՝ «կուկուն» գցում էին թոնիրը[195]: Լոռիում «...ուրախ և առույգ տատը, մածունի ահագին եղակոլոլ շերեփը ձեռքին, մտնում է ներս և դուրս անում նիհար, չորացած պապին՝ մի քանի հարված տալով նրա փետրած «պլորին»: - Գնա, կորիր,- ասում է տատը պապին,- քո սոխ ու բոխով, լոբի ու մոխոխով, թող որդիներիս պռոշներին մի պատառ յուղ քսեմ, թխացած սրտները կաթ ու մածունով հովացնեմ»[196]: Շիրակցիները Ակլատիզին «վռնդելու» միջոցին երգում էին.

- Ձմեռն անցավ, գարունն եկավ,
Պասը գնաց, ուտիսն եկավ
Քաշվի, կորի, Զատիկն եկավ [197]***:***

Քղեցի Սուրեն Սարգսյանը նկարագրում է «Խուլունճիկը, որ իր կծու դիմագծով և հավքի թևերով իջնում է տան երդմուղի բացվածքից Բարեկենդանի վերջին գիշերեն հետո և հոն հաստատում իր իշխանությունը... Երբ գալիս է այն պատմական ժամը, երբ քաշում են յոթերորդ փետուրը, հոն դուք ուշք դարձուցեք տանտիկինին, նա դանակը ձեռքը, ասում ես հիմակ գոմեշ պիտի մորթի,- վար է առնում սոխը, վրեժխնդրությամբ կտոր-կտոր անում զայն և նետում է տապկված յուղի մեջ..., որ թե իր սիրտը հանգչի, թե հրեշը վերնա մեջտեղից»[198]: Սակայն

193. *Սարգիսեան Յարութիւն. Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 33; Յակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 231, Շահազիզ Ե. Նոր Նախիջեւանը և Նոր Նախիջեւանցիք, ԱԳ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 20-27; Ավագյան Ս. Արծակ, ՀԱԲ, հ.8, Երևան, 1978, էջ 94-95 և այլն:*
194. *Միքայելյան Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 195, 264-269:*
195. *Գրիգորյան Ռ. Գեղարքունիք, ՀԱԲ, հ.14, Երևան, 1983:*
196. *Լալայան Ե.Երկեր, հ. 3, էջ 219:*
197. *Միքայելյան Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 265:*
198. *Սարգիսեան Ս. Տոնական օրերը: Նոր Գեղի, Ազգագրական հանդես, Բեյրութ, 1965, էջ 52-53:*

«հրեշին» մեջտեղից վերացնելու պահին, ինչպես տեսանք, նրա մի, ամենակարևոր մասնիկը «պահում էին»,- սոխը եփում էին:

Ակլատիզի այդ մասնիկը՝ սոխը, որոշ տեղեր՝ սոխի ծիլը բոլորն էին օգտագործում: Այնթափցիները, որոնք փետրազարդ սոխը կոչում էին Խուլուճիկ, Մեծ պասի վերջին օրն այն թաթախում էին մածնի մեջ և նետում տանիքը: Ըստ նրանց պատկերացումների, սոխը դառնում էր մկաններ, խռիվը՝ թևեր, ինքը՝ Խուլուճիկն ամբողջովին՝ թռչուն, որ թռչում-գնում էր հաջորդ տարին վերադառնալու պայմանով: Ամենուր Մեծ պասի ընթացքում որպես Ակլատիզ ծառայած ծլած սոխի ծիլը կտրում էին և գցում Ջատիկին եփվող կերակրի մեջ:

Այսպիսով տղամարդու իշխանությունը խորհրդանշող Ակլատիզին Մեծ պասի վերջին օրը «վռնդում» էին, սակայն նրա ամենակարևոր, ամենակենսունակ մասը՝ ծիլը «պահում» էին:

Դիտարկենք Ակլատիզի որոշ ընկալումներ հայոց ազգագավառներում: Վ.Գորդլևսկին հիշատակում է թուրքահայերի պատրաստած Ակլատիզը հետևյալ կերպ. յոթ փետուրներով սոխի վրա կանայք աչքեր ու հոնքեր էին նկարում և առաստաղից կախված այդ սոխը երբեմն-երբեմն շարժելով՝ վախեցնում պասի օրենքները խախտելու հակում ցուցաբերող երեխաներին, թե ահա «Կարա-Խոնջոլոզը կգա»[199]: Ինչպես վերը տեսանք, «Խարախոնջոլոզ» անունը բայբուրդցիներն օգտագործում էին բուն Ակլատիզի սոխի համար: Այսինքն կարծեք թե մի դեպքում Կարախոնջոլոզի «գալը» սպառնալիք էր պասը խախտողներին, այլ դեպքում՝ «Խարախոնջոլոզը» արդեն ներկա էր պասի ընթացքում ի դեմս Ակլատիզի սոխի: Նոր նախիջևանցիներն էլ Ակլատիզն անվանում էին «Մըռմըռաս»՝ հավանաբար նկատի ունենալով սոխի մրմռացնող հատկանիշը: Այս բառերը հուշում են, որ պատժիչ գործառույթ ունեցող Ակլատիզն ուներ նաև պատժիչ «հնարավորություն»՝ մրմռացնելու, բերանը վառելու (կծու պղպեղը), կամ՝ որպես «կարա-խոնջոլոզ», «խարախոնջոլոզ»՝ ահ ու սարսափ տարածելու, քանի որ Խոնջոլոզը, Խարա/Կարա Խոնջոլոզը (սև խոնջոլոզ) թուրքական հավատալիքներում ընկալվել է որպես չար ոգի, նույնիսկ՝ մարդակեր, որն ի հայտ էր գալիս ձմռան ցրտերին[200]: Սակայն հայոց մեջ ձմռան սկզբներին հայտնվող «շվոտ»[201], «խոնջոլոզ» կոչվող ոգիներին, դևերին «այրում էին» Տյառնընդառաջի ծխով ու կրակով և համարվում էր, որ նրանք տանը մնում էին մինչև այս տոնը[202]: Տյառնընդառաջից հետո «Խոնջոլոզը» միայն մեծերի կողմից երեխաներին զսպող սպառնալիք էր, այսինքն՝ չար Խոնջոլոզի միայն անունն էր օգտագործվում: Բայբուրդում Ակլատիզի սոխը «Խարախոնջոլոզ» անվանելու սովորույթը բուն «Խոնջոլոզի» առկայություն չպիտի նշանակեր, այլ միայն՝ Ակլատիզի հնարավոր պատժիչ գործառույթի մասին ակնարկ, որ տվյալ դեպքում ընդամենը վախեցնելու միտում ուներ: Ավելին, ա՛յս՝ Ակլատիզ-Խոնջոլոզին դիմում էին փաղաքշական խոսքերով.

Խոնջոլոզ, ացին, ացացին,
Խոնջոլոզ, Սուրբ Աստվածածին,
Խոնջոլոզ, օրօջ եմ քաղե,
Խոնջոլոզ, գոտիտ եմ շարե [203]***:***

Քառատողից երևում է, որ բուն «Խոնջոլոզին»՝ չար ոգուն չէ, որ դիմում են այս երգով: Ակնհայտորեն սա սարսափելի, նույնիսկ մարդակեր չար ոգին չէ: Ակլատիզի ստորին մասին՝ փետուրներ խրած սոխին կամ խմորագնդին սպառնալի անուններ տալը պետք է դիտել

199. *Гордлевский Вл. Из османской демонологии, М., 1914, էջ 8-9:*
200. *Гордлевский Вл. Из османской демонологии, էջ 9: Թուրքական ժողովրդական հավատալիքների հետազոտող Վ.Գորդլևսկին գտնում է, որ Խոնջոլոզը թուրքերը փոխ են առել քրիստոնյաներից (հույներից):*
201. *Այդ նպատակով, օրինակ, Բալուում վառվող անձրոները տուն էին տանում և պտտեցնում բոլոր անկյուններում, - Սարգիսեան Յ (Ալեւոր). Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 20:*
202. *Տեր Մինասեան Վ.Անգիր դպրութիւն, էջ 88:*
203. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, Ереван, 2004, էջ 214:*

ընդամենը Ակլատիզի պատժիչ հնարավորության ընդգծում: Ակլատիզի այդ գործառույթը երևում է նաև է.Պետրոսյանի նյութերից հայտնի հետևյալ եռատողում.

Ակլատիզ, չվան ի վիզ,
Չվանդ թուլ տուր(թուլացրու),
Արի, լացողին կուլ տուր [204]***:***

Ակլատիզն, այսպիսով, կարող էր պատժել: Սակայն Ակլատիզն ինքն ավելի դրական, քան բացասական ընկալում ուներ: Պետք է հիշել, որ Ակլատիզի փետրազարդ մասը՝ ստորին գունդը ոչ միշտ էր սոխ: Եթե այդ մասը խմորագունդ էր, այն նույնպես կիրառություն էր գտնում. չորացած խմորագունդը փշրում էին և տալիս հավերին[205]: Հավանաբար այդ սովորույթին է առնչվում Նախիջևանի Ազնաբերդ գյուղում տարածված երգը.

Ագլադիզ, բռնիբիբիզ,
Տափով տված, կեռով հանած,
Մանդր ծտեր, տաշտի կդեր,
Եգեք, եգեք, տարեք [206]***:***

Հենց թեկուզ այն փաստը, որ Ակլատիզի այդ մասը՝ ծլած սոխը կամ խմորագունդն օգտագործվում էր՝ վկայում է Ակլատիզի բարի, օգնող գործառույթի օգտին: Այլ կերպ ասած Ակլատիզի այդ մասը վախեցնող նյութ է դարձել (սոխ) և սպառնալի անուններ («խարախոնջոլոզ», «մըռմըռաս») ստացել միայն որպես վերացական սպառնալիք, իսկ իրականում Ակլատիզը սիրված և բարյացկամ կերպար էր: Այդ են վկայում Ակլատիզին առնչվող երգերի մեծ մասը.

Ակլատիզ, չվան ի վիզ,
Ուրախ եկար, մեր Ակլատիզ [207]***:***
Ակլատիզ, չվան ի վիզ,
Մանգաղ ի ձեռ,
Ուրախ եկար,
Խերով եկար,
Խեմեմնու վրեն
Ուրախ տարի իգա [208]***:***

Ակլատիզը հուսաբեր էր, այն կարող էր «խեր» բերել, «ուրախ տարի» ապահովել, դուրս վռնդել չարիքը և ապահովել հաջող բերքը: Այդ է վկայում նաև Ակլատիզի փետուրները հանելիս ասվող «Ճիճու, ճիճվարանք դուրս, ցորեն, գարի՝ ներս» արտահայտությունը: Որոշ վայրերում Ակլատիզի յոթ փետուրներն օգտագործվում էին բարիք ապահովելու նպատակով: Շիրակում՝ Արթիկում, օրինակ, հավաքում էին բոլոր փետուրները, խուրծ անում և հաց թխելիս այդ խրծով մաքրելով սեղանի ալյուրը՝ թափ տալիս խմորի վրա: Փանիկ գյուղում այդ փետուրները պահում էին ներքնակի տակ՝ մինչև մյուս տարվա Մեծ Պասը: Բոլոր դեպքերում դրանց վերագրվում էր բարեկեցության ապահովման զորություն[209]: Ակլատիզը կարող էր օգնել նաև անձերին: Նրան դիմում էին խնդրանքով. «Սուրբ Ակլատիզ, կատարիր խնդրանքս, ես քեզ մատաղ կանեմ»[210]: Ակլատիզի վերջին փետուրով նաև գուշակություն էին անում. ալաշկերտցիներն այդ փետուրը երդիկից գցում էին տուն՝ գետին, և եթե փետուրը «մեջքի» վրա էր ընկնում՝ լավ նշան էր, եթե

204. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 213:*
205. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 212:*
206. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 213:*
207. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 214:*
208. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 214:*
209. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 212:*
210. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 216:*

«փորի»՝ կոր մասով՝ վատ, տան երեխաներից մեկն ու մեկը կհիվանդանար[211]:

Միաժամանակ Ակլատիզը «տառապյալ էր»: Երգերի մեծ մասում Ակլատիզը «չվանը վզին» է, և «չվանը վզին» Ակլատիզն արդեն գիտի իր «կյանքի» կաճատևությունը. այդ մասին նրան հաճախ են «հիշեցնում».

Ակլատիզ, չվան ի վիզ,
Մինչև ե՞րբ կախվես [212]***:***

Երգերից մեկում նույնիսկ սպառնալիք կա.

Ակլատիզ, չվան ի վիզ,
Չվան կդրի, խփնի ձեր վիզ [213]***:***

Գալու պահին ուրախությամբ ընդունված Ակլատիզի «գնալուն», հեռանալուն սպասում էին: Ճիշտ է, սպասում էին անչար, սակայն սպասում էին, քանի որ Ակլատիզի գնալով, հեռանալով էր սկսվելու Ջատիկը՝ ուրախությունը, գարունը՝ նոր կյանքն ու նոր տնտեսական տարին.

Ագլատիզ ջան, ագլատիզ,
Ջատիկը բե, կարմիր հավգիթ ներգենք [214]***:***

Ակլտիզի կյանքի վերջը Մեծ պասի վերջին օրն էր, երբ, ինչպես տեսանք, նրան վռնդում էին, գանահարում էին՝ այդ գործողություններն ուղեկցելով խոսքերով,

Չմեռն անցավ, գարունն եկավ,
Պասը գնաց, ուտիսն եկավ,
Քաշվի, կորի, Ջատիկն եկավ:

Զանազան տարբերակներով Ակլատիզին հեռանալու առաջարկ անում էին ամենուր. Զավախքում երեխաները կալում մահակներով ծեծում էին ակլատիզից մնացած գունդը և ասում «Գնա, այլևս չգաս, չերևաս»[215], Սևանի ավազանում Ակլատիզի վերջին փետուրը տանիք նետելիս ասում էին. «Գնա, քեզ հաջողություն: Շնորհակալ ենք, գնա, հեռացիր»[216]:

Նյութերը վկայում են նաև Ակլատիզի մեկ այլ՝ թռչնային էության մասին: Բուլանըխում Ակլատիզ սարքելիս սոխի մի կողմից պատրաստում էին թռչնի կտուց: Այնթափցիները, որոնք փետրազարդ սոխը կոչում էին Խուլուճիկ, ինչպես ասվեց, պատկերացնում էին, որ Մեծ պասի վերջին օրը սոխը դառնում էր մկաններ, խռիվը՝ թևեր, ինքը՝ Խուլուճիկն ամբողջովին՝ թռչուն, որ թռչում - գնում էր հաջորդ տարին վերադառնալու պայմանով: Ակլատիզին վերջին օրն առաջարկում էին թռչել-հեռանալ, կորչել.

Ակլատիզ, թռի հերդիս,
Ակլատիզ, գունդըմ թիզ,
Ջարգիմ գոտիս, ընգնիս, կորիս [217]***:***

Ակլատիզի հենց թեկուզ փետրազարդ կերպարը հուշում է նրա հնարավոր թռչնային նույնականացումը: Չի բացառվում, որ Ակլատիզի-Աքլատիզի նույնիսկ անունը «աքլոր»-ից է առաջացել, ինչպես ենթադրում է Է.Պետրոսյանը, համարելով այդ անունը «աքլոր» և «տիզ» բառերից բարդված[218]: Մեծ պասի առաջին շաբաթը «Կօկօ ռասի» կոչելու համշենահայերի մեջ

211. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 212:*
212. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 212:*
213. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 213:*
214. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 213-214: Վ.Գորդլևսկին գրում է, որ բուրթահայոց մեջ պասը վերջանալիս հայուհիները երդիկից սոխի փոխարեն կարմիր ձու էին կախում:*
215. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 212:*
216. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 212:*
217. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 213:*
218. *Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, էջ 223-224:*

ընդունված սովորույթը Ժ.Խաչատրյանի և Է. Պետրոսյանի ենթադրությամբ կարող էր վերաբերել նաև Ակլատիզին և նույնականանալ կօկօռաս-աքլորիկ իմաստի հետ, ինչպես ակլատիզ-գոգոռոզն է[219]: Մեզ համար տվյալ դեպքում կարևոր է նրա «արու» էության ընդգծումը:

Այսպիսով կարող ենք փաստել, որ Ակլատիզի կերպարը հայոց տարբեր ազգագավառներում ընկալվել է որպես տղամարդ-արու էություն, որը ձմռան վերջին ժամանակավորապես հաստատվում էր ընտանիքում, հսկում էր ընտանիքի անդամների՝ հասարակայնորեն ընդունված բարոյական նորմերը, կարող էր պատժել այդ նորմերը խախտող օրինազանցներին, մտահոգված էր ընտանիքի բարեկեցությամբ և այս կամ այն չափով նպաստում էր ընտանիքի ու նրա առանձին անդամների հաջողություններին: Նրա ներկայության ժամանակահատվածն ընտանիքում խստորեն սահմանափակված էր՝ Մեծ պասի ընթացքը, որից հետո նրանից «ազատվում էին»,- աստիճանաբար փետրահան անելով՝ նրա կյանքը նվազեցնելով, ջուրը գցելով, թոնիրը գցելով, դագանակներով ծեծելով, ոտնատակ անելով, ուղղակի տնից վռնդելով և այլն: Ընդ որում վռնդելու այս գործում ամենաշահախնդիրը կանայք էին, որոնք նրա հեռանալը «ծրագրավորել» էին դեռևս նրա հաստատվելու սկզբին. «... բարով պապի բմբուլները պոկելով տկլորացնենք, ումբրը լորի պոչ շինենք (այսինքն՝ կյանքը լորի պոչի նման կարճեցնենք), հետ ածենք գնա՝ քարափների տակին տապ կենա»: Այսպիսով հենց սկզբից, առաջին իսկ օրը բարձրաձայն հայտարարվել էր ծիսական «տղամարդու» ներկայության կարճատևությունը, և այդ շրջանն արագորեն ավարտելու կանանց պատրաստակամությունը: Ուտիս տատի և Պաս պապի հակադրության ու նրանց մշտական վեճը արտացոլված է Լոռվա սովորույթներում,- նախ պապը տատին վռնդում է՝ զավակների հոգին գեր մարմնի մեջ տկարացնելու մեղադրանքով, ապա տատն է պապին վռնդում՝ նրան մեղադրելով երեխաների մարմինը չափազանցված խստակենցաղությամբ տկարացնելու մեջ:

Ամեն ինչից երևում է, որ Բարեկենդանի վերջին օրը, Մեծ պասի առաջին օրը և նույն Մեծ պասի վերջին օրը ծիսական պայքար էր ընթանում կանանց ու տղամարդկանց միջև: Բարեկենդանին աննախադեպ դրսևորումներ ունեցող կանանց (ինչպես նաև անչափահասների, երիտասարդների) ազատությունն ավարտվում էր Մեծ պասով, որով սկսվում էր տղամարդկանց «իշխանության» և կանանց ազատությունների սահմանափակության շրջանը: Յոթ շաբաթվա հսկումից հետո դադարում էր Ակլատիզի-տղամարդու իշխանությունը և գարունը, նորոգ կյանքը մտնում էր իր լիակատար իրավունքների մեջ: Վերջանում էր ժամանակավոր պայքարը պապի ու տատի, տղամարդու ու կնոջ, ձմռան ու գարնան, զսպման ու հաճույքի միջև: Զատիկով և Զատիկին հաջորդող քառասնօրյա շրջանով, մինչև Համբարձում աստիճանաբար իր իրավունքների մեջ էր մտնում վերադարձած Ուտիսը՝ «կինը»: Այդ ընթացքում պաս օրեր չկային և միմյանց հաջորդում էին երիտասարդներին ու կանանց ազատություններ բերող Կանաչ-Կարմիր կիրակիները, մինչև Համբարձման՝ աղջիկների ու երիտասարդ կանանց, սիրո, արբունքի, բնության հարության տոնաշղթայի եզրափակիչ տոնը, որից հետո մինչև հաջորդ Բարեկենդան կյանքը պետք է շարունակվեր՝ պարբերաբար տոնական՝ «կանացի», պասի՝ «տղամարդու» կերպարի հերթափոխով:

Կարծում եմ այս ծեսի-ծիսաշարի դեպքում մենք գործ ունենք վաղագույն շրջանից եկող առնվազն երեք իրողության ետնագույն, խորհրդանշական արձագանքի հետ: Դրանցից առաջինը կարող է լինել պասի նվիրագործական բնույթը: Խմբային չափազանցված խստակենցաղությունը, ժուժկալությունը, զսպվածությունը. ծիսական մարմնական և հոգևոր բռնությունը նվիրագործման ծեսերի անկապտելի հատկանիշներն են: Նվիրագործման ծեսերի

219. *Խաչատրյան Ժ., Պետրոսյան Է. Համշենցիների տարեկան տոներն ու խաղերը (19դ վերջ-20դ.), Սոչիում 2005թ. սեպտեմբերին համշենահայերի մշակույթին նվիրված գիտաժողովի նյութերից:*

մեկ այլ առանձնահատկությունը, այն է՝ դրա պարտադիր լինելը և այդ պարտադրանքն ապահովող վախի մթնոլորտը կամ այդ վախի աղբյուրը՝ Ակլատիզի պատժիչ գործառույթը նույնպես առկա է նկարագրված ծեսում: Այն հաջորդում է «մեծ խնջույքին»՝ Բարեկենդանին, ինչը նույնպես բնորոշ է նվիրագործման ծեսերին: Եթե պասն առհասարակ, իսկ Մեծ պասը՝ մասնավորապես դիտարկենք որպես հասարակական համընդհանուր նվիրագործման ծես, ապա պետք է փաստենք, որ սա ընդհանուր հասարակական, ոչ թե հասակային կամ մասնագիտական խմբի նվիրագործում է: Ընդհանուր առմամբ դա հնարավոր է, եթե հաշվի առնենք կատարման ժամանակը՝ ձմռան վերջը, գարնան սկիզբը, մահվան ու կյանքի սահմանագիծը, նոր կյանքի սկիզբը. ողջ հասարակությունը խմբով ծիսական մահվան ու հարության է ենթարկվում ամեն տարի՝ մահվան ու կյանքի բնական սահմանային հանդիպմանը: Բնության ու հասարակության նույնականացումը կատարվում է տիեզերական երևույթների ռիթմով. գարունը կյանքի, հողի «հղության», «բեղմնավորման» սկիզբն է:

Ծեսի երկրորդ, զուգահեռ իմաստը կարող է առնչվել տղամարդկանց ու կանանց իրական կամ առասպելական դերերի վաղագույն դրսևորումներին կամ ընկալումներին: Անկախ այն բանից, թե երբեմնի կանանց հասարակական դերն ու հեղինակությունը իսկապե՞ս անհամեմատ բարձր է եղել տղամարդկանցից, թե՝ դա ընդամենը հասարակական-մշակութային առասպել է, բոլոր դեպքերում այդ իրական երևույթը կամ երևույթի առասպելական ընկալումը կրոնական ու հասարակական մշակույթում ծնել են բազում արձագանքներ: Դրանցից մեկն էլ համարյա բոլոր հասարակություններում առասպել-պատմություններն են այն մասին, որ տղամարդու կենսաբանական՝ բեղմնավորման գործառույթն ավարտվելուց հետո «խմբում» նրա ակտիվ դերակատարումն ավարտված է համարվել և նրան այնուհետև հատկացվել է նվազ ակտիվ կամ առհասարակ պասիվ դեր: Այս պատկերացումները նույնպես արտացոլվել են ծիսական հարաբերություններում: Դրանցից մեկը կարող է դիտվել տղամարդկանց ու կանանց միջև վերը նկարագրված ծիսական պայքարը, ընդ որում՝ զգալիորեն բացահայտ պայքարը: Ծեսում պետք է տեսնել հենց այս երևույթի ետնագույն արձագանքը. տղամարդու իշխանության՝ ակտիվության շրջանի ավարտից հետո նրան «մեկուսացնում» են հասարակությունից: Ձմռան վերջին հաստատվող տղամարդը՝ «արուն» կատարում է իր հիմնական կենսաբանական գործառույթը՝ բեղմնավորումը, որից հետո մարդկանց նախնական պատկերացումներում նրա դերը հասարակության մեջ նվազում կամ նույնիսկ անիմաստ է դառնում: Կարևորվում է «բեղմնավորված» կնոջ դերը: Արուն՝ տղամարդը, կամ նրա խորհրդանշական կերպարը՝ Ակլատիզը գիտի իր դերի կարճատևությունը և իրեն սպասվող «վռնդումը». այստեղից՝ «տառապյալի» նրա կերպարը (եթե «տառապյալի» կերպարը նվիրագործվող տղամարդու տառապանքը չէ կամ նույնիսկ «չվանը վզին»-ը չի խորհրդանշում տղամարդու ծիսական մահը):

Արուն՝ տղամարդը, սակայն, չպետք է ամբողջովին վերացվի, այլապես կյանքը կընդհատվի: Իսկապես Պաս պապին «վռնդում» էին ժամանակավորապես, նրան չէին «վերացնում»: Մի դեպքում նրան հնարավորություն էին տալիս թռչուն դառնալ և գնալ-հեռանալ, այլ դեպքերում օգտագործում էին նրա «պլորը»՝ տղամարդու ձվարանները, կյանքի աղբյուրը, որի միջոցով պիտի վերածնվի նա ինքը և վերականգնվի նրա իշխանության շրջանը: Այլ կերպ ասած Մեծ պասի վերջում պարզապես սահմանափակվում էր տղամարդու դերակատարումը:

Ծեսի/ծիսաշարի երրորդ բնութագրիչը հայոց աշխարհընկալման մեջ կնոջ ու տղամարդու հիմնական դերերը կամ հասարակության կողմից նրանց վերագրվող վարքի նորմերը բնութագրող իմաստն է. կինը՝ գարնան, կենսուրախության խորհուրդն է, բայց նաև՝ խրախճանքի, անհնազանդության, անառակության: Տղամարդը «կարգն» է՝ խստակեցությունը, հնազանդությունը, օրենքը..., բայց նաև՝ կյանքի աղբյուրը: «Ուտիս տատի» և «Պաս պապի»

կերպարների մեջ ծպտված են կանացի և տղամարդկային վարքի հասարակական վերագրումները, այսինքն՝ հասարակության կողմից նրանցից յուրաքանչյուրին վերապահված դերակատարումները:

Նրանց հարաբերությունները խստորեն կանոնակարգված են տարեկան տոնա-ծիսական կյանքի փուլերով. կնոջ, կամ նրան վերագրվող վարքի նորմերի «իշխանության» շրջանը վերապահված է տոնական օրերին, տղամարդունը՝ պահեցողության օրերին: Հայոց մեջ ուտիս և պաս օրերի թվային-քանակական համամասնությունը կազմում է համապատասխանաբար 109 տերունի օր ուտիքով և 158 պաս օր, ընդամենը տարեկան 267 սահմանազատված օր: Տարվա մնացած՝ 98 օրերը ներդաշնակ հավասարության շրջանն է, որտեղ դերերը և դրան համապատսխան կյանքի ռիթմը կանանց ու տղամարդկանց իրավունքների ու հնարավորությունների իմաստով բաշխվում է հավասար: Միահեծան իշխանության բևեռային հակադրության զուգահեռ գոյությունը անհամատեղելի է և հանգեցնում է հակամարտության (դրանց սահմանային հանդիպումները «Ուտիս տատի» ու «Պաս պապի» վեճերի ու կշտամբանքների շրջանն է), բայց երկուսն էլ անհրաժեշտ են: Այդ անհրաժեշտությունը ավանդական մշակույթում խստորեն կանոնակարգված էր և այդ պատճառով՝ հնարավոր: Չկանոնակարգված մշակույթում երկու անհրաժեշտություններն էլ դրսևորվում են ամենօրյա կյանքում՝ այն վերածելով քաոսի:

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՏԱՎՈՐ ՍՑԵՆԱՐԸ

Սցենարը նախատեսվում է տոնակատարությանը մասնակցելու ցանկություն ունեցող երկու-երեք հարյուր մարդկանցից բաղկացած խմբերի, համապատասխանաբար 70-80 ընտանիքի համար: Սակայն այն կարող է նաև ավել կամ պակաս մարդկանց խմբերով կազմակերպվել: Ընդհանուր առմամբ եթե տոնակատարությունը կազմակերպվում է գյուղական բնակավայրերում, ապա փոքր գյուղերի դեպքում այն կարող է ընդգրկել ողջ գյուղի բնակչությունը, սակայն մեծ, կտրտված թաղամասերով գյուղական բնակավայրերում ցանկալի է տոնակատարությունը կազմակերպել ըստ թաղամասերի: Քաղաքներում բազնաբնակարան շենքերով թաղամասերում ավելի ճիշտ կլինի տոնակատարությունը կազմակերպող խմբերը հավաքվեն ըստ երկու-երեք-չորս շենքի բնակիչների, բայց սա պարտադիր չէ:

Տոնակատարությունից մեկ շաբաթ առաջ հավաքվում են և ընտրում կազմակերպիչներին: Կազմակերպիչների գործառույթները.

- *ընտրում են ուխտավայրը (ուխտավայրերը) և կենտրոնը, որտեղ պիտի տեղի ունենա հիմնական ծեսը կամ ծեսերը: Հիմնական կենտրոնացված ծեսերը չորսն են.*

  1. *գիշերային խարույկահանդես,*
  2. *զոհաբերության արարողություն,*
  3. *«Խնդումի» ծես,*
  4. *ջրախաղեր,*

- *ընտրում են «Խնդումի» ծեսը կատարողներին (նաև գլխավոր դերակատարին),*
- *ընտրում են զոհաբերության ծեսը կատարողներին, մատռվակին, հացթուխներին,*
- *բաժանում են տեքստերը (սցենարը, երգերի տեքստերը, ձայներիզները),*
- *կազմակերպում են տոնակատարության կենտրոնների մաքրումը և հանդիսավոր հարդարումը:*

Քաղաքներում սրանք շատ-շատ են: Ըստ էության՝ յուրաքանչյուր շենքի բնակիչներ կարող են առանձին խմբեր կազմել, սակայն ավելի լավ կլինի, եթե 5-6 շենքի բնակիչներ միավորվեն: Եթե շենքերի համախումբն ունի «բակային» մաս կամ համեմատաբար փակ տարածք, խարույկահանդեսի համար ընտրվում է այդ տարածքը: Իսկ եթե շենքերը գծային են՝ դրանցից մեկի առջև: Գյուղերում դրանք կարող են թաղամասերի «հավաքատեղիները» լինել: Խարույկի հանդեսը հիմնականում «երիտասարդական» է, այն կարող է կազմված լինել 15-30 տարեկան աղջիկներից և տղաներից: Երեկոյան խարույկահանդեսին մասնակից տղաները խարույկի փայտը, ծղոտը կամ այլ նմանօրինակ վառելիքն են հավաքում և դիզում պայմանավորված վայրում, իսկ աղջիկները շրջում են տնետուն և խնձոր հավաքում. ամեն ընտանիք պետք է տա գոնե մեկ, կամ իր ընտանիքի անդամների թվին համապատասխան խնձոր: Այդ խնձորները մինչև խարույկը վառելը լցնում են փայտի կամ խոտի դեզի տակ: Շատ զգույշ պետք է լինել, որ «իրենց» խարույկը ուրիշները չվառեն, օրինակ, հարևան թաղի կամ շենքի երիտասարդները: Այդ նպատակով նախապատրաստվող խարույկի մոտ միշտ մարդիկ են մնում՝ յուրատեսակ պահակի կարգավիճակով, որպեսզի «իրենց խարույկը պաշտպանեն»: Խմբից երկու-երեք հոգու հանձնարարվում է, որ հետևեն հարևան թաղերի՝ խարույկի համար նախապատրաստված դեզերին և, եթե որևէ խումբ անփույթ է «պահակություն» անելու հարցում՝ մութն ընկնելուն պես մի տղա ու մի աղջիկ վառում են «անտեր խարույկը»: Խարույկ վառողը խարույկի տերն է դառնում, և անուշադիր խումբը զրկվում է խարույկահանդեսից ու դառնում դիտորդ: Նրանք լավագույն դեպքում կարող են գիշերվա ընթացքում դիտել «խարույկի տիրոջ» հանդեսը:

Խարույկահանդեսի խորհուրդը հետևյալն է. գիշերվա ժամը 12-01-ից մասնակից խմբերը շրջապատում են վառվող խարույկը: Խարույկը վառում են մեկ տղա և մեկ աղջիկ՝ խմբերի առաջնորդները: Վառվող խարույկի շուրջը նստած երիտասարդներն սկսում են անեկդոտներ կամ զվարճալի պատմություններ պատմել: Սկսվում է զվարճալի պատմությունների մրցույթ: Մրցույթին մասնակցող խմբերը երկուսն են՝ տղաներն ու աղջիկները: Առավել զվարճալի պատմություններով աչքի ընկած խումբը մեկ-երկու ժամ տևած մրցույթից հետո իրավունք է ստանում Վարդավառի գիշերվա հանդեսի կարգադրիչը դառնալ: Հենց որ որոշվում է, թե որ խումբն է կարգադրիչը, այնուհետև գիշերվա ընթացքը կարգավորում է այդ խումբը: Հենց նա էլ որոշում է, թե երբ պետք է ընդհատել սրամտելու, հիշելու, ծիծաղեցնելու տեսարանը և սկսել երգերի, ապա՝ պարերի տեսարանը:

Երգերի տեսարանը նույնպես յուրօրինակ մրցույթի տեսարան է: Երգերի մրցույթը ներառում է ինչպես կատարման արվեստը, այնպես էլ՝ երգացանկը, սրամտությունը, բայց հատկապես՝ ստեղծագործությունը: Ցանկալի է, որ երգերը լինեն կարճ, համառոտ: Սովորաբար սկսում են հայտնի երգերից, բայց աստիճանաբար երգի տեքստերը մասնակիցներն են հնարում և դրա համար կարող են նախապես մի քանի օր աշխատել: Ցանկալի է երգերի տեքստերը հարմարեցնել բոլոր լավ ծանոթ իրողություններին կամ որոշակի մարդկանց, դրանք կարող են ծաղր պարունակել (օրինակ՝ այսինչ մարդն այնքան շատակեր է, որ նրա քայլվածքն անգամ ուտելիք է հիշեցնում, կամ մաղձոտ, նախանձ այսինչն իր կյանքն է միայն թունավորում, կամ՝ այսինչ աղջիկն այնքան չմահավան է, որ վերջը կանգնում է կոտրած տաշտակի առջև, կամ շատ փող ունեցող այսինչը ծախսելու տեղ չի գտնում և այլն), կամ գովեստ (օրինակ՝ այսինչն ուժեղ է և խելոք, դրա համար էլ բոլորի սիրելին է, կամ բոյը չինար է ու միտքը կտրուկ, կամ՝ այնքան բարի է, որ բոլորի սիրտն է շահել, կամ՝ կրթված է, բայց խեղճ և այլն): Ապա սկսում են բնութագրել ներկաներից որևէ մեկին, ասենք՝ դիմացի խմբի տղաներից կամ աղջիկներից որևէ

մեկին: Աղջիկները կարող են երգել խմբով կամ առանձին, կամ՝ մեկը երգում է, մյուսները մասնակցում են կրկներգին: Նրանցից հետո երգում է տղաների խումբը կամ նրանցից մեկը նույն ձևով: Երգ-մրցույթը շատ արագ կարող է վերածվել երգ-բանավեճի, երբ կողմերը սկսում են պատասխանել ծաղրին, կատակին կամ ուղղակի շարունակել այն: Երգերը կարող են ընդհատվել պարերով՝ խմբապար կամ մենապար, ցանկալի է, որ երաժտությունը լինի կենդանի, բայց կարող են օգտագործել մաև հատուկ այդ նպատակով արտագրված ձայներիզներ, որոնց երաժշտական բովանդակությունը հարմարեցված է տոնի բովանդակությանը: Երգավեճի սկիզբն ազդարարող մի քանի երգերի տարբերակներ.

Վարդ է բացվել Վարդավառի կիրակին,
Չեմ դիմանա ես իմ յարի կրակին
Էսօր շաբաթ, վաղը կըլնի կիրակի,
Յարս կերթա Վարդավարի կրակին (այսինքն՝ խարույկին):
Մարդիկ վարդ են հավաքում, ես վարդի կարոտ,
Մարդիկ յար են ունենում, ես՝ յարիս կարոտ...
և այլն...

Այլ տարբերակ

Վարդ՝ մի՛ բացվի Վարդավառի կիրակին,
Քու սերն ընկել է սրտիս պուրակին,
Արի եղնիկ, ինձ մի թողնի կրակին,
Այ խորոտիկ, այ անուշիկ, դու ո՞ւմն ես,
Աշխարհի գիտի, ալամ գիտի, դու իմն ես...

Այլ տարբերակ

Մի վարդ բուսեց Վարդավառի կիրակին,
Չեմ դիմանա նոր հարսների կըրակին:
Էսօր շաբաթ, վաղը կըլնի կիրակի,
Յարս դուրս գար, գնար վառվող կրակին:
Մարդիկ վարդ են հավաքում, ես՝ հորոտ-մորոտ,
Մարդիկ յար են գտնում, ես՝ յարես կարոտ:

Այլ երգեր

Վարդավառը գալիս ա,
Ծաղիկը ցնծալիս ա,
Վարդավառ ասող աղջիկ,
Ձայնըդ ծլվլալիս ա:

Վարդավառը հասել ա,
Բան ու գործս թարսել ա,
Թե սիրում ես, ջուր շաղ տուր,
Կրակըս թեժացել ա:

Վարդավառի պաղումն ես.
Պարի միջին խաղում ես,
Կաքավի պես սուրալով,
Տղաներին դաղում ես:

Կարմիր գինին թասումը,
Ես եմ քու հավասումը
Ե՞րբ կտաքնան աղջիկներ,
Վարդավառի պասումը (խումբ):

Էս գիշեր, անուշ գիշեր,
Իջնենք չայիրներ, բռնենք մեր պարը,
Իմ սիրտը փունջ ծաղիկ,
Սարեր ետ գնացեք, իմ յարը գալիս է:

Էս գիշեր, անուշ գիշեր,
Իջնենք չայիրներ, բռնենք մեր պարը,
Ելնենք սարը, բռնենք բոլորի պարը,
Սարեր, ետ գնացեք, տուն գա իմ յարը:

Վարթեվորի իր օրն ա,
Որդին հորը չի մոռնա,
Ով իմ սիրածն ինձ չտա,
Սև շան նման թող ոռնա:

Տղան - *Այ սիրուն աղջիկ,*
Դրախտի ծաղիկ
Դուրս արի տեսնեմ,
Տեսքիդ կարոտ եմ:

(Խումբը) *Ջան Վարդավառ, Վարդավառ,*
Մեր դռանը ոսկի ծառ...

Աղջիկը - *Այ խելառ տղա,*
Վարդերի վրա
Իսկի չե՞ս քնել,
Երազ չե՞ս տեսել:

(Խումբը) *Ջան Վարդավառ, Վարդավառ,*
Ոսկի բլբուլ վարդին թառ...

Տղան - *Այ երազ աղջիկ,*
Դրախտի ծաղիկ,
Մի պաչ տուր ինձի,
Ծարավ եմ քեզի:

(Խումբը) *Ջան Վարդավառ, Վարդավառ,*
Վարդ եմ քաղել քեզ համար...

Աղջիկը - ***Այ ծարավ տղա,***
Գիշեր լուսնկա,
Բլբուլի երգով,
Չե՞ս հարբել գինով:

(Խումբը) ***Ջան Վարդավառ, Վարդավառ,***
Թե տղա ես, արի տար:

Խմբապարի երգի օրինակ

Սոնա յա-ր, Սոնա յա-ր,
Սոնա սիրուն, Սոնա յա-ր...
Վարդավառը գալիս ա,
Սոնա սիրուն, Սոնա յա-ր,
Ծաղիկը ցնծալիս ա,
Սոնա յա-ր, Սոնա յա-ր...
Կանաչ արտի բաղում ես,
Սոնա յա-ր, Սոնա յար,
Պարի միջին խաղում ես,
Սոնա սիրուն, Սոնա յար,
Կաքավի տես սուրալով,
Սոնա յար, Սոնա յար,
Տղաներին դաղում ես,
Սոնա սիրուն, Սոնա յար...
Սիրուն աղջիկ նազ ունես,
Սոնա յար, Սոնա յար,
Թագավորի սազ ունես,
Սոնա սիրուն, Սոնա յար...
Թագավորին ի՞նչ անեմ,
Սոնա յար, Սոնա յար,
Դու իմ սրտում թագուհի,
Սոնա սիրուն, Սոնա յար...

Այդ ողջ ընթացքում խարույկը վառվում է: Պարերը բոլորում են կրակի շուրջը: Կրակի տակ, մոխրի մեջ դրված են խնձորներ, որոնք պետք է խորովվեն մինչ լուսաբաց: Լուսաբացին, արևի առաջին ճառագայթների հետ, խարույկահանդեսը վերջանում է արշալույսը ողջունող երգ-խմբապարով, օրինակ, հետևյալ բովանդակությամբ.

Վարդ է բացվել առավոտյան խաղերով,
Իմ յարն այգում վարդ է քաղում մաղերով,
Վարդ է բացվել Վարդավառի կիրակին,
Քու սերն ընկել է իմ սրտի պուրակին...

Արշալույսին արդեն ակնհայտ է դառնում, թե խմբերից որին՝ աղջիկների՞ն, թե տղաներին հաջողվեց հաղթել: Հաղթանակը որոշվում է սրամտությամբ, երգերի իմացությամբ, նոր երգերի ստեղծումով: Պարտվող կողմը հաղթողին պիտի հյուրասիրի:

Երգ-պարը դադարում է, խումբը հավաքվում է՝ խորոված խնձորը վայելելու: Գիշերային խարույկահանդեսի մասնակիցները մեկական խնձոր ուտելուց հետո մնացածը բաժանում են իրենց շենքերի բնակիչներին: Խորոված խնձորը բաժանելիս շնորհավորում են «Բարի առավոտը», «Բարի Վարդավառը» և խորոված խնձորի ճաշակմամբ «նոր, բարի կյանքի հետ հաղորդակցումը»: Խնձոր բաժանողները ընտանիքներին հրավիրում են տոնակատարությանը մասնակցելու այն կենտրոններում, որտեղ թաղապետարանների և քաղաքապետարանների միջոցով կազմակերպված է հիմնական թատերական ժողովրդական տոնահանդեսը: Իսկ գյուղերում խնձոր բաժանողները մարդկանց հրավիրում են զոհաբերության ծեսի իրականացման ուխտավայրը՝ միաժամանակ տոնի թատերականացված ընթացքին մասնակցելու համար:

Առավոտյան երեխա ունեցող ընտանիքները կարող եմ գնալ եկեղեցի: Տանում են հատկապես անչափահաս կամ փոքրահասակ երեխաներին՝ նախապես նրանց գլխին դնելով ծաղկեպսակ, իսկ ձեռքներին՝ խնձոր:

ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԾԵՍԸ

Խնձոր բաժանելու ծեսը քաղաքներում ավարտվում է առավոտյան 8-9-ին, գյուղերում՝ ավելի շուտ, քանի որ այստեղ նաև «զոհաբերության» ծեսն է առավոտյան սկսվում: Մինչ երիտասարդները խարույկահանդես են անում, գյուղերում և փոքր քաղաքներում (այն բոլոր վայրերում, որտեղ դա հնարավոր է) ընտրված մարդիկ ուխտավայրում բացօդյա եփում են մատաղները: Խոշոր կաթսաներով ողջ համայնքի համար եփվում է մատաղի միսը, իսկ մի քանի կանայք այդ գիշեր հաց են թխում՝ մատաղի հետ բաժանելու նպատակով: Մատաղացուի գումարը գոյանում է հանգանակությամբ: Զոհաբերության ծեսն իրականացնելու համար անպայման պետք է ընտրվեն տղամարդիկ, տարիքը՝ 50-ն անց, ցանկալի է՝ հաջողակ մարդու համարումով, բարի և հարգված, ամուսնացած, երեխաներ ունեցող: Այս նույն մարդիկ կատարում են հանգանակությունը: Հանգանակության չափը կարելի է սկսել՝ յուրաքանչյուր ընտանիքից 100 դրամից, սակայն ոմանք իրենց կամքով կարող են ավելի շատ տալ: Եթե համայնքը նույնիսկ միայն 500 ընտանիք ունի՝ նվազագույնը կհավաքվի 50.000 դրամ. քիչ լինելու դեպքում լավ կլինի, որ գյուղապետարանները որոշ գումար ավելացնեն: Ով ի վիճակի չէ դրամ տալ, կարող է որոշ քանակությամբ ալյուր տալ: Հանգանակված գումարը պիտի ծախսվի երեք նպատակով. մատաղացու կենդանի, ալյուր և եթե բավարարի՝ գինի գնելու համար: Գումարը հավաքելուց հետո ծեսն իրականացնողներն իրենք էլ գնում են մատաղացուն (կամ մատաղացուները), գինին և ալյուրը: Մեկ-երկու մարդու նշանակում են «գինի բաժանող», իսկ ալյուրը հանձնում են հաց թխելու համար ընտրված կանանց: Հացը նույնպես թխվում է գիշերը: Հացթուխ կանայք ընտրվում են նույն չափանիշներով՝ պատկառելի, հարգարժան, ընտանիքատեր, զավակներ ունեցող, «բախտավոր»:

Արշալույսին ամեն ինչ պետք է պատրաստ լինի. ուխտավայրում եփված է մատաղացուն, հացն ու գինին բերված են ուխտավայր: Խնձորն ստանալուց և ճաշակելուց հետո մարդիկ հավաքվում են ուխտավայրում, որտեղ ներկա են նաև երաժիշտները և ցանկալի է՝ քահանան: Քահանան օրհնում է մատաղը, երաժիշտները նվագում են, իսկ խումբը բաժանում է մատաղը. տղամարդիկ մի կտոր հաց են ստանում կանանցից, հացի վրա են դնում մսի մի կտոր և տալիս են մոտեցողին՝ միաժամանակ շնորհավորելով տոնն ու բարի բերք, առողջություն մաղթելով

նրան: Հաց ու միսն ստացողը մոտենում է «մատռվակին» և մի բաժակ գինի ստանում նրանից: Անկողնային կամ հաշմանդամ մարդկանց համար նախատեսված բաժինն ուղարկվում է տուն, որպեսզի բոլորն անպայման ճաշակեն խնձորն ու մատաղը: Մինչ մարդիկ ճաշակում են մատաղը, ուխտավայրի մոտ սկսվում է «Խնդումի» ծեսը: Պետք է հուսալ, որ այդ ընթացքում բավականաչափ մարդիկ կհավաքվեն:

ԽՆԴՈՒՄԻ ԾԵՍԸ, «ԽՆԴՈՒՄ ՏՈՔ»

«Խնդումի ծես»-ին սկսում են նախապատրաստվել երկու-երեք շաբաթ առաջ: Նշանված աղջիկները կամ նորապսակ կանայք մեծ ամանի մեջ նախապես ցորեն են ծլեցնում: Տոնի օրը աղջիկները ամանի մեջ մի երկար (մեկ-մեկուկես մետրանոց) փայտ են տնկում և այդ փայտին խաչի տեսք տալով՝ զարդարում են մանր վարունգներով, խնձորներով և վարդերով: Ահա հենց այդ ամբողջ զարդարված խաչը կոչվում է «Խնդում»: Ժողովրդական ստուգաբանությամբ «Խնդում տոքը» նշանակում էր «ուրախություն տալ»: «Խնդումը» ունի «տեր»: «Խնդումի» տերը տարիքով կին է կամ, ծայրահեղ դեպքում, տարիքով կնոջ հագուստով «ծպտված» մեկը: Կեսօրին մոտ, մինչ մարդիկ զվարճանում են ուխտավայրերում կամ եկեղեցում, «Խնդումի տերը» իր գլխին է դնում «Խնդումը» և դանդաղ շարժվում ծեսի կատարման վայրը: Գյուղում կարող է լինել մեկ կամ մի քանի «Խնդում»: Քաղաքներում «Խնդումը» կարող է լինել ինչպես բակերում, այնպես էլ՝ տոնակատարության այլ կենտրոններում:

Նրան միանում են ճանապարհին հանդիպող մարդիկ, կատակներ են անում, գովում կամ ծաղրում «Խնդումը», և մինչ նա հասնում է հրապարակ, նրան ուղեկցողների թիվը բավական ստվարանում է: «Խնդումի տերը» հասնում է նշանակված վայրը, «Խնդումը» դնում է գետնին և սկսում է «հսկել» այն: «Հսկել խնդումը՝ նշանակում է անընդհատ պտտվել նրա շուրջը և թույլ չտալ, որ շրջապատողները ձեռք տան: Իսկ շրջապատողներն անընդհատ ձևացնում են, որ ահա-ահա կհարձակվեն «Խնդումի» վրա: Մինչ կատարվում է «Խնդումի» հսկումը, նրա շուրջ հավաքվածները պարում են, ցանկալի է՝ զուռնայի նվագի տակ: Որոշ ժամանակ անց երաժշտությունը կտրուկ դադարում է, պարողները կանգ են առնում, տիրում է «հանկարծահաս լռություն»: Այդ պահին «Խնդումի տերը» «Խնդումը» դնում է գլխին և սկսում պարել: Պարում է դանդաղ, ինքն էլ երգում է իր պարի տակտով «Խնդումի տիրոջ» երգը:

Խնդում ունեմ՝ վարդով է լի,
Զարդարված է, խնձորով լի,
Վախենում եմ քունս տանի,
Խնդումս չարը տանի՜...

Հենց այդ պահին տղամարդկանցից մեկը «հարձակվում է», փայտի կտորով խփում է «Խնդումին» և վայր գլորում այն: Հավաքվածներն անմիջապես սկսում են հավաքել-պոկել «Խնդումի» վրայի խնձորները, վարունգները, վարդերը... Որոշ դադարից հետո «Խնդումի տերը» լալահառաչ երգում է.

Խնդումս չարը տարե՞լ ա,
Մի ճար արեք, ժողովո՜ւրդ,
Ով խնդումս տարել ա

Ջահել - ջիվան ևվա՜ղի,
Աստված թող ջանին քոր տա՜,
Մատներից եղունգն առնի՜,
Ով խնդումս տարել ա
Կանաչ-կարմիր չկապի՜,
Երկու աչքը խավարի՜,
Մասսի չափ վերք դուրս տա՜,
Արաքսի չափ թարա՜խ,
Ով խնդումս տարել ա
Բելի ժառանգ թող ըլնի՜,
Հայկի սերունդ չունենա՜
Ով խնդումս տարել ա:

«Խնդումի տիրոջը» հանգստացնում են, մխիթարում, համոզում, և մինչ վիճակը հավասարակշռվում է, հրապարակ են մտնում պատանիների խմբերը՝ ջրցաններով:

ՋՐԱԽԱՂԵՐԸ

Մինչ «Խնդումի տերը» շարունակում է ողբալ, հավաքվածներին են մոտենում պատանիների խմբերը: Սրանք 10-14 տարեկաններն են, որոնք կանացի կերպարանքով տիկնիկ են պատրաստել (ցանկալի է՝ ինքնաշեն փայտի կամ գյուղերում՝ ցորենի խրձերի, քաղաքներում՝ ավելի վրա դեմք սարքել, ձեռքեր կապել և կանացի հագուստ հագցնել ու գլխաշոր կապել): Ցորենի խուրձ-ավել-տիկնիկին ձեռքերից բռնած երկու պատանիներին հետևում է խումբը: Սրանք գալիս են երգելով.

Եկավ, եկավ Անահիտը,
Մեր Մարիամը, Անահիտը,
Մեր երկրի տեր Անահիտը,
Մեր հողի տեր Անահիտը,
Մեր բերքի տեր Անահիտը,
Մեր կայքի տեր Անահիտը,
Երջանկաբեր Անահիտը,
Կյանք է բերում Անահիտը...
Եկավ, եկավ մեր Աստղիկը,
Ջրերի տեր մեր Աստղիկը,
Սիրո պարգև մեր Աստղիկը,
Ջուր է բերում մեր Աստղիկը,
Ջուր է ուզում Անահիտը,
Ջուր է ուզում Անահիտը,
Ջուր է տալիս մեր Աստղիկը...

Հավաքվածները դույլերով, շշերով, թասերով ջուր են լցնում տիկնիկի, պատանիների և միմյանց վրա, ծիծաղում են, կատակներ անում, լուսանկարվում են տիկնիկի հետ:



Այնուհետև խումբը շրջում է թաղերով, տներով, բակերում կամ շենքերի առաջ աղմուկով երգում այնքան, մինչև մարդիկ վերևի հարկերից ջուր լցնեն տիկնիկի վրա, սակայն ավելի ցանկալի է, որ դուրս գան և բակում լցնեն: Պտտվող պատանիների խմբերին, որպես երջանկաբեր և կյանք ավետողների, խնծոր են «նվիրաբերում»: Տղաներից մեկ-երկուսը հատուկ այդ նպատակով թաս կամ պարկ ունեն ձեռքներին:





Բոլոր բակերը, տները շրջելուց հետո պատանիների խումբն ավարտում է շրջայցը և թրջված տիկնիկին տանում գյուղապետարան կամ թաղապետարան ու թողնում այնտեղ: Երեկոյան հատուկ այդ նպատակով ձևավորված հանձնախումբը համեմատում է «տիկնիկները»: Առավել հաջողված տիկնիկ պատրաստողներից երեքը մրցանակ են ստանում, իսկ տիկնիկները

պահպանվում են գյուղապետարանում կամ թաղապետարանում:

Տարիների ընթացքում ի վերջո կհավաքվի լավագույն ինքնաշեն «տիկնիկների» թանգարան:

Այնուհետև սկսվում է թատերականացված ներկայացումը, որ կամ «Հայկ ու Բելից» մի տեսարան է, կամ՝ Նոյ նահապետն է ներկայացվում ջրհեղեղից հետո: Ներկայացում նախապատրաստողներն ազատ են՝ իրենց սցենարն ունենալու, առաջարկվող սցենարը փոփոխելու, հարստացնելու իրենց պատկերացրած ձևերով:

ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏԻ ՏԵՍԱՐԱՆԸ

Սրա գլխավոր հերոսը Նոյ նահապետն է. ճերմակ պարեգոտով ծերունի է, ճերմակ երկար մորուքով, հերարձակ... Նրան հետևում է իր գերդաստանը՝ որդիները, հարսերն ու աղջիկները, ոմանք՝ երեխաները գրկին, մի քանիսը՝ անչափահաս երեխաների ձեռքից բռնած, մյուսների ձեռքերին ցորենի հասկեր են: Հագուստները՝ երկար, գետնին հասնող շապիկներ, ոտքերին՝ սանդալներ... Ցանկալի է, որ խումբը բազմամարդ լինի, մինչև 40 հոգի, ներկայացնի տարբեր տարիքներ՝ պատանիներ, երիտասարդներ, տարեցներ, կանայք ու տղամարդիկ... Կանանց գլխին՝ ծաղիկներից, տղամարդկանց գլխին՝ հասկերից պսակներ են: Աղջիկներն ու երեխաները գլխաբաց են: Ոմանց ձեռքին հասկերից հյուսած «խաչ-փնջեր», «տիկնիկներ» կան:

Նոյի ձեռքին աղավնիներ են: Խումբը Նոյի ոտքերի տակ շարունակ ցորենի հասկեր է գցում: Խումբը առաջ է շարժվում երգելով: Երգողները տղա-աղջիկ են, սակայն հանգերգին մասնակցում են բոլորը, բացի Նոյից: Երկու-երեք հանգերգից հետո հանգերգին կարող են միանալ նաև հավաքվածները՝ պարզ հանդիսատեսները: Այդ նպատակով ցանկալի է նախապես հավաքվածների մեջ ունենալ ներկայացուցիչներ, որոնք օրինակ կծառայեն: Այս խմբի երգերում հիշատակվում են ջրհեղեղը, Նոյ նահապետը, Նոր աշխարհի սկիզբը, Մասիս սարը, ցորենը, հասկը, նուռը, բերքը, սերը... Հանգերգվում են հայերի համար կարևոր խորհրդանիշերը.

Ջրերը քաշվել են,
խումբը՝ ***ջուր, ջուր, ջուր, ջուր,***
Մասիսը բացվել է,
խումբը՝ ***Մա-սիս, Մա-սիս, Մա-սիս, Մա-սիս***
Աղավնին ետ է եկել, *(այս պահին աղավնիները թռցնում են)*
խումբը՝ ***եկել է, եկել է, եկել է, եկել է,***
Նոյը արդեն իջել է,
խումբը՝ ***Նոյ, Նոյ, Նոյ, Նոյ***
Կյանքը նորոգվել է,
խումբը՝ ***տես, տես, տես, տես,***
Աշխարհը շենացել է,
խումբը՝ ***շեն, շեն, շեն, շեն***
Մարդիկ մեղմացել են,
խումբը՝ ***մարդ, մարդ, մարդ, մարդ***
Արևը ջերմացել է *(հասկեր են շպրտում դեպի արևը)*
խումբը՝ ***ա-րև, ա-րև, ա-րև, ա-րև***
Հողը հարստացել է

խումբը՝ ***հող, հող, հող, հող***

Ցորենը հասունացել է *(ցորենի հասկից խաչ-բուռերը դրվում են Նոյի առաջ),*

խումբը՝ ***ցո-րեն, ցո-րեն, ցո-րեն, ցո-րեն,***

Խաղողը քաղցրացել է,

խումբը՝ ***խա-ղող, խա-ղող, խա-ղող, խա-ղող***

Գինին հորդացել է,

խումբը՝ ***գի-նի, գի-նի, գի-նի, գի-նի***

Նռենին շիկացել է,

խումբը՝ ***նուռ, նուռ, նուռ, նուռ***

Ջրերը վարարել են, *(միմյանց և հավաքվածների վրա ջուր են լցնում)*

խումբը՝ ***ջուր, ջուր, ջուր, ջուր...***

Կրկնվում է ջրախաղի վերը նկարագրված տեսարանը, միաժամանակ Նոյին ուղեկցող խմբի վրա հասկեր ու վարդեր են շպրտում:

Ներկայացումից հետո հենց նույն ուխտավայրի շուրջ զբոսախնջույքները կարող են շարունակվել ընտանիքներով, ազգականներով, հարևաններով կամ ընկերներով:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՋՎԱԾՔՆԵՐ, ԲԱՆԱՁԵՎԵՐ

Պատմում են, որ ժամանակին թշնամիները լավ իմանալով, որ հունվարի 6-ին հայերը մեծ տոնախմբության պատճառով տներում չեն լինում, այդ օրերին էին գործում հարձակումները: Այդ առթիվ հատուկ ասացվածք է պահպանվել.

Աստված պահե Հայտնությունե հեծելեն,
Վարդավառի հեղեղեն...

Շիրակում գտնում էին, որ **Զրօրհնեքի** տոնից հետո օրը մի գարու հատիկի չափ երկարում է և սովորաբար ասում էին. **Պզտիկ գոլն ընկավ:**

«**Տըրընդեզի** կրակն իր հետ բերում է օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերրիություն և ամուսինների օրհնություն»:

Կրակը վառելով՝ մարդիկ միմյանց կոչ էին անում «ձմեռը վառել»:

Ներքին Բասենում ասում էին.

Տերընդեզ՝ դարմանը կես,
Առ հաց ու կես, ելիր գեղես,
Տերընդեզ, մխի (ծխի) դին (կողմը) տես,
Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես:

* * *

Տէրընդեզ, դարման ու կես,
Առնիմ մանգաղ՝ ելնիմ խոտի դեզ,
Տերընդեզ՝ ուչխուր վառէ,
Օր ազատվես օձէ, չարէ:

Տյառնընդառաջի հետ վերջանում է «ձմռան քառասունքը»: **Շիրակում Տյառնընդառաջին ասում էին «Մեծ գոլն ընկավ»:**

Տյառնընդառաջն այնքան կարևոր, սրբացված օր էր, որ նրանով երբեմն երդվում էին կամ նրա անունը տալիս՝ որպես երաշխիք: Օրինակ՝ վանեցիները որևէ գործ սկսելիս, գործի հաջողությունն ապահովելու համար, ասում էին.

Եա պատվական խաչ,
Եա խէրվան Տէնդառաջ,
Տիւ քեաշես պիրես առաջ:

Ակնարկելով բարեկենդանյան որկրամոլությունը և թեթևամտությունը՝ ասում էին,-

«Անոթցեր է՝ բարեկենդանի գաթեն միտքն է ընկի»;

«Բարեկենդան, փորեկենդան, Բարեկենդան օրեր է, խելքս գլխես կորեր է...»:

Ակնարկելով Մեծ պասի ավարտին անհամբերությամբ սպասողների կողմից Մեծ պասի Ակլատիզի փետուրները թաքուն հանողներին, ասում էին.

«Մըռմըռասը փետփետելով Զատիկը թեզ չի գալ»:

Այլաբանորեն սա օգտագործվում էր անհամբեր մարդկանց մասին նույնպես;

Ակնարկելով ձմռան ու գարնան ընդհանրությունը պասի և ուտիսի հետ, ասում էին.

Ձմեռն անցավ, գարունն եկավ,
Պասը գնաց, ուտիսն եկավ,

Ասույթներ Զատիկի շուրջ.

Ակնարկելով Զատիկի տոնին ախառ անելու անհրաժեշտությունը, ասում էին.

«Էն քրիստոնեն, որ ախառով չմասնավորվի,
սաղ տարին իրավունք չունի մսի համ տեսնելու»:

Ակնարկելով Զատիկի մատաղը բաժանողների ազնվությունն ու արդարամտությունը, ասում էին.

«Զատիկ ախառ օրը մատաղ բաժանողներին կտակ եմ անում»:

1. Զատկե Զատիկ է՞, նավակատիկ է՞, չամչի հատիկ է՞:
2. Ակլատիզը փետելով Զատիկը շուտ չես բերի:
3. Ունեցողի համար ամեն օր Զատիկ է:
4. Կուշտ ուտելը Զատկի իրիկունն է:
5. Կարմիր ձուն Զատկին կսազե:
6. Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:
7. Զատիկը առանց ձվի չի լինի:
8. Զատկից հետո կարմիր հավկիթ:
9. Զատկի ձվի պես բոլորին էլ ատամովս եմ տվել:
10. Հետ Զատկին, հալվան էժանագին:
11. Էլի (ժողովրդի) հետ սև օրն էլ Զատիկ է:
12. Հենց սովածանան, Զատկի փլավը միտը կբերեն:
13. Պաս չբռնողը Զատկի համը չի գիտենա:
14. Ջրօրհնեքը ծրագլիսով, Զատիկը՝ արևլիսով:
15. Աղտոտ մարդը Զատկին էլ աղտոտ կլինի:
16. Փիս մարդը Զատկին էլ փիս կլինի:
17. Գժի համար ամեն օր Զատիկ է:
18. Ոչ տոն է, ոչ Զատիկ, խևն է հագել շալե շապիկ:
19. Զատիկն ավելի շուտ եկավ, քան Նավակատիկը:
20. Հազարից մի օր Զատիկ, էն էլ՝ Նավակատիկ:
21. Հերվա Զատիկդ շնորհավոր լինի:

22. Մինչև Զատիկը գա, Հարոյի հարսն էլ հերանց կգնա:
23. Յա կորեկի կալին կլինի, յա էշի Զատկին:
24. Էշի Զատիկը յոնջի հետ է դուրս գալիս:
25. Էշի Զատկին, գելի Բարեկենդանին:
26. Հավը կուտե հատիկ-հատիկ, ծով ծմեռնե-կելնի Զատիկ:
27. Զատիկն ասել ա՝ հենց գամ արմանաս, հենց գնամ՝ զարմանաս:
28. Զատիկն էկավ՝ չունեմ կապա, ով ևվիրի ինձ մի կապա, նրան կասեմ Հաջի պապա:
29. Ծառզարդար - Զադկե Զադիկ:
30. Կարմիր Զատիկն ինձ տուր, կարմիր օրերը քեզ տամ:

Ակնարկելով Զատիկին հաջորդող կիրակիներին ձվախաղերի առատությունը, ասում էին.
«Ընչանք կանանչ կիրակին... ջեբերը լիքը ձու կլինի»:

Վարդավառին, վախենալով հասունացած բերքի կորստից, ասում էին.
«Տեր, պահպանիր մեզ Վարդավառի բուքից ու կարկուտից, Տերնտասի տաք ու շոգից»:
«Վարդավա՞ռ, վարձքդ կատար»:

Ակնարկելով Ս.Խաչի տոների հետ սկսվող օդի պաղությունը և այն փաստը, որ բացօթյա գիշերողներն այլևս տուն են քաշվում, ասում էին.
«Խաչ, վերմակը առ, ներս փախիր»:
«Աստվածածնա՝ բակը մտիր, Սրբ խաչին՝ ծակը մտիր»:

Ս.Գևորգի տոնին, ակնարկելով երկրագործական աշխատանքների ավարտը, ասում էին.
«Ցախավելը կալից էկավ տուն»:

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ, ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՄԲԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Անահիտ.....201, 203, 213, 216, 217, 227, 249, 257, 259, 300, 324

Ալիշան Ղ. 39, 52, 226, 298

Ամառյան Հր. 262, 263, 293, 298, 299

Անդրանիկ, զորավար 285, 286

Աստղիկ 201, 217, 259, 324

Ավետիք Իսահակյան 200, 206, 217, 224

Արտավազդ.....131

Աշոտ Գուսան.....217

Աշճյան Մեսրոպ արք. 5, 75, 256, 261, 293, 294, 300

Աստվածածին.....57, 58, 71, 72, 227, 228, 229, 231, 233, 242, 257, 291, 300, 301, 302, 311

Բարխուդարյան Մակար 231

Բարդուղիմեոս, Սուրբ 237, 257

Բդոյան Վ. կամ Վարդ Բդոյան 16, 39, 109, 114, 308

Բել.....7, 201, 216, 249, 324, 327

Բոլորչյան Թ. 217

Գաբրիել հրեշտակ.....16, 227, 287

Գալուստեան Շնորհք արք. 231, 262, 283

Գարեգին Սրվանձտյանց 39, 56, 226, 271, 281, 290

Գիսանե.....271, 277, 278, 293, 301

Գևորգ, Սուրբ.....149, 150, 242, 243, 244, 245, 257, 258, 282, 283, 284, 285, 286, 301, 302, 303, 331

Գևորգ Մարզպետունի.....285, 286

Դիոկղետիանոս.....282

Եղիայ, Եղիայի, Սուրբ.....14, 237, 258, 268, 269

Ջենոբ Գլակ.....270

Ջիլֆուղարյան Ք.....217, 226

Թադեոս Առաքյալ.....21, 237, 257, 292

Թուխ Մանուկ.....168, 203, 230, 231, 236, 237, 242, 257, 258, 274, 275, 281, 282, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 302

Թորամանյան Թ.....296, 298

Լալայան Ե.....39, 52, 62, 67, 75, 109, 148, 159, 200, 226, 232, 235, 241, 248, 254, 284, 287, 290, 296, 298, 307

Լիսիցյան Ստ.....39, 52, 62, 75, 109, 148, 159, 200, 226, 235, 254, 305

Լուսավորիչ, Գրիգոր Լուսավորիչ.....15, 245, 249, 260, 270, 271, 273, 280, 300, 301

Լուսիկ Ագուլեցի Սամվելյան.....6

Խաչատրյան Ռ.....180, 200, 226

Խաչկոնց Դ.....291

Խըդըր Նաբի.....67, 268

Կարապետ, Սուրբ.....102, 136, 149, 182, 188, 197, 201, 202, 203, 226, 242, 249, 257, 258, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 289, 293, 294, 295, 301, 302

Կիրակոս Գանձակեցի.....73

Հայկ.....7, 201, 216, 249, 324, 327

Հակոբ.....14, 149, 242, 245, 246, 247, 250, 256, 257, 258, 276, 287, 288, 289, 290, 295, 301, 302, 303

Հակոբոս.....201

Հայկ Հակոբյան 295, 298

Համլետ Սարգսյան 74, 75

Հիսուս, Հիսուս Քրիստոս (տես նաև Քրիստոս) 9, 13, 40, 43, 44, 49, 53, 57, 70, 71, 73, 93, 94, 121, 131, 132, 133, 136, 138, 141, 160, 179, 201, 217, 228, 230, 231, 236, 237, 246, 256, 257, 261, 270, 271, 291, 292, 300, 302, 303

Հովհաննես 201, 210, 270, 276, 278

Հովհաննես Թումանյան 305

Հովհաննիսյան Հ. 217

Հուդա 128, 131

Հունանյան Հ. 217, 226

Ղևոնդ երեց 85

Մարիամ Աստվածածին 227, 229, 242, 257, 300, 302

Մանաճիրի Ռշտունի 289

Մելիք Շահնազարյան 299

Մեսրոպ Մաշտոց 260, 300, 301

Միեր 167

Մնացականյան Ա. 291, 293, 294, 298

Նալբանդյան Միքայել 202

Նաղաշ Հովնաթան 68

Նոյ 7, 201, 215, 217, 230, 287, 291, 327, 328

Շահազիզ Ե. 19, 39, 52, 62, 75, 77, 109, 148, 158, 200, 226, 248

Չոլաքյան Հ. 39, 42, 52, 62, 75, 109, 148, 158, 200, 226, 246, 248

Պանտալեյմոն, Պամֆ, Պանդ 231, 232, 235, 258

Պռոշյան Պ. 62, 82, 90, 95, 109, 138, 141, 148, 149, 159, 306

Պատկանյան Ռ. 213, 226

Պետրոս 34, 153, 201

Պետրոսյան Ա. 75, 293, 312, 313, 314

Ջեյմս Ռասսել 293

Սարգիս, Սուրբ 7, 8, 10, 12, 14, 17, 18, 55, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73,

74, 75, 76, 149, 229, 242, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 276, 277, 282, 283, 284, 286, 287, 295, 297, 300, 301, 302

Սարգիսյան Ներսես 294

Սուլեյման Բեգ 299

Վահագն 259, 293

Վանական վարդապետ 73

Վաչագան, Աղվանից թագավոր 231

Վասակ 84, 85

Վարդան 84, 85, 109

Վարվառա, Վարվառե 160

Տերտերյան Ա. 217

Տէր-Մինասեան Վահան 39, 148, 159, 308

Րաֆֆի 62, 226, 252, 254

Փավստոս Բուզանդ 289

Փորքշեյան Խ. 52, 109, 158, 200, 213, 226, 248

Ականց, գյուղ Արծեշում 286

Ալադաղ 161, 162

Ալաշկերտ 29, 119, 175, 200, 231, 265, 267, 291

Ախալքալակ 83

Ակն 35, 39, 52, 62, 64, 81, 109, 148, 159, 200, 218, 226, 288, 305

Աղվանք 231, 290

Ամոճ, գյուղ Լոռիում 289

Այգեստան, թաղամաս Վանում 290

Այնթափ 132, 311, 313

Անգղ, գյուղ Վասպուրականում 284

Աշտարակ 19, 47, 77, 82, 90, 91, 95, 107, 109, 114, 115, 117, 125, 148, 159, 160, 200, 226, 306, 308, 309

Ապրակունիս, գյուղ հին Նախիջևանում 273

Առինջ 149

Արաբկիր 118

Արագած 217

Արամո, գյուղ Կիլիկիայում 285

Արարատ 39, 217, 249, 287

Արագածոտն 82

Արազ (տես նաև Արաքս, Արազ, Երասխ) 58, 161, 197, 268

Արայի լեռ 160

Արաքս (տես նաև Երասխ) 267, 324

Արտամետ 288

Արցախ, արցախահայեր, տես նաև Ղարաբաղ 86, 118, 138, 152, 204, 205, 217, 220, 226, 231, 266, 299

Արձակ 39, 52, 62, 75, 109, 148, 159, 164, 200, 226, 235, 243, 244, 248, 291

Արձեշ 286

Արմավիր 247, 248

Արևմտյան Հայաստան, արևմտահայեր 10, 87, 160, 250
Արևելյան Հայաստան, արևելահայեր 10, 247, 250
Բաբերդ 34
Բագավան 40, 249
Բագարան, գյուղ Շիրակում 285
Բագրևանդ 249
Բազմա, տես նաև Քարկե 271
Բազու, գյուղ Մուշում 281
Բաթման 271
Բալու 22, 33, 39, 62, 76, 91, 109, 128, 148, 158, 160, 175, 200, 281
Բաղեշ 291
Բայազետ 52, 62, 66, 75, 120, 124, 148, 159, 168, 200, 226
Բայբուրդ 115, 309, 311
Բանանց, գյուղ Գանձակում 297
Բասեն 39, 49, 52, 59, 62, 75, 109, 124, 148, 159, 161, 162, 170, 174, 200, 203, 215, 226, 235, 267, 329
Բարձր Հայք 114, 308
Բեթլեհեմ 275
Բինգյոլ 267
Բոլորաբերդ, գյուղ Վայոց ձորում 300
Բութանիա 27, 112
Բուլանըխ 39, 52, 62, 75, 87, 109, 148, 154, 159, 167, 183, 200, 226, 241, 297, 299, 313
Գանձակ 26, 39, 49, 52, 62, 75, 91, 109, 129, 148, 159, 200, 232, 250, 254, 297
Գարդման 231
Գեղարքունիք 7, 48, 75, 113, 115, 117, 132, 148, 159, 173, 200, 308, 310
Գետարգել 149
Գետաշեն, տես նաև Չայքենդ 65
Գյումրի, Գյումրիում 292, 293

Դաշ-Գափուն, սրբավայր Վարդենիսում 217
Դաշքեսան 231
Դերսիմ 216, 226
Դիարբեքիր 24
Դիզափայտ 201
Դյութական 231
Դսեղ, գյուղ Լոռիում 305
Եղերով, լեռ 284
Երասխ (տես նաև Արաքս, Արազ) 212
Երևան 16, 39, 52, 62, 74, 75, 109, 148, 149, 153, 159, 200, 226, 232, 235, 241, 248, 251, 254, 256, 257, 258, 259, 261, 262, 263, 265, 266, 267, 269, 271, 276, 277, 278, 283, 284, 286, 289, 290, 291, 293, 296, 297, 298, 303, 305, 306, 309, 310
Երզնկա 272
Երուսաղեմ 43, 45, 94, 149, 202, 236, 256
Ջանգեզուր 39, 52, 62, 67, 75, 81, 89, 109, 110, 129, 148, 159, 200, 201, 226, 235, 241, 250, 252, 254, 299
Ջեյթուն 272
էրզրում 119
էջմիածին 31, 47, 52, 148, 248
Ընձաքիարս, լեռ Ռշտունիքում 288, 289
Թաբոր 201, 217
Թալալոս 221
Թեհրան 39, 52, 62, 67, 75, 109, 148, 159, 200, 215, 226, 235, 241
Թիֆլիս, թիֆլիսահայեր 27, 39, 52, 62, 75, 109, 148, 159, 200, 226, 235, 241, 248, 254, 275, 285, 287, 298, 305, 309, 310
Ինգլիզ /Անգլիա 38
Իշխան, գյուղ Վասպուրականում 84, 85, 201
Իրան 283, 284
Լեզք 34
Լեճան, գյուղ Լոռիում 289

Լոռի, լոռեցի 22, 26, 31, 44, 46, 110, 113, 115, 116, 126, 129, 130, 131, 132, 287, 309, 310

Խաստուր, Խաստուրա 231, 267, 291

Խաչ-մաչ, գյուղ Վարանդայում (Արցախ) 114, 307

Խուստուփ 201

Խնձորեսկ 89

Խնուս 80

Խոր Վիրապ 93, 245

Կապուտկող, լեռ Ռշտունիքում 289

Կարին, կարնոհայեր 84, 111

Կարճաղբյուր, գյուղ Վարդենիսում 217

Կապադովկիա 282

Կապան 200

Կեսարիա 81, 130, 270, 272

Կիլիկիա 10, 21, 31, 32, 285

Կոթի 261, 264

Կոտայք 153

Կովտուն գյուղ Սեբաստիայում 273, 302

Կորդվաց գավառ 287

Հադրութ 49, 95, 252, 306

Համզաշեխ, գյուղ Բուլանըխում 231, 291, 299

Հայաստան 4, 5, 7, 10, 12, 74, 75, 76, 77, 87, 90, 109, 149, 152, 160, 188, 201, 203, 227, 232, 247, 249, 250, 257, 260, 261, 262, 264, 270, 271, 272, 273, 276, 296, 308

Հաճիքենդ 232

Հյուղի 237

Հյուսիսային Կովկաս 31, 247

Հորդանան 40, 44, 49

Հուժ, գյուղ Ղարադաղում 283

Ղազախ 210, 279

Ղարաբաղ, տես նաև Արցախ 39, 52, 75, 95, 109, 148, 159, 200, 226, 235, 250, 254, 305, 306

Ղարադաղ 283, 284

Ղզլար 31, 32, 39, 52, 62, 75, 109, 120, 148, 149, 159, 200, 226

Ղրիմ 150, 213

Ճալեթ, Ջալեթ - նախկին հայկական գյուղ Ադրբեջանի Վարդաշենի (այժմ Օղուզական) շրջանում 290

Մասիս 201, 268, 287, 288, 327

Մարաշ 39, 52, 62, 75, 89, 109, 120, 129, 130, 148, 158, 200, 216, 217, 226, 237, 241

Մարտունի 7

Մարիուպոլ 150

Մեղրի 201

Մեծ Իշխանասար 201

Մեծ Քիրսի 201

Մծբին 246, 257

Մնձուր 216

Մոկս 84, 284

Մողնի 243

Մուշ 42, 62, 112, 119, 130, 131, 148, 158, 168, 176, 177, 183, 200, 237, 239, 240, 241, 247, 270, 275, 281, 282

Մռավ 201

Յալանզպաղ գյուղ Երզնկայում 272

Նախիջևան 150, 200, 201, 210, 213, 226, 250, 251, 254, 273, 312

Նոր Նախիջևան 18, 31, 33, 37, 46, 52, 74, 89, 90, 109, 113, 115, 116, 119, 150, 151, 159, 177, 200, 202, 213, 214, 226, 243, 247, 248, 277, 309, 310

Նոր Բայազետ 52, 62, 75, 119, 124, 148, 159, 168, 200, 226, 269

Նորավանք 152

Շարուր 53, 54, 62, 124, 159, 164, 210, 226

Շամշադին 250, 254, 265

Շատախ 84, 205

Շիրակ.....25, 39, 51, 52, 53, 55, 62, 75, 84, 113, 115, 127, 128, 130, 132, 138, 146, 148, 159, 161, 179, 184, 200, 237, 238, 241, 243, 258, 277, 278, 285, 286, 309, 310, 312, 329

Շմլակ.....271

Չայքենդ, տես նաև Գետաշեն.....205

Պոլիս, պոլսահայեր.....39, 109, 148, 159, 200, 226, 235, 241, 257, 308

Պողոս-Պետրոս.....153

Ջավախք.....25, 35, 36, 39, 55, 62, 75, 78, 83, 109, 124, 131, 132, 148, 159, 200, 226, 235, 241, 245, 282, 283, 306, 307, 313

Ռոստով.....150

Ռուսաստան.....3

Ռշտունիք.....84

Սալմաստ.....250, 251

Սասուն, սասունցիներ.....25, 39, 62, 75, 116, 137, 278, 309

Սարարադ (Արարատ).....287, 288

Սեբաստիա.....27, 273, 283, 302

Սյունիք, սյունեցիներ.....58

Ստամբուլ.....38

Սուկավիտ (տես նաև Քոսադաղ).....267

Վաղարշապատ.....39, 47, 48, 148, 159, 245, 248, 254

Վան.....17, 34, 41, 43, 44, 50, 52, 71, 75, 86, 94, 120, 162, 167, 172, 178, 182, 183, 200, 216, 221, 222, 223, 226, 243, 276, 290, 299

Վասպուրական.....62, 84, 124, 132, 148, 159, 200, 215, 226, 244, 275, 284, 285, 286, 290, 296

Վարագ, Վարագա.....14, 222, 243, 244, 283

Վարանդա.....39, 52, 62, 75, 109, 114, 148, 159, 200, 226, 254, 307

Վարդենիս.....7, 164, 217

Վարդիեր.....161

Տաթև.....58, 256

Տարոն 201, 202, 239, 270, 277, 282
Տավուշ 46, 173, 203, 250
Տափակ ձոր 288
Տոսպ գավառ 288
Ուզունլար, գյուղ Իջևանում 268
Ուտիք 154, 231
Քանաքեռ 188, 243, 248, 286
Քարկե, տես նաև Բազմա 271
Քեսապ 24, 29, 39, 42, 43, 49, 52, 62, 65, 75, 88, 95, 109, 110, 123, 124, 148, 159, 162, 200, 226, 230, 235, 241, 246, 248
Քոսադաղ (տես նաև Սուկավիտ) 161, 162, 267, 268
Քղի 216

ՏՈՂԱՆՈՒՆՆԵՐ, ՏՈՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աբեղաթող 82, 94, 109

Ալք, ալքեր 110

Ախալոճ (Ախըլոճ, Ախլոճ, Ախըլոջ, Ախացել, Ախելուծ, Ակլատիզ, Աքլատիզ, Գոգոռոզ, Խուխուլիճ, Խուլուճիկ, Խուլուճճիկ, Մոռմոռոզ, Մռմռաս, Մեծպաս, Պապի պուլուլ, Պապի պլոր, Որոջբեկ, Ֆռիկ), տես նաև Ակլատիզ 114, 115, 116, 132, 133, 146, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 330

Ախառ 12, 128, 135, 136, 138, 139, 330

Ակլատիզ, տես նաև Ախալոճ 114, 115, 116, 132, 133, 146, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 330

Աղանճ 18, 24, 54, 55, 56, 64, 65, 66, 113, 229, 264

Աղի բլիթ 66, 68

Ամանոր 6, 8, 12, 19, 21, 22, 25, 27, 39

Ամուլ, ամլություն 17, 49, 54, 153, 166, 267, 269

Այլակերպություն 201

Աշխարհամատրան 149

Առայիմ-թառայիմ 37

Առաջավորաց 14, 64, 258, 260, 262

Ասիլ-Բասիլ, տես նաև Վասիլ 26

Աստվածհայտնություն 40

Ավագ շաբաթ 122, 146

Ավետիս 18, 34, 43, 44, 46, 47, 48, 49, 270

Արցիվուրց 262

Արուս 6, 47, 48, 170

Բարեկենդան, Բարիկենդան 7, 8, 9, 12, 16, 18, 19, 63, 69, 70; 76, 77, 78, 81, 82, 83, 84, 88, 89, 90, 92, 94, 95, 96, 104, 107, 109, 110, 114, 116, 118, 133, 143, 144, 147, 147, 254, 263, 304, 305, 306, 308, 310, 314, 315, 330, 331

Բախտ, բախտավորություն, տես նաև ճակատագիր 26, 36, 37, 48, 68, 69, 103, 104, 129, 134, 137, 161, 165, 172, 176, 177, 178, 179, 191, 194, 214, 322

Բաղարջ.....24, 28, 33, 66, 113, 119, 131, 132, 133

Գաթա 24, 25, 33, 76, 78, 117, 119, 125, 133, 139, 216, 230, 243, 251

Գալանտոս.....31, 32

Գոտեկախ 21

Գուշակություն.....8, 10, 18, 25, 26, 36, 37, 66, 68, 137, 138, 164, 179, 312

Երգ.....11, 17, 18, 19, 30, 52, 57, 58, 64, 89, 125, 127, 137, 142, 171, 200, 213, 221, 223, 237, 244, 249, 313, 318, 319, 322

Ջատիկ, տես նաև Հարություն 7, 9, 10, 12, 13, 17, 18, 20, 40, 41, 49, 50, 55, 56, 58, 63, 77, 81, 82, 95, 96, 98, 113, 115, 118, 168, 170, 177, 200, 229, 305, 306, 309, 310, 311, 313, 314, 330, 331

Թատերախաղ, տես նաև ներկայացում 16, 39, 76, 8, 89, 90, 91, 92, 109, 148, 159, 200, 226, 249

Թերափ.....122

Թլխաղիր 89

Ժամերգություն.....41, 58, 129, 138, 150, 215, 243

Լեբ, լեբչի, լեբրար 167

Լոլե, լօլե.....21, 24

Լոշտակ 274, 275, 276

Խաղողօրհնեք.....7, 205, 229, 229, 230, 249, 250, 296

Խաղ, խաղեր, մրցախաղեր.....11, 16, 18, 50, 65, 66, 70, 76, 82, 84, 85, 86, 87, 88, 89, 92, 94, 95, 104, 105, 106, 107, 108, 109, 114, 128, 135, 136, 137, 138, 141, 146, 151, 153, 155, 156, 157, 177, 200, 201, 207, 210, 215, 21, 217, 249, 252, 253, 254, 269, 304, 305, 307, 308, 314, 321

Խաշիլ 12, 41, 64, 68, 76, 77

Խաչ.....7, 9, 14, 49, 50, 69, 114, 132, 141, 180, 213, 214, 230, 236, 237, 240, 243, 244, 258, 280, 291, 292, 294,

296, 307, 331

Խաչբուռ 203, 204, 205

Խարախոնջոլող 115

Խըտռելեզ 150, 151, 152

Խթում, խթման 42, 43, 132, 221

Խլվլիկ 21, 37, 252

Խնդում 6, 177, 179, 203, 211, 212, 316, 323, 324

Խնձոր 13, 18, 23, 24, 25, 26, 29, 37, 38, 65, 79, 154, 175, 188, 189, 191, 193, 196, 197, 199, 205, 210, 215, 218, 219, 229, 251, 252, 318, 321, 322, 323, 325

Խնջույք, զբոսախնջույք 17, 18, 29, 49, 56, 58, 70, 76, 77, 78, 82, 84, 86, 88, 89, 94, 95, 120, 136, 141, 146, 150, 153, 177, 179, 203, 208, 210, 213, 215, 217, 230, 231, 239, 252, 253, 291, 304, 305, 306, 315, 328

Խոնջոլոզ 37, 56, 309, 311

Խուկլի 113

Խուճկուրուրուկ 122

Ծաղիկ 18, 19, 57, 58, 122, 123, 124, 141, 145, 146, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 172, 174, 177, 178, 179, 198, 203, 208, 210, 212, 217, 219, 224, 225, 228,229, 237, 292, 295, 296, 319, 320, 321, 327

Ծաղկազարդ, Ծառզարդար 7, 9, 12, 17, 18, 94, 115, 121, 122, 123, 124, 125, 127, 128, 133, 147, 305, 309, 331

Ծաղկափայ 210

Ծաղկըմուտ 21

Ծաղկամեր, ծաղկամայր 160, 163, 164

Ծառ 6, 17, 28, 34, 43, 44, 48, 49, 53, 67, 80, 106, 112, 122, 123, 124, 127, 129, 130, 135, 153, 160, 162, 164, 167, 176, 188, 189, 191, 194, 195, 196, 215, 216, 219, 222, 224, 227, 230, 232, 236, 237, 265, 267, 268, 281, 286, 289, 291, 292, 296, 288, 320

Ծես ..... 5, 6, 7, 8, 9, 10 ,11, 12, 17, 49, 50, 53, 59, 84, 85, 89, 94, 95, 109, 111, 114, 117, 122, 123, 130, 131, 135, 150, 160, 163, 170, 176, 203, 211, 213, 215, 229, 242, 255, 256, 257, 259, 263, 269, 296, 301, 304, 305, 306, 307, 308, 310, 314, 315, 317, 322, 323

Ծնունդ, ծննդյան 7, 9, 12, 14, 18, 20, 22, 24, 27, 36, 40, 41, 42, 43, 44, 47, 49, 50, 51, 53, 73, 109, 134, 137, 228, 229, 258, 270, 275

Կաթնապուր, կաթնով 12, 17, 18, 46, 55, 77, 168, 176, 182, 229

Կախ կամ Կաղ, տես նաև Ամանոր, Կաղանդ, Նոր տարի 21, 33, 34

Կանաչ կիրակի 12, 123, 128, 131, 149, 152, 153, 242

Կարմիր կիրակի 7, 128, 151, 153, 314

Կախաո 19, 21, 33, 78

Կաղանդ, Կաղինդ, տես նաև Նոր տարի, Ամանոր 21, 24, 25, 28, 33, 34, 39, 250

Կալոնտար 21

Կայծակ, կայծակնահար 27, 54, 63, 64, 118, 119, 259, 263, 289, 298, 299, 300

Կ'աշմար 88, 89

Կլոճ, տես նաև Տարի հաց, կրկենի 24, 119

Կլկալ 26, 37

Կրկենի, տես նաև Տարի հաց 24

Համբարձում, Կաթնապրի տոն, տես նաև Վիճակ 7, 9, 13, 14, 17, 146, 160, 162, 165, 168, 170, 171, 177, 178, 182, 201, 203, 314

Հարիսա 244, 245

Հարս 25, 31, 33, 54, 56, 58, 78, 82, 83, 89, 107, 111, 112, 116, 117, 119, 120, 123, 137, 141, 145, 146, 147, 150, 152, 167, 171, 173, 177, 178, 196, 205, 213, 215, 218, 219, 230, 243, 245, 251, 266, 268, 304, 307, 319, 327, 331

Հարություն, տես նաև Զատիկ 7, 9, 135, 138, 160, 236

Հորթըթող 247, 250, 258

Հմայություն 18, 19, 236, 290

Ճակատագիր, տես նաև բախտ 28, 37, 266

Ճրագալույծ 25

Մախոխ, մոխոխ, մոխոխապուր 111, 306, 307, 310

Մեզնե աղեկներ 110

Մեծ պապ 8, 9, 69, 70

Մեռելոց 128, 132, 133, 145, 14, 232, 237, 239, 296

Մեռոն, մեռոնաջուր 40, 49, 286, 291

Միջինք 17, 119

Մկրտություն, տես նաև Ջրօրհնեք 40, 49

Նար 102, 122

Նավասարդ 8, 20, 201, 216, 227, 229, 246, 247, 249, 250, 251, 252, 253, 254

Նախրաթող, նըխրաթող, նախրըթող 246, 247, 249, 250, 258

Ներկայացում, տես նաև թատերախաղ 11, 12, 19, 70, 82, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 92, 94, 114, 304, 308, 327

Նոր Տարի, տես նաև Ամանոր, Կաղանդ 21, 23, 24, 27, 30, 31, 32, 35, 37, 38, 39, 42, 143, 249, 250, 252

Նուրի, Նուրի-Նուրի 122, 300

Շաբաթապահք 14, 246

Շվոտ 56, 84, 110, 311

Չար, չարիք, չար ուժ, չար ուժեր 7, 14, 15, 21, 22, 25, 27, 30, 31, 34, 37, 38, 46, 47, 48, 54, 55, 56, 59, 71, 74, 97, 117, 118, 119, 129, 131, 135, 153, 166, 167, 168, 174, 186, 189, 194, 205, 231, 252, 276, 279, 280, 282, 283, 284, 286, 295, 298, 299, 300, 311, 312, 313, 323, 329

Չարխափան 8, 18, 22, 28, 124, 301

Չիք, չքել, չքանալ, չքացնել 27, 36, 45, 128, 129

Պայծառակերպություն 201

Պաս, պահ, պահք, պահոց 6, 9, 13, 14, 22, 25, 64, 69, 76, 81, 95, 110, 111, 113, 114, 115, 116, 128, 132, 147, 148, 168, 250, 255, 258, 265, 267, 305, 306, 308, 309, 310, 312, 313, 314, 315, 316, 330

Պաս պապ 6, 95, 114, 115, 116, 132, 255,

305, 306, 308, 309, 310, 314, 315, 316

Պատարագ 49, 125, 126, 127, 130, 131, 132, 133, 230, 310

Պար, պարեր 12, 18, 19, 32, 55, 56, 66, 76, 78, 81, 82, 85, 94, 109, 111, 141, 143, 144, 146, 148, 153, 159, 162, 209, 210, 211, 214, 224, 304, 305, 306, 307, 318, 319, 321, 323

Պուպուշիկ 120

Ջրօրհնեք, տես նաև Մկրտություն 36, 40, 49, 51, 147, 329, 330

Սուրբ, սրբեր 6, 7, 8, 9, 10, 14, 18, 45, 46, 63, 64, 68, 70, 71, 72, 73, 74, 75, 128, 135, 146, 149, 150, 160, 182, 188, 197, 202, 203, 213, 214, 216, 217, 226, 227, 230, 231, 236, 237, 242, 243, 246, 247, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 295, 296, 297, 299, 300, 301, 302, 303, 307, 311, 312

Սրբազան 17, 19, 35, 36, 78, 84, 179, 203, 229, 231, 252, 259, 271, 299, 300

Սրբավայր 66, 69, 74, 75, 92, 153, 168, 201, 202, 203, 226, 231, 256, 257, 258, 259, 269, 270, 275, 277, 278, 284, 286, 290, 291, 301

Վանատուր 39

Վասիլ 26, 90

Վարդավառ, Վրթիվեր 5, 7, 9, 12, 14, 16, 17, 18, 19, 51, 146, 182, 201, 202, 203, 204, 205, 208, 209, 210, 212, 213, 214, 215, 216, 217, 224, 226, 229, 242, 243, 249, 250, 255, 270, 273, 277, 281, 301, 318, 319, 320, 321, 322, 329, 331

Վերափոխում 7, 9, 14, 205, 227, 229, 231, 236, 249, 258, 270, 291, 295, 296

Վիճակ, տես նաև Համբարձում 10, 148, 159, 160, 161, 163, 168, 169, 170, 171, 172, 173, 175, 176, 177, 178, 179, 188, 200

Տարեմուտ, տես նաև Նոր Տարի, Կաղանդ 21, 250

Տարի հաց, տես նաև կրկենի 12, 24, 25, 26, 120

Տարին Գլուխ 21

Տոնածառ 27

Տյառնընդառաջ, տես նաև Տրնդեզ 7, 9, 10, 17, 18, 20, 27, 49, 53, 54, 55, 56, 58, 59, 133, 229, 311, 329

Տրնդեզ, տես նաև Տյառնընդառաջ 59

Ուխտ, ուխտավայր, ուխտագնացություն 16, 69, 92, 129, 149, 151, 152, 153, 182, 201, 202, 203, 213, 214, 216, 217, 229, 230, 231, 232, 235, 236, 237, 242, 243, 244, 248, 249, 250, 256, 258, 260, 261, 265, 270, 272, 273, 277, 279, 281, 283, 284, 285, 28, 289, 290, 291, 292, 296, 297, 298, 299, 300, 301, 317, 322, 323, 328

Ուտիս 95, 114, 116, 132, 146, 182, 255, 258, 305, 306, 308, 309, 310, 313, 314, 315, 316, 330

Ուրբաթարուր 131

Փոխինդ 17, 18, 55, 64, 65, 66, 67, 68, 69, 229, 268, 269

Փուռնիկ, տես նաև կրկենի, Տարի հաց, Միջինք 21, 24, 25

Քաշկա, քյաշկա, տես նաև հարիսա 238, 246, 251, 252, 253

Քառասուն մանկունք 119

Օջախ 11, 19, 22, 36, 41, 55, 77, 78, 116, 124, 132, 153, 203, 216, 221, 222, 227, 229, 243, 274, 275, 297, 309

ԷԹՆԱՆՈՒՆՆԵՐ, ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ

«հայ» «հայեր» էթնանունը հանդիպում է համարյա բոլոր էջերում, այդ պատճառով նպատակահարմար չհամարվեց ցանկում տեղադրել

Արաբ **88**

Թաթար **32, 121, 283**

Թուրք **66, 67, 86, 95, 139, 150, 230, 232, 237, 267, 283, 284, 285, 288, 299, 306, 311, 313**

Թուրքմեն **272, 276**

Հրեա **53, 87, 88**

Հույն **150, 263, 264, 267**

Հռոմեացի **260, 264**

Ղզլբաշ **263, 264**

Պարսիկ **84, 85, 236, 260, 263, 264, 269, 273, 277, 301**

Ռումին **262**

Վրացի **267**

Քուրդ, քրդեր **54, 162, 216, 284**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ. Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940:
2. Աբեղյան Մ. Երկեր, հ.է, Երևան, 1975:
3. Ալիշան Ղ. Յուշիկք հայրենեաց հայոց, հ.1, Վենետիկ, 1869:
4. Ալիշան Ղ. Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895:
5. Ալպոյաճեան Ա. Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ.2, Գահիրե, 1937:
6. Ահարոնյան Ա. Սուրմալուի ժողովրդական երգեր, ԱՀ, գիրք Բ, Թիֆլիս, 1897:
7. Ածառյան Հ. Հայերեն արմատական բառարան, հ.1, Երևան, 1971; հ. 2, Երևան,1973, հ.3, Երևան, 1977:
8. Ածառեան Հ. Հայերեն Գաւառական բառարան, էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Թ, Թիֆլիս, 1913:
9. Ամատունի Ս. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:
10. Այդինյան Ա. «Թուխ Մանուկի» պաշտամունքի որոշ արտացոլումներ հայրեններում, «Թուխ Մանուկ», Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:
11. Աշճեան Մեսրոպ արք. Սուրբ Սարգիս, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երեվան, 2002:
12. Աշճեան Մեսրոպ արք. Արագահաս սուրբ Սարգիս, Երևան, 2002:
13. Աշճյան Մեսրոպ արք. Հայոց եկեղեցու սուրբերն ու սրբոց տօները, Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001:
14. Աշճյան Մեսրոպ արք. Թուխ Մանուկ, «Թուխ Մանուկ», Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:
15. Ասատրյան Գ. Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները, Երևան, 1990:
16. Ավագյան Ա. Իրանի Ղարադաղ գավառի հայերի ուխտավայրերը, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 1991:
17. Ավագյան Մ. Արճակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև ՀԱԲ), հ.8, Երևան, 1978:
18. Ավագյան Ս.Շարուր, Երեվան, 1998:
19. Անտոնյան Յու. Հայոց բուժարար սրբի մոդելի ձևավորման հարցի շուրջ, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001:
20. Արշարունի Ա. Բարեկենդան-Աբեղաթող, «Տեղեկագիր», 1956, թիվ 10:
21. Արշարունի Ա. Հայ ժողովրդական թատերախաղեր, Երևան, 1961:
22. Բաբայան Ֆ. Դիտարկումներ Ս.Սարգսի և նրա սրբավայրերի մասին, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001:
23. Բաղդասարյան Ա.,Դիլանյան Ե., Խուդաբաշյան Կ. Սուրբ Կարապետին նվիրված հայ հոգևոր և ժողովրդական երգերը, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001:
24. Բարխուդարեան Մ. Արցախ, Երևան, 1996:
25. Բդոյան Վ. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972:
26. Բդոյան Վ. Հայ ժողովրդական խաղերը, հ. 1, Երևան, 1963; հ.2, Երևան, 1980; հ.3, Երևան, 1983:
27. Բդոյան Վ. Վանատուր և Ամանոր-ծպտյալ պաշտամունքների հարցի շուրջ, «Լրաբեր», 1976, թիվ 12:
28. Բդոյան Վ. Պատառիկներ Վանատուր - Ամանոր դիցաբանական զույգի վերաբերյալ, Բանբեր Երևանի համալսարանի, 1980, թիվ 2:
29. Բենսե, Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ.3, Երևան, 1972:
30. Գալստեան Գր. Մարաշ, Նիւ Եորք, 1988:
31. Գալուստեան Շնորհք արք. Աստվածաշնչական սուրբեր, Երևան, 1997:
32. Գալուստեան Շնորհք արք. Համաքրիստոնեական սուրբեր, Երևան, 1997:
33. Գալուստեան Շնորհք արք. Հայազգի սուրբեր, Երևան, 1997:
34. Գեվորգյան Գ. Ղզլար, ՀԱԲ, Երեվան, 1980:
35. Գրիգորյան Ռ. Գեղարքունիք, ՀԱԲ, հ.14, Երևան, 1983:
36. Դադեան Ա. Ջան գիւղումներ. Վարանդայի բանաւոր գրականությունից, Ազգագրական հանդես (այսուհետև ԱՀ), 17 գիրք, Թիֆլիս, 1908, թ.1, 18 գիրք, թ.2:
37. Երեմեան Ա. Չահարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւնը, Վիեննա, 1923:
38. Թեմուրճյան Վ. Գամիրքի հայերը, ՀԱԲ, հ.1, Երևան, 1970:
39. Թորոսեան Հ. Ուրախության երգ, Նոր Գեղի, Ազգագրական հանդես, Բ տարի, Լիբանան, 1965:
40. Թումաճյան Մ. Հայրենի երգ ու բան, Երևան, 1972:
41. Թուխ մանուկ: Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:
42. Ժամկոչյան Ա., Հակոբյան Ն. Մեռոնամաններ Սուրբ Գևորգի պատկերով, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001:
43. Իսահակյան Մ. Շիրակի ժողովրդական երգեր, ԱՀ, գիրք Դ, հ.2, Թիֆլիս, 1898:
44. Լալայան Ե. Երկեր, հ.1, Երևան, 1983; հ.2, Երևան, 1988, հ. 3, Երևան, 2005::
45. Լալայան Ե. Սիսիան, ԱՀ, գիրք 3-4, Թիֆլիս, 1898:
46. Լալայան Ե. Ջանգեզուր, ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1897:
47. Լալայան Ե. Բորչալուի գավառ, ԱՀ, Գիրք 10, Թիֆլիս, 1903:
48. Լալայան Ե. Նախիջևանի գավառ, ԱՀ, գիրք 12, Թիֆլիս, 1904:

49. Լալայան Ե. Վայոց ձոր, ԱՀ, գիրք 16, հ.2, Թիֆլիս, 1906:
50. Լալայան Ե. Նոր Բայազետի գավառ, ԱՀ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908:
51. Լալայան Ե. Վասպուրական, ԱՀ, գիրք 25, հ.2, Թիֆլիս,1914:
52. Լալայան Ե. Մուշ-Տարօն, ԱՀ, գիրք 26, Թիֆլիս, 1916:
53. Լալաեանց Ե. Ջաւախքի բուրմունք, Թիֆլիս, 1892:
54. Լևոնեան Խ. Վարդավառի տօնը գաւառի մէջ, «Աւետաբեր», Կ.Պոլիս, 1914, #38, 39:
55. Լիսիցյան Ս. Զանգեզուրի հայերը, Երևան, 1969:
56. Լիսիցյան Ս. Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, հ.12, Երևան, 1981:
57. Խաչատրյան Ժ. Ջավախքի հայ ժողովրդական պարերը, ՀԱԲ, հ.7, Երևան, 1975:
58. Խաչատրյան Ժ. Պարի, ծեսի ու թատերական գործողությունների փոխկապը Վարդան Մամիկոնյանի ցուցմունքում, «Պար, երաժշտություն», Սրբուհի Լիսիցյանի ծննդյան 110-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2004:
59. Խաչատրյան Ռ. «Համբարձման երկուշաբթին» պարերգի իմաստատեքստաբանական վերլուծության փորձ, «Լրաբեր, 1991, թիվ 6:
60. Խառատյան Լ. «Պանդի օրը». նոր ուխտավայրերի առաջացման մի դեպքի շուրջ, Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, 2, Երևան, 2003:
61. Խատամյան Հ. Նոր Նախիջևանի պատկերներ, Նոր Նախիջևան, 1915:
62. Կաղանդ: Նոր տարւոյ սովորութիւն, «Բազմավեպ», Վենետիկ, 1848:
63. Կաղանկատուացի Մ. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983:
64. Կարապետյան Ե. Սասուն, Ազգագրական նյութեր, Երևան, 1962:
65. Կարոս խաչ: Ուսումնասիրություններ և բնագրեր, Երևան, 2000:
66. Կիւլէսէրեան Բ. Ժողովուրդին տոնացոյցը, Կ.Պոլիս, 1901:
67. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941:
68. Կոստանյան Կ. Նոր ժողովածու, Թիֆլիս, 1845:
69. Հալաջյան Գ. Դերսիմի հայերի ազգագրությունը, ՀԱԲ, հ.5, Երևան, 1973:
70. Հակոբյան Գ. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974:
71. Հակոբյան Հ. «Թուխ Մանուկների» պատկերագրությունը հին Հայաստանում, «Թուխ Մանուկ» նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:
72. Համբարձման տոնի հանդեսը Մուշ գավառի մեջ, «Բազմավեպ», Վենետիկ, 1868, մայիս:
73. Հարությունյան Ս. Սուրբ Սարգիսը ժողովրդական բանավոր ավանդության մեջ, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երեվան, 2002:
74. Հարությունյան Ս. Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը և Ս.Կարապետի կերպարն ըստ ժողովրդական ավանդության, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001:
75. Ձոն Վարդավառին: Գիրքը հրատարակության են պատրաստել Հրաչյա Հունանյանը և Քրիստինե Ջիլֆուղարյանը, Երևան, 2000:
76. Ղանալանյան Ա. Ավանդապատում, Երևան, 1969:
77. Ղափանցյան Գ. Արա Գեղեցկի պաշտամունքը, Երեվան, 1944:
78. Ճանիկեան Յ.Կ. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895:
79. Ճակատագրի տոնը (Համբարձումը), «Արարատ», էջմիածին, 1908, նոյեմբեր:
80. Մալխասյանց Ս. Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944:
81. Մանուկյան Ա. Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994:
82. Մանուկյան Մ. Ժողովրդական ավետիսներ, էջմիածին, 1995:
83. Մատիկյան Ա. Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930:
84. Մարտիրեան Մ. Հայկական ամանոր, «Ազդակ», 1990, 3 հունվարի:
85. Մելիքյան Սպ., Գարագաշյան Գ. Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ.1, Երևան, 1949:
86. Միքայելյան Գ. Նոր Բայազետ, ՀԱԲ, հ.11, Երևան, 1980:
87. Մխիթարյանց Աղ. Փշրանք Շիրակի ամբարներից, էմինյան ազգագրական ժողովածու, հ.Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901:
88. Մկրտչյան Ս., Սարգսյան Ա. Սուրբ Սարգիս, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երեվան, 2002:
89. Մկրտչյան Ս. Մեղրեցիների տոնածիսական վարքագծային փոփոխությունները վերջին հարյուրամյակում, «Հայ ժողովրդական մշակույթ», XII, Երևան, 2004:
90. Մնացականյան Ա. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1959:
91. Մնացականյան Ա. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, Թուխ Մանուկ, Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:
92. Մովսիսեան Ե. Նոր տարի (պատկեր Շիրակի գյուղական կյանքից), «Արարատ», 1896:
93. Յովնաթան Ն. Բանաստեղծութիւններ, Երևան, 1956:
94. Նազարյան Ա. էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից, ՀԱԲ, հ.9, Երևան, 1978:
95. Նազարեանց Յ. Նախապաշարմունք, հատոր 1, Տփխիս, 1878:
96. Նալբանդյան Մ. Մինին՝ խօսք, մինին՝ հարսն, Երևան, 1971:
97. Նահապետյան Ռ. Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004:
98. Նիմանդ, Եկեղեցական տոներ, Երևան, 1941:
99. Նշխարներ Արցախի բանահյուսությունից (ժողովեց, կազմեց և ծանոթագրեց Լ.Հարությունյանը), Երևան, 1991:
100. Նժդեհեան Գ. Վիճակի երգեր (Ալաշկերտ), ԱՀ, 7 և 8 գրքեր, Թիֆլիս, 1901:
101. Շահազիզ Ե. Նոր Նախիջևանը և Նոր Նախիջևանցիք, ԱՀ, 9-րդ գիրք, Թիֆլիս, 1902:

102. Շահազիզ Ե. Աշտարակի պատմություն, Երևան, 1987:
103. Շահան Սիմոն, Արմավիրի քառածայն երգեցիկ խմբի հուշարձանը, Տփխիս, 1914:
104. Շերենց Գ. Վանայ սազ, Թիֆլիս, 1885:
105. Չոլաքեան Յ. Քեսապ, հ. Բ, Հալեպ, 1998:
106. Չիթունի, Համբարձման «Վիճակ», Կ.Պոլիս, 1919:
107. Պապիկ առ թոռնիկ, գրեց Հայոց Հայրիկ, էջմիածին, 1894:
108. Պատկանյան Ռ. Վարթևոր, Բարեկենդանյան զրույցներ, Երկեր, Երևան, 1955:
109. Պարոնեան Ս. վրդ. Ամանոր և Վանատուր բառերը, «Բանասեր» , 1900, թիվ 2:
110. Պարտիզակցի Վ. Բարեկենդան և աբեղաթող, «Մասիս», Կ.Պոլիս, 101, փետրվար:
111. Պետոյան Վ. Սասնա ազգագրություն, Երևան, 1965:
112. Պետրոսյան Ա. Արա Գեղեցիկ և Սուրբ Սարգիս, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001:
113. Պողոսյան Ե. Նոր տարւոյ տոնը հին և նոր հայոց քով, Վիեննա, 1952:
114. Պռոշյան Պ. Սոս և Վարդիթեր, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1984;
115. Պռոշյան Պ. Հացի խնդիրը, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1984:
116. Սալմաստեցի Մ. Խլվլիկ, «Արձագանք», 1893, համար 1:
117. Սարգիսեան Յ (Ալևոր). Բալու. իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Գահիրէ, 1932:
118. Սարգիսեան Ս. Տոնական օրեր, Նոր գեղի, Ազգագրական հանդես, Բ տարի, Բեյրութ, 1965:
119. Սրվանձտյանց Գ. Երկեր, հ. 1, Երևան, 1978; հ.2, Երևան, 1982:
120. Վարդանյան Ռ.Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999:
121. Վարդանեանց Տ. Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1900:
122. Վարդգես, Հայոց սովորություններից (հիշողութիւններ), «Նոր դար», 1886, համար 211:
123. Վարժապետեան Յ. Մարաշի մեջ նշանավոր օրեր իրենց ծեսերով, «Բիւրակն», 1897, 1898:
124. Տեր-Մինասեան Վ. Անգիր դպրութիւն և հին սովորոյթներ, հ.Բ, Կ.Պոլիս, 1904:
125. Տեր-Մինասեան Վ. Աբեղաթող, Աբեղածագ, Կ.պոլիս, 1894:
126. Տեր Մկրտչյան Գ. ճակատագրի տոնը,Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1979:
127. Րաֆֆի, Սալբի, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1983:
128. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968:
129. «Փեթակ» , Կիրասոն, 1910:
130. Փորքշեյան Խ. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965; ՀԱԲ, 2, Երևան, 1971:
131. Քալանթարյան Ա. Սարգսյան Հ. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, «Թուխ Մանուկ», Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:
132. Քամալեանց Ս. Նավասարդի տօնը, Երկասիրութիւններ, Թիֆլիս, 1896:
133. Քաջբերունի, ճանապարհորդական նկատողություններ, Երևան, 2003:
134. Քաջբերունի Հ. Հայկական սովորություններ, ԱՀ, գիրք 7-8, Թիֆլիս, 1901:
135. Քեչեյան Ա. Ակն և ակնցիք, Փարիզ, 1952:
136. Օդաբաշյան Ա. Քրիստոնեական Ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրուկներ, «Տեղեկագիր», 1965, թիվ 3:
137. Օդաբաշյան Ա. Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, ՀԱԲ, հ.9, Երևան, 1971:
138. Օսէեան Ս. «Վիճակի» պարերգ, Նոր ուղի, Ազգագրական հանդես, Բ տարի, Բեյրութ, 1965:
139. Օրմանյան Մ. Ծիսական բառարան, Երևան, 1992:
140. Аракелян Г. С. Черкесогаи: историко-этнографическое исследование, Кавказ и Византия, т.4, Ереван, 1984.
141. Бунатов Г. Из поверий, предрассудков, народных примет армян Эчмиадзинского уезда, СМОМПК, вып.13, Тифлис, 1892:
142. Гордлевский Вл. Из османской демонологии, М., 1914.
143. Григоров И. Село Саров, Джеванширский уезд Елисаветпольской губернии, Сборник материалов для описания местностей и племен Кажказа (СМОМПК), вып.6, отд.2, Тифлис, 1888.
144. Григоров И. Село Татев, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд.1, Тифлис, 1892.
145. Давидбеков И. Село Гадрут, Джеванширский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, вып.6, отд.1, Тифлис, 1888.
146. Джейранов Ф. Селение Чайкенд, Елисаветпольского уезда той же губернии, СМОМПК, вып. 25, отд.2, Тифлис, 1898.
147. Е.В. О народных праздниках и праздничных обыкновениях христианского населения за Кавказом и преимущественно в Тифлисе, Кавказский календарь, Тифлис, 1854.
148. Зелинский Ст. Этнографические очерки из быта армян-переселенцев из Персии, живущих в Нахичеванском уезде, СМОМПК, вып.2, отд.2, Тифлис, 1882.
149. Израелов Г. Село Кусапет Джеванширского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып. 13, отд. 2, Тифлис, 1892.
150. Калашев Ал. Вардавар, СМОМПК, вып.18, отд. 2, Тифлис, 1894.
151. Константинова Лариса, Киселева Елена, Состояние нациаонального самосознания этнических групп Поволжского региона, «Этносоциальная ситуация в Саратовском Поволжье и проблемы

управления», Саратов, 1996.
152. Лисициан Ст. Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник", 1, М., 1955:
153. Лисицян С. Армяне Нагорного Карабаха, Ереван, 1992
154. Мелик-Шахназаров Е. Селение Арцеваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898.
155. Мелик Шахназаров Е. Из поверий, предрассудков, народных примет армян Зангезурского уезда, СМОМПК, вып.13, Тифлис, 1892:
156. Осипов Г. Селение Даш-Алты Шушинского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып.25, отд.2, Тифлис, 1898.
157. Петросян Э. Боги и ритуалы в древней Армении, Ереван, 2004.
158. Степанов Г. Некоторые туземные игры в г. Ахалцихе Тифлисской Губернии, СМОМПК, вып.5, отд.2, Тифлис, 1896.
159. Харатян З.Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян, Армянская этнография и фольклор, т.17, Ереван, 1989.
160. Russel R.James, The Armenian shrines of the black youth (T'ukh Manuk), «Թուխ Մանուկ», Նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ» ԳՐՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ 3

ՆԱԽԱԲԱՆ 7

ԱՄԱՆՈՐ, ՆՈՐ ՏԱՐԻ 21

ՃՆՈՒՆԴ (Աստվածհայտնություն), ՋՐՕՐՀՆԵՔ (Մկրտություն).....40

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ (Դոռոնջ, Տըրընդեզ, Տերինտազ, Տերընտաս, Տէրինտէս, Դառդառանջ, Տանտառեջ, Տառընտաս,Դռնտառուն՛ չ, Տոռոնջ-Տոռոնջ, Դոռոնջ, Դենդառաջ, Դրնդեզ).....53

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ 63

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ 76

ՄԵԾ ՊԱՍ 110

ՃԱՂԿԱՋԱՐԴ (Ճառզարդար, Ջըռըզարդար, Ճառկոտրունք, Ճառզարդուօր, Ճորճարդոր) Ավագ շաբաթ 122

ՋԱՏԻԿ 135

ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ ԿՐԿՆԱՋԱՏԻԿ 149

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, ՎԻՃԱԿ, ԿԱԹՆԱՊՐԻ ՏՈՆ 160

ՎԱՐԴԱՎԱՌ, ՎՐԹԻՎԵՐ, ՎԱՐԹԵՎՈՐ 201

ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ, ՎԵՐԱՓՈԽՈՒՄ Ս.ԱՍՏՎԱԾԱԾՆԻ 227

ՍՈՒՐԲ ԽԱՉ (Սրբխեչ), Ուլնոց.....236

ՍՐԲԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
Սուրբ Գեվորգ, Սուրբ Հակոբ.....242

ՆԱՎԱՍԱՐԴ, Նախրաքող 249

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ.....255

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՍՐԲԵՐԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....256

«ՈՒՏԻՍ ՏԱՏԸ» ԵՎ «ՊԱՍ ՊԱՊԸ» (կնոջ եվ տղամարդու ծպտված կերպարները և նրանց վարքի հասարակական վերագրումները).....304

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՏԱՎՈՐ ՍՑԵՆԱՐԸ.....317

Հայ ժողովրդական տոներին առնչվող ասացվածքներ, բանաձևեր 329

ՑԱՆԿԵՐ.....332

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 351

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հ. ԽԱՌԱՏՅԱՆ-ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ

(Երկրորդ, լրամշակված հրատարակություն)

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Խմբագիր՝ Հարություն Սարդարյան

Տպագրությունը՝ օֆսեթ:
Չափսը՝ 60x84 1/8:
Թուղթը՝ կավճապատ:
Ծավալը՝ 45 տպ. մամուլ:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28,
ֆաքս՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am
Գրախանութ՝ Երևան, Խանջյան փող. 29, հեռ.՝ 54 06 07, էլ. կայք՝ www.book.am

ԳԱԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0180261

ЦЕНА
III
7945



Սիրելի՛ բարեկամ

«Հայ ժողովրդական տոները» գիրքը հրատարակվում է հայ ժողովրդի հարուստ մշակութային ժառանգության մի փոքր մասի, մասնավորապես տոնակատարությունների՝ անցյալում ձևավորված հարուստ արարողակարգի, ծեսերի, բանահյուսության, ժողովրդական հավաքական ստեղծագործական ձևերի շարունակելիությանը նպաստելու նպատակով: Պարզ, առանց մեկնաբանությունների, առանց պատմական քննության նկարագրելով մինչև 20-րդ դարի սկիզբը հայ ժողովրդի կյանքում նշվող տոների արարողակարգը, ծեսերը, ուտեստը, փոխայցելությունները, երգերը, պարերը, ներկայացումները, խաղերը, մի խոսքով՝ տոնահանդեսը, անհատ մարդկանց, ընտանիքների և համայնքների հայեցողությանն է թողնվում այս կամ այն տոնի այս կամ այն ծեսը, հանդեսը, սովորույթը իրենց տոնական կյանքում կիրառելու, դրանք իրենց երևակայությամբ հարստացնելու, գարգացնելու հնարավորությունը: «Վերստին կժողովրդականանա՞ն արդյոք ժողովրդական տոները և եթե այո, ապա ի՞նչ ձևով» հարցի պատասխանը թողնվում է գործնական կյանքին: